ՕՐՈՐԵՆ ՕԵՎԼԻԿ

ԵՐԿԵՐ

ՕՐՈՒՅՑԸ ՍԵՐՎԱՆՑ

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ · 1985

ՀՄԴ 84Հ1
Ս 411

Կազմից և ծանոթագրեց ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉՅԱՆԸ
Առաջաբանը՝ ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆԻ

Սևակ Ռ.՝
Ս 411 Երկեր։ (Կազմ. և ծանոթագր. Ալ. Թոփչյանը։ Առաջաբանը Ս. Թոփչյանի.— Եր.։ Սովետ. գրող, 1985. 480 էջ.

Ժողովածուն ամփոփում է Ռուբեն Սևակի չափածո և արձակ երկերը։ Բանաստեղծի գրական ժառանգությունն առավել ամբողջությամբ ընթերցողին ներկայացվում է առաջին անգամ։ Ի մի են բերված ոչ միայն ժամանակի մամուլում ցրված երկերը, այլև անտիպներ։

Ժողովածուն հրատարակվում է Ռուբեն Սևակի ծննդյան 100-ամյակի առթիվ։

Ս $\frac{4702080000\ (31S)}{705\ (01)\ 85}$ 85 «Տ» ՀՄԴ 84Հ1

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմելու, ծանոթագրությունների, առաջաբանի և ձևավորման համար, 1985

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ

*1912 թվականի ապրիլի 29-ին Հոզանից Ռուբեն Սևակն իր նամակում Հրանտ Նազարյանին հայտնում էր «ամենավերջին փափագը». երկրագործ լինել, կյանքի ամենջին տարիներնս անցկացնել լուսյան ու բնության մեջ։ Ամենավերջին... քսանչորսամյա երիտասարդը կանխազգա՞ծ էր մոտեցող մահը, թե՞ սա պոետական կնճռած էր իրականության հանդեպ, սակայն կարդերն ու բարքերը մերժելու, ռոմանտիկ հոգիներին վայել դյուցազնություն հաստատելու ձև, «աստվածորեն ապրելու» ձգտում։ Նրա ստեղծագործության լապտերը թարթող է կյանքի և երազների հակասությունը։ Մի կողմից երազուն ապրումներ, մեղմ սիմվոլիկ պատկերներ, բանաստեղծական տեսիլներ, մյուս կողմից պայքար տրորվող, տառապող մարդու ազատության համար։ Նամակի տողերը պերճախոս հաստատումն են անհունության, մենության մեջ ապրելու և ստեղծագործելու անհնարինության։ Նաղաղ պեսիմիզմի անիրագործելիությունը, ճակատագրային անխուսափելիությունը տառապանքից ու մաքառումից, քանաստեղծին տանում է դեպի ազգային-ազատագրական պայքար։ Հեռվից պարզորոշ տեսնելով «Պոլսո մղձավանջը»... Սոդոմի մուխն ու Գոմորի բոցը», նա վերադառնում է հայրենիք՝ նահատակվելու։ Ոչ որ չէր համատա ոչ մի ակնառության հուշերի, նրան պահպանված չլինեք մի տարի նամակ։ Ահա անհամատալի փաստը. «...կցանկամ, որ վերջնականապես հայրենիք վերադառնալ առաջ երբեմն գոնե դարձ՞ն մը— կյանքիս հաշվված գարունները մեն— վենետիկ անցնեմ, ապրիմ, ապրիլս զգամ, մեռնիլս կանխազգալն առաջ (Նամակը գրված է 1911-ի փետրվարի 4-ին, Լոզանից)։

Մահվան ուրվականը հետապնդում է քանաստեղծին նրա ողջ ստեղծագործական կյանքում, որը դաժան նախախնամությամբ, նահատակության մի նախապատրաստություն էր կարծես։

1

Ռուբեն Սևակը (Ռուբեն Չիլինկիրյան) ծնվել է 1885-ի փետրվարի 15-ին Մարմարայի ափերի եվրոպական եզերքի Սիլիվրի գյուղաքաղաքում։ «Մանչերու գերեզմանը» գրվածը հուշ է Սիլիվրիից։ Նախ երկրագործ, ապա երկաթգծի առևտրական հայրը՝ Հովհաննես ագա Չիլինկիրյանը աշխատում է հիմնավոր կրթություն տալ իր զավակներին։ Մենգավայրում Ռուբենն ավարտում է Ասքանազյան տարրական նախակրթարանը, ապա երկու տարի սովորում Պարտիզակի գիշերօթիկ ամերիկյան վարժարանում, իսկ 1901-ին անց-

նում Կ. Պոլսի նշանավոր Պերպերյան վարժարան, որն ավարտում է 1905-ին։ Դասընկերները լավ ծանոթ էին նրա կազմակերպած ինքնագործ աշակերտական խմբում կարդացած բանաստեղծություններին։ Իսկ առաջին տպագիր գործը 1905-ին «Մասիսի» (թիվ 24, 13 օգոստոսի) խմբագրության ծանոթությամբ «Բաժանման խոսքեր» բանաստեղծությունն էր, որ Պերպերյանի շրջանավարտ Ռ. Չիլինկիրյանը կարդացել էր վկայականների բաշխման ավարտական հանդեսին, արժանանալով ներկաների գնահատանքին։ Փայլուն ավարտելով վարժարանը, ցայտուն ընդունակություններ դրսևորած ամենատարբեր առաջադրանքների լուծման մեջ, մեծ ուսուցչապետ Ռեթեոս Պերպերյանի թելադրությամբ ու աջակցությամբ Ռուբեն Սևակը մեկնում է Նովեմբերիս, 1905-ի աշնանից ուսանելով Լոզանի բժշկական համալսարանում։ 1908-ին, սահմանադրության հաստատումից հետո, ամառվա արձակուրդներին նա գալիս է Կ. Պոլիս, կարճ ժամանակով զբաղվում «Սուրհանդակ» օրաթերթի հրատարակությամբ, նվիրվում հասարակական գործին։ Լոզանի բժշկական համալսարանը 1911-ին ավարտելուց հետո աշխատում է տեղի հիվանդանոցներում որպես օգնական բժիշկ։ Ուսանելու շրջանում նա ծանոթանում է գերմանական բարձր դասի մի ընտանիքի դստեր՝ Ցանին Ապպելի հետ, որը դարձավ նրա կինը հակառակ աղջկա ծնողների արգելքներին (հակառակությունը շուտով իհարկե վերացավ և Սևակի նամակներից իսկ երևում է, որ նրան վերաբերվում էին ջերմ համակրանքով)։ Երիտասարդ և գեղեցիկ ամուսինները երկու զավակ ունեցան՝ Լևոնը և Շամիրամը։ Ցանինի և Ռուբենի նամակները ռոմանտիկ, անմար սիրո մի վիպասանություն են, այժմ մեզ համար արդեն ազգային գրականության պատմության հմայիչ մի դրվագ, ողբերգական ավարտով։ Ինչպես պատմում է Սևակի ընկերներից մեկը՝ Գ. Ամատյանը, Ցանինն հետաքրքրվում էր հայ մշակույթով և սկսել էր ամուսնուց հայերենի դասեր առնել։

Ուսանողության տարիներից էլ Սևակը արևմտահայ մամուլում տպագրում է իր գործերը հետզհետե լայն ճանաչում ստանալով։ 1910-ին Կ. Պոլսում լույս տեսավ «Կարմիր գիրքը» ժողովածուն։ Թեոդիկի 1911-ի «Ամենուն տարեցույցում» հայ մշակույթի բազմաթիվ այլ գործիչների հետ տրված Ռուբեն Սևակի կարճառոտ կենսագրականում նշված են իր ծրագրած «Քառաբ», «Սիրո գիրքը», «Վերջին հայերը»։ Նույնը հավաստում է նաև Մերուժան Պարսամյանը («Եանք», Կ. Պոլիս, 1918, թիվ 2)։ Այդ գրքերը չկարողացավ հրատարակել։ Սևակի արձակ առաջին գործը՝ «Տարի մը վերջ» պատմվածքը լույս տեսավ 1907-ին, իսկ 1918-ին «Ազատամարտում» սկսեց հանդես գալ «Բժիշկին գիրքն փրցված էջեր» շարքով, որը մեծ հաջողություն ունեցավ և որը նույնպես ամբողջությամբ չկարողացավ հրատարակել։ Ռուբեն Զարդարյանը շարքի մասին գրեց. «Չեք կարող երևակայել, թե որպիսի՞ խանդավառ ընդունելություն գտած են անոնք ընթերցող հասարակության մեջ... Ասիկա նախ կապացուցանե այն անատարակուսելի գրական հարստությունը, որով կգրեք ձեր հոդվածները քերթվածի մը չափ թրթռուն...»[1]։ Իսկ Հարություն Ալփիարին հիացնում էին արվեստագետի ձիրքերը. «Զգացումներու փափկազգած նկարիչ մը, լեզվի ciseleur մը, և բառին ամբողջ ուժովը՝ հաճելի գրագետ մը։ Գրական նոր ճյուղ մը կ'ստեղծեք կոր»[2]։

Ինչպես այդ, այնպես էլ Արևմուտքում ապրած տարիների մասին որոշ պատկերացում են տալիս Ռուբեն Սևակի նամակները, որոնցից մի փունջ ընդգրկված է ներկա ժողովածուում։ Թվում էր թե բոլոր նախադրյալները կան լիարժեք ապրելու, երջանիկ լինելու համար. հաջողություն, նվիրվածություն ու տաղանդ ընտրած մասնագիտության մեջ, ներ-

---

1 Թեոդիկ, «Ամենուն տարեցույցը», Կ. Պոլիս, 1915, էջ 325։

2 «Աստղաբերդ», 1952, թիվ 5, էջ 62։

գաշնակ ընտանիք ու իսկական մեծ սեր, ստեղծագործական հագեցված, փայլուն կյանք, անշահախնդիր արվեստագետ ու ոչ արվեստագետ բարեկամների ազդեցիկ շրջան, անկարելոր չէր հարկավ նաև նյութական բարեկեցիկ վիճակը։ Բայց թե բանաստեղծն ընդհանրապես, ինչ երկնքի տակ էլ ապրի, չի կարող երջանիկ լինել, հայ բանաստեղծը դատապարտված է ճակատագրով։ Հեռվից էլ զգացվում էր կոտորածի մղձավանջը և այնուամենայնիվ հայ մտավորականության շատ ներկայացուցիչներ վերադառնում էին տուն։ Այդպես 1914-ին Սեակն ընտանիքով վերադարձավ Կ. Պոլիս։ Հենց նավահանգստում, Ցանների վրա Թուրքական միջավայրը ծանր տպավորություն թողեց. «Ռուբեն, դառնանք այս շոգենավով, ես շատ չհավնեցա այս երկրին... Սոսկում եկավ վրաս. չե՞ս տեսներ, ո՛չ մեկուն դեմքը կժպտի»։ Սեակը հաստատապես վճռել էր վերադառնալ, և դժբախտաբար, կնոջ մոայլ կանխազգացումը որևէ նշանակություն չունեցավ։ Կ. Պոլսում Սեակը թնակվում էր Բերա, Բանկալթի, Մավրոբուլո մենաստանը, աշխատում իր մասնագիտությամբ, դասախոսություններ կարդում Բերայի Հայ բժշկական միության կազմակերպած հիվանդապահության դասընթացներում։ Գրական աշխատանքի նոր, բուռն շրջան էր սկսվել նաև, իր հարազատ տարերքի մեջ էր՝ արևմտահայ արվեստագետների միջավայրում։ Առաջին համաշխարհային պատերազմի սկսվելուց հետո Սեակը կանչվեց Թուրքական բանակ՝ ապայի աստիճանով, որպես զինվորական բժիշկ։ Մի հանդիպման մասին Մերուժան Պարսամյանը պատմում է. «Առտու մը տեսա զինքը ձիու վրա, զինվորական բժշկի համազգեստով... երբ տուն հասանք... իր անտիպ քերթվածներեն ու արձակներեն կարդաց... Մերթ տիկին Չիլինկիրյանն էր, որ իր բարձր ու շքեղ կիսատվերը կպտտեցներ սենյակին մեջ, տաքություն մը, երաժշտություն մը հոսեցնելով մթնոլորտին մեջ... Նույն իրիկունն իսկ իմացա, որ ձերբակալեր են զինքը։

Առաջին վայրկյանեն իսկ հուսահատ էր տիկին Չիլինկիրյան. առտուն գերման դեսպանատուն, իրիկունը՝ ոստիկանական տնօրենին մոտ... Իրրև թե հայուհի մը ըլլար տիկին Չիլինկիրյան, կընդադատեր գերմաններուն ընթացքը, կպախարակեր անոնց վայրագությունը»։ Ռուբեն Սեակը ձերբակալվեց և ուղարկվեց Ջանղըրը։ Այդ օրերի մասին վկայություններ է թողել նրա հետ աքսորված Միքայել Շամտանճյանը (տե՛ս «Հուշարձան ապրիլ տասնմեկի», Կ. Պոլիս, 1919, «Ջանղըրըն վերհիշումներ», էջ 113—121)։ Ջանղըրում Սեակը բուժում է մի թուրք չեթեհի աղջկան։ Թուրքը, «խանդաղատանքի զգացումներ» հայտնելով բժշկին, համոզում է մահմեդականություն ընդունել անխուսափելի սպանությունից փրկվելու համար։ Սեակը հրաժարվում է, ավելին, նա, որ ատված ու կրոն չէր ընդունում, հավատափոխությունը համարելով ազգադավություն, ամբողջ երկու օր աշխատում է համոզել տատանվող որոշ հայերի, թե մահը մահմեդականացումից լավ է, ստիպելով երդվել նրանց՝ որոնց վրա կասկած ուներ։ Օգոստոսի 26-ին, հինգշաբթի առավոտյան հինգ հոգի երկու կառքով ուղարկվում են Այաշ, որոնց մեջ Ռուբեն Սեակն ու Դանիել Վարուժանը։ Երեկոյան ժամը 12-ին հասնում է նրանց սպանության լուրը, իսկ մեկնելուց ընդամենը 24 ժամ հետո Կ. Պոլսից հեռագիր է ստացվում, որ նրանք պետք է ազատ արձակվեն։ Ակնատես Հասան անունով թուրք կառապանի պատմությունը բացում է սպանության հանգամանքները։ Ճանապարհին կառքերը կանգնեցնում են։ Կարծում են ավազակների հարձակում է, բայց ոստիկանության պաշտոնյան ակնածանքով բարևում է անծանոթին, որին հետևում էին չորս ուրիշներ՝ մինչև ատամները զինված։ Տեղափոխությունն այսպիսով խաբեություն էր, նախապես ճշգրտորեն մշակված էր հինգ զոհերի սպանության ծրագիրը։ Նրանց ձեռքերը կապված էին և դիմադրել չէին

1։ «Շանթ», Կ. Պոլիս, 1918, թիվ 2, էջ 14։

կարոտ։ Կառապանն անկասկած նկատի ունի Սեակին, երբ նշում է. «Անանցմեն մեկը երիտասարդ մըն էր սև մորուքով և վառվռուն աչքերով»։ Ուսիկանները խուզարկում են գոհերին, կողոպտում նրանց ունեցածը և հեռանում։ Կառապանը մնում է և հեռվից ցնցում սարսափելի տեսարան։ Հինգ զոհերը հարձակվում են հինգ զոհերի վրա, մերկացնում, կապում ծառերին. «Հետո չեթեականը և իր մարդիկը իրենց ցաշուններից մերկացուցին և սկսան ցանցաղոցեն և հանգարտ կերպով ցանոք մորթուն։ Դատապարտյալներու աղաղակը և անոնց հուսահատական կառագությունը պիտա կմնա»[2].

Միքայել Շամտանչյանը ուրիշ ազատված հայերի հետ մեկնելիս Բյունեյ գյուղից այն կողմ տեսնում են համփեցրի սեղերով ծածկված, քրի դիմացի ասին ի վեր, հինգ հոգաթմբերը[3]։ Գանիել Զարուժանի և Ռուբեն Սեակի աճյունները այնտեղ են։

Աքսորի ժամանակ Ռուբեն Սեակը ցարմանալի անվրդով էր թվում. չափատես՝ վագվա օրվա հանգիստ։ Համենայն դեպս, 1915-ի հունիսի 17-ին Ջանգըրըից գրում է Յանոյին. «Շատ հանգիստ եմ... մի մահմոզվիր ինձի համար։ Շնորհքն ասածիս քիչ տաներն արդարություն կվերականգնվի և մենք միասին կըլլանք։ Ինչպե՞ս վերականգնել չեղած արդարությունը, ինչպե՞ս ապավինել չընդունած ասածուն։ Նրան հանգիստ չէր ավել մահվան գաղափարը. բայց այդպես էր թեկուզ նրա գրականության մեջ միայն։ Քանզի ստեղծագործողի ու ստեղծագործության, կյանքի ու գրչի անմեղացող համընկնումը անխուսափելի օրինաչափություն չէ։ Անհողդողդ մոտենում էր նահատակության անացորույն պահը. ստեղծագործողն ու ստեղծագործությունը ողբերգականորեն միաձուլվեցին։ Յանոյի Սեակը այդ գույժը լսելուց, Կ. Պոլսից հեռանալուց հետո էլ չէր կորցրել հույսը։ 1915-ի նոյեմբերի 4-ին գերմանական ցեղասպանատան թարգման Հայկ Բալքանենյանին գրում է. «Կատաստրոֆի։ Ասածիս սիրուն, ազնվությունը ունեցեք երթալ տեսնելու տիկին Վարուժանը և իրեն հարցնելու, թե ինչ եղած է մոնս։ Տղայի աշխատության արդյունքը՝ ամուսինին մասին։ Ինձի համար ստիպկա մեծ կարևորություն ունի. որովհետև ցեղ ձեռքս ապացույց մը չունիմ Ռուբենի մահվան մասին և կհուսամ տակավին։

Գարձյալ կինդրեմ ձեզմե, որպեսզի իմ կողմես ազաչեք Զոմիրասը վարդապետի, հոգեհանգիստ մը կատարելու համար»[4]։

2

> «Ինձ համար գրելը երգել է։ Բոլոր մխիթարությունս սա երկաթի փոքրիկ գրչիս մեջն է։ Ու մենավոր ապատանիս մեջ՝ ձմրան գիշերներ, ինձմե երբեմնիկ մարդ չէ՝ կարելի երևակայել՝ ոտանավորի մը ավարտումեն վերջ»։
>
> Ռուբեն Սեակ

Նրա հրատարակած միակ ժողովածուն՝ «Կարմիր գիրքը» ամփոփում է երեք պոեմ։ Երրորդը՝ «Մարդերգությունը» մարդկային գոյի հանելուկների խորախորհուրդ վերապրումն է։ Այն եռամաս է, համապատասխան՝ ծնունդ-կյանք-մահ ընթացքին. առաջինը՝ «Գյուղական եկեղեցիին մեջ», երկրորդը՝ «Գյուղական ճամբուն վրա», երրորդը՝ «Գյուղական

---

1 «Հայրենիք», Բոստոն, 1930, 1, էջ 50։

2 Նույն տեղում։

3 Մ. Շամտանչյան, Հայ մարդին հարկը Եղեռնին, Կ. Պոլիս, 1919, էջ 61—62։

4 «Շանթ», 1918, թիվ 2, էջ 15—16։

գերեզմանատան մեջ։ Եկեղեցում աստված ու դարերն են՝ բայց քարացած. ժամանակը մեռելորեն նստում է չորս պատերի անհունի մեջ։ Ինչպե՞ս է անհունը տեղավորվում փոքրիկ, փակ տարածությունում։ Դա Ֆերեզ գեղարվեստի գաղտնիքն է նախ.

Ջար քարի վրա, ծներ էր, հըլո՛ւ,
Առանց արվեստի, առանց մեծ ոճի,
Պարզ, ինչպես ծառ մը, որ հողեն կ'ասի

Բանաստեղծական խոսքը անհնարինը դարձնում է հնարավոր։ Երևակայությունն իր թռիչքի մեջ անցյալորը կապում է ապագային։ Գեղարվեստի այս կախարդանքը բացատրվում է պարզ անարվեստությամբ։ Պարզության խնդիրն թքն գեղարվեստի կատարելության չափանիշ չդարձիլլ է, և դրան չէ, որ ուզում ենք անդրադառնալ Ռուբեն Մանկին բնորոշը, որ բնորոշ է նաև նրան ժամանակակից և հոգեհարազատ. նույն ոգեղության բանաստեղծների՝ Ատոմ Յարճանյանին և Գանիել Վարուժանին. թե գեղարվեստի, թե գոյի ստեղծագործելը կյանքի հակադրությունը երևան ընդունելով՝ իմաստաբանելն է։ Սա բանաստեղծական հոյակապ իմաստաբանություն է, կյանքի տարերքը։ Կյանքի ոգը ընթացքն անդարձանելի է մահից (չորս պատերի անհունի մեջ «Ծեր գեղջուկներ մեռնի՛լ կարելին...»)։ Կյանքն իր ամբողջ-ընթացք-վախճանում անվախճանության կրողն է։ Մարդկությանն ամենից շատ տանջող ցավը կրող այս հակադրամիասնությունը մի լուծում է գտել. վախճանավոր կյանքը միաձուլվում է անվախճանությանը հոգու անմահության հավատով։ Գրոնը մարդկությունը հորինել է մահվան տարատեսակ հակադրելով անմահության երազը։ Բեն բանաստեղծը հայտնում է, որ բնավ չի ծաղրեց «մեծ հույսը», բայց ավարտում է հեգնանքով. կրոնական շինությունները կենդանիների զոհարերության կենտրոններ են սոսկ, սպանդանոցներ («Ամ հոն— գլխարկներդ բացեք վերներուն— Գերեզմանոցն է կենդանիներուն...»)։ Կյանքի իր ըմբռնումը Մանկը հակադրում է դատարկ «մեծ հույսին», որը հեշտությամբ տեսնել սովորելու միջոց էր, կույր հավատ՝ վճռականապես անընդունելի։

Կյանքից այն կողմ՝ անվախճանությունը «մխոտիք» լռելյայն առանց ժպիտի ու առանց ցավի վիճակ է, անշարժություն, ուր.

Առա՛նց անելու, առանց նվազելու
Հազար դարերո՛ւ ու անհունները
Մոերմության մեջ կ'ապրեին,— հնո՛ւ

Այստեղ «ապրելու» պատրանքը հակադիր է կյանքին, որի հիմքում ընկած է աճելության սկզբունքը։ Անհունությունը դրա բացակայությունն է, ուր «Բա՛ն մը կար Կյանքեն անդատ, կյանքեն վե՞ր»։ Նույնն է, նույն ձգտումը, նույն պատրանքը. «Ացդ՝ Մահվան իսկ մեջ ժխտումն էր Մահվան...»։ Անսահման անուրջի մեջ եթե լինի էլ այդ ժխտումը, մարդը դարձյալ ապրում է լույսի ու խավարի, երկրի ու երկնքի միջև. ինչ որ «...անշե՛ջ է, պիտի շիշի» գերեզմանի մթության մեջ։ Գեղեցիկը կյանքն է իր բոցով, իր երջանկությամբ ու տառապանքով, իր պայքարով ու համապարփակ սիրով։ Եկեղեցին գեղարվեստի հրաշք է, քանզի աճել է ծառի նման. կյանքային լինելություն, որ չորս պատերով ամփոփված շինությանը տալիս է անպարտությունակելու պարտությունակելու վիճակի կերպով։ Այստեղ խաչաձևվում են երկինքն ու երկիրը, կյանքն ու մահը։

«Մարդը գոհ ու երջանիկ է զգում այն դեպքում միայն, երբ ինքն իր հետ է, իր էության մեջ»։

Լյուդվիգ Ֆոյերբախ

«Մարդերգություն»— ամենաուղիղ իմաստով նշանակում է, որ մարդն է պոեզիայի, ստեղծագործության կենտրոնը, մարդն է թե իր էության, թե աշխարհի, գոյի իմաստների բանաստեղծացման ակունքը։ Հանրահայտ բնորոշման համաձայն գեղարվեստական գրականության առարկան մարդն է, և եթե Սեակը սա էր հաստատում իր ընտրած վերնագրով ու նյութերով, այժմ կթվա, թե դրանով առանձնապես ուշագրավ բան չէր ասում։ Բայց 1910-ն էր և պետք է հիշել, որ փիլիսոփայական անտրոպոլոգիան դեռ շարունակում էր սաղմնավորվել կյանքի փիլիսոփայության մեջ[1] (իսկ դրանից ավելի վաղ՝ գերմանական ռոմանտիկական փիլիսոփայությունում)։

Այստեղից կարելի է երկու կարևոր եզրակացություն անել, մեկը՝ Ռուբեն Սեակի տեսական կողմնորոշումների, մյուսը նրա պոեզիայի վերաբերյալ. ա) նրա աշխարհայացքի և ստեղծագործության հիմքում ընկած անտրոպոլոգիական սկզբունքները պետք է համընկնեն առավելապես կյանքի փիլիսոփայության մշակած կոնցեպցիային։ Նշենք, հարկավ, որոշիչ նշանակություն ուներ և ռոմանտիկական տրադիցիան։ բ) Մարդերգությունը որպես ստեղծագործական հարցադրում, որով ներթափանցված էր Սեակի աշխարհայացքը, միանգամայն նորարարական էր։

«Կարմիր գրքում» առկա են բանաստեղծի ողջ ստեղծագործությանը բնորոշ գլխավոր խնդիրները, խորագույն մտահոգությունները, առկա է մարդու և կյանքի այն ըմբռնումը, որն աղերսվում է կյանքի փիլիսոփայության հասանքին։ Սեակի մոտ այն կարող էր հատկապես արժագանքը լինել Ֆրիդրիխ Նիցշեի փիլիսոփայության, որի հանդեպ նա երկակի վերաբերմունք ուներ։ «Բժիշկին գիրքն գրված էջերում» մի տեղ նա նշում է, որ աշխարհի բոլոր մարդասպաններն ու չարագործները չէին կարող այնքան երիտասարդ հոգիներ սպանել, որքան մի Եսպենհաուեր, Նիցշե, Բայրոն։ Մելամաղձոտությունը, հուսահատությունը, հոռետեսությունը Սեակը դնում է «Այլասերում» վերնագրի տակ որպես վաղվա հիվանդություն՝ «հիվանդություններն հոռեգույնը»։ Այս ախտով տառապող երիտասարդների վրա ունեցած ազդեցության մասին է խոսքը։ Իսկ հյուծախտի ճգնաժամում Սիամանթոյի (Ատոմ Յարճանյանի) ապրած մահվան տագնապին և կյանքի հաղթանակին ու այս վիճակում հղացված բանաստեղծական պոռթկման նվիրված «Ջմեռնելու համար» բացառիկ գործում Սեակը դիմում է Նիցշեին հակառակ նպատակով. «Ո՞չ, Դյուցազներնը գրողը երիտասարդ չպիտի մեռներ։ Ան պիտի ծառանար անմոր հիվանդության դեմ... «Մարդը ստեղծված է պայքարելու, ու կինը՝ ռազմիկը մխիթարելու համար», գրել Նիցշե։ Նիցշեն մղում է անձնասպանության, Նիցշեն փառաբանում է կյանքի պայքարը. Սեակը այսպես կարող էր ընկալել գերմանացի փիլիսոփային ոչ միայն այն պատճառով, որ վերջինիս երկերը իրենց սիմվոլիկ, բանաստեղծական բնույթով տարբեր ընկալումների, մեկնաբանությունների առիթ էին տալիս, այլև որ ինքը Սեակը կյանքն ու մահը, լավատեսությունն ու հոռետեսությունը բնավ էլ չէր բաժանում խոր անդունդով։ Կյանքի փիլիսոփայության հարցադրումներին նա կարող էր ծանոթ

---

[1] *Մաքս Շելերի «Մարդու դիրքը տիեզերքում» և Հելմուտ Պլեսների «Օրգանականի աստիճանները և մարդը» փիլիսոփայական անտրոպոլոգիայի հիմնադիր աշխատությունները լույս տեսան 1928-ին։*

ել ոչ միայն նիցշեի երկերով, այլև այլ անմիջական աղբյուրներից. հակառակ դեպքում, այսպես ասած՝ երկրորդական արձագանքներից. չմոռանանք, որ ամենակարևորը ս փիլիսոփայության տեսակետից՝ ռեալականությունը, գոյը որպես կյանքի շարժում, ելություն դիտելը, կյանքայնությունը ճշմարտացի աշխարհայացքի, ճանաչողության մք համարելը, տարածված, իշխող մտայնություն էին։

4

«...կյանքը կրնա ինքն իրմով գեղեցիկ ըլլալ, բայց կյանքը ինքն իրմով կյանք չէ։ անքը և բնությունը իրար միանալով է, որ կկազմեն կյանքը...», նամակներից մեկում ։ասնած այս շատ կարևոր միտքն ինքնին անհասկանալի, ավելին, անհաշող ձևակերում կնկատվեր, եթե իմաստավորված տեղ չգտներ այլ գործերում։ Բնության անհրաժեշտի դերը կյանքի հաստատման մեջ պայմանավորված է առկա գոյության և իդեալի՝ ակի ստեղծագործությունում որոշիչ, հակադրությամբ։ Դա շատ հստակ արտահայտված է օրինակ, «Թրուպատուրները» բանաստեղծությունում, ուր մեքենաների երկաթե ։ին, գրամապաշտության ընդդեմ, թշվառության հետ հաշտ.

Կ՝ապրին նախնական կենցաղով ազատ,
Ազա՞տ Բնության որքերն հարազատ.
Թրուպատուրները։

Տրուբադուրը՝ միջնադարյան Պրովանսի երգիչը ասպետական գրականության բնորոշ դեմերով չէ ներկայացվում այստեղ, այլ որպես գեղեցկի, ազատ ստեղծագործության, նիվ ինքնազոհաբերման ու նվիրումի կրող՝ արվեստագետ, բանաստեղծ, բոլոր ժանակներում։ Իդեալային անցյալում, «Հի՞ն աստվածաբրնակ դարերում», վաղմին, «Արատին սրտանվեր» ծառայող տրուբադուրները սկսած իրենց հայր Հոմերից անմահում են, հակադրվում գեղարվեստին թշնամի նոր ժամանակներին («— Վա՜խ, արծաթն ։վեստն գանեց կախաղան»)։ Հին և նոր դարերի այս հակադրության մեջ բանաստեղծը աշտպանում է արվեստագետի բացառիկության սկզբունքը։ Արվեստագետը՝ բացարձակ ։ատության մարմնացումը, հավիտենությամբ ապրող և իրականության երևույթների ։ հավիտենությունը խտացնող այդ ուժը պատմական մեծ առաքելության կոչումն ունի. Նռաչնորդելու մարդկությունն ամրո՛ղջ։ Իր ազատությունը նա ձեռք է բերում տառապանքի գնով և տառապանքի մեջ և արանով իսկ լույս ու մութի, ժպիտի ու դառնության ողն է միաժամանակ։ Հակադրությունների մեջ արվեստագետի ռոմանտիկական այս բպարի ապրելու զենքը իրոնիան է.

Բախտը, տառապանքն, հարափո՜խ հովը
Իրենց դեմքին մո՜ւթ ժպիտ մ՝են տվեր,
Կյանքը ճանչցողի ալեկո՜ծ ժպիտ։

---

1 «...քսաներորդ հարյուրամյակի շեմին... կյանք հասկացությունը կենսաբանական նշ գրավեց, դառնալով ողջ իրականության ու բոլոր արժեքորումների ելակետ— մեատաֆիզիկական, հոգեբանական, բարոյական, գեղարվեստական», գրում է կյանքի փիլիսոայության խոշորագույն ներկայացուցիչներից մեկը՝ Գեորգ Զիմմելը (Г. Зиммель, энфлукт современной культуры, Пг., 1925, стр. 17)։

Ու իրենց բոնի՛ ձեռն մեջ հասցիս,
Խորով մազերնուն ներքև ալնոր.
Աշխարհքն հեգնելու հո՞վ մ՚ունին ազվոր.
Քրուպատուներեր։

Որքան էլ նա ձգտի փակվել մաքուր էմբեռիկականի բարձր ոլորտում՝ «Վանմին Արվենատին, Սուրբ Իգնատին» արվելով, սակայն կյանքը պահանջում է իրենը, իրականության ողբերգականությունն իսոր վերապրումը դառնում է ստեղծագործական փաստ։ Իգնատին ու իրականը մնում են հակասակ ծայրերում, որոնց միջև էլ ծավալվում է արվեստագետի գործունեությունը։ Այս հանգամանքը ցայտուն դրսևորվում է Թուրեն Սնակի ողջ ստեղծագործությունում, որոշակիորեն ընկալելով ոչ միայն «Տրուբադուրներում» այլև ի թիվս այլ էջերի, նաև ցարդ անախորժ «Որո՞ն համար...» ծրագրային բանաստեղծությունում («սարուկ, անգգամ նրբին» և իդեալի բախումը)։ Տրուբադուրի կերպարին զուգակցվում է ասպետի կերպարը՝ դարձյալ իդեալի մարմնացում, որ ներքին լարերս կլարված են հեռանոս շարժման, ընդհանրապես նեոռոմանտիզմի բարձրացրած հերոս իդեալին, զոհաբերության գնացող ասպետը («Ասպետին երգը», «Գացող մարդը»)։ Ի վերջին երգը իդեալին ուղղող արտաբադուրը («Զոնա»)։

Թուրեն Սնակի ստեղծագործությունը ներշնչված է դասական ռոմանտիկական այն սկզբունքների ոգով, որը նրան տարավ հայկական նեոռոմանտիզմի բարձունքները չկա այստեղ էմբեռիկական թե փիլիսոփայական, գեղարվեստական, թե ազգային-քաղաքական, սոցիալական որևէ բնորոշ խնդիր, որ ցայտունորեն ու միաժամանակ ուրույնորեն տեսք չունենա նրա մոտ։ Նրա նեոռոմանտիզմը չի բացատրվում, այլ հաստատվում է նույնիսկ հետևյալ խոստովանությամբ. «Ես ավելի իրապաշտ եմ, ամենն բանե առաջ իրականությունը դիտելիս, ամենն իրականությունն վեր մեկ իրականություն մ՚կանանչում եմ՝ ապրված, զգացված կյանքը և ո՛չ թե երևակայված կյանքը։ Տնտես թե ինչ էր հասկանում Սնակը կյանք ասելով. դա հենց այն կյանքն էր որն ապրելու որն իրապրելու համար անհնար էր չհակադրվել հասարակական զորին։ Իրականությանը։ Այդ զորի ահավոր պահանջներն իր ստեղծագործության նյութի էր դարձնում իրականության արտացոլման նեոռոմանտիկական եղանակով։ Դրա երկերում ի ուրիշ խոսքով ասելիքը որոնելիս ոչնչի չենք հանդիպի նույնիսկ «Մժիշկին» գիրքն փրցված էջերը, որ ծայրնծայր լի են կյանքով, վերցրած են կյանքից։ Հնդկական հնապաշտած իրողությունների նկարագրություններն են, դարձյալ սնունդի ոլորտում ասուս ընդունն որոշիչ եղանակ, չկա։ Կա նկարագրությունների ռեալիստականություն, որը այսում այն չտեսով, այս կամ այն ձևով հասարակ է զեղարվեստական բոլոր ուղղություններին։ Արձակ այդ էջերում ցրված են հայկական նեոռոմանտիզմի գաղափարների հիմնավոր ձևակերպումներ, և բանն էլ այն է, որ դրանք ոչ թե պատահական հայտարարություններ են թեկուզև երկի հերոսին հմտորեն հյուսված, այլ ողջ նյութին ի վերջ շարադրված է հանուն այդ գաղափարների հաստատման, զինարվեստական մարմնացման։

Գլխավոր նպատակը՝ հայությանն վերածնությունը իր լույսն առնում էր դյուցազնական, հեքիաթանական դարերից։ Հայրենիքից հեռու, մեծ կրքով ու ստեղծագործական բոլորուն ավյունով Թուրեն Սնակը նվիրվում է այդ մեծ գաղափարին։ Անդրին հայաց գրքի՝ «Մժշկին» գիրքն փրցված էջերը՝ բժշկական զրույցներ են։ Հնդիկն ասեն հն տամանում էլ առողջապահական, ուսուցողական, օգտակարապատակն նպատակներ։ Ինչպիսի դա բացառել չի կարելի։ Բայց, առավել ևս մեզ համար, ոչ մինչև դրանում չէ այ արձակի բուն նշանակությունը, քանզի գործ ունենք զեղարվեստական անուրանալի ար

ով առանձնացող էջերի հետ, այլև առողջապահական նպատակները երկրորդական մարմնացած այն խնդիրների համեմատությամբ, որ գտնվում էին ինչպես Սնակի, պես էլ ժամանակի հայ գրականության կիզակետում։ Ավելին, հանգամանքների զարգացությամբ միանգամայն բժշկի և արվեստագետի կարողությունները Թուրենը մեկը լավագույն հնարավորություն ուներ հարցերը ներկայացնել տեսական ու գեղարվեստական առավել համոզիչ, շոշափելի ու ներդաշնակ կերպավորմամբ։ Եթե առողջ ի, սիրո, ուժի պահանջները հիթանոս շարժման ներկայացուցիչներ համար երևան բերում կոչերի ձևով՝ իրենց ծրագրային ելույթներում ու նաև բացատրական գեղարվեստական արտացոլումների մեջ, ապա Սնակը հիմնավորում էր կյանքային-բիոլոգիան էությամբ, որի մեջ հմուտ էր, իրավասու ժամանակի գիտության ամենարարդ կարգակով։ Այսպես օրինակ, երբ «Աշլասերում» կամ «Վեցերորդ զգայարանք» գրում նա գրում է, որ հայությունը «Ոսկեդար մը պնդ է, նոր Ոսկեդար մը», «Աշլասե՞մ, ո՞չ Վերածնունդ», կամ՝ «Պատրաստենք մեր գավակները այդ մեծ օրվան համար։ Ու սորվեցնենք իրենց Վերածնունդի առաջին օրենքը։ Առողջ սեր, առողջ սեռ», ապ դա նախապես հիմնավորում է ոչ միայն գիտականորեն, ռոմանտիկական գրավիչ լվածքով, այլև գեղարվեստորեն։ Սեռի և սիրո, կյանքի ծարավի, ապրելու կամքի, ողջ, կենսունակ սերնդագործման շուրջ դատողությունները հիթանոս շարժման հայենիշներն են, որոնք ի մի են բերվում կյանքի փիլիսոփայության առաջնորդությամբ։ ազատվ շատ նկատումներից հետևյալ տողերը ևս ցույց են տալիս հիթանոս շարժման նշույները։ «Եթե Եվրոպան է, որ կենչեցնե այլասերումի սանդանը, մի՛ մոռ, որ այդ սարսափելի պիտը ամենեն առաջ մե՛ր ցեղին կապառնա՝ իբրև հին ցեղի։ Այսուհետև իսկ երևում է, որ կյանքի փիլիսոփայությունն իր բիոլոգիական մեկրանությամբ Արևմտյան Եվրոպայում միանգամայն գործնական նշանակություն էր ոք բերել։ Մի բան, որ ավելի կարևոր պետք է լիներ կործանման եզրին կանգնած եմատությունի համար, ինչպես համոզված էին հայ նեոռոմանտիկները։ Եվ նույն ով էլ նրանք, բնական կյանքի դիրքերից քննելով, մարմնավորելով ու փառաբանելով մարդ[1], կենսական մղումներն ու ցեղի կենսական ակունքները, նախապատրաստում էին ղձալի վերածունդը։

Սնակի առեղծագործությունում հատուկ տեղ է գրավում սերը, որն ըստ նրա ծրգում է «բացարձակ իդեալին», ըստ դրում, այն «անձնական, կերպարանավոր, երկրա, բնական» իդեալն է («Փոքրան հարսանիքիս» գրվածքում)։ Սերն ու ստեղծագործությունը «գերագույն պարտականություն» ու «գերագույն երջանկություն են» («Մեղքին ուղը» գրվածքում)։ Սերը կյանքի հոմանիշն է։ Արուն և էգը, մարմինն ու հոգին առնվելով «միանգամայն Տիեզերքին ու Աստուծուն կիսառնվին»։ Սիրո վերածումը միերական ուժի, միաժամանակ և վերածումն է ողջ գոյի ծավալման ու ճանաչողության ակտի։ Կյանքի ուղիների այս արտահայտության մի ծայրն այսպիսով մարդն է, ուրա՝ տիեզերքը։ Տիեզերքը՝ հավերժության կրողը, ինչպե՞ս կարող է ընդունել մերը և ոչ մանվան միջոցով։

---

1 Սա, համապատասխան մեկնաբանությամբ, գալիս էր Արթուր Շոպենհաուերից, ի փիլիսոփայության հիմնական հանգացությունը, գոյի ներքին էությունը՝ կամքը, ացությունը ենթադրվում է իրեն որպես մարդու և ցեղի պահպանման միջոց։ Նեոռոմանտիկների տեսական ու ստեղծագործական պրակտիկայում կիրառվում էին նրա փիլիսոփայության հիմնական գրոյթներ ու հանգացություններ, որոշ այլափոխությամբ ու հարմարեցմամբ պատմական հանգամանքներին։

Մեռնի՞լ, մեռնի՞լ... Անմահանալ մահվան մեջ.
Մեռնի՞լ... Գրկիդ գոգն, ա՛յսպես, մեր սերն անշեջ,
Անհունին մեջ ծառացրեալ տիրական...

Հայկական նեոռոմանտիզմում զոհաբերության և հարության գաղափարը կա՝ իբրև բնության աշնանային թառամումի և գարնանային վերակենդանացման (Լ. Շանթ), դիոնիսիզմի արտահայտություն։ Դիոնիսոս աստծու երևույթի մեջ, նիցշեից եկող, հանույթի և տառապանքի, մահվան և կյանքի, նահատակության և հարության, ողբերգության և վերածնունդի միասնության փիլիսոփայությունն էլ հիմք դարձավ հեքիաթոս շարժման։ Սեակի մոտ սերը և մահը նույնքան անքակտելի են, նույնիսկ. «Սերը սեր չէ, մահը մահ չէ, սերն է մահ։ Սերը վաղանցուկ է, մահն է հավերժական, մահվան մեջ անմահանալու ձգտումը տենդերին ծուլվելու ձգտում է. սերը մութ անդունդի մեջ անվախ ընկղմումն է։ Սիրո մեջ բախվում են աշխարհի եղերական հակասությունները, այն ընդունում է այնպիսի վիթխարի չափեր, որ ասված իր ամենակարողությամբ անգամ փոքրանում է նրա առաջ.

Սերն հեքիաթոս Երջանկությո՛ւն է, խաչվա՛ծ,
Սերն ա՛յն կուրն է, որուն աչքն ծերացրած
Որքի՞ մը պես պիտի ողբար ի՞նքն Աստված...

Խաչված երջանկություն. սիրո բարձրագույն աստիճաններում խաչանվում են մարդկության մեծագույն երազները, կյանքի հավերժական սիմվոլները, գերագույն հավատալիքները և գուցե գերագույն փիլիսոփայությունը։ Տիեզերական այդ սերը շարժման մեջ է դնում հակընդդեմ, հզոր ուժեր, որոնց հավերժական ալեբախման մեջ մարդն ապրում է հանույթի ու տառապանքի իր բաժինը և չքանում հավերժորեն։ Ահա թե ինչու մահանունը, «ճերմակ Ոչինչն» է իրականը և գեղեցիկը. «Զյունին» բանաստեղծությունը թերևս գոյի ու չգոյի հարաբերության ճշտումն է գեղարվեստական հոյակապ ձևի մեջ։ Դժվար է նման բան պնդել, Ոչինչն այստեղ խավարի, առեղծության, մոռացության, մահվան արտահայտությունն է։ Այս ասելն, ճերմակ և միաժամանակ խավար իրականությունն ու գեղեցկությունը այնուամենայնիվ կան որպես այդպիսին։ Այսինքն՝ Ոչինչը ինչ-որ բան է, իմաստ կյանքի հերքում, բայց և ոչ բացարձակ չգոյ։ Սիրո և մահվան համադրումը էությամբ սուր ռոմանտիկական հակադրությունների համադրում է։ Ժամանակին նկատվել է, որ չունենալով անդենական հավատքը, աշխարհը չատ սիրելու համար Սեակը չի կարողանում վանել իրենից մահվան հանախանքը։ Արմեն Սեանի այս մեկնաբանությունն ուղղակիորեն հաստատվում է ոչ միայն հեռանության հանգամանության դեմ «Բժիշկին գիրքն փրցված» ասվածով։ Ավելորդ չէ դրան ավելացնել նրա հորդորը նամակներից մեկում՝ հրաժարվել մարդատյացի հոռետեսությունից. «Հապա որո՞ւ համար են ապրելո՞ւ հանույթը, տենչելո՞ւ փափաքը, սիրելո՞ւ կիրքը ու տենչալո՞ւ տենչը։ Որո՞ւ համար են արվեստները, գեղեցիկը, բնությունը. կինը, հմայությունը, առավոտը, գիշերին խորախորհուրդ բանաստեղծությունը...»։ Կյանքի սերն է ստիպում հիշել մահը և հետևաբար սեր-մահ կապակցությունը բնավ էլ միապաղաղ ցուրտ նույնությունը չէ կամ «ճերմակ Ոչինչ»։ Նույն «Զյունին» բանաստեղծությունում էա՛ և «կյանքը քրքիջ մ'է հոպիտ», և «Սիրո հի՛ն, հի՛ն դարերուն աստվա՛ծն ըլլա, կարծեցի» տողերը, այսինքն կյանքի կատակերգությունը, կյանքի հեգնանքը մահվան բեմի վրա և հեքիաթասական մղումները։ Կյանքի՝ ու մահվան հակասության մեջ ձև են ստանում բանաստեղծին մտահոգող էական հարցերը, այն ամենն կարևորը, ինչով նա

տարում էր։ Այդ ամենը պոետականացվում են հակադրությունների մեջ։ Հակադրություն-ները հենց կյանքի, ավելին՝ տիեզերքի, որի մեջ ծավալվում է կյանքը, օրինաչափու-թյուններ, շարժման ռեալ ուժերն են։ Օրինաչափ է նաև, որ «սերն է մահ» ասելով հան-գերձ բանաստեղծն ամբողջ ձայնով օրհնարանի սեր-կյանքը.

Եկո՛ւր, եկո՛ւր, եկո՛ւր, սիրենք կարիոցին.
Ո՞վ չի սիրեր պիտի մեռնի առհավետ.
Սերը պե՛տքն է, երա՛զն է, կյա՛նքն է կյանքին

Նրա բանաստեղծական աշխարհում սերը հնչում է ամենատարբեր երանգներով ու լիմակներով, ամենանուրբ, ներքին-անշոշափելի դրսևորումներից մինչև բոցոտ կիրքն ու հեթանոս վայելքը, և այդ հախուռն տարերքից մինչև տիեզերական ընդգրկումներ։ Եվ իր բոլոր դրսևորումներում սիրո երգը հնչեցնում է արտակարգ թեթևությամբ՝ ամե-նամեղմ, ասես մշուշում հալվող ցոլացումներից, հագիվ նշմարվող նվագուն ուրվագծե-րից անցնելով վառ, ազդու ու թանձր վրձնահարվածների, տրտմությունից՝ պոռթկացող ցնծություն, շշմեցնող հանդգնությամբ խաղալով կոնտրաստների հետ, իրար բախելով ու իրար խառնելով կյանքի ու մահվան, երկրի ու երկնի հակոտնյա ուժերը։

5

«Սիրո շողքերը» կարդալիս անհնար է չհիշել Գոլ Վեռլենի «Աշնան երգը». մելա-մաղձոտ նույն նվագը, նույն անբացատրելի վհատությունը, նույն կարճ տողերը մեղմ երաժշտայնությամբ և ռիթմն էլ զարմանալի տրտմությամբ թաթավուն.

Երգը հուշքին
Սրբտիս խորեն
Կուլա ուժգին
Վրհատորե՞ն։

Պոեզիայում կա տխրության, անհանգստության մի տեսակ, որի հասցեն լավ հայտնի է՝ սիմվոլիզմ։ Ընթերցողը հաճախ դժվարանում է բացատրել, թե այդ սիմվոլիստա-կան տխրությունը ինչպես է հաջողվում ճանաչել առաջին իսկ ունկնդրումից. բանաստեղ-ծության հնչականությամբ, տրամադրությունների, մտածությունների տարտամությամբ, լեզվի փխրունությամբ, գույների մեղմությամբ, երբաճաշակությամբ, միևնույն է, եթե սիմվոլիզմի կնիքը կա բանաստեղծության վրա՝ անջնջելի է։ Եվ Ռուբեն Սևակի մի շարք բանաստեղծություններ կրում են այդ կնիքը. ակնհայտ ու դրանով իսկ չափազանց հնտաքրքիր, բայց և դժվարբացատրելի փաստ։ Սևակին հատուկ է պոետական սուզեստ-ոին (ներշնչում, ակնարկ, հուշում), անբռնելի հոգեվիճակներ արտահայտող մեղմերանգ, մարմրող պատկերները, հնչյունային-ինտոնացիոն աղոտ դաշնավորումները։ Վերնագրով իսկ չափազանց խոսուն «Բասթելը», որ սիմվոլիստական բանաստեղծության մի հիանալի նմուշ կարող էր համարվել, նույնքան բնորոշ է Սևակին, որքան հեթանոս ոգով գրված գործերը։ Այդ բանաստեղծությունում պաստելային երանգների փափկությունն է, աննկը-մար անցումները, անորոշ, տարտամ, մշուշի մեջ հալվող մի աշխարհ, Սևակի պոեզիայի անբիծ սիմվոլ անուրջների կարապով, տարակուսը արտաքին, ծավալվող ռեալականու-թյան ֆանֆարա, տրանսցենդենտալ էության հայեցությունը։

Կապույտ ստրի մը կատարին ամայի՝
Բաղեղապատ խարխուլ գմբեթն հմայարի·
Տարակույսի անդունդն ի վար կնայի։

Եվ այս ամբողջը մատուցվում է որպես բանաստեղծի հոգու պատկեր՝ «Հոգիս նիհար նրկար մըն է բասթելի», այսինքն ավելի նրբացված, էսթետացված, ուր բառերը ոչ թե կայուն ու կարծր նշանակություն ունեն և ունայ առարկաների իմաստների արտահայտիչն են, այլ բազմանշանակ են, շարժուն։ Կոնկրետ պատկերը չհասցնելով հստակ ուրվագծվել՝ շրանում է.

Ու այս բոլո՛ր կդոգա, կհալի,
Մշուշի մը տարտամությանը մեջ ուր
Լացող դեմքի մ'ստվերը կա՛ պաշտելի...

Այսպիսով, Սեակի բանաստեղծական խառնվածքին հարազատ էր մեղմ, ակնարկոտ սիմվոլիկությունը։ Սիմվոլիստական կատարյալ արվեստը նշանակալի դպրոց էր բանաստեղծների համար։ Սեակը յուրացրել էր սիմվոլիզմի նրբությունները՝ հզկելով, բյուրեղացնելով իր արվեստը։ Կիրառելով սիմվոլիզմի պոետական հնարավորություններ նա հզացավ սքանչելի բանաստեղծություններ մի փունջ. «Կարապներ», «Լեման», «Էջերվայս», «Վերջալույս», «Կարմրուն» և այլն։ Բայց ի՞նչ, անընկրկելի ջատագովի ճնշման տակ պնդել, որ Ռուբեն Սեակը որոշ գործերով սիմվոլիստ է և ջուգահեռաբար գրած այլ գործերով նեոռոմանտիկ։ Կամ, այս իսկ տրամաբանությամբ նույնարնել այդ երկու ուղղությունները։ Չէ՞ որ կան նույնիսկ առանձին գործեր, որոնք ասես երկու ուղղությունների պոետիկաների խաչաձևման արդյունք չինեն կարծես։ Ահա «Երգ երգոցի» առաջին իսկ տողը՝ «Երա՞գ, տնա՞ն, անգո սավե՞ր մ'անհոգի», որ հստակ ուղղություն է տալիս բանաստեղծության գարգացմանը տոնայնությամբ ու տրամադրությամբ, գլատկերման եղանակով։ Եվ առաջին տունը այդպես էլ կառուցված է։ Երկրորդում նույն տրամադրությունն է, բայց «անգո սավերի» փոխարեն արդեն «կապույտ վիթա՝ Լիբերային անբջանով», և նույնիսկ՝ «բու կարմիրը Պենկալյան վարդերու»։ Բայց և այնպես միանգամից չի հրդեհվում այդ գույնը, այլ ոժգունացվում, խառնվում է կապույտին. «Երազված կարմրությունն պես ոժգույն։ Գոգն աչերուդ կապույտն ունիս ջուրերու»։ Հայտոր տունն արդեն ոչ դժգույն կարմրակապույտը կա, ոչ էլ «տաքէլ ևս անգո սավերն ու ցնորքը», այլ «բացունք և հեշտանք. «Ծունչդ գինով է», «Զայնդ տարփոտա»։ Այս հատվածն է համընկնում «Աստվածաշնչի» «Երգ երգոցի» սկզբին. համբույր և գինի, Սեակի մոտ ձևափոխված այսպես՝ «հեշտանք, որ շրթներուդ մեջ Ցրմայնա»։ Առաջին երկու տունն այսպիսով բանաստեղծի սեփական մուտքն է դեպի Ինձա, գրված ժամանակի պոետիկայի, ավելի ճիշտ՝ սիմվոլիզմի ոգով, որը շատ հեռու է բնորինակի կրքոտ, զգայական սիրո բաց նկարագրությունից։ Հետաքրքիր է Սեակի «Երգ երգոցում», որ բնորինակի մի շատ կարևոր արտահայտությունը՝ «զի բուն է իրրեւ գմա՛ սէր», բերված է որպես բնաբան, իսկ տեքստում չի գրանցվել։ Ինչպես տեսանք սեր-մահ զուգահեռը նրա մի շարք այլ բանաստեղծությունների հիմքում է դնված։ Կարելի է ասել, որ բուն «Երգ երգոցը» սկսվում է երրորդ տնից, իսկ հաջորդում արդեն «Ամարմինդ ծորող խունկը մեղավոր» տողով տեսիլը չքանում է վերջնականորեն մարմնական վայելքի առաջ։ Եթե փորձենք նա զատել, կընթանանք դեպի կրքի մարում, գույների, գծերի աղոտացում, կնոջ «Քանանու գինենա թաղցր մարմնից դեպի տեհոգի ստվերը։ Թուլանում են և շնչերը, չքանում է սիրո ըմբոշխնումը, «Հազարարության այս

պատարագը», չքանում է արքեցումը, որ հինգերորդ տան մեջ տեսողության, լսողության, հոտառության շքեղ հաճույքներից հետո պիտի պարգևի շշուկների ասոմվածային սարսուռը.

Հրաշագո՜ւ... Ո՜հ, քու անդրիդ բյուրեղն,
Սրունքներուդ սարսռացող ձյունն հրաշե՜կ,
Ու անանո՜ւն ցոլքը, որ քեզ կ՚ողողե,
Մորթիդ թարո՜ւն գանգուրներուն խուրձը շեկ...

Տենչերի, կրքերի պոռթկումն իր այս բարձրակետից, հաջորդ տներում վայրէջք է ապրում, Գրանից անմիջապես հետո առվածք՝ «Տենչերուս վրա պիտի հանեմ այս գիշեր», ինքնամոռաց, մոլեգին զգայականության վիճակին հետևող՝ բանականության արթնացման նշան է։ Բայց դա էլ անհնար է թվում («Գոգիս թաղվել կուզի հուլորեն, ստինքներուդ մանրմունջներ մեջ կուլա»)։ Առաջ եկած այս ցանկությունը՝ ձուլվել, թմրել, չքանալ հարազատ ու մտերիմ էակի գրկում, դարձյալ տեսական չէ։ Տպավորությունների, վիճակների, ապրումների արագընթաց փոփոխություններին մի սքանչելի շղթա է այս բանաստեղծությունը, որի ամեն մի օղակը անձնակերտ գեղեցկություն է։ Վերջին տան մեջ վերականգնվում են մեղմ գույները. կիրքը սպառված է, մնացել է անհառ երանությունն ու հիացմունքը, մնացել է «Հյուսիսայգի աչքերով» ժպտուն աղջիկը։ Մեծագույնը՝ սիրո մեջ աշխարհի արարչագործությունն ապրելն է։ «Երգ երգոցը» սիրո այդ հրաշքի երկունքն է՝ «Ոչ մեկ արգանդ քեզ պես հրաշք չծնավ»։ Այդպես փրփուրներից ծնվել է Աֆրոդիտեն (հիշողություն, որ ակամա առաջանում է «Հառաջագայթի, փրփուրի խաղ մը ապրատամ» տողից)։ Անցյալից գոյը, երագից մարմնացած ռեալականությունը՝ արարչության պրոցեսն է դրվագված այս բանաստեղծությունում։ Ամփոփաշնչային «Երգ երգոցը» ծայրեծայր մարմնական սիրո փառաբանությունն է նույն բարձր հնչողությամբ։ Սևակի «Երգ երգոցը» կյանքային լինելությունն է իր վերիվայրումներով։ Լինելությունը կապակցված մի ամբողջություն է սիմվոլիկականության ու ռոմանտիկականության փայլուն միաձուլումով։ Այլ խոսքով՝ գեղարվեստական երկու ուղղությունների էկլեկտիկ միաձում չէ սա, այլ սիմվոլիզմի արվեստի հմուտ կիրառում նեոռոմանտիզմի մեջ։ Այդ արվեստի դրսևորումները Սևակի մոտ արդյունք չեն հետևողական ու որոշիչ սիմվոլիստական պատկերման եղանակի։ Եվ ոչ էլ կարող են ապացույց լինել հոգուտ սիմվոլիզմի ու նեոռոմանտիզմի նույնացման։ Այս երևույթը հաստատումն է գեղարվեստի պատմական զարգացման շատ կարևոր առանձնահատկության՝ այլ ուղղությունների ձեռքբերումների յուրացումն ու կիրառումը ստեղծագործական նոր արակների իրականացման պրոցեսում։ Ոչ միայն տարբեր ուղղությունների պայքար, այլև ներթափանցում, փոխհարստացում, եղած փորձի, ստեղծագործական հնարավորությունների յուրացում։

6

Կյանք-բնություն միասնության մեջ Թումանյան Սևակը գտնում էր լինելության ներդաշնակությունը՝ մարդուց տիեզերք արարման ու ավերման հարաշարժ տարերքով։ Հակադրություններով հանդերձ այս տարերքում էր նա գտնում իդեալը, գոյության գեղեցկությունները։ Բայց կյանքի բնական տարերքին թշնամի է հասարակությունը՝ չարիքի, դժբախտությունների, աններդաշնակության արմատը։ Արարումն այստեղ ողբերգական բնույթ և հետևանք ունի. սերնդագործումը, ծնունդը, ստեղծագործությունը մարդու տառապանքների սկիզբ են լոկ, որ ավարտվում են փրկարար մահով։ Ավերման ու չարիքի

այդ թագավորությունը այն քառան է, ուր մեկը ծնողական պահից տեր է, մյուսը՝ գրաբար «Հայրը» բանաստեղծությունում հանդիպում են հայր և որդի՝ ասված և մարդ, երկուսն էլ թշվառ, անորի, հիվանդ։ Արարչագործության արդյունքն այսպիսով, թշվառությունն է։ Թշվառների այդ աշխարհին, նրանց իրավունքների պաշտպանությանը Ռուբեն Սևակը պետք է նվիրեր իր ծրագրած «Քառաբ» բանաստեղծական ժողովածուն։ Խոսուն վերնագիրն ընդգծում է բնության և հասարակության խոր հակասությունը, կյանք-բնություն ներդաշնակության ավերումը։ Կյանքի նեոռոմանտիկական իդեալն է կործանվում հասարակական բիրտ մեքենայի անիվների տակ։ «Արգասավորում» բանաստեղծությունը դրա ցցուն արտահայտությունն է. ասու և էգ ծիրը մտրակի հարվածների տակ քաշում են «հավիտենական անեծքը»։ Տառապանքը մշտնջենական է, փոխանցվում է սերնդեսերունդ։ Բնության դրած «խենդ բնազդին հլու» կենդանի արարածները լույս աշխարհ են բերում դրատների նոր սերունդներին։ Տառապանքն այսպես ուղեկցում է կյանք մտած արարածին ոչ թե բնության, այլ մարդկային, հասարակական օրենքով։ Չի կարելի Ռուբեն Սևակի սոցիալական պոեզիան արհեստականորեն անջատել նրա այլ բնույթի բանաստեղծություններից։ Կյանք, սեր, արգասավորում, ծնունդ, ցեղ, հայրենիք հասկացությունները նույնքան ամուր են շաղկապված իրար, որքան անխուսափելի շաղկապված են «մարդկային օրենքին», հասարակությանը։ Հասարակական գոյի հակասություններն ու բախումները նկարագրելիս նա ավելի չի մոտենում իրականությանը, քան սեր և բնություն երգելիս— նույն նեոռոմանտիկական իդեաներն ու պատկերման եղանակն են գործում թե մեկ, թե մյուս դեպքերում.

Ավա՜ղ, այն ամեն բաներն ապաքեն
Որ շնորհվեցան մեզի երկինքեն՝
Մարդկային օրենքն արգիլեց մարդուն...

Սոցիալական իր պոեզիայում այս հարցադրումն է հիմնականը։ Այստեղ իր լրումին է հասնում կերպարը մարդու իբրև բնական-հասարակական արարածի, որն ընկած է ողբերգական հակասությունների մեջ։ «Քառասում» դյուցազոր հերոսը աշխատավոր մարդն է, բանվորը։ «Դրամին աղոթքը», «Գոլսո որովայնին մեջ», «Կարմիր դրոշակը», «Կարմիր տեսը», «Փողոց ավլողը», «Այս դանակը» գործերը գրկվածների, «Աշխատանքի նոթի սարուկներին» ծանր կեցության քննությամբ հանդերձ բարձրացնում են դասակարգային պայքարի խնդիրը։ Բանաստեղծն իրեն զգում է աշխատավորության բանակում, զինվորագրվում է արդարության ու ազատության վսեմ կռվին։ Արտաքուստ նա դիտողի դերում է. դա նկատելի է հատկապես «Փողոց ավլողը» և «Կարմիր դրոշակը» գործերում։ Բայց նա սովորական դիտող չէ։ Նրանց և իր միջև «Մեկ տարբերություն միայն ԿԱ կա», այն է, որ ինքը փնտրում է կյանքի «ինչպես ու ինչուն»՝ աշխատում և պայքարում է իր ստեղծագործությամբ։ Հետևաբար նրա դիտելը գործել է տառապանքի իր եղբայրների հետ միասնորեն։ Սևակի համոզմունքով բացառիկ է գեղարվեստի դերը ազատության պայքարում և այդ դերի գիտակցությամբ էր նա ստեղծագործում, քաղաքական իր դավանանքով կանգնելով ժամանակի ամենաառաջավոր՝ պրոլետարիատի պայքարի դիրքերում։ Փողոց ավլողը վիթխարիանում է, սիմվոլացնում արդար աշխատանքի հզոր ուժը.

Ավլե՛ մարդկության ցեխն ու կեղտն անվերջ,
Ավլե՛ ու գիտցիր, որ միշտ ճ՚ազատուի...

Պատմության դարավոր հոլովույթի մեջ կուտակված հասարակական ազդը ավելու համար միակ այդ ուժը՝ արյան աշխատանքի ուժը, համագրվում է արվեստագետ-մարտիրոսի, արվեստագետ-մարդարեի առեղծագործությունը։ Հակասությունի եղբայրներ, նրանք նվիրվում են կյանքի ու լուսավոր ապագայի համար մղվող պայքարին։ Ահռելի, անգիտում պայքար անվերջանալի կեղտի դեմ։ Գեղարվեստը խաղացնում է իր մեջ մարդկության իդեալները։ Առաջնորդելով «մարդկությանն ամբողջ», արվեստագետը չի կարող անջատվել ազգությունից, նահատակվող ժողովրդի փրկության գործից. դրանք էությամբ նույն ազատության պայքարի երկու անբաժան ոլորտներն են։

1909-ի ապրիլին Աղանայում թուրքերը կոտորեցին 30.000 հայ, այրեցին ու ոչնչացրեցին բազմաթիվ կառույցներ, հայերին հասցնելով նաև հակայական նյութական վնաս։ Ռուբեն Սևակին միայն լուրերը չէ, որ հասան։ Նա տեսավ Լոռանում ցուցադրված լուսանկարները։ Ցնցված թուրք մարդասպանների անպատկերացնելի ոճրագործություններից, դառնացած հայության անազնվանությունից ու աշխարհի անտարբերությունից, «Ջարդի խենթը» պոեմում կատարված թատմնելիություններ նա ներկայացրեց տիեզերական անչափելիությամբ.

Չէ՞ որ դուն վազո՞ւց մեռեր ես, Աստվա՞ծ,
Ու քու հսկայի դիակդ անբա՞վ,
Գարշանքի ժահրո՞վն արյունաթաթավ,
Ապականե՞ր է երկնից անապակ
Սիր-կաթիններուն երազն անհատակ...

Նորից արյունով էր ներկվել Հայկական Կիլիկիան, որի անմահ գեղեցկությունները, ժողովրդի և բանաստեղծի անհատակ երազի հետ սպանդի զոհ դարձան, ապականվեցին, այլանդակվեցին։ Ամեն ինչ տակնուվրա եղավ բանաստեղծի հոգում, հովվերգությունն ու եղեռնը, առասպելի դրախտը և հավատի դժոխքը խառնվեցին իրար։ «Ով իմ հայրենիքս...» Կիլիկիո արյունին նվիրված բանաստեղծությունն այդ անասելի ցավով, այրվող հոգու կրակով է ծալված. երազային անհունությամբ շնչող իրականության անկարելի նրբությունների մեջ խուժում է եղեռնի մղձավանջը։ Եվ մի բանաստեղծության մեջ Ռուբեն Սևակը տալիս է ասես իր պոեզիայի խառնված պատկերը. բնություն, սեր, իդեալ, երազ և... կոտրած։ Բանաստեղծել կյանքի և հոգու գեղեցկությունները և նկարագրել բարբարոսությունները։ Մեկը որքան ցանկալի, մյուսը նույնքան հրամայական անհրաժեշտություն էր, ազգային և մարդկային պարտք։ Բայց հնարավո՞ր էր այդ հակադրությունները դնել կողք-կողքի, համատեղել անհամատեղելին և այն էլ անթերի արվեստով։ Բանաստեղծը գեղարվեստորեն համատեղում է հակադրությունները՝ դ. տեսով իսկ անգերազանց ուժ հաղորդելով։ Սայրահեղ հակադրությունը ներթափանցված է կյանքի ու մահվան, ներդաշնակության ու աններդաշնակության, իդեալների ու ռեալների ռոմանտիկական հզոր ոգով։

Ջարդը պատկերելիս բնավ հարկ չկար դիմել երևակայության ու հորինվածքի։ Սևակը առանց չափազանցնելու տալիս է իրողությունը։ Ավելին, սարսափելի ճշմարտությունը բացահայտելու համար նա անդրադարձնում է ոչ այնքան ջարդի պատկերները, որքան դրանց հոգեբանական արձագանքը, առաջացրած ապրումները, մտածությունները, ստեղծում է դրանց բանաստեղծական համարժեքը՝ դիմելով թե տիեզերական անսահմանության, թե անցյալի մեծության, թե ազգային ոգու նշխարներին ու ազգային արժեքներին, առասպելներին ու իրադարձություններին, սիմվոլներին ու իդեալներին։ Մերթ հուսահատ զայրույթից նա արդար ցասման ու վրեժի խոսքն է բորբոքում, նախ-

ճիրաններից հրաշքով փրկված թշվառ որբուկների մեջ տեսնելով վաղվա հերոսներին, մերթ գերեզմաններից դուրս է կոչում նահատակներին ընդդեմ ոճրագործների, քանզի վերջիններս չեն կարող խուսափել պատմության դատից։ Անմեղ զոհերն անպարտելի են։

«Ջարդի խենթում» որդին ուսին դրած տանում է քահանա հոր դիակը՝ քրիստոնեական գաղափարախոսության բեռը, որի ողջ անհեթեթությունը շեշտվում էր հատկապես համազգային ողբերգական այդ իրավիճակում։ Խենթը իդեապես ու գեղարվեստորեն գտնված միջոց է, որպես կրկնակը Բաֆֆու ազատագրության մարտիկ խենթի էներգիայի։ Ավելի ուժեղ են հնչում այդ «խենթի» խոսքերը նետված այս ապուշ կյանքի «խելոքներին», նրանց, ովքեր ճշտորեն կատարում էին եկեղեցական ծեսերը դրանով ապահովելով ստոր արարքների իրենց իրավունքը։ «Շնալո՛ւ, ստելո՛ւ, գողնալո՛ւ» այդ գաղափարախոսությունը բանաստեղծի համոզմունքով ժողովրդի կործանման պատճառներից էր։ Իրենց իսկ ստեղծած մահճում գոհ ու բախտավոր, առաջնորդ լստրած «Մաղմոսավ սնած սոփեստներն ուժան» չէին տեսնում, որ մոտենում է կոտորածը։ Ռուբեն Սևակի մոտ Եղեռնը ոչ միայն ազգային, այլև սոցիալ-տնտեսական, գաղափարական-քաղաքական խնդիր է։ Ասածու գարշ դիակը սիմվոլացումն է բոլոր փծուն գաղափարների կործանման։ Միևնույն մեկնակետից ու միևնույն համոզմունքով նա գրում է «Առջի հայերը» և «Վերջին հայերը», աշխարհում ազատության համար մեռնող վերջին մարդիկ վերջին հայերը պետք է լինեն։ Որքան էլ դարերը մահ են ցանել, հայությունը հավիտենական տոկունությունն ու մաքառումն է հանուն լույսի, հանուն անմահության հաստատման։ Փոշիացել են հին աշխարհի հզոր, բռնակալ պետությունները, հայերը գոյատևում են անգամ մահվան հոգեվարքի մեջ։

Այսպես անմահացավ նաև Ռուբեն Սևակը, հավերժական Մարդը, հավերժական Ուղևորը։

Չըդիտնա՞լ, որ հոս Իսեալը չիկա...
Ուխտագընա՞ց երթալ ափերն հեռակա,
Դեպի ուղին Երչանկության մշտակա...

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉՅԱՆ

ԿԱՋՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Ռուբեն Սևակը կենդանության օրոք հասցրեց ընդամենը մեկ ժողովածու հրապարակել. Կարմիր գիրքը, 1910, Կ. Պոլիս, 71 էջ։ Մինչև այդ գրքի լույս տեսնելը, նա արդեն ընդունված անուն էր գրական շրջանակներում։ «Մասիս», «Լույս», «Արևելյան մամուլ», «Ազդակ», «Սուրհանդակ», «Մեղու», «Ամենուն տարեցույց», «Գեղունի» և այլ պարբերականների էջերում տպագրված բանաստեղծությունները երկու-երեք տարվա ընթացքում նրան դարձրեցին այդ տարիների ամենասիրելի հեղինակներից մեկը։ «Կարմիր գիրքը» պայծառակս եկավ վերջնականորեն հաստատելու այդ կարծիքը։ Մամուլը միաձայնորեն բարձր գնահատեց բանաստեղծի առաջին գիրքը, և դժվար է ընդունել սևակագետ Վ. Կիրակոսյանի այն կարծիքը, թե նրա «մուտքն այնպես շռնդալից ու հաղթական չեղավ, ինչպես «Միածանը», «Մշեղի անուրջներ», «Ցեղին սրտից հեղինակներինը» («Սովետական Հայաստան», ամսագիր, 1985 թ., № 2, էջ 12)։ Գրականագետը մասամբ իրավացի կլիներ, եթե խոսքը գնար հետագա տասնամյակների մասին, քանզի իսկապես դեպքեր եղան, երբ Ռուբեն Սևակի ժառանգությունը իր արժանի գնահատումը չունեցավ, որի հետևանքով, թերևս, բանաստեղծն էլ իր արժանի տեղը չգրավեց մեր գրականության պատմության մեջ։ Իհարկե, այս ցավալի երևույթը բացատրող որոշ օբյեկտիվ հանգամանքներ կան, որոնց կանդրադառնանք վաղը, սակայն, եթե խոսքը վերաբերում է գրական առաջին ջալերին, այսինքն մինչև «Կարմիր գիրքը», ապա կարելի է ճիշտ հակառակը ասել։ Ռուբեն Սևակի մուտքը գրական աշխարհ, իսկապես շշոնդալից էր ու հաղթական։ Բավական է նշել թեկուզ այն փաստը, որ նա Միսաք Մեծարենցի կամ Վահան Տերյանի հասցեին անհերքելի մեղադրանքներ ներկայացնող ջննադատների գրոհներից խապառ հեռու մնաց։ Նրա առաջին իսկ բանաստեղծություններից ստեղծվեց միաձայն հիացական կարծիք։ Օրինակ՝ բանաստեղծի գրական մուտքի երեք տարին նոր էր բոլորել, երբ Բաբթող Զորյանը՝ ժիրայր ծածկանունով,

գրում էր. «Ռ. Սևակ իր գրական սկզբնավորության մեջ իսկ, բանաստեղծի հոյակապ հայտնություն մը բերավ մեր գրականության... Դեռ նորահայտ բանաստեղծ մը Սևակ, կրնանք ըսել, որ շատ մը պատկառելի հիներու արժեքը ունի, ուշագրավ է և մեզի համար, առանց չափազանցության, բյուրորեն թանկագին գոհար մ'է»։ («Արևելյան մամուլ», 1909 թ., № 27, էջ 643—44)։ Այս խոսքերը գրվում էին ընդամենը մի քանի բանաստեղծություն լույս ընծայած հեղինակի մասին, որը դեռ շատ ավելին ուներ անելու։ Իսկ «պատկառելի հիներ»-ն էին Տեմիրճիպաշյանը, Զրաբյանը, Սիպիլը... Նույնպիսի բարձր և անվերապահ գնահատությունների արժանացավ և «Կարմիր գիրքը», որը լույս տեսավ բանաստեղծի մուտքից չորս տարի անց։

Ցավոք սրտի, բանաստեղծին ամբողջությամբ չհաջողվեց իրականացնել ստեղծագործական մի շարք ծրագրեր, այդ թվում բանաստեղծական հաջորդ ժողովածուների հրապարակումը։ Մերուժան Պարսամյանը վկայում է («Շանթ», 1918, թիվ 2), որ Սևակը մտադիր էր լույս ընծայել «Սիրո գիրքը», «Քաոս» և «Վերջին հայերը» ժողովածուները։ Ցերերական մահը խանգարեց բանաստեղծին իրականացնելու իր հոյակապ ծրագրերը։ Գուցե որոշ չափով դեր է խաղացել նաև նրա ծայրահեղ խստապահանջությունը։ Պահպանված մի շարք ձեռագրերը դրա վկայությունն են։ Որոշ բանաստեղծությունների վրա Սևակը աշխատել է մի քանի տարի և, ինչպես երևում է, դեռ չի հասել իր ուզած արդյունքին։ Նա շարունակել է կատարելության հասցնել նաև այն գործերը, որոնք մամուլում լույս տեսնելուց հետո միահամուռ հիացմունքի առարկա են դարձել։ Բացի այդ, որոշ փաստեր (բանաստեղծի օրագրի պատառիկները) առիթ են տալիս ենթադրելու, որ Ռուբեն Սևակը Կ. Պոլիս վերադառնալուց հետո (1914 թ.) ստեղծագործական մեծ բեկման նախօրյակին էր և հավանաբար որոշ անբավարարություն ուներ երիտասարդական տարիների մի շարք բանաստեղծությունների հանդեպ, որոնք պիտի վերոհիշյալ ժողովածուների մեջ մտնեին։ Այս ենթադրությունները, թերևս, պատասխան տան այն հարցին, թե ինչո՞ւ իր առաջին ժողովածուն լույս ընծայելուց հետո նա չշտապեց և հինգ տարվա ընթացքում չհրապարակեց երկրորդ և մյուս ժողովածուները, երբ դրանց համար գրված բանաստեղծությունների մեծ մասը հրապարակվել էր մամուլում և բարձր գնահատության արժանացել։ Բոլոր դեպքերում, կասկած չինել չի կարող, որ թվարկված ժողովածուների տպագրվելը մի նոր լույսի տակ պիտի ներկայացներ բանաստեղծի բացառիկ տաղանդը։ «Սիրո գիրքը», «Քաոս» և «Վերջին հայերը» գրքերը լույս չեն տեսել, սակայն հրաշքով պահպանվել են գրեթե բոլոր այն բանաստեղ-

ծությունները, որոնք պիտի ամփոփվեին դրանց մեջ։ Այդ բանաստեղծությունները երեք կարգի են. հեղինակի կենդանության օրոք կամ մահվանից հետո մամուլում լույս են տեսել, սակայն հեղինակի կողմից ոչ մի ժողովածուի մեջ չեն ընդգրկվել։ Ճիշտ է այս բանաստեղծությունների մեծ մասը հետագայում մտել են տարբեր ժողովածուների մեջ (Ռուբեն Սևակ. «Կարմիր գիրքը», «Սիրո գիրքը» և «Ցրիվ թերթվածներ» բաժիններով, Երուսաղեմ, 1944 թ., Ռուբեն Սևակ (Ռ. Չիլինկիրյան), Բժիշկին գիրքն փրցված էջեր և Թերթվածներ, Փարիզ, 1946, Ռուբեն Սևակ, երկեր, Երևան, 1965, «Հայ դասականներ» մատենաշար, Ռ. Սևակ, Վ. Թեքեյան, Ռ. Որբերյան, Մ. Զարիֆյան, Երևան, 1981 թ.)։ Երկրորդ կարգին են պատկանում այն բանաստեղծությունները, որոնք մամուլում լույս են տեսել, բայց դուրս են մնացել ինչպես վերոհիշյալ ժողովածուներից, այնպես էլ գրական-ընթերցողական լայն շրջանառությունից։ Երրորդ կարգը կազմում են անտիպ բանաստեղծությունները։ Ռուբեն Սևակի բանաստեղծական այս ժառանգությունը («Կարմիր գիրքը»-ից զատ) տեքստաբանների առջև դնում է լուրջ և առայժմ անլուծելի մի խնդիր. ի՞նչ սկզբունքով դասավորել այս բանաստեղծությունները։ Մ. Պարսամյանի թվարկած ժողովածուների վերնագրերից որի՞ տակ պիտի մտնի յուրաքանչյուր բանաստեղծություն։ Մենք առայժմ չունենք հեղինակի ձեռքով կազմված որևէ ցուցակ, որով կարողանայինք այսօր առաջնորդվել և բանաստեղծությունները զետեղել ու հերթաշարել այնպես, ինչպես ծրագրել էր ինքը՝ Սևակը։ Վ. Կիրակոսյանը գտնում է, որ «պահպանված ձեռագրերից, ինչպես նաև մամուլում տպագրված առանձին բանաստեղծությունների վերաբերյալ հեղինակի նշումներից հնարավոր է գեթ մոտավոր կերպով պարզել մնացած շարքերի բնույթն ու բովանդակությունը» (Վ. Ա. Կիրակոսյան. Ռուբեն Սևակ. Կյանքը և ստեղծագործությունը. Երևան, 1972 թ., էջ 9)։ Գիտական ուսումնասիրության նպատակներով, թերևս, կարելի է «գեթ մոտավոր» սկզբունքով առաջնորդվել։ Բայց երբ խոսքը բանաստեղծի տեքստերի հրապարակման մասին է, ենթադրությունների վրա հենվելու իրավունք չունենք։

Գործը գուցե որոշ չափով հեշտանա «Սիրո գիրքը»-ի պարագայում, քանզի հեղինակը, իր կենդանության օրոք, այդ ընդհանուր վերնագրի տակ մի շարք բանաստեղծություններ է հրապարակել։ Սակայն սա ևս հեռու է ճշգրտությունից և հարցի էական լուծումը չի կարող տալ։ Նախ, ստուգիվ հայտնի չէ, թե մամուլի էջերում՝ այդ ընդհանուր վերտառությամբ տպագրվող բանաստեղծություններից արդյոք բո՞լորը կմտնեին հետագա նույնանուն ժողովածուի մեջ և ինչպիսի կարգով կդասավոր-

վեին։ Բացի այդ, միայն սիրո մոտիվներով գրված բանաստեղծությունները պիտի մտնեին այդ ժողովածուի մեջ, թե՞ նաև մահվան մոտիվներով։ Ինչպես հայտնի է, Ռուբեն Սևակի պոեզիայում, այս անտինոմները՝ սեր (կյանք)—մահ, հաճախ դառնում են հոմանիշներ, փոխում իրենց տեղերը, մահվան և սիրո հրեշտակը ներկայանում է միևնույն կերպարանքով։ Սա Սևակի պոեզիայի կարևոր պրոբլեմներից մեկն է, և շատ հետաքրքիր է, թե այդ գաղափարը ինչպես պիտի բացահայտվեր ու զարգանար ժողովածուի մեջ։

Կարելի է նաև ենթադրել, որ սոցիալական և ազգային մոտիվներով գրված բանաստեղծությունները, համապատասխանաբար, պիտի հավաքվեին «Քառոս» և «Վերջին հայերը» ժողովածուների մեջ, սակայն միևնույն հարցերը ծագում են նաև այս պարագայում. այդ մոտիվներով գրված բոլո՞ր բանաստեղծությունները և ինչպիսի՞ հերթաշարումով։

Այս վերջին հարցը կարող է թվալ երկրորդական, սակայն բավական է ծանոթանալ «Կարմիր գիրքը»-ի բանաստեղծությունների դասակարգմանը և անմիջապես կերևա, թե Ռուբեն Սևակը և ընդհանրապես այդ ժամանակի բանաստեղծները ինչպիսի կարևորություն էին տալիս ժողովածուի կառուցիկությանը, ներքին և արտաքին արխիտեկտոնիկային։ Գրեթե մաթեմատիկական ճշգրտության է հասնում գրքի յուրաքանչյուր բաժնի, յուրաքանչյուր էջի թեմատիկ-գաղափարական ծանրաբեռնվածությունը։ Բանաստեղծությունները բաժանված են երեք ենթավերնագրերի տակ. «Ջարդի խենթը», «Թրքուհին» և «Մարդերգություն»։ Մոտավոր դասավորություն կա նաև յուրաքանչյուր շարքի ներսում։ Իսկ գրքի ամբողջական տպավորությունը և եզրակացությունը հետևյալն է. մարդկային ցեղի ողբերգությունը իր հիմքում ունի ինչպես սոցիալական անհավասարությունը, այնպես էլ ազգային ցավը։ 1909 թ. Կիլիկիայի ջարդի տպավորություններով ստեղծված բանաստեղծությունները աստիճանաբար լցվում են «Մարդերգություն» շարքի համամարդկային հոգսերի մեջ, ստանում այլ գունավորում։ Եվ այս բոլորը կարելիս ճարտարապետի մտածված աշխատանք լինի, այն տարբերությամբ, որ սրբատաշ քարերի փոխարեն, իրար վրա շարվում են բանաստեղծությունները, և եթե փորձենք մտովի խախտել ժողովածուի այդ կարգը, անմիջապես կխախտվի կամ առնվազն այլ բնույթ կստանա սոցիալական-փիլիսոփայական այն պաթոսը, որը ծնվում է բանաստեղծի նրբակառույց աշխատանքից։ Ավելին, եթե դեպքերի մի դժբախտ քերումով Ռուբեն Սևակը հասցրած չլիներ հրատարակել նաև իր միակ ժողովածուն, մենք, իհարկե, այսօր կունենայինք այդ բանաստեղծությունները, սակայն չէր լինի «Կարմիր գիրքը» որպես էտապային երևույթ մեր գրա-

կանությանն պատմության մեջ։ Ուրեմն, դժվար չէ հետևություն անել, որ այսօր եթե ունենք հարյուրից ավելի բանաստեղծություններ, որոնք հնդինակը չհասցրեց ժողովածուների մեջ հավաքել, դա չի նշանակում, թե ունենք մտավոր-բարոյական այն մեծ նվաճումները, որոնք պիտի անպայման ունենային՝ վերը հիշված գրքերը ժամանակին լույս տեսնելու դեպքում։ Մնում է ավելացնել, որ դրանց մի զգալի մասն էլ՝ անտիպները, ուշացումով են գալիս մտնելու հոգևոր մեր կառույցի մեջ։ Մեծ բանաստեղծների յուրաքանչյուր ժողովածուն իր կառուցվածքով ամբողջ ինքնին մի առանձին բանաստեղծություն է։ Մալլարմեն ամբողջ կյանքում երազում էր ստեղծել իր «խեղկատակ, մտածված և հարատարապետորեն կառուցված գիրքը և ոչ թե ոգեշնչումների մի հավաքածու, որքան էլ որ դրանք հոյակապ լինեն»։ Մալլարմեն այդ գիրքն անվանում էր Բայարձակի գիրք, «որի մեջ տեքստը պիտի խոսեր ինքն իր հետ, առանց հեղինակի ձայնի»։ Սիմվոլիստները և նրանց հաջորդած բանաստեղծական դպրոցները մեծ կարևորություն էին տալիս առանձին բանաստեղծությունների և շարքերի միջև ստեղծվող ներտեքստային կապերին։ Դա այն անդրադարձարանն էր, որը ստեղծվում էր առանց «հեղինակի ձայնի», այսինքն՝ հեղինակի բուն տեքստից դուրս և ներքին աշխարհ էր պետք այդ կառույցը կերտելու համար։ Այդ կառուցիկությունը առկա է Ֆերլենի բոլոր գրքերում, դա առանձնապես նկատվում է Ջարենցի «Գիրք ճանապարհի»-ում։ Ռոբերտ Մեսկը, որ մոտիկ էր կանգնած դադաիստների հետսիմվոլիստական պոետիկային, ինչպես տեսանք, միջտեքստային և ներտեքստային պոետիկայի ստեղծման որոշակի աշխատանք է կատարել իր առաջին ժողովածուի մեջ և նույնը, հավանաբար, պիտի աներ հետագա ժողովածուները կազմելիս։ Ուստի, այսօր մեծ բանաստեղծների չհավաքված և չհրապարակված չափածո ստեղծագործությունները կազմողների առջև կանգնում են դժվար, գրեթե անլուծելի խնդիրներ։ Եվ այսօր Ռոբերտ Մեսկի չհրապարակված և իր չկազմած ժողովածուները կազմել, նշանակում է, ինչ-որ չափով, նրա փոխարեն ստեղծագործել։ Եթե մեր ուշադիր և համառ պրպտումները շնորհիվ հնարավոր եղավ հայտնաբերել ավելի քան հիսուն անտիպ բանաստեղծություններ, ապա պետք է հուսալ, որ որևէ արխիվում, որևէ ձեռնահարելի կամ նկուղի մոռացված մի անկյունում կհայտնաբերվի բանաստեղծի ձեռքով գրված այն ցուցակը, որը հիմք կդառնա մյուս ժողովածուների համար։

Եվ մենք այդ, կարծում ենք, որ ներկա ժողովածուի համար ճշգրիտ կլինի բանաստեղծի՝ մեզ հասած ժառանգությունը ներկայացնել հետևյալ դասավորությամբ. «Կարմիր գիրքը», բանաստեղծի կենդանու-

թյան օրոր և մահվանից հետո լույս տեսած բանաստեղծություններ՝ ըստ հրապարակման հերթականության, և անտիպներ։ Ժամանակագրական սկզբունքով է ներկայացվելու նաև արձակը և որոշ նամակներ։ Այս հատորն, իհարկե, դժվար է անվանել Ռուբեն Սևակի գեղարվեստական երկերի լիակատար ժողովածու, սակայն սա ամենաամբողջականն է մինչև այժմ եղածներից։ Բավական է ասել, որ թե՛ ծավալով, թե՛ հավաքված նյութերի քանակով մոտ երկու անգամ մեծ է նրա 1955 թ. երևանյան ժողովածուից, որը մինչև այժմ հրապարակվածներից ամենածավալունն էր։ Մի խոսքով, առաջին անգամն է, որ Ռուբեն Սևակի գրական ժառանգությունը ներկայացվում է այսպիսի ամբողջության մեջ՝ գրեթե լիակատար։ Սա առիթ է տալիս նաև հուսալու, որ մեր գրականագիտությունը մի նոր փորձ կանի ըստ արժանվույն գնահատելու բանաստեղծի ժառանգությունը։ Մինչև այժմ Երևանում երեք մենագրություն է լույս տեսել նրա մասին (Գ. Հատիտյան, Ռուբեն Սևակ, Երևան, 1959 թ., Էդ. Ջրբաշյան, Ռուբեն Սևակ (ստեղծագործության համառոտ ակնարկ), Երևան, 1966 թ., Վ. Ա. Կիրակոսյան, Ռուբեն Սևակ (Կյանքը և ստեղծագործությունը), Երևան, 1972 թ.)։ Նոր հայտնաբերված նյութերը հրաշալի հնարավորություն են ստեղծում նորովի և ըստ արժանվույն գնահատել բանաստեղծի գրական ժառանգությունը։ Տեքստերը հավաքելիս աշխատել ենք որպես ելակետ ընդունել առաջին հրապարակումը, ինքնագիրը կամ հավաստի այլ աղբյուրներ։ Ինչպես պարզվեց, մամուլում լույս տեսած բոլոր բանաստեղծությունները չեն, որ զետեղվել են ժողովածուների մեջ, ինչպես նաև ոչ բոլոր արձակները։ Այդ կարգի շուրջ երեք տասնյակ չափածո և արձակ ստեղծագործություններ դուրս են մնացել կազմողների ուշադրությունից և չեն մտել նախորդ հինգ գրքերի մեջ, ըստ որում՝ բարձրարվեստ և կարևոր բանաստեղծություններ։ Ցավոք սրտի, ժամանակի սղության պատճառով, հնարավոր չեղավ վերջնականապես պարզել ձեռքի տակ եղած բոլոր բանաստեղծությունների ստեղծագործական պատմությունը (երբ և որտեղ է գրվել, անտիպ է, թե՞ ոչ, առաջին անգամ որտե՞ղ է տպագրվել և այլն)։ Մեր աշխատանքը դժվարացավ նաև նրանով, որ Ռուբեն Սևակի ժառանգությունը ծավալով չնայած մեծ չէ, բայց փաստորեն առաջին անգամ է փորձ արվում գիտական մշակման ենթարկելու։ Ժողովածուն հավաքվել է Ե. Չարենցի անվ. Գրականության և արվեստի թանգարանի և Նիցցայում գտնվող՝ Ռուբեն Սևակի ամբողջական գործերի հավաքման հանձնաժողովի նյութերով։ Օգտվելով առիթից, մասնավոր շնորհակալություն ենք հայտնում հանձնաժողովի անդամներ Հովհաննես Չիլինկիրյանին (Ռ. Սևակի եղբոր որդուն) և ճարտարապետ Տիգրան Համբարձումյանին՝ թանկարժեք օգնության համար։

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ
(1910 թ.)

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ
(բեմական մենախոսություն)

ՔՐՔԻՋԸ
ԹԱՓԱՌՈՒՄԸ
ԿԱՐՄԻՐ ԴԱՏԱՍՏԱՆ
ԱՆՈՆՔ ՈՐ ԿՈՒԳԱՆ
ՄԵՐ ՔԱՀԱՆԱՆ
ԳԵՏԸ
ԱՍՏՎԱԾԸ
ԳԻՇԵՐԻՆ ՄԵՋ ԵՐԴ
ՈՃԻՐԸ
ՑԵՂԻՆ ՈՒԽՏԸ

— Է՜հ, հա՜, հա՜, հա՜, հա՜.
Հորս դիակն ուսիս, կքալեմ ահա՜
Ջարդվածներու դաշտին վրա լուռ...
Ջառա՜մ Քահանա, դիակդ տրխուր
Ի՜նչ ծանր է ուսիս, ի՜նչ ծանր է ուսիս...
Անշուշտ երբ իրր խենթ արտաքսեցիր դիս
Հայրենի բույնեդ, չի խորհեցա՜ր բնավ
Թե պիտի գայի գտնել քեզ խոնավ
Թագստոցիդ մեջ խեղդված, շան մը պես,
Իմ պա՜տոքս վերջին կատարելու քեզ...

— Է՜հ, հա՜, հա՜, հա՜, հա՜.
Բոլոր խելացի մարդիկներն ահա՜.

Ահա՜ խելոքներն այս ապուշ կյանքին,
Ահա՜ անոնք որ իրենց ծանր հոգին
Համբիչ քաշելով կ՚զբոսցնեին,
Ու նվիրումով մը աստվածային՝
Կիրակին անգա՛մ մը բերանով ծոմ
Տիրամոր առջև կ՚սպառեին մոմ,
Շարաթ մը ամբողջ, անվա՛խ, անհամա՛ր,
Շնալու, առնալու, զողնալու համար։

— Է՜հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Բզոր տիրացու հոգիներն ահա՛.
Ահա անոնք որ, ուղեղնե՛ր ծանծա՛ղ,
Ամեն մութ հարցի ունեին ծիծաղ.
Աղմտով անած սոփեստներ ուժան՝
Հեշտ կլուծեին հարցումներ դաժան.
Դամոկլյան սուրի մը տակ դող ի դո՛ղ՝
Շտեմարաններն կ՚ուռցնեին զո՛հ,
Հաբանիքները շե՛ն տոնելու վաղվա՛ն...
Ու չէին հաճե՛ր խակ խորհիլ Մահվան...

— Է՜հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Բայց ինչո՞ւ քրքիջս այսպես կդողա...
Ահա բոլո՛ր ալ, բոլո՛ր ալ, բոլո՛ր,
Մութին ու լուսին մեջ անդնդախոր,
Պառկա՛ծ խալական, պառկա՛ծ ամբարիշտ,
Պառկա՛ծ բարեղեն ցամի մեջ ընդմիշտ,
Պառկա՛ծ, Աստվա՛ծ իմ. ու որչափ ալ կա՛,
Ու որչա՛փ ալ կա, մինչև հեռակա
Համբարներուն ե՛զրը փոքա՛ծ, կարծես
Անդրհեղեղյան անատամ մը պես...

— Է՜հ, հա՛, հա՛, հա՛, հա՛.
Լուս գիշերին մեջ շուներուն, ահա՛,
Երախին մեջ— զեռ կյանքով գալարուն
Կրլսեմ ճարճա՛տը ոսկորներուն...
Բարեկամ շունե՛ր, բարեկամ ձեռքե՛ր,
Բարեկամ լեզվով լափլիզված վերքեր...
Երնե՛կ, գազաննե՛ր անբան... Բայց ինչպե՞ս

Բոլոր արշառնե՛րը, գլուխներն վե՛ս,
Սուրացին հեռո՛ւն դաշտերք անծի՛ք,
Գնդակնե՛ն, բացե՛ն, աչքերնին կապմիք...

Ու ահա ամբողջ գիշեր կշրջիմ,
Հիմա՛ր, խեղճ հիմա՛ր։
Եկլքս առիք շաաա՛նց, կյանքս առ, Փրկիչ իմ,
Աստվա՛ծ, մենք հիմա՛ր։

Ի՞նչ կնայիք ինձ, հոցնարք աչեք,
Հիմա՛ր եմ, հիմա՛ր։
Երնե՛կ, կմեռնիք, մինչ ես կ'ապրիմ դեռ
Այս կյանքք հիմա՛ր։

Կրովի դաշտերով ասաքի առանձին
Ստվերքս հիմա՛ր,
Շնորհ չբրին գնդակ մ'ալ ինձ, պատացին
«Հիմա՛ն է, հիմա՛ր»։

Դե՛հ, մտիկ բրեք, դուք որ կիսորդաք
Այս մահով հիմաք,
Արյունով շաղված պատմություն մը տաք,
Հիմա՛ր, ա՛հ, հիմա՛ր։

Ո՞ր խեղճ երկիրն է, ո՞ր թիվն Հիսուսի,
Ո՞ր թագավորն է— ականջք խասի—
Միայն թե բարի է շա՛տ ալդ արքան,
Մանրամասնություն չե՛մ գիտեր այնքան,
— Նույնիսկ իր ձիուն անուն չեմ հիշեր։—
Սև մղձավանջն մը վերջ մի գիշեր
Հրաման բրավ յոթ քաղաքներու
Յոթ տարիքեն վար բնակիչներն արու

Յոթը օրվա մեջ կտրել— պայմանավ
Որ տարեցներուն չի դպչին բնավ...
Ու տարեցներն այդ վերջին պայմանին
Շնորհապարտ եղան ա՛յնքան՝ որ ամեն
Յոթն էգ բնակչեն մին ըրին նվեր
— Նվեր էգերու յոթ տարիքեն վե՛ր—
Արքային ու իր խարճերուն արու...
— Քա՜ղցր անմտություն յոթը թիվերու...

Նոր թագակիրներն ի՞նչ շուտով մոռցան
Հին իմաստությո՛ւնը արքայական։
Ապշա՜ծ կդիտեմ քառոն այս անհո՛ն
Ու կխորհիմ թե ի՞նչ բառ, ի՞նչ անուն
Պետք է տալ այս զրոսանքին։
Ինչո՞ւ կտրել տալ անմիտ այս դողդոջագին
Գանկերը ծերուկ՝ պարապո՛վ լեցուն։
Ինչո՞ւ հոգնիլ այս կյանքերով փցուն։
Ինչո՞ւ կոտրտել՝ ծռելու պատրաստ
Այս լայն կոնակներն, արքայի՜ց գրաստ։
Այս համեստ, այս պարզ հոգիներն ընտել,
Արկատյան դրախտեն ինչո՞ւ վռնտել։
Գո՞նե մեկ մեկ աչք թող իրենց տային,
Ամբողջ կյանքերնին պիտ՝ աղոթեին...
Արքան ի՞նչ կ՚ուզեր իր ստրուկ մարդեն.
Ինչո՞ւ մեռցնել՝ մեռածներն արդեն...

Ու ինչո՞ւ թողուլ որ որբերն ապրին,
Այդ որդեգրյալներն արյա՜ն, խավարի՜ն։
Օր մը տարբրով փոքրիկ, հոգվով մե՜ծ,
Այդ մանուկներու խումբեր դառնահնձ,
Որ ո՛չինչ չունին այլևս, ո՛չ ծընո՛ղ,
Ո՛չ Աստված, ո՛չ ափ մը հայրենի հող...
Եվ որ կմուրան պատառիկ մը հաց՝
Հեռվեն պժգանքով իրենց կարկառված...
Եվ արենք Մարդուն մեջը սրբազան
Ոչի՛նչ գտան այլ վայրագ մի գազան...
Զգո՛ւյշ, այդ նույն հսկա մանուկներ մի օր
Նեխած ոսկրերու վրա բյուրավոր

Կարմիր—Դատաստա՛նը պիտի կանգնեն...
Ու չորս հովերուն նո՛ր Կամք, նո՛ր Օրեն
Պիտի շեփորեն... Ու այն ատեն, վա՛յ,
Վա՛յ բոլոր շնչող էակներուն, վա՛յ...

— «Ահա մենք կուգանք— կ՚ըսեն անո՛նք որ
Կուգան, չե՞ք լսեր արոփյունն ահավոր—
Մութը շնչելին աչքերնիս կուրցած
Ու արյան հոտեն ռնգունքնիս լայն բաց։

Ահա մենք կուգանք, ուսով հրելով
Մեր Ցավին Անիվը դարահոլով,
Երկրագունդիս վրա, խավարին մեջեն,
Բոլո՛ր անոնց վրա, որ դեռ կշնչեն...

Ահա մենք կուգանք, ահեղակորով
Մեր Հույսին կռանիթ գարշապարներով
Խոսեցընելու անանո՛ւն կորած
Գերեզմաններոցներն համայնատարա՛ծ...

Ահա մենք կուգանք, ու մենք նզովքն ենք,
Ու խավարին մեջ մխված տեղը նենգ.
Վրեժներու հիդրան ենք փայփայելի,
Մե՛նք, սարսափահա՛ր ու սարսափելի...

Մենք՝ հին ուխտերու նո՛ր ուխտագընաց
Մենք՝ Սուսերը բիրտ ու Գիրքն Օրինաց.
Մենք՝ Ցասման ջրվե՛ժը սարի կողեն.
Մենք՝ Աղջամուղջի ծընունդ լուսեղեն...

Ձե՛զի՝ որ քերծված մեր մորթերեն ձի՛գ
Հարսնիքի, Մեղքի վրաններ կառուցիք...
Ու Ձե՛զ՝ եվրոպյան դիք, որ շնագին
Սակարկեցիք մեր արյան լուծյան գին...

Ձեր սրտին գոնե՛ բը փակեցեք խուլ,
Սուրե՛ր սրբեցեք, սրբեցեք զանխո՛ւլ,
Սրեցե՛ք ձեր խղճին վրա քարացած,
Ու ատամներուն վրա ձեր զոռվակաց...

Ահա մենք կուգա՛նք. հովերուն մեջեն
Ձի՛ք լսեր ոսկրեր, որ կշշնչեն...
Ամենքս ալ դպիր դիակ, խոռոչ գանկ,
Ահա մենք կուգանք, ահա մենք կուգանք...»

— Երթամ, շտապեմ, ծածկելու փութամ
Վաղման ավոտե՛ն՝ դիակն այս զառամ։
Ծագող արե՛ն իսկ պիտի ամչնար
Այս ծերուկ վատին դիակին համար,
Դիակին համար։

Կ'բաւեր, հայրի՛կ. «Դրախտ երթալու
Կարճագույն ճամբան ըլլալն է հիլու
Հետեւող խուշի սուրբ արահետին...»
— Հա՛յր, է՛ն կարճ ճամբան խանչերն է Քուրդին,
Խանչերն է Քուրդին։

Կապար թալլերով, քյուրեքու կուրծքին
Վրա կբալեմ ես դանդաղագին։
Մակարդած արյո՛ւնն է իրավունքին
Որ իմ սրտանցս էծանրացընեն,
Կծանրացընեն...

Քալլերուս տակ հարդ դնան ահա՛։
Ա՛խ. նեռնցի զարդ. կ'երթա, կիրազոտ
Է՜հ, երթաս բարով, ծերո՛ւկ բահանա,
Արևն ա՛լ թեզի չի պիտի տեսնա,
Չի պիտի տեսնա...

Հաղարներու հետ, այսպե՞ս, անխափա՞ն
Պիտի երթաս դուն, ջո՛ւրը քեզ տապտա՛
Է՞հ, դնաս բարով, ծերունի՛դ անբան,
Դրախտ երթալու ո՞րն է կարճ ճամբան,
Ա՜յ, ո՞րն է ճամբան...

Այս վատերո՛ւն տեղ, օր մը, ո՞վ Սիհուն,
Դարավոր ալյացքդ վրա սիրուն
Ճերմակ կարապներ կթենն սահուն,
Երգե՞ր կթուչին ցայգի այս պահուն,
Ցայգի այս պահուն...

Երբեմըն, երբեմն, թերևս մի՞այն,
Ջուրերու խորքեն գանկ մը լռելյայն
Հառնելով, փուշ փուշ ընե սիրական
Ջույգերու համբույրն... Ամենը այսքան,
Ամենը ա՛յսքան...

Ջուրին մեջ երկինք կցոլա անհո՞ն...
Ո՞վ ոսկի եղեռն Մահու այս պահուն...
Կուռ մարգրիտներու շարք մանյա՛ն, մանյա
Աստղեր, ծիր-կաթին, լուսին, արբանյակ,
Լույս ստինքներու պես տոկո՛ւյզ, տոկո՛ւյզ,
Կկաթեն գինով հյութը հոգեհուզ...

Մեռնի՞լ... Աչքերնիդ երկի՛նք, արյունհա՛լ,
Խե՛ղճ հոգևարքներ... Է՞ր չեմ կրնար լա՛լ...
Լա՞լ. ո՛չ. բայց, դո՛ւն, դո՛ն տր գահեդ անհաս,
Բո՛ւռ բո՛ւռ աստղերու մեջ կխրոխտա՛ս,
Է՞ր չի կրնայի փտա՛ծ թոքերես
Արյունո՛ւտ, ժանգո՛ւտ խուխ մը շնորհել քեզ...

Բայց դուն բարձր ես, վերն. քու խիղճիդ մաքուր
Առանձնության մեջ. յոթ մարգարտակուռ
Կամարներեդ յոթն անգամ բարձրացած

Սերովբեներուդ միջև գետնամած...
Ու չես հաճիր ա՛չքդդ անկարեկիր
Ուղղել Մարդկության զոր հերկիր թուքիր...

Լո՜ւյս սանդուղներուդ ոսկի մատներեն
Իջի՜ր Եհովա՜դ, Ալլահդդ, Որ էն...
Այլ զգո՜ւշ. քու լույսդ մութին մեջ գո՜ցե.
Չի կառափնարանն այս անհուն գո՜ւցե
Խենթենա հանկարծ, գո՜ւցե ծերունի
Աչքերուդ մատներ խրվին արյունի...

... Խե՜ղճ հիմար։ Որո՞ւ էլխոսիմ փրփրա՜ծ։
Չէ՞ որ դուն վաղո՜ւց մեռեր ես, Աստվա՜ծ.
Ու քու հսկայի դիակդդ անբա՜վ,
Գարշանքի ժահրո՜վն արյունաթաթավ,
Ապականե՜ր է երկնից անապակ
Մեր-կաթիններուն երազն անհատակ...

— «Վարդե՜ր մեռան,
Վարդե՜ր մեռան
Իրենց բյուր-բուրան,
Ցողիկին վրան
Վարդե՜ր մեռան,
Վարդե՜ր մեռան։

«Արյունոտ, մանրիկ,
Ոտներդս բոպիկ
Դիակներու վրան
Դողդո՜ջ կ'երթան։
Վարդե՜ր մեռան,
Վարդե՜ր մեռան։

«Գթա ինձ, Աստվա՜ծ,
Մազերս ցրվա՜ծ
Կ'երթամ տարաժամ,

Կ'երթամ ու կու լամ
«Ո՞ւր է իմ վարդը
Ո՞ւր է իմ վարդը»:

«Կ'ուզեի՞ գլխուն
Տակ դնել անոնց
Գեհենը կուրծքիս:
Թող այսպես ճոգիս,
Մեռնե՛ր գուրգրանքո՛վ,
Իր դիակին քո՛վ...

Ո՞վ է ցայգին մեջ աղջիկն այս տրտում,
Որ խենթի մը պես կ'երթա անդադրում,
Դիակե՛ դիակ։ Ի՞նչ է այս հառաչ։
Ո՞վ է դիտապաստն այս՝ որու առաջ
Հեգը կանգնեցավ։ Ճի՛չ մը... Ու ահա՛
Վիրավորն ելլել կ'ուզե, կդողա.
Բազուկներն իրար կգալարվին քար...
Ու լուսնակին տակ, սերե՛ն խելագար՝
Արյունո՛տ, փրփրո՛տ՝ լա՛յն բերանը տաք
— Բյուր-ժանիք վիհի մը պես անհատա՛կ-
խոր հոնչյունով հոգնարքը արդ
Կպցուց սիրուհվույն բերնին վրրա վարդ...

Ահե՛ղ շրջանակ։ Զորս կողմը մեռել,
Մեջտեղը Սեր, մո՛ւթ արահետ անել։

... Զենքս կրակե՛ցի. գանկերն հակեցան։
Մոտեցա իրենց. ըսի բարձրաձայն
Հոլա՛, ընկերնե՛ր,
Ինչո՞ւ եք լռեր.
Ձեզ շա՛տ ալեր՞։
Դրախտ երթալու
Ո՞ւրն է կարճ ճամբան.
Ա՛յ, ո՛ւրն է ճամբան...

Հետո, ապշահա՜ր իրենց մունջ քունեն,
Գլուխքս զբրի երկյուղածորեն
Իրենց զույգ գլխին՝ քարացուցի գիս.
Ու երկաթե քուն մը ընկճեց հոգիս։

Այն ատեն հսկա մը զարկավ ուսիս.
— «Խե՜նթ, ի՞նչ կտեսնես, կ՚ուզեմ որ խոսիս»։
Ու ես խոսեցա ու ըսի՝ բեն
Իմ ապառաժե քունիս խորերեն.

— «Կտեսնեմ հարյուր հին քաղաքներու
Հարյուր աշտարա՜կը հեռուն հեռու։
Կտեսնեմ կապարագին մեջ տխուր,
Հարյուր զանգակները դարերով լուռ։

Կտեսնեմ հարյուր սարեր մոխրապատ,
Անցա՜վ, անժպի՜տ, իբրև անապատ։
Կտեսնեմ բերդեր անդունդներու քով՝
Ժամանակին դեմ գոցված՝ փականքով։

Կտեսնեմ մեր հին տապանաքարեր
Հազարներեն կոխված՝ անվնե՜ր։
Բյուր քառուղիներ կտեսնեմ, Աստվա՜ծ,
«Աստ-հանգշի»ներով սալահատակված...

Բայց ահա՜ հարյուր զանգերն համբոռեն
Երկյուղածո՜ռեն ու գիտակցորե՜ն,
Մութ գիշերին դեմ, ամե՜նքը մեկանց,
Փոշոտ լեզուներն շարժեցին հանկարծ։

Քառուղիներու տապաններն անձայն,
Խորհուրդներո՞ւ պես լռի՜ն բացվեցան.
Հարյուր իշխաններ ելան անբարբա՜ռ...
Ահա՜, ցայգին մեջ կ՚երթան վեհափա՜ռ...

Կտեսնեմ, կուլամ... Թափո՛րն է Ուխտին.
Ուխտին որ կ'ապրի դե՛ռ Մահնն անդին.
Ուխտին որ ահա հեռո՛ւն հեռու
Փակա՛նքը բացավ սարի բերդերու...

Հարյուր իշխաններ կ'երթան անխոո՛վ.
Քայլերնին ծանր է յոթը դարերով.
Վահաններն ժանգոտ, բայց աչքերնին վեհ.
Ոտքերնուն շղթան կ'երգե ջուրի պես...

Այն որ թափորին կ'երթա առջևեն՝
Խոնջ է լայն բեհեզ մը քաշկոտելե՛ն...
Կարմիր-ծիրանին է արքայական,
Թե ցեղին արյունն... չե՛մ տեսներ այնքան։

Ու թափորին հետ, ու թափորեն վեր,
Թռչուն մ' Օդին մեջ կխարխափի, ծե՛ր...
Այդ՝ միթե՞ արծիվն է արքայական,
Թե սև բաղդին բուն... չեմ տեսներ այնքան։

Լա՛յն կարկառեցի ձեռքերս արյունոտ.
— Առե՛ք, գոչեցի, ա՜խ, դի՛ս ալ ձեզ մոտ.—
Կուզեի այսպես դիմել Հավիտյան՝
Ցեղի մը Ուխտին անդրշիրիմյան...։

Բայց ահա՛ ծագեց լույսն արշալույսին.
Հարյուր իշխաններն իջան միասին
Բաց տապաններու քար սանդուղներեն.
Ու ամե՛ն, ամե՛ն բան կորավ նորեն...

... Ու ամե՛ն, ամե՛ն բան կորավ նորեն։
— Ժամեն է, որ բուի մը պես, վատորե՛ն,
Գոյությունս ծակի մը մեջ թաքթաքուր
Ծածկեմ Արևուն ճառանչեն մաքուր...»։

ԹՐՔՈՒՀԻՆ

(Գեղջուկ եղերերգ)

ԱՍԵՂԻ ՀՅՈՒՍՔԸ
Ա՜Յ ԱՂՋԻԿ
ՀԱՅԴՈՒԿԸ
ՀԱՅՈՒՀԻՆ
ԱՒԵՎԱՆԳՈՒՄԸ
ԿԱՐՄԻՐ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆԸ
ՊՈՒՏ ՄԸ ԱՐՅՈՒՆԸ
ԿՈՒՍԵՐԴՈՒԹՅՈՒՆԸ
ԱՂ ՋԻ ԺՊՏԵՑ
ՎՐԵԺԸ

Հայր, մայր, բակին մեջ, ծերուկ կենչեն,
Խարխուլ տնակին ծակերուն մեջեն
Վայրագ կսուլի ցուրտ ձյունը ձմրան.
Ասավա՜ծ, այս ի՜նչ հով, հիմեր կ՚երերան։

Հողն կանթեղի մը լույսով դողդոջ,
Մինա՜կ, գեռատի աղջիկ մը բողբոջ,
Գաղտնի ձեռակերտ կհյուսե ասվն,
Կհյուսե լո՜ւկ, լո՜ւկ կ՚արտասվե։

Անցած շաբթու երբ սարեն գյուղ գընաց,
Սուրբի մատուռին իբր ուխտագընաց,
Գաղտնի գներ է ապրուշում քաղքի,
Պուճուխներ մանրիկ, մետաքս, թել ոսկի։

Ու ամեն գիշեր, ծնողքը բարի՜
Երբոր ննջեն, ի՜ր գործին կփարի.
Բարակ ասեղով ան իր կարն ասվե
Կհյուսե լո՜ւկ, լո՜ւկ կ'արտասվե...

— Որի՞ համար է այդ կարդ, ա՜յ աղջիկ,
Որի՞ համար է արցունքդ, հա՜յ աղջիկ։
Չանիլ մը միթե՞ սարերու վերով,
Սիրտդ առավ կուրծքեդ ու գնաց բարով...

— Ես ինծի համար կու լամ, աղբեր ջա՜ն,
Գիշերին գաղտնիքն առած պատմուճան...
Սիրտըս սգոտ է, սիրտս սեր չունի,
Սիրտըս վերքոտ է, սիրտըս տեր չունի։

— Ինչո՞ւ համար է մետաքսդ, ա՜յ աղջիկ,
Ինչո՞ւ համար է հառաչդ, հա՜յ աղջիկ։
Մի՞թե հարսնիքիդ աղբատիկ ջեհեզ,
Հալավիդ համար կհյուսես բեհեզ...

— Ես միթե՞ հարսնիք ունիմ, աղբեր ջա՜ն,
Թե մեկնիմ տունես, մեռնի՜մ դավաճան։
Այս ցուրտ սարերուն վրա ամայի,
Ծնողքս ու եղնիկս ո՞վ պիտի նայի...

Բայց ահա ժպտեց կույսը լանջյայն,
Գործն ավարտեր էր. մախաղ մ'էր միայն։
Կտրեց մազերեն սեփսև ծամ մը լայն,
Ու հյուսեց հապճեպ,— իր անունն էր այն...

Սնողքը դիտեց. կրնանային։
Լամբարը մարեց. ու աստվածային
Աղջիկը մեղմին քայլերով գուռնեն
Դուրս սպրդեցավ երկյուղածորեն։

Հո՛ն, իր մեծ եղբայրն՝ ամենեն թագուն,
Այդ բուք-բորան, ցուրտ գիշերով անքուն,
Ինչ-որ հին զենքեր սրբելով մաքուր՝
Կպատրաստվեր մեկնիլ թաքթաքուր...

Աղջիկն իր վզին սեղմ փաթթվեցավ՝
Մախաղն իր ուսին անցուց, ու լացավ...
Չանիլն հայրենի, իր պարտքին հլո՛ւ,
Գնաց զարնելու... Գնաց մեռնելու։

Բայց ես քե՛զ կու լամ, ո՛վ հայածին Կույս.
Դո՛ն մեր ցայգին մեջ՝ խավարկուռ Լո՛ւյս։
Դո՛ն միշտ շշնչող ու մի՛շտ խաբված Հույս.
Դո՛ն մեր դամբանին՝ ծաղիկ սգաբույս...

Ո՞ր Օրենքեն, ո՞ր Աստուծմեն, ո՞ր մութ
Արդարութենեն, ո՞ր գութեն անգութ,
Ո՞ր մեկ ոճիրիդ քավության համար՝
Կարմիր շղթայիդ օղերն անհամար...

Դո՛ն, Կին, չունի՛ս իսկ այն լույսը ծավի,
Այն ցոլքը հետին, որ Սեր կկոչվի։
Դո՛ն արգանդն ես լոկ ծնելու անո՛նք
Որ պիտի մեռցվին մահով անողոք...

Ու սո՛ւրի մեջեն, ու բո՛ցի մեջեն,
Ու արյան մեջեն, Մահը կ'ընդմիջեն
Զեռքերդ՝ վեր բռնած մանո՛ւկ մը, վայրի
Զայնով լալով «Ա՛զգը պիտի ապրի»։

Ժամանակ անցավ. աղջիկն ամեն օր.
Լույսը չի ծագած կ'երթար հեռավոր
Սարերն իր եղնի՛կը արածելու,
Ճամբան դիտելու, եղբայրն հեծելու...

Ու զույգը ծերուկ— մահահոտ արդեն—
Երկուքի կոտրած, կակուղ մարմանդե՛ն
Հեռուի Սուրբին կ'երթային կքքուն,
Աղոթել կորած Զահիլի հոգուն...

Առտու մըն ալ երբ աղջիկը Հայուն
Կ'երթար, հեռուեն լսեց խե՛ղճ մայուն.
Գթաց, թափանցեց գոգը անտառին.
Երբ չորս բաղուկներ առին զայն, տարին...

Աղջիկը գնաց, համակերպ, հլո՛ւ,
Ձայներ կլսեր, չէր զորեր լալո՛ւ...
— Աղջի՛կ, ա՛յ աղջիկ, սարը ամայի՝
Մնողդ ու եղնիկդ ո՞վ պիտի նայի...

Ու Բեկը ըսավ. «Այս գիշեր հոգվույս
Տոնն է. վառվին տա՛ս ջահեր լիալույս.
Բերե՛ք սրբազան կոնքը արծաթի.
Այս գիշեր Արևս արյան մեջ ծաթի։

Նե՛րս արձակեցեք ավարս գեղեցիկ,
Այս սուրբ կոնքին մեջ կանգնե՛ սլացիկ
Աղոթքի մը պես՝ հասակն իր նոճի...
Իր մկրտության Ալլահ թող հաճի...

Բերեք կարավանն էգերուս, կարգո՛վ,
Կոնքին շուրջ ծունկի շարվին քով քով։
Ու թող ա՛յն, որուն մոտեցա երեկ՝
Զոհվի կոնքին մեջ. դաշո՛ւյնը բերեք։

Թող երգին ամե՛նքն ալ. ա՛յն, որ կուլա
Առաջին զոհին պես պիտի ըլլա...
Թող ծրնի Իսլամ արյունով խոնավ
Կոնքեն՝ նո՛ր Իսլամ...» Ու այսպես եղավ...

Անշշո՛ւնջ, ամենքն ալ հեռացեր են։
Լույսերը մարած. ջահի կայծերեն
Ոմանք կմխան— եղեռնի մը պես...
Խունկի ծառն՝ ապրող անձ մ՚ըլլար կարծես...

Ու վե՛ս, ու խրո՛խտ, ու մո՛ւթ, անմոունչ,
Մեջտեղը կանգնած կույսը անտերունչ,
Ո՛ւ մերկ, ո՛ւ իսլամ արյամբ հրավառ,
Դյուցազնի կարծես մերկ նիզակ մ՚ըլլար...

... Ո՞վ պիտի լա ձեզ, տարվա՛ծ մոլորո՛ւն,
Գեղեցկագույններդ Գեղեցիկներուն...
Ձեր առջև Կի՛րքն իսկ պիտ՝ իմաստանար.
Ու Իմաստությունն պիտի ծառանար...

Դեռ կո՛ւյս, դեռ վայրի՛, դեռ տա՛ք, անապա՛կ,
Դո՛ւք, որ թշնամու վրաններու տակ,
Թափելու կ՚երթաք պո՛ւտ մ՚արցունքի հետ,
Ամոթապարտ պուտ մը արյուն անհետ...

Ու Բեկը երգեց. «Դու Սուլթան ես, ջա՛ն.
Դամասկի բեհե՛զը քեզ պատմուճան։
Դու իմ գիշերի Արևս ես, ջա՛ն ջան,
Ինչպե՛ս նայիմ քեզ, հոգիս կդողա...

Դու իմ նորածագ Թրքուհիս ես, ջա՛ն.
Իմ երկու աչերքս քեզ կտենչան։
Սրտիս վարդենվույն դշխույն ես, ջա՛ն ջա՛ն,
Ինչպե՛ս փրցնեմ քեզ, ձեռքս կդողա...

Դու ինչո՞ւ այնքան անզգո՛ւթ ես ինձ, ջա՛ն,
Մաներիկ ատամներդ հոգիս կ'որոճան։
Մի՛ ջահեր աչքիդ տաճարը, ջա՛ն ջա՛ն,
Ինչպե՛ս մարեմ քեզ, սիրտքս կդողա...

Դու գլխիս հրաշեկ սաղավարտն ես, ջա՛ն.
Շապի՛կ բոցեղեն, չքնաղ դավաճան։
Սիրտքս կըրակի վրա՛ կ'այրես, ջա՛ն ջա՛ն,
Ինչպե՛ս մխեմ քեզ, սուրքս կդողա...»

... Թրքուհին այլևս չի ժպտեց բնա՛վ։
Առաջին ցայգին արցունքը խոնավ
Այնպե՛ս խոր գծեր էր դեմքին ճամբան,
Որ չի կրցավ զայն սրբել ո՛չ մի բան։

Ո՛չ մետաքս ճաշաղ, ո՛չ պերճանքներ բուստ,
Ո՛չ Դամասկոսի բեհեղներ հարուստ,
Ո՛չ Պենկալայի վարդեր դեռ խոնա՛վ...
Թրքուհին այլևս չի ժպտեց բնավ։

Ան ի՛ր Օրենքեն, ան ի՛ր Արգանդեն,
Ան ի՛ր Կյանքեն, իր Ցասումեն, արդեն
Մի նոր Իսլամի ծնիլը կզգար.
Զայն իր արյան մեջ խեղդելու անկար...

Խեղճն ա՛լ չէր խորհեր, թե սարն ամայի
Ծնողքն ու եղնիկն ո՞վ պիտի նայի...
Բայց Բեկն ըսեր էր. «Ալլահն Օրհնե քեզ,
Եղբայրդ մոտ Օրեն դու պիտի տեսնես...

Ու Բեկի՝ մեկավ գիշեր մ'ուշ ատեն,
— «Ո՜վ իմ Թրքուհիս, տե՛ս, հեղեղատեն
Անցնելուս այս խեզմը ինձ կդավեր
Իր դանչեռն ու զինք քեզ բերի նվիրած»

Թրքուհվուն իրա՛ր սառսռաց փուշ փուշ.
Առավ ծանր մախա՛ղը, դիտեց ապուշ.
Իր հյուսքն էր ոսկի թելերով անշեջ,
Իր մաղն, իր անունն, արյուններու մեջ...

Աչքը մթագնեց, մոռցավ ամեն բան.
Նստվեցավ վայրի թռչնի պես անբան.
Դանչերը մխեց շե՛շտ Բեկի կուրծքին,
«Այս քե՛զ համար էր...» գոչեց մոլեգին։

«Ու այս ալ ի՛նձ համար...» ըսավ խելահե՛ղ
Անսահմա՛ն, անվե՛րջ քրքիջով ահե՛ղ,
Բռնած եղբոր գանկն աչքերուն առջին...

— Առաջին խինդն էր, ու շունչը վերջին...

ՄԱՐԴԵՐԳՈՒԹՅՈՒՆ

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՋ— ծեուեղք
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ— կյանքը
ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԵՋ— մաճք

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԵՋ

Ա

Անցյալ տարի էր։ Հոգնած ապաքեն,
Շատ քաղաքակիրթ այս Արևմուտքեն՝
Ուր խիղճը բառ մ'է, մարդը՝ մեքենա.
Աշխարհ գործարան մ'անխոնջ, անխընա.
Սերը հաշիվ մ'է. կրոնքը՝ դրամ.
Երջանկությունը՝ ձանձրալի մի տոամ.
Մահն՝ անմտություն. կյանքն՝ անհաշտ մի կռիվ.
Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալեխռիվ
Որ ամեն բոպեն իր մանրակրկիտ
Մուրճի հարվածով կզարնե մտքիդ...
Այսպե՞ս, հեիհե՞, հոգնա՞ծ, հուսահա՞տ,
Անմի՞տ այս վազքեն անդո՞ւլ, անընդհա՞տ,
Կարոտն ունեցա հին հին դարերու.

Ով հիվանդ հոգիս տարի ես հեռո՜ւ,
Հեռո՜ւ, խնկավե՜տ, լո՜ւռ, մշտջե՜նի.
Արևելքի իմ գյուղքս հայրենի...

Բ.

Կիրակի մըն էր. քայլերս ուղղեցի
Իմ ալևոր մորս հետ եկեղեցի։
— Պիտի ծիծաղի՞ք, կարծրացած սրտեր.
Կարդացիք Լյուքրես, Եպիկուր, Վոլթեր,
Մի քանի ուրիշ մութ գիրքեր ալ դեռ,
Բայց անհավատի այդ տժգույն թուղթեր
Իրավունք չե՞ն տար որ ամբարտավան
Ձեր թույնը փչեք՝ կրոնադավան
Հոգվույն ալևոր մոր մը ծերունի,
Որ ապրելու դեռ հազիվ Օր մ'ունի,
Որ ծովուն վրա՝ շյուղի մը նման,
Մեկ ոտքը մատուռ, մյուսը գերեզման,
Գերագույն, անհաս, անսկիզբ, բարի,
Մթին Աստուծո մ'անվան կփարի.
Ու անիրավվա՜ծ, տառապա՜ծ, հուսա՜,
Մեծ Արդարության վճռին կհուսա...

Գ.

Ու դո՜ւք, ո՜վ Հորաս, Զենոն ու Վոլթեր,
Ի՜նչ որ ալ ըլլաք՝ երեկիենն եք դեռ.
Մինչ հիսուն հազար այս տարի է որ
Անդուլ կդառնա աշխարհն ալևոր՝
Հավատացեր են մարդերը բոլոր։
— Բարի՜, հակառակ հավատքիս մոլոր,
Մադրել չի գիտցա՜վ բնավ իմ հոգին
Տաճա՜ր մ'ըլլա՜ այն հեթանոս բագին,
Քար-քար ավերակ սյուներ Քառնաքին,
Հրապաշտ Պարսիկ բլուր բոցագին,
Բոցը Սիպիլի, Հնդիկ էլլորան,
Ասորյան հարյուր—դոհյան հին խորան,
Կամ Քրիստոնյա պերճ եկեղեցին...

Հոն մարդերը Մեծ—Հույսը դարբնեցին...
Ու հո՜ն—գլխարկնիդ բացեք վեհերուն—
Գերեզմանոցն է կենդանիներուն...

Դ

Եկեղեցվույն մեջ մտա լռելյայն։
Շենքը փոքրիկ էր, բայց բավական լա՜յն՝
Աստվածն ու դարե՜րը ամփոփելու...
Քար քարի վրա, ծներ էր, հըլո՜ւ,
Առանց արվեստի, առանց մեծ ոճի՝
Պարզ, ինչպես ծառ մը որ հողեն կ'աճի.
Ու քար, ու բաղմոց, ու կերոն, ու խաչ,
Հոն, հին դարերու բույրն ունեին դաղջ...
Ու առաստաղի աղքատ ջահերեն
Կախված՝ ժամանա՜կը մեռելորեն
Կենջեր անշա՜րժ, դարե՜ր քնէած,
Քշոցին ձայնեն երբեմըն շոյված...
Հոն ո՜չ հնք, ո՜չ վազք, ո՜չ ժամ, ո՜չ վայրկյան.
Անսահմա՜ն, անխոո՜վ, անծա՜լ, հավիտյա՜ն,
Զո՜րս պատերու մեջ՝ Անհո՜ն մը խորին,
Ուր ծեր գեղջուկներ մեռնի՜լ կսովրին...

Ե

Բայց բացառիկ տոն մ'էր այդ կիրակին.
Կնո՜ւնքն էր ջոջի նորեկ որդյակին,
Ինչ որ գյուղին նույնքան է կարևոր,
Որքան ծնունդի տո՜նը դարավոր
Նազարեթի Հին քաղաքացիին։
Ուստի ծեր, մանուկ, հավաքված էին։
Ու քահանան այդ մե՜ծ օրվան համար,
Պատրաստեր էր փոքր քարող մը հարմար։
Պերճ խոսքի տաղանդ չուներ բնածին,
Բայց զայն ընտրեր էին հովիվ՝ գյուղացին,
Զի հասակով բարձր էր, վարքով արդար,
Հայերեն գիտեր, նո՜ւյնիսկ կկարդար։
Կյանքի պայքարեն հոգնած հյուսն մը հեղ,

— Կույս Մարիամին կո՛ւյս նշանածին պես—
Այնքան վայլեր էր մորուքն ու շուրջառ,
Որ կարծես ան ա՛յնպես ծնած ըլլար...

Զ.

Զույգ կերոնի մեջ՝ կխոսեր բեմեն.
Ու կ՚ունկնդրեին գեղջուկներն ամեն,
Խո՛ր երանությամբ սուզվա՛ծ անհրնար.
— Թեև հայերեն մա՛րդ չի հասկնար...
Հին Անեցարումն առած բնաբան,
Կգտներ Տեր-Հայրը շա՛տ բնական
Որ տղերք աշխարհ գան անհամար— լուրջ—
Ինչպես բյուր շյուղեր ձիթենիին շուրջ։
Հանկարծ շլացին աչերս քնկա՛ծ,
Նարոլեոնին անո՛ւն էր տված։
Նարոլեոն... ի՛նչ քառս անհատակ՝
Աշխարհքեն քաշված այդ մատուռին տակ։
Չէ՞ որ ըսեր է այդ մարդն ահագին,
«Մայրե՛ր, զավակնե՛ր շինեցեք ազգին...»
— Ախ. զո՛րք պետք էր այդ ամբարտավանին՝
Որ թնդանոթներ գյուղե՛ գյուղ տանին...

Է.

Պատարագեն վերջ, քով քովի անձայն,
Երկու թափորներ իրար քսվեցան։
Ան չէր դասական հանդիպումը հին՝
Կնոնքի թափորն՝ Մահվան թափորին.—
Մեկ կողմ ծնո՛ւնդ, խի՛նդ. մյուս կողմ մա՛հ ու լալ.
Ու եկեղեցին կ՚օրհնե երկուքն ալ...
Ո՛չ։ Երկու թափոր, երկո՛ւքն ալ ժպտուն.
Մե՛կը նորածին որդին մեծատուն,
Մյո՛ւսը աղքատի ծնունդը անտուն.
Մե՛կը բեհեզով քնած, մյուսն արթուն.
Մեկուն ժանյակներ, մետաքսի հյուսկեն,
Մյուսին ձորձ մը խեղճ՝ հոքը շապիկեն.
Առաջնուն ոսկի, ժանյակ բյուր տնսակ,

Երկրորդին ճակտին փուշի սև պսակ.
Մեկը Տե՛ր արդեն, մյուսը Քրա՛ստ։
Ճակատագի՛ր, վա՛խ, տղաքներդ փաստ...

Ը

Բայց այս ի՞նչ արդար օրենք մ՚է խորին
Որ հղփացա՛ծ, ճո՛խ Մեծերը երկրին
Իրե՛նց արգանդին մեջ կհարմածեն։
Հավասարության խո՛ւլ պետք մ՚է գուցե
Որ վիժածընունդ սերմերը Մեծին
Ի՞ր որովայնին իսկ գո՛զը հյուծին,
Ու հաշիվներն վերջ, երբ իհարկե
Ոսկին ա՛լ պատրաստ է, հա՛յրը գրկե
Խանձարուրներու մեջ մետաքս գեղերփ,
Անժպի՞տ, տժգո՛ւյն հրեշ մը մարդակերպ...
Մի՞նչ քանի՞ թշվառ խեղճեր է՛գ, արո՛ւ,
Որ հեղակարծ սեր մ՚ունին իրարու,
Կայծակներու պես իրարո՛ւ կու գան,
Առանց հաշվելու վաղն ու ապագան,
Ու կ՚երկնին— խորշի մը մեջ անծանոթ—
Ի՞նչ հսկա կյանքեր, անեծքի տնոթ...

Թ

Ապշա՛ծ, սարսափա՛ծ խորհեցա անխոս,
Սպարթական հի՞ն բարքին բարբարոս,
Որ խեղդելի վերջ կհանձներ գետին
Մարդկային տժգույն տղրուկներն հետին..
Բայց քառասուն դարեր անցեր են արդեն,
Ու սովրեցանք, որ հրեշներն ալ մարդ են.
Անո՛նք ալ ունին զգացո՛ւմ, հոգի՛,
Անոնք ալ ունին իրավունք կյանքի,
— Հոգ չէ՛ թե ապրին բյուրերու մահով.
Օրե՛նքը՝ իրենց վահան ապահով...
Չե՛մ համարձակիր վերցնել մեկդի
Կարմիր-վարդագույն, որ Օրենք կ՚ըսվի,
Դիտելու ըմբոստ այն կյանքե՛րն հսկա,

Որ բանտերու մեջ, կառափնատի վրա,
Կախաղաններո՞վ մեռան անհամար,
«Կյանքի Իրավո՞ւնք...» պոռալնուն համար։

Ժ

Երկուքն ալ երկա՞ր, երկա՞ր դիտեցի։
Այլևս բնա՞վ մի խոսիք ինծի
Արժանիքին վրա, ու տարբերության,
Ու ազնվական զարմին վրա արյան։
Ահա երկո՞ւքն ալ. անկերպ բզեզներ,
Շյուղ մը իսկ զիրենք պիտի մեռցներ։
Կ՚ուզեն անուն տալ. ի՞նչ պետք անունի...
Յուրաքանչյուրն ալ իր անունն ունի.
Մին Ո՞ւյժն է անգութ, մյուսն Ստրկությո՞ւն։
Ույժ չունի՞ կ՚ըսեք խլեզն անարյուն.
Ի՞նչ պետք արյունի.— անհագ բորենի՞,
Հացի մը փոխան, կարմիր, ծիրանի,
Ան պիտի ծրծե Արյունը մյուսին,
Ու պիտի մըխե ժանիքն իր միսին.
— Օրե՛նքը՝ իրեն անքույթ օթևան։
Ողջունեցեք զայն, Իշխանն է վաղվան...

ԺԱ

Ծնրադրած դողդոջ, աչքերքս ձեռքիս,
Կուրծքիս տակ զսպել կ՚ուզեի հոգիս։
Հազա՞ր նկարներ կ՚անցնեին մտքիս։
Արյան շոգվույն պես, նոճիներու մեջ
Բյո՞ւր կախաղաններ անգութ մեծերու...
Ու հրդեհներու մեջ հեռվե հեռու,
Ստրուկներու կո՞ւռ, բարբարո՞ս գունդեր,
Որ տաճա՞ր, աստվա՞ծ, կո՞ւռք, իշխա՞ն ու տե՛ր
Տապալելով վար, կ՚երթային հեռո՞ւ
Հավասարության սե՛րմը ցանելու,
Ու լա՞յն բաշխելու Արդարությո՞ւն, Հա՞ց...
Այտիս վրա հրաշեկ արցունք մը դողաց.
Աչքերքս բացի, տեսիլք էր միայն.

Ամենքն ալ գացա՜ծ, ժամն էր լռելյայն...
Ու ե՛ս ալ գացի՝ իմ սուգիս դարման՝
Հավասարության դաշտը— գերեզման...

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱ

Ա

Եկեղեցիեն մինչև գերեզման
Տանող ճամբուն վրա, քարի մը վրա
Նստեցա տրտում, ու լո՜ւռ դիտեցի
— Հոգվույս ծարավո՜վը արևելքցի—
Հեռուներեն հանդա՜րտ, հեռուները լա՜յն,
Հեռուները չի՜նչ, միսթի՜ք, լռելյա՜յն։
Հո՜ն, երկինքներու տակ հավետ ծա՜վի.
Առա՜նց ժպիտի ու առա՜նց ցավի,
Կ'ապրեին մարդե՜ր, մրջյունե՜ր, բույսե՜ր...
Հոն չէին ճանչնար ո՜չ կռիվ, ո՜չ սեր։
Հոն Անշարժության օրենքին հըլու,
Առա՜նց աճելու, առա՜նց նվազելու,
Հազար դարերու ու անհունների
Մտերմության մեջ կ'ապրեին,— հեռո՜ւ
Սե՛գ Արևմուտքեն ու հեգնելով զա՜յն...
Հեռուները չի՜նչ, միսթիք, լռելյա՜յն...

Բ

Ու հո՜ն, անուրջի մը մեջ անսահման,
Երկիրը իրրև անհո՜ւն խնկաման,
Իր ձանձրույթը— լայն աղոթքի մը պես—
Անշտա՜պ, անխռո՜վ կմխար կարծես...
Ու հո՜ն, հեռավոր հորիզոններու
Անծայլ երկինքնե՜ր հեռվե հեռու,
Կտեղային վար՝ օրհնության մը պես՝
Ոսկեփոշի լայն անձրև մը կարծես...
Ու հոն արևուն գունդին մեջ անշեջ,
Ու ծածա՜ն-ծածա՜ն ցոլեններուն մեջ,

Ու խրճիթներու բույնին մեջ համակ,
Ավերակներու սուգին մեջ ճերմակ,
Բա՜ն մը կար Կյանքին անջատ, Կյանքեն վե՜ր,
Բա՜ն մը, որ Կյանքեն բնա՜վ չէր ազդվեր,
Որ կնմաներ Երկինքն, Վաղվան...
Այդ՝ Մահվա՜ն իսկ մեջ ժխտումն էր Մահվան..

Գ

Ասոր համար, երբ միտքն Արևմուտքին՝
Կյանքի բառին առջև՛ը զարմացագին
Հարցական նշան մը կդնե ենենգ...
Մենք կախման երեք կետեր կդնենք...
Ու երբ կվազեն անոնք տենդագին,
Թվանշաններով կլուծեն հոգին,
Կբնեն Երկինքն ու Աստվածը, մենք
Մեր կախման երեք կետը կ՚երազենք...
Ու երբ կխրոխտան անոնք, մենք կու լանք,
Ա՜խ, որովհետև ի՜նչ որ ալ ըլլանք,
Գլուխնիս երկինք, ոտքերնուս տակ հող,
Այգին ու ցայգին միջև տատանող
Օրորոցներ ենք... Ու ինչ որ անշե՜ջ
է, պիտի շիջի շիրմին մութին մեջ...
— Լացը վերհիշում մրն է լռելյայն,
Թե ի՜նչ ալ ըլլանք, մարդեր ենք մի՜այն...

Դ

Այսպես ապրեցան, ու այսպես կ՚ապրին
Բոլո՜ր որդիներ՝ Արևելքին
Խունկի՜, կնդրուկի՜ ծոցը լռակյաց,
Իրենց հոգիին անծանոթ մընաց
Պոռո՜տ Գիտութեանց շնիտրը սոփեստ,
Ու սուտ Փառքերու ծածկույթին հաստաբնստ...
Անոնք ստացան, առա՜նց ուզելու...
Ու կյանքեն անցան՝ առա՜նց հուզելու
Անոր մութ հատակը աչքն անտես,
— Ծովուն վրա սահող լո՜ւռ թեռակին պես...

Անոնք գինովցան, առանց քննելու...
Ու լացին՝ սրտի պետքի մը հլո՜ւ...
Անոնք խոկացին Եդեմն, ու ծնան
Անէության մեջ հսկան— Նիրվանան,
Ու երազատես Նաղովրեցին հեգ...
— Ու Երկունքը հեշտ էր Մահվան մը պես...

Ե

Անոնք նայեցան հեռվե՛ն՝ մարդկային
Հառաջադիմության կուռ մեքենային,
Ինչպես անտառին ծո՛ցը ամայի,
Սերունի եղնիկն հանդա՛ռտ կնայի
Տքացո՛ղ, շաչո՛ղ սև շոգեկառքին՝
Լա՛յն «ինչո՞ւ համար» մը զարմացագին
Թարթելով աչքին մեջ երազահալ...
— Ինչո՞ւ շտապել. չէ՞ որ ամե՛նքս աղ,
Ոմանք հևիհև, ու ոմանք դանդաղ,
Անվրի՛պորեն պիտի հասնինք Մահ...
Կյանքն է այս. միշտ սուտ սուտի ետեւ.
Մեկը հազի՛վ թե մյուսին չափ տեւ...
Շառաչող ծովուն ալիքներուն պես,
Կծնինք ամենքս, կբարձրանանք վեր,
Բայց հազի՛վ ատեն մը կա՝ փրփրելո՜ւ...
Պետք է կորսվիլ. կորսվի՛նք հլո՜ւ...

Զ

Ու այսպե՛ս պիտի կորչի ամենը բան...
— Ժայռին վրա նստած դիտեցի ճամբան,
Դեղին Փոշիի հուսահա՛ս ճամբան,
Խո՛ւլ «Երեկ»ներու պատմի՛չը անբան...
Ա՜խ, այդ գալարվո՛ղ, չի հատնո՛ղ, խոպա՛ն,
Արևուն ծագեն ի մո՛ւտքն՝ անխափա՛ն
Նոկայուղ վեր՛ս, շարեկամ ճամբան,
Սղնող Մարդկության ստաջին օրրա՛ն,
Ոչոմ ապալեր ֆրանին վերան,
Հիմալայայի սարեն մինչ Իրան,

Ու Արարատեն մի՞նչև Վոսփորոս,
Մինչև՞ Դանուբի ակերն մշտահո՞ս,
Ու մինչև՞ չորս ծագը Արևմտյան,
Գացին առաջին հայրերն Մարդկության,
Այրող Արևուն գունդին տակ, խաղա՞ղ,
Ճոացընելո՞վ կառքերնին դանդա՞ղ...

Է

Առաջին անգամ ըլլալով հառա՞չ
Մը արձակեցի այդ ճամբուն առաջ...
Սոսկա՞ցի իրմեն. ու ափ մը փոշի
Առի, մարդու մը նման, որ կ'ապշի...
Բա՞յց ինչ կիկլոպներ, իրրև թե անշե՞ջ
Ի՞նչ ազգեր, կյանքե՞ր այդ փոշիին մեջ։
Ի՞նչ արյան լիճեր, քանի՞ ոսկորներ
Դարերու մեջ հոն փոշի են դարձեր...
— Դիտեցի ուշով. զի՞ս ճանչցա հոն շուտ.—
Նախ քարայրներու բնակիչ մազուտ,
Հետո ասպազեն նետաձիգ մը սեգ,
Հետո թագավոր մը— եթե կ'ուզեք,
Հետո ածիլված գլխով մեկ գերի,
Հետո թրուպատուր մ'որ կդեգերի...
Ու հիմա տժգույն խե՛ղճ մը գող ի դող,
Ո՛չ մարդ, ո՛չ աստված, ու ո՛չ իսկ քերթող...

Ը

Հո՛ն ճանչցա նաև ծեր Սողոմոնին
Հալվե բեռցված կարավաններն հին...
Գանգեսեն բույրի, թանկագին քարի,
Ու կարմիր ծովեն ալ ամեն տարի
Ուղտերով կրվա՞ծ պերճանքները բուստ,
Դամասկի մետաքս բեհեզն ալ հագուստ,
Արքաներու ձոն՝ Քլեոբաթրային...
Ու վերապրեցա հոն եղեմային
Ու գինովցընող հըրաշքը չքնաղ
Շամիրամի պերճ պարտեզին առկախ...

Հո՜ն. այդ փոշիին մեջ խոսեցուցի
Տարաբաղդ Անդուանն Հռովմայեցի
Որ վահանն իրեն ծախեց Տոփանքին...
Հո՜ն, խոսեցուցի նաև տխրագին
Ժողովուրդներ, որ մեռա՜ն անհամար։
Չեմ գիտեր ո՜ր մեկ Արքային համար...

Թ

... Հանկարծ ծանը՜ր թև մը զ. րկավ ուսիս։
Հին երազներեն արթնցավ հոգիս.
Ու տեսավ տարեց մշակ մը տժգույն։
— «Ո՞վ ես դու»։— «Անունս է Աշխատություն...»
— «Ի՞նչ կ՚ընես այսպես»։— «Կմուրամ...» հծծեց.
Ու լո՜ւռ հեռացավ, մինչ ես դառնահնծ
Գացի ետևեն մինչև իրեն տուն...
Գետնի անկողնի մը վրրա, արթո՜ւն,
Երկարած նիհա՜ր իր կինն հոգևար,
Մեծված անասնի մը պես կհևար...
Ու մինչ գնաց հինգ խլեզներեն մին,
Աթոռի պես բա՜ն մը ճարելու հին,
— «Հաց չի կա, կ՚ըսեր հայրիկը ինծի,
Մի քանի օ՜ր է չեմ երթար գործի,
Կտեսնես, վերջին օրերն են գուցե...
Առանց ինձ, աչերն ո՞վ պիտի գոցե...»

Ժ

Ու կինը բարի կնայեր իրեն,
Ինչպես կնայի մարդ անա՜սնորեն
Արեն Աստուծուն... Ախ, որովհետև
Իր կենակցության ժամը կարճատև
Սիրալի՜ր եղավ. կռիվ չունեցան
Ո՜չ դրամաժիտի, ո՜չ ժառանգության...
Ժրրաչան տիկին, միշտ իր հարկին տակ...
Թանը առատ էր, անկողինը տաք...
Ու քիչ օրեն երբ Տիրոջ հրամանով,
Հողին տակ պիտի թաղվե՜ր ապահով,

Կխրատեր էրկան՝ առնել գյուղակին
Այսի՛նչ ժրաջան աղջիկն իբրև կին,
Որովհետև խեղճ կինը կհուսար
Թե ան կնայեր աչքով հավասար
Թե՛ իր ամուսնուն, թե՛ իր խորթերուն
Եվ թե՛ գոմի իր փոքրիկ հորթերուն...

ԺԱ

Դուրս ելա տունեն, մարմնա փուշ փուշ.
Խորհեցա կյանքին իմաստին ապո՛ւշ,
Թե ինչպե՛ս ստրուկ կիրքերու հլո՛ւ,
Մարդս ավելի՛ վարժ է մուրալու,
Քան պապենական օրհնած դանակով,
Քի՛չ մը վախցնել— գոնե՞ կատակով...—
Մեր ոսկեձույլ նո՛ր Աստվածները կո՛վ...
Խորհեցա, թե Դրամ միապետին քով՝
Ի՞նչ տժգույն ըմբիշ մ'է Աշխատությունն...
Խորհեցա անգա՛մ մըն ալ անարյուն
Այն բո՛ւռ մը «Նորին Վսեմությանց» վերա
Որոնց շնորհիվ երկիր կդառնա...
Խորհեցա Ույժին վրա մըտովի,
Ու ա՛յն հտպիտին, տը Օրենք կ'ըսվի...
Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարմա՛ն,
Հավասարության դաշտը— Գերեզման...

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԵՋ

Ա

Սկեպտիկ ժպտով մը դանդաղագին
Երբ մարդ ըմպած է մրո՛ւրը կյանքին,
Երբ ծառայած է կամքով կորովի՝
Այն մեծ վարպետին, որ Վիշտ կկոչվի.
Ճանչցա՞ծ է դողդոջ ղշխուն, որ Սերն է.
Աղջաց և անհատին Պատմության դժնե
Նայած է անգամ մը մյուս երեսին,

Ճանչցա՞ծ է մարդուն Գիտությունը սին,
Արվեստն հավակնոտ, սիրտն ամբարտավան,
Սո՛ւզը Երեկին, երկյուղը Վաղվան...
Ու ճշմարտության հոգին ծարա՞վի
Ջնված է երկնից պարապը ծավի
— Հի՞ն աստվածներու վիճն այն մշտակա՞,
Ա՛յդ մարդուն համար ուրիշ վայր չի կա՞
Ավելի՛ քաղցրիկ հեշտանքով հրդի,
Քան գերեզմաններոց մ՚աղքատիկ գյուղի...

Բ

Լո՞ւռ նստած քարի մը վրա տապան,
Դիտեցի լռի՞ն այդ վայրը խոպան,
Ու զո՞ւր խորհեցա, թե այս այն վա՛յրն է
Ուր վաճառական Աստված մը դժնե
Ջարը կպատժե անսահման վախով,
Բարվույն շնորհելով դրախտ մ՚ապահով...
Ընկղմած ծոցն այդ Մահվան Քաղաքին,
Զուր խորհեցա, թե անմա՞հ էր հոգին...
Անմա՞հ. բայց չէ՞ որ երկնից մեջ գարնան
Բյուր գիսավորներ մոխիր կդառնան.
Աստղեր կվառին, աստղեր կսառչին.
Կլոե ցայգին պլպուլը վերջին,
Բույս ու կենդանի կ՚իյնան անկենդա՞ն.
Ամեն, ամե՞ն բան մահվան զոհ կ՚երթան...
Ու երկինքին հյուր՝ լոկ մա՛րդն է տրխուր...
Անմա՞հ, մինչև ե՞րբ, և ինչպե՞ս, և ո՞ւր...

Գ

Բայց ուսկե՞ կու գա այն Հույսը մարդուն,
Որ մեծ—ցայգին մեջ միայնա՞կ արթուն
Կ՚ուզե հսկել՝ երբ իր ոսկորոտին
Երկու ափ հողի ներքև կ՚անհետին։
Ու ինչպե՞ս դիակը փտելե վերջ,
Մարդ համառորե՛ն, Մահվա՛ն ծոցին մեջ,
Անմահության Հո՛ւյս մըն է դիուցեր...

— Անշո՛ւշտ սարերու երբ եղնիկը ծեր
Կնայի անդունդն ի վար անհատակ...
Երբ գայլը փոքրիկ մացառներու տակ
Կդիտե մահն իր գնդակահար հոր...
Երբ օվկիանին վրա անդնդախոր՝
Շնագայլն հսկա՞ կթավալի լո՛ւռ...
Վերջալույսին դեմ Առյուծը տխուր՝
Երբ կմոնչե դաշտին մեջ խոպան...
— Անմահությա՞ն վրա չէ՞ որ կխոկան...

Դ

Նո՛ւյնիսկ Մարդուն մո՛ւթ նախահայրն Ադամ,
Անգե՞ն, անպաշտպա՞ն այդ խեղճն հաշմանդամ,
Նետված ույժերո՛ւ միջև ահագին,
Շա՞տ քիչ հաշիվի կ'առներ իր հոգին,
Երբ պտո՛ւղի մը համար, անվեհե՞ր,
Անմահութենեն կհրաժարեր...
Բայց ահա անբա՞վ միջոց մ'է անցեր.
Հիսուն ծանրածանր դարով՝ Մարդը ծե՞ր,
Որ իր ուղեղին դրդումին հլու,
Հասեր է ամե՛ն ինչ գըրավելու,
Ստրուկներ գտեր է անասնոց մեջ,
Մնացածը զարկեր, հալածեր անվե՛ըջ,
Աստվածնե՞ր շիներ է նախ անհամար,
Հետո ամե՛նքն ալ այրելու համար...
Տիրե՛ր է Բնության Ույժին ահագին,
Կտենչա իշխել արդ ժամանակին...

Ն

Ա՛խ, անմա՛հ ըլլալ... Ապրի՛լ հավիտյան.
Իսպա՞ռ չունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկյան.
Ժամանակի՛ն պես, ժամանակին մեջ,
Տքա՛լ, տառապի՛լ, բայց ապրի՛լ անվերջ...
Սիրտը արյունոտ, մարմինը հիվանդ,
Հոգնաբե՛կ, ի՞նչ փույթ, ապրիլ մանավանդ...
Շյուղ մ'ըլլալ մարգի, ի՞ր մը լռելյան,

Բայց հավիտենին մեջ ապրի՛լ միայն...
Քար մ'ըլլալ անարգ, ապառաժ մ'անխոս,
Դեթ նիհար առվակ մ'ըլլալ մշտահոս,
Ծա՛ռ մը դարավոր, մեռա՛ղ մը միայն
Անմի՛տ, անզգա՛. չի մեռնի՛լ սակայն...
— Աստվածացյալդ Մա՛րդ, ամո՛թ քեզ, ամոթ,
Մութ, ամբարտավան խրոխտությանց անո՛թ,
Դեռ ամե՛ն գինով կըկառչիս հողին...
Նայեիր աշնան տերևին դեղին...

Զ

Ու երբ ըսեն, թե գիտությունը նոր
Այրեց հի՛ն, փոշո՛տ գիրքերը բոլոր,
Թե նյութ կա միայն, Հոգին չէ՛ անմահ,
Հոգին չի կա՛ իսկ.— Մի հավատար, ա՛հ։
Վեհիտ մոմյաներն հին Եգիպտոսին,
Դարերու գաղտնի՛քը թող ձեզ խոսին...
Նայվածք մ'ուղղեցեք դեպի Պարթենոն,
Նոր Անմա՛հներն են, որ կխրոխտան հո՛ն։
Ու է՛ն չոր գիտունն իսկ՝ կրոնքին օտար՝
Քարե արձանի մը հոգին կու տար...
Ա՛խ, կյանքի, մահվան կռիվն անզգամ...
— Ու անշուշտ՝ մենե է՛ն խելոքն անգամ
Երբ տեսներ Մահն, որ պաշտոնին հըլո՛ւ
Կու գար սիրելին մենե խլելու,
Թե Աստվա՛ծ ըլլար ան, թե Սատանա,
Շան մը պես պիտի խեղդեր անխընա...

Է

Շա՛ն մը պես... ա՛խ, շատ չի պիտի ըլլար...
— Բաբե՛, կհիշեմ, թե ինչպե՛ս կու լար,
Ինչպե՛ս կխածներ սնար ու սավան,
Ինչպե՛ս կկանչեր արևը վաղվան
Որ ա՛լ չի պիտի գար երբեք իրեն.
Ու ինչպե՛ս կ'ուզեր խելահեղորեն
Մարմինն անկողնեն քաշել անհընա՛ր,

Ու ինչպե՞ս պատեն մագլիլ կշանա՞ր,
Սարսափած աչքերն ուղղելով ինծի...
— «Ես եմ, բարեկա՞մդ, ավա՞ղ...» գոչեցի,
Բայց ան աչքերուս խրեց իր մատներ,
Չի ես կ՚ապրեի; մինչ ինք կմեռներ...
— Հասկցա՞, ընկե՞ր լեզուդ վերջնագույն,
Բայց մահեն փախչող վատ մ՚էի տժգույն;
Չի Սերն իսկ սո՞ւտ է, մարդերը մա՞րդ են...
Ու մեր երկուքին մեջ մա՞հն էր արդեն...

Ը

Ինչպես նեռատար թռչուն մ՚որ հետին
Ճիգերն իր կ՚ընե կառչելու օդին...
Սովամուլն ինչպես կփարի վետ վե՞տ
Խլյակը մը որ կ՚ընկղմի իր հետ...
Ինչպես սարի հեղ արծիվն հոգնվար
Կկառչի ժայռին, որ չի սահի վա՞ր...
Այնպես մատներուն ճիգովը հետին
Կ՚ուզեր բռնվիլ սնարին պատին...
Անկողին գամված, փտիլ, ցավիլ, լալ,
Դարերով, ի՞նչ լավ... Բայց մեռնի՞լ, չ՚ըլլա՞լ...
Ահե՞ղ կմղեր պայքարն անիրավ
Երբ բերեն արյան ուղիս մը դայն տարավ...
Այդ շրեղ սրտեն, կյանքեն ի՞նչ մընաց.—
— «Ե՞ս» կ՚ըսե աճյունն,— «ե՞ս» կ՚ըսե Աստված։
Ու ե՞ս, իր գեղջուկ քարին վրա կու գամ
Հանգի դարձելու տաղերս անդգամ...

Թ

Դիտեցի գողտրիկ այդ վայրը բողբոջ,
Ու ես ակամա խորհեցա գողդոջ
Սերուկ Տանթեյի ահեղ դժոխքին,
Ուր հիմար վաղքի մը մեջ մոլեգին,
Այրող խավարին, փրփրող արյան մեջ,
Երախներին բացած, անբարբա՞ռ, անվե՞ր,
Տժգույն հերոսներ պար կը դառնային...

Նորհեցա նաև սեզ Սատանային,
Զոր Միլթոն, աչքով կույր, հոգվով արթուն,
Իշխա՜ն հռչակեց հաղթված Մարդուն.
Որ երեքժանի ցուպով կ'զրոսներ
Անհանգիստ ընել դատարկ գլուխներ...
Չի մոռցա նաև մտածել ահեղ
Օրվան՝ երբ փոդին ձայնեն խնլահեղ,
Կմախքներ երկի՜նք կթռչին արդեն...
— Ինչ որ քիչ մը շատ խնդրել է մարդեն...

Ժ

Մարդուն տանջրված խղճմտանքը վա՜ռ
Ի՜նչ մղձավանջներ երկնեց հուսահատ,
Ի՜նչ սադայելյան ցավեր անհամար,
Ի՜նչ եղեմ՝ մեր դարշ դիակին համար...
— Հո՜ն, ոչի՜նչ կա մութ, ոչի՜նչ կա դժնեռ
Ան դանդա՜ղ խմված պարապ գավաթն է,
Առա՜նց քանդակի, առա՜նց սուտ զարդի,
Առանց նորագյուտ հնարքներու արդի,
Որ տիտղոս, տարիք կ'անմահացընեն...
Վարդի թուփ մը հոն կ'իյնա ծարավեն...
Ու եթե երբեմն ողբեր կ'ողկողեն
Քարի մը տակեն.— Ցե՜ր բուն է գյուղին...
Թե արշալույսին ստվեր մը հածի.—
Իմաստասեր կո՜վ մ'է որ կ'արածի...
Ու թե շիրիմներ պեղվին անընդհատ.—
Թորեենի մըն է, կամ քերթող մը վատ...

ԺԱ

... Ինկա ու մտիկ ըրի սգահար,
Ձայնի մ'որ քարին ներքև կդողար.—
— Ե՛ս եմ, ե՛ս եմ, ե՛ս քեզ եղրա՜յր, քեզ քո՜ւյր.
Ե՛ս տիեզերքին հսկա ա՜չքը կո՜ւյր.
Ե՛ս սկիզբ և վերջ, երա՜խ ու արգանդ.
Ե՛ս վի՜հ անհատակ ու ծոց արգավանդ.
Ե՛ս ա՜յն եմ, որ քեզ ծընավ, նաև ա՜յն

Ինչ պիտի ծընիս՝ Ե՛ս ձայն լռելյայն՝
Ե՛ս օրհնությունն եմ, բարիքը վերջին.
Ե՛ս այն եմ որմե ամենքը կփախչին
Եվ որմե փախչիլ չի կա՛ Հավասա՜ր
Ներո՛ւմն եմ անոր, որ ինձ կհուսար,
Անո՜ր, որ հեգնեց դիս առանց խղճի՝
Ամենո՛ւն ալ վրա իմ մարգըս կ՚աճի...
Մանգաղս ո՞վ պիտի համբուրեր անա՜հ...
— Ինձ ԱՍՏՎԱԾ ըսին, իմ անունս է ՄԱ՛Հ...

1909, Լոզան

ԳԻՆՈ՞Վ ՍԵՐ

Զոհված՝
Mlle Yanni Apell-ին

Դուն Հրա՜շքն ես, դուն Երա՜զն ես, դուն Սերն ես.
Տարաշխարհի չքնաղ ծաղիկն ես աղվոր.
Միսթիքական խնկումներով թունավոր
Դուն մըսեղեն խենթեցընող տաճարն ես.
Դուն Հրա՜շքն ես, դուն Երա՜զն ես, դուն Սերն ես։

Սև մազերովըդ սիրե՛ զիս, գըգվե զիս,
Անոնց խորհուրդը պատմե ինձ առանձին,
Որովհետև անոնք հոգիս կապեցին.
Իրենց ցանցին մեջ կապտեցին իմ հոգիս.
Սև մազերովըդ սիրե՛ զիս, գըգվե՛ զիս։

Թաց աչքերըդ վերա՜ս հառե տրտմապես,
Անոնց թո՛ւյնը ներարկե ինձ մեղմորեն,

Որովհետև քու աչքերդդ աղվոր են,
Խորհրդամոլ անտառներու շուքին պես.
Թաց աչքերդդ վերա՛ս հառն տրտմապես։

Տրոու մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վերա,
Հանգչեցուր զիս, ու այտերդս կերակն
Քո ձյունեղեն բազուկներուդ մեջ գրկն,
Ու թող մարմինդ մարմնիս վրա սարսռա
Տրոդա մը պես հանգչեցուր զիս կուրծքիդ վրա։

Ահա շրթնե՛րդս կարոտովդդ կ՚այրին,
Ու կլայնա արտասուքի շիթ մը տաք
Իմ մթաստվեր թարթիչներուս շուքին տակ.
Անոնց վերա դուն ցո՛ղը դիր համբույրին,
Ահա շրթներդս կարոտովդդ կ՚այրին։

Բազուկներդդ կգալարվին, կդառնան,
Տենչին կերակը նայվածքդդ կթովն.
Որովհետև քու մութ հոգիդ գինով է,
Սիրախտավոր գիշերներուն պես գարնան...
Բազուկներդդ կգալարվին, կդառնան։

Ժամն է, աղվո՛ր, երանության ժամն է աս.
Շրթներուս վրա դիր շրթունքնե՛րդդ բոցն,
Մոռցի՛ր կյանքը, աղվոր աչքե՛րդդ ալ գոցն...
Ի՞նչ, կ՚արտասվե՞ս, ու հուզումեդ կդողա՞ս.
Ժամն է, աղվո՛ր, երանության ժամն է աս...

ԿԱՐԱՊՆԵՐԸ

Il est d'étranges soirs, aû
les fleurs ont une âme
Albert Samain

Գիշեր է լուռ, հանդարտ գիշեր ամառվան.
Մութը պատե՛ր է երկինքը համորեն.
Հեռուներեն քանի մը լույսեր միայն
Իրենց ձյունը վար կկաթեն հոլորեն։

Ո՛չ մեկ շրշուկ։ Լռությունը կթրթռար
Անծի՞ր, անծա՞յր լայնության մեջ օդերուն.
Ու բացխփվող աչքերու պես, ափին վրա,
Քաղաքներու կպլպլա լույսն հեռուն։

Բարձրը, մութին այրերուն մեջ, հեռակա
Ժյուրաներու ստվերը լո՞ւռ կմրափե.
Ավելի՛ վեր, արհամարհոտ ու հսկա,
Ալպյաններու սեպ ճակատն է սատափե։

Զույգ ալեփա՞ռ շղթաներու դարավոր
Օրրանին մեջ ընկողմանած հոլանի՛,
Լեռներու վեհ հուրիներուն պես աղվոր,
Կքնանա կապույտ հոգին Լեմանի։

Գիշերն է լուռ, լիճը արտում։ Հեռուն,
Ճամանչներու, փրփուրներու պես աղվոր,
Քնացող ջուրին երեսին վրա մեղմորեն
Երկու կարապ կսահին լուռ, մենավոր։

Իրենց մարմինը քնքույշ է, գեղեցիկ.
Իրենց թևերն արծաթակերտ, ձյունագեղ.
Ու մարմարի իրենց վիզը սրլացիկ՝
Երազային տաճարներու սյունին պես։

Կմոտենան անոնք իրար մեղմորին,
Ու կտուցնին իրար կուտան ուղղակի,
Այնպե՛ս ինչպես ո՛չ մեկ շրթունք տակավին
Ա՛յնքան սիրով չէ՛ մոտեցած շրթունքի։

Ու ձյունափա՞ռ իրենց թևերն կ՚առնեն վեր
Կգալարեն իրենց վիզը երկնասլաց,
Ա՛յնպես ինչպես երկու բազուկ անձնվեր
Այդքա՞ն սիրով իրարու չե՞ն գալարած։

2

Գյուղերուն լո՛ւյսը կցոլա հեռուե՛ն.
Վերը ջո՛ւքը ժյուրաններուն հեռակա.
Ավելի՛ վեր, Ալպյանները համորեն.
Ավելի՛ վեր, երկի՛նք կանգներ է վրկա...

Վա՛ղը, քնացող ջուրին վրրա տրտմաբար,
Վեհ պարտքի մը գիտակցությա՛մբը լեցված,
Բերան բերնի, վիզը վիզին, անբարբա՛ռ,
Կարապները կմնան լո՛ւռ քարացա՛ծ...

1907

ՍԱՔԻԱ-ՄՈՒՆԻ

«Սաքիա՛, Սաքիա՛...» կկանչեր ձայնը հեռուեն։
Կթավալեր Արևն իր գունտը ոսկյա
Ու անապատն իր մրափին մեջ հուլորեն
Կ՚արձագանքեր կերկերող կո՛չը «Սաքիա՛»...

Իմաստունին Աշակերտը, մոլորո՛ւն,
Արշալույսին մթնշաղեն շատ առաջ
Սկսեր էր իր անվերջ վազքն, ու հեռուն
Վազո՛ւց, տխուր, կնվազեր իր հառաչ։

Քաղաքներե՛ն ան կդառնար տխրագին,
Նվիրական հովիտներեն Գանգեսի,
Ռաճեբուրեն, Պենարեսեն ուր կրակին
Կմատուցվեր խունկ և կնդրուկ հանդեսի։

Մազերը խռիվ, ոտքերը մերկ, անձնվե՛ր,
Ի զո՛ւր գյուղն գյուղ իր ստվերը տարավ,
Ի զո՛ւր մարդոց ան խոսեցավ անվեհե՛ր,
Իմաստունին պատվերները սրտագրավ։

Ան «Նիրվանա, կքարոզեր, Նիրվանա՛,
Ինքնամոռաց անէությո՛ւնը հոգվույն,

Տենչանքներու ոչնչացումն անխնա,
Ծրագամոլ վերացո՛ւմը գերագույն։

Ա՜հ, Նիրվանա՜, ոչ մեկ փափաք, ոչ մեկ սեր.
Ո՛չ իսկ հետին գոհացումը մեր սրտին.
Ոչ տառապանք, ո՛չ ալ ժպիտ, ո՛չ հույսեր.
Ա՜հ, Նիրվանա՜, ինքնակամ մա՜հը ցրտին»։

Մարդերը զայն քաղաքներեն վանեցին։
Ոտքերը մերկ, մազերը խռիվ, անձնվե՜ր,
Անապատին ճամբան բռնեց առանձին,
Ու հուսահա՜տ Իմաստունը կփնտռեր։

Արեգակին հրատապ գունտին տակ հսկա,
Տաք ավազը թմրա՜ծ, անշարժ կեանքեր.
Ու տանջվո՛ղ, գալարվող ձա՜յնը «Սաքիա՜»
Մենության մեջ լացի մը պես կհնչեր։

Սարսափ։ Իր մեծ բազուկները լա՜յն, արձա՜կ,
Հրատապ, շեկ ավազին վրա տարածեր,
Սրբությո՛ւնը, Գիտությո՛ւնը բացարձակ,
Սաքիա-Մունի, Պուտտա ինքը մեռա՜ծ էր։

«Սաքիա՜, Սաքիա՜...» հեկեկաց ձա՜յնը լալեն։
Կթավալեր Արևն իր գո՛ւնտը ոսկյա.
Ու անապատն իր մրափին մեջ հուլորեն
Արձագանքեց հուսահատ ճի՛չը «Սաքիա՜»...

«Սաքիա՜, Սաքիա՜...» հեկեկաց ձա՜յնը լալեն։

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ

Վերջալույս է. կքալեմ. հովը վայրագ կփչե.
Խռովեր է լճակին կապուտակ սի՛րտը աղվոր
Հովին շունչին մեջ ընդհատ զանգակատան երգը չէ՞,
Որ սարերուն կպատե հին մեներգ մը սգավո՛ր։

Հեռուն ծառեր կան տեղ տեղ՝ ափունքն ի վար լճակին։
Տերևաթա՜փ, հողմակո՜ծ, անոնք կանգներ են հրլու.
Ու ճյուղերնին դեպի ջուր դողդողալով կհակին,
Կարծես հազա՜ր գաղտնիքներ ունին լրհին պատմելու։

Ամպի թեթև ծվեններ՝ հովեն տարված անդադրում՝
Ցածեն կ'անցնին հուպ տալով սարին, ծառին, լճակին.
Անոնք կ'անցնին հալածվող անուրջներու պես տրտում,
Չհասկցվա՜ծ բաներու աղվորությամբն անմեկին։

Վերջալույս է. կքալեմ. հովը վայրագ կփչի.
Միապաղաղ ամպերու սառնության մեջ մարմարի,
Հորիզոնին վրա լուռ, արևգակին ցոլքը չէ՞,
Որ այսօր ալ՝ ինչպես միշտ՝ դողդողալով կմարի։

Բայց ի՜նչ տրտում վերջալույս։ Երկնքին վրա աշունի
Ո՛չ արևի բյուրակնյա շառավիղներ թըրթռուն,
Ո՛չ երանգներ բոցավառ, ո՛չ երակներ ծիրանի,
Ո՛չ իսկ երիզ մ' ոսկիե եզերքն ի վար ամպերուն։

Անշրջագի՜ծ, անորո՜շ, սառած ծովու մը նման՝
Հորիզոնը համորեն գորշ անհուն մ'է կապարի,
Ուր աշնային օրերու տժգույն արևն անսահման
Ջղալաբար կհա՜լի, կտարտամնա՜լ կմա՜րի։

Ու իրիկունն է արդեն. հով ու ալիք կհևան.
Երազներու գույնին պես՝ մութն իր քողը կթափե.
Հեռո՜ւե հեռու, մենամոլ տրտմության մեջ իրիկվան,
Ուշ մնացած թռչուն մ' է, որ դեպի սար կշտապե։

ԴՐԱՄԻՆ ԱՂՈԹՔԸ

Խնդնեռուն

Հողագունտիս կեղևին վրա տրտմածին
Թափառահած իմ ոտքերքս քայլեցին
Եղբայրության տաքուկ շունչը փնտռելն,
Ու ամեն տեղ իմ հեգ աչքերքս լալե՜ն

Տեսան փարթամ մեծատունին դրրան քով
Աղքատ մայր մը, որ կսպասեր արցունքով։

Ո՞վ ես ուրեմն, թշվառությա՞ն դու գործի,
Դրրա՞մ, որուն լուռ ցոլքին մեջ կ՝ արծարծի
Ճակատագի՛ր տառապող մարդկության։
Ասե՛, քու կամքդ պիտի իշխե՞ հավիտյան.
Ու պատմե՛ ինձ, պիտի ըլլա՞ն միշտ, ավա՜ղ,
Զքե՛զ լալով մեռնողները անսքվա՜ղ։

Մա՜րդն, առաջին այն մարդը, որ տենչավա՜ր
Պեղեց խուզեց հողին արգա՜նդը խավար.
Ու շարաննեց թաքստոցեդ դարավոր՝
Խրեց քեզի, հղկեց, մաքրեց փառավո՜ր,
Այդ մարդը, վա՜խ, ժանտ ցոլքերուդ մեջ ժպտուն
Ջնշմարեց տխո՜ւր անկո՛ւմը Մարդուն։

Տառապանքի, անհուսության ողբեր խո՜ւլ,
Կխեղդվին քար պատերու տակ խարխուլ.
Սովալքլուկ բյո՜ւր թշվառներ տրտմորեն
Իրենց նիհար ձեռքերը քե՛զ կ՝ հրկարեն.
Ու տենդահա՜ր փողոցին վրա, ամեն դի,
Քանի՞ փոքրեր կան մայրազո՜ւրկ, անոթի՜։

Իջի՜ր, իջի՜ր, խոնարհորեն, մեղմորեն,
Իջի՜ր ոսկի սանդուխներուդ մատներեն՝
Թշվառության խաշտյակներուն մեջ խոնավ
Ուր քու ցոլքե՛րդդ նըշուլված չեն բընա՛վ
Ցամքա՜ծ շյուղեր, բոլորը քե՜զ կդառնան.
Իջի՜ր, իջի՜ր, անձրևներու պես գարնան...

ԱՀԱ Կ՝ ԵՐԳԵՍ ԴԱՍԻԱՆԱ՜...

Ահա կ՝երգես, Դասիանա՜ պաշտելի՜
Ու դաշնակիդ ստեղնաշարն ապիտակ,
Նուրբ մատներուդ կախարդական խաղին տակ՝
Հիացումի մրմունջներով կհալի.
Դասիանա՜, պաշտելի՜։

Ահա կ'երգես. ձայնդ կյանքոտ կխաղա,
Կոհակ, Կոհակ շրթունքներուդ կարմիրեն
Հորդող վանկերդ տժգույն հոգիս կ'օրորեն,
Ու ես կ'իյնամ երազներուս գիրկն ահա՛
Ձայնդ կյանքոտ կխաղա։

Դասիանա՛. ահա՛ ստվերն իրիկվան
Երազներու տարտամ գույնին պես աղվոր,
Մութ սենեկիդ առարկաները բոլոր,
Կ'իտեանան, կգինովնա՞ն, կհևա՞ն։
Ահա՛ ստվերն իրիկվան։

Դաշնակիդ վրա ծաղիկները կ'երազե՞ն,
Կտժգունի՞ն ծաղիկները՝ դեմքիդ քով.
Ու սարսուռով ու համբույրով ու խունկով
Օծուն շո՛ւնչը քեզի՞ կուգա պարտեզեն.
Ծաղիկները կ'երազեն։

Ու դուն կ'երգես. Դասիանա՛, պաշտելի՛.
Ո՞վ քրմուհիդ, ու դուն կ'երգես մեղմորեն,
Ու Ձայնիդ մեջ ըղձանույշներ կպարեն.
Նվիրումո՞վ, պաշտամունքո՞վ, սիրո՞վ լի,
Դասիանա՛, Պաշտելի՛։

Դասիանա՛... Ու վանկերդ հրբատապ.
Ու հրաբվե՛ր շրթներուդ կախարդող,
Ու երգիդ հետ ալիք-ալիք վետվետող
Կյանքոտ կուրծքիդ մեծ քերթվա՛ծը հոյակապ
Ու վանկե՛ր հրբատապ։

Դասիանա՛... Ու քու աչքե՛ր գինով.
Ու ցնծումի արցունքնե՛ր բյուրեղն,
Ու սարսուռը, որ մարմի՛նդ կ'ողողե
Զգայնության անաշխարհիկ հույզերով...
Ու քու աչքե՛ր գինով։

Դասիանա՛, Դասիանա՛, պաշտելի՛.
Ա՛լ դադրեցուր խա՛ղը ձայնիդ դյութական.

Այս վայրկյա՜նն է խորհրդանույշ լռության,
Ուր համբույրի՛ մը մեջ հոգին կհալի...
Դասիանա՜, պաշտելի՜։

ԼԵՄԱՆ

Հրանտ Տ. Նազարյանին

Ի՜նչ անույշ է հանդարտիկ հովն իրիկվան,
Մայրամուտի քաղցրի՛կ շունչովը լեցուն.
Մաղիկները կմթագնին, կհևան,
Կնվազի թռչնիկին ե՛րգը ցնծուն.
Ի՜նչ անույշ է հանդարտիկ հովն իրիկվան։

Երազներու դյութիչ քողին պես անույշ,
Ու սիրատարփ նայվածքներու պես մըթին՝
Երեկոյան կ'իջնե ստվե՛րը քընքույշ,
Մի՛զմ կհըպի լեռան, ջուրին, մարմանդին,
Երազներու դյութիչ քողի՜ն պես անույշ։

Բլուրեն վար, սեգ ծառերու շուքին քով,
Կ'ստվերոտի չքնաղ լիճը Լեմանի.
Զնաշխարհիկ պշրուհիի նազանքով
Ափին ավա՛զը կգգվե, կշիկնի,
Բլուրեն վար, սեգ ծառերու շուքին քով։

Ու կլայնա՜ լիճը, շըքե՜ղ, աննըմա՜ն,
Մինչև փե՜շը Ալպյաններուն սատափե,
Մինչև Ռոնի լայն դաշտերը, ուր Լեման
Իր կապուտակ ալյակները կթափե։
Ու կլայնա՜, լիճը շըքե՜ղ, աննըմա՜ն...

Մութը քիչ քիչ կթանձրանա սխրալի՜
Լիճին ամեն ափունքներեն հեռավոր
Փոքրիկ լույսեր կպլպլան. կփայլի
Սեգ լեռներու ձյունե ճակատը աղվոր.
Մութը քիչ քիչ կթանձրանա սխրալի՜։

Հեքով ուռած կուրծքին վրա ջուրերուն
Ահա կանգնի՞ն թեթև՞ նավերը մութին.
Ահա դողդոջ տարփոտ երգերն ալ հեռուն
Սիրատոչոր շրթունքներն կփրթին
Հեքով ուռած կուրծքին վրա ջուրերուն։

Լեմա՜ն, Լեմա՜ն, պատմե՛ ինձ սերդ լրիկ,
Անհո՞ւն սերդ, որ քու ջուրե՛րդ կապույտ,
Կուռեցնե ալյակներով հանդարտիկ,
Եվ որ սարսուռ կուտա քու ջինջ հայելվույդ.
Լեմա՜ն, Լեմա՜ն, պատմե ինձ սերդ լրիկ։

Ահա ջուրե՛րդ կդողան տենդահար,
Ըսե՛, կուրծքիդ մեջեն ցցվող գեղեցիկ
Ալպյաններուդ դու ձյունի՞ն ես սիրահար,
Կարապներուդ արդյոք վիզի՞ն ալացիկ...
Ահա ջուրերդ կդողան տենդահար։

Խոսե՛, Լեման, ձա՜յն տուր ջուրիդ ալքերեն,
Նավերեն թռող սիրո երգե՛րն են հրավառ,
Որ իմ սրտիս պես քու սիրտդ ալ կգերեն։
Ա՜հ, վե՛րք մ՚ունիս կապույտ.կուրծքիդ տակ թշվա՜ռ.
Խոսե՛, Լեման, ձա՜յն տուր ջուրիդ ալքերեն։

Լեմա՜ն, Լեմա՜ն, պատմե՛ ինձ սե՛րդ լրիկ։

ՀՈԳԻՍ

Հիվանդ տերև մը տեսա կանանչին մեջ դաշտերուն։
Ի՜նչ ազվոր էր գարունը, փափուկ հովեն օրորուն
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն ալ բյուր գույնով
Կխնդային լանջյայն, գաղջ արևուն տակ գինով։

Բայց գարնային կենսավետ այդ պարին մեջ մոլորուն՝
Հիվանդ տերև՜ մը տեսա, կանանչին մեջ դաշտերուն.
Զորցա՜ծ տերև մը նիհար, որ զեփյուռին հրպումով
Մեռելամերձ կդողար՝ մարգերուն մեջ ակնաթով։

Սիրտը անհուն ցավով լի՝ ես ծունցա սրգահար
Մատներուս մեջ առի գայն, ու իր մարմինը նիհար
Գուրգուրանքո՞վ, արցունքով մատեցուցի շրթունքիս...

Անժամանա՞կ թարշամած գարնան տերև մ'է հոգիս.
Ծաղիկներուն մեջ կյանքին, գ'տիյուրին տակ մայիսի.
Ա՞լ ժպտելու անկարող, ան կրողա՞, կմսի՞...

Հիվանդ տերև՞ մը տեսա կանանչին մեջ դարանուն...

ՍԻՐՈ ՇՈՂՔԵՐԸ

Երգը հուշքին
Սրբտիս խորէն
Կուլա ուժգին
Վրհատորե՞ն։

Ու տրտմագին
Սերբս նորէ՛ն
Կծնի ցավին
Խարույկներեն

Ու կ'ուզեմ լա՞լ
Մոխիրներուն
Վրբա Սիրուն,

Որպեսզի ա՞լ
Շողքերն հետին
Չրկայծկլտին...

ԷՏԸԼՎԵՅՍ

Պատիս վրբա անխոսուկ, մունջ,
Գամ մը մեջրիդ՝ կմտածես,
Կաժդունիս, կուլաս կարծես,
Էտըլվեյսի ո՞վ վրտիտ փունջ։

Թառամե՞ր են թերթերդ բոլոր,
Հյուծեր է ցո՛ղդդ տրտմորեն.
Ո՞ր դժբաղդ հո՞վը սարերեն
Քեզ հոս նետեց քայլամոլոր։

Ծաղիկներուդ գոգը վայրի
Ու թերթերուդ մեջ գալարուն,
Անհա՞ս, հրպա՞րտ բարձունքներուն
Հիվանդ կարո՞ն է, որ կայրի։

Ու կ'երազե՞ս դուն անշշունչ,
Դամ մը մեջքիդ. ու կ'ոլորի
Դունատ թավի՛շդ մոխիրի,
Էտրվեյսի ո՞վ նիհար փունջ։

ԱՂՋԿԱՆ ՀՈԳԻՆԵՐ

Նամակը

Կնոգիշեր է. ես կգրեմ քեզ նորեն։
Չեմ գիտեր ի՞նչ միսթիք խորհուրդ մ'է անտես
Որ գիշերին մեջ սիրույս մութ դաշտերեն,
Զեռքը ձեռքիս՝ կտանի զիս տրդու պես,
Հեռուն հեռու, կածաններն անհամար,
Դեպի հո՞ն, ուր անուրջիս մեջ կանացի՝
Ցու ստվերիդ բնակութիյա՛նը համար
Առասպելին դղյակները կանգնեցի...

Կնոգիշեր է. ո՛չ մեկ շշուկ, ո՛չ մեկ կյանք,
Ես կգրեմ. լռութիյան մեջ մեռելի
Գրիչս է, որ սրտիս կու տա արձագանք.
Օ՜հ, մտերիմ, մենամոլ ձայն սիրելի...
«Խե՜ղճ սիրուհի»... կհծծեմ ան անդաստրում,
Ու պատիս չար էտրվայներն ալ կարծես
«Խե՜ղճ սիրուհի...» կհանկերգեն ինձ տրտում,
Անո՜նք, զոր քեզ հետ քաղեցինք, մոռցա՞ծ ես։

Մոռցա՞ր նաև մեր Մեծ Գիշերը վրսեմ,
— Բայց ինչո՞ւ սիրտս այսքան ուժով կտրոփե.—

Վարը Ռոնն էր, իր երգը դե՞ռ կլսեմ,
Ալպյաններուն վերը կո՛ղն էր սատափե...
Պատշգամեն կ'երկարեր ձեռք մը նիհար
Որուն վրա անհունորեն երկնային
Երկու շրթունք կվառեին տենդահար...
Ձեռքը իմս էր, շրթունքները քո՛ւկդ էին։

Ու կտեսնես, որ գբրիչս կսարսռա,
Ես հիվանդն եմ հին հուշքերուս, կներես,
Այս խոնավ բի՛ծը նամակիս թուղթին վրա,
Արցո՞ւնք մ'է, որ ինկավ հիմա աչքերես...
Բաղդը մերժեց ինչ որ սիրտերն ուզեցին.
Դուն քու ճամբեդ քալե մինակ ու հրլու.
Քենե հեռու, քենե անդետ առանձին,
Ես մի՛շտ հոս եմ, քի՛ղ տենչալու, քի՛ղ լալու...

Պիտի սիրեմ քեզի այսպես միշտ հեռուեն.
Ավա՜ղ հեռուեն, դե՞ռ վայրկյան մ'ալ, մինչև որ
Հոգիս երթա երազներուս դաշտերեն,
Առասպելին դղյակները հեռավոր։
Ու կփակվին արդեն աչքերս արցունքով.
Նախազգացում մը կ'ըսե ինձ լիահույս.
«Պիտի գտնես զայն այս գիշեր ակին քով».
Ու այն ատեն... ա՜հ այն ատեն... մինչև լո՜ւյս...

Գիշեր բարի, դո՛ւն, ճառագայթն արևուս։

ԵՐԿՔ ԳԻՇԵՐ

Dr. Léna De Cosmis-ին

Լսեցի՞ր դուն երեկ գիշեր պատուհանեդ,
Երբ սերերուս գիշերամոլ դևերուն հետ,
Ու սուգերուս հսկաներուն հետ խոլապար,
Մայթի՞ն վրա, ձյունի՞ն վրա երբ խոլաբար,
Երբ հեգնաբա՜ր կվազեի ու կուլայի,
Երեկ գիշեր, սառ մայթերուն վրա ամայի
Հեծքը քայլիս՝ քու երգերուդ մեջ զվարթուն՝
Լսեցի՞ր դուն...

Ու դիտեցի՞ր երեկ գիշեր վարագույրեդ,
Երբ տանջվո՛ղ, չի հասկցված քամիին հետ,
Ու խավարին ոգիներուն ալ հետ բոլոր,
Տառապանքիս ճամբաներեն քայլամոլոր,
Երեկ գիշեր մութ պատվերիդ երբոր հրլու՝ .
Կտանեի հեռավոր փո՛ս մը թաղելու
Սրտիս զգի՞ր դիակը դե՛ռ տա՛ք, տրոփո՛ւն,
Դիտեցի՞ր դուն...

Ու լացի՞ր դուն պատուհանիդ քով ինքնիրեն,
Երբ տրտմորե՛ն, ու հեգնորե՛ն, վայրագորե՛ն,
Իջնող ձյունին ու ուռույցքին մեջ քամիին՝
Թափառահած քայլերս ոճիրն կրավեին
Օ՞ր մը ճամբուս վրա հանդիպա՞ծ ըլլալու քեզ...
Օ՞, դուն որ մո՛ւթ կծնանիս ու թո՛ւյն կ'երկնես,
Երեկ գիշեր վարագույրիդ ետին արթուն,
Չի լացի՞ր դուն...

17 Հուլիս, 1908
Լոզան

ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պատասխանը դեռ չը՞գրեց Թղթիկիս,
Ուր տրտմության նոպայի մը մեջ գինով՝
Դրրի ամբո՛ղջ իմ սերս, ամբո՛ղջ իմ հոգիս,
Ու դրկեցի վարանումո՛վ, հուզումո՛վ։

Ըսի իրեն, թե սիրտս իրմո՛վ է առլի,
Ու գիշերներս իր երազով օրորուն,
Թե կարոտի վայրկյաններուս դառնալի՝
Ես կսպասեմ վերադարձի՞ օրերուն։

Ըսի իրեն, թե հուշերըս կթռչին,
Կթևածին իր պաշտելի դեմքին քով,
Թե բաժանման տրտում վայրկյանը վերջին՝
Աչքերըս դե՛ռ կպզտորե արցունքով։

Ըսի թե ես դինո՞ն եմ իր նայվածքին,
Թե կախարդող իր աչքերուն մեջ ծավի՝
Հավետ սուզվի՛լ կ՚ուզեի ես տրտմագին,
Շրթունքներըս իր համբույրի՛ն ծարավի...

Ու ըսի դեռ ինչ որ ուներ ախտավոր՝
Ստվերամոլ բանաստեղծի իմ հոգիս,
Պաշտամունքնե՛րս, արտասուքնե՛րըս բոլոր...
— Պատասխանը դեռ չգրեց թղթիկիս։

Կկարծեի թե հուզումեն պիտի լա՛ր
Ու նամակը պիտի տաներ շրթունքին,
Կկարծե՛ի.— այնքա՛ն գսրով ու սեր կար
Իր հրաժեշտի համբույրին մեջ տենդագին։

Թերևս հեգնեց իմ հառաչնե՛րըս երկչոտ,
Որոնց ամբո՛ղջ հոգիս հանձնել կարծեցի.
Բառերուս վրա թերևս խնդա՛ց ան պչրոտ
Իր ննջամիտ ժրպիտովը կանացի...

Ու մտածե՛լ, թե՜ շատ չանցավ այն օրեն
Ուր պաշտումիս առարկա, դեռ ան քովս էր,
Երբ աչքերը կեսմը փակած, մեղմորեն,
Երջանկության քաղցր երազներ կհյուսեր։

Ու մտածե՛լ բաժանումի իր հետին,
Ավա՜ղ, հետի՜ն համբույրին վրա սիրակեզ,
Երբ անկարող իշխելու ի՛նքն իր սրտին՝
Գլուխը կուրծքիս՝ կհնձկլտա՜ր տրղու պես...

Ո՜վ կրնոջ սիրտ, պաշտամունքով, արցունքով
Ու կեղծիքով հրաշակերտված սի՛րտ աղվոր,
Ուր կարկաչող սիրտ չքնա՜ղ ակին քով՝
Մոռացության անդո՜նդը կա ահավոր...

ՊԻՏԻ ՍՊԱՍԵ՞Մ...

Սարերի վերով գնաց, յա՜ր, յա՜ր

Երե՞ք տարի։ Դեռ կ՚սպասե՞մ ես իրեն։
Ահա տարտամ հորիզոններն հեռավոր,
Ահա ճամբան, որ կ՚երկարի տրտմորեն,
Լռիկ ճամբան, որ դայն տարա՞վ մենավոր։

Ու ահա հո՞ն գյուղին վերջին տունը ցած՝
Որուն առին՝ եղևնի ծառին քով
Երկա՞ր, երկա՞ր ես մնացի քարացած
Ու իր մեկնի՞լը դիտեցի արցունքով։

Երե՞ք տարի։ Այս հեգ ճամբուն եզրն ի վար
Երե՞ք անգամ ծընան մարգերը դաշտին,
Երե՞ք անգամ ձյունի փաթիլն հողմնավար
Անձայն հյուսեց անոնց պատանքը ցրտին։

Հուսա՞լ, հուսա՞լ վերադարձի օրերուն.
Բայց ո՞վ իրեն պիտի երթար պատմելու
Թե երկրի մութ մեկ անկյունին մեջ հեռուն,
Ես կ՚սպասե՞մ իրեն՝ սիրույս իմ հրլու։

Երե՞ք տարի։ Մութ ձայն մը կա անդադրում.
Իմ վիրավոր հոգվույս մեջ չա՞ր ձայն մը կա,
Լացո՞ղ ձայն մը, որ գիշերիս մեջ տրտում
Կ՚ըսե ինձ. «Խե՞ղճ աղջիկ, ան չի պիտի գա...»

Ա՜խ, կճանչնամ քու բողոքի ձայնդդ, Վի՜շտ.
Սակայն իզո՜ւր, ա՜յս է իմ գիրը՛ս նըսեմ.
Գնա՛ պատմել Տարիներուն, թե ես միշտ
Պիտի սպասեմ, պիտի սպասեմ, սպասե՞մ...

ՏՐՏՈՐԻՄ ՈԳԻ...

(սիրերգ)

Թափառամոլ ճամբուս վրրա քերթողի,
Տրտո՜ւմ Ոգի, ահա դարձյալ գըտա քեզ,
Հո՜ն, ուր քեզի օր մը մինա՜կ ես թողի,
Քարին վրա, աղբյուրին մոտ, կհիշե՞ս։

Մեր հրաժեշտի օրեն ի վեր դուն այսպե՜ս
Հեռուն հառած մութ աչքերըդ սևածիր՝
Սպասեցիր ճամբուն վրա տրտմապես,
Ու արցունքիդ լռիկ ե՞րգը միշտ լացիր։

Ես հեռացա՜ տարտամին մեջ խոլարար,
Իմ երազիս ճամբաներեն անդադրում,
Գիշերներու հովին նման խոլապար,
Վերջալույսի թռչուններուն պես տրտում։

Ու վազեցի— անուրջներո՜ւ ուխտավոր—
Թավիշին վրա կյանքի ծիծղուն մարմանդին.
Ու վերքերուս ծաղիկները ախտավոր
Տարի մինչև հորիզոնները մութին։

Ես խոյացա՝ նվիրումե՜ս տենդահար՝
Հո՜ն, ուր նիհար ճառագայթ մը կա լույսի,
Հո՜ն, ուր սիրո վրտիտ երգ մը կդողար,
Հո՜ն, ուր դողդոջ ծիածան մը կար հույսի...

Ու թևաբե՜կ ահա քեզի՜ կդառնամ
Երջանկության ճամբաներեն հետադարձ,
Տրտո՜ւմ Ոգի, հոգվույս միակ բարեկամ,
Դուն իրակա՜ն, դուն ճշմարի՜տ, դուն անդա՜ր։

Ձեռքերուս մե՜ջ դիր ձեռքերըդ մահաթույր,
Ու հողեղեն շրթունքները՜դ շրթունքիս.
Երակներուս մեջ՝ քու շունչը տրտմաբույր,
Արցունքներուդ բյուրեղին մեջ՝ իմ հոգիս...

Տրտո՜ւմ Ոգի, թերդ թեխս գալարո՜ւն,
Համբույրի մը անհունին մեջ սրգավետ,
Մեր ցավերուն, արցունքներուն, վերքերուն
Պատարագը պիտի տոնենք քեզի հետ...

ՍԻՐՈ ԱՂԲՅՈՒՐԸ

Ահա կուգամ երջանկության ակերեն.
Արյունքս դե՜ռ երազորեն կհեա,
Ու արցունքներս արտեանունքս կ'այրեն։

Աղբյո՜ւր, աղբյո՜ւր, ինչ հրճվանքով տենդագին
Երկարեցի թշվառ շրթնե՛բս ակիդ,
Ու ի՜նչ սիրով ըմպեցի ջո՜ւրդ անգին։

Օհ, կ'ուզեի մընալ հավետ ակիդ քով,
Նիհար ճակատս կոթնցնել քու քարիդ,
Թաղվիլ ջուրիդ երջանկությա՜ն պատանքով։

Ու կ'ուզեի հալիլ կուրծքիդ մեջ անհետ,
Լույծ մարմնույդ մեջ կաթի՜լ մ' ըլլալ, կե՜տ մ' ըլլալ,
Երգե՛լ, հեա՛լ, քեզի նման, քեզի հետ։

Ի՜նչ մոգություն կար մարմինիդ մեջ համակ,
Ի՜նչ կ'ըսեին ալիքներդդ վազելով,
Ու ի՜նչ հրմայք կար փրփուրիդ մեջ ճերմակ։

Շրթունքս դե՜ռ քեզ կփնտռեն տենդագին,
Ու հրաստապ այտերս վար մեղմորեն
Դողդղալով կսահի ցո՜ղը կյանքին...

Ահա կուգամ երջանկության ակերեն...

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Դիր զիս իբրև զկնիք ի սրտի քում,
և իբրև զմատանի ի վերայ բազկի՛ քո,
զի բուռն է իբրև զմահ սէր։
(ԵՐԳ ԵՐԳՈՑ, Ը. 6.)

Երա՞զ, տեսի՞լ, անգո՞ ստվե՞ր մ՚ անհոգի,
Ճառագայթի, փրփուրի խա՞ղ մը տարտամ.
Քմայապաշտ ծաղի՞կ մ՚ արդյոք ցընորքի.
Քու մշուշոտ գիծերուդ ի՞նչ անուն տամ.
Երա՞զ, տեսի՞լ, անգո՞ ստվե՞ր մ՚անհոգի։

Քու կապույտդ վճիտ, աղվոր ջուրերու
Եթերային անբջանքին է հանգույն.
Ու քու կարմի՛րդ Պենկալյան վարդերու
Երազամած կարմրության պես տժգույն.
Գոգն աչերուդ կապույտն ունիս ջուրերու։

Արցունքիդ մեջ նայադներ պար կդառնան։
Այդ ի՞նչ հեշտանք, որ շրթներուդ մեջ կ՚ըմպես.
Շունչդ գինո՛վ է հովերու պես զարնան,
Ձայնդ տարփոտ՝ աղբյուրներու երգին պես...
Արցունքիդ մեջ նայադներ պար կդառնան։

Կհմայեն զիս քու աչքերդ, կշոյե՞ն.
Ու մարմինդ ծորող խունկը մեղավոր,
Ավելի քա՛ղցր Քանանու գինիեն...
Հազարբուրյան այս պատարա՛գն է, աղվո՛ր,
Թե լո՛ւյծ աչերդ, որ մութ հոգիս կշոյեն։

Հրաշագո՞... Ո՞հ, քու անդրիդ բյուրեղն,
Սրունքներուդ սարսռացող ձյունն հրաշե՞կ,
Ու անանո՞ւն ցոլքը, որ քեզ կ՚ողողն,
Մորթիդ թաքո՞ւն գանգուրներուն խուրձը շեկ...
Հրաշագո՞... ո՞հ, քու իրանդ բյուրեղն։

Տենչերուս վրա պիտի հանեմ այս գիշեր
Որ բազուկնե՛րըս չփնտռե՛ն քեզ իմ քով.
Սիրտս ո՞ւր էր, որ կուրծքեդ ոչինչ չհիշե՞ր,

Մինչև առտու պիտի հալե՞ր արցունքով...
Կիրքերուս վրա պիտի հսկեմ այս գիշեր։

Բզո՜ւր։ Հոգիս թաղվի՛լ կ'ուզե հուլորեն
Ստինքներուդ մտերմությա՛նը մեջ կույս.
Ու անութիդ որոշ մեկ ծա՛լքը նորեն
Դիտեմ, որ զիս պիտի տանջե մինչև լույս...
Քու մե՛ջդ հոգիս թաղվիլ կ'ուզե հուլորեն։

Տժգույն աղջի՛կ հյուսիսայգի աչքերով,
Կոպերուդ վրա ու բիբերուդ մեջ խոնավ
Այդ ի՛նչ անճառ երանություն, ի՜նչ գորով...
Ո՛չ մեկ արգանդ քե՛զ պես հրաշք չծնավ,
Տժգո՜ւյն աղջիկ հյուսիսայգի աչքերով։

ԱՆԿԱՐԵԼԻ ՍԵՐԸ

Ես այգերով ու ցայգերով
Հաճախ մենիկ կ'անրջեմ,
Անհնարի՜ն, երկնագորո՜վ
Սեր մը որուն տերը չեմ...

Այրող աչքե՛րս քուն չունին.
Կտեսնեմ մերթ մեգի պես
Զույգ մը աչեր, որ գույն չունի
Բայց կ'սպասնեն տեգի պես...

Դղյակի մեջ իշխանուհի
Աստվածներու արյունեն.
Անկարելի՜, խե՜նթ, ամեհի՜
Համբույրներ, որ արյունեն...

Կ'ուզեմ մեռնիլ դյուցազնային
Սիրո մ'համար աղջըկա,
Հետո աչերս վար՝ հնային,
Ո՞ւր է այն Սերն, ա՜խ, չըկա...

ԼՈՒՍՆԱԿ ԼՈՒՅՍՈՎ

Սա ծառին տակ բազկատարած
Մարմար լի՜ճ կա լայնատարած.
Լուսնակ լույսով՝ լեզու առած
Քարերն հեքիաթ մը կխոսին...

Ասպետ մ՝ ամեն վերջալույսին
Ջուրի ոգվոց հետ միասին
Հոն կձոնվեր սիրած կույսին.
Քարերն արյուն, կիրք կհոսին...

Քարացեր է Սիրո Արքան...
Ինչո՞ւ կուլաս, լո՜ւռ սիրական,
Ես գիտեմ սեր մ՝ ահավո՜ր քան
Ա՜յն, որ քարերը կխոսին...

Սերն անո՜նց, որ տարիներով
Կ՝ ապրին անխո՜ս, դողդոջ հույսո՜վ
Հուսալով, որ լուսնյակ լույսով
Իրենց քարե՜րն օր մը խոսին...

ԳԻՇԵՐԻՆ ՄԵՋ

Դուրսը ո՞վ կա... Արդյոք, նորեն...
Ձայն մը չէ՞, որ սանդուխներին
Քրքջալու, լալու պես ջինջ
Ինձ կհասնի։ Ոչի՜նչ, ոչի՜նչ։

Դեմքս հանդա՜ռ մոմս կ՝ այրի
Մեռելություն մը քարայրի.
Անշա՜րժ շուքերն լռելյայն
Ինձ կնային բարի։ Սակա՜ն...

Դուրսը ո՞վ կա։ Ո՞վ կարող է։
Արդյոք պա՞տը կըկողկողե
Հին հեքիաթ մը գերեզմանի։
Այդ ձայնն այնքա՜ն ինձ կնմանի...

Արդյոք մո՞ւթն է, որ կխոսի.
Արդյոք ե՞ս եմ, որ մենկուսի
Կհեծկլտամ... Դուրսը հով կա։
Ա՞ն է արդյոք։ Դուրսը ո՞վ կա...

1909

Կ' ԱՐՅՈՒՆԻ

Տժգույն դողդոջ դիծ արյունի...
Մահորե՞ն լուռ, նստած կողքիս,
Կ'իտեանաս, ո՞վ քույր հոգիս։
Իրիկնավերջը կ'արյունի։

Լեռներն հսկա անրջանքներ,
Կխնկանան լիճի ափին.
Հոգիները կխարշափին.
Ամպո՞ւ, անծա՞լ ջուրն է մեռեր։

Ի՞նչ խորն է այս պահն աշունի
Հորիզոնը կ'այրի անշեջ։
Կուլա՞ս... Այսօր մեր հոգվո՛ւյն մեջ
Իրիկնավե՞րջը կ'արյունի։

Ա՜խ, ըլլայիր դուն աշունի
Լիճն այս գինով սիրո մեգով.
Ա՜խ, ըլլայի ես ափիդ քով՝
Լեռնացած սերն հավիտենի...

ՀԱՄԲՈՒՅՐԸ

«Հոգի՞ս, դո՞ւն, հո՞ս...» հեկեկաց ձա՛յնը լալեն։
Գիշերն ուշ էր, գաղջ գիշեր էր Ապրիլի,
Իր գրկին մեջ լուսնակն առած սխրալի՝
Թուփերն ի վար ջուրը կ'երթար հեալեն։

«Հոգի՞ս, դո՞ւն, հո՞ս...» Ու տեսա, որ ոչ հեռու,
Գետափին մոտ, հանկարծաթա՛փ, ո՛ւժգնովին,
Հովերու պես, որոնք իրա՛ր կձուլվին,
Երկու ստվեր կնետվեին իրարու...

Տարօրինակ ի՞նչ ուներ օդն այդ գիշեր
Որ դեռ կուրծքիս տակ հետքն ունիմ սարսուռիչ
Ու բիրերուս մեջ խռնավ կե՛ս մը կ՚ուռի...
Ես այդ գիշերն առանց հույզի չեմ հիշեր։

Ու կտեսնեմ, աչքիս առջևն են, ահա՛,
Իրար ձուլված, անքակելի՛, տենդագի՛ն,
Բերան բերնի, հուժկու բաղա՛ւելը մեջքին,
Ու մազերու ծովը որ լա՛յն կդողա...

Օ՜, երջանիկ տարիք, ուր մարդ կրնա գնի
Տաք համբույրի մը անհունին մեջ մոռնալ
Գոյութի՛ւնն ալ, տիեզե՛րքն ալ, ինքզի՛նքն ալ.
Ու աշխարհքին ժպտիլ անփո՛ւթ ու անգեղ։

Օ՜ր մը սիրո ծաղիկները կդիզնին,
— Ե՞րբ անբաժան եզան փուշերը վարդին,—
Պե՛տք է տքնիլ, ցավը ըմպե՛լ. ու արդեն
Քիչ հետո ժա՛մն է խորհելու սև հողին...

«Հոգի՞ս, դո՞ւն, հո՞ս...» Երկա՛ր, երկա՛ր քարացան
Այդ դիրքին մեջ, բերան բերնի, անձնվե՛ր.
Իրենց շունչերն կարծես իրա՛ր հանձնվեր,
Ա՛յնքան սեր կար այդ պաշտումին մեջ անձայն։

Ու ես լռիկ, ու ես անշարժ, երկյուղա՛ծ,
Կնայեի իրենց երկա՛ր, ու վաղվա՛ն
Կխորհեի, հաջո՛ղ վաղվան, ու մահվա՛ն...
Երբ զգացի, որ էութի՛ւնս դողաց։

ՄԵՆԵՐԳ՝ ԻՆՁ ՀԱՄԱՐ

Միլ-ծաղկով եկար,
Տապանքս նըստեմ
Մաղկելո՞ւ եկար...
Ես հո՛ւսկ երգ կ'ըսեմ
Մեր հոգվույս տըկար...
Դուն ո՞ւստի եկար՝
Տապանի՛ս նըկար...

Եվայի ծընունդ,
Մահավետ սընունդ,
Ի՞նչ է քու անունդ...
Քու անունդ Մե՛ղք է,
Քու անունդ՝ Անդունդ.
Խավարըդ ճեղքե՛,
Նեռվիմ սրտաթունդ...

Ու դուն ըսիր ինձ
Աչքիդ արցունքով,
Դուն ի՞նչ ըսիր ինձ
Այնքան հոգեթով...
Դեռ չ'ըմբռնեցի,
Այգով ու ցայգով
Տըղու պես լացի...

Ու այդ բառն անխոս,
Այդ արցունքն անհոս,
Այդ ակնարկն անշեջ,
Այդ փունջը նարկիս,
Սև շրջանի մեջ
Բանտեցին, հոգիս,
Իմին խե՛ղճ հոգիս...

Դուն տխուր գացիր,
Դուն դե՛պ, ո՞ւր գացիր,
Սիրտ— թափուր գացիր՝
Աչը՛դ սևածիր...

— Թե վերն ես արդեն,
Գիշերիս աստղեն
Նայե, մեղրըցիր...

ԱՅԴ ԳԻՇԵՐՔ

Ո՞վ մոռցնել պիտի տար այդ գիշերն հիվանդոտ
Զոր հեռավոր կղզիի մը ափերուն վրա թաղեցի.
Ահա՛ աչքիս առջևն է, կտեսնեմ մո՛ւթը տենդոտ,
Ծովափը լերկ ու ծերուկ եղրևանին փողոցի։

Ու ո՞վ ըսավ այդ կընոջ, որ այդ պահուն, մինա՛կ, հոտ
Իր բեհեզին մեջ ճերմակ, ձեռքերն կուրծքին խաչացի,
Հեկեկալով առջևես տաներ ստվերն իր կրթոտ,
Վայրա՛գորեն մելանուշ ու տրտմորեն կանաչի...

Անկե՛ ի վեր որքա՛ն խինդ, որքա՛ն ժրպիտ ու քրքիջ.
Սիրո, կիրքի ի՞նչ հայրատ պատարագներ անպատում.
Ու քանի՞ կին իրենց բյուր հրաշքներո՞վը մոգիչ։

Բայց ան հո՛ն է, կուրծքիս տակ, լացող կի՛նը անխնա.
Հեկեկալով ան հանկարծ կ'անցնի մութին մեջ տրտում.
Ու մութն հո՛ն է, կուրծքիս տակ, որ կլայնա, կլայնա...

Ո՞վ մոռցնել պիտի տար ինձ այդ գիշերն հիվանդոտ...

ԺՊԻՏ

Ցանկահարույց ու միամիտ
Բույրի մը պես տարտամորեն
Հոգիիս մեջ կ'իջնես նորեն,
Ո՞վ կանացի միսթիք ժրպիտ։

Մութ բաժակիդ գոգը վայրի
Հազար բույրեր կ'եռան գինով.
Դուն ի՞նչ ունիս, որ հատնումով
Թարթիչներուդ վրա կ'այրի։

Անգաղտնապահ վանկերդ ամեն
Սիրով, տենդով, ցավով հրդի
Գիշերներուն՝ գաղտագողի
Փլատակնե՛ր կպատմեն։

Ու ամպարիշտ խունկի մը պես
Անուրջի մը պես տարորեն,
Ալիքնե՛ր դիս կ'ողողեն,
Կարծես հոգի՛ս լացնել ուզես...

Ահա գերի՛ն եմ հրպումիդ.
Սև աչքերուդ մութը բոլոր
Չիս կվարե քայլամոլոր...
Ո՞ւր, ո՞ւր այսպես, ահե՛ղ մրպիտ...

ՉՅՈՒՆԻՆ

Սրտես ջահեր վառեցի
Խավարն եկավ խափանեց,
Սրտես վարդեր ծլցուցի
Չյունը եկավ պատանքեց...

Հպարտ հոգվույս մեջ տղու՝
Անմահ ըլլալ կարծեցի,
Գարնան երկնին տակ ազո՞ւ
Ես սիրեցի՝ ու լացի՝...

Երգը մնաց շրթներուս.
Մի՛այն մա՛հ էա, կաղկանձյո՛ւն.
Ներե՛ ծաղկող ծիլերուս,
Ճերմա՛կ Ոչինչ, ճերմա՛կ Չյուն...

Ներե՛ սրտիս իմ անահ,
Անուրջներո՛ւս վազանցիկ,
Ճերմա՛կ Աստված, ճերմա՛կ Մահ,
Չի դո՛ւ ես լոկ գեղեցիկ...

Կմեռնին սեր ու ծպիտ,
Չի դո՛ւ ես լոկ իրական.
Կյանքը քրքի՛չ մ՚ է հոպիտ,
Ու դո՛ւ ես լոկ տիրական...

Հավատացի՛ վարդերուն,
Համբույրներո՛ւն կանացի.
Միրո հի՛ն հի՛ն դարերուն
Աստվա՛ծն ըլլալ կարծեցի...

Կարծեցի դաղջ հո՛վն ըլլալ,
Հովի՛վն ըլլալ սիրերգակ,
Աստղերուն բո՛ցը գողնալ,
Ըլլալ անմահ արեգակ...

Բայց սա՛ռ լեղվովդ ինձ կըսես
Թե արևևեր կսառչին...
Ապա մարդուն սիրտը վեռ
Խավարաշին կետ մ՚ է չնչին...

Համբույրը գի՛չ, սերն անշե՛չ,
Պետք է մոռնալ ամե՛նն ալ.
Փակել աչերս Մահվանդ մեջ
Անհունիդ մեջ անհուննա՛լ...

ՊՈԼՍՈ ՈՐՈՎԱՅՆԻՆ ՄԵՋ

Առանց ուղիղու, կարծես բնա՛զդորեն,
Քայլերքս ծերո՛ւկ տարին դիս նորեն,
Այս գիշեր, Մեղրի քառուղիներեն։

Անցա ա՛յն տեղեն, ուր աչքն գաղտնի,
Քսան տարիքիս արյան ծիրանի
Ապերախտ փրփուրը կցանեի։

Նո՛ւյն երգերն էին, նո՛ւյն թաղը անքուն.
Նո՛ւյն բուրումը գարշ՝ մեղքերու թագուն.
Նո՛ւյն այո՛ւնը մըսի՝ սեմին վրա կանգուն։

Նայեցա՛. իրենք ալ ինձ նայեցա՛ն։
Խորշում մորթիս վա՛րդ թևեր քսվեցա՛ն։
— Միա՛յն ծեր հոգիս կ՚արտասվեր անձայն։

Հավիտենական ո՛վ Մեղքի Քաղաք...
Ի՞նչ կրնեք Կյանքերն, որոնք կուլ կուտաք...
— Ո՛վ ինկած քույրեր՝ այժմ հողերու տակ...

Տոփա՛լ, ինչո՞ւ չէ... Բայց աչքե հեռու,
Քուրջի մը նման վաճառվի՛լ հըլու՝
Ա՛յն ապուշին, որ դրամ ունի տալու...

Վա՛խ, քույրե՛ր, քույրե՛ր։ Մեր պի՛ղծ, հեղհեղո՛ւկ
Կյանքին զրկված ծաղիկներն եք դուք...
Մարդկության փտա՛ծ թոքեն նետված թո՛ւք...

Անդին Սուրը բյո՛ւր կյանքեր թող հնձե,
Թող Սովը հազար քաղաքներ ցնցե,
Վաղը Մարդկության վախճա՛ն է գուցե...

Ի՞նչ փույթ... Հո՛ս պիտի երգե «լաթեռնաան».
Հո՛ս տրտո՛ւմ զույգեր պիտի արփենա՛ն.
Հո՛ս պիտի ծախվին Օլկան, Մառիքան...

Ո՛վ արյան ծաղի՛կ՝ բացվա՛ծ խոլական՝
Ավերակներուն վրա բյուզանդական...
Մշտնջյա Մեղքի մշտնջյա Ակա՛ն...

Ո՛վ խավարակուռ մսեղեն գավաթ
Ուրկե մարդկությո՛ւնը թերահավատ
Կ՚ստիպվի ըմպել գինիդ հուսահա՛տ...

Սոդոմեն բերված ընծա մահագին՝
Որ բոզ Արևմուտքը Արևելքին
Կ՚երկարե ժպտո՛ւն, Ասիորի կողքին...

Ո՞վ մահաժրպի՞տ, գա՛րշ, արյունալի՞
Հակադարձ երե՛սը այն «մեռայլ»ի
Ուր ՄԱՐԴ ոսկետառ անունն կփայլի...

Թերա, 18 Հուլիս 1909

ԶՂՋՈՒՄ

Երեկ գիշեր հեշտանքի պատարագ մը վերջ հույլ,
Կդիտեի հափրացած սրունքներուդ գիծը թույլ,
Կդիտեի սեղանիդ իրերն ամեն ցիրուցան,
Ժանյակ, սրվակ ու մեռած մազի խուրձեր ալ դեղձան։

Սենյակը ցուրտ էր ու մութ, դուրսը հովն էր տրտմասույլ.
Նվիրումես հոգնաբեկ՝ երազանքի մը մեջ ծույլ՝
Զգացի որ տրտմորեն մտածումնե՛րըս անձայն
Պահ մը ձյունն անդրիիդ ողորկ ձևեն հեռացան։

Կխորհեի թե ինչ որ մենք Անմահ Սեր կ'անվանենք,
Մութ կիրքերու հագեցման պարզ նախաբա՛նը չէ՞ր ննդ.
Ու զարդերեն մերկացված Կինը անարգ էգը չէ՞ր...

Այսօր դարձյալ տեսա քեզ ու հակեցի իմ աչքեր,
Ա՛յնքան վսեմ էիր դուն աստվածությանդ մեջ շրջեղ,
Ու ա՛յնքան վատ էի ես խորհուրդներուս մեջ տրգեղ,

Երեկ գիշեր հաճույքի պատարագ մը վերջ հույլ...

ՍԻՐՈ ՄՐՄՈՒՆՋ

Անոնք գացի՞ն խորհուրդով ու դաղտնիքով բեռնավոր,
Գացի՞ն նավերը սիրույս իմ աչքերուս առջևեն,
Ցրուկնին վեր, դեպի մո՞ւթ եղերքները հեռավոր,
Առագաստնե՛րը գինով մայրամուտի գաղջ հովեն։

Ու տեսա որ հինավուրց դիցուհիի պես աղվոր,
Իրենց ձյունի անարատ սրբության մեջ համորեն,
Թևերին վեր, անծանո՞թ ափունքներու ուխտավո՞ր,
Անրջանքիս կարապնե՛ր սահեցան համբորեն...

Իրիկուն է։ Կդիտեմ ես լո՞ւյծ անհունը ջուրի.
Հովը լռիկ կպատմե ինծի հուշքեր երջանիկ,
Ու անպատո՞ւմ խորհուրդով անսահման ջո՛ւրը կ'ուռի։

Քար ու փրփուր ափին վրա կհամբուրվին իմ առջիս...
Ես կդիտեմ հեռավոր հորիզոններն, ուր լռի՞կ
Դացին նավե՛ր սիրուհի ու կարապներն անուրջիս։

Անոնք գացին խորհուրդո՞վ ու գաղտնիքով բեռնավոր...

ՉՀԱՍԿՑՎԱԾ...

Չհասկցված երգի կմախք մ' է հոգիս.
Աննկարագրելի՞, գալարվո՞ղ ճիչ մը վայրի...
Դո՞ւն ապառա՞ժը չես ճանչնար իմ սուգիս,
Ու աչքերուդ երգը կ' երգեմ ինծ բարի։

Ու երբ զվա՞րթ ամեն բանի կժպտիս,
Ես կփակեմ կոպն աչերուս որ կ' այրի՝
Թափառելո՞ւ համար մութին մեջ սրտիս,
Ուր երկյուղած արհավի՞րքն է բարայրի։

Դա՞ն հուշքերուս հո՞ն սանդուխներն անկո՞խ, կո՞ւյս.
Հո՞ն ցավերուս լիճը, որ մո՞ւթ կոարսում.
Հո՞ն դիտապատ հեգ հայացքնե՛ր սիրույս՝

Կրրանիթի կամարներու ներքև ցա՞ծ.
Հո՞ն... դեռ ինչե՞ր... զվարթ ա՛ղջիկ, որոնց վրա
Թե գիտնայիր՝ պիտի լայի՞ր անկասկած...

ԳԼԽՈՒ ՊՏՈՒՅՏ

Կտեսնեմ բյո՞ւր բյուրեղներու ու լույսի
Խեղթեցընող ծիր-կաթիններ անհատա՞կ.
Ու շղարշի ժապավենի, սնդուսի
Երազամո՞լ գիրկընդխառնումն սպիտակ։

Պարարշա՞վն է, ալի՞ք ալի՞ք կհոսի
Նվագներու տարփոտ, հայրատ թևին տակ։
Բույրի, շունչի ու նայվածքի ու մրսի
Ահեղորե՞ն ցնորական պատարագ...

Բոցի հաղա՞ր լեզուներ մեզ կ՝ ողողեն.
Ու կսահի՞նք,— ու կզգամ, որ կսուրան
Կուրծքիս վրրա ձյունագունտերդ հրեղեն։

Ու կսահի՞նք, եթերարշա՞վ զույգ հուրի.
— Օ՜, խե՜ղճ հոգիս— ու շրթունքնե՛րս կ՝ իյնան
Բուստե լայնշի՜ լանջքիդ վրրա, որ կ՝ ուռի...

ՔՆԱՅՈՂ ԱՂՋԻԿԸ

Սնդուսներու դյութական փրփուրին մեջ սպիտակ՝
Տեսա, որ ան կմրափեր՝ ինչպես կաթիլ մը ցողի
Կքնանա հուլորեն շուշանի մը շուրին տակ,
Բյուրեղ մարմինը գինով երաղներովն իր հրդի։

Կիսխուփ կոպին տակ աչքերն կհալեի՜ն կապուտակ,
Մերկ ուսերեն վար կարծես թեթև արշավ մ՝ էր զողի.
Ու ալեվետ մազերու խարտիշագեղ քողին տակ
Կ՝ ելևէջեր իր գեհա՜ս, փոքրիկ լանջքը կատաղի...

Այպես մութին մեջ փովա՜ծ, գիցուհիի մը պես հին,
Ջես գիտեր ի՜նչ մ՝ ուներ ան պաշտելի ու ահավոր,
Դեռափթիթ աղջկան իր մրրափին մեջ լռին։

Ու իր շունչին մեջ համակ անրջանքի, համբույրի,
Ի՜նչ չի ծծված բույրերու պատարագ մ՚էր հեշտօրոր...
Օ՜հ, քնացող կիրքերեն ծորող նեկտա՜ր վայրի...

ԻՆՉՊԵՍ ԵՐԲԵՄՆ...

Քերթո՜ղ, պատմե՛ մեզ հայրենի հուշքերեդ.
Երգե մեզ հի՜ն օրերու երգ մը անհետ,
Թափառական թրուպատուրի երգ մը զո՜վ,
Արբշիռ ու զով մեր Գողթանի ողկույզո՜վ։

Մեռելի շեն երգ մը հանե թոքերեդ.
Հի՜ն, կռապաշտ ա՛յն երգերեն, որոնց հետ՝
Մեր ասպազեն քաջերն արույր թափորով,
Սաղավարտնին շողացնելով, ջահերո՜վ,

Արքայական հանդեսներու, վայրա՜գ, վե՜ս,
Կպարեին, աստվածներու պարին պես...
Երգե՛ մեզի հին օրերու հի՜ն հուշեր.

Մենք դարավոր մեր Մահացումն այս գիշեր
Պիտի պարենք, եղեռնորե՛ն շե՜ն, խելա՜ռ...
— Քերթողը, ծե՜ր, չըխոսեցավ։ Ան կուլար...

Լոզան, 1 Հունվար 1909

ԶԼՍԿՑՎԱԾՆԵՐԸ

ԶՂՋԻԿԸ

Քու սուգդ ո՞վ պիտի լա, Զղջի՛կ, զգիր ու մութ քո՛ւյր։
Ահա իջնող մութին մեջ կխարխափի վաքդ կո՛ւյր.
Ո՞ւր, Զղջիկ քո՛ւյր։ Ինչո՞ւ լուռ կհեռանաս երդիքես,
Ո՞ր թարշամած վարդն հետին պիտի հաճի՞ ժպտիլ քեզ...

Եվ ո՞ր սարյակը պահված թավուտին մեջ հեշտաբույր,
Քեզ դալլայլովն իր հրավե՞ր պիտի երգե ի համբույր...
Դուն ի՞նչ ունիս. ո՛չ փետուր, ո՛չ իսկ ձայնիկ մ՝ որ երգես,
Ո՛չ իսկ լույս մը մտերմիկ՝ փոսուռայի բացին պես։

Մերկ թևերդդ, որ հեգ կո՛ղդդ կծեծեն անընդհատ,
Քնած Կյանքը թունելու շարժումն ունին հուսահատ,
Ու միջոցին մեջ Անեծք ցանելու տե՛նդը անշեջ։

Եղո՛ւկ. դուն չե՛ս սավառնիր. կտապալի՛ս մութին մեջ։
Դարձի՛ր, դարձի՛ր, Զղջիկ քույր, եկուր անխոս ու՝ հրլու,
Երդիքի՛ս մեջ, հոգվո՛ւյս մեջ, Սև Նեղվիքդդ խոկալու...

Լոզան

ԻԺԸ

Ինչպես Ամոթն, ինչպես Մեղքն, ինչպես Դժոխքը՝ տեսե՛ք,
Ան կընեջեն։ Ձազրելի՛, գարշատեսի՛լ, անշա՛րժ, սեգ,
Անգիտակից անմեղի իր քունը խո՛ր կընեջե...
Մենե որո՞ն համար քունն սփոփիչ, կարճ Մահ մը չէ...

Ո՞վ նորածին իժի ձագ։ Քնացի՞ր, կո՞ղոդ հրաշեկ
Երա՞զորեն փրոն տաք ավազուտին վրրա շեկ.
Եթե հեռուն հեռու մեզմ ջուրը տարփուտ կարկաչն,
Քու գետնաքարշ մարմինիդ հովվերգության համար չէ։

Դուն հո՞ղ պիտի ճաշակես, ու դուն պիտի Մա՜հ ըմպես,
Պիտի շնչես ժայռերու թագուն ճեղքին մեջ անտես,
Անիծելով արգավանդ արգանդը, որ քեզ ծընավ...

Չէ՛, չի պիտի թողում, որ ապրի՞ս Հարված մը... մեռա՜վ։
Ա՜խ, հողակե՛ր, նզովված, սողո՛ւն որդվոցը մարդկան,
Փրկարար մեծ Հարվածն ո՞վ պիտի շնորհեր վերջնական...

Լոգան

ՀԱՅՐԸ

— «Հայր մեր որ յերկինս...»

Աստանդական մ՝ ալեհեր, ցուրտ գիշերով, բուք-բորան,
Մթին փողոց մը, քարի նստարանի մը վրրան,
Իրեն խարխուլ կողին վրա ընկողմանած էր արթուն,
Երբ ապաստան փնտռեց հոն նիհար տղա մը անտուն։

Նայվարին մեջ նայվածքներն իրա՞ր զարկին, շաչեցա՞ն...
Ները հեռու քաշկռտեց հիվանդ մարմինն իր անձա՜յն.
Ուանչցե՛ր էր. բայց չի կրցավ ըսել՝ «Որդյա՛կ մոլորուն,
Զավա՛կս ես, զոր լքեցի անոթությանս օրերուն...»

Թշվառության հյուրընկալ նստարանին վրա քարի,
Կյանքի խավար գիշերով, Մարդն ու Աստվածը բարի,
Պատահաբա՛ր, կող կողի, երբոր զիրար տեսնային.

Եհովան իր լուսեղեն պրսակին մեջ, երկնային՝
Չէ՞ր ամչնար ըսելու թշվա՛ռ, անտե՛ր, խե՛ղճ Մարդուն.
«Ե՛ս ես քու հայր Արարիչդ, ամենակալ, մշտարթուն...

23 փետրվար, 1909
Լոգան

ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՅՆ

Հոլա՜, ո՞վ կա... Հոգի մը չի՞ արթոփեր... Ո՛չ մեկ շունչ։
Ու առյուծն իր առջևի մեկ թաթին վրա անմրոունչ
Արձանացած՝ կթարթե՞ն իր մութ նայվածքը հեռո՞ւն,
Արշալույսի առաջին արյունոտող գիծերուն։

Արյունոտո՞ղ... Բայց Առյուծն այնքա՞ն տխուր է ու մունջ։
Կարո՞ն ունի թուշերի հովվերգության քաղցրահունչ,
Կամ միամիտ, մտերիմ եղնիկներու խաղերուն...
Ամայությունն է իր շուրջ, իր մեջ Զանձրո՞ւյթն է անհուն։

Ո՞ւր, ո՞ւր են հին ատենները, ուր ան կ՚իշխեր անողորմ։
Մա՛րդը, խոնարհ ու գաճաճ, արշավեր է ամեն կողմ։
Թոքախտավոր առյուծներն հարցո՞ւր երկաթ-վանդակին...

Այսպե՞ս, առտո՞ւն, քարացած, ան կ՚երազե ախտագին,
Ամայության մեջ բանտված, Աստուծո մը պես ինկած...
— Առյո՞ւծ-Արքա, գնտակ մ՚ալ քի՞ղ կփրկե անկասկած...

28 փետրվար, 1909
Լոզան

ՊԻՏԻ ՄԵՌՆԻ...

Ճի՜չ, ճի՜չ մըն ալ... Անօգո՜ւտ Փոթորկին մեջ աշունի,
Անծի՜ր ծովուն վրա գորշ, դեպի ափե՜ն հայրենի,
Ծիծառներուն կսուրա լո՜ւռ կարավանը փութով։
Իրենց վերջինն, ուժասպա՜ռ, կփորձե ճի՜չ մ՚ալ թոթով...

Պիտի մեռնի։ Ան գիտե։ Բայց մո՜ւթ հոգին թուչունի,
Անմահության գո՜նե այն ճարտար հավատքն ալ չունի,
Որ կշոյե մեր վերջին ժամերն Հույսով ու Սուտով...
Միա՛յն գիտե, թե աչքերն խավարելու են շուտով։

Որովհետև մոնչող գորշ ծովուն վրա անհատակ,
Ի՜նչ դիակներ տեսավ ան՝ ուիտի ճամբուն նահատակ...
Հեռո՞ւն. ո՛չ գիծ մը տարտամ։ Հեռո՞ւն. ո՛չ կայմ մը նիհար։

Մեռնի՞լ. ո՛չ, ո՛չ։ Դե՞ռ թռչիլ կփորձե՛ն տենդահար...
— Ինկի՞ր, ինկի՞ր, խե՞ղճ թռչուն, ծովերու մեջ թե՛ ծաղկանց,
Պահ մը առաջ, պահ մը ուշ, Մահը նույն Մահն է անա՞նց...

1 մարտ, 1909
Լոզան

ԿԱՐԻՃԸ

Իրիկուն է։ Փոքրիկ, ահեղ, մահունակ,
Կարիճն հանդարտ մեղմ արևուն կտաքնա։
Գնչուի խեղճ գերեզմաննոց մ' ուր միանակ
Եվ իրեն հետ, քարին վրա, ես ու նա։

Անճա՞ռ հեշտանք. հեքն արևուն գաղջունակ,
Կռնակեն ներս, արյունին մեջ կ' ընթանա,
Մինչ տտունն իր գլխուն վերև շարունակ
Կ' ելևէջն, արքայորե՛ն անխընա։

Ան կտաքնա. ու կպաշտեմ զայն լռին.
Ու կպաշտեմ ես քեզ, մբթի՞ն թագավոր,
Դուն Ո՛ւյժ, դուն Վրեժ, դուն Դառնացումն անմեկին։

Երանե՛կ կարիճ։ Երանությա՛մբ թաթավուն,
Մահը ծոցիդ, թույնը խղճիդ, ահավո՛ր,
Դուն դեռ կրնա՞ս տաքնալ բարի արևուն...

1908 հոկտ. 5

ԿԱՐՄԻՐ ՏՈՆԸ

1

Մայի՞ս։ Բոլո՞ր բանվորներուն
Նոթիներուն հանապազոր
Ու կենդա՞նի մեռելներուն,
Մեռելո՞ցի տո՛ն է այսօր...

2

Բանվո՛ր, անբա՛ն, ծե՛ր, ո՛րբ, անտո՛ւն,
Ընդվզումնի մը մեջ հրզոր
Քանդեցե՛ք կուռքը Մեծերուն,
Ձերին կարմիր տո՛ն է այսօր...

3

Թափորներով դուք դեգերուն
Դրոշակներու ներքև բոսոր,
Վրե՛ժն երգեցեք ձեր վերքերուն
Վրեժի ահեղ տոնն է այսօր...

Լոզան, 1 Մայիսի, 1909

ԿԱՐՄԻՐ ԴՐՈՇԱԿԸ

«— Անոթինե՛ր, անդործներու կո՛ւռ բանակ,
Փոս աչքերնիդ դեպի երկինք զո՛ւր բանաք։
Տառապա՛նքի ոստայնանկներ, ի կրո՛ւվ...
Ի զե՛ն կիներ, ի զե՛ն ծերեր ալեխռիվ...»

Դուրսը ձմրան սույլին մեջ կլսվեր
Բողոքի ձայն մը գալարվող կարևեր,
Ընդհատված խո՛ւլ հոնդյունով կատաղա՛ծ,
Որ արձագանգ կուտար երկար. «հա՛ց, հա՛ց, հա՛ց...»

Ի՞նչ կար։ Կուրծքիս տակ ուժգին սիրտը դողաց։
Ձյուն-ձմեռո՛վ, այսպես գիշեր ատեն՝ հա՛ց...
Գաղջ անկողնես վար նետվեցա մրափված,
Պատուհաններս բացի փութով, ու, Աստվա՛ծ...

Միթե՞... Ամեն բան հասկցա ու լացի...
Բոլոր վայրագ պայքարողները հացի,
Հազարներո՛վ, հո՛ն, վա՛ր էին խեղճ ու վե՛ս,
Կուտվա՛ծ, կատղա՛ծ, մրջյուններու շեղջի պես...

Ցո՜ւրտ, իրենց վրա դանդա՜ղ կ՝ իջներ ձյունն համակ
Անհուսության ծաղիկներու պես ճերմակ։
Ցո՜ւրտ, կպատեր դիրենք գիշերն անսահման,
Թշվառության մթին դավի մը նման։

Իրենց մե՛ջտեղ. խեղճ կառքի մը վրա խարխուլ,
Հաղարներու հանդյունին մեջեն խուլ,
Աշխատանքի նոթի սարուկ մ՝ ալեփառ,
Կանգնա՜ծ, դողդո՜ջ, կբողոքեր, կպողոքկար։

Ու իր խոսքերը կ՝ իջնային փրփրաղեղ,
Անիծապարտ սև՝ ամբոխին վրա ա՛յնպես՝
Ինչպես ժայռեր օվկյանին մեջ կատաղած...
Ու օվկյանը կճողփար. «Հա՜ց, հա՜ց, հա՜ց...»

«— Ինչո՞ւ ոմանք սնդուսներով օրորուն,
Ոմանց գլուխը՝ մայթին ձյունոտ քարերուն...
Ինչո՞ւ մեկը՝ ձեղուններու տակ ոսկի, —
Մյուսը՝ խոնավ խշտյակի մեջ սողոսկի...

Մեկուն դիակի վրա դամբա՜ն, վա՜ղդ, մարմա՜ր.
Ողջը չունի բարձ մ՝ ուր հանգչի՛լ կարենար...
Բույն-ընտանիք ունի թռչունն օդաչու,
Ան ե՜ղդ ունի. իսկ մենք՝ Անենք միայն. ինչո՞ւ։

Ինչո՞ւ հագա՜ր պերճ տաճարներ հրաշակա,
Աստուծո մը հոգվո՛ւյն համար, որ չիկա...
Մեր ոդրերը կհալածվին՝ տեղ չիկա...
Մեր խեղճ կինե՛րն են հոգնվար՝ դեղ չի կա։

Ինչո՞ւ, ինչո՞ւ, ու մինչև ե՞րբ, սեպհական
Մե՛ր քրտինքով պիտի շաղվին պատվական
Համադամներ մեծատունի՛ն, իր շունի՛ն,
Մինչ աշխատող բազուկներ չո՛ր հաց չունինք»։

• • •

Ները դողդոջ իջավ կառքեն այն խարխուլ,
Ու կատաղի գոռյուններու մեջեն խո՛ւլ,
Կառքին գեղջուկ բեմին վրա՝ հյուծահա՜լ
Խեղճեր եկան խոսք առնելու, կինե՛ր ալ...

Կիսանեին— անո՜ւս դեմքեր ապաքեն—
Ի՞նչ որ պոռթկար իրենց նոթի աղիքեն,
«Իրավունք»ի կոպիտ բառեր ինքնաբեր,
Զոր կապուտցած իրենց շրթունքը կափեր։

Խո՜ւլ աղաղակը կ՚ընդհատվեր պահ մը. «հա՜ցա».
Ու ամբոխը լուռ կ՚ունկնդրեր ծարավա՜ծ
Արդարության չքնա՜ղ ձայնին այդ տրկար,
Արդարությա՜ն՝ որ երբե՜ք չի պիտի գար...

Վայրա՜գ գոռյուն մը գիշերին մեջ թնդա՜ց.
Զյունոտ ցայգին անբա՜ղ սուգին մեջեն թաց,
Բոցերո՜ւ պես շրջեղ, տե՜գի պես հրպարտ,
«Կարմիր դրոշա՜կ»ը բարձրացավ անհանդարտ...

Ու ամենքը խլրտեցան, շարժեցան,
Թափորի մը պես ահավոր ու անձայն,
Կռապա՜շտորեն լծված— սուգի սև հանդե՜ս—
Խարխուլ կառքին՝ Արդարության բեմին պես...

Ու ես տրտո՜ւմ, ու ճմլվա՜ծ, անբարբա՜ռ,
Կդիտեի, որ կ՚երթային տրտմաբար.
Զյունի՜ն մեջեն, մութին մեջեն անսահմա՜ն,
Գրաստներու սև բանակի մը նման...

Ո՞ւր, դեպի ո՞ւր... Քաղցած կյանքեր համբո՜ւրեն,
Խսպառ լքված աստվածներե՜ն, մարդերե՜ն,
Լո՜ւռ կ՚երթային, խուլ բնազդի մը հլո՜ւ,
Նո՜ր Օրենքի նո՜ր նժար մը կերտելու...

Ու ինձ այնպե՜ս թվեցավ, թե լուսյա՜ն
Ճակատագրին թևը կ՚իշխե՜ր իրենց վրան...
Բայց կ՚երթային անոնք, ի Զե՜ն, Ի ՊԱՅՔԱ՜Ր,
Արդարությա՜ն կըդիմեին խո՜նջ տրկա՜ր,

Արդարությա՜ն, որ ա՜յս կերպով պիտի գար...

Լոզան

ՓՈՂՈՑ ԱՎԼՈՂԸ

Սիկառ մը բերնիս, բաց պատուհանես՝
Խոռոչ մը թագչած ծե՛ր բուի մը պես՝
Կդիտեմ փողոցը ամայի՛, լայն,
Անտերև ծառի զուլդ շարքը երկայն,
Հալած ձյունի ծո՛ւլլ անձրևը բարա՛կ,
Գոցված հազվադեպ կառքերը արա՛գ,
Ու ծառերուն վրա, դողդո՛ջ, ցրտահա՛ր
Քանի մը սրմքած ճրնճղուկներ նիհար
Որոնք աչքերես արցունք կբերեն...
Ա՜խ, մարդերն ի՜նչ նուրբ կենդանիներ են։

Ճիշտ տանքս դիմաց, այս ցուրտ օրերո՛ւն,
Հին համազգեստով ծեր մը երերուն,
Այս անձրևին տակ, ավել մը ձեռքին,
Մինչև իրիկուն լո՛ւռ, դանդաղագի՛ն,
Երկուքի կոտրած հասակն ալեոր,
Կըմաքրե մայթին ցեխը՝ այնպես որ
Ջ՝ աղտոտի կոշիկն ազնիվ անցորդին...
Ի՜նչպես թույլ կուտանք այս բուքին, ցուրտին,
Որ ծերերն այսքա՛ն կըռնակեին ծրռեն։
Մարդերն ի՜նչ անգութ կենդանիներ են։

Գըլուխն է կըքած թաց գըլխարկին տակ,
Լա՜յն առատ մորուք մ՝ ունի ըսպիտակ,
Թագավորի հին դեմք մ՝ ըլլար կարծես.
Բայց ձեռքը կըմախք կխըրչտեցնե ձեզ։
Աչքերը թաց են. արցո՞ւնք մ՝ է միթե,
Անձրևն է, ճակտեն վար կըկաթկըթե։
Բայց գոհ է, նույնիսկ երգ մը մըրթմրթա,
Որովհետև տուն գիշերն երբ երթա
Որբ թոռներուն հա՜ց պիտի տա նորեն...
Ա՜խ, մարդերն ի՜նչ սուրբ կենդանիներ են։

Տերն ինչո՞ւ կերտեց Մարդը ոչինչեն.
Ա՜յս կյանքին համար... Իրեն համար չե՛ն
Երկինքն աստղազարդ, պըլպուլը ցայգին,

Ձեփյուռն առտվան, գիներեր այգին,
Կապույտ երազները՝ թոնիրին մոտ,
Իր ծեր հասակին՝ ձեռներ խընամոտ...
Բա՜րե, կյա՜նք է այս. աշխատիլ սովա՜ծ
Ուտելու համար գիշերը սոխ-հաց...
Մեռնիլը լավ չէ՞ այսպես ապրելեն,
Մարդերն ի՞նչ անհագ կենդանիներ են...

Մինչև ճերմկցան իր մորուքն ու մազ
Կյանքեն սովրեցավ բան մը հազի՞վհազ՝
Ճակատագրական ո՛ւյժը Արգանդին։
Իր խելքը չա՜նցներ այդ կետեն անդին։
Աշխատութենեն ահա դարձավ ծեր
Բայց իր հացը չոր շո՛ւն մը չի կրծեր.
Մինչ անդին ոմանք ծնած վայրկյաններն
Իշխան են արդեն, կամ ոսկի ունին,
Ու աղքատին բաղդ կտնօրինեն...
Մարդերն ի՞նչ քոսոտ կենդանիներ են...

Վաղը եթե բաղցը կամ ցուրտ քամին
Հանկարծ մեռցընե որք թոռներեն մին,
Ամբողջ ունեցած դրամը միասին
Չը պիտի բավեն մահվան հանդեսին...
Բայց ի՞նչ փույթ, կեցցե՜ Կառավարություն.
Ի՞րն է անտունին դիակն անարյուն.
Նախ կ՝ սպաննե, բայց կթաղե ձրի...
Նուռ խոսողին թող բերանը ծռի.
Արքան խեղճերուն տե՛րն է համոբեն.
Մարդերն ի՞նչ գթոտ կենդանիներ են...

Կառավարությո՜ւն. ի՞նչ բարի, բարի...
Աղքատին զպրոց բացեր է ձրի
Որ հոն սորվեցնե կարդալ ու գրել,
Օրենքին առջև կռնակը ծռել...
Գիտնալ որոշել չարը ու բարին,՝
Սեպհական փողեն տո՛ւրք տալ կեսարին...
Ըլլալ հնազանդ մեկ կաթնտու կո՛վ,
Ջորք գրվիլ, մեռնե՛լ արքային կամքով...

Հարգել հարուստին վաստակն անօրեն...
Մարդերն ի՜նչ խելոք կենդանիներ են...

Ավլե՛, ծե՛ր, ավլե՛, աշխատե տքուն,
Ձմեռվան ցուրտին, ամառվան տաքուն,
Ավլե՛ մարդկության աղտը սնոտի,
Ու գիտցի՛ր, որ մի՛շտ պիտի աղտոտի...
Գիտցիր, որ հա՛ցդ է ավելի մաքուր
Քան ջոջին կարմիր հացը թաքթաքուր.
Գիտցիր դուն բավե՛լ քեզի՝ որպեսզի
Օգնեմ ըսելով չի խեղդեն քեզի...
Գիտցի՛ր, որ ինչ ալ ըլլան կամ ընեն,
Մարդերը զազիր կենդանիներ են...

Ու սովրե ատե՛լ նոզկանքով անհուն
Անոնք, որ «փրկչի» կկրեն անուն
Ու ճոխ խոսքերով տունդդ կքանդեն.
Սարվեցուր տղոցդ ատել արգանդեն
Քաղաքագետնե՛ր ամեն գույնի
Որոնք կ՝ սպաննեն քեզ առանց թույնի։
Սարվեցուր իրենց խոսքը հետագա
«Ազգատին համար բարեկամ չի կա,
Փոքրերն անվրեպ մեծերուն կեր են,
Մարդերը կատղած կենդանիներ են...»

Ազգատասեր սիրտ մ՝ ունիմ ես ի՜նքս ալ.
Թե անկեղծ է այդ՝ քաղցր է ինձ հուսալ.
Այդ ծերն իմ «եղբա՛յրս է. գրա՛ծքս վկա.
Մե՛կ տարբերություն միայն եթե կա,
Մինչ ես կգրեմ տողեր խնամոտ,
Սիկառ մը բերնիս՝ վառարանիս մոտ,
Ու բյուր հանգերու մեջ քաղցրահնչուն
Կփնտռեմ կյանքի «ինչպեսն ու ինչուն»,
Ները այս ցուրտին կ՝ ավելի խեղճորեն...
Մարդերն ի՜նչ ահեղ կենդանիներ են...

Ի՜նչ ատեններու հասեր ենք, Աստվա՜ծ.
Փրշրեցինք ինչ որ կար վրսեմ կերտված։

Կրոնքը բառ մ' է, իսկ հոգի չիկա,
Ով դեռ կհավատա՝ խենթ մ' է անիկա.
Իսկ Հիսուս ապուշ մըն է հետնագույն
Զուտի ծըրագիր, քաղաքական գույն...
Գութն ըզգացմունք մ' է գրեթե մանկական,
Պետք է դավանանք ոչ ընկերական,
Այսպեսով կ' երթա աշխարհք ինքնիրեն,
Մարդերը չէ՞ որ կենդանիներ են...

Ո՛վ փողոց ավլող, ո՛վ եղբայր, ո՛վ ծեր.
Քու պարզ ներսիդիտ դժոխք են բարձուցեր
Ու դուն կխորհես. ինչո՞ւ է այս կյանք,
Լավ չէ՞, որ շուտով մեռնինք, հող դառնանք.
Թե վարձատրություն չիկա աղբատին
Ո՛չ մահեն ասդին, ո՛չ մահեն անդին,
Թե պատիժ չիկա հարուստ անդութին
Ո՛չ մահեն ասդին, ո՛չ մահեն անդին,
Ապա թող ամենքն իրար հոշոտեն,
Մարդերն ի՞նչ երկչոտ կենդանիներ են։

Թե արդարություն, թե միտք գերբնական,
Թե սուրբ Իտեալ, թե Աստված չիկան,
Ապա ո՞ր ուժով, ո՞ր օրենքով, ո՞ր
Արդարությամբ, ո՞ր կամքով ահավոր
Կըրնան արգելել քեզ, ծերուկ բարի,
Որ օր մ' երբ վրեմիտ հոգիդ փըրփըրի
Թե արժան չէիր դուն այս վատ կյանքին,
Օր մը քու դողդոջ ձեռներդ մոլեգին
Անխիղճ մեծերուդ աղիքը պատռեն...
Մարդեր պատռելիք կենդանիներ են...

Սակայն ո՛չ, ո՛չ, ո՛չ։ Զյունին, ցուրտին մեջ
Ավլե մարդկության ցեխն ու կեղտն անվերջ,
Ավլե՛, ու գիտցիր, որ միշտ կ' աղտոտի...
Մի՛ խորհիր. միտքը՝ զարդ մ' է սընոտի...
Ավլե՛, որբիկներդ հացիդ կսպասեն.
Ավլե՛, սուրբ է պարտքն, ինչ որ ալ ըսեն։
Ավլե՛, որպեսզի իրիկվան երբ տան

Նիհար սակագին քու ըստբրկության՝
Նրզովես այդ ձեռքը սրբտիդ խորեն,
Մարդերն անիծած կենդանիներ են...

Ու ես գիտեմ, որ ցած խրշտյակիդ մեջ
Զրմեռ գիշերներ գետնին վրա գեջ
Լուռ մրամբտուքով երբոր կդիտես
Որբերդ քընած հրրեշտակներու պես
Ու կհասուننան վաղվան Գերության,
Ու անվաղորդայն, անիմաստ Մահվան,
Կփրղձրկի ծեր սիրտդ՝ սուգո՛վ լեցուն
Ձեր միակ պաշտպան Բարի Աստուծուն...
Ի՞ր մեռցուցին քու մեջդ անգթորեն...
Մարդերն ինչո՞ւ վատ կենդանիներ են...

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ...

Ահա կուգաս Բեթափելեն մոխիրնե՛րդ դարավոր,
Կուգա՛ս Դուն յոթն անգամ լացված Քույրի մը պես հեռավոր
Սպասելեն ու մեռնելեն մեր հոգիներն են հոգնած,
Եկո՛ւր, եկո՛ւր, Ազատության ո՞վ Քրմուհիդ ջահագնացդ

Ահա կուգա՛ս Գեղնորակ է աչվընեբուդ բոցը վեհ,
Գերեզմանեն ծնած ժժգույն ու շրջմոլիկ հուրին պես
Ու մինչ հրպարտ թայլերուդ տակ երկիրն համակ կկրքի,
Ինչո՞ւ սակայն այտերդ ի վար այս տաք հետքերն արցունքի...

Ա՜խ, կհիշե՞ս արդյոք Դուն ալ, Ազատության՜ Քրմուհի,
Արցունքներով ցողված մերին արշալույսներն ամեհի...
Ու կրակե վերջալույսնե՞ր Դուն կտեսնես սոսկումով...
Ահա կուգաս, ու քու Ճամբադ դեռ կարմի՞ր է մեր տիղմով։

... Ու անո՞նք, որ անշնչացան շղթաներու ժանտ բեռեն.
Ու անո՞նք, որ Մահն ըմպեցին դյուցազնորե՛ն, հեգնորե՛ն.
Ու անո՞նք, որ— ո՛ւ այլ ու կին, ո՛ւ հարս, ո՛ւ որբ, անհամա՞ր—
Եղեռնորեն ու կույտ ի կույտ հոշոտվեցան Քեզ համար...

Անցի՜ր, անցի՜ր, ո՜վ Քրմուհիդ Ազատության, խայտանքո՜վ
Անցիր անոնց ահագնալուս գերեզմանի փոսին քով,
Ու աչքերդ թո՜ղ որ ցողե կրակե արցո՜ւնք մը լույսի...
Տարիներով ցուրտ հողին տակ իրենց հոգին կմըսի...

Անցի՜ր, անցի՜ր արյունակերտ այդ հայարփու հողերեն,
Ու քայլերուդ ազատաթռիչ տրոփին մեջ ուժգնորեն,
Հազա՜ր հազա՜ր զանգակներու մեռելո՜ւրեն տոնական
Զարթնո՜ւմն երգե ոսկորներուն— երգե՜ ու լա՜ց խոլական...

Champéry
22/4 օգոստոս, 1908

ԿԱՐՄԻՐ ԿԱՐՈՏ

Ճամբո՜ւդ, անցա՞ր դուն այն գյուղեն հեռավոր
Որ ժայռերուն սերտիվ կառչած վեսս կուրծքին՝
Իր քարուքանդ պարիսպներուն դարավոր
Կդիտե շո՜ւքը ծովուն մեջ տրտմագին.
Ճամփո՜ւդ, անցա՞ր դուն այն գյուղեն հեռավոր։

Տեսա՞ր սուգի տրնակները հին ու ցած,
Որոնց սեմին առջև ծերեր կ' երևին.
Արյունաներկ մամոռտ պատերն ալ հինցած՝
Ուր մողեղնե՜ր կտաքնան արևին.
Տեսա՞ր սուգոտ տրնակները հին ու ցած։

Անցա՞ր վրտիտ արահետեն բարեկամ
Որ մարգերուն մեջ կսողա գետնին հետ,
Կամուրջներով կ' ընդհատե զայն շատ անգամ
Հետո հեռո՜ւն կ' ըլլա դաշտին մեջ անհետ.
Անցա՞ր վրտիտ արահետեն, բարեկամ։

Ա՜խ, հո՞ն են դեռ այգեստաննե՜ր գյուղին
Ողկույզներու տակ բեռցված քաղցրավե՜տ,
Ու ցորենի անծա՜յր դաշտերը դեղին
Որ ոսկեցո՜ղ կծփային ալեվետ.
Ճամբո՜ւդ, տեսա՞ր այգեստաններ գյուղին։

Ու նայեցա՞ր ապառաժին բարձունքեն,
Գիշեր ատեն երբ սյուքը մեղմ կփչե
Ու ծովափին վրա ալյակնե՛րը կ՝ երգեն,
Երբ ավերակ գյուղն իր մա՛հը կննչե...
Նայեցա՞ր դուն ապառաժին բարձունքեն։

Լուսնակ լույսով գերեզմաններուն ալ տեսա՞.
Որ ժայռերուն հանդարտ կողքին կփարի.
Բլրակներու ներքև գետնին հավասար՝
Կննչեն մեր նահատակնե՛րը բարի...
Լուսնակ լույսով գերեզմաններուն ալ տեսա՞ր։

Տարիներո՞վ կարոտն ունիմ սիրագին
Այդ հողերուն, աղբյուրներուն մեղմ հոսան
Այգիներուն, գերեզմանին, լուսնակին,
Ու ժայռերուն, որ իմ ծընիլքս տեսան...
Անոնց կարմի՞ր կարոտն ունիմ ախտագին։

Համբո՞ւրդ, անցա՞ր դուն այն գյուղեն հեռավոր...

1908, հոստոս 10

ԶԱՆԳԱԿՆԵ՞Ր, ԶԱՆԳԱԿՆԵ՞Ր...

Զանգակնե՞ր, բարի՞, բարի՞ զանգակներ,
Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն.
Խոսք ելլել կ՝ ուզե արյունը վազուն...
Կլռե՞ր, բարի՞, բարի՞ զանգակներ։

Արդյո՞ք ձեր միսթիք հագագն արույրե,
Ուր կեղե՞ կապեց աղոթքի փոշին
Եվ ուր կ՝ երազե՞ր խունկի գոլորշին,
Հեղակարծ ցավեն՝ անզո՞ր կլռե։

Ո՞չ։ Ձեր դարավոր հոգին պղնձի
— Որ շա՞տ, շա՞տ հաճախ տեսեր է Բարին
Հաղթված Զարեն— այժմ իր բարբառին
Ու իր Աստուծույն վրա կկասկածի...

Ախ, որովհետև տեսա՞ք ձեր բարձրեն,
Հավատավորներ հաղարով, բյուրով,
Ինկա՞ծ հեթանոս տապարով, բիրով,
Ձեր ոտքերուն տակ, երկյուղածորեն...

Ու ձեր գմբեթեն դիտեցիք անձա՞յն,
Թե ինչպե՞ս խնկոտ տաճարներու մեջ,
Ո՞րբ, կի՞ն, ծերունի՛, բոցերով անշեջ,
Իրենց Աստուծույն գահին զոհվեցան։

Բա՞յց... Դիտեք նաև թե մեր դարավոր
Դիակներու բուրգն ամպերեն անցա՞վ.
Ու մեր արյունին ժահրեն նեխեցավ
Սրբությունների ծո՞ւյլ գունդն երկնավոր...

Արդ, ո՞ւր եք չքնաղ խոստումներ խաչին.
Եղբայրության զո՞ւր բարբառներ, ո՞ւր եք։
Կրակ կփսխե հողն ամենուրեք...
Վետերն արյունո՞վ, դիակո՞վ կ' ուռչին...

Ու կ' իյնա այն որ կծնկե վախով,
Չի թուրն ավելի արդար է խաչեն,
Չի կյանքն անո՞նց է միայն որ քա՞ջ են,
Անո՞նց որ կ' ապրին ուրիշի մահով...

Որովհետև դեռ հեռո՞ւ է օրն այն
Երբ գայլ ու գառնուկ սիրո՞վ կ' արածին...
Թե ապրիլ կ' ուզե գառնը նորածին՝
Պետք է իր ակռան սրե լռելյայն...

Լո՞ւռ եք, զանգակներ. Աստվա՞ծն է մեռեր։
Գո՞ւյժ տվեք Վաղվան. իր հա՞սկը մեռավ։
Գո՞ւյժ տվեք Հայուն, զի ա՞զգը մեռավ։
Զանգակներ, ծերո՞ւկ, բա՞րի զանգակներ...

Ինչպե՞ս կ' ուզեի ձերին պարանին
Կախվիլ ու ցնցել երկա՞թ բազուկով.

Անո՜նք որ ինկան բյուրո՜վ, քովն քով,
Ձեր զոզանչին հետ՝ լալու պետք ունին...

Հոգիիս հազա՜ր խուլ զանգակներով,
Գոռացեք, զանգե՜ր ու կատաղո՜ւն
Գահավիժեցեք ձեր երկաթ թառեն,
Ուրկե միա՛յն լա՛լ գիտցաք դարերով...

Օ՜, զոզանչեցե՜ք. Աստվա՜ծն է մեռեր...

Լոզան, 2 Հունիս, 1902

ՎԵՐՋԻՆ ՀԱՅԵՐԸ

Ե. սրբ. Դաւրյան բանաստեղծին

«Յարիճա՜ն, հա՜յ, հո՜յ, հա՜յ, Աստված չիկա.
Յարիճա՜ն, հա՜յ, հե՜յ, Հայութիւն չիկա.
Հեռվի յարերուն սրտիկը խոսի...»
— Երջանակ կաղմած բոլորն ուս ուսի՜,
Հա՜յ, հե՜յ, սիրտ սրտի կպարե՜ն, կ' երգե՜ն,
Մերունի՜, տղա՜, հա՜յ, հե՜յ, իրենք են,
Պանդո՜ւխտ Հայերը...

Ո՜չ մարդ, ո՜չ բանվոր, հասարակ գրա՜ստ,
Կճոճեն մարմինն, ու մուճակնին հաստ
Կծեծեն օտար երկրին հողը տար։
«Ափ մը հայրենի հող ո՜վ պիտի տար,
Հա՜յ, հո՜յ, Հայաստա՜ն, քու հողդ է հալա՜լ...»
Կ' երգեն պարելով, բայց կ' ուզեին լա՜լ
Թշվա՜ռ Հայերը...

Հարս ունինք, մեղի հարսնեոր չիկա...
Սուգ ունինք, մեղի սգավոր չիկա...
Ո՞ր մեղքին համար, ո՞վ է անիծեր
Հինգ հազար տարման այս խե՜ղճ ազգը ծեր...
Չո՜ւս միլիոնին մե՛կ ապաստան չիկա,
Յարիճան, հա՜յ կա, Հայութիւն չիկա...
Կ' երգեն Հայերը...

Թագն առին, դագաղ մը տվին հայուն.
Մեր փառքն անցավոր, մեր Մա՜հն է կայուն...
— Արշա՜կ Մեծ, որու բանակն ահագին
Տեգով կծածկեր փառքըն արեգին՝
Ոտնակոխ կորած գերեզմանեդ դուն
Գլո՜ւխդ վերցնեիր, տեսնեի՜ր անտուն,
— Անտե՜ր հայերը...

Հայրենի՜ք, ո՞ւր են աղգիդ ախոյան...
Անմահ Պապիլոն լռեց հավիտյա՜ն.
Աթենքեն՝ ավե՜ր, Մեմփիսեն՝ ավա՜զ,
Հռովմեն՝ ափ մ' աճյո՜ւն մնաց հազիվ հազ...
«Մահերու վրա Դուն դեռ կ' իշխես, աղե՜,
Բայց քու հոգեարքդ որքա՜ն դանդաղ է...
— Կուլան Հայերը...

Յարիճա՜ն, հա՜յ, հո՜յ, կ' երգեն միաշո՜ւնչ.
— Պարագլուխն է ծե՜ր պանդուխտ մ' անշշունչ...
Քանինե՜ր այսպես պարել է տվեր,
Քանի՜ տարի է, քանինե՜ր մեռեր...
Հոգնե՜ր է ալ, վա՜ղն իր կարգն է գուցե...
Մեր կինը հոն չէ, որ աչքը գոցե...
Ա՜խ, խեղճ Հայերը...

Պանդուխտի նկուղ-սրճարան մ' է ցա՜ծ.
Կաղանդ գիշերով Հայերն են լեցա՜ծ.
Փայտի այդ երկար տախտերուն վրա ծե՜ր
Իրենցմե քանի՜ն ծներ է, մեծցե՜ր...
Ու հիմա հա՜յ, հո՜յ, կպարեն, կ' երգեն...
Օտարն արցունքով կնայի փեղկեն,
Կ' ըսե «Հայե՜ր...»

Օտա՜ր, տեսա՜ր դուն գաղտնիքով լեցո՜ւն
Ու տարաշխարհի բույրերով օծո՜ւն
Նավե՜ր հսկա, սև՜ նավերը մեծ,
Որ հազա՜ր, հազա՜ր, հազա՜ր դառնահնչ
Հոգվով ծանրածանր, կկտրեին ծո՜վ,
Թափելու ափե՜ ափ, լո՜ւռ թախիծով
Փախչող Հայերը...

Տեսա՞ր դուն մեռած գյուղերն անխոով,
Հյուղերը փլած՝ կարմի՞ր պատերով,
Հողմաղացքներ լո՞ւ թևերով կոտրած,
Մերուկ դիակներ սարին վրա կորա՞ծ,
Մատուռներին ավե՞ր՝ զրկված խունկե...
Ա՜խ, հո՞ն է, հո՞ն, մեր հայրենիքն, հոնկե՞
Կուգան Հայերը...

Օտա՞ր, տեսա՞ր դուն աղբյուրները զո՞վ,
Գեղջուկ այգիները գա՞զ ողկույզով...
Դեռ կրմխա՞ ցած տանիքն հայրենի.
Դեռ կծաղկի՞ հոն թուփը վարդենի.
Դեռ կ՚երգե՞ այդ հի՞ն պլպուլը ցայգին...
Հո՞ն, հո՞ն կ՚երագեն, կուլան տխրագին
Աքսո՞ր Հայերը...

Ա՜խ, ո՞ւր է հովվին Սրինգը բարի,
Ո՞ւր են մաերիմ եղները արի.
Ո՞ւր են տուն-տանի՞ք, օճա՞խ, խանդակաթ...
Հո՞ս ամեն ինչ քա՞ր է, ածո՞ւխ, երկա՞թ...
Ըսե՞ք մեր երկրի տանուտեր Հայուն
Որ ծո՞ւխ կշնչեն, կթրնեն արյո՞ւն,
Պանդուխտ Հայերը...

Այս ղրահապատ երկրին մեջ օտար
Խեղճ հայ ջահիլին ո՞վ, ո՞վ պիտի տար
Ամոսն հայկական, սյուքը Մասիսի,
Դարապատում մո՞ւթ բարբառն Արաքսի,
Ու թուփերու մեջ իրիկվան պահուն
Նաղելի համբույրն երկչոտ հայուհո՞ւն...
— Ա՜խ, խեղճ Հայերը.

Անոնց կարավա՞ն է երկրի դոտին՝
Արարատեն մինչ Այրեցյալ— Գոտին...
Նեղոսեն Հաննոս, Գանգեսեն Վոսփոր
Կազմեր են սուգի մը հսկա թափոր...
Ուրալեն մինչ Ալբ, ու մինչ Ափրիկե,
Իրե՞նք, իրե՞նք են... Թող Աստվա՞ծ փրկե
Անտե՞ր Հայերը...

Մի՛ դպիր անոնց հոգվույն փլուցո՛ւն.
Անոնք կ՚անցնին լո՛ւռ գաղտնիքով լեցո՛ւն.
Անոնք գիտեն բյո՛ւր պատմություններ մութ
Անո՛նց որ կորան արյան մեջ տգմո՛ւտ,
Կախաղաններու քաջե՛ր համբոնն...
— Հաղա՛ր մահով ծանր՝ Կենդանի— Մա՛ն են
Ապրող Հայերը...

Յարիճա՛ն, հա՛յ, հո՛յ... Սակա՛յն ծերունի
Պանդուխտն հոգներ է. վա՛ղը պիտ՚ մեռնի...
Որդին երկիր է դրկեր կռվելու.
Վաղն ա՛ն ալ պիտի խոցխոցվի հլո՛ւ...
— Ու, վա՛խ, մի՛ առ մի այսպե՛ս պիտ՚ կորչին
Դյուցազուններու ցեղի մը վերջի՛ն,
Վերջի՛ն Հայերը...

Ո՛չ, ո՛չ։ Արշալույսն իրենց պիտի գա...
Ու եթե՛ չի գա ավուտն ապագա՝
Պիտ՚ կռվին։ Մինչ ե՞րբ... Մինչև հավիտյա՛ն։
Ու երբ դեռ երկրի վրա Ազատության
Համար մեռնին ա՛փ մը մարդեր շնչի՛ն,
Անոնք պիտ՚ ըլլան Մարդկության վերջի՛ն,
Վերջին Հայերը...

Ո՞Վ ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔՍ...

Կիլիկիո արյունի՛ն

Ցայգն ի՛նչ անույշ է, ցայգը ի՛նչ գինով։
Ցավերես տարված կքալեմ երկա՛ր
Լեմանի ափին՝ խոր տրտմությունով։
Ի՛նչ խաղաղություն, ի՛նչ անճառ նրկար,
Ու ցայգն ի՛նչ անույշ, ցայգը ի՛նչ գինով։

Հեռուն թեռակի շառաչներ դողդոջ
Երգը կ՚օրորեն սիրող զույգերու.
Ջուրին մեջ աստղեր ինկեր են բողբոջ.
Ու տարփոտ մութին մեջ հեռուն հեռու՝
Թեռակներու թա՛ց համբույրն է դողդոջ։

Լուսնակն ալ ահա՛ շքեղ կծաթի
Առասպելներու լույս— դշխոյին պես՝
Ալպյաններու ձյո՛ւն-հրաշքեն արծաթի։
Նոր հովվերգությանց հի՛ն հանդիսատես՝
Տժգույն տարփավորն ահա կծաթի։

Ի՜նչ անհունություն, ի՜նչ երազ, ի՜նչ շունչ...
Լռին լեռներու կողեն սատափի
Մինչև՛ սխրացած անտառն անշշունչ,
Ու մինչ դաշտերն ուր Ռոն կթափի,
Ի՜նչ անհունություն, ի՜նչ երազ, ի՜նչ շունչ...

* * *

Ու դո՜ւն, ո՜վ դժբաղդ երկիր հայրենի,
Որ արյունի տա՜ք շամանդաղի մեջ,
Զոհ՝ գազաններու խաղին վայրենի,
Ու համայնասպա՜ռ բոցերու անշեջ,
Կմխա՜ս, դժբա՜ղդ երկիր հայրենի...

Ո՜վ իմ հայրենի՛ քրս... Ու դո՜ւք, հեռավո՜ր,
Եփրատ ու Արաքս ու Վանա ծովակ,
Ո՞ւր են կարապնե՛րը սիրախտավոր
Որ իրենց երա՜զ թևերով ճերմակ
Ճեղքեին կարմիր ձեր կո՜ւրծն ախտավոր։

Հովվերգություններդ ո՞ւր են սխրալի
Ո՜վ Արարատյան ձյունափա՜ռ հսկան։
Ու դո՜ւն, միամիտ Դրախտն առասպելի,
Ինչո՞ւ այսքան մո՜ւթ է քու լուսնկան,
Հովվերգություններդ ո՞ւր են սխրալի։

Լեռանույշ կուսա՜նքդ Հայաստանի,
Ո՞ւր են ձեր սիրո երգերն անհամար
Որ հովը դեմի բլուրը տանի,
Ուր սրինգ մը խեղճ կուլա ձեզ համար...
Ո՜վ հավերժահաս կույսք Հայաստանի։

• • •

Բարե՜, վայո՜ւններ են որ կլսեմ,
Հերքերնին ցրված, փախչող խելահեղ,
Ընդդիմադրումի մը պահուն վսեմ,
Պիղծ յաթաղանով ընդկիսված ահեղ՝
Կույսերու վայո՜ւն է որ կլսեմ...

«Հո՜ւ, մենք ենք, մեղք ենք, եղբայրնե՜ր, քույրե՜ր...
Մե՜նք ենք, լափլիզված բոցերե անշեջ...
Մերկ սուսերներով հալածված կույրեր...
Մե՜նք ենք, կվազենք Մութի՜ն, Մահվան մեջ.
Հո՜ւ, մե՜նք ենք, մե՜րկ ենք, եղբայրնե՜ր, քույրե՜ր...

Մե՜նք ենք, դիվահար ծնո՜ւնդ արյունի,
Հի՜ն, շքե՜ղ ցեղի զավակներ հետին.
Բոպիկ երեխա՜, դողդոջ ծերունի՜,
Մե՜նք ենք ո՜ղջ գանկերն, որ կ՚իյնան գետին...
Մե՜նք ենք, դիվահար ծնո՜ւնդ արյունի...

Հո՜ւ, Նզո՜վք, Նզո՜վք։ Մեր վերքի փրփրուն
Շոգին խավարե՜ր ձեր աչքերը, ա՜հ.
Մեր արյունը ձեր զավակա՜ց գլխուն.
Թո՜ւյն շնչեիք դուք, ու ըմպեիք Մա՜հ...
Հո՜ւ, Նզո՜վք, Նզո՜վք ձեր սերունդներուն...»

• • •

Ցայգն ի՜նչ անույշ է, ցայգը ի՜նչ գինով։
Երգեցեք սիրո համբույրներ զվարթ,
Ու դո՜ւք երգեցեք երանությունով,
Դո՜ւք երազ ափեր, ալյակներ լազվարթ,
Ձեր ցայգն ի՜նչ անույշ, ցայգը ի՜նչ գինով...

Կքալե՜մ։ Քալե՜, հիմա՜ր տարագիր.
Ժպիտ մը շուրթիդ՝ կարապի՜ն համար,
Նե՜ր քնապես լալով՝ միտքդ դե՜պ երկիր,
Շեղչված մահերու վրայեն անհամար,
Քալե՜, դուն քալե՜, հիմա՜ր տարագիր։

Քնարի զառամա՜ծ թելի մը փարած,
Թալա՜նն, բո՜ցն հեռո՜ւ, ա՜հ, հեռո՜ւ
Քալե դուն, բերթո՜ղ հայրենահալած.
Հո՜ւր, արյո՜ւն երգն ազատ լեռներու,
Քնարի զառամա՜ծ թելի մը փարած...

Քալե՜։ Մինչև ե՞րբ... Քա՜լե կուրորեն,
Քալե՛ մինչև որ Արևն հրակեզ
Իր մարը մտնե նորեն ու նորեն՝
Ու օ՜ր մը այլևո՜ւ չի ծագի քեզ...
Բա՜րե... Կյա՜նք է այս... Քա՜լե կուրորեն։

Լոզան, 4 մայիս (1909)

ԹՐՈՒՊԱՏՈՒՐՆԵՐԸ

Բանաստեղծ ընկերներու։

Թրուպատուրնե՜ր են. տեսե՛ք, իրե՜նք են.
Եռանդո՜ւն, անփո՜ւյթ, զո՜հ կնվագեն
Հրակեզ արևուն տակ հրապարակին։
Կիսխուփ փեղկերե տարեց, տղա, կին
Կ՝ երևան քիչ քիչ։ Կեսօրի տապեն
Շա՜տ քիչերն են, որ տեսնել կ՝ շտապեն
Թրուպատուրները։

Տարորե՜ն դեմքեր։ Ամե՜նքն, է՛զ, արո՜ւ,
Բախտեն կատաղի հալածվողներու
Անտուն ընտանիք մը քայլամոլոր։
Փողոցի ատո՜ւյգ հանճարներ բոլոր,
Նվագելու համար պետք չունին նոթի,
Կ՝ ապրին երգելով, կմեռնին նոթի
Թրուպատուրները։

Բախտը, տառապանքն, հարափո՜խ հովեր
Իրենց դեմքին մո՜ւթ ժպիտ մ՝ են տվեր,
Կյանքը ճանչցողի ալեկո՜ծ ժրպիտ։
Ու իրենց բռնի՛ ձեին մեջ հտպիտ,

Խոսվ մաղերնուն ներքև ալեոր,
Աշխարհքն հեգնելու հո՞վ մ՝ ունին աղվոր,
Թրուպատուրները։

Անոնք երգելո՞վ անցան համոբեն
Բոյի գինեզվարճ այգեստաններեն
Մինչև Նեղոսի ավազուտը շեկ,
Մինչև Ուրալներն, մինչև հրբաշեկ
Ափերը դեբրուկ Հրո-Երկիրին։
Քանի՞ ընկերներ ճամբան հող դրին
Թրուպատուրները։

Մեքենայության այս դարը երկա՛թ
Ջընկճե՛ց դեռ իրենց հոգին խանդակաթ.
Ու ոստաններու միջև դրամապաշտ՝
Թշվառության հետ գլո՛ւխ գլխի հաշտ
Կ՝ ապրին նախնական կենցաղով ազատ,
Ազա՛տ Բնության որբե՛րն հարազատ,
Թրուպատուրները։

— Առե՛ք ինձ ձե՛զ հետ, երկիրն երկիր
Տարեք այս թշվա՛ռ սիրտս սրգակիր,
Ապրի՛նք հեգնելով, ողբանք երգելով,
Ու երկրագունդին հետ մշտահոլով
Մեր մորթն անօգուտ քշե՛նք մշտերեր.
Մշտնջենական մո՛ւթ ուխտավորներ,
Թրուպատուրները։

Չի մե՛նք ենք, մե՛նք ենք, բանաստե՛ղծ, պովետ,
Մե՛նք, պատառատուն բեհեղով վե՛տ վե՛տ
Երգի իշխանե՛ր՝ խսպա՛ռ հալածված.
Մե՛նք, նոթի՛, հպա՛րտ, երբեմն Աստվա՛ծ.
Մե՛նք, չըհասկցվա՛ծ, մե՛նք, հզերակա՛ն,
Մե՛նք, Բանաստեղծնե՛ր, մե՛նք ենք իրական
Թրուպատուրները։

Մե՛նք՝ որ մեր վերքեն երգե՛ր կշինենք.
Մե՛նք, զրկվածնե՛ր ճակատագրեն նենգ։

Ու մինչ ուրիշներ առատ կշամբեն
Խինդի՛ սեղանեն, մուսային ճամբե՛ն
Մենք կ՚երթանք ստո՛ւյգ Մահվան անսվա՛ղ.
Մե՛նք, հի՛ն Մարդկության ո՛ւշ ծընած— ավա՛ղ.
Թրուպատուրները։

Բայց ի՛նչ փույթ։ Մե՛նք ենք հոգիով հարուստ.
Մե՛րն է ներշչումն, որ կուգա վերուստ.
Մե՛րն է մարգը թա՛ց, վերջալույսն անխո՛ս,
Փթիթը վարդի՛ն, առուն մշտահո՛ս.
Մե՛րն է մթին սյո՛ւրը գերեզմանին.
Հի՛ն աստվածներու ցեղին կնմանին
Թրուպատուրները։

Մե՛նք ենք, որ անփո՛ւյթ գրչով կհեգնենք
Այս նենգ աշխարհին սյսակները նենգ։
Քնար մը ձեռքերնիս, անտո՛ւն, մահագի՛ն,
Ձե՛նք ցանկար ստրո՛ւկ— պետի դղյակին։
Ազատ բարբառի ասպետներ անա՛հ,
Կ՚ապրին մեռնելո՛վ, կմեռնին անմա՛հ
Թրուպատուրները։

Մարդկության հտպի՛տ պետք է անպատճառ։
Մեր սրտե՛րը մենք հաներ ենք վաճառ.
Մեր վիշտեն, սուգեն, խարված սերեն նենգ՝
Ռամիկին համար երգե՛ր կշինենք։
Ո՞վ ըսավ «Մահը մի է». ամե՛ն օր
Կմեռնինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր
Թրուպատուրները։

Սակայն մեզ ի՛նչ փույթ ծիծաղն ամենուն,
Լքումը ստո՛ր, քաղցը անանո՛ւն
Մենք՝ գառանց Հովվին պես սիրագորով՝
Հավատքն ունինք մեր սրինգին ծայրով
Առաջնորդելու Մարդկությունն ամբո՛ղջ.
Մեռա՛ծ Արվեստին մե՛նք տակավին ո՛ղջ
Թրուպատուրները։

Այս ի՜նչ դարերու հասեր ենք, Աստվա՜ծ.
Փշրեցի՜ն ի՜նչ որ կար վսեմ կերտված.
Թե դեռ սի՜բտ ունիք՝ թաղելո՜ւ տարեք.
Ոսկիին նենգ ձայնն է ամենուրեք։
Մի՛միայն մենք ենք, որ դեռ անարգել
Սիրե՜լ կ՚երազենք. ո՜վ կ՚ուզե սիրե՜լ
Թրուպատուրները։

Մեռա՜ր, հնավանդ Արվեստ սրբանվեր,
Երբ դեռ կյանքն երգո՜վ կ՚ապրեր, կ՚օրորվե՜ր,
Ու երբ երջանի՜կ, թափառի՜կ, գինո՜վ,
Իրենց ծիրանի լա՜յն կրկնոցներով
Դղյակե դղյա՜կ, փայտի երկնային
Տավիղին թրթռո՜ւմը կտանեին
Թրուպատուրները։

Ես կ՚երազեմ հայր Թրուպատուրն Հոմեր,
Որ աստվածներու ակեն կխմեր,
Ու իր հսկաները բարձրաղաղա՜կ
Կ՚երգեր տավղին վրա, քաղաքե քաղաք։
Ու Թրուպատուրնե՜ր բյուր՝ որ կ՚երթա՜ն
Դարերու մեջեն. կ՚երազեմ Գողթան
Թրուպատուրները։

Կ՚երազե՜մ զիրենք. ու լո՜ւռ, շվարո՜ն
Կնայիմ փեղկես ա՜յս թշվառներուն
Որ բոնի կերպով կ՚երգեն, կխաղան։
— Վա՜խ, արծաթն Արվեստն հանեց կախաղան,
Հի՜ն, աստվածարբնա՜կ դարերը մեռան.
Ու հիմա պետք է խնդացնե՜ն, մուրա՜ն
Թրուպատուրները։

Հրատապ արևուն տակ հրապարակին,
Ահա՜ կ՚երգեն դեռ. ու մինչ տղա՜, կի՜ն,
Կհասնին քիչ քիչ նեղ ճամբաներեն.
Գլխարկն անցորդին լո՜ւռ կրկարկառե
Իրենց նահապետ երգիչն ալևոր։
— Տվե՜ք, իրե՜նք են, Նոր Մարդկության նո՜ր
Թրուպատուրները։

Լոզան, 18 օգոստ. 1910

ՄԱՀԱԶԳԱՑՈՒՄ

Այսպե՞ս, այսպե՞ս... Անո՞ւշ, անո՞ւշ սիրական,
Մոտեցուր մա՞նը մատներդ մանկական,
Տաք կոպերո՞ւս, տաք կոպերո՞ւս դժոխքին,
Զգո՞ւշ, զգո՞ւշ, ա՞խ, չըլլա որ բորբոքին։

Կուրծքի՛ս հակե փոքրիկ գլուխդ հաղթական,
Լսե՛, դեռ հոն հոնդյուններ, ողբեր կա՞ն,
Լսե՞, անուշդ իմ սիրական։ Օ՜հ, անգին
Արբանք մ' է այս, որ կխնկե իմ հոգին։

Մեռնի՞լ, մեռնի՞լ... Անմահանալ մահվան մեջ.
Մեռնի՞լ... Գրկիդ գոգն, ա՞յսպես, մեր սերն անշեջ,
Անհունին մեջ ծառացընել տիրական...

Մեռնի՞լ... Կուլա՞ս... Կխորհնի, սիրակա՞ն,
Թևերուդ մեջ քարանալու հաճույքին.
Քո՞ւյր, մահանո՞ւշ քույր, մահազոր, մահագին...

Լոզան, դեկ. 14, 1908

ԿԻԼԻԿԻՑԱՆ ԵՐԳԵՐ

1

ՎՐՆԺԻՆ ՍԵՐՄՆԱՑԱՆԸ

Քե՛զ, ցասումի՛ վայրագ հեղեղ գահավեժ,
Արդարության փայփայելի մո՛ւթ հընչշ,
Խավարներու ահե՛ղ ծընունդրդ, Վրեժ,
Ողջո՛ւյն. տաղե՛ըս քեզի...

Մոխրի՛ն կուտամ սրտիս վերքերն ախտագին...
Ամենո՛ւն վերքն, անսահմա՛ն վերքը ազգին,
Արդարության ծարա՛վը, մահն հավատքին,
Երգեն տաղե՛ըս քեզի...

Սանձերնին լա՛յն երիվարներ ասպազեն,
Ալիք ալիք թոթվելով սեգ բաշն ուսեն,
Թող հայրենի աշխարհիս կուրծքն ակոսե՛ն,
Սուրա՛ն տաղերըս քեզի...

Ու ես կուգա՛մ,— մո՛ւթ շանթերու սերմնացան—
Այդ ակոսեն, ուր արյուններ լճացա՛ն,
Գիշերներով, չար հովերով, ցիրուցա՛ն,
Ցանել տաղերըս քեզի...

Բա՛ռ. եթե այս իմ բազուկս կարևե՛ր
Զըսորվեցավ զարնել... Գոնե անվեհե՛ր
Ցանքես, Մահու առաքյալնե՛ր, հսկանե՛ր
Կծնին տաղերը՛ս քեզի...

2

ՀԱՅՈՒ ՈՐԲԻԿ

Ա՜յ հայու որբիկ, ա՜յ անտեր որբիկ,
Մանրի՜կ, արյունո՜տ ոտքերդ բոպիկ,
Ո՞ւր կքաշկոտես այսպես մոլորուն...
— Չար քամիներուն...

Ա՜յ որբիկ, բոցեր գյուղերը հասան,
Անտառներու մեջ մայրերնիդ կ՝ որսան։
Անպաշտպա՜ն, մե՜րկ, ո՞ւր այսպես, որբիկ ճան...
— Մո՜ւթն ինձ պատմուճան...

Քեզ համար մարդերը գո՜ւթ, հա՜ց չունին,
Ա՜յ որբիկ, շյո՜ւղ իսկ չիկա թռչունին.
Մերեր սովահար կ՝ իյնան ժամն ժամ...
— Արյուն կ՝ որոճամ...

Հայրդդ պատուավա՜ծ նետեր են սարին.
Եղնիկներու պես քույրերդդ տարին.
Աստվա՜ծդ իսկ մատրան մե՜ջն է խողխողված...
— Վրե՜ժն ինձ Աստված...

Դե՜հ, գընա՛, մեծցիր ահեղ, որբն հայուն.
Սնի՛ր արյունով ու փսխե արյուն
Մարդկության ճակտին ու սարսափ ու հուր...
— Այդ՝ պարտքս է տրխուր...

3

ՎԵՐՋԻՆ ՕՐՈՐ

Օրո՜ր, օրո՜ր... Օրո՜ր ըսեմ քնանաս,
Վիրավոր հո՛ղդ ճիշերն ա՛լ չ՝ իմանաս։
Ծիծեռ ծըծա՜ծդդ թույն է, կաթ չի գիտնաս...
Օրո՜ր ըսեմ քնանաս։

Արյո՜ւն-հեղեղ հորդեց այս սուրբ ծորերե,
Բայց չի փախի՛ս, փարե՛ երկրիդ, զայն սիրե,
Հողիդ վրա գերի մ՚ ըլլար, այլ տիրե...
Օրո՜ր ըսեմ քնանաս։

Հորդ վրա նիթ անշո՜ւնչ չինկա ես,
Չի ուխտեցի Հռովմի է՚գ գայլին պես,
Նո՜ր Ռոմուլոս մը դիեցնել ստինքես...
Օրո՜ր ըսեմ քնանաս։

Բազուկներուս պարա՜ն, ոտքիս ալ կացի՜ն,
Ստինքիս զո՜ւյգ պտուկներն, ա՜հ, կտրեցին։
Վերքես արյունս ծծե, որդյա՜կ միածին...
Օրո՜ր ըսեմ քնանաս։

Ահա կ՚իյնամ... Հայաստանը մա՜յր քեզի։
Կտակ կուտամ այս կոտրած սուրն երկասյրի՝
Ուր հայրիկիդ դեռ տաք արյունը կ՚այրի...
Օրո՜ր ըսեմ քնանաս։

Լոզան, 6 հուլիս 1909

ԵՐՆԵ՜Կ, ՁՈ՜ՒՐ.

Ո՜վ պիտի երգե քու անփառունակ
Կյանքիդ միամիտ տաղը, մատա՜ղ ջուր,
Որ լո՜ւյծ դայլայլի մը պես շարունակ
Կվրփրիս, կ՚երթաս դաշտերուն մեջ ուր
Դարե՜ր դարերով ե՛րգդ է գոհունակ։

Ո՜վ պիտի պատմե վաղքերդ մշտոլոր
Վայրի վարդերու երազանքն ի վար.
Ո՜վ պիտի ցույց տա փրփուրներուդ խոլ
Հևիհև կյանքիդ սերերն հոգեվար,
Տարփոտ սեզերու շոյանքն ալ բոլոր։

Լուռ անբջանքի պահուն ցայգային,
Ո՞վ պիտի պատմե խիճերուդ լեզուն,
Ու հեքիաթունակ սերն ուռենիին
Երբ մութ գիշերով իրեն ազաղուն
Ոստերը փախչող հոգվույդ կհայի՞ն։

Միամի՞տ վրտակ, դարերն ի դար
Դուն մամռոտ ճամբեդ կ՚երթաս անմոլոր,
Ու երբ կմեռնին շուրջդ անմխիթար՝
Գարնանի գույն-գույն ծաղիկներդ բոլոր,
Երկու բարի մեջ կ՚երգե՞ս անդադար։

Երնե՞կ բեզ, վտա՞կ, մեռնիլ չունիս դուն.
Աբցունքն մարմինդ կվարես անվերջ,
Գիշերներու մեջ միայնա՞կ արթուն,
Անսկի՞զբն, անվե՞րջ վտիտ փոսիդ մեջ։
Կ՚երգես. երնե՞կ, ջո՞ւր, վախճան չունիս դուն...

Ու երբ այս տողերն մրոտող նիհար
Զեռքեն օր մը լո՞կ պուտ մը հող ապրի,
Ուրիշ քերթող մ՚ալ՝ ինծի չափ հիմար՝
Պիտի դա հարկավ երգերդ վայրի,
Հանդի, չափի տակ առնելու համար։

Մինչ հավերժորեն կյանքո՛ւ, զվարթո՛ւն,
Պիտի կարկաչե քու ջուրդ մշտաշարժ՝
Հեգնելով արվեստն ու կյանքը մարդուն...
Ո՞վ անմահության սավե՞ր գետնաքարշ.
Վտա՞կ, երնե՞կ քեզ, մեռնիլ չունիս դուն։

ՅԱՎՈ

— «Ակոթե, Յավո՛, ադոթքդ վերջին,
Զղջումի բառեր շրթներեդ թռչին,
Հայր մեր մը, տղա՛ս, մեղա մը ըսե,
Վերն Աստված մը կա, ան քեզ կլսե,

Տո՛ւր հիվանդ հոգիդ ձեռքը Արարչին,
Աղոթե՛, տղա՛ս, աղոթք մը վերջինը։—

Բանտի ահավոր խուց մըն էր խավար,
Շղթաներու տակ Ցավը կհևար։
Բարի բահանան, սկիհ մը ձեռքին,
Մո՛ւթ բառեր կ՚ըսեր՝ Հետ-Մահուն, Հոգին,
Եղեմն ու Քնհեն, Աստան սրբավար...
Բանտի ահավոր խուց մըն էր խավար։

Երբ խաչը դպավ իր կոշտ շրթներուն,
Ցավը ծեր գլուխն ետ քաշեց սարսռուն,
Մարմինը դողաց շղթաներուն տակ,
Պիտի ուզեր լա՛լ՝ քրքիջ մ՚ այլանդակ,
Թոքերուն խորքեն պոռթկաց շվարուն՝
Երբ խաչը դպավ իր կոշտ շրթներուն։

— «Կհեգնե՞ս Տեր հա՛յր, քու խաչդ անօգուտ.
Ու Հաղորդութիւնդ կատակ մ՚ է անգութ,
Մի՛ խոսիր ինծի Աստուծույդ վրրա
Որ դա՞ր դարերով անտարբե՞ր վրկա՝
Երկնի կապույտեն կժպտի անգութ...
Քու Տերդ եթերին զա՛րդն է անօգուտ։

Քանինե՞ր մեռան Սուրբ-Գործին համար։
Ինչո՞ւ արծաթի այս խաչը հիմար։
Քու Հիսուսդ վե՛րջ ու Հիսուսդ վե՛ր,
Աստվածներու պես, հպա՛ռտ, անվեհե՛ր,
Կախաղաններու վրրա անհամա՛ր
Քանինե՞ր մեռան Սուրբ-Գործին համար։

Նայե՛ աչքերուս ցայգին մեջ, Հայր ճա՛ն.
Զղջման ցոլքը հոն չիկա դավաճան։
Ու թե արցունքներ հոն կրկայլակին,
Չէ՛, ես չե՛մ խորհիր իմ որբ որդյակի՛ն
Որ կ՚երթա խավա՛րն առած պատմուճան...
Նայե՛ աչքերուս վիհին մեջ, Հայր ճա՛ն։

Իմ աչքերուս մեջ կ' երթան, հա՜, կ' երթան,
Չե՞ս տեսներ, հայր ճան, շուքեր անկենդան
Մահվան մեջ կ' երթան. ո՜վ իմ ընկերնե՜ր...
Անոնք աչք չունի՞ն, կ' երթան մշտերե՜ր,
Դղրդացնելով խավարն անկենդան;
Դեպ ո՞ւր, լա՜վ գիտեմ, կ' երթան, հա՜, կ' երթա՜ն...»

— «Յա՜վո...» ծեր Տեր հայրն ինկավ թաց աչոք
Ներ բանտարկյալին առջև ծնկաչոք...
«Յավո՜, Յավո, այդ մահվան բարձունքեդ՝
Վատիս, որ կ'ապրի՜մ դեռ՝ ներեցիր դեթ...
Անոնք, որ գացին՝ դեռ կ'երթա՞ն արդյոք,
Յավո՜...» ծերունին ինկավ ծնկաչոք։

«Սարսափի անցյալ արյունոտ տարին
Լույսերո՜ւ պես լո՜ւյս աղջիկս տարին...
Համբո՜ւյր մը դնեմ շրթներուդ կատար,
Աղջկանս տա՜ր, աղջկանս տար...
Ըսե՛, թե իր ծեր հայրն՝ ամբողջ տարին,
Ս'աղոթե իրեն համար, որ տարին...»

Մյուս առտու երբ ծե՛ր կմրթմրթար
Սաղմոսեն հատված մ'աղջկան համար,
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ կդոհվեր անվախ
Ու Յավի Քուրմի մը պես կխնթար...
Քահանան լալով սաղմոս կրկարդար...

Ա.. ԵԿԻ՜ԻՐ

Եկո՜ւր, եկո՜ւր ճամբաներեն անուրջիս.
Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդե՜ս.
Վերջի՜ն անցորդ տառապանքի կամուրջիս,
Երգի մը պես, քրոջ մը պես՝ մոր մը պես
Եկո՜ւր, եկո՜ւր, ճամբաներեն անուրջիս...

Եկո՜ւր, ես քո՜ւկդ եմ, քեզ արքա՜ ու գերի՜.
Ե՛ս մեղապարտ անոթը սո՜ւրբ համբույրիդ.

Հեքս աղոթքի՛ պես դեմքիդ շուրջ դեգերի,
Պաշտամունքիդ ես խնկանո՞թ միամիտ.
Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛ ու գերի՛...

Քու տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողդոջ,
Ու դուն մարմի՞նն ես անմարմին երգերուս,
Խենթեցընող հավերժահա՛րսը բողբոջ,
Ցո՞ղ՝ մահացնող սրտի հազա՛ր վերքերուս,
Սուրբ տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողդոջ...

Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս.
Քե՛զ երգելեն արյունեցան, խենթեցան
Յոթը վերքերն իմ բարունակ սրինգիս,
Սրտիդ ճամբուն վրա մերկ ոտներս այրեցան.
Քու անունո՛վդ պատանքեցի ծե՛ր հոգիս...

Բա՛ց ինձ կարմի՛ր շրթներդ, կարմի՛ր վերքի պես.
Բա՛ց ինձ թևերդ, հավերժակա՛ն բանտ անո՛ւշ.
Բա՛ց ինձ հոգվույդ հրաշքներուն մուտքն անտես
Ու տո՛ւր ինձ հոն անէանալ լո՛ւռ, անհո՛ւշ.
Բա՛ց ինձ կարմիր շրթներդդ, լա՛յն վերքի պես...

Ահա՛ թոշնած շուշաններուս քեզ կուգամ.
Ահա՛ ոտքի՛դ տակ փառքիս խե՛ղճ սարդենին.
Ահա՛ սրտիս խոպան դաշտն, ուր մի՛ անգամ
Չրծաղկեցավ սիրո նիհա՛ր վարդենին.
Ահա իմ սև շուշաններուս քեզ կուգամ...

Եկո՛ւր, եկո՛ւր, եկո՛ւր, սիրենք կաթոգին.
Ո՛վ չի սիրեր պիտի մեռնի առհավետ.
Սերը պե՛տքն է, երա՛զն է, կյա՛նքն է կյանքին.
Սերը Մահվան մեջ Անուրջն է արփավետ.
Եկուր, եկուր, եկուր սիրենք կաթոգին։

Բ. ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՔ

Ահավասիկ որ կ'ըղձամ քեզ անդադրո՛ւմ.
Ջա՛ր, վիրավոր, ու անիծվա՛ծ ու տրտո՛ւմ,
Ահավասիկ, որ կսիրե՛մ ես քեզի...

Ո՞վ քու սովերդդ պատցուց իմ հոգվույս
Անարձագանք դամբաններուն մեջ անհո՞ւյս,
Ու երդմնեցուց, որ դեռ սիրեմ ես քեզի...

Թող այս գիշեր հոգիիս մեջ երգ մը լա՛,
Ի՞նչ փույթ թե չար, թող այդ երգը քո՛ւկդ ըլլա,
Որովհետև, բայց կսիրեմ ես քեզի...

Ապրի՞լ, ահեղ ճակատագրին մի՛շտ հլո՛ւ,
Մեռնի՞լ, առանց վայրկյան մը քո՛ւկդ ըլլալու.
Ըսե՛ ինձ քո՛ւյր, ա՛խ կսիրեմ ես քեզի...

Ահա՛ հոգիս շիրիմորեն փա՛կ ու չա՛ր.
Ահա՛ հոգիս, զոր դուն սիրել չըզիջար.
Ահա՛ հոգիս, որ կսիրե դեռ քեզի...

Ոտներուդ տակ կոխոտվելե հետո ա՛լ
Ինչո՞ւ քայլերդդ համբուրե՛լ, գուրգուրա՛լ,
Ինչո՞ւ մահվան սև բաժակեդ սե՛ր մուրա՛լ...

Նե՛ր ինձ, քո՛ւյր, կսիրեմ ես քեզի...

Գ. ՏԾԳՈՒՅՆ ԵՐԳ

Կ'ուզեի լալ ես իմ սիրես,
Հեգնեցիր զիս ու ժպտիրես
Թերթ թերթ հոգիս փետրատեցիր,
Իմ սիրակա՜նքս, ավա՜ղ...

«Երգե՜նք, երգե՜նք, ինձ հծծեցիր,
Երգը սիրույն ջինջ բարձունքն է»։
— Քերթողին երգն իր արցունքն է։
Իմ սիրակա՜նքս, ավա՜ղ...

Դացի՜ր, գընա՛։ Իմ մոլորուն
Ճամբուս վրա քու շրթներուն
Վե՛ս ապառա՛ժը կանգնեցիր,
Իմ սիրակա՜նքս, ավա՜ղ...

Օր մը թերթերդ ցանուցիր
Երբ թարշամին. ու դուն կրքիս
Քեզ համա՛ր ալ կուլա հոգիս,
Իմ սիրականքս, ավաղ...

ԿԱՅՐԻ

Տղա էի։ Սիլեմբրիս ժայռերեն
Մո՛ւթ հրճվանքով օր մը տեսա, թե ի՞նչպես
Մեղմ դիշերով, հանդա՛ստորեն, ծո՛ւլորեն,
Նավ մը հակա կրնար այրիլ շյուղի պես։

Այն ատեն դե՞ռ չէի գիտեր թե ի՞նչպես
Ներքոն մը բո՛ց է տվեր Մեծ-Քաղաքին,
Պատշգամին վրա հուրին ի հանդես՝
Տավղին թրթի՛ռ տալու համար քաղցրագին։

Չէի գիտեր. բայց հոն, բոցեն ապահո՛վ,
Երկա՛ր երկա՛ր կնայեի ժայռն ի վար,
Ու անսահմա՛ն, անա՛մպ ցայգին մեջ անհո՛վ,
Կ'ունկնդրեի ճարճատյուններն հոգեվար։

Բոցն էր հանդա՛ստ, ու հոյակա՛պ, անշտապ։
Ան կլափեր բիչ բիչ, պարան պարանի,
Մե՛ շառագո՛ւյն հրեշի մը պես հրբատաղ
Որ հարվածն իր վերջին տալու վարանի։

Դավադիր ծով մ'էր անալի՛ք, ահավո՛ր։
Արյունի գույն ներկված ջո՛ւրը գինով
Այն իրիկուն չէր շառաչեր մինչև որ
Նոր կայմ մըն ալ չիյնար կարմի՛ր ճոզփյունով։

Երբ ա՛լ հրաշեկ կույտ մը մնաց բոլորեն,
Տեսա թե ի՞նչպես նավավա՛ղը հետին,
Նավակի մը մեջ, հեկայո՛վ, մահորե՛ն,
Կհեռանար վիզը ծռած, աչքն ետին...

Տղա էի։ Բայց դե՞ռ հիմա քանի որ
Արյուն կ'երթա իմ ծեր սրտիս մեջ վայրի,

Ու կպատռեմ աչքերս մո՜ւթն ահավոր
Կտեսնեմ նա՜վը, որ կ՚այրի, որ կ՚այրի...

Ու այս անգամ կհասկնամ քեզ, Կյա՜նք-նավ,
Դուն, որ անձայն աղաղակի պես գուժկան,
Անհուսության անդունդներուն վրա խոնավ,
Լռի՜ն կ՚այրիս, եղեռնակա՜ն, հեգնակա՜ն...

Ու ինձ ա՜յնպես կթվի թե Սե՜րն է այն
Որ կմեկնի նավավարին պես հետին,
— Սե՜ր մը եթե կվարեր ղեկդ լռելյայն—
Ա՜ն ալ կ՚երթա, վիրը ծռած, աչքն ետին...

Ու դուն կ՚այրիս, եղեռնակա՜ն, հեգնական...

1

ՍԵՐՈ՜Վ, ՍԵՐՈ՜Վ...

Սերո՜վ, սերո՜վ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՜վ խոցեցիր.
Սիրտըս ջահիլ, վարդի՜ պես բաց,
Դագաղի՜ պես գոցեցիր...

Դուն քաղցրությամբ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՜վ լափեցիր,
Սիրտըս ջահիլ, վարդի՜ պես բաց,
Մեկ համբույրով խաբեցիր...

Երգո՜վ, վերքո՜վ օրրեցիր զիս,
Սրտիս տատա՜սկ ցանեցիր,
Ջահիլ սրտիս վարդերը բաց
Հովին տվիր ցանուցիր...

Երանությա՜մբ լացուցիր զիս,
Սրտիս դրախտներ ցուցուցիր,
Սիրտըս ջահիլ, վարդի պես բաց,
Ջահի՜ մը պես լուսցուցիր...

Ասե՛, միթե՞ կրնա ըլլալ
Որ մեռնի սերն անձանձիր,
Սիրտըս ջահիլ չի՛ կրնար լալ,
Սիրտս կրակեն ցամքեցիր...

Արգիլեցիր մուտքն ինձ հոգուդ,
Սրտիդ փեղկն ինձ գոցեցիր.
Լռելն՝ անգո՛ւթ, լա՛ն՝ անօգո՛ւտ,
Շվարեր եմ մտացի՛ր...

Ա՜յ, ի՞նչ ընեմ ես այս կյանքով,
Սրտեդ վարդեր փնտտեցիր,
Ու կըխլեմ ես ի՛մ ձեռքով
Կոկոններն որ ձգեցիր...

Ա՜լ փակեր եմ հոգիս անլայ
Իմ խավարիս մեջ անձի՛ր,
Բայց անուրջիս դռներն են բաց
Մի անգամ եկ ու անցիր...

Սերո՜վ, սերո՜վ խոցեցիր զիս,
Սիրտըս սերո՜վ խոցեցիր,
Սիրտըս ջահի՛լ, վարդի պես բաց,
Դագաղի պես գոցեցիր...

2

ԵԹԵ ԳԻՏՆԱՅԻ՞Ր...

Եթե գիտնայի՞ր, ո՞վ անձանոթ քույր,
Թե որքա՞ն ատե՛ն է կփնտռեմ կո՞ւյր,
Ճամբուս վրա ոտքիդ հետքը սիրաթո՞ւյր,
Եթե՞ գիտնայիր...

Անձանոթ մ'ես ինձ, անձանոթ մ'եմ քեզ,
Բայց տարիներով քեզ համար վերքես
Հաներ եմ քանի՞ երգեր սիրակեզ,
Եթե՞ գիտնայիր...

Դու դեռ ա՞յնքան փոքր ես, ժպտո՞ւն այնքան,
Բայց քու միամիտ շունչիդ մանկական
Ի՞նչ դժոխային բոցեր ինձ կուգան,
Եթե՞ գիտնայիր...

Ահա ես մո՞ւթ եմ,— մահվան մո՞տ արդեն—
Մինչև ճանչցա, որ մարդերը մա՞րդ են,
Ի՞նչ ցավեր անցան կյանքիս անդունդեն,
Եթե՞ գիտնայիր...

Սակայն կժպտի՞ս ինձ ու կ'անցնի՞ս դուն.
Կ'երթաս ապրելո՞ւ... ետ՞ դա, կյանքը մարդուն
Գերեզմանի մեջ հսկում մ'է արթուն,
Եթե՞ գիտնայիր...

Բայց ո՞վ աղվոր է՝ քիչ մ'անմահ է այն...
— «Ի՞նչ լավ է այսպես» կ'ըսես լռելյայն...
— Վարդերը կ'ապրին առտո՛ւ մը միայն,
— Եթե գիտնայիր...

Աչքերդ խոնավ, շրթներդ մսուտ են...
Բայց համբույրներուն մի՞ հավատար, սո՛ւտ են...
Լո՞կ ցաված սրտի սերերը զո՞ւտ են,
Եթե՞ գիտնայիր...

Դու չես հասկրնար ինձ, ինչո՞ւ գրել...
Բայց թե նայեիր սրտիս վրա մեռել
Պիտի սիրեի՞ր դիս. քի՞չ մը սիրել
— Եթե գիտնայիր...

ՊՈՌՆԻԿԸ

Գ. Զահրապին

Դեռ-դիշերն վերջ մըն էր, խոնավ դիշեր մ'անձրևի,
Լապտերին թաց լուսին տակ կանգներ էիր տրտմոլի.
Ջուրը կ'երգեր մայթին վրա, հոս հոն վաղքն էր կառքերուն.
Կ'սպասեի՞ր դուն այդ ա՞փ մը հոգիդ շուրջ դեգերուն։

Բոնի ժպիտ մը կուլար աչերուդ խո՜ր ծավի,
Ներկված լիր շրթներուդ վրա պրկումը կար ցավի,
Ու անառակ շրփակիդ զույգ սահանքին տակ սիրուն՝
Ցայտքը չիկար այդ գիշեր ցայգաղբվարճ կիրքերուն։

Կ՚սպասեիր դուն պատրաստ ու համակե՜ր ու հլո՜ւ,
Առա՜նց սիրո, ընտրության, նվիրվելու համար կո՜ւյր
Այն բարեհա՜ճ Արուին, որ հաց ուներ քեզ տալու...

Գութի, կիրքի պես տաքնամ քոց մ՚զգացի սրտեսներս՝
Ու թերևս՝ այդ գիշեր նվիրվեի քեզի, Քո՜ւյր,
Եթե կաթիլ մը արցունք չըսառեցներ իմ այտերս...
Կես-գիշերն վերջ մըն էր, խոնավ գիշեր մ՚անձրևի...

ԱՐՅՈՒՆՔԻՆ ՔԵՐԹՎԱԾը

Այտերն ի վար, այտերն ի վա՜ր, ուր հավետ
Կառչորի հետքը վերջին համբույրին,
Իջի՜ր, արցունք, զովությանդ մեջ երկնավետ.
Թող սերերու հետին բոցերը մարին։

Գզվանքներու ծովուն վրա ալեվետ,
Մեռած, թոշնա՜ծ խոստումներուն վրա ցրտին՝
Իջի՜ր, արցունք, զորությանդ մեջ կենսավետ,
Իջի՜ր, սառած երազներուն վրա սրտին։

Համբույրներու թերթերուն վրա ցիրուցան,
Անո՜նց վրա, որ «կսիրենք քեզ» ըսին,
Անո՜նց վրա, որ ժպտեցան ու անցան.

Ու խեղճ Սրտին մոխիրներուն վրա տրտում,
Փլատակներո՜ւն վրա Տենչին ու Հույսին՝
Իջի՜ր, արցունք, գորովանքովդ անդադրում։

7 մարտ, 1907

ՎԵՐՋԻՆ ԿՈՉԸ

Ահա մինակս եմ, անզե՞ն, հուսահա՜տ,
Ու ահա դեմս ես, ո՞ւշ է արդեն, վա՜տ.
«Սիրե՛ զի՛ս» ասավ։ Ո՛չ, հեծկլտացի...

Ինչո՞ւ եկեր ես նորեն խոսվել զիս.
Ղրկեր եմ արդեն զինվորներն Հույսիս.
— «Գիտե՞ս ուր»,— ասավ։ Ոչ, հեծկլտացի։

Երբեմնի Դշխոս երևցավ ինձի,
Վա՛ր քաշեց դեմքես՝ թևերս պղնձի.
«Կ'արտասվե՞ս, Ասպետ»։ Ո՛չ, հեծկլտացի։

Սուրացի՞ն, նետերն արձակելով վեհ
Արևո՞ւն դեմ, օ՛րն անիծելու պես.
«Կդառնա՞ն»,— ասավ։— Ո՛չ, հեծկլտացի։

1. ԱՍՊԵՏԻՆ ԵՐԳԸ

Ճերմակ ձին է թամբեր, տեսե՛ք.
Ոսկի թամբին վրա կանգնած սեգ
Լռին կ'երթա ասպետն, ասե՛ք,
Ասպետը սեգ դեպ ո՞ւր կ'երթա...

Կխրոխտա վեհ ձին՝ կույսի պես.
Արշալո՞ւյս է, ծաղկի հանդես,
Հազար թռչներ կ'երգեն անտես
«Ասպետն, ասեք, դեպ ո՞ւր կ'երթա...»

Հետևորդներն ո՞ւր են աղվոր.
Ռազմի՞ կ'երթա ան ահավոր.
Ո՛չ, իր սրտե՛ն է վիրավոր.
Ասպետն, ասեք, դեպ ո՞ւր կ'երթա...

Ահա հասավ ժայռին գագաթ
Դեմքը ծածկեց ձեռքով երկաթ,
Խոյացավ վար ձին խանդակաթ.
Ասպետը սեգ մահվան կ'երթա...

2. ԴԱՑՈՂ ՄԱՐԴԸ

Չեմ գիտեր ո՞վ, չեմ գիտեր ո՞ւր
Կ'երթա... Հի՜ն, հի՜ն ասպետ մ'է լուռ
Կ'ըսեն՝ ձիուն վրա տխուր
Կ'երթա շո՛ւտ, շո՛ւտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կանանեմ մեծ շուքն իր նիհար
Վերջալույսին, ամպերեն վար,
Սև նժույգին վրա հոգեվար
Սարե՜ն կ'երթա, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'երթա շո՛ւտ, շո՛ւտ, ու չի տեսներ
Որ եռանեն բյուր կմախքներ
Ա՜լ վազելեն շատ են հոգներ,
Ան կ'երթա շո՛ւտ, չեմ գիտեր ո՞ւր...

Կ'ըսեն՝ դղյակ մ'ունի ազվոր
Կամ ուխտ մը սուրբ, սեր մ'հեռավոր,
Ու հոն կ'երթա... Եվ գիտեմ որ
Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...

ՀԱՅ ԾՆՈՒՆԴ

Թի՜նկ, թա՜նկ... Օդին մեջ քու կո՞չդ է, Աստվա՜ծ...
Ահավասիկ ե՛ս, ծե՜ր, տարագրվա՜ծ,
Լույսեղ հալածված ստվերի պես խեղճ,
Օտար աստղի տակ, օտար երկրի մեջ,
Կ'երթամ, կմախչիմ չունիմ դադար, կանգ,
Մինչ թա՜ց գիշերին մեջ կ'երգեն բյուր զանգ
Թինկ, թանկ...

Թի՜նկ, թա՜նկ, զանգակներ մե՜կ վանկ կհեգեն,
Ձյունը պարելով կ'իյնա երդիքեն...
Թի՜նկ, թա՜նկ, ցայգին մեջ մանուկներ կ'երգեն,
Խեղճին, հարուստին ծնունդն է ապաքեն։

Խաղաղությո՛ւն ձեզ, սրբա՛, տերդ տնտնկ
Ձեր բույնին մեջ խունկ, խնծիղ, կախարդանք,
Թինկ, թանկ...

Թի՛նկ, թա՛նկ, խայտանքի տո՛նն է համորեն։
Անտունը երկո՛ւ բարի մեջ իրեն
Մում մըն է վառեր, կժպտի անհո՛ւն...
Մենք իրմե՛ ալ խեղճ... Անտե՛ր, անանո՛ւն
Կորեր ենք, չունինք ոչինչ սրտի թանկ,
Երկրիս շորս ծագեն մոլորած կ'երթանք
Թինկ, թանկ...

Ահա հինգ պա՛ր է, բույներնիս բոցի
Կուտան, զավակներս որբե՛ր փողոցի.
Մեր ոտքեն խլեցին խլյակը հողի,
Շրջուն մեռել ենք առանց կոթողի...
Ցռուկներս տված լա՛յն հովիմ կ'երթանք,
Ներքևներս մութ ծով, առջևներս վըտանգ
Թինկ, թանկ...

Թի՛նկ, թա՛նկ, կվախչիմ, կ'երթամ՝ ոգակիր.
Բայց ահա երկնես աստղ մ'ինկավ երկիր։
Գո՞ւցե... Այս գիշեր քսան դարեր վերջ
Դուն ծնի՞լ կուգաս մըսուրի մը մեջ,
Հեռո՛ւն, շորս բոլորդ հովիվներ տնանկ,
Ու ամբողջ երկրի վրա մի արձագանք,
Թինկ, թանկ...

Ո՛չ. մսուր չկա բեղ, Հիսուս-հրդու.
Ո՛չ. սուրբ ջուր չկա ոտքդ լըվալու.
Դրախտիդ ակերևն արյուն քամեցին,
Խաչիդ քով հազար խաչեր դամեցին...
Մոռցեր ենք Սիրույդ պատվերները թանկ,
Մենք հայհոյելով մութին մեջ կ'երթանք,
Թինկ, թանկ...

Ո՛չ. դուն կեցիր հոն, կապույտիդ մեջ վե՛ս,
Կապույտ, խարուսիկ երազի մը պես,

Իրրև խաչեցյալ խորհուրդ սրգակիր,
Հյուսիսն ու հարավ, երկինքն ու երկիր,
Ամեն մարդկություն, ամեն ժամանակ
Իրար ձուլող մեծ Անուրջը սրնանկ...
Թինկ, թանկ...

Սակայն երգեցե՛ք դուք զանգեր հիվանդ,
Ու դո՛ւք մանավանդ, հայու ճնայվանդ
Զանգեր երգեցեք... Մենք բաժան-բաժան,
Մենք ծընունդ չունինք, մենք մահն ենք դաժան
Ալեկոծ նավում զանգերը վրտանգ
Կ'երգեն... Երգեցե՛ք, մենք մահվան կ'երթանք,
Թինկ, թանկ...

Երգե՛ հայու զանգ, Կովկասեն Երան,
Մասիսեն Վոսպոր, երգե՛ բյուր-բերան,
Երգե՛, քու ձայնով մեր պապեր մեռան.
Երգե՛, ձայնիդ մեջ քանի դարեր կու լան...
Երգե՛, ինչպես դուն լացիր ահազանգ
Երբ դեռ ողջ ցեղին դրին կարմիր պատանք
Թինկ, թանկ...

Կանգո՛ւն աշտարակ ցեղի մը փլուզուն,
Տեսար ոտքիդ տակ արյունը վազուն,
Տեսար աստուծույդ դիակն ազազուն,
Դո՛ւն գիտես ցեղի մ'անեծքի լեզուն...
Քու ձայնիդ ներքև՝ համակ կախարդանք՝
Մեր ծնունդներուն անե՛ծք կկարդանք,
Թինկ, թանկ...

Երգե՛, դուն հոգին ձայնն ես հարազատ,
Ցորչափ դեռ կրնաս դուն երգել ազատ.
Չի գուցե խեղդեն օր մը ձայնդ անշեջ...
Ա՛յն ատեն է, որ բոլոր երկրի մեջ
Ոսկորները հա՛յ՝ իրենց հոգին տակ
Պիտ' մեռնին զրկված հուսկ օրորդ թանկ,
Թինկ, թանկ...

Լոզան

ԻՆՉՈ՞Ի

Ինչո՞ւ, ինչո՞ւ դիս սիրեցիր,
Փոքրի՛կ աղջի՛կ, քեզի մե՛ղք էր.
Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պետք էր,
Դուն ծե՛ր արծիվ մը բանտեցիր...

Կապույտ աչվիդ երբոր բացիր,
Կապո՛ւյտ աղջիկ՝ պլպուլն երգե՛ր.
Քե՛զ ալ սիրո մրմունջ պետք էր,
Դուն գուժկան մռո՛ւնչս ընտրեցիր...

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր,
Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.
Քեզ սիրո մեղմ սյո՛ւք մը պետք էր,
Դուն փոթորկի՛ն կուրծքդդ բացիր...

Կ'այրին աչերդդ սևածիր,
Պիտի մեռնիս, այդպես մ'երգե՛ր.
Քեզի փոքրիկ սեր մը պետք էր,
Դուն Սե՛ր-Աստվածը սիրեցիր...

ՍԻՐՈ ԾԱՐԱՎ

Հծծեց.— «Ծարա՛վն ունի հոգիս
Աղբյուրներու գե՛ջ, կարկաչո՛ւն.
Արցունքներու մեջ պաղպաջուն
Ջովացնեի հիվանդ հոգիս...

«Ծարա՛վ, ծարա՛վն ունի հոգիս
Արշալույսի գա՛ղջ ծովերուն,
Ծո՛վ-ծո՛վ սիրո գա՛ղջ հովերուն,
Տայի թերթերն տառապանքիս...

Իր ճամբուն վրա ծլած հազա՛ր
Կո՛ւյս ծաղիկնե՛րը կ'ըսեին.
«Ա՛ռ մեր նեկտա՛րը կուսային...»—
Կ'անցներ պարմանն ու կհազա՛ր...

Սարավեր է՞ր։ Շուրթերն անահ
Հպան ծծել նեկտարն ակնն...
Տեսե՛ք, Սիրո սուրբ բաժակին
Պարմանն հիվանդ կ'ըմպե՛ն իր Մահ...

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞վ կու լա այսպես խշտյակիս շեմքին.
— Քո՛ւյր, զարիպն է, բա՛ց։

Կամ՞խք մը կ'անցնի դուրսեն լալագին.
— Սովն է, դուռդ բա՛ց։

Տապա՞րն է ջախջախ դրանքս կուրծքին.
— Ջարդն է, դուռդ բա՛ց։

ԲՈ՞Ի՞ՅՐԸ

Կրարձրանա բո՞ւյր մը աղվոր,
Գաղջ բույրը կո՞ւյս մարմինիդ.
Բո՞ւյրը՝ խունկի պես միամիտ
Ու մեղքի պես՝ մեղավոր...

Ուսկե՞ կուգա բույրը մարմնիդ
Բյո՞ւր տենչերով բեղմնավոր,
Դավադրությա՞ն պես ահավոր,
Աղոթքի պես՝ միամի՞տ...

Կրարձրանա բո՞ւյր մը աղվոր
Գինվցընող ու բարի.
Մխաթիք ա՞մպ մ'է որ կփարի
Քեզ՝ քաղցրորե՞ն մեղավոր...

Դիտե՛մ, կ'զգա՛մ, բույրդդ գինով՝
Ա՞ղ ծա՞ղ ցրված ծամերեն,
Մատիդ ծիրա՞ն, ծյո՞ւր ծայրերեն
Կծորի բո՞ւյրդդ գինով։

Բայց ուսկե՞ց է բույրը դեղ.
Սև աչե՞ր՝ սե՛ վարդի պես,
Սև թարթիչնե՞ր՝ սե՛ կարթի պես,
Մութ հոնքերուդ տակ ազեզ...

Ուսկե՞ կուգա բույրը բարի
Որ կբուրեն մարմիններդ.
Կարմիր, դողդոջ, նուրբ շրթունքնե՞ր
Որ համբույրին կ'երկարի...

Ուսկե՞ց է բույրդ այ մեղամոր,
Լա՞յն վարդի պես կուրծքնե՞ր բաց,
Ուր կրկարմրի հեարը դեռ թա՞ց
Համբույրի մը բեղմնամոր...

Ջա՞ր ու բարի, գինո՞վ ու կույս
Ելնե՞մ այդ բույրը դա՞ռն.
Մի՛ զրկանար համբույրդ դա՞ռն
Սիրակարո՞տ իմ հոգվույս...

Կեցի՛ր, կեցի՛ր, ա՛խ ո՞չ կ'երթաս.
Շրթունքիդ քնե՛զ կհնան.
Ըսե՛, Սիրո՞, Մեղքի՞, Մահվա՞ն
Ինձ հրաւեր կկարդաս...

Կրարձրանա բույր մը ազվոր
Իմ հոգվույս մեջ. բա՞ց ինձ, բա՞ց
Կարմիր շրթունքդ՝ վարդի պես թաց
Ու մեղքի՛ պես մեղամոր...

ԽԱՅՊՐԻԿ

Հովերն ի՞նչ ըսին քեզի, ո՞վ ճամբորդ
Որ հեռվե՞ն կուգաս, հեռվե՞ն արփավեա.
Ա՛յն հեռվեն կուգաս, ուր աչքերս հո՞ղդ
Արցունք է ինկեր սրտիս արյան հետ...

Հովերն ի՜նչ խապրիկ, հողերն ի՜նչ եղեռն
Պատմեցին քեզի, ո՞վ ճամբորդ ընկեր,
Այն հովերն հեռվի, այն հեռվի տեղերն
Ուր ամեն քայլիս արցունք մ'է ինկեր...

Հողերն ի՜նչ ըսին, հովերն ի՜նչ ըսին.
Անո՜նք կճանչնան միայն իմ հոգիս,
Այդ սուրբ տեղերուն վրա լուսնակ լույսին,
Արցունք մ'է ինկեր իմ ամեն քայլիս...

Այն մեծ գորշ թոչունն որ համակրորեն
Կդադարեցներ ողբիս՝ իր երգեր,
Հոն չէ՞, գաղթա՜ծ է անշուշտ ա՛յն երկրեն
Ուր ամեն քայլիս արցունք մ'է ինկեր...

Ու առվակն ալ որ հո՜ն կիսոխոչ,
Իմ առվակը չէ՛, այն երգը չերգեր,
Ան ծո՜վ թափեցավ, այն նո՜ւյն ջուրը չէ՛
Ուր ջուրերուն պես արցունքս է ինկեր...

Ինամրա՜ծ են անշուշտ տեղերն ալ դալար
Ուր կիսեղդեի ողբերքս կերկեր,
Նոր ծլած մարգերն ինձ չեն, չե՛ն ճանչնար
Ո՞ր տեղին վրա ո՞ր արցունքս է ինկեր...

Բայց հո՞ղն ինչ ըսավ, այն որ մայրորե՜ն
Աչքիս ցողին հետ ծծեց իմ հոգին,
Ան զիս կճանչնա՜ր. ծաղիկ մը նիհար
Զըսա՞վ թե ինք ծի՜ւն է իմ արցունքին...

Ու հո՞վն ինչ ըսավ, ա՜ն զիս կթողեր
Լո՜ւռ խապրիկներով աճեն իրիկուն.
Ինձ սիրականիս սիրտը կգովեր,
Կշորցներ թա՜ց աչերքս անքուն...

Ձա՜ր հովիկ, սլտիս միա՜կ լրաբեր,
Գիտնալո՞վ, գութով կխաբեիր զիս։
Դնա՛ ըսել իրեն թե հեռո՜ւ ափեր
Կփախչի՜մ իրմե՝ ճամբեն արցունքիս...

...Հովերն ի՞նչ ըսին քեզի, ո՞վ ճամբորդ
Որ հեռվե՞ն կուգաս, հեռվե՞ն սրգալեա.
Ա՛յն հեռվեն կուգաս՝ ուր աչքերես հո՞րգ
Արցունք է ինկեր, սրտիս արյան հետ...

Լոզան

ԱՄԵՆՈՒՆ ՊԵՍ

Մերիններուն

Գնդեցի՞կ էր,— կ'ուզեր ըլլա՛լ
Հրաշակերտ մարմին մ'ուներ.
Աղմո՛ր էին իր աչերն ալ,
Մի՛այն... մորը շա՛տ կնմաներ

Աշխո՛ւյժ, գործո՛ն ու հարատև՛,
Շատ պարկեշտ էր ու շատ ալ հեզ.
Հիմնապես լո՛ւր, կ'ուզեր թեթև՛
Ըլլալ քիչ մը... ամենուն պես

Մայրը «անմի՛տ» կ'ըսեր իրեն,
— Խե՛ղճը քիչ մը շա՛տ էր հլու,—
Ինչե՞ր կ'անցներ սրտին խորեն՝
Բայց կբաշվեր միշտ ըսելու

Հոգին չզգար թերևքս սեր,
Բայց սենյակին մեջ ներքնապես
Գիշերն իր սի՛րտը... կմսեր,
Կ'ուզեր ընել... ամենուն պես

Կուրծքը կյանքոտ, սիրտը տրոփուն,
Հանենցավ պարկեշտորեն
Իր սիրական մորը ճամբուն,
— Խելոք էրիկ մ'ընտրեց իրեն

Իրարու շա՛տ բաներ ըսին՝
Քիչ մը հինցած,— բայց սիրակե՛զ.
Շրթունքներն ալ մեկը մյուսին
Մոտեցուցին... ամենուն պես

Ու հրվալեն տրդան ծընավ.
Մնաք բարո՜վ համբո՜ւյր ու սեր.
Միշտ տանջվիլ, չի հրճվիլ ընավ,
Ասանկ բանի չէր սպասեր։

Զանձրույթն իրեն սիրտը խոցեց.
Կյանքեն հոգներ էր պարզապես.
Խեղճը աչերն օր մը գոցեց
Ու չի բացա՜վ... ամենուն պես

Լոզան

ՁԱՐ ԱՂՋԻԿԸ

Իմ սիրականս խարտյա՜շ, խարտյա՜շ.
Հուրերու պես խարտյա՜շ էր.
Իմ սիրականս մատղա՜շ, մատղա՜շ,
Ջուրերու պես մատղա՜շ էր...

Վարդ փնտտելեն՝ թաթիկն անույշ
Վարդերու գույնն էր առած.
Մարդ թունելեն՝ աչուկն անույշ
Մահերու թո՜ւյնն էր առած...

Բայց կխնդար ան այնքա՜ն քաղցր՝
Որ զոհն ի՛նք իսկ կնիրհե՜ր.
Ու կխնդար ան այնքա՜ն բարձր՝
Որ երկինքն իսկ կներեր...

Ու մեռա՜վ փոքր աղջիկը չար.
— Թռչնի պես կտրտնջար—,
Թե խորհեր քիչ մը՝ անպատճառ
Աստված ի՛նքն իսկ կզղջար...

Թե գիտնայի իր մեռնիլը՝
Թո՜ղ տայի զիս դեռ տանջեր.
Թե ի՛նք գիտնար իր մեռնիլը՝
Զի՛ս ալ իր հետ կկանչեր...

Տե՛ր Դատավոր, ձեռքդ նրժար,
Մի՛ փոյթար զայն դատելու.
Անոր ապվնատ էր շա՛տ ոժվար՝
Տանջել... առանց առելու։

Հող մի՛ դրնեք զայն, կմբի,
Մարմնին մեռաքս հագցուցեք.
Դրեք մահճի մեջ անդուսի
Ժապավենով աթոցուցե՛ք...

Ես կհսկեմ աղջկան շար.
— Թե երկի՛նքն իսկ չի ղղջար,
Զիս կհիշեր, ու ա՛նպատճառ
Մեռնելուն ի՛նք կղղջար...

ՈՂՋԱԿԵՂ

Իմ մտերիմ Ա. Գարակյոզյանի
հուժկու հիշատակին

...Ահավասիկ դուն կժպտիս ինձ հիմա,
Ըհասկցվա՛ծ Սուրբի հանդա՛մբ, հոգեհմա՛ն,
Միապաղա՛ղ սառն ժպիտովդ անայլայլ։
Ա՛խ, քարեղեն քու որբ ժպիտդ մրոայլ...

Ո՛վ գդվելի կենդանադիր դեղնափա՛ռ.
Դեմս ես. կ'ապրի՛մ, կ'բանեմ զքեզ անբարբառ.
Մինչ բու առջիդ՝ կռապա՛շտ մոմ մը վառիս
Կուլա՛ դողդոջ ու կ'ապերան՝ միամիտ...

Ու հարհատուն իր ճաճանչին՝ մեջ ճերմակ՝
Ճառագայթին հախանքով մը՝ յճանա՛կ
Կչրատին պահ մը աչերդ՝ ու կարծես
Թուղթին մեջեն հանկարծ պիտի հնծեծես...

Գուցե՞... Ահա կյա՛նքն է ինկեր գարունի.
Արևն է նո՛ր. ամեն բան նոր մը ունի.

Ահա՞ չքնաղ ծաղկանց ամի՜ սը Ապրիլ...
Կ՚ուզեմ՞ը հոգիդ դարձել, ու ապրի՜լ...

Գո՞ւցե՝ Բայց ո՜չ։ Քու ամբողջ կյա՜նքդ անա՜հ
Ու ծարավա՜ծ արշավ մըն էր դեպի Մա՜հ.
Դեպի չքնաղ ու մաքուր Մահն հերոսի
Ուր ծիրանի արյունը խրո՜խտ կհոսի...

Ու մինչ Քերթո՜ղը մենակ դեգերո՜ւն՝
Սի՜բա կշամբեր իր երգերուն, վերքերուն...
Իրմե հեռու ու անհաղորդ՝ դո՜ւն քեզ մեջ՝
Կ՚որոճայիր հսկայական ցավ մ՚անվերջ։

Ա՜ՀԴԻ։ Ինչո՞ւ հազարներու, բյուրերու,
Դիակներուն վրա ապրիլ այս հրլո՜ւ,
Այս գետնաքա՜ղշ կյանքը ստրուկ պոռնիկի...
Կյանք մուրալն լավ չէ՞ր մեռնիլ ուղղակի...

Որովհետև տրդու աչքերդ խելահեղ
Տեսեր էին կարմիր Սարսա՜փը ահեղ,
Փախչող կույսե՜ր, հրդեհնե՜ր անշեջ,
Կախաղաններ՝ լուռ ցցվող ցայգին մեջ...

Ու քու ցեղիդ ցեխի՜ն առջև դեռնամած՝
Ոունդերդ կո՜ւշտ ծծեր էին ծարամած՝
Տաք արյունեն բարձրացող բույրը ցեղիդ...
Այդ բույրն Մահվան անենչ էր ավեր ուղեղիդ...

Այլ եղո՜ւկ քեզ... Դուն չի մեռար իբր հերոս,
Օդերուն մեջ ճոճող բիրեն բարբարոս,
Դանկդ սրմա՜ծ կացինի մի տակ ջախջա՜խ,
Գաղաններու մռնչյունին մեջ. «Ալլահ»...

Ո՜չ։ Բանտերու աղջամուղջին մեջ անշուք.
Դյուցազնորե՜ն, ժայռո՜ւն լուռ, անշշո՜ւկ,
ԳԱՂԱՓԱ՚ՐԻ խորանին վրա՝ սիրակե՜ղ,
Քու պարմանի մարմինդ ցրիր ուղակեղ...

Ու քու աչքե՛րդդ հրճվանքեդ խելագա՛ր՝
Կրտեսնեին, թե քոցը ինչպե՛ս կուգար,
Կարմի՛ր, ուրա՛խ, սրբազա՛ն քոցը ահեղ,
Պարանոցիդ, մարմիններդ վեր, դեպ՝ ուղեղ...

Օգնությո՛ւն... Ո՛չ։ Կչահվե՛ իր լռելյայն...
Ու դեմքիդ վրա գալարվող բո՛ցն էր միայն
Որ ճգրտաց խոլ աչքերուդ վրա խոնա՛վ...
Այսքա՛ն։ Մեռար առանց ճիչի մը բընավ...

Երնե՛կ այն Հայ Արգանդին որ քեզ ծնավ...

1909, մայիս 27
Լոզան

ՄԵ՛ԾԴ ԱՍՏՎԱԾ

Ահա՛ ջուրերդ։ Աղվոր լիճե՛րդդ ահա՛,
Ահա՛ ծովերդ, օվկիանները՛րդդ մբթին,
Որոնց վրրա շունչդդ կյանքոտ կխաղա՝
Փայփայելով հսկայնե՛րն այն անդունդին.

Խոտերուն մեջ սահող հեզիկ առվակեդ
Մինչև ջուրերը դարավոր Նեղոսի,
Մինչև հո՛ն, ուր Նիակարան փրփրավետ
Գահավեժին մեջ գոռալո՛վ կհոսիլ։

Ահա՛ հողերդ։ Լո՛ւռ անտառներդ մթաստվեր
Ուր քու հոգիդ մենավորիդ կ'երազե՛.
Ու բոցավառ արևուն տակ կենսավեր
Տոչորող լա՛յն անապատներդ ավազե.

Կանաչավետ քու դաշտերեդ լայնածիր
Մինչև ձորերդ ու անդունդներդ ահավոր,
Մինչև լեռներդ որ դուն ձնոքո՛վդ կանգնեցիր,
Ալպյաններեն՝ Հիմալայան ալևոր։

Ահա՛ երկինքդ։ Երազամո՛լ, կապտագե՛ղ,
Անծի՛ր, անծա՛յր տարածությո՛ւնը անհուն.

Լույս մատներեդ վառված աստղե՛րդ շրջեղ՝
Խորհրդաստվեր կամարիդ վրա պլպլուն.

Ու արևուդ բոցափայլ գո՛նաը կրակի,
Ու լուսնակիդ սիրախտավոր դեմքն աղվոր,
Ու տրտմանո՛ւյշ վերջալույսնե՛րդ ոսկի,
Ու կենսալիր արշալույսներդ փառավոր։

Ահա՛ Մարդերդ։ Ահա՛ Մարդերդ ալ, Աստվա՛ծ,
Տխո՛ւր հյուրերն այս հրաշագեղ աշխարհքին.
Թափառակա՛ն, վաղորդայնե՛ն ընկճված,
Ճղճի՛մ, թշվա՛ռ, հո՛ղին կառչած, ախտագի՛ն.

Ճակատագրին մտրակին տակ խելահե՛ղ,
Անոնք կուլան ու կվազեն մտացի՛ր,
— Իրենց ճակտին վրա Մահվան գիրն ահեղ—
Անոնք ղոր Դո՛ն պատկերիդ վրա ձևեցի՛ր...

Ահա՛ Մարդերդ, ահա՛ Մարդերդ, Մեծդ Աստվա՛ծ...

ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ

Մեծ քաղաքին աղմուկին մեջ մոռցվա՛ծ,
Մե՛ր պարտեզի մ'ըստվերին տակ ամայի,
Վանդակապատ ա՛փ մը ջուրի մը վրա ցա՛ծ,
Տարից կարապ մը օրն ի բուն կսահի՛...

Փոքրի՛կ, անպի՛տ, լուռ մենաստան մըն է հոս,
Ուր գաղջ օրեր՝ աթոռներու վրա քարի՝
Աչքերնին գո՛ց, իրենց շուքի՛ն հետ անխո՛ս,
Տաքնա՛լ կուգան քաղքին ծերերը՛ բարի...

Ոչի՛նչ կյանքոտ. ո՛չ իսկ մի երգ թռչո՛ւնի։
Արմավենին որ կ'երկարի ջուրին քով՝
Արևաշա՛տ հողերուն փառքը չունի.
Նարնջենի մը կշնչե տաժանքով...

Ավարանին մոտ փոշելի՞ց, ախտագի՞ն,
Տարաշխարհիկ անտառ մ՚է լա՞յն տերևի,
Որու մեջեն՝ թաթը ո՛ւրի մը կուրծքին,
Թափծու առյուծ մը շա՞տ հպարտ կ՚երևի...

Ուրիշ ոչի՞նչ ...Ու կարապը կդառնա՞,
Տարեց կարա՛պը կսահի օրնիբուն
Կ՚զգա՞ արդյոք մեռելությունն անխնա
Որ հո՞ն է, իր վանդակումին մեջ տրտում...

• • •

Խե՞ղճ ծե՞ր կարապ... Երգ մը չունիս, որ օրգե՞
Ո՞չ իսկ ողորմ ճիչ մը վայրի՞ թռչունի.
Բայց ի՞նչպես լավ կհասկնա հոգիս քեզ,
Կարոտակեղ աչդ արցունքի՝ պետք չունի...

Անշո՛ւշտ, անբան կենդանիի բու մտքեդ
Կ՚անցնի՞ երբեմն հուշը հի՞ն հին օրերուն
Երբ քաղաքին ժխորներուն դեռ անգե՞տ,
Լիճերո՛ւ վրա կսահիր օրորուն...

Անշո՛ւշտ, լռիկ ժամերուդ մեջ դո՞ւն քեզի
Կպատմես հի՞ն արշալույսներն ոսկեփա՞ռ
Երբ կ՚երթայի՞ր թավուտներուն մեջ սեղի
Վայրի երա՞զդ ապրելու անբարբառ...

Ու կհիշես գիշերներն ալ դուն լուսնա՞կ,
Երբ ձյունափա՞ռ, հսկա՞ ծաղկի մը նման
Գլուխդ թեքիդ՝ կծփայի՞ր գոհունակ,
Մեծ լիճերու կապույտին մեջ անսահման...

Կարապ, եղո՛ւկ... Ինչպե՞ս պիտի ուզեի
Ճերմակ կուրծքիդ տա՛կ դնել սիրտս, օ՛ր մը գեթ,
Ու ապրիլ մո՛ւթ զգացումներդ ամեհի՛,
Որ կծորին լուռ թռչունի բու մտքեդ...

Նիցցա

ԵՐԹԱՂ...

Երթա՞ղ, երթա՞ղ, երթա՞ղ անձայն, անհանդես.
Երթա՞ղ աստի՛ն պես՝ մարգերու տակ անտես.
Կապույտին մեջ՝ հե՞զ, հողմավար ամպին պես...

Երթա՞ղ՝ առա՞նց գիտնալու թե դեպի ո՞ւր.
Երթա՞ղ՝ հեռո՛ւ ոստաններեն այս տխուր.
Երթա՞ղ խավար գիշերին մեջ թարթաքար...

Երթա՞ղ, երթա՞ղ, երթա՞ղ առանց հրագի.
Երթա՞ղ՝ առա՞նց սուգի, լացի, փափագի.
Երթա՞ղ՝ առա՞նց սոլի, առա՞նց պապակի...

Երթա՞ղ՝ մայրոց կույտին մեջեն լեռյայն.
Օտար մընալ իրենց Յավին, Դիտության.
Երթա՞ղ՝ ոգե՛ տ, խո՛ պ, հա՛մբր, կո՛ւր հալիտյան...

Զրգիտնա՛լ, որ հոտ Խաչալը չիկա՛...
Ուխտագրնա՞ց երթալ ափերն հեռակա,
Դեպի ուղին Երջանկության մշտակա...

Աննյութանա՞լ, անրջանա՞լ, վքսե՞մ, վե՞ս.
Երթալ անցա՛յգ, անա՛յգ, երթա՞լ վերջապես
Աչքերը գոց՝ ցայգաշրջիկ խեղճին պես...

Երթա՞ղ, երթա՞ղ, չճանչնալ Մա՛րդ ու Աստվա՞ծ.
Զո՛ւյգ երթալ՝ ձեռքդ քո՛ւյր ձեռքի մեջ դրած
Անրջանքի՛նու Սիրույն պես— աքսորվա՞ծ...

Լոզան

ՍԵՐԸ

Քընարիս յո՛թն աղիքներեն կանացի
Յոթը որբուկ հառաչանքներ հանեցի.
Եվ մի՛շտ ժպտիլ կրկարծեի, մի՛շտ լացի...

Սերն հեթանոս Երջանկությո՛ւն է, խաչվա՜ծ,
Սերն ա՛յն կուռքն է, որուն առջև ծնրադրած
Որքի՜ մը պես պիտի ողբար ի՛նքն Աստված...

Սերը ճերմակ անհունին մեջ կույր ա՛յն է.
Սերը՝ սիրո օվսաննան չէ՛, իր խա՛յն է,
Իր ցավերուն ընդդիմացող ո՞ր քաջն է...

Սերը սեր չէ, մահը մահ չէ, սե՛րն է մահ,
Սերն անդունդին մեջ ընկլուզումն է անվա՜խ.
Սերն այքը գոց ցայգաշրջի՛կն է անահ...

Երջանկության սեղանին վրա խրախճանք՝
Բեհեզ, կարմիր ծածկույթին տակ պատմուճան՝
Սերը կրմա՛խք կոչնականն է դավաճան...

Սիրե՛լ, սիրվի՛լ.— ոսկեղինիկ սո՛ւտ աղվոր.
Սիրե՛լ առանց սիրվելու.— սո՛ւգ ահավոր.
Սակայն ավա՜ղ անսե՛ր կյանքին.— կյա՞նք է որ...

Կտեսնե՞ս սա վիհին վրա Սեր-ակը.
Հազարնե՛ր կուլ է տվեր այդ սև՛ ակը.
Իր ջուրեն օր մը խենթեցավ
ՍԵՎԱԿԸ

ՍԿԵՊՏԻԿ

— Գիտե՞ս ո՞ր թռչնիկն է՛ն անույշ կ'երգե,
Ա՛յն որ ծնունդն է առաջին գարնա՛ն.
Դեռ իր շուրջ ամեն բան խինդ ու երգ է,
Թիթեռ ու ծաղիկ դեռ պար կդառնան...

Այդ՝ նոր թռչնիկին գարունն է առջի.
Կ'երգե, սիրահար կդառնա գարնան.
Հետո ամեն բան քիչ քիչ կսառչի,
Տերևներն հազար փոշի կդառնան...

Ուրեմն սո՛ւտ էր կարմիր վարդը նուրբ,
Գարունը սո՛ւտ էր, սո՛ւտ էր փոսուռան,
Սո՛ւտ էին սիրո սարսուռները սուրբ.
Սարեն սուլկով սառեր կսուրան...

Գիտե՞ս որ թռչնիկն էն սրխուր կ'երգե,
Այն որ մոտիկ է իր վերջին գարնան.
Դեռ իր շուրջ ամեն բան խինդ ու երգ է,
Բայց, գիտե՛, շուտով մոխիր կդառնան...

* * *

— Գարուններո՛ւ պես ահա ինձ կուգաս՝
Մի ծոցդ օձո՛ւն ծաղիկով լեցուն.
Այս քանի՞երորդ գարունս ես, կուգաս,
Բայց ես կսիրեմ ժըպիտդ ցնծուն...

Քեզ պես գեղեցիկ հուրիներ օտար
Քանի՞ներ եկան ու փախան շուտո՛վ.
Ա՛լ անմահ սիրո ես չեմ հավատար,
Բայց դեռ կսիրեմ գինովնալ սուտո՛վ...

Եկո՛ւր, ես խաբվի՛լ կ'ուզեմ գիտնալով,
Փա՛ռքդ երգել կ'ուզեմ թռչուններու պես,
Անգա՛մ մ'ալ արբշռիլ լուռ քաղցրությունով.
Բայց մի վախնար իմ սև սիրերգես...

Գիտե՞ս որ քերթողն է՛ն տխուր կ'երգե,
Այն որ չի՛ հավատար Սիրո ու Գարնան.
Դեռ իր շուրջ ամե՛ն բան խինդ ու երգ է,
Բայց, գիտե՛, շուտով մոխիր կդառնան...

ՍՐԻՆԳ

Ո՞վ խեղճ սրինգ, տարաբա՞խտ ոստ,
Ո՞ր սիրահար ձեռքը անտես,
Ո՞ր աստուծու կայծակն ըմբոստ,
Փրցուց, շորցուց քեզ ոսկրի պես...

Ո՞վ ծակոտեց քու նիհար ցող,
Ջրկա՞ նեկտար մ'ալ որ ըմպես,
Ո՞չ իսկ կաթիլ մ'առավան ցո՞ղ,
Ցամքեր, հյուծեր ես ոսկրի պես...

Մոռնցուր կուրծքդ համբույրիս,
Թող օձեն վի՞րքդ արցունքներս,
Գիտե՛մ, պիտի չի դալարիս
Բայց կյա՞նք փչեմ երակեդ ներս...

Բաբե՞, սրինգ, սիրտդ խո՞ց է,
Հին ծաղիկներ ա՞լ չեն ծլիր,
Բայց տաք շունչես ծաղկին գուցե
Վերքեդ երգի ծաղիկներ հի՞ր...

Եկո՞ւր սիրենք, եկո՞ւր սիրվինք,
Եկո՞ւր պատմեմ քեզ մեկուսի
Գաղանի՞, ահե՞ղ սեր մը, սրի՞նգ,
Որ տա՛կավին մեկուն չըսի...

Ծրթանք կապույտ սարն հեռակա,
Մարդերե՞ն վեր, աստղերո՞ւն տակ,
Մեր երգին լո՞կ սարը վրկա
Ու ձայնակից ըլլա վըտակ...

Երգե ա՛յնպես ինչպես կու լար
Երբ գիշերի սյուքն աշնայնի
Կաթսուացներ ոսոցդ դալար...
Շունչ՛ս ալ սյուքն է գիրեզմանի...

Ո՞վ իմ սրինգ, ոստ երկնատուր,
Ջորցած սրտիդ ես տամ հոգիս,
Ու դուն ե՛րգ տուր, դուն վերե՛լք տուր,
Երկինքնե՞ր տուր հիվանդ շունչիս...

Լոզան

ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԸ

Առաջին գիշերն, Արարիչ Ոգին՝
Մարդկության ծընող առաջին զույգին
Ըսավ՝ «Կ՚ուզե՞ք որ ջահեր անհամար
Վառեմ ձեր հանգեսն քնելու համար»։

Ու սիրահրավեր աչերու նըման
Երկնքին հո՞ւյլ հո՞ւյլ աստղերը ծընան։

«Կ՚ուզե՞ք որ երգեր, հեծեծներ տրտում
Ալիքներ ձայնի, հեքեր անպատում,
Կարկաչներ ընդհատ, սարին, ծործորեն,
Իրենց թագուն սե՛րը ձեր մեջ ծարենա»։

Ու միջոցին մեջ թրթռումի, ձայնի,
Մեղմին պատարագ մըն էր գարնայնի։

«Կ՚ուզե՞ք որ, հծծեց Ոգին, գիշերվան
Մեջ, օդին մթին ալքերը հեան,
Ու աննյութ, անգո շունչեր հյուսիսեն
Ձեր լուռ սրտերուն սիրերգը հյուսեն»։

Մո՞ւթ, անծայրածի՞ր դաշտին վրա բոլոր
Շնչեց գիշերին սյուքը մեղմաբոր։

Ու դյութի՞չ, կախա՞րդ խաղ մ՚էր ամեն դի.
Վրտակը հեքիա՞թ մ՚ուներ արծաթի,
Ցորիթն օրորո՞ւն շյուղի մը վրան
Հի՞ն երգ մը կուլար, կ՚այրեր փոսուռան։

Ու այս մոգության ծո՞ցը ցայգային
Բյուր ըղձանույշներ կարծես պար գային։

Խունկի, աղոթքի, բույրի այս պահուն
Գարնան առաջին ցայգն իր Սի՞րն անհուն
Նոր օրենքի մը նըման ահագին
Լո՞ւռ կմռնչեր ահարկ զույգին։

Ինքզինքին մինա՜կ զգացին, տխո՜ւր.
Գազաններ զույգ զույգ քաշվեր էին լո՜ւռ

Ու մարդն առաջի՜ն, տրղու պես գողդո՜ջ,
Մոտեցա՜վ սիրով առաջի՜ն կընոջ...
Այն ատեն Աստված զինք մինա՜կ զգաց
Իր Անհուններուն մեջ լացավ հանկարծ...

— Առտուն իրենց վրա ինկած ցողն խոնավ
Այդ արցունքն էր շա՜ր. Մեղքն անկե ծընավ.

Հոգան

ՍԻՐՈ ԵՎ ՄԱՀՎԱՆ ԵՐԳԸ

Իմ կյանքըս թող աղաչավոր երգ մ'ըլլա,
Եղերական ու միամիտ, սև՛ ողբերգ,
Իմ սիրտըս թող անհունին մեջ վերք մ'ըլլա,
Հսկայական ու տխրորեն քաղցրը վե՜րք,
Իմ կյանքըս թող աղաչավոր երգ մ'ըլլա...

Ես կսիրեմ իմ տրտմությունս դյութական,
Իմ տրտմությունս Աստվածներո՜ւ ցավին պես,
Քո՜ւյր սրտիս մեջ ի՜նչ խավարներ, վիհեր կան,
Զոր նայվածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես,
Ես կսիրեմ իմ տրտմությունս դյութական...

Եկո՜ւր ինծի, լուսնակին պես գեղեցիկ.
Եկո՜ւր ինծի, լո՜ւյս ու ցնծում հևալով
Քու արծաթի ջղերուդ մեջ սլացիկ
Լուսավորե՜ ավերակնե՜րս լալո՜վ.
Ես Մահն եմ, ե՛կ ինձ Կյանքին պես գեղեցիկ...

Իմ կյանքըս թող առվին երգին պես ըլլա,
Ու երգ անվանդ կրկնումն ըլլա թող հավե՜ժ,
Իմ կյանքըս թող մո՜ւթ ջրվեժին պես ըլլա,
Ու դեպի քեզ անկում մ'ըլլա գահավե՜ժ.
Իմ կյանքըս թող առվի երգին պես ըլլա...

Ես կսիրեմ երկու աչերդ վիհի՛ պես,
Ուր խավարներ կփոթորկին մոլեգի՛ն.
Երկու աչերդ՝ աստվածներու սկիհի՛ն պես,
Տո՛ւր ինձ անոնց մեջ սրբացնել իմ հոգին.
Ես կսիրեմ երկու աչերդ վիհի պես...

Եկո՛ւր ինծի, քեզ կ'ըղձա շունչըս անզոր,
Եկո՛ւր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ
Սիրո պես քաղցրը ու Մահվան պես հրզոր.
Գերեզմանիս լացող սյուքին պես նըստեմ.
Եկո՛ւր ինծի, քեզ կ'ըղձա շունչըս անզոր...

Իմ կյանքըս թող կորած նավուն պես ըլլա,
Շունչդ ուռեցնե ծեր առագաստըս անա՛հ.
Մի՛, մի՛ լսեր հոգնած հոգիս որ կուլա,
Տա՛ր զիս Սիրո կղզիներին դեպի Մահ.
Իմ կյանքըս թող կորած նավուն պես ըլլա...

Լոզան

ՀԻՆ ԵՂԱՆԱԿ

Տիկին Ա. Թեոդիկին

Այս գիշեր երդ մը հոգեցունց
Հովին մեջեն՝ հեռուեն հեռու՝
Զյունոտ տրտում ճամբաներու
Խոր անրջանքը արթնցուց։

Ես մենավոր ու տրտմունակ,
Քեզ կ'ունկնդրեմ պատուհանես
Որ աղոթքի մ'ոլորքին պես
Կ'արձագանգես, հի՛ն եղանակ։

Արվեստ չունիս, իմաստ չունիս,
Կըկրկնվիս դուն անդադրում,
Ու ձյունին հետ դանդա՛ղ, տրտո՛ւմ,
Դուն տարուբեր կտատանիս։

Շնչում մարմնդ կգողդաջ.
Վանկերուն մեջ ժամանակ, վայրկ,
Ու հանկարծիդ մեջ միամիտ
Ապրելուն խուլ մահերդը չէ՞...

Կրկրկնե հոգն անեպատակ
Աղաղակներդ ծանրն, սարքն,
Ի՞նչ կպատմես դուն գիշերին
Որ կու լա մայթը հեքիդ տակ։

Այս իրիկուն, ձյունն իրիկուն,
Հին եղանակ մը հոգեցունց,
Սույլ երգանքը արթնցուց
Մութ ամայի համբանեբուն։

Երգը մնում՝ վերհուս անհետ.
Բայց ա՛յդ չափով, այդ հանկարծով,
Պատուհանիս գիշերին քով,
Հոգիս կու լա դեռ երգին հետ...

ԳԻՇԵՐԻՆ ՄԵՋ

ՀԱՅԿ եղբորս հիշատակին

Կլայնեա երկինքը անծա՛յր ու ջի՛նջ,
Գյուղին վրա քիչ քիչ մութը կբկոխե,
Ամեն բան իրեն գույնը կփոխե,
Հանդա՞ր ամեն կողմ, մո՛ւթ է ամեն ինչ։

Վարդն իր աչքերը կգոցե մութին.
Ծառերն են կեցեր լո՛ւռ, բարկատարա՛ծ.
Նոճին իր գլուխն է վեր կարկաուած.
Լույսեր կ՚արյունին ծառերեն անդին։

Ահա կբնանա բնությունն համակ.
Կյանքը դադրեցավ. թռչուն մը միայնակ
Միս միայնակ— ինչո՞ւ— կ՚երգե տրտմունակ։

Դիշերային այս լռության մեջ խորին,
Իր սիրաբուխս երգերն սրտես կրթնին,
Ու մինակ-մինակ— ես կու լամ լռին...

ԳԻՇԵՐՆ ԻՋԱՎ

Դիշերն իջավ անամպ, անհուն,
Բյուր բյուրեղն ի՞նչ նուրբ անուն
Տալ անուրջի այս սուրբ պահուն
— Ա՜խ, ապրելո՜ւ երջանկություն...

Կ'անէանա նոսին հեռակա.
Լիճն երազ մ'է, կա ու չկա.
Ջուրի շշունջն է լոկ վրկա,
— Շշնջելո՜ւ երջանկություն...

Վերն հազար աստղ, վարն հազար լույս,
Կիսաստվերին մեջ հոգեհույզ
Կխոսակցին քար, վրտակ, բույս.
— Ա՜խ, իրերո՜ւ երջանկություն...

Ու կձայնեն մատուռն հնտակի
— Սա ծերունի ծառերուն տակ,
Այս քաղցրության մեջ բովանդակ
Քարանալո՜ւ երջանկություն...

Լոզան

ՑՆԾՈՒԻՆ ՄԱՀ

— Քերթողն ըսավ.— «Անո՜ւրջ վրտակ,»
Շյուղերու տակ, ճյուղերու տակ
Ո՞ւր կվազես անընդատակ...

Վարդեր կու լան ջուրիդ վերև,
Սեղեր կու տան քեզ բյուր բարև,
Քե՞զ կկանչեն ծաղիկ, տերև...

Լուսնակի ցոլքը ծոցդ առած,
Դաշտերու մեջ լայնատարած
Մ՚որ կվազես դու շվարած...

Կյանքդ արդեն կարճ է, ա՛յ վրտակ,
Մի՛, մի՛ վազեր, ծովն անհատակ
Պիտի թաղն քեզ այլաց տակ...

Վտակն հծծեց.— «Թո՛ղ անդադրում
Վազեն ջուրերս. մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում։

Թո՛ղ, որ երգեմ լույսնումութին.
Ի՞նչ փույթ թե մահն է քայլ մ՚անդին,
Ես Սիրահար եմ մարմանդին...

Ու մինչ քերթողը կ՚երազեր՝
Լալո՞վ, վրտակը եռուզեռ
Երգով իր Մահը կվազեր...

ՀԱՅ ՈՐԲԸ

Անտուն, անպաշտպան, մերկ ես, որբիկ ճան.
— Մութն ինձ պատմուճան։

Մերկը սովահար կ՚իյնան ժամն ժամ.
— Արյո՞ւն կ՚որոճամ։

Աստվածդ իսկ մատրան մեջն է խողխողված.
— Վրե՞ժն ինձ Աստված։

ԵՐԵՔ ԶԻԱՎՈՐՆԵՐ.

Դաշտեն երեք ձիավորներ
Անցան երեք մրցորդի պես.
Առաջինը սև ձի մ՚ուներ
Ու մութ շարժում մը կ՚ըներ վեր։

Դաշտեն երեք ձիավորներ
Անցան. երկրորդը կինդար,
Ան կույս կարմիր նժույգ մ'ուներ
Որուն պայտեն վարդ կպոռթկար։

Դաշտեն երեք ձիավորներ
Անցան. երրորդը սպիտակ
Ե՜ր ձի մ'ուներ, ճերմակ ոսկրեր
Կջարդվեին իր պայտին տակ...

Սև ձին Մեղքն է, մյուսը Սերն է,
Որի վրա ուզես հեծիր,
Ճերմակ ե՜ր ձին քեզ կրոնե...
Ե՜ր ձին Մահն է որ հեգնեցիր...

ԱՐԳԱՍԱՎՈՐՈՒՄ

Մառախուղի առավոտով, ե՜ր ձիերը կքաշեն,
Դանդաղ, անիվը չի ճռռար ձյունին վրա։ Միայն շեն
Խարազա՜նն է որ կխոսի թաց ոգերու մռայլ սուգին,
Ու կ'երկարի ճամբան, մինակ՝ անհորիզո՜ն, ահագի՜ն։

Ինքնասուզված, նախատիպար այդ կառքին մեջ գյուղաշեն,
Ես կդիտեմ սառած ձյունը կախված իրենց լայն բաշեն։
Ե՜ր, կքաշեն։ Խեղճ ամոլը։ Աջն Արուն է, ձախն էգին,
Խորշոմ ծաղիկը կ'երևա, պուչին շարժքեն, ցավագին...

Հալածվա՜ծ զույգ։ Ու կխորհիմ թե այդ երկուքը միայն.
Մշտնջենական Տառապանքն է զոր կտանին լռելյայն,
Եվ թե մեկը մյուսին բավ է՝ խեղճ բնազդի մը հլու՝
Տառապագին սերունդի մը ամբողջ սերմը դնելու...

Այսպես թշվառ արքայափառ մտրակի մը ներքև շեն,
Հավիտյանին Անեծքն իրենց Արգանդին մեջ ախտաշեն,
Մառախուղի առավոտով, ե՜ր, ձիերը կքաշեն...

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՀԵԳՆՈՒԹՅՈՒՆ

Դերի տարվող Դյուցազնի պես՝ ահավո՞ր ու հսկա՞
Ես կբալե՞մ հեգնելո՞վ... Հոգի՛ս լոկ ցա՛վքս կ'զգա.
Մո՞ւթ ներսիդիս անդաստում վերելքներով կ'ողողի.
Մինչ շանդան շղթաս շե՛շտ կրկապե՛ ոտքս հոգի...

Հոյա՛, ո՞վ է այս ստվերն՝ հորիզոնի՞ն հեռակա,
Թշվառությո՛ւնն է՝ ժժգո՛ւն տոնս, որ գնալ ինձ կու գա,
Մրոտ մեջքս դե՛ռ չ'երազված պայքարներով է հրդի.
Ու բնաբ իմ ձեռքի՛ս մեջ հե՛գ խաղալիք մ'է տրդի...

Մոլորված մե՛ծ Անուրջն եմ, ես հի՛ն Աստվածն եմ ինկած,
Ա՜խ, ինչ ցավեր ապրելու զոր ո՛չ որի չեմ ըսած.
Ու ամեն բան հեգնելով նույնիսկ Ցավին կրխնդամ...

Պատատատուն բեհեղով ես եմ Արքա՛ս, ես փարթամ,
Ու Աբքայիս Հոգի՛ն եմ՝ իմ սկեպտիկ խինդով լա՛ն,
Միայն Արքա ու Հոգիս գլուխ գլխի՝ մերթ կուլան։

1913

ԱՐԵՎԵԼՔ

Սկյուտարի ծովահայաց կիտերեն
Մեկուն վրա խորասուզված տխրորե՛ն,
Քաղքը ֆեյնի մը պես կ'ընդեմ արևուն
Խենթեցընող վերջին ցոլքե՛ր անհուն։

Ուղի՛ղ դեմքս, բլուրին վրա, քայլ մ'անդին,
Էշ մը ծերուկ, թաղած ծի՛լը մարմանդին,
Կոշկոռած վի՛զը կ'երկարե դալարո՛ւն
Մարմարայի իրիկնանո՛ւշ բոցերուն...

Կնայիմ նույնը ստվերներու դեղեցիկ,
Վոսփորին վրա բյուր կայմերու պացիկ,
Հեռուի հրաշեկ երկինքներուն բոցահալ.
Կնայիմ ինձ, ու կնայիմ իրեն ալ...

Այդ է՛շը որ կյանքը կ՚ըմպե՞ն հան հրլո՞ւ,
Որ կլան, բայց շատ վարժ էր դուալո՞ւ
— Ի՞նչ շնորհապարտ եմ ես իրեն այս մասին—,
Որուն համար փիլիսոփա ալ ըսին...

Այդ է՛շը, այդ ծոմոած ճի՛ռը համեստ,
Մտրակվելե թուլցած այդ մորթն հաստաքեստ,
Դերասանի այդ կեցվածքը բլրին վրա,
Ինքնասուզվա՞ծ պոչն որ հագի՞վ կ՚երերա...

Այդ է՛շն ահա, այդ պարզ որդին բնության,
Հորիզոնվա՞ծ, շրջանակված հավիտյա՞ն,
Անվի՛ջ, անհո՛ն վերջալույսով մը միայն,

— Արևելքի պատմությունն է լռելյայն...

ՇԱՆ ՀՈԳԻ

Այս իրիկուն Բրթի-Շանի կեղծ-զվարթ
Սրճարանի շարքերուն մեջ, ես հանդա՞ր
Օդի ո՛մպրս կ՚ըմպեի քիչ առ քիչ,
Վերջալույսի ճաճանչներուն դեմ մոգիչ։

Ներսը, թուղթե ճոխ բեմի մը վրա սո՛ւտ,
Կղմնտրագույն Հունգարուհի մը մտո՛ւտ,
Շոյված հաղար թուրք աչքերե մարդակեր՝
Իր զույգ թոքերը պատռելու չափ կ՚երգեր։

Դուրսը վազող հոսանքին մեջ եռուզեռ,
Պոլսո խղճուկ մեր շուներուն դասը ծե՛ր,
Սալահատակ, գառիվերին վրա, անշա՛րժ,
Կգինովնար,— ո՛վ սենսարան սրտաշարժ...

Կբխորհեի իրենց մորթին աննշան.
Կբխորհեի Համարթիներն պաշտված շան՝
Զոր հոչակեց Վիեննի՝ ծախված վատ մը նենգ...
Կխորհեի ա՛յն շուներուն որ մե՛նք ենք...

Հանկարծ սլացան տնոնք շանթի մը հանգույն.
Ու տեսա որ բարակ իշխան մը ժոգույն
Եվրոպային բերած շունն իր գեղատի
Հաներ էր քիչ մը երիկվան պտույտի...

Ու մինչ ամենքս հիացումո՛վ, նախանձո՛վ
Կրդիտեինք իշխանն աչքո՛վ, ակնոցո՛վ,
Մեր ծեր շուներն՝ իր ազնիվ շունը գեղերի
Հոշոտելու կըչանային ամեն կերպ։

— Ես որքան լավ հասկցա քեզ, Շա՛ն հոգի...
Մինչ մենք կոտրել կչանայինք երկուքի
Բարեելու այդ մակարույծը շքեղ,
Դուն քու ակռադ ցույց կու տայիր խելահե՛ղ։

Ա՛խ, Շան հոգի, դու չես գիտեր որ մարդիկ
Աշխարհ կու գան ազնվական կամ ռամիկ,
Եվ թե ազնիվ ժառանգություն մը որքան
Կրնա տալ ավելի քան հավիտյան...

Միա՛յն գիտես դուն խեղճությունդ անանուն,
Գիտես հոգուդ ատելությունը անհո՛ն,
Գիտես բա՛ղցը, ձյո՛ւնը, ծե՛ծը վայրենի,
Յոթազավակ հղիությունդ ալ մայրենի...

Ու չե՛ս կրնար դուն հանդուրժել որ քեզ պես
Պուշավոր շո՛ւն մը խրոխտա՛ր քովեդ վե՛ս,
Ու ավելի՛ լավ ապրեր քան միամիտ,
Ո՛ևէ խեղճ քաղաքացի մը թաղիդ...

1910

ԱՅՍ ԴԱՆԱԿՈՐ

Մարդը կոթնեցավ իր կընոջ ուսին.
Այսպես երկուքն ալ լացին միասին։
Գետնափոր, տեսակ մը նկուղ էր լայն,
Գետնափո՛ր, ավա՛ղ, խլուրդներ միայն

Չէ՞ որ կ՚ապրին Թաց նրկուղներու տակ...
Գետնի վրա հարդի տեսակ մ՚այլանդակ
Անկողնի վրա, լո՞ւռ, հրեշտակայի՞ն,
Երեք փոքրիկներ կքնանային,
Հարդին վրա, պզտիկ քույրն ալ իրենց քով
Կնոջեր՝ մահվան ճերմակ պատանքով...

Ո՞վ ըսեր է որ կյանքը երազ մ՚է,
Ուր սերն իր կապույտ բույրը կկազմե։
Ո՞վ ըսեր է որ Ա՛յն որ կուտա բույր
Խոպան դաշտերու ծաղկին սխրաթույր,
Ա՛յն որ ձմեռին մեջ սրգամոռնչ
Ապաստան կուտա գայլին անտերունչ,
Ա՛յն որ հունտ կուտա նոթի թռչունին,
Ա՛յն սաեղծեր է՝ անոնց որ չունին՝
Երեներն առատ, հասկերը բեղուն,
Արփավե՞տ գիներ, մեղրավե՞տ մեղուն...

Ավա՜ղ, այն ամեն բաներն ապաքին
Որ շնորհվեցան մեզի երկինքեն՝
Մարդկային օրենքն արգիլեց մարդուն...
Ու մարդն անոթի՞, ծարավա՞ծ, արթո՞ւն,
Երջանկության հո՞րդ գետին քով՝ հրլո՞ւ
Կրմեռնի առանց ումպ մը ըմպելո՞ւ...
Մի քանիներո՞ւ համար են միայն
Ոսկեգեղ հասկի ծո՞ւփ ծովերը լայն,
Լեռներու երեն, անտառի թռչունն՝
Դե՞ռ իսկ չի ծընած... Ո՞վ գիտե ինչո՞ւն։

Դուրսը ցուրտ գիշե՛ր կկողկողի։
Թաց նկուղի տակ լամբար մը հողի
Կլուսավորե առաստաղը ցած,
Վտանգին առջև սեղմվա՛ծ, քարացա՛ծ,
Ամոլը ծերուկ կ՚արտասվե դողդոջ...
Իրենց դեռ ծաղի՛կ գավակին բողբոջ,
Այսպես անսվաղ, ցրտահա՛ր, սառա՛ծ,
Մահը գիտելի վերջ բազկատարա՛ծ,
Առանց կարենալ բան մը ընելու,
Ի՞նչ լավ է այսպես լալ՝ բաղդին հրլո՞ւ...

— Մա՜հ... Ի՜նչ տարբեր մահը հարուստ տղուն։
Ան երազ մ'է լո՜ւռ ցնծումով բեղուն,
Ան կյանքին միա՛յն ճանչցավ նրբագույն
Թեհեզները վա՜ռ, ժանյակը գո՜ւյն գո՜ւյն,
Մանյակներն ոսկի, ընծաներն առատ,
Թույլ իրանին նո՜ւրբ շղարշ մանարատ...
Չգիտցավ որ Թանկ քարերը վզին
Հաղար խեղճերու մահով կդիզվին...
Ու մեռավ շա՜տ բաղդ երգի մը պես,
Հծծելով միայն՝ «Ի՜նչ լավ է սլապես...»

Մինչդեռ այս փոքրիկ մեռելն ապրատին
Ճանչցավ կյանքն իր խո՜ւլ ցավին մեջ հետին.
Ո՛չ ծաղիկ, ո՛չ խինդ, ո՛չ ժպիտ, ո՛չ երգ.
Կյանքը վի՜շտ կարծեց, աշխարհքը՝ մի վի՜րք...
— Ա՜յ հիմար փոքրիկ, կյանքը խուլական
Հանդես է, քանի՜ երջանիկներ կա՜ն...
Սակայն դու մեռար ու հիմա հանգչի՜...
Պատանք մը ճերմակ՝ երկու ափ քարշի՜
Քու նիհար մարմնիդ համար շա՜տ է լայն...
— Ողջունեցե՛ք, Նոր-Վաղվան սերմն է այն...

Գլխուն քով, կարմիր կանթեղը հոգի՝
Պատանքն իր աղքատ լույսով կ'ողողի։
Ճերմակ մա՜հն է այդ. մա՜հը անսվա՜ղ...
Նույն հարդին վրա են մյուսներն ալ խաղա՜ղ.
Սանքը քունն իրենց աչքը կգոցե.
Կ'երազե՜ն. ու ա՜լ չ'արթննան գուցե...
Դուրսը ուժգնորեն ոռնացող քամին
Դուռը կզարնե. զոփակներեն մին
Կ'աղերսե քնա՜ծ շրթներով կիսաբաց՝
«Հայրիկըս բեռա՜վ պատատիկ մը ճաց...»

Հա՜ց... Ո՜վ ողորմուկ երեխա սոված՜ծ,
Հաց չկա՛. այսպե՛ս է տեղրինված...
Դու դեռ շատ փոքր ես, դեռ չես հասկընար
Որ հարուստն ունի իրավո՛ւնք, հընա՜ր
Քեզ մեռցնելու ծանրածանր մահով,

Օրենքն է իրեն պաշտպան ապահո՞վ...
Միայն փոքր ուղեղդ բզգա շվարուն
Թե ինքը իրավունք ուներ արեուն
Տակ բողբոջելու, թևերո՞ւս, և կատղա՞ծ,
Կփղձկի վճիտ հոգիդ. «Մայրի՞կ, Հա՞ց...»

Հա՞ց... Աշխատելեն հայրդ գարձավ ծեր,
Հացի խնդիրն ի՞նքն ալ չէ՞ հասկրցեր։
Ինչո՞ւ ոմանք տեր են, ոմանք դերի...
Թե Բաղդը կո՞ւյր մ'է որ կրդեգերի,
Ինչո՞ւ օր մ'իրենց դուռին չի զարկավ...
Թե մարդը կավ մ'է, այս ի՞նչ շունչ, ի՞նչ կավ...
Թե աշխարհ՝ անծիր երկիր մ'է անհուն՝
Ինչո՞ւ ոմանք քա՞ր մը չունին գլխուն...
Թե ամեն տարի հունձքը կ'ողողի՝
Ինչո՞ւ իրենց հա՞ց մը չիկա հողի...

Գործարաններու դուռները փա՞կ են
Ամիս մ'է արդեն։ Հազարը մեկեն
Բանվորներն ամբողջ նետեր են փողոց,
Ամենքն ալ հայրեր մի քանի տղոց։
— Մատուցումը շա՞տ, խնդրանքներ չիկան,
Կ'ըսեն, ապրանքով լեցվեր է շուկան.
Գործի մե՞ծ օրենքն է անտեսավար.—
Այդ լա՞վ, բայց նոթի մեռնիլն է դժվար։
Թե բանվորն այնքա՞ն արտադրեր է շատ,
Ինչո՞ւ հայ չունի բանվորն անաշխատ...

Մարդկությո՞ւն, պատի՞վ... թմբուկներ հնչո՞ւն,
Աչքդ գոց հավատա, մի փնտռեր ինչո՞ւն։
Մուրալն ամոթ է, գողնալը ոճիր,
Իսկ թե խելոք ես՝ ո՞չ որ չի հաճիր
Հավատալ որ տղաղ մեռավ անոթի,
Կինդա վրադ առանց ամոթի...
— Սերը կոթներ է իր կնոջ ուսին.
Աչքին արցունքներն անդո՞ւլ կհոսին,
Կմթնա՞ քիչ քիչ ներսիդին մաքո՞ւր,
Պարզ հոգին ինչե՞ր կծնի թաքթաքուր...

Բայց ահա տղան նորեն լացավ «Հա՜ց»։
Հա՜ց... Մայրը ոտքի նետվեցավ կատղած,
Հին դանակ մ'էրկան տվավ այլայլվա՜ծ,
«Հաց ճարե,— ասավ,— հետդ ալա ասուված...»
— Էրիկը գնաց։ Դոռուցքը հովուն
Կարծես հարց կու տար իրեն խռովուն՝
«Միթե ոնրագո՞ռծ... միթե բարեբա՞ր...»
Դանակը ձեռքին զարնելո՛ւ կ'երթար,
Փրկելու համար անոթի տղան...
— Բանվո՛ր, այդ ճամբան կ'երթա կախաղան...

— Ի՞նչ կ'ընեն երբ ա՜զգ մը մնա նոթի.
Ձեռքեն բահ ու բրիչ կենան մեկդի,
Կ'երթա հաղորդվիլ մատուռ մ'անխռով,
Կղինվի տեգով, կղինվի սուրով,
Ու կ'երթա ամեն միջոցներով վատ
Ազգի մը կռիվ մղել հուսահատ...
Թե հաղթվեցավ՝ ավա՜ղ է իրեն,
Իսկ եթե հաղթեց՝ աշխարհ համորեն
Գովեստի երգեր կ'երգե ամեն օր,
Պատմությունն ոսկի է՛ջ կուտա անոր...

Քամին կգոռա, ձյունները կթռչին.
Բանվորը կանգնած շենքի մը առջին
Երգը կ'ունկնդրե— ցուրտեն երերուն—
Գործարաններու բոլոր տերերուն...
Մատուցումը շա՜տ, իսկ խնդրանքը քիչ...
Որո՞ւ փույթ. կ'ուտեն, կ'արձակեն քրքիջ...
Երբ դուրսը ձյուն է, գինվո շոգիով
Ի՞նչ լավ է ուրիշ՝ քանի մ'հոգիով...
Գործ չի՜ կա, ի նչ փույթ, դա՜ս մ'է անխընա։
Որ բանվորը քի՛չ մը խելոք մընա...

Բանվորը կուլա. կգոռա քամին։
Ահա՜ դուրս ելավ այդ տերերեն մին.
Աստվա՜ծ, իր Պե՜տն է... Ձեռքը քարացած,
Աչերը կարմիր, բանվորը գոռաց՝
«Գրուբյո՜ւն, Պարոն, ընտանյաց հա՜յր եմ.

Զզո՜ւյշ մերժելու, Ձեր հոգին կ'այրե՞մ...»
Հարուստը նետեց ինչ որ կար իր վրան,
Ժամացույց, շղթա, դրամ, թղթարան։
Երեկ տեր, հիմա ստրուկ դողդոջուն,
Կփախեր ինչպես բուն մը՝ թռչո՞ւն...

Բանվորը ապշա՞ծ նայեցավ հեռո՛ւն,
Իր հարուստ տիրոջ վագրին շվարուն,
Նայեցավ բարի ձեռքերուն ծերուկ,
Նայեցավ հացի դանակին մանրուկ,
Նայեցավ ոսկվույն, նայեցավ իրեն,
Փղձկեցավ հոգին, հուսահատորե՜ն
Զայնը երկարեց ցայգին մեջ տխուր՝
«Ո՛վ հարո՛ւստ, հարո՛ւստ, եկո՛ւր, ա՛ռ եկո՛ւր...»
Բայց տերն ավելի արագ կ'երթար լուռ.
Ու կրկրկներ ծերը. «Եկո՛ւր, եկո՛ւր...»

— Ո՞վ բարի բանվոր, ծե՞ր բարի բանվոր,
Թե այնքա՜ն անպետ ես մարդկության որ
Ճարելու համար ապրուստ մը հետին
Կ'ապավինիս վատ դանակիդ հետին...
Թե սեփական կյա՜նքդ՝ իժի մը պես՝
Ուրիշի մահով պիտ՝ ապահովես...
Թե պիտի դավես մութին մեջ լռելյայն՝
Հոգ չէ՛ թե դավկիդ համար ըլլա այն...
Դե՛հ, գնա մեռի՛ր,— մեռե՛ր են արդեն,
Մարդկության ի՞նչ խեր մարդասպան մարդե՛ն։

Թե չե՛ս ուզեր որ քու դանդաղ մահով
Տերդ իրեն գանձե՛ր դիպե ապահով...
Թե անպե՛տ, թե վա՛տ, թե խե՛ղճ, ցավագին,
Դուն դեռ տե՛րն ես քու սեպհական կյանքին...
Թե դավակներուդ չկըրցար ցույց տալ
Ապրիլ ատելո՛վ, կյանքին դեմ կուրծք տալ...
Դանակդ աղիքիդ խոթե, ու դարձուր.
Իրենց քաջարար մեռնիլ սորվեցուր,
Մեռնի՛լ անտեսված, անճիշ, մթին, վե՛ս...
— Աչքերը գոցեց... Ու ըրավ ա՛յսպիսու

Տարինե՛ր անցան հիմա կդիտեմ
Լուռ սենյակիս մեջ առկախված իմ դեմ
Այս համեստ դանակն արդեն ժանգոտած
Որ ձմեռ առաջ արյունոտվեցավ,
Ես գիտեր էի անհունագուրգուրանքով
Զյունին մեջ, մեռա՞ծ գործավորին քով...
Քարացա այդտեղ, պոռթկացի՞ հոգիս,
Ու զոդզոդվեցավ տարաշրջունքիս
Խորհրդանի՛շն այդ մութին մեջ լռելյայն
Տառապո՛ղ, մեռնո՛ղ, այլ քա՛ջ մարդկության...

Ու քանի՞ անգամ բուռաջիդ լացիդ
Ո՞վ բարի, ժանգո՞տ դանակիդ հացիդ
Դո՛ն վերջին պաշտպան գրկված մարդուն
Դո՛ն, հավետ լռիկ այլ հավետ արթուն.
Դո՛ն, ա՛յնքան համեստ ուսո՛ցնքան խեղճ
Եվ որ կրնայիր շարժումո՛վ մը լոկ
Արյա՛ն վրա հիմնել Օրենքդ ապագա,
Բայց կրսպասես որ խաղաղության մեջ գաղ
Արդարության մեջ գա, գա՛ տարվե՛ տարին
Զրկված մարդկության երազը բարին...

1909, Լոզան

ԵՂՈՎԱՅԻՆ ԱՐՅՈՒՆՔԸ

Երբ բոլորն ալ ուժին համարն այդ օրվան
Ասավածատուր իրենց զատ զատ պաշտոնին,
Ու երբ Տերանց Տերը հզոր Եհովան
Կրժպտեր գոհ— հասավ Խորշակ-Թագուհին

Շեկ մազերուն ծոմ մը ոնի բոցահեր,
Կուրծքին վահան մը հրաշեկ արուցրին
Դեհեներ կար աջքերուն խորն անվեհեր.
Ու իր շունչին տորնառին մեջ վայրի

Եհովայի լանջատոգանն ունկնդիր
Ու երբ նշան բրավ երկնիցս արքանմեծ

Խորշակ-դշխույն ճակատն հակեց ծնրադիր,
Ու միակերպ ու անայլայլ ան պատմեց.

— «Ամեն տեղ կյանք տեսա, խայտանք ու ժպիտ,
Սարին վերև, ծործորին մեջ, ակին քով,
Շուշան, սմբուլ կըխնդային միամիտ,
Ու լեռակներըկ'երգեին խայտանքով։

Ու թիթեռնիկ, միջատ, ծաղիկ ու թռչուն
Կծծեին երանություն մ'անհրնար.
(Փո՞ւթն էր իրենց Տիկզերքին մեծ ինչո՞ւն),
Երանություն, զոր մենք դեռ հոս չենք ճանչնար...

Ու լսեցի, որ վայրի վարդը կ'ըսեր.
«Ի՞նչ աղվոր է...» կ'ըսեր վարդը հովերուն.
«Ի՞նչ աղվոր է...» կըկրկներ հովն հեշտասեր՝
Փայփայելով լայն մրգաստանն օթոյուն։

Սուրա՜ցի դաշտ, մագլցելու սարն ի վեր։
Քայլերուն տակ հեծեց-արուան հետնագույն։
Մղրիտներուն երգը լռեց կարևեր.
Մոխի՜ր տեղաց ծաղիկներու վրա գույն-գույն։

Ու դաշտերու անփառունակ շյուղերեն
Մինչև հրպարտ էջըլվեյսները լեռան,
Իրենց ցողին վրա խամրեցան տրտմորեն,
Դողդողացին ու համբույրիս-տակ մեռան։

Օդին մեջ հոտն էր խարակվող ծիլերուն...
Ու լսեցի, որ «խեղճ վարդեր...» կ'հեծծեր
Հետին թռչունն, որ կփախեր շվարուն...
Ես կիրեցի. Քու հրամանդ այս էր...»

• • •

Եհովան մո՜ւթ ժըպիտ մ'ըրավ անզգա՜ծ...
Ու երբոր դուրս ելան բոլորն ալ հրլու,
Իր հոգին դեռ անծանոթ պետք մը զգաց.
Նվաստացուցի՜չ, ահռելի՜ պետքը լալու...

1909

ԲԱՍԹԵԼ

Հոգիս նիհար նրկար մրն է բասթելի,
Ուր ոչինչ կա աչքի խոսող, ոչինչ վառ
Ուր ամեն ինչ մշուշի մեջ կհալի։

Կապույտ սարի մը կատարին ամայի՝
Բաղեղապատ խարխուլ գմբեթն հավատքիս
Տարակույսի անդունդն ի վար կհայի։

Բլուրն ի վար, բլուրն ի վեր՝ իմ կյանքիս
Խոպան ճամբա՛ն է, որ կ՚երթա մենավոր...
Բասթելի մութ դաշտանկար մ՚է հոգիս։

Ու լերկ ճամբուն եզերքն ի վար իմ մոլոր
Բազիններուս ու մեղրեբուս, վերքերուս
Կրանիթե մահարձաններն են բոլոր։

Պուրակ, առու իր դաշտերուն մեջ չրկան,
Իր ձորերուն մեջ ո՛չ լեռակ, ոչ նարկիս,
Որ քաղեի իմ սիրտիս քո՛ւյր աղջկան։

Մոռցված ա՛ստ մը ջուրի վրա հեռավոր
Աչքի հեռու, սեղերուն մեջ կսահի
Անուրջներուս վայրի կարապը աղվոր...

Ու այս բոլո՛ր կդողա, կհալի,
Մշուշի մը տարտամութեանը մեջ ուր
Լացող դեմքի մ՚սոսվերը կա պաշտելի...

Հոգիս նիհար նրկար մրն է բասթելի։

Լոզան

ՄԻՆԱԿ ՄԱՐԴԸ

Հորիզոններու վրա հեռավոր
Խավարը իջավ, քալե՛ ուղևոր
Խավարը իջավ, քու բույնդ ո՞ւր է որ,
— Հորիզոններու վրրա հեռավոր...

Հորիզոններու վրրա հեռավոր
Խավարը իջավ. մանո՛ւկ, ալեո՛ր,
Քաշվեր են իրենց բույնին մեջ աղվոր,
Խավարը իջավ, քու բույնդ ո՞ւր է որ...

Մինա՞կ ես, տուն-տեղ չունի՞ս հեռավոր.
Մենությունն մահվա՞ն չափ է ահավոր.
Խավարը իջավ, գլուխդ ալեոր
Ձղջիկներ պիտի հրպին սրգավոր...

Կտեսնե՞ս լույսեր խավարին մեջեն,
Հոն սիրող զույգեր գիրա՞ր կշնչեն.
Վա՞խ, գո՛ւն ալ չունի՞ս լույս մ' ուր բե՛զ կանչեն
Հորիզոններո՛ւ վրրա հեռավոր...

ԱՀԱՋԱՆԴԵՐԸ

Արյունի գիծե՛ր, պատկերնե՛ր, հուշե՛ր...
Նորեն այս գիշեր,— տանջանքի գիշեր,—
Հիվանդ հոգիիս պատերուն մեջեն
Ղողանջի խավար երգեր կհնչեն։

Ահազանգերն են, ուր իրենց վայրի
Ու ահեղ ու մութ լալյունն արույրի
Որ եղե՛ռնորեն, մահագո՛ւժորեն,
Տենդոտ գանկիս տակ կգոռան նորեն։

Ղողանջը... Ողբի, աղեխարշ լալու,
Ճիչի, անե՛ծքի— վայրագ ալեյու—
Ու հառաչներու մեջեն խելահեղ
Սարսափի անհո՛ւն ղողանջն է ահեղ։

Դիածածկ կարմի՛ր, կարմի՛ր դաշտերեն,
Դուք չե՞ք իմանար դավաճանորե՛ն
Մեղմով հափրացած շան վոհմակներու
Վերջալույսին դեմ ոռնումն ահարկու...

Ու չե՞ք տեսներ, ա՜խ հեռուն հեռու
Հրդեհով կարմիր հորիզոններու
Վրան տիրարա՜ր, ու աստվածարա՜ր
Իշխող գմբեթներ մահարարքառ։

Կարմիր կտեսնեն աչքերս նորեն...
Վերջին հառաչներ կուրծքերու խորեն.
Մեռե՛լ, հոգեա՜ր, կուլա կուլա, քով քովի
Կոկռացող սև խումբեր ագռավի...

Ահազանգերն են, կ՚ունկնդրեմ տրտում.
Ահազանգե՛ր, անբա՜ղ, անպատո՜ւմ,
Որ հիվանդ հոգվույս պատերուն մեջեն
Նորեն այս գիշեր կ՚ուռին, կհնչեն...

ԲԱՆՏԻՆ ՄԵՋ

Թուրքական խուլ աշխարհի մի մութ ճամբուն վրա կորա՜ծ,
Մոլորած ծե՛ր գայլի պես, կամ տղու պես խաշնարա՜ծ,
Որ դիշերով կորսվեր է ծործորին մեջ սարի՜,
Ա՜յպես հոգվույս ապաղակն հեռուն քե՜զ կ՚երկարի...

Դո՜ւն ադոթքով ու խունկով սնած հոգի լանկյա՜ն,
Դո՜ւն երազի միսթիք քուրմ, դո՜ւն հին սկիհ սրբության,
Դո՜ւն սիրո խաչ՝ ակամա այլակերպված նիզակի,
Խաղաղության ախոյա՜ն՝ կազմերուդ տակ ռազմիկի...

Գուցե այդե՞ր կ՚երազես, քու հորիզոնդ խո՜ւց մ՚է քա՜ր...
Վեհիտ աչերդ կիրջին, ու զայրույթիդ խկվազա՜ր
Բանաստեղծի նիհար ձեռքդ կգարնե պատերուն...
Ո՜չ մեկ շշուկ, եթե ոչ խեղճ արձագանքդ շվարուն...

Ու կդիտես բախտիդ ծառը, որ մութիդ մեջ կ՚ամեր։
Հարցեր կուտաս դուն իդա՜ր անոր թե ե՞րբ կհասնի
Վանմությունը նորին, փոքրիկ Աստված, Կայսրը Զար,
Ներում շնորհել ոճրապարտ մեղքերուդ զոր չճանցար...

Ու կդիտես դողալով կարմիր արյո՞ւնը թռչիդ,
Կարմիր արյո՞ւնը թռչիդ, ու կփղձկի խե՜ղճ հոգիդ...
Ոչ մեկ ընկեր մաներիմ, որ քեզ լսեր, բայց գուցե՞
Ոճրագործ մ՚որ ուրիշ տակ հուսկ իր աչերն կդոցե...

Պիտի կրկնե՞նք, ո՞վ ընկեր, քու կենդանի դամբանիդ,
Այն ռազմական բարբառները քաղցրորեն միտմիտ,
Թե երկաթի շղթաներ կկոտրտվին ահարեկ,
Արդարությունն է հաղթող, չի թաղվիր լույսը երբեք...

Ու ահավոր, ու վճիտ Արշալույսով մ՚ անխնա,
Երբոր շեփորը հնչե ու ժողովուրդն արթնանա,
Քո՛ւ արյունով, քո՛ւ մատով, քո՛ւ գնտանիդ քարին վրա,
Հուսկ «Ասա-հանգչին» կդրես դղրդացող բռնությանս...

Հո՛ւսկ «Ասա-հանգչին» թագերուն, մականներուն, դահերուն...
Հո՛ւսկ «Ասա-հանգչին» անոնց, որ Աստվածներու պես, հեռո՞ն
Ամբոխներու կ՚արտոնեն մա՛հը ճիվաղ հեշտանքով...
Հո՛ւսկ «Ասա-հանգչին» զոր գուցե կնքես կյանքիդ կնիքով...

ՍԵՐԸ

Սերը՝ գիտցե՛ք, անուշ չրի լոգանք է,
Առանց սիրո մարդ էակը նողկանք է.
Շրթունքներդ երբ դպցնես սիրտի՝ գրոներդ փակե.
Դուրս կվիժին՝ ոչինչ նվազ ղերծ փորձանքեն։

Առանց բեզի գառն էր տոկալ պայքարներուն դյուր կյանքին,
Քեզմով կ՚ապրին զուլգ ամոլները թանկագին.
Արևն ես դու, շիտակ լուսնին գիշերային,
Մեր սրտերը կկայծոտես հորդ լույսով մը անքնին։

Անսեր սիրտ մը պատառոտան է դատարկ սրտի.
Դատարկ սիրտ մը միայն քեզմով կդինվի.
Սիրո ժամուն բողբոջ կ՚առնեն սիրուն հասկեր,
Երազանքներ, բոսոր շրթներ, կարմիր այտեր վարդենի։

ՀԱՅ ՁԱՏԻԿԸ

(Ավանդավեպ)

Զյունի պես ճերմակ ծերունի մը կար,
Նոյի պես ծերուկ ծերունի մը կար,
Հասակը կոտրուկ, տակավ կտրկար .
Դարերուն. ու մուրճն իր ձեռքին տըկար՝
Կիրակի առն-օր ցավեն խելագար՝
Դարավոր սալին վրա կտքար...
Զյունի պես ճերմակ ծերունի մը կար։

Գեղջուկներ բարի՜, գեղջուկներ բոլոր
Գեղջուկներ սարի՜, խեղճուկներ բոլոր,
Վա՜ղ առտուանցով, ճամբուն վրա մոլոր
Երբ կլսեին կիրակի առն-օր
Մուրճի ձայնն՝ զանգի պես ավետավո՜ր...
Գեղջուկներ բարի՜, գեղջուկներ բոլոր։

Կ՚ըսեին իրար «Անեծքն է սարին...»
Չի սարն իր անե՜ծքն ուներ ողջ տարին...
— Երբ Արտավազդ որս գնաց անտառին
Անծանոթ ձեռքեր առին զայն տարին
Վե՜րն, հո՜նա, անհաս սեպը կատարին
Բոլոր միայն անգղերը լերկ կթառին...
— Կ՚ըսեին իրար «Անեծքն է սարին...»

* * *

Մերուներն երեք կարիճ ուներ վեհ,
Երեքն ալ խիզախ՝ երեք սարի պես։
Առաջինն ըսավ՝ «Հա՜յր, ինչո՞ւ այդպես
Դու տաժանագին սալըդ կծեծես...»
Հայրն ըսավ թե ի՛նչպես Մեծն Արտաշես
Նզովեց իր տան՝ «Թե դու յորս հեծցիս...»
Գնա՜ց ու չեկա՜վ Նոյի կռունկին պես։

Միւսն երեք գավակ ուներ անարման
Երեք բոցի պես։ Առաջնուն նման

Ըսավ երկրորդին՝ «Հո՛նա, անսահմա՞ն
Սարն ու հարալիզք միայն կու գան ման՝
Արամատդ կապված կա, ես իր շղթան
Կծեծեմ, այս է աստուծոց հրաման...»
— Գնա՛ց ու չեկա՞վ առաջնույն նման։

Մերունին երեք որդի ուներ մեծ
Երեք կայծի պես։ Արցունքը խմեց
Ու մյուսներուն պես՝ երրորդին պատմեց
Հի՞ն հի՞ն օրերու ոսկեփառքը մեծ,
Ցուցուց սուրբ նշխար մ՚որ սրտեն հանեց։
— Գնա՛, ան՛ս կ՚ապրի՞ դեռ Արքան հայածեծ...
Բայց որդյակը լո՛ւռ կուլար դառնահեծ։

Պատմեց աբքաներն, աստվածները հին.
Քաջերն երկնառաք Թորգոմի գահին,
Արքայն Արտաշես, Սաթեն Թագուհին,
Հայրը Արամազդ ու Միհր ամենին,
Անահիտն՝ հայու մա՛յր աստվածուհին։
Սուրբ ոսկորատին համբեց սուրբ հողին,
Արքայից, դիոց դամբաններ՚ն ալ հին։

Ան հավա՞տքն ուներ Մասիս սուրբ լերան,
Քաջերու օրրա՞ն, դիոց գերեզմա՞ն.
Ինք ծե՛ր, սարը ծե՛ր... Հոն դրկեց տղան,
«Գնա՛, հարցո՛ւր սարին, թեևրս հոգնեցան,
Մեծե՞մ դեռ շղթան մեր Սարկուեյան...»
Տղան երդվընցավ՝ «Սա՛ր, ջանիդ զուրպան»։
Ու գնա՛ց. նույի աղավնին էր ան...

Ան գնաց լայո՛վ, ան գնաց ցայգին,
Գնաց դարերով, բայց ա՜հ՚ կրկին
Եկեր է, խապրիկ բերեր ծերուկին,
Խանդով լեցուցեր ալեոր հոգին։
Ու ան կդարբնե... Բայց սարկագին
Շղթա չէ՛, գե՛նք է երկը ծերուկին...
Ջե՞ք լսեր միթե, կ՚երգեն ծեր ու կին։

Ավետիս բերավ Մասյաց աղավնի,
Մեկ՚ խապրիկ բերավ, ոստով ձիթենի...

Ձե՞ր քանի՞ դարերն երկրի ու երկնի,
Կ՚երկնեն մեր ազգաց ծովը ծիրանի,
Բոցերուն մեջեն կարմիր եղեգնի,
Վահա՞գն է. ծիրա՞ն ամեն թող հագնի...
ՉԱՏԻԿ է, քանի Ազգին, թող կանգնի։

1910

ԱՍՏՂԻ ՄԸ

Ամեն իրիկուն, արևն երբ չընաց,
Արյան մեջ կարծես՝ կուռզի դանդա՞ղ,
Ու սուլերի մեջ սարի կհնան,
Ես քեզ կնայիմ, ո՞վ Աստղ իրիկվան։

Չեմ գիտեր, ո՞վ Աստղ, անունդ ինչ է.
Դեռ ինծի ոչինչ չեն պատմած քեզի,
Գիտեմ միայն որ մանուկ հասակես,
Ո՞վ Աստղ իրիկվան, ես կնայիմ քեզ։

Մանուկ հասակես ինչ՞ էն կեան ես դողդոջ,
Անհունին մեջ նույն ժպիտը բոզբոջ։
Ինչ փույթ թե անդին դեռ բյո՞ւր աստղեր կան.
Ես քե՞զ կնայիմ, ո՞վ Աստղ իրիկվան։

Անոնք շատ բարձր են, անհաս, հավակնոտ,
Դուն վայն ես, մեզիմ հարիզոնին մոտ,
Մինա՞կդրդ, ուժգո՞ւն, ուժգո՞ւն, ոսկեգեղ։
Ո՞վ Աստղ իրիկվան, ես կնայիմ քեզ։

Դուն կաս ու չիկաս,— խարկանքը լույսին.
Դուն Հույսն ես հեռվի,— Հո՛ւյսը անհույսին...
Ու երբ արցունքոտ քիրքիս կհնան,
Ես քեզ կնայիմ, ո՞վ Աստղ իրիկվան։

Կյանքը երբ մ՚է քիչ... Ու ի՞նչ կյանք, Աստվա՞ծ.
Միշտ Հույսին հարած ու միշտ ալ խաբվա՞ծ...
— Մեր է սիրտքս, բայց աչերս սիրակեղ,
Ո՞վ Աստղ իրիկվան, դե՞ռ կնային քեզ...

1909, օդոստոս 20/սեպտեմբեր 3
Սիլիվրի

ՆՏԻՊՆԵՐ

ՄԵՂՔԸ

Զիֆքի-Մարաֆին

Նե և նաև Ու մութն այնքա՜ն տարփալոր
էր այդ իրիկուն. ու ա՜յնքան աղվոր
Կ'ոլորվեր երգը մոտիկ վրտակին...

Ու ա՜յնքան սիրող տենդ կար անմեկին
Շունչին մեջ գարնան գաղջ դիշերներու.
Ու կուգար երգը հեռուն հեռու...

Ու բյա՜ց ձայներու երգն հեքիաթունակ
Այնքա՜ն գինով էր, պագշուտ, արտմունակ
Այնպես կհևար արդանդը հողի...

Ու վի՜ղը կապույտ երազով հրդի
Եթերին հագա՜ր, հագա՜ր սաքիրն ալ
Ունեին այնպես շիթ մը սիրահաչ

Բնութիւնն այնպես միտք մ'ուներ թագուն.
Որ պատուհանին առաջքն անքուն,
Նե և Նա իրար նայեցան հուզված։

Ու ալ բնության դրդումեն մղված.
Կենդանիներու պես մթի՞ն, անբա՞ն,
Անխոսուկ իջան պարտեզին ճամբան...

Սրբապղծում է ըսել ամեն բան
Ապրիլի հայրատ գիշեր մըն էր տաք.
Մարդը խոնավ էր... Մնացածը գըտաք...

ՀԻՊ ՄԸ

Թուխցած ջուրի կայքի մը վրա մենավոր՝
Ուր իրիկվան լույսն եղեգին մը փարի,
Թռչունի ճիչ մը հուսահատ կ'երկարի՝
Խեղճ ճիչ մը, որ հոգևարք մը լա հեռուն։

Որքա՞ն նուրբ է, դողդոջ, երկչոտ ու քնքույշ.
Ինչպե՞ս տրտում հծծե կրկին ու կրկին.
Ու ճամբուն հետ ինչպե՞ս ձայնն ալ տրտմագին՝
Կմխրճի հորիզոնին մեջ անո՞ւշչ։

Ու ինչպե՞ս լուռ կկշռե չափն իր երգին.
Ու ինչպես տխուր իր շեշտին մեջ ողորմուկ,
Արձագանքին մեջն ալ մեղմին, անաղմուկ,
Երեկոյան վիշտը անհուն կհնծեն։

Այնքա՞ն մեղմ է, որ հազիվ թե կ'իմացվի.
Բայց ան կ'երգե միշտ ու անխոնջ, անդադրում,
Մեռնողներուն մրթին հրաժեշտը տրտում.
Ան կպատմե խեղճ վախճաններն ու մահեր։

Մա՞հը ծպղկանց, միջատներուն, մա՞հն անուշ
Աստղիկներուն, ու թևերուն, մարդերուն.
Նա կպատմե թռչունները, որք հեռուն,
Կհանգչին լուռ, կարտուա՞ծ, խոտին մեջ...

ՕՎՍԱՆՆԱ

Օ՜հ, երազի, երջանկության ու լույսի
Ճամբաներե՜ն, ճամբաներե՜ն տարիր զիս,
Հոգիս գինով խոնջենքի մեջ կսուզի
Մինչ դուն ինձ դեռ այգերուն վրա կխոսիս
Երազանքի, երջանկության ու լույսի։

Ահա՜ հոգիս քու խորանիդ ողջակեզ,
Ահա՜ հոգիս՝ քու աչքերուդ բուրվառին,
Ա՜խ խենթեցնող տենդոտ ծուխը հրրակեզ
Իմ տենչերուս՝ որ բիբերուդ մեջ կվառին...
Ահա՜ հոգիս քու խորանիդ ողջակեզ։

Մութ մազերուդ քու խորհուրդին կհավատամ,
Ու երգերուդ, հառաչներուդ սիրելի,
Ու երբեմնի աստվածությանդ ալ տարտամ
Որ աչքերուդ գիշերին մեջ կհալի,
Բոլոր անոնց, Հիվանդ հոգիս, կհավատամ։

Տո՜ւր, տո՜ւր զիս լո՜ւյս, լո՜ւյս հովերու քըմայքին
Ինչպե՜ս բեկոր մը ծովերուն անձնվեր.
Կուրծքի՜դ, սիրո՜ւյդ անհունին մեջ, տենդագի՜ն,
Ալիքներուն բեռքեն ի վար, վիհն ի վեր,
Տո՜ւր, տո՜ւր զիս լույս, լո՜ւյս հովերու քըմայքին։

Ա՜խ կուզեի, որ տրղու պես, մահվան պես,
Բազուկներուդ երկաթին մեջ բանտեիր,
Ծրծեիր զիս, ու իմ հիվանդ մարմինս
Կաթիլ մ'արցունք, պուտ մը հուլունք շիններիր,
Ա՜խ գրկեիր զիս տրղու պես, մահվան պես։

Օվսաննա քեզ քու աչքերուդ հրաշքին մեջ,
Ու շրթներուդ թրթռացումին մեջ տրտում,
Ու վանկերուդ երազանքին մեջ անվերջ,
Ու կուսությանդդ փառքին մեջ անպատում։
Օվսաննա քեզ քու աչքերուդ փառքին մեջ։

Դու անուրջին անենյութ զավակ, Օվսաննա՜,
Մեղքիս նիհար դափնիներով կուգամ քեզ.
Հիվանդ հոգիս լո՜ւյս հրպումեդ կ'արթննա
Տար դիս սրտիդ ճամբաներն հրրակեզ,
Դու անուրջին անենյութ զավակ, Օվսաննա։

Ապրիլ, Erfurt

ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Անոնցմե չէ՛ր, որոնց շա՛տ կհանդիպինք հեշտասեր
Վեպերու մեջ։— Գրաւիչ՝, ծաղկավաճա՞ռ.— չեմ ըսեր.
Ո՛չ նոճեզեղ, ո՛չ փոքրիկ, ո՛չ գեղեցիկ, ո՛չ տգեղ։
Ցնցոտիո՞վ, սեղուսա՞վ.— կինը կի՛ն է ամեն տեղ։

Չեմ գիտեր զինքը ինչպես և ո՞ւր էի ես տեսեր
Սեր չունեինք իրարու. ո՛չ արտասուք, օ՛չ հառաչ
Միա՛յն երբեմն մութ բաներ կ'ըսեր նայվածքը շքեղ,
Կապո՞ւյտ, թե՞ սև— չեմ հիշեր— աչքը աչք է ամեն տեղ։

Օր մ'ալ— ինչո՞ւ, չեմ գիտեր, կկարծեմ թե պարզապես
Շատ թափանցիկ էր չփակն— խոտորեցա ես ճամբես...
— Անասուն, մարդ (ու քերթող...) կիրքը կի՛րք է ամեն տեղ։

— Հոգնա՞ծ, անո՞ւյժ, ըսավ ինձ. «Ես քեզնե սեր մուրացի
Դուն նախատի՛նքդ թափիր արգանդիս մեջ կանացի...
— Լացի՞... Ինչո՞ւ... Նուլն անմիտ պատմութիւնն է ամեն տեղ։

1 Հուլիս, 1909
Լոզան

ՍԵՐ ԲՈՐԵՆԻՆ

Անձրևին տակ կքալև, ծե՛ր, ամենի՞ն,
Էգ բորենին։ Վերջին օրն է, կվախի։
Վա՞ղ ապրելու միշտ ուրիշի մը մահով,
Իր դիակին կցանկա վա՞յր մ'ապահով։

Խոովյալ ուղեղը մահամերձ գաղանի,
Իր հոգիին մութ վաղվան հարցը չունի։
Միայն դողդո՜ջ, կ'ուզե քալել օրերով,
Դանել մութ խորշ մ'ու հոն մեռնիլ անխռով։

— Լո՜ւռ ուղևոր. տարիներով դիակներ,
Խողխողելով սուր ժանիքներդ են մաշվեր.
Ու կդոզաս մահեն, մինչ Մա՜հ է անունդ։

Ինկի՛ր, դիակը՛դ ուրիշի մը սընունդ։
Արդանդիդ մեջ կբրած, կամքո՜վրդ սընած,
Կսրյունդ հո՜ն, փորոտիքիդ ծարաւված։

Դե՜հ, կյանքին՝ մահն օրենք դրեր է Աստվա՜ծ...

1 հուլիս, 1969,
Լոզան

ՎԵՐՋԻՆ ԵՐԳԸ

Ո՜վ անվախճան, անդրդվելի անմա՜հ սեր,
Կապույտ կարո՜ղ ամպերուն հավասար.
Սիրո օրրան, սիրտքս ավեր, հոգիս առ։

Տարիները անցան։ Կուգամ ես դողդոջ,
Մազլցիլ նորեն կածաններդ վեր բողբոջ,
Սրբավայրիդ ծերունի մո՜ղն ինքնակո՜չ։

Ահա շյո՜ւղ, քա՜ր ինձ հին հուշեր կխոսին։
Դո՜ւն, Դողդոթա՜, ուր ներա հետ միասին,
Երբեմն ելա, սիրո սև խաչն իմ ուսին։

Դո՜ւն, Դողդոթա, ուրկե օր մ'ալ գլխահակ
Ես վար իջա, սիրտքս մահով տրտմոնտակ,
Մարդկայնորեն, իմ սուգի հետ միայնա՜կ։

Դեռ համբույրին շուքն ունի հոս ամեն ինչ.
Դեռ իր պատկերն ունի կարծես ջուրը ջինջ.
Ու իր երգին շեշտը նորե՜ն ինչպես ոչինչ։

Բայց ճանճի թաց կզգյակին մը վրա, հեռուն
Ուշ մնացած ծեր զարտ մ'ահա կկռա,
Կսե՞ք. զո՛ւր. վերջին երգն է սերերուն...

1 հուլիս, 1909, Լոզան

ՎԸՏԱԿԸ

Անո՛ւշ քերթող, իմբս քերթող,
Ինչո՞ւ այս երգը պաղատող
Ես հրճվելով
Ժո՛ւռ գալ կուզիմ, ա՜հ, թո՛ղ, ետ թո՛ղ,
Քնքույշ քերթող, իմբ՛ս քերթող։

Թող իմ ջուրերբս անդադրում
Վազե՛ն, վազե՛ն։ Մի՛ մի տրտում
Հառաչներով
Եվ երգերով խրոխտագին
Մի վրդովիր անոնց հոգին։

Ես դաշտերուն հյուրն եմ սիրուն,
Բյուրեղ ծնունդ եմ հեռուներուն.
Գլգլալով
Գարնան շունչին տակ օրորուն
Կվազեմ միշտ հեռո՛ւն, հեռո՛ւն։

Ի՞նչ փույթ ինծի թե հեռակա
Լեռնեն անտես մեծ ծովը կա։
Ես ցնծամո՛ւ
Կ'երթամ Մահուն դեպի առաջ.
Ես երգ ունիմ— ոչ թե հառաչ։

Կյանքը կ'երգեմ ծաղիկ ու սեր։
Քերթո՛ղ, քերթո՛ղ, բայց մի՛ ըսեր
Արտասվելով
Մահն հոն է, ...* մ'ապրին...
— Ես սիրահարն եմ մարմարին...

* Անբնթեռնելի

Այսպես բսավ վտակն անուշը՝
Ու մինչ թերթողը կ՚երազեր
Արտասվելով,
Վտակն անփույթ, ցնծո՜ւն, քնքո՜ւշ,
Դեպի իր մահը կվազեր...

ՋԱՆ

— Լսե՛ ինձ, իշխան, ջրաղացպանն իրեն
Ջաղացքի մեջ է իշխա՜ն ինքնորեն.
Անհրավեր այսպես ձմեռ գիշերով
Ինչո՞ւ կխռովիս իմ հյուղս անխռով։
Օճախս չունի՞ս դուն. այս ի՜նչ մուտք ահեղ,
Հարգելիր կինս ու աղջնակս անմեղ։
Ասուած չունի՞ս դուն, հարգանք տարիքիս.
Մինչև կոկորդս է հասեր ա՜լ հոգիս։

— Քեզ բան չի կա, մի՛ սարսափիր, Ջա՜ն,
Մուտաց իշխանն իր հաստ դավաճան
Շուրթեն շինելով ժպիտ մը ճարպոտ.
Ու գնաց փովիլ ցած անկողնին մոտ
Ուր մայրն աղջկան հետ կքնանար...
Երկու շարքի վրա ոտքի կմնար՝
Անշշունջ պատին փակած ինչպես ծերպ՝
Տասը ասպազեն զինվոր մարդակերպ...

— Գիշերով գյուղեն եկանք մինչև հոս,
Դուն մեր պատվական Ջանն ես ուղղախոս...
Ըսե. ատենն մը ի վեր թուրքեր
Հոս կկորսվին գաղաններու կեր...
Այս առավոտ հոս իր երիվարով
Բեկն եկավ ու ա՜լ չի դարձավ բարով.
Ասոր մեջ գաղտնիք մը կա դավաճան.
Խոստովանե ինձ, քեզ բան չի կա, Ջան։

Ըսե ամե՛ն բան։ Քեզ հետ աղ ու հաց
Կերած ընկերներ ենք...— Ջանը դողաց...

Նայեցավ անոր ճարպոտ դանդվածին.
Նայեցավ իր տան զոքին դիվածին.
Նայեցավ աղջկան, նայեցավ կնոջ.
Արցունք մը փրթավ կոպերին դողդոջ
Ու ութսունչինգ իր տարիներուն
Ուժն հավաքելով, ըսավ շվարուն։

Պատմությունն ինձմե լավ գիտես հարկավ.
Ամիս մ'առաջ էր Բեկը հոս եկավ.
Ավազակներու մը լիրք բանակով։
Սարն էին ամբողջ՝ կին, երախա ու կով։
Ես մենակ էի աղջկանոս հետ.
Հրաման ըրավ Բեկը խմբապետ
Ձեռներս, ոտներս, գլուխս ծերունի
Բռնուին, հանկա՛ծ կապեցին սյունի...

— Բե՛կ,— ըսի.— գիտ՝, հորդ տեղ մարդ եմ...—
Բայց Բեկն աներես իմ աչքերուս դեմ
Խլեց աղջնակս... Պաղատանքս, լաց, ծեծ...
Վերջապես խեղդեց, զլանեց, պլծեց...
Հետո զորքերն ալ Ու ես պոռացի.
«Ի սե՛ր Ալլահի՝ մեղքս ինձի...»
Բայց Բեկը ըսավ. «Ջանք մեր հացն է,
Խնայեցեք զայն, գյուղիս ջաղացն է...»

Այսպես կապտված, անլույս, անհառա՛ջ,
Աղջնակիս պիղծ դիակին առաջ
Մնացի անքուն ես օր ու գիշեր.
Քանի՞ օր, քանի՞ գիշեր չեմ հիշեր...
Երբ ելա՝ գացի մեր քահանային.
Ճամբուն վրա հայեր... կքնաներին...
Հետո արյան հոտ... հետո գանկեր մոմջ...
Խումբ մը լուռ մանուկ դիակի մը շուրջ...

Դողդոջ գյուղ հասա. ժամը հրդեհված...
Աղբյուրն հայոց.....* Աստվա՛ծ,

* Անբնբեռնելի

Հանճար, գարշահոտ գիակներ հոս հոն,
Տանուտեր Ավեն ու ժամկոչ Խաչոն...
Տերվիշ կտաքնար ճամբային վրա
«Տերտերն այրեցինք մոմի մը նման,—
Պատասխանեց ինձ,— կզոգա՞ս վախեց...—
Խնդաց խենթի պես. խնդացի քիր հետ...

Ու երեք գիշեր՝ Եսդուանակ գույսին
Քալեցի գացի կաթողիկոսին.
«Հայրի՞կ, պղծեցին քմ ատ՝ լրբ աղջնա՞կ
Մեր գյո՛ղն այրեցին, ե՛ս եմ ողջ մինա՞կ
Ըսե՛ ինձ, մե՞զք է վրեժը վատագին...
Թե պետք է դարձնել մյուս այտն ապտակին...»
Բայց իր տարիքին շա՞տ այս աղետ,
Լացավ խենթի պես, գայթի փրեն հետ...

Հաշտվեցա ու դարձա լուռ նորեն ջաղաց,
Տերվիշը մյուս օր եկավ. «Ալեո՛ր, հա՛ց...
Զա՛րկ, պոռաց հանկարծ խուլ ձայն մը ներսես,
Կացինը առի, զարկի վագրի պես,
Զարկի գանգին, և .....* զարկի...
Խի՞ղճ... Չիկա՛... Խիղճը վրեժն է գայլի
Խի՞ղճը... Մեռցուցի՛ն... Խի՞ղճը... Այս դեռն
Մարդոց հանդեպ խիղճն անխղճությունն է...

Այդ օրեն ի վեր զարկի ոնխոտո՛ն.
Քա՞ն. ավելի՛, թերևս քառասուն։
Այս առուս ձիով բեկը եկավ. «Հա՞ց»
Կոնակեն կացինը ուլի կատղած...
Զավկիս բսի. «Թեզ ձի, Հրացան, գլխարկ,
Հագվե սպայի պես, սար քաշվե, զա՛ր։
Այլևս անզորմամախ մ՚է ծերունիս,
Գնա՛, հազարներու դուն վրեժն ունիս»։

— Ու ահա ձեր Բեկը...— ըսավ դեփ-դեղին՝
Բանալով եսի դոնակը հյուղին...

---

* Անընթեռնելի

Ահեղ տեսարան, ...* հոսքին տակ
Կդառնար ջաղացք, հեկա, ալլանդակ
Ու . . .* անվի, վրա քամված դողդո՜ջ
Բեկը կդառնար կես-մեռել, կես-ողջ...
Վերը կփայլեր մահիկն հեթանոս.
Վարը կճանար անիվն մշտատոս...

Բայց ճարպոտ ժպտով իշխանն ըսավ. «Ջան,
Կամքն Ալլահինն է, հայեր կզղջան
Դուն բարի ծեր ես... Բայց լավության գին
Կինդ զորքերուս, աղջիկդ ինձ կին...»
Խոսքը չավարտած, Ջան երեք անգամ
Թքավ իշխանի ճակտին անզգամ
Ու տաս զորքերու հուրեն դավաճան
Ծակված շան պես Ջան մեռավ... կեցցե՛ Ջան...

6 հոկտ., 1910
Լոզան

ԽԵՆԹ ՀԵՔԻԱԹԸ

Գարուն է, մամոն ու իր մառոճան
Դաշտ կ'երթան, բնությունն հարսի պատմուճան
Կարմրորակ լեռա՜կ, զմրուխտ կհագնի,
«Մամոճան երգե երգը Վահագնի...»
Ծեր մայրը կ'երգե, կուլա՜ մառոճան,
— Երգը Վահագնին երգե մամոճան...

Ամառ է. մամոն ու իր մառոճան
Սար են բարձրացեր, գառնե՜ր կ'որոճան,
Քաջ հովիվն հեռուն կ'երգե սլացի՜կ.
— Մամոճա՜ն, պատմե Արան Գեղեցիկ...
Մայրը կպատմե, կուլա մառոճան,
— Գեղեցիկ Արան պատմե մամոճան...

Աշուն կսիրե հովիվն մառոճան.
Բայց ֆեատայի գնաց, «Սուրբե՜ր խղճան,—

* Անընթեռնելի

Կ'ըսե մայրն.— օր մը կփնտռե քեզի.
— Տես, պատմեմ գրույցը սուրբ Սարգիսի...»
Մայրը կպատմե, կուլա մառոճան։
— Սուրբ Սարգսի հեքիաթն ըսես մամոճան։

Ձմեռ է։ Եկան թուրդերը դավաճան
Ձիուն վրա առին տարին մառոճա՛ն.
Մամոն խենթեցեր է իր ցավերեն,
Ինքնին կխոսի, կուլա ինքնիրեն,
Անիմաստ ու խենթ հեքիաթ մ'անվախճան
Կ'ըսե, կկրկնե, կուլա մամոճան...

9 Նոյեմբեր, 1910
Լոզան

ՆԱՄԱԿ

Գիշեր է, նամակ մը կգրեմ քեզ,
Դողդոջ՝ դպրոցի աշկերտի մը պես։
Վարժ չեմ աջ ու ձախ տոմսեր գրելու,
Բայց հիմա սրտի պետքի մը հըլո՛ւ,
Գրեթե՛ ակամա կգրեմ ահա՛,
Ու մատներուս տակ գրիչը կդողա։

• • •

Թե չեմ գիտեր որ ինչո՞ւ կգրեմ,
Լա՛վ գիտեմ սակայն թե ի՞նչ կգրեմ։
Կգրեմ սրտի հաշիվը ուրույն
Այն մեկ շաբթվան մեր ապրած Սիրույն
Որ ա՞նքան ուժգին սկսավ, ավա՛ղ,
Փակվելու համար հրաժեշտով պա՛ղ...

• • •

Ու եթե այս քեզ խիստ անտարբեր է
Նույնիսկ ծաղրաշարժ. ի՞նչ փույթ, ինձ նեղե.

Քեզ համար չէ՛, այլ կգրեմ ինձի.
Հոգվույս մեջ մթին շարժում մ'զգացի,
Գրելով կուզեմ տարրալուծել զայն։
Մի՛ կարծեր սակայն թե հանկարծ
Կուզեի քեզ սե՛ր պատմել սրտիս.
Ո՛չ, մուրացկանի հետ դուն դդրծ չունիս...

• • •

Պատահմամբ ճամբուդ վրա ժպտո՞ւն անցայ,
Քայլերդ սրտի մը վրայեն անցա՞ն։
Այդ սիրտը տա կխնդրեր քեզեն՝
Եթե ոչ սիրվիլ, ճանչցվիլ գոնե։
Որովհետև ան կհավատա թե դուն
Անոնցմե չե՛ս որ ճամբուն վրա մարդուն
Կարելի ըլլա գտնել բյուրերով։
Անկեղծ զգացմունք, խոնարհ, գորով,
Ան կարծեց գտնել գո՛զը քո հոգվույդ.
Եթե խաբվեցավ՝ այդ իրեն ի՞նչ փույթ.
Ու եթե ի՛ր մեջ աչքերդ կապույտ
Չի գտան այդ նույն բանները ի՞նչ փույթ։
Նեղե մը կ'բսեմ քեզ սրտադողով,
Ու շնորհակալ եմ, ու մնաս բարով։
Քիչ մը բիրտ բառեր, համարձա՞կ թեներս,
Վիրավորեցին նուրբ հոգիդ թերևս։
Փափուկ մթերքներուս մեջ կան բիրտ կուտեր.
Բիրտ կեղևներ կան փափուկ սրտի տեր...
Զուրկ փուշանման վարդի կեղևներե,
Ես վերջիններն եմ դուցե. ներե...

• • •

Բայց թե դու ինձմե հո՛ւշը չի պահեցիր,
Պիտի հիշե քեզ հոգիս անձանձիր.
Ես քու աչքերուդ մտերմիկ լույսեն,
Համոզվեցա որ՝ ինչ որ ալ բսեն
Դեռ ապնիվ սրտեր կան կիներուս մեջ...
Սերդ օ՛ր մը տանց, բայց հուշերդ անշեջ

Պիտի նորոգե հոգիս սիրակեզ.
Ի՞նչ որ ալ ըլլաս, շնորհակալ եմ ինձ...

• • •

Կյանքն ի՞նչ է։ Ամենն իր ճամբան ունի.
Մարդ կհանդիպի մեկուն գողունի
Երբ կդիտե երկչոտ, երկու բառ կ'ըսե,
Զո՞ւր կհարցնե թե իրենն ա՞յս է.
Պիտի փայփայեր՝ կ'արտանե դուցե.
Ու հետո կ'անցնի, աչքը կդոցե...
Մեր վերաբերմունքն հանդիպող օտարի,
Օրենքներ, բարքեր քաղաքավարի,
Կ'արդիլեն ըսել ինչ որ կ'ըզգանք մենք.
Այսպես իրարու ձեռքը կսեղմենք,
Եվ որովհետև ժամանակն է թանկ...
Առանց ճանչնալու կվազենք, կ'երթանք...

• • •

Միա՛յն, խոլ վազքիդ մեջ, եթե երբեք
Կյանքիդ ճամբան վիրաստած հոգնարեկ
Ու հուսակտո՛ւր, հիշիր թե մի օր
Հանդիպեցար խե՛ղճ սրտի մ'ախտավոր,
Խորհե թե այդ խեղճ սիրտը քեզ սիրեց,
Առանց շաղակրատ ողբի դառնահնչ,
Առանց հաշիվի ու առանց կիրքի,
Պարզ, բարեկամի մը պես ուղղակի...
Մարդը գերին է Պարտքին. ինչո՞ւ լալ
Կրնար անշուշտ շա՛տ երջանիկ ըլլալ
Բայց կ'երթա մեն մին իր արահետով.
Ահա կ'երթանք մենք ա՛ր. մեռա՛ բարով...

• • •

Ըսիր. մյուս կյանքի մը հույսն ունիս դուն,
Ուր մարդեր իրար կգտնեն ժպտուն.
Այդ հույսն իսկ չունիմ ես. մնաս բարո՛վ
Հավիտենությունն ի՞ր, հավիտենությունն ի՞ր...

• • •

Հիմա որ նամակս հատավ. լռելյայն
Կխորհիմ թե շա՜տ անիմաստ է այն
Թերևս ավելի լավ կ՚ըլլա ուղղակի
Հեռուն դրկել լա՜յն հեր մը շրթունքի...

10 Հուլիս, 1909
Լոզան

ՁՈՆ

Վա՜խ, աստվածներն զգեստներդ մեռցին.
Արևելքի ոսկեշավիղ լույս բացին
Ո՜չ մեկ կուսան։ Մեռավ մուսան երկնածին։

Անտառներու մեջ նայադները մեռան։
Ոլիմպոսին վրա Նյութն հիմնեց իր վրան,
Բաբելին այլևս ո՜չ խունկ, ո՜չ խորան։

Ես ո՜ւշ ծնած թրակատուր ոգածի՜ն
Փնտռեցի հետքը սիրերու աստվածին
Ամենուրեք «Հիմա՛ր, ի մահ» պոռացին...

«— Բարձրացիր վե՛ր, բարձրացիր վե՛ր, բարձրացիր,
Կույս հոգիս խավարին մեջ մտացիր.
Բարձրացիր դեպ ի երկինքնե՛ր անծիր...»

Ես բարձրացա զանգակատան մեջ հրլո՜ւ,
Մեռնող վերջին արևուն դեմ երգելո՜ւ
Իմ վերջին երգը Բաբելին ալելու...

Ու խուլերու աշխարհին մեջ, հեգնորե՜ն,
Ես կախեցի հոգիս զանգին մեծ լեզուն,
Ու այսպեսակ ճիշեր լացի ես վերեն...

Դուն լսեցիր հառաչքս սուրբ զանգակեն,
Դուն խավարտչե աստվածուհիդ սիրակե՜զ,
Սիրեցի՜ր դիս. երգքս քե՜զ է, երգքս քեզ...

ՈՐՈ՞Ի ՀԱՄԱՐ...

Ըսավ ինծի հայ վաշխառուն այն՝ որ
Հազար խեղճերու անկումն ահավոր
Կ'որոճար՝ երկաթ իր արկղին առաջ,
«Իզո՞ւր են արքունք, իզո՞ւր են հառաչ
Քու քնարիդ ձայնեն— հավատա խոսքիս—
Ավելի՛ քաղցրիկ կհնչե ոսկիս...

«— Ջուրին տուր հիվանդ սրինգըդ եղեր,
Սիրե՛լ, երգե՛լ, լա՛լ, լացընե՛լ, աղեկ,
Սակայն լավագույնը կյանքն է արի,
Թող դողդոջուն ձեռքդդ սուրին փարի,
Օգնությո՛ւն կուլան եղբայրներ խեղդուկ»
Պատվիրեց ինձ քաջ մարտիկն հայդուկ։

Ու սարն աշխատող ծերը դողդոջուն,
Որ կ'անգիտանար կյանքի մեծ ինչո՛ւն
Ըսավ. «Անույշ են երգերդդ հնչուն.
Բայց մարդը մարդ է, թռչունը թռչո՛ւն,
Շուրջդ, տե՛ս, ամեն տեղ ավերակ, վե՛րք.
Օգնե, թե մարդ ես. նախ հա՛ց, հետո երգ»։

Պատուհանս բացի. ցայգեն ցրտահար,
Մերկ ու մութ ամբոխը «Հա՛ց» կպոռար...
Գործարաններուն մեջ՝ միլիոնավոր
Մարդ կյանք կուտային հացին թունավոր...
Իշա երկրին մութ խորքերուն մեջ ցած
Հանքագործներ՝ հոն կինտոներին հա՛ց...

Մորթեն երկու ստակ չարժող հայորդին,
. . . . . .* ասդին ու անդին,
Այլասերած, կեղծ ժողովուրդ անգույն
Սողուններ անթո՛ւյն օձերուն հանգույն

---

* Անբնթեռնելի

«Բոցին տուր,— ասին. ա՜զգ, քերթվա՜ծ, տառա՜ծ,
Մե՛կ կրոնք կա՝ Կեղծիք, մե՛կ Աստված՝ Դրամա»

Հա՜ց... Ես զգացի, ու քանի անգամ,
Որ Նյութը սարսուռ, Նյութը անզգամ
Կպասար. «Մսե կերտված ես, նոթի՜
Ես միջազգային Կրոնքն եմ Նյութի
Հերիք երգեցիր սե՜ր, ազգ, բա՜ղ է ալ,
Ես եմ ճշմարիտ, չիկա՛ Իսկալ...»

Բայց ես երգեցի. ես ձեզի՛ համար
Երգեցի հիվանդ կյանքե՛ր անհամար,
Դավառի տղաք, ճակատներ գազգոջ,
Մթին ծաղիկներ հազի՛վ թե քոչքոջ
Ես ձեզի համար հնչեցրի քնա՛ր,
Երգեցի բաղցած շունչերս անհնար...

Ի՞նչ փույթ բամահրանքն ու ծաղրն ամենուն.
Դուք դեռ միամիտ սերն ունիք անհո՜ն
Վանմին, Արվեստին, Սուրբ Իսկալին...
Ձեզ համար երգն է արդեն բանալին
Դարերով կ'երգեք. չունիք մեկ կոթող,
Մուսային ճամբեն կ'երթաք դեպ ի հող։

Դուք սրուն համար տո՛ղ մը սրտագին
Ազոթք մ'է, հառաչ մ'է, ճիչ մ'է անգին
Դուք որ Գեղեցիկ մուսային կարքին
Ձեր սերերով կկանգնեք բազին,
Դուք որ կձոնեք ձեր ուժգո՜ւն հոգին
Մեռնող Արվեստին ու մեռնող Ազգին...

Ես ձեզի համա՛ր է որ երգեցի
Ու իմ այս ըմբոստ տագերս առնացի,
Մեցուցի փառքի աչս ոսոր կանա՛չ.
Թե հազարներ զայն կոխե՞ն անճանաչ,
Դուք ձեր արցունքով պահեցեք դալար
Ցաված ազգին հո՛սկ այս երգը խելար...

ԳՅՈՒՂԱՑՈՒ ՍԵՐ

— Կանանե՞ր, Պարոն, սերբա՝ կրակի
Շապիկի մը պես գիս կ՚այրեն ուղղակի.
Զեզ ճանչցած օրես՝ սիրտս կմրրկի.
Ըսե՞մ, թե չըսե՞մ... Վաբրոը շրթունքիս՝
Բոցեն չէ՛ սիրուս, արյունն է թորիս...
Իմ ճամբաս կարճ է... Բաժնվինք, հոգիս...
— Գյուղացին լացավ։

Ժամանակ անցավ։ Այդ թորախտավոր
Աղջիկը՝ Սուրբի կ՚երթար ուխտավոր,
Երբոր գյուղակին մը մեջ հեռավոր
Տեսավ այն գեղջուկն իր հին սիրահար
Որ ամուսնացեր, արդով կիսաղար...
Բայց գեղջուկն ինչո՞ւ այնքան էր նիհար...
Ու ինչո՞ւ լացավ...

Գյուղացին մեռավ, գաղանիքով քնցուն
«Գեղ հունձքերեն էր,— քսավ տիրացուն...»
Հիվանդ սիրուհին մեռած գյուղացուն
Որբիկը առավ, գնաց թաղվածին
Հողն բլրին վրա չորեց առանձին
Ու այսպես երկուքն ալ լռիկ լացին...
Գյուղացին լացա՞վ...

1909, օգոստոս 21/4
Սիլիվրի

ՆԱՀԱՊԵՏԸ

Հի՛ն, հի՛ն գյուղաղի մը նման հոկա
Որ իր հո՛ւսկ օրման հասնիլը կզգա
Իր պալատներուն փառքին տակ փլուզում՝
Կքաշկոտե իր դիակն ազազուն
Սարե սար՝ ինչպես ինկած մի Աստված,
Իր մութ խորհուրդին մեջ պատանքված
Ներ նահապետը...

Իր աղնիվ բնհեղն երեկվանը չէ՛.
Երբե՞ն ի վեր ան կ՚ապրի, կշնչի.
Կհաշվին հիսուն, ոմանք հարյուր դար.
Փորագրված ժայռի վրա կկարդար
Գիտունն իր անցյալն. մինչ ինք անդադա՛ր
Ժամանակներու վրայեն կ՚ներթար
Հի՛ն նահապետը...

Արևմուտքի և Ասիո դարավոր
Ընդհարման վկան էր սո՛սկ, ահավո՛ր
Հարյուր ազգերու շիրիմին վկան,
Ծեր երկրին վկան՝ դեռ ողջ, տիրակա՛ն.
Որ սիրտ չուներ իրեն դարերն անհամար
Սև համրիչին վրա համրելու համար
Մո՛ւթ նահապետը...

Էր երբեմն երբ պատգամն իր խոսքին
Իր վրա կթափեր գահերու ոսկին.
Երբ ճամբաներու վրա ծեր Ասիային
Իր կարավանները կճանային,
Երբ խավարակուռ անոթի ազգաց
Հայրորե՛ն, առա՛տ կրաշխեր լո՛ւյս, հա՛ց
Վե՛ս նահապետը...

Էր երբեմն երբ վաշտերն Հռոմի
Գարշապարի տակ կընկրկեին մի առ մի
Երբ իր դրացի բարբարոս ազգաց
Հուժկու կ՚որոտար պատգամն անզգած,
Երբ դեռ արբայից արքան էր անգին,
Երբ թագավորներ կլծեր կառքին
Սե՛գ նահապետը...

Բայց դարեր անցեր են այդ հին օրեն.
Աստված կյանքին մահն է դրեր օրեն.
Ու երբ մահամերձ կ՚իյնա վագրը մունջ
Բզեզներ կ՚երգեն իր ծեր գլխուն շուրջ.
Այսպես երբ դեռ ձագ շուներ կհաչեն
Իրը Աստվա՛ծ կ՚անցնի գիշերին մեջեն
Խե՛ղճ նահապետը...

Մի՜, մի՜ հիշեցներ անցյալն անկենդան,
Երբ Հայկ, երբոր Ներսես, երբոր քաջ Վարդան.
Երբ Արտավազդ, երբ Արշակ անվեհեր,
Երբ Արա, երբոր Տիգրան կկոչվեր,
Վսեմ անուններ՝ զրահի պես հնչո՜ւն...
Ջառամեր է ան, կ'անվանին— գնչուն
Մե՜ր նահապետը...

Ո՞ւր են բերդ, պարիսպ, դղյակ, հայրենիք
Ո՞ւր են պարտեզներ առկախ, տուն, տանիք.
Նահապետն ունի մի կտավ վրան
Հալածեր են զինք Կովկասեն Իրան,
Անկե Հայաստան, այսպես խաշնարա՜ծ
Կ'ապրի իր հոտով՝ սարին վրա կորած
Սո՜ւրբ նահապետը...

Սակայն երբ խռով կյանքին մեջ կա հույս.
Իր հույսն իր դուստրն է՝ իր վրանին լույս.
Ջոր անապատին մեջ՝ ազազուն բո՜ւյս.
Մահամերձ ցեղին հույսի օրրան կույս։
Ջոր այգիին մեջ սո՜սկ արբշիռ ողկույզ
Լո՜կ իրեն համար դեռ կ'ապրի անհույզ
Լո՜ւռ նահապետը...

Գիշեր մը խրճիթ մը կհասնի. Աստվա՜ծ...
Դստրիկը հոն չէ. փախցվա՜ծ, մեռա՜ծ...
Աչքը կմթնե, կփրփրի հոգին.
Կրա՜կ կուտա իր հուսկ օթևանին,
Կցրվի խելառ հովիվ հոտ, ոչխար,
Ու լալո՜վ, լալո՜վ կ'իջնա ճանապարհ
Հեգ նահապետը...

Առասպելի մա՜ղն է այս ալևո՜ր...
Ոչ, ճամբորդ ընկեր, ճամբուդ վրա մոլոր
Երբ տեսնես դրախտի երկիրը սիրուն
Նայե Երասխեն մինչ Կուռ, մինչ Սիհուն
Դիտե հորիզոնն որքան որ կրնաս

Հրդեհված բույներն հո՞ն պիտի ճանչնամ՝
Մե՞ր նահապետը...

Իրենք իրենց տունն այրելի վերջ՝ լո՞ւռ
Կ'երթան բյուրերով, կ'երթան դեպի ո՞ւր
Կ'երթան փողոցի, բանտի, խաներու
Մեջ՝ պատն երեսին պանդուխտ մեռնելու...
Անոնց ամենո՛ւն հետ, ամենուն մեջ
Կմեռնի դարեր, դարերով անշեջ
Մեր նահապետը...

1910

ԻՏԵԱԼ ՍԵՐԸ

Աղվո՛ր, այտիդ վրա սիրած վարսերդ բոցագես,
Հայելիին մեջ դեմքերդ հրակեզ
Դիտելով երկար՝ կուլաս ու կ'երգես,
Թե ինչո՞ւ ոչ ոք դեռ չի սիրել քեզ...
Ոչ ո՞ք... Ուրեմըն դուն դեռ չի գիտե՞ս
Որ մեկը— քենե գաղտնի ու անտես—
Կսիրե քեզի հրեշտակներու պես։
Իր սերը շուզեր ցույց տալ ի հանդես.
Բայց ըսեմ քեզի, եթե կպնդես՝
Թե փոքր հասակեդ ան կճանչնա քեզ...
Գիտե թե ծամերդ կեղծ են կես ու կես.
Գիտե թե բոսոր շրթներդ հրակեզ՝
Առտու իրիկուն ինչո՞վ կներկես...
Գիտե թե հպարտ կուրծքերդ փրփրադեզ,
Որ այնքա՜ն սաստիկ կխռովե մեզ,
Հասարակ թուղթի բուրջ մ'է պարզապես.
Գիտե թե կապույտ տոմսերու խենթ ես.
Թե կուզես միայն հարսնիք ու հանդես.
Թե սիրտ մ'ուտքիդ տակ սիրո՜վ կթնդես
Թե երկաթ ճիրանքդ՝ երբոր ուզես,
Փայփայիչ ու գիրգ կ'ըլլա իրը սեղ.
Թե .....* եղեր է որ կյանքեն խլես

* Անընթեռնելի

Քանի մը տասնյակ հոգիներ խլեզ...
Գիտե՞ որ ինչ որ ալ ըլլաս՝ կի՛ն ես.
Շոյվելու համար ամե՛ն բան կ'ընես...
Գիտես սակայն որ խիղճովդ սուրբ ես.
Թե անմեղ ժպտով՝ ադամիկի պես
Օրվան մեջ քանի՞ հիմար կիսաբես...
Բայց ցաս բոլորն ալ ան կներե՞ն քեզ
Որովհետև իր հոգին սիրակեզ
Քու վրա՛ կխորհի երբ կնվազես,
Երբ ձանձրանաս, երբ նիրհես փափկազես
Երբոք շրջես՝ սերդ հանած կրկես,
Երբ մթին անկյուն մը՝ մեկը գրկես...
Կ'ըսես. «Այդքա՞ն սուրբ սիրտ մը սիրակեզ
Սարսափելի է...»,— ուսդ կթոթվես.
Անշուշտ շատ աղեկ կրնար պատժիլ քեզ,
Բայց իր սերը շատ ներող է, շատ հե՛զ...
Ի՞նչ, չե՞ս հավատար. ուսը՞դ կթոթվե՛ս...
Այս խոսքերն անշուշտ չեմ հաներ քովես։
Հարցո՛ւր, թաքուն, խիղճդ օր մը թե ո՞վ ես,
Որ ինձ կսիրես, մարմի՞ն ես, հո՞ղ ես...
Ինք քու Արարիչ հայր Աստվածն է վես...

15 Հունվար, 1909
Լոզան

ՆՎԵՐ ԱՄԱՆՈՐԻ

Քեզ տալ կ'ուզեի բերքը պարտեզիս
Անփուշ վարդեր ու միամիտ նարկիս...
Այդ խելոք բաները կտանջեն զիս։

Քեզ տալ կ'ուզեի այն մորթն անօգուտ,
Որ կ'այրի պզտիկ կրակով անգութ...
Պատուհիր՝ եթե հաճո էր հոգուդ։

Քեզ տալ կ'ուզեի ինչ որ լայնորեն
Տվիր ինձ՝ փուշն պսակ անօրեն,
Աչքեր որ կ'այրին, ցայգեր որ կ'այրեն...

Քեզ տալ աշխարհիս դեկը մոգական.
Հո՛ւր կ'անձրևեիր հոն ուր մարդեր կան...
Բայց քեզմով տանջանքը քա՞ղցր է այնքան։

Ու ի՞նչ տալ՝ բոցես կայծ մը հրակեզ.
Այրեիր դուն ալ իմ մութ կրքակես,
Ու հասկնայիր որ կսիրեմ քեզ...

1910, հունվար 1
Էրֆուրտ

ԱՌՋԻ ՀԱՅԵՐԸ

Ես հոն էի երբ Արարատեն վար,
Վայրագ ջրվեժի մը պես ալեոր,
Իրենց գնացքին ներքև ահավոր՝
Կողը փշրելով սարին ալեոր
Առաջին կյանքի խինդովն երկնային
Խավա՞ր աշխարհին կյա՞նք տալ կ'ջանային
Առջի հայերը...

Առջևեն կ'երթար նահապետը Հայկ
Ու լուսնակին տակ— Հայաստանի՞ ցա՞յգ—
Հազա՞ր հազարներ անզե՛ն, անզրահ,
Բնության գիտակից ույժո՛վը անահ,
Կ'իջնեին գետի պես արագահոս,
Դեռ վե՛ս, դեռ հպարտ ու դեռ հեթանո՛ս
Նախնի հայերը...

«— Ահա մենք կուգանք,— կ'երգեր ցեղն արի,
Հողին պես բեղուն, լույսին պես բարի,
Հովին պես ազատ, աստղին պես անշեջ.
Մենք Անմահության սերմն ունենք մեր մեջ.
Ջենք ճանչնար ստրուկ լուծ, կրոնք, աստված.
Թող ա՛յսպես ապրեն իսպա՞ռ հալածված
Անսպա՞ռ հայերը...

Հազար տարի վերջ անցա ես նորեն
Ագգ մը, հայրենիք մը կ'ելլեր հողեն.

Հայը կցաներ, կ'ոռոգեր առուն,
Կարավանը հա՜ց կկրեր հեռո՜ւն...
Կ'որմնեին ստրուկ ցեղեր անհամար.
Ըսի՝ «այն բերդերն են որի համար
Ըսին «Հայերը...»

Ու տեսա որ վեհ իր կառքին վրա
Արշակ Առաջին արքայից արքան
Կ'անցներ իր ոսկի անիվներուն ցա՜ծ
Ցոթը կո՜ւյր ստրուկ թագավոր լծա՜ծ.
Թափորը կ'անցներ ծանր արքայակա՜ն,
Իր ետին՝ թափորի ոգով հաղթական
Բոլո՜ր հայերը...

«— Ահա մենք կուգանք,— կ'ըսեր ցեղն հպարտ
Մեր սայլին վրա կրելով անպարտ
Թագեր որ ստրո՜ւկ ըրինք մեր Ույժին
Գարշապարներուս տակ սարեր կշարժին
Պողպատի սուրին փայլն է մեզ օրեն,
Մասիսի դյուցազն հովեր կ'որորեն
Մնող հայերը...

Բայց դյուցազնությունն որով մենք սնանք
Լքվե՜ր էր սնանկ, ու տեր ու տնանկ
Ու սարե ի սար, ու վանքե ի վանք
Պեղենք լեզունե՜ր ահեղազանգ
Մե՜կ խոսք ունեին ու մեկ արձագանք
«Մարտիրոսներ ենք, Աստվա՜ծ, քեզ կուգանք...
Փրկե հայերը...

Հազար տարի վերջ՝ անցա ես նորեն,
Հավատացող, հավատք, խունկ, խաչ, համբեն
Կհրդեհվեին։ Դարավոր . . . . . .*
Կարմրեր էր վերը՝ հայակեր հուրեն
«Քրիստոնյա՜ Աստված,— գոչեցի.— ո՞ւր են
Քո ստրուկ հայերը...»

---

* Անբնթեռնելի

Դրախտին մեջ իբրամ միներեին քով
Գերման ծխնելույզը կ'ելլեր . . . .*
Հոս, հոն, Բյուզանդիա . . . . .* տակ ցած
Դեռ քանի մը հայ գոտա պոռնկացա՛ծ...
Արարատին վրա՝ նոր ազգ մ'է օտար
Չհասկցավ իմ մայրենի բարբառ
Հեգնեց՝ «Հայե՞ր...»

Ախուրյանի քով՝ քար էր ավերակ
Քաղաք մը, աշխարհ մը գոտա ճերմակ.
Ձայն մ'երգեց՝ «Մի լար փտոքերուն վրա սին,
Նայե տապանիս մյուս երեսին.
Ազգերը կնքեր են վրան՝ «Մա՛հ հայուն»
Բայց մյուս երեսին վրա «Անմահություն»
Գրեր են հայերը...

10 դեկտ., 1910

ԱՂՈԹՔ

Օ՜, անչրպետն անհունորեն կ'երկարի
Մո՞ւթ կիրքերուս անդնդախոր խավարեն
Մինչև լույսե կույս տաճարներդ եթերի։
Անհունորեն, մեռելորեն, հեգնորեն,
Սրտիս ճամբան դեպի քեզի կ'երկարի։

Ա՜խ, դեպի քե՜զ, ու դեպի քեզ, դեպի քե՞զ...
Ի՞նչ ահավոր է բարձունքդդ սարսռագին,
Ու ի՞նչ երկար ու դառնորեն հրբակեզ,
Կրակե ճամբան քու աչքերուդ Արևգին...
Ախ, դեպի քեզ, ու դեպի քեզ, դեպի քեզ...

Դուն որ Սերն ես, ու Իսուսն, ու Հոգին.
Ու ինչ որ կա ամենեն վեհ ու մաքուր.
Ու ինչ որ կա լացընող մեր ախտագին

---

* Անընթեռնելի

Սրտին հազա՜ր հյուսկենները թաքթարուր.
Դուն որ Սերն ես, ու Իտեալն, ու Հոգին...

Ցո՜ւյց տուր ինծի ոսկի շավիղն եթերի.
Ցո՜ւյց լուսեղեն երկնագրվարճ այն ճամբան
Ուր էութիւնքս հոգնատանջ գալարի՝
Բարձրունքներուդ գալու համար անխափան
Ցո՜ւյց տուր ինծի ոսկեշավիղդ եթերի։

Թողե՜ք հոգիս,մսի երգեր գիներո՜ւյր,
Թարո՜ւն այրող այգեստաններ կանացի.
Կյանքի, մահո՜ւ բաժակ՝ խորշեր կաթնաթույր.
Ուր ախտագին Արաս խեղդել չանացի...
Մսի երգեր, խոլ ծաղիկներ գիներուլր...

Օ՜ մեղքերու ու վերքերու խոլապար
Դիվացընո՜ր գերեզմաններ խավարին
Ինչո՜ւ կմախք ձեր բազուկները կապար
Գարշապարիս մեռելորեն կփարին։
Ա՜խ, մեղքերուս դիվահանդեսն խոլապար...

Զնոքս աչերուս— չ՝արտասվելու համար բնավ—
Վիրավոր, ծեր արծվի մը պես անկարող՝
Զագիր դիակս պիտի քաշեմ իր խոնավ
Փոսեն մինչև՜ կույս բարձունքներդ լուսաշո՜ղ։
Ա՜խ ի՜նչ ընել չ՝արտասվելու համար բնավ...

ՀԱՆԴԻՊՈՒՄ

Ա՜ն, ահա հո՜ն, Ան է նստա՜ծ քայլ մ՝անդին...
Ա՜ն, հույսերուս համբուրելի՜ գերանդին...
Ա՜ն, անուշա՜կ, երազունա՜կ, ահավոր,
Ա՜ն խենթեցնող ունայնությո՜ւնը աղվոր...

Ա՜ն, ահա հո՜ն։ Ու ձայնն իրեն, քայլ մ՝անդին
Կգգվե գիս ինչպես առուն՝ մարմանդին
Քամած իրանը կգգվե տարփավոր.
Ծլնչալով իր հեղուկ սերն անցավոր...

Ա՛ն, ահա ա՛ն, որ գիշեր մ'ինձ սրտապրավ
Հայտնվեցավ հանկարծ. երա՞զ, թե իրա՞վ...
Ա՛ն, ահա ա՛ն, եղեռնորեն կանացի...

Իրեն համար ցայգեր ամբողջ ողբացի,
Աստանդական փնտռեցի հե՛տքն իր բողբո՛ջ...
Ա՛ն է. ու ես քամված կուլամ հոն դողդոջ...

18 մարտ, 1910, հինգշաբթի
ցորեկեն վերջ. 10 վայրկյանի
մեջ գրած՝ ժամը 6-ին։

ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՄ...

Հասուննալուդ Հազար գիշեր, Հազար օր
Սպասեցի ինչպես արծիվն իր ձագին.
Ու դողալով հազար գիշեր հազար օր
Հսկեցի իմ տենդերուն սիրագին։
Սպասեցի հազար գիշեր հազար օր։

Ան դեռ աղջնակ մ'էր անմեղ ժպտօրոր,
Սրտին մեջ հույս, աչքին մեջ լույս մը կար վեհ.
Սպասեցի հազար գիշեր, հազար օր
Երբ հասունացար դուն գարնայնի սյուքին պես...
Դուն որ աղջնակ մ'էիր անմեղ ժպտօրոր։

Հասուննալուդ սպասեցի մոր մը պես,
Ահա հասար ողկույզի պես շառագույն.
Վարսերդ ալիք ալիք ծովու մը հանգույն,
Բեղմնվելու ծարավն ունի կուրծքդ վեհ.
Հասար գինով ողկույզի պես շառագույն։

Սպասեցի հազար գիշեր ես հեռվեն,
Ու հսկեցի որ ոչ մի ցավ չունենաս...
Երբ արթնցար քու էգ իրանդ թոթվելեն՝
Ինծի ըսիր՝ Ձիս երբեք պիտի չունենաս,
Ձուր կ'սպասես հազար գիշեր դու հեռվեն...

Զգո՜ւյշ. դու իմ թևերուս մեջ անահ
Պիտի մարեմ քու տարփավոր կու�թին մեջ
Ունենալու համար գոնե սիրտ ի մահ.
Ու թե սերով սրտիդ կյանք տալ չի կրնամ
Քեզ հետ պիտի անմահանանք մահուն մեջ
Ու մահուն մեջ գքեզ պիտի ունենամ...

16 մայիս, 1910
առտու 1 ժամն գրած

ՔԵՐԹՈՂԻ ՄԱՀԸ

Արշալույսեն, արշալույսեն դեռ կանուխ,
Կոխոտելով ոտքի տակ վարդ, անանուխ,
Ճամբա ինկա արշալույսեն դեռ կանուխ...

Չէին շարժեր իսկ ծաղիկները դալար,
Կարծես իրենց մեջ Աստված քուն ըլլար։
Լոկ թռչին տակ անքուն գետակը կուլար...

Ու գետակին փրփուրներուն մեջ բողբոջ
Կբշվեր վա՜ր, վա՜ր սեղերուն տակ դողդոջ,
Տժգույն պարման մը, դեռ ժպտո՜ն, կարծես ո՜ղջ

Ձեռքին շուշա՜ն մը կտաներ մուսային.
Ու ետևեն բյո՜ւր ծաղիկներ կուսային
«Երթա՜ս, երթա՜ս, երթա՜ս բարով»,— կ'ըսեին...

Բաբե՜, ճանչցա՜... Վտակին մեջ ջրասույզ
Իմ շուքն էր... Խույս տալ ուզեցի հոգեհույզ,
Բայց չի կրցա... Մարդ ինքնիրեն չի տար խույս...

Այդ մահն իմ մեջս է. այդ պարմանը ե՛ս եմ.
Փակեր եմ աչս արշալույսի դեմ վրսեմ՝
Չի գիտեմ՝ քիչ վերջ արդեն մութն է նրսեմ...

Ալցուցած ծի՜լ ծաղիկներս դե՜ռ չի խամրած,
Գե՜տ-արցունքիս մեջ երգերես օրորվա՜ծ
Կ'երթամ նետվիլ դեպի մեծ ծով, դեպ Աստված...

1911, 7 մարտ, Երեկո,
7 ժամեն գրված

ԳԻՍԱՎՈՐԸ

Գիտնականներ, աստղաբաշխներ այլոր,
Կհաստատեն թե ինչ որ մի գիսավո՞ր,
Ուղեկորո՞ւյս, հրակեզ աստղ մը մոլո՞ր,
Պիտի ջնջե վաղն էակները բոլոր...

Կհաստատեն մագաղաթներ փոշելի
Այն ցույց կուտան հեռադիտներ հրաշալի.
Որ այս գիշեր հրակեզ աստղ մը մոլոր,
Պիտի ջնջե վաղն երկիրս բոլոր։

Աստղե՞ր, աստղե՞ր հաճախ դիտեր եմ ես ձեզ.
Ձեր անունով երդվեր, լացեր սիրակեզ.
Չէի խորհեր որ փո՞քր, բարի՞ ու հլո՞ւ,
Աստղ մը պիտի գար մեզ բնաջինջ ընելո՞ւ...

Դեպի . . . . . .* սուրբ կամարներն անսասան.
Մեր մեղքերուն բուրգերն այնքա՞ն վեր հասան
Այնքան արյանց եղավ երկիրը անոթ,
Որ իր կյանքն ալ տիեզերքին էր ամոթ...

Ու վաղն ալ պիտի մեռնինք բնաջինջ.
Մեր եռեռն թողլով բարի հետք մը ջինջ։
Նոր ու հսկա հրայր Սոդոմ-Գոմորի,
Մեկ ժամուն մեջ պիտի ամեն ինչ կորի...

Թե իրա՞վ է, պիտի ցավիմ լռելյայն,
Հարյուր դարվան վաստակն անխոնջ Մարդկության.
Գիտությունները ու արվեստնե՛ր մոգիչ,
Զոր ստացանք արյան գինով քիչ առ քիչ...

Մենե վերջ հարկ պիտ՝ ըլլա որ հաշմանդամ
Մի նոր մարդ գա, մի նոր Եվա, նո՛ր Ադամ.
Նոր Աստվածներ, նոր դյուցազներ, նոր Հոմեր,
Մինչև հասնին հազար տարվան դիրքը մեր...

---

* Անբնթեռնելի

Ու ամենեն քիչ ես պիտի ցավիմ մեզ
Քերթողներուս՝ որ ապրեցանք ծաղկի պես,
Չհաշվեցինք բույրն որ գողցավ մենե հով
Ճլճլացինք, լացինք առվին պես գինով...

Ու մանավանդ պիտի ցավիմ ինե շատ,
Վաճառամիտ բյո՜ւր բյո՜ւր անձանց բաղմաշխատ
Որ միացուցին Սեր, Սիրտ, հաճույքը ներկա
Վաղվան համար, մինչդեռ ալ վաղը չիկա...

Ջտենչացի պալատ, գոհար, փառք անշեջ,
Կյանքիս մեջ զույգ մ՚ալ սիրեցի մինչև որ
Ան բզքտեց կյանքս երեք ժամուն մեջ
Թող գա, թող գա, գիսավորն ինչ է որ...

17 մայիս, 1910
Լոզան
Comète du Halley*

ՀՈՎԻՎԸ

Գնա՜ց, գնա՜ց փոքրիկ հովիվը գնաց
Հազար գիշեր, հազար օր,
Դեպի բլուրն հեռավոր
Ուրկե կծներ հովվին լուսնակը աղվոր...
Հազար գիշեր, հազա՜ր օր,
Ցուպը ձեռքին մեջ բռնած
Գնա՜ց, գնա՜ց...

Ու սարերով, ու ձորերով ան գնաց
Ճերմակ, ճերմակ ուլ մ՚ուսին,
Իր շուքին հետ միասին
Դեպի հեռու, կապույտ բլուրը Լույսին,
Բոպիկ ոտքերն արյունած,
Լացը կրծքին տակ պահած,
Գնա՜ց, գնա՜ց...

---

* *Հալլեի գիսավորը (Ֆր.)*

— Փոքրիկ հովիվ, փոքրիկ հովի՜վ ուխտագնաց
Ըսե՝ որո՞ւ ձգեցիր
Ոչխարներդ ցանուցիր.
Դուրձիր, դեպի հոգե հյուղակդ դարձիր...
Բայց փոքր հովիվն ուխտագնաց
Սիրտն իր ձեռքին մեջ բռնած
Գնա՜ց, գնա՜ց...

Հազար գիշեր ու հազար օր երբ գընաց,
Լուսնին բլուրը հասավ.
Հոն ծեր Աստվածը տեսավ՝
«Հիվանդ եմ, Տեր, սիրտս հիվա՜նդ է,— ըսավ.
— Ջունի՞ս սիրո մի դարման...—
Սակայն տրղու մը նըման ;
Մերուկ Աստվածը լսցավ...

Այն ատեն, փոքր, բարի հովիվն ուխտագնաց,
Մորթեց իր ուլը ճերմակ
«Վա՜խ»,— ըսավ ուլը ճերմակ
Ու իր վերքեն ծնավ արյան ո՜ւղիս համակ.
Հովիվ, որ ուղիսը խմեց
Մեռավ... բայց սերը մնծ
Աշխարհն ամբողջ ողողեց...

18 մայիս, 1910

ԵՐԿՈՒ ՔՈՒՅՐԵՐ

Երբոր մեռան սրտիս լույսերն ու հույսեր,
Խորտակեցի ես քնարս որ ինձ կ'ըսեր
Բանե՞ր որոնց չէի հավատար,— հծծեց «Սեր...»

Կյանքեն զզված՝ առանց ապրած բլլալու՝
Ես կ'երթայի սգվոր սրտիս իմ հրլու
Ինձ անծանոթ տապաններու վրա լալու...

Ինձ անծանոթ տապան մըն էր սիրտս ալ փակ.
Չէ՛ր ծլեր հոն ո՛չ անրջանք, ո՛չ փափաք.
Անապատի երկինք մ'էր սիրտս անապակ...

Ա՜լ փնտրելն հոգնած կյանքի մեծ «Ինչուն»
Լա՜ցի... Սակայն արցունքիս մեջ պաղպաջուն
Տեսածս հուրի՞ էր դրախտի մը թռչուն...

Երբ արթնցա, այդ սուրբ հուրին ա՜լ հոն չէր.
Իզո՜ւր դողդոջ իմ ձայնըս զայն կկանչեր։
Ուրիշ մ'եկավ, Անո՜ր նման, բայց ա՜ն չէր...

Ձեռքըս ձեռքին մեջ դրրի, ու նոր Եվան
Տառապանքի ճամբաներեն դիս Մահվան
Առաջնորդեց՝ պոռնկանալով... Մեղքն էր ան...

...Առջի հուրին երևցավ ինձ այս գիշեր.
Մահվան սնարիս իր նայվածքն ի՜նչ անուշ էր.
Հիմա ճանչցա. Սերն էր ան... Բայց ուշ էր...

9 մարտ, 1911, Երեկո
1 ժամեն գրած

ԻՐԵ՛ՆՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Տեսի՞լք մըն էր այդ, թե ճշգրիտ պատկեր...
Մոխրապատ դաշտի մեջ անթիվ ոսկրեր
Կբարձրանային՝ դարերով դիզված
Նզովքի բուրգի մը պես՝ դեպ Աստված։

Պատմությո՞ւն իրենց։ Ո՛չ ոք չէր գիտեր
Թե կմախացած այդ ազգը անտեր
Անդրհեղեղյան ո՞ր դյուցազներեն,
Ո՞ր կիկլոպներեն կյանք տվավ իրե՛ն։

Ո՛չ ոք չէր գիտեր թե բուռ մը փոքրիկ
Այդ հերոսներու հին ցեղը ռազմիկ
Ո՞ր ակեն խմեր էր թույնն սկզբան
Կարմիր մոլուցքի թույնը ազգասպան։

Հազար խարույկներ մարած ցիրուցան
Ըսին ինձ՝ «Հազա՛ր տարի կռվեցան,

Կովեցան Ույժին դեմ, Ամենուն դեմ,
Կովեցան կովին դեմ ու Իրենց դեմ...

Պատմությո՞ւն իրենց։ Մոխրապատ վանքեր.
Ավերներ ճերմակ, չախչախված գանկեր,
Ոսկրե անապատ, լռություն ու սուգ։
Պատմությո՞ւն իրենց՝ արյո՞ւն, արտասո՞ւք։

Ու ես գոչեցի. «Կյա՜նք առեք գանկեր»։
Ոսկոր ոսկորի միացան ընկեր,
Կմախքներն հանկարծ ստացան մարմին
Հրաշքով կանգնեցան յուրաքանչյուր մին։

Բայց հազիվ կյանքի վերստացան շունչ
Ույզ հազարդարյան ոսկրներն անշշունջ
Սկսան իրար պատռել գժխեմ,
Ամենքն իրար հետ, զավակը հոր դեմ...

Երբ քիչ վերջ բոլորն ալ ինկան արդեն.
Խոր հառաչանքով հծծեցի «Մարդ են...»
Բայց մի ծերունի՝ իրենց վրայեն
Կոխոտեց, անցավ ու լացավ «Հայ են...»

9 օգոստոս, 1910
Շամբերի

ՃԻՇՏ ՍԵՐԸ

Ճիշտ սերն ա՜ն է որ չես ըսեր
Բարեկամիդ ու թշնամուդ,
Կմարես քո հետին լույսեր
Եվ կ՚ամփոփվիս սրտիդ մեջ մութ։

Ճիշտ սերն ա՜ն է որ չես ըսեր
Վճիտ կերպով դուն քու հոգուդ՝
Չես գիտեր դեռ ի՞նչ է քու Սեր
Երանությո՞ւն թե վիշտ անգութ։

Ճիշտ սերն ա՛ն է որ չես ասեր
Հոգեհատոր քու սիրելուդ,
Կուլա՛ս, լացդ մարդ չի լսեր,
Համոզված ես չսիրվելուդ։

Ճիշտ սերն ա՛ն է, ա՛խ մի ասեր.
Բանալին է կորել հոգուդ
Բանտված մեռեր են քու հույսեր՝
Խոսքն անգութ է, լալը անօգուտ...

• • •

Փակեր ես փեղկերդ մեկուսի՝
Մաղձերդ սրտիդ մեջ կհոսի.
Բա՛ց, դո՛ւրս հոսի, վերքերդ լա՛ն է
Ո՛չ, կփակվիս. Սև սերն ա՛ն է։

Առանց հաշվի, առանց հույսի
Կճամբորդես առանց լույսի՝
Ուղիդ տարտամ ու երկայն է
Բայց դուն կ'երթաս... ճիշտ սերն ա՛ն է։

Արյունելով տարակույսի
Փուշեն՝ կ'երթաս հետքեն կույսի
Այդ ճամբուն ծայր մահդ է. կա՛յնե...
Բայց դուն կ'երթաս... որբ սերն այն է։

Տապանիդ վրա ծըլող բույսին
Մի՛ պատմեր սերդ անհույսի,
Կկոխոտեն զայն ունայն է,
Պահե քու մեջ... ճիշտ սերն ա՛ն է։

ԻՏԵԱԼ ԿԻՆՈՐ

Մոլոր ճամբուս վրա քերթողի
Շատեր տեսա, շատեր թողի,
Բայց մեկն անշարժ է կոթողի
Ծման սրտիս մեջ քերթողի...

Իմ սիրականս է ծո՜վ մազով,
Շունչն առավան դեփյուռն է զով.
Ես զայն կ՚երգեմ սրտիս սազով
Քնարս ի՞նքն է ծո՜վ մաղով...

Ըսին՝ սուտի, սուպի, լացի
Քառս մ՚է սիրտը կանացի...
Սիրականիս կուրծքը բացի,
Ան սի՜րտ չուներ... Ու ես լացի։

Իմ սիրականս սիրտ չունի բնավ,
Բայց ա՜յնքան քաղցր են իր խոնավ
Բիբերը մութ... Ըսեք, իրա՞վ
Իմ սիրականս սիրտ չունի բնավ...

Ըսին՝ կնոջ միտք թռչունի,
Պես թեթև է, կշիռ չունի...
Դա՜նկը բացի, վա՜խ մրջյունի
Չափ սիրականս ուղեղ չունի։

Իմ սիրականս չունի ուղեղ,
Բայց հոնքերուն ներքև աղեղ
Ա՜յնքան խորունկ է աչն ահեղ,
Ըսեք, իրա՞վ չունի ուղեղ

Ան չունի ո՜չ սիրտ ու ո՜չ միտ,
Բայց թութակի պես սրամիտ
Սիրտիս թառեր կրկնե հոպի՜տ
Իրեն ուղղված սիրերգս անմիտ...

Գաղտնիքը լա՜յն է, դաշնավո՜ր,
Գզվել, ժպտիլ, քաղցրը, ահավոր...
Ագկն անդին՝ կնոջ մ՚աղվոր
Ո՜չ սիրտ, ո՜չ միտք է հարկավոր։

Old India
11 mars, 1911

Ո՛Չ

«Եկո՜ւր,— կ'ըսե ինձ տարտամ ձա՜յն մ'անդադրում.
— Եկո՜ւր, եկո՜ւր սիրահարի քու տրտում
Սիրտը՛դ բաց ինձ՝ տերևներու շուքին տակ,
Բանաստեղծի փոթորկող սիրտդ անհատակ...

Դու սիրելեն ու խաբվելեն ա՜լ հոգնած,
Եկո՜ւր, եկո՜ւր, անտառներուն ուխտագնաց՝
Թռչներու երգը մութ հոգվույդ ալելո՜ւ,
Ծառե ի ծառ թափառելու ու լալու...

Եկո՜ւր, ես ծեր Վիհին սիրտն եմ գահավեժ.
Ես անտառին ծերուկ սի՜րտն եմ խռովուն.
Վերջալույսի արյունող սի՜րտն եմ հավերժ.
Հեծո՜ղ սիրտն եմ գերեզմանի ցո՜ւրտ հովուն...

Եկո՜ւր, եկո՜ւր, հասունցեր ես ինձ համար.
Մտիր սրտիս մեջ, նույնացի՛ր անհամա՜ր
Ձևերուս հետ էհրուս հետ մահազոր.
Քեզի քանի՜ պիտի ըսեմ իմ հրզոր...

Ի՜նչ հաճույք ա՜ լ մեռած սիրտ մը կըրելեն...
Եկո՜ւր քարիս տակ դիր գըլուխդ լալեն,
Ոչնչիս մեջ ոչնչացիր դու անա՜հ,
Հավե՜րժ նույնիս հետ նույնացիր դուն անմահ...»

— Ո՛չ, ո՛չ։ Դեռ սի՜րտս է համբույրին ծարավի...
Թող ինձ քալե՜լ տառապանքի ու ցավի
Ճամբաներե՜ն, ճամբաներե՜ն դեպի Սե՜ր...
Ո՛չ, մահակոչ քու հրավերդ չե՜մ լսեր...

Սակայն «Եկո՜ւր,— կուլա ինձ ձա՜յնը նորեն.
Անհունիս մեջ անհունացիր լուռորեն...
Բանաստեղծի սո՜ւրբ դիակեդ ես բողբոջ,
Փոսուռանե՜ր, փոսուռանե՜ր կ'ընեմ...»— Ո՛չ։

Շամբերի
1 սեպտ., 1910

ԵՐԳԻՉԸ

Ընտանի օճախ մը կա ինձ դրացի
Հայր, մայր, մանչ, աղջիկ պատառ մը հացի
Համար օրնիբուն աշխատող խեղճուկ
Գործավորներ պա՜րզ հոգիներ գեղջուկ...

Կպատահի որ գիշերներ ձմռան
Լո՜ւռ սենեկիս մեջ բանտված կիսամեռ
Երբեմըն իմ սոսկ շուքեն սարսափած
Իրենց կնայիմ պատուհանես բաց...

Ահա անոնք դեմս են, լամբին շուրջ.
Կ'օծե լույսն իրենց հոգնած դեմքը լուրջ.
Բայց ահա բույնեն հայրիկը խոհեմ
Կիթառը կ'առնե, ծերունի՜ պոհեմ...

Նախ քանի մը վանկ դաշնավոր հեծեց
Բայց հետո քիչ քիչ մայրիկ, փոքրիկ, մեծ
Կ'սկսին երգել միամի՜տ . . . . . .*
Հին օրերու հի՜ն մոռցված երգեր...

Ո՜վ մարդկային սիրտ՝ դաշնության ծարավ,
Փա՜ռք երջանկացնող վանկին կենսագրավ,
Փա՜ռք երգին որով սրտեր կթռչին
Բայց վա՜յ երգերու բուն հընարիչին։

Այդ հին մոռցված երգերուն նըսեմ
Մութ ու մոռցված հեղինակն ես եմ...
Անոնք բո՜ւյն կազմեր կ'երգեն գոհունակ՝
Ես ցուրտ սենեկիս մեջ կուլա՜մ մենակ...

Վա՜յ մեզ որ արհեստ ըրինք սուրբ երգեն,
Պրակնե՜ր հանեցին մեր սրտին վերքեն
Կարծեցինք սիրե՜լ, երգե՜լ շարունակ,
Սակայն կյանքն երգով չ'ապրվի մենակ...

---

* Անբնթեռնելի

...Լալու ժա՜մն է արդ, լացն ալ վանկ վանկին
Հաշվեցինք, տվինք մամուլի ճանկին.
Ախ երգող-քերթող ընկերներ անգին
Մենք խեղճ հրեշներ ենք, ծնունդ ախտագին...

15 մարտ, 1911

ՀԱՅՈՒՀԻՆ

Երբոր լճակի մ՚ափին վրա օտա՜ր
Տեսա զայն նստած կարծես կխոկար
Առանց խոկալու... այս ձևն հարմար
Դատեր էր անշարժ իր դեմքին համար։

Նստեր էր լճին ափին վրա օտա՜ր
Հայտնապես դժվա՜ր շունչ կ՚առներ կուտար
Կուրծքի լայն բեռեն ու քաղցրիկ բեռեն
Կարծես կ՚ամշնար անգիտակցորեն...

Աչքն արևելքի գիշերն էր գինով՝
Թևև կշանար ինք ամեն գինով
Խելոք երևի՜լ. ու լուռ թախիծով
Սդմեր ամփոփեր էր վարսը ծով-ծո՜վ...

Դիտեցի իր լո՜ւռ ճիտը գործունյա.
Տանջված ու պարկեշտ հավը քրիստոնյա,
Եվ մրմնջեցի հին երգը բարի
«Կանա՜յք փափկասուն հայոց աշխարհի...»

Դիտեցի լճին կապույտ սիրտն ազվոր
Ու իր կա՜ս կարմիր շուրթը մեղավոր,
Տեսա կարապի թևերն սպիտակ
Ու խավարակուռ իր աչն անհատակ...

Հառաչ մը թռավ պանդուխտի կուրծքես
Իմ մութ սրտի մեջ հայրենակարոտ
Ու, ո՜վ հայուհի, կսիրեի քեզ,
Թև չ՚ըլլար ոսկի բոժոժը պոռոտ..

Դե՜հ սիրո համար ստեղծված մարմին
Վաղը քեզ կուտան բիրտ ձեռներին մին...
Հայուհին էրկան կեղտին անոթ է,
Կմեռնի անսեր, սե՛ր ամոթ է...

Ան ինձ նայեցավ տրտում ու երկար
Կարծես բիբին տակ մո՜ւթ ժպիտ մը կար.
Հետո շտապեց, գնաց, թունդիկ, գեր...
Նեղված չէր ժպտիլ, այսքան իսկ մեղք էր...

1/2 ժամուն մեջ գրված
31 մարտ, 1911

ՊՁՏԻԿ ՄԱՀԸ

Գիշերն էր շատ ուշ։ Իր անկողնին շուրջ
Հավաքված բոլոր, տրտո՜մ, անշա՜րժ, մո՜նջ,
Կդիտեինք զայն՝ մեր քո՜ւյրը փոքրիկ։
Մայրս հուսահատ կ'արտասվեր լռիկ.
Ու սնարին քով՝ ընկճված, տրկար,
Ձեռքը ծընոտին՝ հայրս կխոկար։

Խե՜ղճ, խե՜ղճ քույր։ Որքա՜ն նիհարցեր էր անե
Մազերը խրռիվ ծոծրակին վրան,
Վիզը ցավագին կերպով գալարած,
Անկենդա՜ն կարծես, լուռ, բազկատարած,
Կոպերը ինկած սև աչերն ի վար,
Հազի՜վ լրսելի՝ քույրրս կհևար։

Սենյակն էր կես-մութ։ Բարձին քով լռի՜ն
Կհյուծեր նիհար բոցը լամբարին.
Մայրրս երազկոտ կուլա՜ր կորովի.
Երեք եղբայրներս, վախո՜վ, քով քովի,
Կնայեինք մեր քրրոջ հոգևար,
Ինչպես կնայի մարդ անդո՜ւնդն ի վար...

Հանկարծ, սարսափա՜ծ, տենդո՜տ, խելահե՜ղ,
— Աչքիս առջևն է դեռ վայրկյանն ահեղ—

Վերցուց կոպերը, ու իր շուրջ բոլոր
Դարձուց աչերուն սև գունդը մոլոր,
Վրտիտ թևերը գալարեց բարձին,
Մազերը կուրծքին վերա դողացի՜ն։

Ու հետո հոգնած, արդե՜ն ուժասպառ,
Տենդո՛վ սարսռացին շրթերն ու խսպա՜ռ
Մընացին հարած մորբս շրթներուն...
Հայրբս որ հո՜ն էր, գունատ, շվարուն,
Գլխով մեզ նշան ըրավ երթալուն,
Ու մենք հեռացանք գլխիկո՜ր, հբլո՜ւ...

Անձրևն էր հանդարտ, անձրևն անդադրում։
Հրաժեշտ վերջին աղոթքն էր տրտում,
Աղոթքը անո՜նց որոնք անկենդա՜ն,
Աչքերնին գոցած մութին մեջ կ'երթան,
Կ'երթան ողբալով, կ'երթան մոլորուն,
Ո՞ւր, ոչ ոք գիտե, հեռո՜ւն, մի՜շտ հեռուն...

Աղոթքեն հետո, գլխարկ ի ձեռին,
Մըռնցանք ու տա՜ք շրթները մերին
Դպցուցինք իրեն սառա՜ծ շրթներուն։
Ճերմակներու մեջ՝ քույրբս զվարթո՜ւն՝
Հավե՜տ անգիտակ հարվածին ահեղ,
Կժպտե՜ր փայտի դագաղին մեջ նեղ։

Վրտի՜տ, սպիտա՜կ զանգվածը իրեն
Փոքրիկ փոսին մեջ դրին մեղմորեն,
Ու մենք քարացա՜ծ կնայեինք վար,
Մինչ հողն ափերով իր վրա կ'իյնար
Կրկնելով իր հի՜ն մեներգը տրտում,
Ու մինչ անձրևը կուլա՜ր անդադրում...

Հանգչե՜, քո՜ւյր, հողի փոսիդ մեջ հավետ,
Հանգչե՜ թարշամող ծաղիկներուն հետ,
Ու թիթեռներուն հետ սիրախտավոր,
Ու թռչուններուն հետ փոքրիկ, աղվոր,
Որոնք մարգի՜ն մեջ կմեռնին անհետ...
Հանգչե՜ թարշամող ծաղիկներուն հետ։

ԳԻՆՈՎ ԳԻՇԵՐ

Օդին մեջ խունկ կա, օդին մեջ համբույր,
Օդին մեջ գգվանք, օդին մեջ գաղջ բույր.
Բյո՜ւր, բյուր դիցանույշ կարծես շշնջեր
Զորս դիս, այս գիշեր օդին մեջ ինչե՜ր...

Ցայգին մեջ թրթռում մը կա անդադրում,
Սիրո պես հրզոր, սիրո պես արտում,
Հազար աստղ կարծես մեկմեկու պաշեր
Վերևս, այս գիշեր երկնին մեջ ինչե՜ր...

Լիճն արծաթ փրփրով վե՜ր կելանա,
Ամեն ալյակե մեկ-մեկ սիրենա
Ինձ կախարդ հրավեր կարծես շշնջեր.—
Այս գիշեր լճիս ծոցին մեջ ինչե՜ր...

Ա՜խ, տաք սիրտ մ'ըլլար, երկու թաց աչեր,
Գլուխիս սիրո կուրծքին վրա հանգչեր.
Թևերս իր մերկ թևին վրա խաչեր...
Այս գիշեր գինո՜վ սրտիս մեջ ինչե՜ր...

Լոզան

ԵՐԱԶՆԵ՜Ր...

Երբեմն հոգվույս ծովուն վրա վեր,
Դիցաբանական հին նավերու պես
Կ'անցնին երազներ.
Առագաստներն խունկ ու հովով լեցուն
Արշալույսներու կ'երթան Աստուծուն,
Շուշա՜ն երազներ։

Երբեմն մտքիս դաշտին վրա դալար,
Ցոթ մուսաներու նման միալար,
Կ'անցնին երազներ.
Զեռք մը պաշտելի մատներն իմ նիհար
Կտանին իրեն շուրթին սիրահար.
Սիրո՜ երազներ։

Երբեմն սրտիս գերեզմաններուն
Ինձ հին սիրելի մահերու խուցեն
Կ'անցնին երազներ.
Իրենց քայլին տակ ոսկրեր կհնչեն
Ու անոնք իմ մեջ իսպառ կջնջեն
Ամե՜ն երազներ։

Ա՜խ, կ'ուզեմ մոռնալ կերուածքս հողեղեն,
Կ'ուզեմ բարձրանալ, երկնի աստղերեն
Գողնա՜լ երազնե՜ր.
Տղու պես թռչի՜լ անուրջիս մեջեն.
Բայց բյուր ցավեր գիս ի հող կխաչեն.
Ո՞ւր եք երազնե՜ր...

Եկեք փռվելու ճամբուս վրա վերջին,
Արյունոտ ոտներս հողին կդպչին.
Եկե՜ք երազներ
Մեր արծվի թևերս հովով լեցնելու,
Հպարտ հոգիս մե՜ծ հույսով լցնելու
Սո՜ւտ, սո՜ւրբ երազներ...

Հոգան

ԵՐԱԶ

Գեղեցի՞կ էր. չեմ գիտեր թե դիտեցի՞.
Կհիշեմ որ իր գիծերն իմ մտքիս մեջ
Զևացնելով՝ գիշեր մ'ամբողջ ես լացի...

Չեմ գիտեր ե՞րբ ճանչցեր էինք մենք իրար.
Սակայն ա՜յնքան մտերիմ էր սերս անշեջ
Որ կարծես ան մշտնջենի քույրս ըլլար...

Ու մեր տղու սիրտերն իրար սիրեցին.
«Համբուրե գիս»,— ըսավ օր մը տրտմապես,
Ես շվարա՜ծ այտրս տարի իր բերնին...

Երբեք դպա՞ն ինձ շրթունքներն իր անշեջ.
Կ'անգիտանամ... Երազ մ'էր այս անոնց պես
Որոնք կ'անցնին երբեմն հոգվույս մութին մեջ...

Հոգան

ՄԵԿԸ ԿՈՒԼԱՐ...

Կ'սպասեի ժայռին վերև
Մահվանս՝ առանց հուզվելու,
Իբրև աշնան չորցած տերև
Պատրաստ էի սուզվելու։
Վա՜ըը, շա՜տ վար, ծովի ափին
Վերջայույսին դեմ դիմաց,
Զույգ մը անցան ծովի ափին,
Ձեռքը ձեռքին մեջ բռնած։
Երկա՜ր, երկա՜ր նայեցան լուռ
Ալիքներուն խելագար,
Հետո հանկարծ միացան լո՜ւռ
Համբույրի մը մեջ երկար...
Ցո՜ւրտ էր մո՜ւթ էր. հյուծախտավոր
Կ'իյնար աշնան տերևը։
Անոնք պագված՝ չգիտցան որ
Մեկը կուլար վերևը...

Լոզան

Մ...

1. Մարմինդ մերկ
Մեհյան մ'է մեղկ.
Մուշկաբուրված
Մետաքս մանված
Մահիճ մը մեղկ...
2. Մարմինդ մերկ
Մատուռ մ'է մեղկ
Մշտնջական
Մեղքի մատյան
Մոխրապատյան...
3. Մահով մաշված մեղքի մակույկ
Մանգաղ մ'ես մերկ, Մընես մանրո՜ւկ.
Մանգաղ մ'որուն մրրկավար
Մատաղներն ենք մակուկավար
Մենք մոլորուն... Մ'եմ ես մանուկ...

Լոզան

ՀԱՐՍՆԵՐԴ

Քայլերուդ ներքև վարդի թերթեր բյո՜ւր,
Մուշկի, հալվեի բույրեր երկնասփյո՜ւռ.
Մեռնեի՜ գինով հեքերուդ զեփյո՜ւռ...

Իրանիդ՝ շղարշ անգի՜ն բեհեզեն,
Կուրծքիդ՝ մարգարտի լանջա՜կ ասպազեն.
Ծկո՜ւր, իմ երկու աչերս քե՜զ կուզեն...

Ոսկի մուճակո՜վդ եկուր, հարս իմ քույր.
Հետքիդ՝ Գանանու յուղեր հեշտարույր,
Պենկալյան վարդեր՝ դեմքիդ կաթնաթո՜ւյր...

Մետաքս հալավիդ արցունք չի կաթի,
Մի՜ լար թելերուդ ետին արծաթի.
Այս գիշեր լուսնակը մե՜զ կծաթի...

Լոզան

ՍԻՐԵ

Այգո՜ւն, այգո՜ւն առվին լացող
Հանկերգն, ու ծառ, ու ծիլ, ու ցող,
Ու արտո՜ւյտն ալ վեր խոյացող
«Սիրե՛,— կ'ըսին.— պիտի մեռնիս...»
Տարիներն ի վեր ահա
Քնարս ձեռքիս տակ կդողա
Հավետ նո՜ւյն վանկը. «Եղեղ տղա,
Սիրե՜, սիրե՜, պիտի մեռնիս...»
Զեփյուռ, թիթեռ, սյուք ու թռչուն,
Ու ալյակները կարկաչուն
Կ'ըսեն՝ «Կյանքի միա՛կ ինչուն
Սերն է, սիրե՛, պիտի մեռնիս...»
Ձեռքս աչերուս կ'անցնիմ արագ.
Ա՜խ, սիրե՜ր եմ սիրտս փլատակ
Մոխիր մ'է տաք... ու շա՜տ հստակ
Ձայն մ'ինձ կ'ըսե՝ «Պիտի մեռնիս...»

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Երջանկությո՞ւն, կա ու չկա.
Իբրև դրախտի անգյուտ թռչուն
Հավե՞ռժ կ'երգե՞, բայց ինք չիկա.
Երազ է երգն իր շառաչուն...
Ան հին դղյակ մ'է ծիրանի
Կատարը հեռուի կապույտ լեռան.
Հոն հասնողին բյո՞ւր երանի.
Բյուրե՞ր ճամփուն վրա մեռան...
Երջանկություն կա ու չկա.
Ջուվ առու մ'է կարկաչուն
Հավե՞ռժ կ'ըմպես հագո՞ւրդ չիկա.
Երա՞զ է ջուրն իր պաղպաջուն...
Երջանկությունն կծածանի
Քու ծիրանի շուրթիդ վրայն.
Հավատացողին բյուր երանի
Բյուրեր ճամփուդ վրա մեռան...

ԱՆՆՔՔ

Սերը շյուղինն է մշտերեր,
Չի համրված են իր օրեր.
Չյունափառ սարը չի սիրեր,
Կատարյալին մեջ Սեր չ'ըլլար...
Տկարությո՞ւն մ'է սեր մարդկանց,
— Գեղեցկագույնն տկարությանց.—
Վերն աստվածնէրը լրակյաց
Չե՞ն սիրեր, բարձրը Սեր չ'ըլլար...
Նախանձեցավ հզոր Որ էն
Իր մարդուն այդ տկար կողմեն,
Զայն դուրս վանեց սուրբ նեմեն,
«Կե՛ր, ա՛ռ,— ըսավ,— բայց Սեր չ'ըլլա...»
Ու կսիրենք... Բայց Ան իր լար
Ուղղեց շեշտ մեր սրտին դալար...
Այսպես՝ եթե սիրտը չը՛ լա՛ր
Երջանիկ սերը Սեր չ'ըլլար...

ՎԱ՞ՂԸ

— Վա՞ղը...— ասիր ինձ տրամաբար
Ա՞խ այդ մեկ վանկը անհընար,
Հավիտյաններ կիսաստանար.
Շրթունքիդ այդ խաղը՝ «Վա՞ղը...»
«Վաղը...» ինչո՞ւ. մինչդեռ այսօր
Այնքան չքնաղ ես ու բոսո՞ր.
Ու մինչ մեր վրա ա՛յնքան հրդոր
Կ՚իշխեն այս պահն այսո՛ր... «Վա՞ղը...»
Այսօր սերն է այսօրն հմայք.
Այսօրն հույսն է, այսորը կյանք,
Այսօր երազ այսորը խաբկանք
Մինչ դուն ինձի ասիր «Վա՞ղը...»
Ու երկչոտ սիրտդ աղջիկա
Մաղթեց որ այդ վաղը չի գա.
Վաղն ի՞նչ է որ, վաղը չըկա՛,
Գերեզմա՞ն մ՚է, հոգի՛ս, վաղը...

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Թարթիչներուդ ետին թաքակ
Ե՛վ անարատ ո՛ւ անառակ
Աչերդ վառած հազար լույսով
Կհրահրին զիս հազար հույսով...
Ու համամիտ ու հակառակ
Ե՛վ միամիտ, ո՛ւ անառակ,
Կտանջե՞ս զիս՝ դուն մեղր ու թո՛ւյն,
Ո՞վ ահավոր հակադրություն...
Վարդ շուրթերուդ միջեն կըրակ,
Ո՛ւ անապակ, ո՛ւ անառակ
Կժպտի՞ս ինձ ու չգիտես
Ի՞նչ դժոխքներ մեջըս կ՚այրես...
Կո՞ւյս կուսությանդ հակառակ,
ո՛ւ անառիկ, ո՛ւ անառակ,
Կփորձես զիս, աղվո՛ր, կարծես
Իմ ծեր հոգիս լացնել ուզես...

ՊՉՏԻԿ ՍԻՐՏԸԴ

Ես մերթ կխորհիմ թե աստղերն ի՞նչ են,
Սիրող աչերու պես քաղցր ու ջինջ են.
Ու ամպերն ի՞նչ են, ու Աստված ո՞վ է
Նախանյութն առջին մարմի՞ն է, հո՞վ է...
Ու չէ՞ կարելի մեծ տիեզերքին
Մըտովի հասնիլ օր մը եզերքին.
Ու Անհունությունն իրավ անհո՞ւն է,
ու Անմահությո՛ւնը լոկ անո՞ւն է...
Հիմար եմ որ այսպես խոր կխորհիմ,
Ես որ չի գիտցա դեռ, պաշտելիդ իմ,
Ինչո՞ւ օր մը զիս սիրով սիրեցիր,
Թե կսիրեիր՝ ինչո՞ւ լքեցիր...
Չկրցա ճանչընալ պզտըլիկ սիրտըդ,
Իմ մեկ ափիս մեջ փշրելիք սիրտըդ,
Բայց դեռ կխորհիմ՝ երազիս մեջեն՝
Թե աստղերն ի՞նչ են... Սիրո պես ջի՞նջ են...

ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ես վարդին ըսի. «Ո՞վ գեղեցիկ վարդ
Սիրտըս լեցուցեր սև ամպեր բարդ բարդ,
Կուրծքիս վրա դնեմ ժըպիտըդ զվարթ...»
Ան ձեռքըս խոցեց
Թերթերը գոցեց.
— Թիթեռնին կուզեր բանալ իր սիրտը։

Կարապին ըսի. «Ո՞վ ճերմակ կարապ,
Գգվանքով լեցուր իմ հոգիս պարապ
Սիրտը սև դժոխք մըն է խոր վիրապ...»
Ան թևըս հրեց,
Հեռացա՜վ, լռե՛ց.
— Ալյակին կուզեր բանալ իր սիրտը։

Սեր սարին ըսի. «Ո՞վ խոժոռած սար,
Գահավեժ ձյունիդ մեջ խե՞ղճ հոգիս ա՛ռ,

Պահն խեղճ հոգիս պատանքիդ մեջ սա՜ռ...»
Ողբիս դառնահեծ
Մեր սարը լռե՜ց.
— Ան ջրվեժներո՜ւն բացավ իր սիրտը։

Աղջկան ըսի. «Ո՜վ քույրիկ, ո՜վ կույս,
Բնությունն անտարբե՜ր կլռե հոգվույս,
Դուն սիրե գոնե զիս, իմ հետի՜ն հույս...»
Հուրի դեմքը կարմրեց.
Փախավ ու լռե՜ց.
— Ան խե՜նթ հովերուն բացավ իր սիրտը։

ՄԱՐԳԱՐԻՏԸ

Փոքր, աննշան էակ մը կա.
Երկու կոպիտ կեղևով փակված
Իր խավարին մեջ կխոկա,
Կ'ըսես սև քար մ'է անկասկած...

Բայց ան կ'ապրի, կուլա, կ'ըզգա։
Երկու կոպիտ կեղևը բաց
Հրաշալույս մարգրիտ մը կա,
— Իր արցո՜ւնքն է բյուրեղացած

Ինչ փո՜ւյթ թե զայն մեռցնել կուգա
Մեկն՝ ու կ'առնե գոհարը թա՜ց.
Ան էն աղվոր կույս աղջկա
Պիտի փայլի կուրծքին վրա բա՜ց...

• • •

Այսպես քանի՜ խեղճ քերթող կա
Թշվառ խուցի մը մեջ բանտված
Գաղտնի շքեղ կյանքին վրկա
Ոսկի քնար մ'ունի պահած...

Ան կցավի, կուլա, կ՚ըդդա՝
Ի՞նձ, քեզ համար ալ անկասկած.
Սրտին մեջ բյո՞ւր բյո՞ւր երգ կա
Իր արցունքով բյուրեղացած...

Ինչ փո՞ւյթ թե մա՛հը շուտ կուգա
Աններող մահն անգիտացվա՞ծ.
Ան պիտ՝ երգվի կո՞ւյս աղջկա
Շրթներուն վրա՝ աչերով թաց...

* * *

Ա՞խ, չա՞ր աղջիկ դուն ապագա,
Կուրծքի մարդրիտդ, ե՛րգդ ալ երգած
Մի՛ մոռնար թե ուրկե՞ կուգա.
Ան արցո՞ւնք մ՚է բյուրեղացած...

ՀԱՂԹՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Գիտե՞ս հեքիաթը, սիրուհիս,
Այն իշխանին, որ անցավ
Սար ու ծովեր, ու աշխարհիս
Գեղեցկուհվույն տիրացա՞վ...
Հաղթահարեց շանթն ու քամին
Մազե կամուրջն ալ անցավ
Դուրս արտաքսեց իր թշնամին,
Գեղեցկուհվույն տիրացա՞վ...
Արբեցուց զայն գեղեցկուհին,
Քնացուց կուրծքին վրա կանգուն
Ու հանձնեց նենգ թշնամիին
Որ մեռցուց զայն դեռ ի բո՞ւն...
Մեռավ բաջն իր երազին մեջ
Դեռ կ՚երազե դիրկն անփույթ,
— Այսպե՞ս կուրծքիդ վրա անշիջ
Քնացուր դիս մահս ինչ փո՞ւյթ...

ՄԵՂՔԻ ԿԻՆԸ

Ես երազիս երկինքներեն,
Ես իմ կապույտ մենութենես
Վա՜ր, վա՜ր իջա խոնարհորեն.
Սարսափա՜ծ իմ տրտմութենես...
Սիրույս վարդերն հովին տալով,
Թերթերն Հույսիս փեթռտելեն,
Ստորնացա՜, իջա՜ լալով
Սեպ գահույքիս յոթն ոտներեն...
Քառոներեն իջա տղմուտ.
Խորվիրապիդ մեջ հասա քեզ.
Դուն հոն էիր Մեղքին պես մութ
Ու Գեհենին պես բոցակեզ...
Ու չգիտցա՜ր երբ վրաս կ'իշխեր
Վիշապ մարմի՜նդ գետնամած՝
Որ դժոխքիդ մեջ այդ գիշեր
Ասուվա՜ծ մըն էր ապաստանա՜ծ...

ՀՈՎԻԿԸ

Գարնան հովիկ, ուստի՜ կուգաս։
— Կուգամ ձորեն, կուգամ սարեն,
Սար թե ձոր ինձ հավասար են,
Կուգամ մարգիս այցելելու...
Ամրան հովիկ ուստի՜ կուգաս։
— Համբույրներու կուգամ շունչեն
Առուներու սուրբ մրմունջեն,
Կուգամ վարդերս ցանելու...
Աշնան հովիկ ուստի՜ կուգաս.
— Կոկոն կոկոն վարդերս փարթամ
Մեռան թերթ թերթ... Թո՜ղ ինձ, կ'երթամ
Հավետ գարուն մը փնտրելու...
Ձմռան հովիկ, ուստի՜ կուգաս։
— Ի՜զուր, չիկա՜ հավետ գարուն.
Կ'երթամ դաշտն ծեր քարերուն
Վրա մամուռ բուսցնելու, լալու...

ՍՊԻՏԱԿ ՈՃԻՐ

Դեղջուկներ հանկարծ զարթնած սրտատրոփ
Կլսին հեռվեն ձայներ սրտատրոփ
Պայթյուններ գուժկան, գոռումներ վայրի,
Հղիտեն հեռվի գյուղն ալ որ կ'այրի։
Բարբարոսներու գոռ գունդն է կուգա.
Բոցի տալե վերջ գյուղական հեռակա
Իրենց վրա կուգա, իր արշավին տակ
Պիտի մնա լոկ ափ մը մոխիր տար։
Ի՞նչ պիտի ընե։ Կույս մը գեղագույն
Առաջ կնետվի մոմի պես տժգույն։
Ո՞ւր պիտի երթա. ծեր մայրը լալկան
Մոխիր կթափե գլխուն աղջրկան։
Ահա վարդ մարմին ճերմակ քոզ հագավ.
Ահա կմեկնի. չոգեցավ, պագավ
Գյուղին հողը սուրբ՝ խաչքարի առջին.
Քայլերը մութին ի՞նչ շուտ կթռչին...

* * *

Կթռչի մութին, ստվե՛ր հոգեհմա.
Ահա կհասնի, ա՛լ հասավ հիմա,
Զեռքին ծաղիկներ՝ բարբարոս պետին
Առջև դողալով ծնրադրեց գետին։
Ի՞նչ լույս մ՚անանուն կծորի համակ
Իր ծիրան մարմնեն՝ քոզին տակ ճերմակ.
Կուսական ի՞նչ շնորհ, ի՞նչ ույժ ահագին
Որ կրնա լացնել վայրենու հոգին։
Ահա կպարե շար պետի չորսդին՝
Կարծես բոցին շուրջ պարն է թիթեռնին,
Ճկո՛ն իրր սեզ, թեթև՛ իրրև հով,
Այլանդակ պարեր՝ իր հոգվույն մահով...
Ու ան կպարե, կպարե, տեսե՛ք,
Արյունռուշտ բոլոր ռազմիկներն այս սեզ
Դեղեցկի առջև ի՞նչ սրտի ա՛խով
Համայված շարվեր են՝ կարծես թե վախով։

Թ. Սեսակ, Լոզան

Յուհեր Ալպլէյ. 1910

Թ. Սեւակ և Յակոբ Կոպկիր, Լոզան, 1910

Բարեն Սեսակ, Արշակ Չոպանեան, Գոմիտաս

* * *

Ա՜խ ամրան գիշեր, բույրերո՜վ օծուն,
Դիցաբանական հեքեերով լեցուն,
Աստղազարդ երկինքն արծաթ կոնք մ՚ըլլար,
Կարծես ճերմակ կույսն ալ կրոնք մ՚ըլլար...
Հեթանոս պետի հոգին դիցանույշ
Բյո՜ւր հիշատակներ կ՚օրորին անո՜ւյշ.
Հագեցած հազար ոճրով անանուն,
Սիրտն իր քաղցրության պետք մ՚ունի անհուն...
Ու երբ հրամանին վրա վագրի մորթով
Վրանը կկանգնի, չի գիտեր փութով
Ինչո՜ւ ներս մտավ կույսին հետ հըլու,
Արդյոք տոփալո՜ւ համար թե լալո՜ւ...
Ու մինչ ռազմիկներ քնացան անզգած,
Ու մարեցավ լույսն, ան գրեթե չ՚զգաց՝
Երբ սեղմեց կույսն իր կուրծքին վրա հրեշի՝
Թե սրտին մտավ դաշույնը վրեժի...

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լեֆոնդ տը Լիլ

ՑՈՐԵԿ

Ցորեկ, դշխո ամառվան, դաշտին վրա փռված մունջ,
Ծաձկուլթներու պես արծաթ՝ լուրթ երկինքեն կ'իջնի վարչ
Ամեն ինչ լուռ։ Փոզփոզի՛, հրդեհի օդը՛ անշունչ.
Հողը թմրեր է համակ՝ պարեզոտին տակ հրավառ։

Տարածությունն է անծայր, դաշտերուն վրա շուք չիկա։
Եվ ցամքած է այն աղբյուրն ուր խմելին բյուր հոտեր.
Մութ, անորոշ սահմանով սա անտառն ալ հեռակա՝
Կքնանա հոն անշարժ, հանգիստով մը ծանրաբեռ։

Լոկ մեծ, հասուն ցորեններն, ծովու մը պես ոսկեհեր։
Ալ չուզելով քնանալ՝ կթավալին հոն հեռուն.
Նվիրական այն հողին խաղաղասե՛ր որդիներ՝
Անոնք քամեն աներկյո՛ւղ՝ բմասանան առջևն։

Հառաչի մը պես՝ իրենց հոգիներեն հրրավառ
Իրենց միջև փսփսացող ծոցեն ծաները հասկերուն՝
Մերթ ծածանում մը ծրնի դանդաղածո՞ւփ, մեծափա՞ռ,
Ու կմեռնի փոշլի հորիզոնին մեջ հեռո՞ւն։

Մոտը, պառկած խոտին մեջ, ճերմակ քանի մը եղներ,
Լորձունք թափեն իրենց հաստ ակռաներեն համբաբար.
Եվ հետևին նվադուն, աչքերով սև, անվեհեր,
Երազներու ծիրերուն, որ երբեք չեն վերջանար։

Թե ցորեկին անցնիս դուն հրավա՞ռ այդ դաշտերն՝
Սիրարդ լեցուն հրճվանքով կամ դառնությամբ մը անլուր,
Փախի՛ր, բնությունն է պարապ, և արևը կսպառե.
Ոչ ոք հոս է կենդանի, ոչ ոք զրվարթ կամ տրխուր։

Բայց խնդալեն կամ լալեն՝ երբ հուսախաբ վերջապես,
Մոռացումին ծարաված՝ աղմկալի աշխարհին,
Չի գիտնալով ա՛լ սիրել կամ անիծել, թե կ'ուզես
Ըմպել վայելքն հեշտությամբ մը գերագույն, տրտմագին,

Եկո՛ւր. քեզի կխոսի արևն լեզվով մեծափա՞ռ,
Ընկզմե դու անվախճան խո՞ր անողոք իր բոցին,
Եվ հետևագույն արոտներն վերադարձիր համբարար,
Սիրարդ թաթխած յոթն անգամ՝ ոչինչի՛ն մեջ երկնային։

Մ. Տրյուբեր

ԵՐԵՔ ԾԱՂԻԿՆԵՐ

Աղվոր գիշեր մ'ուր կզնդու հոգին՝
Ցորեններու մեջ՝ կապտածաղիկին
Համբո՜ւյր մը տվի, համբո՜ւյր ջերմագին.
Ո՜վ դուք, որ կ'անցնիք, քաղեցի՞ք դուք զայն։

Թախծոտ էր հոգիս, երկինքըս տրտում,
Բայց ծաղիկներուն անո՜ւշշ էր բուրում,
Իմ սե՛րըս դրի ես վարդի խորքում.
Ո՜վ դուք որ կ'անցնիք, պիտի քաղե՞ք զայն։

Սրափուշին քով ծարավա՜ծ, թախծո՜տ,
Որ իր անձկութեամբ զիս քաշեց իր մոտ,
Վերքերս թողուցի ես մելամաղձոտ.
Ո՜վ դուք, որ կ'անցնիք, ո՜հ, մի քաղեք զայն։

Հանրի Հայնե

«Կխնդրեի որ թույլ տայիք ինձ, Տիկի՜ն,
Ի՜նձ, Մուսայի խոտավարակ զավակին,
Հանգչեցնել բանաստեղծի տխրագին
Իմ գլուխը կարապի ձյո՜ւն ձեր կուրծքին...»

«— Ինչպե՜ս, Պարո՜ն, այսպես բաներ համարձակ,
Մարդերու մեջ առաջարկել ինձ կրցաք...»

ԱՆԹԱՓԱՆՑԵԼԻ՞Ն

Իրմե՛ն չի կրցա՞ր դուն բառ մը առնել
Քու այս վիճակիդ համար սիրակեզ.
Չի տեսա՞ր իր մութ աչքին մեջ անել՝
Թե սիրույդ փոխան ան կսիրե՞ր քեզ՝

Երբեք չի կրցա՞ր աչքերեն խոնավ՝
Թափանցել հոգվույն հուրքին մեջ անշեջ.
Եվ սակայն ճիշդ որ է՞ շ մը չես բընավ,
Ազնի՜վ բարեկամ, այս գործերուն մեջ...

Ավազուտին վրա համայն
Գիշերն իջեր է լռելյայն։
Կծաթի լույսն ամպին մեջեն։
Ալիքները կմրմնջեն,

«Այս մարդը խենթ մը չէ՞ իրավ.
Կամ սիրահար մը մտագրավ.

Ան տխուր է, գվարթ այնքա՞ն,
Այնքա՞ն գվարթ, տխո՞ւր սակայն...»

Բայց չեն լուսնակը հեգնորեն
Վճիռ ձայնով կ՚ըսե վերեն,
«Թե՛ սիրահար, թե՛ խենթ, տխեղծ,
Ամեն մեղքիս վրա՝ բանաստե՛ղծ...»

ԱՐԱՐՉԱԴՈՐԾՈՒԹԻՒՆ

Ի սկզբանե Աստված ստեղծեց
Արեւն ու աստղերը փոքրիկ ու մեծ,
Ասոր վրա դեռ շինեց եղն ու կով
Անշուշտ Ճակատին տաք տաք քրտինքով.

Հետո դաշտաններ վայրի, խեղճեղ.
Առյուծներ իրենց հիրանով ահեղ.
Առնց պատկերին վրա ահավոր,
Ստեղծեց հետո կատուներ աղվոր։

Ու անապատը լեցնելու համար
Վերջին ստեղծեց մարդերն անհամար.
Մարդուն պատկերին վրա պատվական,
Կապիկներ շինեց հետաքրքրական...

Դժբաղդ մոգ մըն եմ մեռելահրմա.
Որ իմ իսկ դյութիչ բոլորակիս մեջ
Անխոհեմորեն բանտված եմ հիմա։

Կապված իր ոտքին, ես անմբխիթա՞ր
Կդիտեմ հավետ իր աչքերն անշեջ,
Ու ժամերն այսպես կ՚անցնի՞ն անդադար։

Ու ժամե՞ր, օրե՞ր, շաբաթնե՞ր բոլոր
Կ՚անցնին երազի մը պես քաղցրորոր։
Հապի՞վ գիտեմ ի՞նչ որ լեզուս կ՚ըսե.
Չեմ գիտեր ինչ որ ինք ալ ինձ կ՚ըսե։

Բայց երբեմն ինձ ա՜յնպես կուգա որ
Բերնիս կհրպին շրթունքներն անոր,
Այն ատեն է որ հոգիս կլսե
Իր խորքերուն մեջ՝ ճարճատնե՜ր բոցե...

Թեև ա՜յնքան արագ անցար առջևես,
Բայց անգամ մը ետիդ դարձար անհանդարտ.
Հարցո՜ւմ մը կար քաց շրթներուդ մեջ կարծես
Աչքիդ մեջ բո՜ց մը հրպարտ։

Ուրեմն ինչո՞ւ զքեզ բռնել չուզեցի
Քու փախուստիկ ձյունասպիտակ լաթերեն,
Ու չի կրցա քայլիդ հետը կանացի
Գանել անգա՜մ մը նորեն։

Վայրենությունդ անհայտացավ ա՜յնքան վաղ
Ուրիշներուն պես հըլո՜ւ ես, հոգեհմա,
Անտանելի կերպով բա՜րի, ու ավա՜ղ,
Դուն կսիրես զիս հիմա...

Արեղանները իզո՜ւր կտքնին,
Ես չեմ հավատար իրենց երկինքին.
Բայց քու աչքերուդ կհավատամ գոնե,
Երկինքըս հո՜ն է։

Արեղանները իզո՜ւր կխոսին,
Ես չեմ հավատար Տեր-Աստուծո սին,
Հավատքըս միա՜յն սիրտիդ է կապված,
Ա՜լ չունիմ Աստված։

Ալ հավատք չունիմ ես ո՜չ Դժոխքին,
Ո՜չ չար Ոգիին վրա մոլեգին.
Միայն աչքերուս կհավատամ դաժա՜ն,
Սրտի՜դ դրուժա՜ն...

Ալպեր Սամեն

ՀԵՐՄԱԿ ԳԻՇԵՐ

Ամաններուն մէջ այս գիշեր տրտմովին
Պիտի դողան ծաղիկներ՝ թա՜ց տակավին,
Սենեկին մէջ ո՛չ մեկ լամբար ուր տժգո՛ւն
Պիտի սուզիս երազանքի մը հանգուն։

Ու շնչելու համար մեր խինդն լիովին՝
Դաշնակին վրա ուր արցունքներ պի՛տ՝ հուզվին,
Զեռքերդ կյա՛նք պիտ տան վշտի երգերուն,
Եվ հիացա՜ծ պիտի լըսեմ ես սարսռո՜ւն։

Այսպես պիտի սիրենք անխոս, խիստ անո՜ւշ,
Միա՜յն համբույր մ'եղունգներուդ վրա քնքուշ՝
Ջուրին նըման պիտի հորդե սափորեն.

Ո՜վ քույր, և մեր երկինքին մէջ սրբության,
Լուռ սերերու Ցանկությունը կուսական՝
Աստղի մը պես պիտի ելլե համբորեն։

ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Այս իրիկուն բառ մը չիկա տրտմագին
Որ պարփակե լռիլ ուզող իմ հոգին.
Ճրպոտ մը թող վեր բարձրանա հոգեթով՝
Իմ երազիս համար մենիկ երգելով։

Ո՜վ բյուրեղյա բաժակ, լեցո՜ւն հուշքերով,
Նվաղ, քու ջուրդ միայն կուտա կյանք, կորով.

Ու կլուծվի քու խորհուրդդիդ մեջ հոգիս՝
Ինչպես շուրթը կմիանա շրթունքին։

Ոսկի՜ հեծեծ... Օ՜հ, կախարդանք մոգական
Հո՜վ մը թեի վազեց մարմնին վրա թեթև
Ձեռքեր հրպին մեզ հրեշտակի փափկաթև։

Դաշնակությո՜ւն, դու ես մեր կույսն օգնական,
Որ սբրտիդ վրա, ողորմելի տըղու պես,
Մեր սիրտն անհուն, մեր խե՜ղճ սիրտը կ'օրորես։

ԱՄԱՌՎԱՆ ԺԱՄԵՐ (6)

Ծաղիկ թերթեր կ'անձրևին։
Կըծբոի բոցը հովևն.
Երկու աչքերս քեզ ունին,
Աչքերս լալո՜ւ պետք ունին։

Վիշտն շինված ո՜վ կավ հին
Ցավերն քեզ հետ ի՞նչ ունին
Որ հեգ հոգիդ կվրդովին։
Ծաղկե թերթեր կ'անձրևին։

Կ'իյնան վարդերն տրտմապես.
Ես չեմ խոսիր, կ'ունկնդրես,
Մ՞ազերու տակ՝ քարացած։

Սերը ծանր է, Սիրտս հոգնած
Այս թեն ի՞նչ է, Սիրուհի
Որ միշտ վրայեն կսահի։

Պոլ Վերլեն

ԶԳԱՅԱԿԱՆ ԽՈՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հին պարտեզին մեջ սառած, ցուրտ, մենարա՜ն,
Քիչ մ՚առաջ անցան երկու կերպարան։

Աչքերնին մեռա՜ծ, թո՜ւյլ է շրթունքնին.
Խոսքերնին հազիվ երբեմն կլսվին։

Հին պարտեզին մեջ սառած, ցուրտ, մենարա՜ն,
Արթնցուցին անցյալն երկու ուրվական։

— Հին օրերու մեր հիացումն կհիշե՞ս։
— Ինչո՞ւ ուրեմն դայն մտքին մեջ կձգես։

— Սիրտդ տրոփե՞ երբ իմ անունս լսկ հընչեմ։
Երազի մեջ տեսնի՞ս հոգին իմ միշտ։— Չէ՛։

— Երջանկության ա՜հ այն օրեն հրճվալի՝
Ուր բերանին միացնեինք։— Կարե՛լի։

— Ի՜նչ մեծ էր երկինքը, որքա՜ն մեծ էր հույս։
— Հազիված փախա՜ն՝ հույսն երկինքին մեջ անլույսէ

Այսպե՞ս գնացին վարսակներուն մեջ անբեր.
Գիշերը միայն լսեց իրենց այդ խոսքեր։

Անտոնեն Բրյուն

ՔԵՐԹՈՂ

Օ՜հ, ինչո՞ւ ասի. «Ալ Բերթող չեմ ես։
Ի՜նչ գառն հայհոյանք։ Երբ վինի մը պես
Սիրտիս վրա կ՚զգամ գլուխդ ոսկեգեղ,
Երբ երջանկության տա՜ղդ ինձ կ՚երգես,
Օ՜հ, ես քերթող եմ. քընարի մը պես
Հրճվանքեդ մատիս տակ կնվագես,
Շրթունքդ կ՚այրի համբույր կբրակես,
Ու կգինովնամ ձայնեդ հրբակեզ...
Քերթո՜ղ եմ, ազվո՜ր, դայն կպարտիմ քեզ։
(նմանող.)

Անանուն

ՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՎԵՐԻ ԶԱՅՆՅԱԿԻՆ

Ինչո՞ւ այդպես կմրմնջես գաղտնապես
Թե հոգիիդ մեջ ծընած սերն անմոռաց
Անդարման ախտ մ՚է, թե լրռել պետք է քեզ
Ու թե նե քու սերեդ ոչինչ չէ գիտցած։

Բնա՜վ չէիր կրնար անցնիլ դուն անտես
Եվ պետք չէիր քեզ նրկատել մենակյաց.
Սիրելագույն հոգիները մերթ այսպես
Չկրնալով հայցել՝ ոչինչ չեն գրտած։

Ասված մեզի՜ պարգևեց սիրտ մ՚զգայուն.
Եվ շատ քաղցր է լսել է՜ն պարզ կնկա քով՝
Իր քայլերեն ծընող մրմունջը սիրույն։

Նե՜ որ կ՚ուզե մընալ Պարտքին իր հըլու,
Հուզվեցավ, երբ կարդաց քերթվածն լի ի՜րմով,
Լուռ հասկցավ, բայց... կքաշվեր ըսելու...

Անրի Բերսոն

ՍԿԵՊՏԻԿՈՒԹՅՈՒՆ

Կսիրե՞մ քեզ, ո՞վ անո՞ւշ բառ քաղցրահունչ,
Մշտնջյա երգ, որով կ'օրրես իմ հոգին,
Ինչպես կ'օրրեն տըղուն, որ լուռ մընա, մունջ։
Քանիներո՞ւ զայն, անխորհո՞ւրդ, ըսիր, կին։

Գիտեմ բայց մեր սիրտն է այնքան տարորեն՝
Որ տակավին կուզեմ հավատալ այդ խոսքին,
Ինչպես մանուկ մ'որ երազին մը վերջնորեն՝
Փակե աչերն, որ հրեշտակներ տեսնե կրկին։

Փակեմ աչքերս ես ալ սիրո տեսիլքին,
Անունդ, որու մեջ սուզի միշտ իմ կամք,
Ես երազող տըղու նըման նայիմ մութին՝
Ուր կփթթի կապույտ ծաղիկ մը— խարկանք։

ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԵՆ ՓՐՑՎԱԾ ԷՋԵՐ

ԿԵՍ ԽԵՆԹԸ

Գեղեցիկ առտու մը անակնկալ նամակ մը առի Պոլսեն։ Հայտնի բնտանիք մը կխնդրեր ինձմէ իսկույն Մոնթե-Քարլո մեկնիլ՝ որովհետև հոն իրենց տղան հանկարծակի խենթեցեր էր, ու իբրև փաստ՝ ներփակ սա՛ տեսակ նամակ մը ղրկեր էին՝ տղուն կողմէ իրենց ղրկված.

«Սիրելի սիրեցյալ

Գրությունդիդ ստանալով ստանալուս պես ստացա ու պատասխանը գրելով գրելիքիեն կգրեմ...»

Ու այս ոճով 16 խոշոր երեսներու Բայց ինչ որ զիս պարունակութենեն ավելի հետաքրքրեց՝ գիրերուն ձևն էր։ Հազար հինգ հարյուր տարիներ վեր Սահակ-Մեսրոպին գյուտը այսքա՛ն շարշարված չէր։ Այլանդակ հասակներով, դողդոջո՛ւն, բարակո՛ւկ գիծեր՝ որոնք կ'ելլեին, կ'իջնեին, ուր երթալնին չգիտնալով կշարվեին, տեղ մը կմնային, կամ ինքզինքնին գտնելու համար ծուռ ու մուռ շրջանակ մը կծգեին և խոշոր բառ մը ծակի մը մեջ կսեղմեին, այնպես որ բառերը՝ իմաստ մը տալու ճիգով ստիպված էին կրկնվելու, տասնապատկվելու, քովի քով շարվելու, գլուխ գլխի տալու՝ զինվորական գծով տողանցքի մը պես։

«Հարգանքներուս հարգանքներով հարգանքներս...»

Ու այս 16 էջերուն մէջ ստորակետ մը, վերջակէտ մը անգամ չի կար։ Որովհետև այդ ամենափոքր բանը, որ կետն է՝ իր տեղին դնելու համար բավական որոշություն ու վճռականություն պետք է, բա՛ն մը, որ շա՛տ խելոքներուն անգամ կպակսի։ Ու նամակին պարունակությունը այնքա՛ն ալ ապուշ չէր։ Տարտամ ու անհամարձակ կերպով ա՛յն կհասկցվեր, որ տղան իր դրամները կերեր, նոր ոսկիներ կ'ուզեր. (այդ ոսկիներուն թիվը չկարդացվելիք բան մըն էր, թվաբանություններու մէջ չմտած, բոլորովին նոր թվանշան մը...)

Ճամբորդ մը ասկե ավելի խելացի ի՞նչ բան կրնար պահանջել իր հարուստ ծնողքեն։ Բայց անոնք կ'ենթադրեին, որ անպատճա՛ռ տղան իր հարստությունը խաղարաններուն մէջ կորսնցնելով խելքին եկած էր։

Շոգեկառքին մէջ 18 ժամեր քանի՞ անգամ կարդացի այդ 16 էջերը՝ մտքիս մէջ լույս մը ծնցնելու համար, ու ընդհակառակը, այդ բոլոր նիրելիք սիրեցյալները, շոգեկառքին ցնցումները, անիվներուն տկտկոցը բոլորովին թմրեցուցին ուղեղս։ Այդ նամակին ապշությունը անհանգստացուցիչ, գրեթե վարակի՛չ բան մը ուներ իր մէջ։ Ու կես գիշերն մը վերջ, բոլորովին շվարած, իջա Մոնթե Քարլոի կայարանը։

Անծանոթ քաղաքի մը մէջ ո՞ւր երթալ այդ մութին։ Նեղ փողոցի մը մէջ, դռան մը վերև, աղոտ լույս մը կպլպլար, մի՛ս-մինակ ու կասկածելի (չեմ գիտեր ինչո՞ւ)։ Մոտեցա, պանդոկ մըն էր. ազ-պզպեղ դեր կին մը սենյակ մը ցուցուց. բայց դռան կղպանք չունենալը անհանգստացուց զիս...

— Հոս վստահության տուն մըն է,— բսավ կինը...— Գարոնը մինա՞կ է...

— Այո՛,— պատասխանեցի...— սնտուկս կայարանը ձգած եմ...

Փոքրիկ սենյակ մըն էր՝ թուղթե ծաղիկներով գաղջ, թափանցող, անանուն բույր մը կար օդին մէջ, իգական հոտ մը։ Լայն անկողինը հագի՛վ ծածկված էր. հմոթկած սավան մը՝ խորհրդավոր փոսերով։ Մոմս մոտեցուցի, երկու կարմիր աղաթ տեսա, գեռ թաց...

Մնաս բարո՛վ, վստահության տուն...

Ու նոր արշավ մը սկսա մութին մէջ, փողոց փողոց, մինչև որ հոգնած գլուխս մաքուր բարձի մը վրա կարողացա հանգչեցնել։ Առավոտուն, սովորական ժամիս արթնցա։ Դեռ սենյակը խավար էր. թնացա ու նորեն արթնցա, նորե՛ն խավար. բայց այնպիսի խավար մը՝ ինչպես ըլլալու էր աղջամուղջը, գեռ Աստված իր նշանավոր «ելիցի լո՛ւյս»ը չարտասանած։ Այս որքան երկար էին Մոնթե Քարլոյի գիշերները։ Նորեն ու նորեն թնանալ փորձեցի, մինչև որ պանդոկապետը, կյանքիս վրա կասկածելով՝ եկավ դուռս բանալու։ Ա՛յն ատեն միայն տեսա, որ աչքս սեն-

յակը պատուհա՛ն մը, ծա՛կ մը անգամ չուներ. կատարյալ տուփ մը. դիշերը չխեղդվիլս ալ հրա՛շք մը պարզապես։ Ոսկեղօծ քաղաքներու դնահատության մեջ այս փաստն ալ մի՛ մոռնաք։

Դուրսը կեսօր էր։ Շիտա՛կ խենթիս հասցին գացի ու տանը դիմաց ճաշարան մը նստա։ Խորհրդավոր դուռը բացվեցավ, գլխուն վրա կարմիր ֆեսով մարդ մը երևցավ, մոտեցա ու բարևեցի։

— Աստուծո՛ւ բարին, ինչպե՞ս եք,— ըսավ՝ այնպիսի անտարբեր ձևով մը, որ կարծես օրը տասն անգամ կտեսներ զիս։

Հետս ճաշի նստավ. հին բարեկամներու պես, ասդիեն-անդիեն խոսեցանք։ Ճիշդ է, որ իր ուսեցած ականջները իրեն դեմքին ապուշ թանձրություն մը կուտային, բայց խենթ մը չէր այդ մարդը, հապա՞ր անդամ ո՛չ։ Գաղանիքին բանալին գտնել կարծեցի՝ իր հետ կիներուն մասին խոսելով, երեսը թթվեցուց. խաղաբաններուն ակնարկություն ըրի, ուսերը թոթվեց։ Արդեն շվարած, ավելի շփոթեցա։ Հապա եթե սխալ մարդու օձիքեն բռնած ըլլայի՞...

Ամուսնացած մարդ մըն էր. ինծի երկար-բարակ իր կնոջ վրա խոսեցավ՝ որ քիչ մը տկար ըլլալուն, այդ օրը միասին չէ կրցած ելլել. իր մեծ տղուն համար ինձմե զվիցերիական վարժարանի մը հասցեն ուզեց. պզտիկ տղա մըն ալ ուներ, շատ պզտիկ, որ այս օրերս ակռա հանելուն՝ փորը քիչ մը թույլ էր...

Հետո՛ միայն գիտցա, որ այս մարդը ո՛չ կին, ո՛չ ալ զավակ ուներ, այլ պարզապես ստելու փափաք մը. բայց բոլորովին բնական, անշահախնդիր, անվնաս սուտեր. աբվեստը՝ աբվեստին համար։

— Մեղքիդ նամակ մը գրեր ես,— ըսի անհամարձակ։

— Ձե՛մ հիշեր,— ըսավ։

— Դրամներդ խաղաբաններու մեջ կերեր ես։

— Սխա՛լ է։

— Հապա ո՞ւր գացին ոսկիներդ։

— Ցորեկները պաղպաղակ մը կ'ուտեի...

— Հարստությունդ միայն պաղպաղակո՞վ հատցուցիր։

— Առտուներն ալ կաթ մը կխմեի,— թոթվեց. աչքերը լիցան, մորուքին մեջ արցունքներ գլտորեցան։ Մեղքցա, զղջացի։ Մարդը իր դրամը կերեր էր. ե՞ս ինչ կխառնվեի... Բայց ան այդպես չէր խորհեր, կ'ուզեր իր լացովը զիս համոզել իր անմեղության վրա, կ'ուզեր, որ անպատճառ հավատամ, թե ինք պարկեշտ մարդ մը՝ էր. ո՛չ կինը, ո՛չ դինին, ո՛չ խաղը չէին հրապուրած զայն (ու այս ճի՛շդ էր...)։ Բայց, մարդիկ շար էին, իր գեշությունը կ'ուզեին, փողոցեն անցած ատեն խորհրդավոր կեցվածքով իրարու աչք կ'ընեին. (ա՛ս ալ ճիշտ էր, բայց

իր գլխուն ֆեսին համար էր)։ Շատերը զինք սնանկացնելու, կախաղան հանելու կջանային, աշխարհիս ամեն ծայրերեն անվերջանալի ու անկարելի հաշիվներ կղրկեին՝ իր բնա՛վ չճանչցած մարդերեն... Ա՛ս ալ ճիշտ էր, ու ահա թե ինչպես։

Այս խելոքիկ մարդը երբեմն-երբեմն իր մեծության երազներն ուներ, բայց մեծ բսածս՝ շա՛տ մեծ, խելքի մտքի մեջ չսղմող մեծություն մը։ Քանի որ բոլոր մարդիկ իրմո՛վ կզբաղեին ու դավադրություններ կսարքեին իր շուրջ, ուրեմն կրնար ըլլալ, որ անգիտակցաբար ինք նշանավոր անձ մը ըլլար, ո՞վ գիտե, թերևս ապագա թագավոր մը... Այս մարդը իր երազին հավատալու դժբախտությունն ուներ. ու այս տեսակ հիվանդություններու բնական տրամաբանությունով, կ՚ուզեր իր պզտիկ կյանքը այդ մե՛ծ գաղափարին պատշաճեցնել կանխավ... Իր բանակին համար ֆրանսական գործարանի մը իշու լավագույն կաշիեն թմբուկներ կ՚ապսպրեր՝ բայց ա՛յնքան թիվով, որքան էշ չկար աշխարհիս երեսը... Եթե այդ անունով միմիա՛յն համեստ շորթոտանիներուն կ՚ակնարկեր։ Գերմանիոյ կայսեր ինքնագիր նամակ մը կգրեր՝ անոր պզտիկ աղջկան ձեռքը խնդրելու համար։ Բայց այդ մեծ ամուսնության արժանավայել պալատ մըն ալ պետք էր։ Մոնթե-Քարլոյի բարձունքներուն վրա սքանչելի ծախու ապարանք մը տեսեր ու, ամենայն պաղարյունությամբ, առանց սակարկության, թագավորի վայել ձեով ստորագրություն մը նետեր էր՝ գնելու խոստումի մը տակ։

Այդ օրեն ի վեր գործերը գեշցեր էին, սուտ ու փուճ օրենքներով իրմե ահագին դրամներ կպահանջեին տան մը համար, որ գնած չէր, պա՛րզ ստորագրություն մը միայն... Ուրեմն իրա՛վ այնքան մեծ արժեք ուներ իր մե՛կ ստորագրությունը։

Այսպիսի մեծամոլություններու մեջ հատցուցեր էր դրամները, ու նորերը գտնելու համար այլանդակ շահագիտություններու մեջ կ՚իյնար։ Գիտնականի մը ապսպրեր էր, որ իր հաշվուն արվեստական բրինձի դյուտին աշխատի։ Օր մը կարդալով, որ սբրատիվարիուս ջութակը մը հազարավոր ոսկիի ծախվեր էր՝ իսկույն գրեր էր իտալական գործարանի մը, որ իրեն 12 տուզեն սբրատիվարիուսներ հայթայթեն՝ տասը տարի վերջ տասնապատիկ գիներով ծախելու համար։ Ու գործարանին ամիս մը պայմանաժամ տվեր էր. բայց այդ պայմանաժամին մեջ ինք բոլորովին ուրիշ բաներու վրա կմտածեր ու բացարձակապես կմոռնար ջութակները։

Այդ բոլոր մեծաքանակ ապսպրանքներեն միա՛յն երկու բան պահած էր իրեն՝ որ սենյակին մեջ տեսա։ Ահագի՛ն, անծա՛յր, անվե՛րջ լիսան մը, որ շվարեցուց զիս։

— Ծովերուն լայնությունն ու խորությո՞ւնը պիտի չափես,— ըսի։

— Ո՛չ,— ըսավ պաղարյունությամբ,— այստեղ անվստահելի երկիր է. եթե սենյակը գան՝ պատուհանեն փախչելու համար է։

Բայց ես գիտեի, որ դարձյա՛լ կստեր, իր սովորության համաձայն. այդ անհատնում չվանը ինքզինքը ձեղունեն կախելու համար էր...

Բայց մնտուկ մը բացավ. մեջը ի՞նչ կկարծեք որ ըլլար. ածելինե՞ր, ածելինե՞ր, անթի՞վ, անհամա՞ր, բոլորն ալ իրարո՞ւ նման ածելիններու լեռ մը... ես զարմանքե զարմանք կ'իյնայի՝ երբ ան միևնույն մեծությամբ ուրիշ սնտուկ մըն ալ բացավ՝ բերնե բերան հար և նման ածելիններով լեցուն։

— Ասոնք սրցվածներն են,— ըսավ։

Ասոր վրա շատ չպնդեցի, դուրս ելա։ Ահա մարդ մը, որ գիշերները հազարավոր ածելիներ կսրցներ ու ցորեկները խելոք-խելոք և ազատահամարձակ փողոցներուն կպտտեր. մինչև որ անմեղ մը չմեռցներ՝ Օրենքը զայն հիմարանոց չէր կրնար նետել. որո՞ւ փույթ, թե այդ այլանդակ գնումներով փճացուցած ըլլար իր հարստությունը. ան կնոխեներն էր. արդեն բժշկությունն ալ խենթություն չ'անվաներ այս հիվանդությունը։ Իր հիշողության կորուստը, իր ըրածներուն մանկական տարօրինակությունը, իր ավելորդ ստախոսությունը, իր հաջորդական մեծամոլությունն ու մենամոլությունը, ու մանավանդ իր խոսելու դժվարությունը և իր թափթփված բառերը, իր գիրերուն պես՝ լեզվին ու մատներուն ալ դողալը, շա՛տ որոշ հիվանդության մը անունը կ'արթնցընեին մտքիս մեջ։

Ինչպե՞ս սկսեր էր այդ հիվանդությունը. ո՛չ թե նանկարծակի (ինչպես ծնողքը կգրեին), այլ ամիսներու ընթացքին։ Բարեկիրթ մարդ մըն էր ան, որ քիչ քիչ իր բնությունը փոխեց։ Նախ մելամաղձոտ դարձավ, սենյակին մեջ բանտարկված, օրը հարյուր սիկարեթ կ'այրեր ու կմտրեր։ Հետո բարկացոտ դարձավ, ընտիր հասարակության մը մեջ, հանկարծ զզվելի շարժում մը կ'ըներ, գարշելի բառ մը կ'արտասաներ։ Ծնողքը նախամեծար համարեցին զայն ճամբորդության պատրվակով տունեն հեռացնել, ու մինչև որ վերոհիշյալ նամակը չստացան, խենթ ըլլալը չզուշակեցին։ Արդեն ծնողները այդպե՛ս են. ա՛յնքան երկար ատեն, որ դրամնին չուզես՝ խելացությանդ վրա չեն կասկածիր...

Բարալիզի ժեներալն էր այս հիվանդությունը, քույրը այն մյուս սարսափելի հիվանդության, որ թապես կկոչվի և որոնց երկուքին ալ հայրը հինցած սիֆիլիզ մըն է։ Բայց նախ պետք էր ստուգել, որ այս վերջին ախտը ընդունա՞ծ էր ժամանակին։

— Այո՛,— ըսավ,— անանկ բան մը կար... Հի՜ն պատմություն...

Արյունին ու մարմինին քննությունը կասկած չի ձգեցին. դարմանելն անկարելի էր, ընելիքս պա՛րզ։ Զինքը շոգենավի մը բժիշկին հանձնելով՝ շիտակ Պոլիս դրկեցի։ Եվ ա՛լ մինակ մնացած՝ թիչ մը ատեն հանգչեցա այս սքանչելի քաղաքին մեջ։ Վերադարձիս՝ շոգեկառքին մեջ նորե՛ն կարդացի նշանավոր նամակը ու նորե՛ն երևակայեցի այդ խենթը, բայց այս անգամ ո՛չ թե տարտամորեն, հապա շա՛տ որոշ կերպով՝ ա՛յնպես, ինչպես մոտավոր ապագայի մը մեջ պիտի ըլլար ան, անխուսափելիորեն։

Ուղեղը իր այդ վերջին ու տարօրինակ լույսերեն վերջ՝ քոլորովին պիտի խավարեր, սեպ-սև (առջի գիշերվան սենյակիս պես), ապուշությունը կատարյալ պիտի ըլլար, շարժումները անկարելի, անկողնին պիտի զամվեր, լեղուն պիտի կորսնցներ, ուտելը պիտի մոռնար, օրը քսան սաման պիտի ազատուեր, օր մը պիտի գար, ուր ա՛լ կերակրելն ալ անկարելի պիտի ըլլար, իր է՛ն սիրելիներուն գարշելի պիտի դառնար, պիտի նեխեր... ու ասիկա անխուսափելիորեն։

Բայց այս պատմությունը անակնկալով սկսավ և անակնկալով այլ պիտի վերջանար։ Տուն դարձիս՝ Պոլսեն նամակ մը գտա, ուր ինձի կ'իմացնեին, որ խենթը՝ հոն հասած օրն իսկ՝ հաղիվ բժիշկին հսկողությունեն ազատած, հորը նետվեր էր... կարծես դիտմամբ՝ իմ անխուսափելի գուշակություններս զուր հանելու համար։

Բնությունը, որ ամեն շարիքին քով բարիք մըն ալ դրած է, այդ սարսափելի ախտին քով՝ իր դարմանն ալ ցույց տվեր է. այս հիվանդները գիշեր-ցորեկ մե՛կ բան կմտածեն՝ անձնասպանությունը։ Բժիշկները, որ ուրիշ դարման մը չեն գտած՝ կրավականանան արգիլելով իրենց այդ բնական հակումը։ Սակայն, լավագույնը չէ՞ հոր մը ազատել, քան տարիներով նվիրական բույն մը թունավորել։

Ու հիմա կհիշեմ դեռ այն օրը, երբ մորուքին մեջ խոշոր արցունք կգլտորցներ՝ զիս համոզելու համար, որ ինք բարի և խելոք մարդ մըն է... Ա՛լ կհավատամ քեզի, խե՜ղճ մարդ, զուր չես ստեր։ Ստողները անո՛նք են, որ քու հոգվույդ կոբստյան վրա կոկորդիլոսի արցունքներ կթափեն...

Թող կրոնագետներն ու բարոյագետները անձնասպանության վրա վիճին. թող իմաստասիրական հատորներ արձակեն իրարու գլխուն. մեկը պիտի գտնվի՞ ինձի բացատրելու համար, որ մարմնապես ու հոգեպես ի՞նչ պիտի արժեր այդ կյանքը, խոսելու, զգալու, շարժելու, սնանելու, մտածելու անկարող, մեղի մեջ փտած մսի կտոր մը, որ շանը նետես չուտեր...

Լոզան, 1913

Հիմա, որ ուսերուս վրա տակավ կզգամ տարիներուն ծանրությունը ու ձեռքիս գրիչը՝ երբեմն փետուրի պես թեթև, այժմ մահվան բառերուն մեջ կկապվի ու կշփոթի, կհիշեմ հի՜ն հի՜ն օրերը, այն օրհնյա՜լ օրերը, երբ ուղեղիս, ջիղերուս, մարմինիս բոլոր բջիջները այնպե՜ս լեցված էին կյանքով, որ մահվան գաղափարին համար տեղ չէր մնացած...

Երջանի՜կ տարիք, ուր կյանքը կ'նոա, սիրտը կզեղու, հոգին կը-պոռթկա։

Ու ո՞վ կրնա մոռնալ հաղար անգամ կրկնված անունը այն պաշտելի ընկերոջ, որ միանգամայն դասակիցդ էր, տարեկիցդ ու սրտակիցդ, երևակայական վեպերուդ հերոսը, հրաշալի արկածախնդրությունները ուդ զինակիցը։

Արամն էր իմ զինակիցս։ Միասին կխաղայինք, միասին կսերտեինք, միասին կշափվեինք։ Երբ ան հեռուի աղբյուրեն ջուր բերելու կ'երթար, ե՛ս ալ հետը կ'երթայի սափոր մը ուսիս։ Երբ ես թռչուններուն թակարդ լարելու կ'երթայի դաշտերը, ա՜ն ալ հետս կու գար, սուտ սուլոցներով գիրենք հրավիրելու։

Ու ի՜նչ շարությունները չէինք ըներ միասին։ Երկու թիթեռ մեկ լուցկիի գամելով՝ դասարանին մեջ թռցնել. մեղուներուն թեերը փետտելով՝ լարի վրա խաղցնել. ճանճի գլուխները ճզմելով՝ գրքերը զարդանկարել. տղոց բերանը շաքար մը տալով՝ ակռաները փրցնել... Լավ կհիշեմ, որ օր մը ողջ մկնիկ մը լուցկիի տուփի մը մեջ մտցնելով՝ շորս թաթիկները շորս ծակերեն դուրս հանեցինք ու ազատ արձակեցինք։ Երբ գիրուկ դասատուն ու բոլոր աշակերտները տեսան, որ փոքրիկ տուփ մը սրահին մեջ ինքնիրեն կվազեր խենթի մը պես՝ ամենքն ալ սարսափահար դուրս խոյացան...

Անանո՜ն Ոգիներներ, որ մեզ կիսաստվածներու պես հարգել կուտային դպրոցին մեջ։ Ճիվաղայի՜ն շարությունները, որ մեզ հրեշտակներու պես կ'ուրախացնեին...

Ամա՜ղ, օր մը կուգա, ուր մեծագույն առաքինություններն անգամ չե՜ն կրնար այս պզտիկ շարաճճիությունները չափ ուրախացնել մարդկային սի՜րտը...

Եվ սակայն չկարծեք, որ մեր երջանկությունը անխառն էր. ո՜հ, ո՜չ։ Կատարյալ մարդ ըլլալու համար գլխավոր բան մը կպակսեր մեզի՝ պեխն ու մորուքը։ Ու ըսե՛լ, որ բուսնելո՜ւն պես կ'ածիլեինք...

Օր չէր անցներ, որ դպրոցին ծառին տակ, ծերունի կոճղին վրա հասակնիս չչափեինք, մատներնուս ծայրերին վրա բարձրանալով ու զմելիի

թարդախ հարվածով մը չճեղքեինք կոշկոռած կեղևը՝ իրրև չափանիշ։

Սակայն հիմա, որ տարիներն ու մահը մեր մեջ ամեն մրցում խապա՛ռ ջնջեցին, ինչո՞ւ չխոստովանիմ, որ ան ինձմե հասակո՛վ ալ, ուժո՛վ ալ, ճարտարութիւնո՛վ ալ, շարութիւնո՛վ ալ միշտ գերազանց էր։

Լողալու մեջ իր նմանը չկար։ Պայքարի մեջ մեկ հատիկ էր։ Երբ ամեն Զատկի-ծնունդի հույն դպրոցին տղոց հետ կռվի կրռնվեինք ռազմական շարքերով՝ ճակատ ճակտի, քարերը է՛ն շիտակ ու է՛ն հեռու թոցնողը միշտ ինքն էր։ Մեզի համար ամբողջ գյուղին մեջ Ազգին պատիվը փրկողն ա՛ն էր միայն։

Վա՛յ եթե իր ճամբուն վրա շուն մը հաչեց. երեք օր չանցած այդ շունը պիտի անհետանար։

Չէ՞ որ անգամ մը իր թոչնիկը փարատող կատուն աշտարակի մը գագաթեն յո՛թն անգամ վար նետած էր, մինչև որ յոթը հոգիներն ալ խեղճին բերնեն դուրս գային։

Սիլիվրիի այդ աշտարակը ճիշդ մեր տան դեմն էր. բարձր ու խարխուլ միներե մը՝ հունական հին մեհյանի մը վրա թառած. մեհյանը դեռ կանգուն է՝ միներեն փլած... Հո՛ն կ՚աղոթեր երբեմն բժշկության հայր-աստվածը. հիմա բուերն ու դևերը կ՚իշխեին հոն։ Գիշերը սարսափը կլեցնե այդ պատերը. ու լուսինը այդ ավերակներուն լեզու կուտա կ՚ըսեն...

Արամ այդ դևերն ալ արհամարհեց։ Գիշեր մը աշտարակեն ներս սողաց, խավար ու դարձդարձիկ սանդուխներեն սկսավ բարձրանալ խրխափելով, պատերը շոյելով, ոտներն արյունելով։ Երբոր գագաթը հասավ, շունչը բռնեց, ձեռքն երկնցուց։ Վերը անգղի բույներ կային ու ձագուկ մը կ՚ուզեր գողնալ։ Բայց վա՛յ թոչունի ձագեր գողցողին... Իր աչերուն մեջ շարության կայծ մը փայլատակեց. անգղերը տեսան այդ կայծը ու կտուցի սոսկալի հարվածներ տեղացուցին իր աչերուն։

Իր դեմքին վրա մի՞շտ մնացին այդ վերքի սպիները։ Սակայն տգեղություններ կան, որ գեղեցկութենեն ավելի կ՚արժեն... Այդ օրեն ի վեր գյուղին հերոսն էր Արամ։

Քանի՞ քանի՞ անգամներ աղջիկներու դպրոցեն կկանչեին զայն՝ վարժուհիին դասագիրք մը տանելու, աշակերտներուն մարմնամարզ մը ցուցնելու պատրվակով։ Եվ սակայն, այս պատանին, որ անգղերը կփետտեր ու մանչերը կծեծեր, աղջիկներու առջև տղու մը պես կդողար ու մեղավորի մը պես կկարմրեր...

Էգերը իրեն համար արտակարգ, բացառիկ, անբնական, անկարելի էակներ էին։ Մայրիկը իր փոքր հասակեն մեռած ու իր բոլոր եղբայրներն ալ արու ըլլալուն՝ Մանչանոց կկոչվեր իրենց տունը։ Բոլորն ալ միևնույն փայտեն տաշված՝ ուժեղ ու շքեղ պատանիներ էին՝ գյուղին

փառքը։ Բայց բոլորն ալ Արամին պես շվարած, ամչկոտ, ախտագին զգայնություն մը ունեին։ Կիները միայն հեռուն տեսած ըլլալով՝ ձեռքի սեղմում մը զինաթափ կ'ըներ զիրենք...

Արամ բանի՜ կմնծնար՝ այնքա՜ն կտկարանար։ Եկեղեցիին մեջ երգած ատեն ձայնը կփոխվեր. դպրոցին մեջ պատասխանած ատեն միտքը կխավարեր. գիրք մը կարդալու պահուն՝ էջը չդարձուցած՝ կարդացածը կմոռնար։

Տղոց մեջ տարտամորեն կփսփսային, որ «ամոր բաներ կ'ըներ», «ողնաածուծը հալեր էր...»

Օրեր կային, որ քովը չէր մոտեցվեր. այնքա՜ն հոռետես, դաժան, զայրացկոտ կ'ըլլար. բռնած բանը կկոտրեր։

Սակայն իր մտավորական ույժը կորսնցնելի վերջ՝ քիչ քիչ իր մարմնական առավելություններն ալ անհետացան։ Մազերը փրցված Սամսոնի մը պես՝ սմսեղուկ, դողդոջուն, շվարած բան մը եղավ։ Այտոսկրերը ցցվեցան, աչքերուն ծիրը կապարի գույներ ստացավ։

Ու չգտնվեցավ մեկը, ո՜չ քահանան, ո՜չ վարժապետը, ո՜չ հայրը, ո՜չ իսկ բժիշկը, որ այդ տգետ պատանիին բացատրեին, թե այդ մենավոր ու մեղավոր զբոսանքները զինքը գերեզման կտանեին...

Արևոտ օր մը, դանդաղորե՜ն, ժայռերուն գագաթը գացինք միասին։ Հանկարծ գրպանեն արծաթե խոշոր դրամ մը հանեց ու ձեռքի լայն շարժումով մը ծովը նետեց զայն։ Արծաթը վայրկյան մը փայլեցավ արևուն տակ, հետո անդունդին մեջ կորսվեցավ ու պզտիկ ճողփյուն մը հանեց։

— Ասիկա տասներորդն է, որ հորմես գողցա,— ըսավ,— ծովը նետելու համար... Յուրաքանչյուր փորձությունս այդպե՞ս կ'ուզեմ պատժել. բայց կզգամ, որ ո՜ւշ է արդեն, կամքը մեռեր է մեջս, ա՜լ թագավորի գանձ մը իսկ չպիտի բավե այս ծովը լեցնելու...

Ասիկա մեր վերջին պտույտը եղավ ու մեր վերջընթեր խոսակցությունը։

Արամը անկողին ինկավ ու ա՜լ չելավ։

Մեր ծնողները մեզ արգիլեցին իրեն այցելել։ Գյուղերու մեջ, ուր գիտությենե ավելի բնազդը կտիրե, հո՜ն, ուր բժիշկի ոտքը կկոխե, բարեկամները իրենց ձեռքը կքաշեն՝ անասնական ինքնապաշտպանությունով մը։ Ու ընտանիքը իր ցավին մեջ կկծկվի, միայնակ կմնա իր հիվանդին հետ, որ հաճախ ամենատարրական զգուշությունն իսկ չունի իր սիրելիները չվտանգելու համար...

Ամիսներով տարտամ շշուկներով բավականացա։

— Երեկ գիշեր նորեն բժիշկը կանչվեր է...

— Թասերով արյուն փոխեր է...

— Փոքրիկ եղբա՛յրն ալ անկողին ինկեր է...

Օր մը, սակայն, ծնողքես գաղտնաբար, իբենց տունը մտա ու, վախն ի վախ, սանդուխներեն վեր ելա։

Հիվանդին սենյակեն բժիշկը դուրս կ'ելլեր։ Ընտանիքին անդամները գայն պաշարեր էին երկյուղած ձևերով։

— Ոտքդ պագնեմ, բժի՛շկ,— կ'ըսեր ծերունի հայրը դողալով...— Հույսի բա՛ռ մը տուր մեզի...

Բայց ան ճակատագրական կտրուկ շարժում մը ըրավ։

— Ամե՛ն ցավ վախճան մը ունի,— ըսավ...

Բժիշկեն վերջ շուտով դիս դրկեցին քահանան կանչելու։ Տերտերն ինծի խաչ մը ու գիրք մը տվավ ու խնդրեց, որ հետն երթամ։ Վախն ու վատութիւնը սիրտս լեցուցին։

Ես այն ատեն դեռ չէի տեսեր, թե մարդ մը ինչպե՞ս կմեռնի. սակայն հաճախ սոսկումով դիտեր էի, թե ի՞նչպես կմեռնեին մեր թոնավորած շունները՝ սալահատակները խածնելով, կանգնելով ու իյնալով, դոզալով ու պաղատելով...

Սակայն այդ օրը սորվեցա ինչ որ բոլոր բժշկական կաճառները չուզեցին սորվեցնել՝ թե մարդ մը անասունի մը պես չի՛ մեռնիր...

Հոն, ուր Գիտութեան մարդը հույսի փոքրիկ բառ մը անգամ չէր գտած ըսելու, Կրոնքի պաշտոնյան հավատքի անհո՛ն պաշար մը բերեր էր իր մագաղաթի գրքին մեջ։ Հո՛ն, ուր բժիշկը կյանքը կշափեր ու կկտրեր՝ չո՛ր ձևով մը, քահանան հավիտենական կյանքի անծայրածիր հորիզոններ կբանար, օրհնակա՛ն շարժումով մը։ Ու երկու հազար տարիներեն ի վեր կրկնված իր բառերը՝ մի՛շտ նույն գաղտնիքն ունեին ոսկեզօծելու այն վերջին ժամերը, ուր գիտակցա՛ս, ամեն հույս, ամեն հավատք, ամեն սեր, ամեն իրականութիւն ու ամեն երազ կանանկանա, կմեռնի, կփտի։ Գերագո՛ւյն պարտութեան ժամուն, գերագո՛ւյն հաղթութեան խարկանքը։

Խարկա՞նք, թե իրականութիւն, չե՛մ դիտեր։ Սակայն այդ օրեն ի վեր համոզվեցա, թե որքան ատեն որ մարդերը պիտի մեռնին, ա՛յնքան ատեն Գիտութեան կողքին պիտի ապրի նաև Կրոնքը...

Արդարև, քահանային մեկնելեն վերջ, անհյութական շնորհ մը իջած էր արդեն հիվանդին դեմքին վրա։ Անկողնին մեջ նստավ, ձեռքը ձեռքիրուս մեջ դրավ ու խոսեցանք իրարու հետ՝ հի՛ն օրերու պես։

— Ինքդինքս երբե՛ք այսքան լավ չէի զգացած,— ըսավ...— Վաղը եթե արև ըլլա, կ'ուզե՞ս որ միասին դաշտ երթանք պտտելու...

Հետո, հանկարծ լռեց, ականջը լարեց, տժգունեցավ։

— Կլսե՞ս,— ասավ։— Իրիկվան զանգակն է... Կհիշե՞ս, ամեն անգամ ես կդարնեի մեռելին զանգակները... Օր մը երբոր իմ կարգս ալ գա, կ'ուզեմ, որ դուն զարնես ինծի համար. բայց այնպես ուժով քաշես պարանը, որ արար աշխարհ իմանա...

Սակայն ի՛նքն ալ, ե՛ս ալ, այնպես համոզված էինք, որ այդ օրը երբեք պիտի չգա՜...

Հետևյալ օրը՝ գարնանային զմայլելի օր մը, ընդհատ ընդհատ զողանջ մը փրթավ օդին մեջ։

— Հրդե՞հ կա, մայրի՛կ,— ասի։

— Շուտով շապիկդ առ ու ժամ գնա, տղա՛ս, Արամը մեռեր է...

Մեռե՞ր է... Մեռե՞ր է... Խենթի մը պես վեր վազեցի, փոքրիկ խուցի մը մեջ բանտվեցա, դուռները զոցեցի, պատուհանները խցեցի՝ այդ ընդհա՞տ ընդհա՞տ ու անընդհա՞տ զողանջը չիմանալու համար...

Սակայն իզո՞ւր։ Գյուղական զանգակը ամբողջ տարին ինծի համար լացավ։

Ընտանիքներ կան, որոնց անդամները՝ խաղի թուղթերու պես իրարու ետևե կ'իյնան։ Սոսկալի վարակումը հնձեց այդ գեղատի կարիճները. մահը փակեց այդ տան դուռը։ Ու մինչև այսօր, գյուղի պատանիներուն կցուցնեն մանչերուն գերեզմանը։

Լոզան, 1913

ՀԱՐՍՏԵՐՈՒՆ ԳԱՂՏՆԻՔԸ

— Հարսնիքիս առաջին գիշերը՝ ամուսինիս երկու տարբեր սենյակներ ցույց տալով պիտի ըսեմ. «Ահավասիկ, Պարո՛ն, ձեր ննջասենյակը և ահավասիկ իմինս...»

Այսպես կ'որոշեր Սյուզան ամեն անգամ, որ իր ընկերուհիներեն մեկը ամուսնանար։ Ու որքա՜ն դպրոցական բարեկամներ ուներ ան։ Աշխարհիս ամեն երեսներուն վրա, այս կամ այն քաղքին մեջ, տարի չէր անցներ, որ անոնցմե մեկը կամ երկուքը չամուսնանային։ Այն ատեն Սյուզան անհամբեր կսպասեր առաջին նամակին, տարիներն ի վեր խոստացված այն խորհրդավոր, մտերիմ ու սարսափելի նամակին, որ վե՛րջապես պիտի բանար իր աչքերուն վարդագույն վարագույրը։

Հին ու միամիտ սովորության մը համաձայն, դեռ վարժարանին գրասեղաններուն վրայեն՝ հասո՛ւկ աշակերտուհիներ օր մը իրարու գրել խոստացեր էին իրենց ուղեղը չարչրկող կարմիր գաղտնիքը...

Այդ օրեն ի վեր քանիներ թուան իրենց բույներեն՝ թռչուններո՛ւ պես, թռա՛ն ու լռեցի՛ն, չարե՛ր... Սյուզան դեռ տունը կմնար՝ մրջյուններու պես. կմնար ու կխորհեր՝ «Չարե՛ր...»

Կարծես բոլորն ալ խոսք-մեկ ըրեր էին լռելու։ Գոնե գիրքե՛ր բացատրություն մը պարունակեին այդ կենսական, այդ անագին հարցին վրա։ Բայց նո՛ւյնիսկ բժիշկները, փոխանակ մերկացնելու հանելուկը, կգգեստավորեին, բամպակներու մեջ կփաթաթեին զայն...

— Ինչո՞ւ... ինչո՞ւ...— կխորհեր Սյուզան։ Ու տարիքը առած ամե՛ն աղջիկներու պես կսկսեր քիչ-քիչ վախնալ այդ մութ ու չխոստովանվող բաներն... Ահա թե ինչ պատճառով կանխավ պատրաստեր էր իր հիմենյան հատակագիծը պաշտպանողական հողի վրա...

— Ահավասիկ, պարոն, ձեր ննջասենյակը, և ահավասիկ իմինս...

Տարիներու ընթացքին տարատա՛մ ոխ մը սկսեր էր մեծնալ իր պրպտիկ սրտին մեջ, այրերու դեմ կո՛ւյր ոխ մը, անկերպարան, անհամաձակ ու անորոշ ոխ մը, որ դեռ արմատ չունենալուն, չէ՛ր ծառանար...

Ամենուն պես ինքն ալ գիտեր, որ տեղ մը կիներ կազմակերպված ու զինված էին եսասեր մարդերուն դեմ պայքարելու համար։ Բայց ինք անոնցմե չէր, ո՛հ, ո՛չ... Ան ի՞նչ ըներ բոլոր այրերը. ան մե՛կ մարդ մը հաղթել կ'ուզեր միայն և ոչ թե բանի ուժով, այլ իր սրտին ուժով, իր գեղեցկության ուժով, իր անձնվիրության ուժով, իր տկարության ուժով...

Ինչպե՞ս պիտի սիրեր, որքա՞ն պիտի գգվեր, քանի՞ հնարքներ պիտի ստեղծեր երջանկացնելու համար այն միա՛կ մարդը, որ չէ՛ր գար ու պիտի չգար գուցե...

Իրեն համար պե՛տք մը, պահա՛նջ մը, գեղարվե՛ստ մըն էր ինքնությունը։ Ան ո՛չ թե բնության կույր կատակով, այլ կարծես ի՛ր ուզելովը էգ ծնած ըլլար...

Սյուզան այն մի՛շտ ժպտուն արարածներեն էր, որոնք կրնան հավասարապես թագավորի տուն մը ու բանվորի բույն մը շենցնել։

Ու տեսնելու բան էր, թե ի՞նչ ճարտարապետությամբ կվարեր իրենց տունը, ի՛նք իր գլխուն, գեռատի տանտիկնոջ մը պես։ Իր մեծ քույրը գիշերօթիկ վարժարանի մը մեջ ուսուցչուհի ըլլալով, հազիվ ամիսը անգամ մը կուգար տուն։ Իր ալևոր մայրը՝ տարիներու բեռին տակ կքած, երկուքի կոտրված էր։ Իր հայրը՝ պետական գրադարանապետ մը, մեռած էր արդեն ու հիմա անոր նիհար կենսաթոշակով կ'ապրեին։

Այդ նյութական նեղ պայմանները քիչ մը լայնցնելու համար, Սյուզան քանի մը ուսանողներ ընդունեց իր տան մեջ։ Ու տեսնելո՛ւ էր իր ուրախությունը, իր գործունեությունը, իր հպարտությունը։ Հին ու մենավոր սենյակները սկսան կյանքով լեցվիլ, խայտալ, երգել, աշխատիլ ու բզզալ՝ փեթակի բջիջներուն պես...

Սյուզանին այնպես կթվեր, որ իր տունը ա՛լ տեսակ մը համալսարանի մասնաճյուղ եղած էր։ Լավագույն ուսանողները հո՛ն կճաշեին,

հո՛ն կվիճեին, գիտության ու գեղարվեստի վերջին տեսությունները հո՛ն իրար կզարնվեին, անշոշափելի նրբություններու, անհասանելի բարձրություններու կհասնեին։

Ու ամեն տարեվերջի, երբ այդ տունեն ուսանող մը՝ ալ կ'ավարտեր ու կմեկներ, Սյուզանին սրտեն կտո՞ր մը ալ կփրթեր, իր եռանեն թռչելու համար դեպի հեռավոր կապույտ երկիրները ու գաղտնի հպարտությունով հետևելու համար իր փառքի ճանապարհին...

Բայց այդ ներքին փոթորիկեն ո՛չ ոք բան մը կնշմարեր։ Սյուզան, միշտ ժպտուն, հիմա մնացած ուսանողներուն վրա կթափեր իր ամբողջ խնամքը, հոգածությունը, սերը, իր կուսական սրտին մեջ գտնելով հաճելիության անսպառ գանձերը։

Առեն-առեն, երբ սեղանին վրա խոսակցությունը կմարեր, ան միշտ պատրաստ հարցում մը ուներ իր լեզվին տակ.

— Պա՛ռներ, ի՞նչ կխորհիք արդյոք տկար սեռին վրա...

— Տկար սե՞ռ... Երբ թագավորներն անգամ կխոնարհին ձեր առջև։ Կիները միայն հավասար չունին իրենց կատարելության, չեն ներեր, որ իրենց սեռեն մեկը գտնվի, որուն դեմքին, հասակին, տարիքին կամ գոնե վարքին ու բարքին վրա տկար կետ մը չըլլա։ Տկար սեռին առասպելը իրենք հնարած են... Մենք ձեզի գեղեցիկ սեռ կկոչենք, Օրիորդ...

Սյուզան կշիկներ։

— Իմ ալ կարծիքս այն է, որ,— կ'ըսեր ուրիշ մը.— եթե երկինքը ապրեինք՝ կիներ պիտի թագավորեին, ու մենք հազիվ թե դռնապաններ ըլլայինք հոն... Իսկ հոս, երկրի վրա, ուր բիրտ ուժը կտիրե, ես պիտի չցանկայի, որ կիները իրենց պատվանդանեն իջնեին մեր ցեխերուն մեջ պայքարելու համար... Ընտանիքը իրենց միակ երկնային ապավենն է այս երկրագունդին վրա. հոն է կիներուն թագավորությունը...

Այն ատեն Սյուզան դաշնակին առջև կ'անցներ, ու բոլորն ալ վայրկյան մը երկինքներ կփոխադրեր իր մատներուն խաղովը...

Ա՜խ, այդ բարակ մատները, կնոջ մատները։ Միայն համբուրվելու համար եղած հուրիի մատներ չէին անոնք։ Ընտանեկան ի՞նչ հրաշքներ կգործեին ամեն օր, անգիտակցված, պահվըտող ու անանուն հրաշքներ։

Այդ մատներուն շնորհիվ իր հինցած տունը նոր հարսի մը պես կը ժպտեր, իր համեստ հագվածքը ոչինչով մը կ'ազնվանար, իր անշուք սեղանը ծաղիկով մը կհարստանար։ Մեկ ձուկով քանինե՞ր կշտացնելու Հիսուսին հրաշքը ինք ամեն օր կ'իրագործեր...

Սյուզան կին մը չէր, այլ կիներ։ Սակայն ինչո՞ւ ան դեռ աղջիկ կմնար...

Ճիշտն ըսելու համար, հախաղ մորմեն տարտամորեն խնդրած էին

իր ձեռքը ու միշտ մայրն ալ տարտամորեն հասկցուցեր էր, որ Սյուզանին առաջ մեծ քույրը կար...

Սակայն հիմա, որ քույրը արդեն պսակվեր էր, Սյուզան բացարձակապես կհամառեր աղջիկ մնալ։

Ինչո՞ւ։

Օր մը այցելության գացեր էի իրեն, սովորական տեսակցության մը համար՝ իբրև իր հոր ու իր տան նախկին բարեկամ։

— Բժիշկ,— ըսավ.— այսօր պատմելիք ի՞նչ նորություն ունեք հիվանդանոցին։

— Մի հարցնեք, Սյուզա՛ն, սարսափելիք բան մը, չըսվելիք բան մը...

— Եթե այնպես է... անպատճառ ըսեք։

— Ձեր փափուկ ականջներուն համար չէ, Սյուզա՛ն։

— Չիս տղու տե՞ղ կդնեք, բժի՛շկ։ Գուցե ես ալ ձեզի բան մը ունիմ ըսելու. սարսափելիք բան մը, չըսվելիք բան մը։

— Ձեր պատմելիքը երբեք պիտի չհավասարի իմինիս, Սյուզա՛ն։ Բժիշկի մը մեկ օրվան տեսածը բավական է ամբողջ կյանք մը թունավորելու։ Սակայն կխոստովանիմ, որ այսօրվան տեսածես դեռ մարմինս փուշ-փուշ է։ Երևակայեցեք երիտասարդ, գմայլելի, ոսկեգույն աղջիկ մը, կարմիր՝ վարդի մը պես ու անառակ՝ նժույգի մը պես։ Երևակայեցեք ամենեն նուրբ ժանյակները, անդուսները, ժապավենները ու անոնց տակ ամենե՛ն ահռելի ախտը՝ իր ամենե՛ն գժոխային, իր ամենե՛ն վարակիչ ձևով։ Կկարմրի՞ք, Սյո՛ւզան... Իմացեք ուրեմն, թե ան չթողուց, որ ներարկումներն սկսեի. վազն իսկ պիտի ամուսնանա եղեր... «Մեղրալուսնես վերջ ամուսնիս հետ միասի՛ն կուզանք դարմանվելու»,— ըսավ...

— Օ՜խ ըլլա...— բացագանչեց հանկարծ Սյուզան, կրակ կտրած։

— Ձեզի ի՞նչ եղավ, Սյուզա՛ն։

— Ինծի ի՞նչ պիտի ըլլա... Հապա թող այրերը ամենազզվելի ախտերու մեջ նեխին, ամենագարշելի անկողիններու մեջ մտնեն, ու վստահ են, որ հիմնական սուրբ բարձին վրա ամենամաքուր կույսը պիտի ունենան... Կա՞ միակ աղջիկ մը, որ նույն վստահությունն ունենա. իր ամուսնին վրա... Թող գոնե կո՛ւյս մը գտնվի, որ ամենուս վրեժը լուծե...

— Բայց ինչի՞ն գիտեք, որ այդ գծրագրդ ամուսինը անմեղ մը չէր։

— Հոգ չէ՛,— պոռաց Սյուզան, իմ քույրս ալ անմեղ մը չէ՞ր...

— Ուրեմն ձեր քույրը...

— Տխո՞ւր, ախո՞ւր պատմություն մըն է ըսելիքս, բժի՛շկ, բայց չըլլա՛, որ մորս ըսեք, խեղճը մինչև հիմա լուր չունի... Գիտեք, որ տարիներ ամբողջ խնայողության հրաշքներ գործելով մեծ քույրս կոկիկ դրամո-

ժիտով մը՝ վաճառականի մը տվիներ։ Սակայն չե՛ք գիտեր, թե ինչ տվավ ի փոխարեն իմ քրոջս. ամենեն հրեշային ախտը... Իր տատրակի մարմինը կարմիր-կարմիր դուրս ավեր էր... Ես այն ատեն տգետ էի. եթե մի՛ն կասկածեի, եթե միայն բույրս բառ մը ըսեր, սա մատներս կկուրցնեի իր էրկան աչքերը... Սակայն բույրս լռեց, ու հետու տեղեր գացին իրենց ամոթը պահելու... Եթե մայրս օր մը գիտնար միայն, թե ինչ մեղրաբուսնի համբուրությունի մեկնած է իր աղջիկը, կաթված կ'իջներ խեղճին վրա...

Բայց ահավասիկ որ դուռը զգուշավոր կերպով բացվեցավ ու սեմին վրա երևցավ ծերունի մայրը...

Երկու դավադիրներու պես կարմրեցանք ու լռեցինք։ Լսե՞ր էր արդյոք... Ոչ։ Ներողություն խնդրելով հեռացավ։

— Շարունակեցե՛ք, տղաքներս, շարունակեցե՛ք...

Բայց Սյուզան որքա՞ն հեռու էր մորը ենթադրած սիրո զգացումներեն։ Որքա՞ն դառնություն կար այդ զվարթ աղջկան գիրկը, որքա՞ն արցունք իր պճլտուն աչքերուն ծայրը, որքա՞ն տառապանք իր տրտիտուն սրտին խորը։ Ամբո՞ղջ կանացի ցեղը կհառներ ու կփոթորկեր իր փոքրիկ մարմնին մեջ։ Նվիրվելու, գգվելու, երջանկացնելու համար հրաշակերտված իր մարմինը մարդերը մե՛կ համբույրով կթունավորեին... Ամենե՛ն զգայուն, ամենե՛ն նրբալար քնարը, որ սիրահար մատներու հպումին տակ կրնար մարդկային մեծագույն ցավերը մոռցնել իր երկնային դաշնություններով, այդ կուսական քնարը՝ մարդիկ իրենց գարշապարին տակ կջախջախեին... Որքա՞ն կոպտություն, որքա՞ն անիրավություն, որքա՞ն անգթություն այն դյուրաբե՛կ էակներուն հանդեպ, որոնք երկնե երկիր իջան մե՛զ դյութելու, մե՛զ հմայելու, մե՛զ բարձրացնելու համար...

Եվ շվարած կ'ունկնդրեի իր ահավոր ու անսահման բառերուն, որ կուլային իր մանկական երկու շուրթեն, երկու թեթև ամպե ժայթքող շանթերու պես, որ դարավոր ու անդաշնակ տարրերու խո՛ւլ կատաղությունը կպոթկան...

— Ա՜խ, զզվելի՜, զգի՜ր մարդիկ, հոգվով-մարմնով թունավորված... Ու խորհիլ, թե դո՜ւք ալ մեկի պես մոր մը շքեղ արգանդին մեջ կազմվեցաք... Ձեր առաջինն արժանի չէ՛ հեռին կնոջ համբույրին։ Է՛ն մեղապարտ կնոջ մեջ դեռ մանուկի մը հոգին կա... ա՛յն մանուկին, որ պիտի ծնի... Ես հարսերեն վարդագույն պատմություններ կ'ուզեի, ու խեղճերը չեի՛ զորեր իմ կույս հույսերս խավարել... Ահա ինչու կլռեին, ահա ինչու պիտի լռեն հարսերը...

Լոզան, 1913

— Ջերքեզը տեսա՞ք, Տոքթեոր...

— Ի՞նչ չերքեզ...

— Ջեմ գիտեր... ինձի այնպես թվեցավ... որքան կրցա հասկնալ իր շարժումներեն, ճի՛շդ այս ժամուն համար ձեզի հետ ժամադրություն մը կխնդրեր։

— Անունը չարձանագրե՞ց...

— Գրել չի գիտեր, Տոքթեոր...

— Բացատրություն մը չտվա՞վ...

— Լեզու չի գիտեր, Տոքթեոր...

Ջերքե՞զ մը, անգիր ու անլեզու, ան ալ Եվրոպայի ճիշդ կեդրոնը... Անապատներեն շեղելով քաղաքի մը փողոցներուն մեջ թափառող առյուծ մը ավելի տարօրինակ չէր կրնար ըլլալ։

Ու ան ի՞նչ առյուծ, ան ի՞նչ շքեղ անասուն, տեսնելիք բա՞ն էր։ Ժամադրավայրին վրա հեռուեն արդեն որոշեցի զինքը։ Եթե բյուրավոր բազմության մը մեջ ալ թաղեին դայն, դիտողին աչքը ամենեն առաջ ու առանց վարանումի, ուղղակի իրեն վրա պիտի իյնար։

Լեռնցի հսկայի ահագին կերտված մը. երկար ծալքերով լայն ու անհատնում վերարկու մը, որ արծաթե նեղ գոտի մը մեջքին վրա կսեղմեր. անընկճելի ու հպարտ ուսեր, որ չէին ծռած ու վերեն կ'իշխեին կորաքամակ քաղքենիներու բազմության վրա. թավուտ մորուք մը, որ ամբողջ դեմքը կծածկեր։ Ու այս բոլորին վրա, վերը, մուշտակե բարձր ու սուր գլակ մը, ուղտի մորթե։

Վազվզող փոքրիկ մարդոց հոսանքին մեջ ան կապասեր անշա՞րժ, շփոթա՞ծ, արհամարհո՞ւ։ Թևերը իրանին վրա ծալված էր, հավնոցի մը մեջ բանտված արծիվի մը պես...

Ի՞նչ բան ստիպեր էր այս տիտանը Ասիո լեռներեն գաղթելու դեպի քաղաքակրթության այս կեդրոնները, որ կ'ատեր հպարտ անասունի իր նայվածքի մեջ։

Իր երեք ձագուկները հետեն առած՝ յուրաքանչյուրին ձեռքին մեյ մեկ ծրարով, Կովկասի շեմ գիտեր ո՞ր անկյունեն ճամբա ինկած էր ու, սահմանեն սահման, կայարանեն կայարան, շոգեկառքեն շոգեկառք փոխադրըվելով, պատերազմի դրկվող ձիերու պես մինչև հոս հասած։

Իրեն ըսեր էին, որ այստեղ բժիշկները հրաշք կգործեն։ Ու ան Լոզան եկեր էր՝ այն հաստատ հավատքով, որ բավ էր դարտ մը ցուցնել՝ դարման մը գտնելու համար։

Ուրեմն այս Գողիաթը հիվա՞նդ...

— Հապա ինչո՞ւ զավակներդ միասին բերիր,— կհարցնեմ։

— Իրե՞նց համար եկա, բժի՛շկ... Թո՛ղ ես մեռնիմ, իմ կյանքս ի՞նչ է... ես մեղավոր հայր մըն եմ... բայց փոքրիկնե՛րս, բայց փոքրիկնե՛րս...

Ու բառերը կկոտրտեր, կծամծմեր, կզարձներ ու նորեն կկրկներ իր այլանդակ թուրքերենով։

Իրա՛վ ալ, հոր մը համար դյուրին-դյուրին խոստովանվելիք բան մը չէր իր պատմությունը։ Դեռ իր երիտասարդության շրջանին՝ բանակին մեջ ֆրանկախտ մը ստացեր, բայց լուռ, գաղտնի պահեր էր բժիշկներե։ Ու այնպես կթվեր, որ այդ հսկան հազի՛վ թե իր մորթին վրա զգացեր էր այդ ահավոր ախտին դրոշմը։ Հետո ամուսնացեր, բայց երեք զավակներ ծնելե վերջ, կինը մեռեր էր, դեռ քսան տարու...

Ինք չէր ըսեր— ու չէր կրնար գիտնալ— թե ինչո՞ն մեռեր էր այդ անմեղ կինը։ Բայց տարիներու ընթացքին մեջ, սոսկումով կդիտեր, որ իր երկու մանչերուն ականջները քիչ քիչ կխցվին, կապարի պես կծանրանային։ Ուխտատեղի, աղոթք, դեղ, անօգո՛ւտ։

Ինչո՞ւ։ Ճարահատ բժիշկ մը իրենց արյունը քննելով, տեսավ, որ հորը հիվանդությունը զավակներուն երակին մեջ կշրջագայեր. այնպես որ իրենց փոքրիկ սրտին յուրաքանչյուր զարկը ուրիշ բանի չէր ծառայեր, բայց միայն այդ ահավոր թույնը մարմնին զանազան բջիջներուն մեջ ավելի՛ և ավելի՛ մտցնելու...

Հիմա աղջնակն ալ սկսեր էր թեթև՛, շա՜տ թեթև խուլություն մը ցույց տալ. ու հորը ամբողջ սարսափը այն էր, որ մի՛ գուցե այս վերջինն ալ...

— Այդ ապագան գուշակելը դյուրին է,— ընդմիջեցի։— Բա՛վ է իր արյունն ալ քննել։

— Ո՛չ, ո՛չ,— բացագանչեց դեղնելով։— Թող այդ մեկին ապագան ալ անհայտ մնա... Խուլ տղաքներ ունենալ, այն չէ՞ ցավը գլխավոր, բայց գիտնա՛լ, թե անոնք խուլ են միմիա՛յն իմ մեղքովս, անոր համար, որ տասնըհինգ տարի առաջ օ՞ր մը, տե՛ղ մը ես շնացի՞... շնացի՞...

Աչքերը թրջեցան, փայլեցան։ Ակռաները կճրտացին բերանին մեջ՝ մանրախիճեր փշրելու պես։ Բայց որո՞ւ բարկանար։ Այս նախնական մարդը, որուն համար վրեժխնդրությունը կյանքին գերագո՛ւյն հպարտությունն ու օրենքն էր՝ այժմ իր վրեժը ուրիշ մեկեն չէր կրնար լուծել, բայց մի՛այն իր անմեղ զավակներեն...

— Աստվա՛ծ, Աստվա՛ծ... քու արյունեդ երախաներ չունի՞ս դուն... Մանուկներուն փշուր մը գութ չունի՞ս դուն...

Ու գլուխն երերտկալեն ու հասակը ճոճելեն՝ երբ սկսավ հեռանալ, ես դե՞ռ անշարժ մնացած կդիտեի լեռնցի տիտանի իր ահագին կերտվածը... Դաճաճ, թե հսկա, մարդ որքա՜ն փոքր է բնության անհեղի ու ահավոր օրենքներուն առջև։

Այս տեսակցությունը տեղի կ՚ունենար երեկ։ Այսօր, կիրակի, իր հասցեին կդիմեի։ Այդ առյուծին ձագուկները իրենց բույնին մեջ տեսնելու հետաքրքրությունը քայլերս կփութացներ։ Բայց այս ի՜նչ մութ փոդոցներ, այս ի՜նչ նեղ տուներ։ Այդ օտարական մարդը ինչպե՜ս գտեր էր այս թշվառության օճախները։

Առյուծներու բո՞ւյնը։ Ցած սենյակ մը, մերկ ու գորշ պատերով։ Սենյակին չորս անկյունները՝ չորս տախտակե անկողիններ, չորս դաղդաղներու պես, գետնեն թիզ մը բարձր։ Սենյակին մեջտեղը՝ փոքրիկ սեղան մը, նույն տախտակեն կտրված։ Սեղանին վրա՝ քարյուղի եփոց մը։

Հիմա կհասկնամ, թե ինչո՞ւ երեկ կքաշվեր գիս տուն հրավիրելու։

— Ներեցեք ինծի, պարո՜ն բժիշկ։ Եթե մեր երկիրն ըլլար, հարկավ այսպես չէի ընդուներ ձեզ։ Պանդխտության վիճակն է այս։ Այս դաղդաղներն ու այս սեղանն ես եմ շիներ։ Տեսե՛ք, մատներս հաղար տեղ արյունած են ու ձեռքերս սառ ջուրի մեջ ճաթռտելեն կմղմզան։ Կերակուրնին, կարկատաններին, լվացքնին ալ ես կ՚ընեմ... Որբուկներուս մայրությո՜ւն...

Ու այս բոլորը ինչո՞ւ. ժառանգական տիտի մը համար, որուն դարմանն անհնարին էր։ Սիալը անգամ մը գործվելեն վերջ՝ անկարելի՜ էր սրբել։ Ա՜լ ուղածին չափ մայրություն ըներ, տղայության սիալը մի՜շտ ավելի պիտի կշռեր նժարին մեջ...

Դատավորներու օրենքին պես բժշկությունն ալ իր օրենքներն ունի, բայց որքա՜ն ավելի ահավոր, անդրդվելի, անհեղի, վրեժխնդիր օրենքներ։

Մե՛կ բան կմնար ինծի ընել, իրեն խորհուրդ տալ, որ ժամ առաջ երկիր վերադառնար։ Բայց ան որքա՜ն դեռ կհասկնար իմ միտքս. իրեն այնպես կթվեր, որ իր աղքատությա՜ն համար կմեղմեի դարմանս։

— Փո՜ղ մը, բժի՜շկ, փո՜ղ մը բրեք... Բժշկությունն ինչո՞ւ մեզի գեղ մը դլանա... Եթե ունեցածս չի բավեր՝ ամբողջ կյանքովս ես ձեր գերին, ձեր սարուկը, ձեր պահապանը ըլլամ... Փո՜ղ մը, բժի՜շկ, փո՜ղ մը, փո՜ղ մը...

Հանկարծ լռեց, որովհետև դուրսեն դուռ բացվելու ձայն մը լսվեցավ. տղաքներն էին։

— Հովհաննե՜ս... Կարապե՜տ... Մարի՜ամ...— գոչեց հայրը։

Թաշկինակին ծայրով աչքերը շոշափեց ու անգամ մը ալ ձայնը բարձրացուց։

— Հովհաննե՜ս... Կարապե՜տ... Մարիա՜մ...

Սեմին վրա երկչոտ գլուխ մը երևցավ, հետո ուրիշ մը, հետո պըզտիկ աղջկան գլուխ մը... Առյուծին ձագերը... Բայց որքա՜ն խղճալի, որքա՜ն ճոգած, որքա՜ն անարյուն էին այս հսկային զավակները։ Խուլությունը՝ իրենց արտահայտության զգուշավոր եկեղեցություն մը տվեր էր։

— Մի՛ վախնաք, զավակնե՛ր... նե՛ր մտեք... բժիշկին ձեռքը պագեք... Հովհաննե՜ս... Կարապե՜տ... Մարիա՜մ...

Բայց անոնք տեղերնեն չէին երևար։ Հայրը գնաց, ձեռքերնեն բռնեց, ներս մտցուց, ծունկերուն վրա նստեցուց, շոյեց, համբուրեց։

Այսպես քիչ քիչ դուրսը մութն իջեր էր արդեն. պատուհանները սևցեր էին, տղաներուն պառկելու ժամն եկեր էր։

— Այսօր կիրակի է, զավակնե՛ր, աղոթքնիդ մի՛ մոռնար։

Երեք որբուկները քով քովի շարվեցան՝ հասակի կարգով, ճիտերնին ծռեցին, աչերնին վեր դարձուցին ու սկսան աղիողորմ երգել.

Տե՜ր ողորմյա, Տե՜ր ողորմյա,
Հիսո՜ւս փրկիչ, մեզ ողորմյա՜։

Այս ի՜նչ երգ, այս ի՜նչ երգ, Աստվա՜ծ։ Ու քանի՜ տարի է չէի լսեր այս բարի ու ահավոր մեղեդին։ Վերեն ի վար սարսուռ մը անցավ վրաս, մարմինս փուշ-փուշ եղավ։ Ի՜նչ տարօրինակ համոզումով կ'երգեին այդ թրքախոս բերանները։ Բայց այս բարի, այս ազաչավոր, այս գալարուն, այս ահավոր երգը մե՛ր երգն էր, «Կոռունկ»-ին պես, ցեղի՜ն ու հողի՜ն երգը, գերագո՛ւյն տառապանքին ու գերագո՛ւյն հույսին երգը։

Սակայն ի՜նչ ահռելի ծանրություններ կստանային այդ բառերը մանուկ շրթներու վրա։

Տո՛ւր աշխարհիս խաղաղություն,
Մեղավորաց դարձ և զղջում,
Եվ հիվանդաց այցելություն,

կհայցեին արծաթաձայն որբուկները, ճիտերնին ծռած։

Մեղավորաց դա՛ռձ և զղջում

կկրկներ հայրը, ձեռքերուն մեջ սեղմելով իր գլուխը

Տե՜ր ողորմյա, Տե՜ր ողորմյա...

Ու ես գիտեմ, որ այս գիշեր նորեն, երբ խավարը լեցնե այդ ահագ Ֆոր սենյակը ու երբ երեք որբուկները իրենց անմեղի քունը քնանան մթի՜կ մշի՜կ, չորրորդ դպաչին մեջ մեկը, իր խղճին վրա պիտի հսկե արթուն՝ խուլերուն հայրը։

Լոզան, 1912

ԳԻՆՈՎԻՆ ԱՂՋԻԿԸ

Այդ օրը մոգական ընթերցումներով գլուխս լեցուցի ու մագնիսական Ֆշառնակ մտածումներով փողոց նետվեցա։

Գլխուս վերև գարնանային արև մը կար, այն առաջի՜ն արևներեն, որ տաքցնելե ավելի կշոյեն, թուլցնելե ավելի կգինովցնեն։

Արև՜ մըն ալ ահա դիմացս. գարնանային աղջիկ մը, անոնցմե, որոնք չեն այրեր, այլ հոգին կգաղջեցնեն, չեն կիզեր, այլ կյանք կու տան։

Ուրախությո՜ւն մըն էր դիտելը իր կապուտակ աչերը՝ երկնքի պատառներու պես։ Արևի՜ գույն մազերը՝ իր ուսերեն ավելի անցորդին աչերը կշոյեին։ Անոր նայելով մարդ վայրկյան մը ինքզինք երջանի՜կ կզգար ապրելեն, որովհետև այդ հասակի աղջիկները՝ երկու տարիներուն մեջտեղը, գեղեցկութենեն ավելի բան մը ունին իրենց վրա...

Կարելի՞ էր երևակայել ավելի մեծ մոգություն, հրաշք մը, քան այն, որ ահա դեմս էր, կմոտենար, աչքս իր աչերուն մեջ... Քա՜յլ մըն ալ ու հանկարծ ժժգունեցավ, ճիչ մը արձակեց և ուժգնորեն ինկավ՝ երկինքեն ինկող քարի մը նման։

Վազեցի, չէ՜ր շնչեր. ձեռքերը սեղմեցի, չէ՜ր զգար։ Երեսը գետնին՝ փայտի մը պես ինկեր էր ու արդեն քարացեր էր մեռած թռչունի նման։ Թևերն ու ոտները երկաթի պես կարծր էին, շի՜փ-շիտակ, մահվան շիտակությունովը...

Բայց ասիկա վայրկյան մը տևեց։ Կոնակին վրա դարձուցի զայն, մարմինը սեղմող կոճակները խլեցի, կապերը թուլցուցի։

Այն առեն ժժգույն երեսը կարմրեցավ, կապուտցավ. ահագին ճիգով դեմքին մկանները կծկտեցան։ Լեզուն՝ ակռաներուն մեջ ո՜ւժգնորեն խածված կգալարեր արյունոտ։ Գլուխը մուրճի մը պես կծեծեր սալահատակին քարերը։ Ձեռները, ոտները, ամբողջ մարմինը հանկարծ-հանկարծ կդողային՝ վիզը կտրված անասունի մը պես։ Աչերը՝ գնդակներու պես դուրս ցայտած, իրենց ճերմակությունը ցույց կուտային ամբոխին,

Թորոսն Սեսակ

Բարեն Սեսակ. 1914 թ.. Պոլիս

Տիկին Յանների Սեակը զավակների՝ Եռամիրամի և Լևոնի հետ

Համբրամբ և Լեոնը 1980 թ., Երևան

որ եկեր էր ամեն կողմն, վրայն վրա խոնված, հետաքրքրությունով ու երկյուղով լեցուն, կարծես թե երկինքին նետված չար հրեշտակ մը ջախջախվեր այդ ցեխերուն մեջ...

Հետո, գլուխներու մեջեն, գլուխ մը ալ երևցավ։

— Ես իր տունը գիտեմ,— ըսավ.— գինով Սիմոնին աղջիկն է։

Ու ոտներեն, բազուկներեն բռնեցին տարին։

Ու ես կխորհեի՝ Ահավասիկ դեռատի աղջիկ մը, գեղեցիկներու մեջ գեղեցիկ, կույսերու մեջ կույս, որուն մեկ ժպիտը բավական էր դառնացած կյանք մը ուրախացնելու։ Եվ սակայն, ինչպե՞ս ճիշդ կ'ըսեր պառավ մը.— Ա՜լ թող սպասե, որ մեկը խնդրե իր փափուկ ձեռքը...— Ի՜նչ փույթ, թե իր բոլոր բջիջները կյանքով ու երջանկությունով լեցուն են հիմա. անիկա դժբախտ պիտի ըլլա, ուզե՛, թե չուզե՛. ճակատագի՛ր...

Բայց բնությունը իր մե՛կ ըրածը ծածկելու համար՝ նմանօրինակ ու տարօրինակ ա՛յնքան ուրիշ ցավեր ալ ստեղծեր է, որ ժամանակ չունիս մեկուն վրա խորհելու, եթե ոչ այդ մե՛կը կրակոտ գամի մը պես կմխվեր ուղեղիդ մեջ... Սուրացող շոգեկառքի մը մեջն ես, հազի՞վ ժամանակ ունիս պատուհանեդ բան մը տեսնելու, այդ տեսածդ չդատած, ուրիշ մը կհաջորդե անոր, ու հազա՞ր ուրիշներ։ Վարագույրդ կգոցես ու քո՞ւ ցավերուդ վրա կխորհիս միայն։ Ու ահա՛ կյանքը. կաթիլ մը արցունք, անցուկը մոռցո՛ւկ...

Այսպես է մանավանդ հիվանդանոցի կյանքը։ Հոն թշվառության տեսարանները ա՛յնքան արագ կհաջորդեն իրարու, որ բնա՛վ ժամանակ չունիս խորհելու և սակայն վարագույրդ ալ չես կրնար գոցել, որովհետև ձեռքերդ ամենուն վերքին մեջ պիտի մխես։ Նո՛ւյն օրվան անկողնին մեջ, ուր մեռելի մը դիակը դեռ չէ պաղած՝ նոր հիվանդ մը կպառկի, ապրելու հույսով... Նույն երկաթե սեղանին վրա քանիներո՞ւ արյունը իրար կխառնվի ամեն օր ու կլերդանա անկյուն մը... Ու այդ բոլոր ցավերը ա՛յնքան նման են իրարու, որ հազի՞վ թե կարենայիր զանազանել իրարմե։ Անգամ մը սակայն զարհուրելի պարագա մը ներկայացավ։

Զմրան առտու մը, տաքուկ սենյակիս մեջ նախաճաշս կ'ընեի՝ բոլոր մասնիկներովս վայելելով այն երջանիկ հանգստավետության ժամը, որ առավոտյան ժամն է հիվանդանոցին մեջ։ Հանկարծ մեկը արագ-արագ դուռս ծեծեց։ Գթության բույրն էր, Մեծ-բույրը, տարբրոտը։ Բոլորովին սժգունած, ինծի բացատրեց, որ այրված կին մը բերեր ու արդեն իսկ գործողության սեղանին վրա պառկեցուցեր էին։ Զարմացա. այրվածները հազվադյուտ չեն. ինչո՞ւ ուրեմն այսքան այ-

յայլեր էր այս կինը, որ ահագի՜ն ցավեր շոյած ըլլալու էր իր ծերունի ձեռքերուն մեջ...

Իսկույն վար վազեցի։ Գարշելի նեխութիւն մը փռված էր սեղանին վրա։ Երեսը ծածկեր էին, որ հիվանդը չսոսկա ինքնիրմեն։ Ամբողջ կուրծքը՝ վիզեն մինչև որովայնը, բաց վերք մըն էր, վերեն վար։ Թևերը ավելի սոսկալի էին, մորթը այրեր, ճարպը հալեր, մկանները սեղեր, բարակցեր, կախվեր էին շվաններու պես... Պետք էր այդ բոլորը մաքրել, կարել, նետել, ողջը մեռածեն դատել։ Բայց մկրատին դպած տեղը արյունը կրդխեր, մելանի գույն, թանձրացած կաթիլներով...

Կրակը կրակով կմաքրվի։ Ու հրաշեկ երկաթը սկսավ գործել, արյունի ակերը խարանել, բաց վերքերուն մեջ պտտիլ։ Իր կարմիր համբույրին տակ դեռ կյանքոտ դնդերները կկծկտեին, որովայնը կգալարեր, մորթաղերծ կուրծքը կ'ելևէջեր ցավագին շարժումներով։

Կոկոն-կոկոն սարդերները այրեր, հալեր էին։ Տեղ-տեղ վարդագույն մորթի պատառներ մնացեր էին դեռ՝ վարդի փրթած թերթերու պես։ Տեղ-տեղ դեղնած ճարպ մը կ'երևեր՝ թարախի գույն, մինչև բազուկներուն խոռոչին տակ։

Ճենճերոտ մուխը կբարձրանար, կդալարվեր, սենյակը կլեցներ. այրվող մսի հոտը թոքերը կխեղդեր։ Գթութիւն փոքրիկ քույրերը մեկիկ-մեկիկ անհետացան՝ արցունքը աչքերնուն մեջ. հետո Մեծ-քույրն ալ գնաց՝ թաշկինակը քիթին...

Հիմա մինակ էինք, ես ու կենդանի դիակը։ Եթե նույնիսկ գիտութիւնը հրաշք մը ըներ, ինչպե՜ս պիտի ապրեր, ինչպե՜ս պիտի շարժեր ան. երկար հոգեարք մը չպի՞տի ըլլար իր կյանքը։ Ա՜խ, ի՜նչ կ'ըլլար, որ կարմիր երկաթը սխալմամբ մոտենար, այրեր, ճեղքեր այն խոշոր երակը, որ ահա բազուկին տակ կտեսնվեր, մե՜րկ, անվթա՜ր, կյանքի՜ տրոփյուններով... Ո՜չ, ո՜չ, կյանքը նվիրական է...

Ցորեկեն վերջ իր սրահը գացի։ Անկողնին քով մարդ մը նստեր էր, ի՜ր հայրը։ Գլուխը կախեր էր՝ անբան ու երևուն՝ սարսափած կենդանիի մը պես։ Դողդոջ ձեռքերով աղջկան դեմքը բացավ, իր ճմռթված երեսները անոր այտերուն քսեց, համբուրեց, լացավ...

Այն ատե՛ն միայն տեսա այդ տասնը յոթ տարու դեմքը, այդ կապուտակ աչքերը, այդ արևոտ մազերը։ Բայց այս իմ ճանչցած լուսնոտ աղջիկն էր, որ իր ախտին մեկ նոպային՝ կրակին վրա ինկեր ու այրեր էր։

Երեսին ճերմակ քողը դարձյա՛լ ինկավ ծերունիին ձեռքերեն... Ուրեմն գինով Սիմոնը ա՛յս էր, ոճրագործը ա՛յս էր, օդիով հագեցած

այս գարշահոտ մարմինը, որ լուսնոտներու, այսահարներու, պակասավորներու, նզովվածներու սերունդ մը կհասցներ...

Ա՜խ, գիտե՛մ, թե մեզմե յուրաքանչյուրը կթաթխե իր շուրթները այդ թույնին մեջ. գիտեմ, թե դժվար է փշրել «անուշ անմահության» մը համար հրամցված բաժակ մը. գիտեմ, թե ամեն գինովի զավակ լուսնոտ չէ. բայց այս մե՛կը բավական չէ՞ր բոլոր գինեմոլները նույն ոճրին մեջ թաթխելու...

Ու զոհը այս գժբախտ աղջիկն էր, լուսնո՛տը։ Միշտ կհիշեմ փոքր հասակիս տեսած բլալ տպավորիչ պատկեր մը՝ ուր լուսնոտ կույս մը, լուսնակ լույսին, ձեռներն երկինք երկարած, ինքն իր վրա կդառնար, երկրին երկինք նետվիլ ուզող բանաստեղծական հսկա ծաղիկի մը պես...

Ո՜չ. լուսնոտը այս էր, ա՜յս մոբթազերծ ճենճերուտ մարմինը, որուն վրայեն ուրեմն, վերեն ի վար, խոշոր գող մը կ'անցներ, ամբողջ անկողինը սարսռացնելով. այն ատեն սրահին մյուս հիվանդները իրենց վերմակին տակ կկծկտեին, ցավերնին մոռցա՜ծ։ Ու երբեմն ալ, երբ այդ մեռած միսերուն մեջ դեռ կենդանի ջիղերը կ'տրթնջային՝ մե՛կ ճիչ մը կթոնար իր բերանեն, բայց ահագին ու անկարելի՛ ճիչ մը, որ բոլոր սրբտերը դանակի պես կճեղքեր, պատերուն մեջ կթափանցեր, գետնափոր հարկին սյուները կդողացներ, ամբողջ հիվանդանոցը վայրկյան մը իր սարսափով կլեցներ, հետո հանկա՛ծ մահվան լռության մեջ թաղելու համար այդ հսկայական շները։

— Աստված ընդունի իր հոգին,— կուլար Մեծ-Քույրը ծնկաչոք։— Մահեն ավելի դեշը կա...

Գիշերը դեռ երկար ատեն կշարունակվեին այդ սարսափելի ճիչերը ընդհատ-ընդհատ։ Ննջասենյակիս մեջ պառկած, չէի կրնար աչերս գոցել։ Այդ բողոքի աղաղակները կոկորդս կխրվեին, շունչս կխեղդեին։ Աստվա՜ծ իմ, արշալույսը ե՞րբ պիտի լուսնար...

Սև-սև մութեր ուզեցս կպաշարեին։ Այս որքա՜ն անարդարություն. մեկ կողմեն կհավաքեն ամենեն առաջ երիտասարդները՝ պատերազմի մեջ հարյուր հազարներով մեռցնելու համար, մյուս կողմեն՝ կատիպեն, որ բժշկությունը գերմարդկային ճիգեր թափե՝ տպրեցնելու համար տառապագին մահկույտ մը, որ իր բոլոր ուժով մա՜հը կկանչե...

Ու այդ ապիտակ գիշերին մեջ քանի՞ քանի՞ անգամներ ոճրին փորձությունը ձեռքս զողացուց. մինչև որ վերջապե՛ս ճիչեր դադրեցան, ու խավարն ու լռությունը լեցուցին Ցավին Տունը։

Առավոտուն իր մոտ գացի. երեսին քողը անգամ մը ալ բացի ու լացի։

Այդ գարշահոտ նեխության մեջեն իր կապուտակ աչքերը հանդա՞ր կնայեին՝ ազբյուրներուն վրա բացված այն երկնագույն ծաղիկներուն պես, որ մի՛ մոռնար զիս կ'ըսեն...

Վերմակին տակ արյունն ամբողջ անկողինը լեցուցեր, մակարդեր, սառեր էր արդեն։ Կասկածո՞վ իր թեր վերցուցի. այն մերկ երակը փրբթեր էր... փրթա՞ծ, թե փրցված...

Լոզան, 1913

ԿՌՈՒՆԿԸ

Ցուրտ-ձմեռ օր մըն էր։ Դուրսը սառած հովը մարակներու պես կշաչեր անցորդներու երեսին։ Ջյունն ըսես՝ աչքերը կուրցնելու աստիճան։

Հայրենակցի մը սենյակին մեջ կծկտեր էինք մենք, քանի մը ընկերներ, ամենքս ալ պանդուխտ։ Դուռը ճռաց, ցուրտ հով մը խուժեց սենյակեն ներս։ Կարոն էր՝ գերեզմանեն կուգար։

— Պը՞ռռ,— ըսավ,— շան օդ. ասանկ օրով մարդ կմեռնի՞...

Քիչ վերջ, դուռը անգամ մըն ալ բացվեցավ. քանի մը հետամնաց ընկերներ ալ ներս մտան։ Այս ձյունին սպասած էին, որ դիակը ամբողջովին ծածկվեր, նույնիսկ մեկը՝ մեր բոլորին կողմե, հետին հրաժեշտի քանի մը խոսքեր ալ ըսած էր այդ մենավոր գերեզմանատան մեջ, այդ անծանոթ մեռելին վրա։

Ո՛վ կճանչնար, ո՛վ պիտի ճանչնար երբեք հազար ու մեկ բզկտված էջերը Կյանքի ու Մահվան այն տոմարին, որ այսօր ձյուներու տակ թաղեցինք, օտարներու փոսին մեջ։ Առա՞նց անունի, թշուառի դիակի մը պես...

— Ե՛ս ալ չէի ճանչնար ան,— ըսավ մեջերնես մեկը։— Բայց պանդոկին մարդերը հասկցեր էին, որ այդ օտարականը հիվանդ Հայ մըն է ու հայ բժիշկ մը կ'ուզե իր մոտ։ Շաբաթ մը հետո միայն կրցան զիս գտնել։ Երբ իր սենյակին ներս մտա, պատուհանին փեղկերը գոցված էին։ Սակայն քիչ-քիչ այդ մթության մեջ դեմք մը գծագրվեցավ, երկար, անկյունավոր, կանանչի զարնող դեղնությունով մը. խավարով ու լույսով շինված ռամպրանթյան գլուխ մը։

Երկրորդ բանը, որ տեսա այդ սենյակին մեջ՝ ոսկորի գույն մատներ էին, որ ինծի երկարեցան ու ձեռքերս սեղմեցին՝ կպչող խոնավությունով մը։ Կարծես թե ա՛լ կաթիլ մը արյուն մնացած չըլլար իր մար-

մինին մեջ։ Աչքերը իրենց փայլը արդեն կորսնցուցեր էին. սենեակի մեջ սև՝ չէին երևար։

Երբ ավելի վարժվեցա այդ կես-մթության՝ տեսա, որ մորուքին վրա տեղ-տեղ կարմիր արյունը փակեր, թանձրացեր, լերդացեր էր։ Մորթված անասունի տաք շունչ մը կ'ելլեր իր բերանեն, դանդաղ ու խորունկ։ Կարծես անտեսանելի դանակ մը ներսեն, վերեն ի վար ճեղքեր էր իր թոքերը։

Այլ նյութական ի՞նչ դարման կարելի էր տալ այս մարմինին, որ գրեթե մեռեր էր արդեն։ Բայց ան խոսելու ճիգ մը ըրավ, հազը խեղդեց իր խոսքը. խեղդող, խռպոտ հառաչներեն բա՞ռ մը հասկցա.

— Կռո՞ւնկը...

Ու ես երգեցի իրեն. ո՞վ չի գիտեր կռունկը, բոլոր աշերն ետին մնացած ուղևորներուն կռունկը... ու անդին՝ բոլոր ճիտը ծռած, անվերջ ճամբաներուն սպասողներուն կռունկը... Ու ինծի այնպես թվեցավ, որ իր հոգին հովացավ, զովացավ, լացավ... Իր սրտին բոլոր լուրերը հանձներ էր հավատարիմ կռունկին...

Այս պատմության վրա ամենքս ալ լռեցինք։ Սարսափե՛լի բան մը կար ճակատագրին մեջ այս անծանոթ ուսանողին, որ հայրենիք դառնալու համար ճամբա ինկեր ու ճամբուն վրա մեռեր, թաղվեր էր իր շտեսած մեկ հողին մեջ...

Թոքախտը, որ հո՛ն էր, ի՛ր մեջ, դարանակա՛լ, տարիներեն ի վեր սպասեր էր, որ բոլոր հույսերը իրականան, բոլոր ուսումները կատարելագործվին ու բոլոր աշխատությունները ավարտին՝ ի՞նք սկսելու համար իր ահավոր աշխատությունը, ու գերագո՛ւյն ժամուն տալու համար գերագո՛ւյն հարվածը... Ա՜խ, զզվելի՛, զզվելի՛ հիվանդությունը...

— Բժի՛շկ,— ըսավ մեկը,— երբ գերեզմանին մեջ երեսը բացինք, մելանի պես սև էր... ինչե՞ն է...

Բայց բժիշկը չխոսեցավ. մա՛րդ չխոսեցավ։

Լռությունը անգա՛մ մըն ալ իջավ մեր վրա՝ քարի պես, ու այս անգամ ավելի՛ ահավոր, քան առաջին անգամը։ Այդ սա՛ռը կոտրելու համար՝

— Տղա՛քներ,— ըսավ ուրիշ մը։— Վաղը Հայոց Կաղանդն է...

Բայց Կաղանդին վրա մտածողն ո՞վ էր։ Մենք կլսեինք ձյունները, որ կթփրտային ապակիին վրա, կարծես մեռելի՛ն մատները թփրտային մեր ապակիին վրա... Այս ցուրտին՝ իր գերեզմանին փախած, մե՛ր մեջ մտնել կ'ուզեր ան։ Ու ես չեմ գիտեր ի՞նչ մը ուներ սպառնական այդ անանուն ու անծանոթ մեռելը. խորհրդանշան մը ու ազդարարություն մըն էր ան մեզի համար...

Ու իրա՛վ, իրա՛վ, այդ պատճառն Մահը մեր վրան էր. ա՛յն Մահը, որ ուսանողին ու բանվորին, հավատացողին ու ուրացողին, բժիշկին ու բժշկվողին հավասարապես անծանոթ ու սարսափելի է...

Մե՛նք ալ մա՛ղը պիտի ըլլայինք, կրթությո՛ւն պիտի ստանայինք, ո՛ւրչա պիտի տաններինք մեր խավար աշխարհին. սո՛ւտ, սո՛ւտ... Մենք որո՞ւն ոտնչին մեջեն չէր շնչեր արդեն դարանակալ Մահը... Յուրաքանչյուրն ինքն իր վրա կխորհեր, ինքն իր վրա կկասկածեր...

Ո՞վ պիտի պատմեր ահավոր մեծությունը այս երիտասարդ հոգիներուն, որոնք ազոթքի մը կա՛ն ալ կմերժեին ազջերուն ու մեռոդներուն միջև։ Այլապե՛ս, ամեն մարդ առանձնացեր էր ինքն իր հոգվույն մեջ...

Սակայն, հանկարծ, մութ անկյունե մը զոզդո՛ղ ու ցա՛ծ, երդ մը սկսավ, նախ մե՛կ բերնով, հետո բոլոր շրթունքներե. բարի ու ահավոր երգ մը, մահերգի մը պես ազաչավոր, ազոթքի մը պես վեհափառ երգ մը, որ սառը կոտրեց, արցունքները հալեցուց, սրտերը տաքցուց, բոլոր հոգիները, բոլոր հողերը, բոլոր տրտունջները, բոլոր մրմունջները իրա՛ր միացուց.

Զարիպին սիրտն է խոց, ճիկարն է վարամ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ...

Կոտ՛ռնկ, կոտ՛ռնկ, ամեն աշխարհի անկյուններե, ամեն սրտի խորշերե քանի՞ ծանր լուրեր կապեցին ոտքերուդ ու դուն կրնա՞ս թռչիլ... Քանի՞ բանի՞ մահեր կապեցին քու թևերուդ, կոտ՛ռնկ, թեավոր հառաչ, որ կրնա՞ս թռչիլ...

Ու երբ բժշկին նշանին վրա՝ բոլո՛ր մեկ ոտքի կեցանք իբրև սուզի նշան, մարմինս փուչ-փուչ եղած՝ ես կխորհեի, որ այդ վայրկյանին, հեռուն՝ բը, հեռուն՝ բը, ծովերով ու լեռներով հեռուն՝ բը տեղ մը, ծերուկ մայր մը ու ալեոր հայր մը, ժպտելով ու հուսալով, ճամբո՛ւն, ճամբո՛ւն կնայեին. մինչդեռ մենք գիտեինք, որ ա՛լ ոչան չպիտի գար, չպիտի գա՛ր...

Եվ այս անդամ, ամենո՛ւն հետ, բայց դողալո՛վ ու կարծես մա՛ն տկանչին կ'երգեի ես մահահոտ երգը... Պանդխտության ճամբաներուն վրա անանուն մեռոդներու ամբո՛ղջ ցեղ մը՝ համայն աշխարհը թունավորելու չափ դառնությո՛ւն գրեր էր այդ երգին մեջ, ու քարերը լացնելու չափ քաղցրությո՛ւն...

Լոգան, 1913

Դեռ դպրոցական նստարաններուն վրայեն Արամ՝ ընկերս, կ'ըսեր ինծի.

— Երբ քսան տարու ըլլանք, ա՛յնպես խնջույք մը, ա՛յնպիսի հանդես մը սարքենք, որ ամբողջ գյուղը մեզի հետ ուրախանա...

Այն առեն դեռ մեզի այնպես կթվեր, թե քսան տարեկանին խոշոր անկյուն մի պիտի դառնայինք։

Քսան տարի կյանքի պատրաստվիլ, քսան տարի գավակներ պատրաստել, քսան տարի մահվան պատրաստվիլ... Ա՛յս էր մեր նշանաբանը։

Մեր տղու միամտության մեջ այնպես կ'երևակայեինք, թե կյանքը մաթեմատիքական ուղիղ գիծ մըն էր, որ երեք հավասար մասերու կտրվելն վերջ, ինքն իր վրա կդոցվեր, ինքնաբերաբար, եռանկյունի մը պես...

Այդ օրեն ի վեր շա՞տ ջուրեր անցան կամուրջին տակեն, ու հազի՞վ կրցա հասկնալ, թե կյանքի գիծը ոչ թե ուղիղ, այլ բմբլքապաշտ գիկզակ մըն է և ո՛չ թե հավասարակազմ եռանկյունի մը կձևացնե, սև ու ծիծաղելի գերեզման մը...

Անոնք, որ դպրոցին մեջ գերեզի մը համար կուլային, անոնք ամբո՛ղջ կյանքերնին պիտի լան... ստիպողաբար։ Իսկ անոնք, որ գերեզով մը կզվարճանային, անոնց համար կյանքը շա՞տ մը նմանօրինակ ու ծարօրինակ զվարճություններ կվերապահեն։

Օրինա՞կ։ Արամ, ընկերս, դեռ հազիվ կյանքին պատրաստված, դեռ այդ կանխորոշված քսան տարիին չհասած, բռնեցին ու թաղեցին... Ու ես՝ մինակ մնացած, երբ օր մը ուզեցի տանել այդ մեծ թվականը, արդեն կյանքիս գարունը անդգալաբար անցած, դացած, անէության մեջ թաղված էր...

Սակայն մեր ծրագրին ՞թ՞չ ուրիշ տոն մըն ալ կար, մե՛ծ տոնը, մեծագո՛ւյն տոնը, ամուսնությա՞ն տոնը, որ անհնարաբար չէր կրնար անցնիլ անշուշտ։

Ո՞վ կրնար զուշակել, թե այդ մե՛ծ տոնեն այս ես ինքս պիտի հրաժարեի... ահա թե ինչո՞ւ։

Ակնարանեներ կպատմեն, թե ինչպե՞ս մահվան դատապարտյալը իր հերմակ շապիկին մեջեն լուսին կհառաջանա ու ճիտը չմանին կ'անցնի՝ առանց ընդդիմություն մը ընելու, որովհետև գիտե, թե ամե՛ն շարժում անօգուտ է և թե իր բախտը ուրիշներ կանխավ վճռած են՝ առա՛նց իր հավանությունը հարցնելու։

Ես մահվան դատապարտյալ մը դեռ չեմ տեսած։ Բայց օր մը պարսկական եկեղեցիի մը մեջ հարս մը տեսա, ու դեռ իր վրա խորհած առենս մարմինս միշտ փուշ-փուշ կ'ըլլա։

Խուսեռամ, սև բազմություն մը գլուխ գլխի կ'ալեկոծվեր հարսին անցքը դիտելու համար։ Ահա՛ երեցավ ան։ Շվարուն ու մահատիպ կհառաջանար, առա՛նց հոժարության, այլև առա՛նց ընդդիմության, որովհետև ուրիշներ արդեն իր ճակատագիրը վճռած էին՝ առանց իր հավանությունը հարցնելու։

Գլուխեն մինչև ոտքը ճերմակներու մեջ, ան կհառաջանար՝ իր միամտության չվանեն կախվելու... Մինչև հիմա որքա՛ն երջանիկ էր ան. ցորեկները սիրո երգեր կհյուսեր, գիշերները հրաշալի ասպետներ կրուեներ. դաշտի ճպուռներուն դեմ անհոգ, երկինքի թռչուններուն պես ազատ էր... Այդ գիշե՛ր իսկ պիտի փշրվեին իր բոլոր երազները, ի՛նքն ալ իր կարգին պիտի ճանչնար մայրության ցավերը, պիտի ծեծվեր, պիտի տգեղնար, պիտի անասնանար...

Մարդակերպ գայլերու հոշոտող նայվածքներու մեջեն ան կհառաջանար՝ ճեփ-ճերմակ ու դեփ-դեղին։ Պղտորիկ մարմին մը՝ սրտատրոփ ու դողդոջուն, ոճրագործ ձեռքի մը մեջ բռնված թռչնիկի մարմին մը, որ քիչ հետո պատա՛ռ մը պիտի բլլար թռվի գիշակեր ու տարիքոտ անդդին բերանին մեջ... Փեսան՝ իր թևեն ճանկած, կհառաջանար ճարպոտ աչքերով, փայտի պես պեխերով՝ սեղված ու սուրցված...

Ամբողջ ամբոխը զույգ մը աչք եղած էր։ Համառ նայվածքներ կսեռեին հարսին։ Միսի մը պես, քիչ մը ամե՛ն մարդ պատառ-պատառ կճաշակեր այն «անմեղութենեն», որ վայրկյան մը հետո գոյություն չպիտի ունենար ա՛լ...

— Հարստությունը անո՞ւշ բան է...— փսփսաց մեկը՝ բերանին ջուրերը վազցնելով։— Գրպանդ դրամ ունի՞ս. կյանքդ պոռնիկներու ծոցը փտեցուր, ու ծեր օրերուդ համար է՛ն անմեղ, է՛ն գեղեցիկ, պզտիկ աղջիկը առ, բզքտե, արյունե, ծեծե, հիվանդացուր... մա՛րդ մը ձայն հանելու իրավունք չունի, ո՛չ իսկ կինդ... Աստուծո օրհնությունը քանի՞ ոսկի գնեցիր, ուրիշ բան հարցնող չկա...

Ու իրավ ալ նույն վայրկյանին, բարձրաստիճան կուսակրոն մը Սուրբ Գրքեն վկայություններ կբերեր փեսային առաքինության համար... Ամուսնության անուշություններուն վրայեն կմտներ, տակեն կ'ելլեր...

— Ծով չմտած լողալ կսորվեցնե՛...— կակազեց մեկը թռվեն։

Բայց, ուրիշ մը այնպիսի՛ խոսք մը ըսավ, որ մինչև ականջներուս ծայրը կարմրեցա։

Այդ օրեն որոշեցի, որ եթե երբեք ամուսնանայի, ամեն պարագայի մեջ այս տեսակ պիտի չամուսնանայի։

Տեսա, որ այդ պայմաններուն մեջ պսակը ուրիշ բան չէր, եթե ոչ խարդախ պայմանագրություն մը, որ կույսը կստորագրեր, առանց անոր առաջին բառը ըմբռնելու. իսկ ամուսինը, որ լավ կ'ըմբռներ, ստիպված չէր հարգելու իր պայմանագրությունը...

Գերիներու վաճառականությունը ուրիշ տեսակ չէր. միայն թե հիմա վճարո՞ղն ալ, վաճառվո՞ղն ալ աղջիկն է...

Ու, ո՞վ հեգնություն, այդ փոքրիկ աղջիկը, որուն խոսքը դատարանին առջև արժե՞ք մը իսկ պիտի չունենար, իր «Այո՛»ն պիտի հարդեր ՝ինչև իր կյանքին վերջը, ու իր արգանդին մեջ պիտի կրեր համբույրներուն ամբողջ ծանրությունը. մինչդեռ իր ամուսինը՝ առաջի՛ն հղության արդեն, պիտի խաբեր զայն՝ շան մը պես...

Բայց տեսնեիք, թե իր ծնողները որքա՞ն հպարտ կ'երևեին, ի՞նչ ուրախության արցունքներ կգլտորցնեին իրենց աչքերեն... ի՞նչ վարպետությամբ առաջ տարեր էին դրամօժիտի սակարկությունը... ու ի՞նչ լավ ընարություն... ի՞նչ շնորհքով փեսա... Ամենքը կպաշարեին, կշնորհավորեին զիրենք։

Ես, նախանձով ու դառնությունով լեցուն, դուրս կենտվեի այդ գերեվաճառության շուկայեն, երբ մեկը թևես բռնելով քաղաքավարությամբ անունս հարցուց... կ'երևի «ծանոթ ներկաներ»ու շարքին մեջ տպելու համար։

Տասնյակ տարիներ անցան այն օրեն ի վեր, բայց դեռ չմոռցա դինքը, այդ ճեփ-ճերմակ ու դեփ-դեղին աղջիկը, որ կյանքիս մեջ առաջին ու վերջին անգամ կտեսնեի։

Իր ոգին զիս երկար ատեն տառապեցուց։

Օր մը, ես ալ իմ ճակատագրիս կհնազանդեի՝ իմ լավագույն կեսիս միանալով։

Բայց իր պսակեն որքա՞ն տարբեր եղավ մերինը՝ հակառակ ծայրահեղության։

Առանց թմբուկի, առանց հանդիսավորության հարսնիք մը. քաղաքական այն պարզ հարսանիքը, որ Եվրոպան կպարտադրե հավատացյալին ալ, ուրացողին ալ, հարուստին ալ, աղքատին ալ։

Զվիցերիացի քաղաքապետը ամուսնական պայմանագրություն մը ներկայացուց մեզի՝ երկու վկաներու առաջ։

— Կ'ուզե՞ք ստորագրել, Օ'Բիրդ...

— Այո՛, պարոն...— ըսավ հարսը՝ գրչի համարձակ ստորագրություն մը պակեցնելով թուղթին վրա։

— Շնորհակալ եմ, Տի՛կին...— պատասխանեց քաղաքապետը։

Ու ամենն այնչափ։ Այդ վայրկյանին Օրիորդը Տիկին եղավ։

Եվ սակայն,— անկեղծ խոսք մը կ՚ուզե՞ք,— այդ շարությունը դիս վիրավորեց։

Այդ կանխավ պատրաստված թուղթը՝ հարձակողական ու պաշտպանողական հողի վրա դրված, երկուսանք ստորագրված վաճառականական պայմանագրություն մը վերածեց մեր տարտամ սերերը, անշըջագիծ տնուրջները, ինքնահոժար նվիրումները, հավիտենի խոստումները...

Ու Սերը, որուն համար Սողոմոն «Մահվան չափ զորավոր է» կ՚ըսե, տատուրի մը չափ խախուտ եղավ. որովհետև՝ օրենքը, մեզ միացնելու ժամանակ, բաժանելու պայմաններն ալ կմատնանշեր...

Այս բոլոր օրինական շղթաներուն ծանրությունը թեթևցնելու համար երկնային օրհնությունը մը կպակսեր։ Հարսն ալ շուտով նշմարեց այդ պակասը։

— Ջանի որ,— ըսավ.— մեր ամուսնության համար մեծ ծախսեր չըրինք, «փոխան հարսանիքի» դժբախտ ադջիկ մը ուրախացնենք այդ դրամով. ես նշանված սրբուհի մը դիտեմ, որ պսակվելու համար միջոց չունի. թող իր ուրախությունը մեզի համար օրհնություն մը ըլլա...

«Մեծ միտքերը սիրտեն կծնին», կ՚ըսեն, այսինքն կիներն...

«Փոխան հարսանիքի»... Այդպե՞ս որոշեցինք, ու այդպես ալ ըրինք։

Ու մեր ուրախությունը ավելի կատարյալ ընելու համար, մեկնեցանք Փարիզ՝ հայ եկեղեցիին մեջ փեսաելու ա՞ն, ինչ որ կպակսեր Լաղանի քաղաքացուն։

Բարի քահանա մը մեզ դիմավորեց ժպտելով.

— Բայց դիս դտնելն առաջ, գանձապետ Էֆենտին պետք է գտնեիք...— ըսավ։

Քաղաքը ատկնուվբա ընելն վերջ, գանձապետ Էֆենտին ալ գտանք՝ դոհարավաճառի դրասենյակի մը մեջ, ոսկի նժարի մը նստած, մանի դույն ծերունի մը, որ ձուլ կծամեր...

Երբ իմացավ այցելությանս պատճառը, ըսավ.

— Աշխատիս չորս կողմեն հոս կթափին ատան օրհնություն մը ստանալու համար... Մեր դիները ամենուն հայտնի են արդեն, այնպես որ սակարկության պետք չկա... Եթե հազար ֆրանք արվի՝ ամբողջ տահարը լաստերի պես կգարդարենք, բայց նշանավոր բան մը կ՚ըլլա... Եթե միայն մեջտեղի ջանը կ՚ուզեք՝ գետնին դորգերով, այնչափ հարյուր ֆրանք... Բոլոր ջանները մեկանց՝ այնչափ հարյուր... Սուրբ խորանին լուսավառումը՝ այնչափ հարյուր...

— Բայց պարզ օրհնութիյո՞ւն մը...

— «Պարզ օրհնութիյո՞ւն» ի՛նչ ըսել է, էմինենտիմ Լուսահոգի Մանթաշոֆ այս շքեղ տաճարին համար միլիոններ ծախսեց նե՝ պարզ օրհնութիյուն մը տալու համա՞ր է... Ամեն մոմ հաշիվով կվառի, ամեն տիրացու հաշիվով կ'երգե... Պետք է գիտնաք, որ մեր ձայնավորները Փարիզի Քոնսերվաթուարին մեջ կ'ուսանին և Օրեռային մեջ կ'երգեն... Մեր Շահ-Մուրատյանը «Ֆաուսթ» կխաղա... Եթե գոլոբանական քարոզ մըն ալ կ'ուզեք՝ անոր հաշիվն ալ տերտերին հետ հարմարցնելու է...

Ահա թե ի՛նչ ցեխերու մեջ ստիպվեցա սողացնել մեր Սերը՝ անլուծելի, անբաժանելի, երկնային, հավիտենական ձև մը տալու համար անոր...

Բայց հետևյալ օր արդեն՝ եկեղեցիին մեջ, մոռցա այդ բոլոր դառնութիյունները։

Խորհրդավոր դմբեթին տակ, ամայի շենքին ճիշդ կեդրոնը, մենա՞կ էինք մենք, իրարու սեղմված՝ երիտասարդ ամոլ մը, ծերունի քահանա մը ու ֆրանսացի ժամկոչ մը։

Խորանին վրա ու մեր երկու քովերը երկար ու ճերմակ կերոններ կվառեին, լույս ցերեկով, տժգույն ու երազային բոցով մը, որ կար ու չկար...

Երբեմն դուռին բացվածքեն օտար գլուխ մը կ'երկենար հետաքրքիր։

Այն ատեն կլսվեր փողոցի անվերջ ու անհուն աղմուկը։ Դուրսը՝ աշխարհի մայրաքաղաքը կխժար, կ'ոռնար, կհայհոյեր, կ'ալեկոծեր... Ներսը՝ խարտյաշ և սև երկու գլուխներ իրարու կկապվեին՝ ապրուշում թելով մը, Կյանքի ու Մահվան համար...

Դուրսը՝ բոլո՛ր կիրքերն ու բոլո՛ր մեղքերը, բոլո՛ր գիտութիյունն ու բոլո՛ր քաղաքակրթութիյունը... Ներսը՝ Հայաստանցի տերտեր մը, կարծես Անիի քանդակներեն փրցված հին ու առաքելատիպ գլուխ մը, հաղարավոր տարիներու բառեր կկրկներ, հավիտենական ու անավոր...

Ճերմակ մոմերը կհալեին, բուրվառը կապույտ ամպով մը մեզ պաշարեց։ Տերտերը անվերջ կկարդար ու կ'երգեր. այդ ընթերցումը ու այդ օրորումը քիչ քիչ մեզ ընդարմացուցին, վերացուցին, հեռացուցին, հին ու հեռու տեղվանք տարին...

Կնքահայրը՝ մենակյաց ու մարդատյաց արվեստագետ մը, որ եկեղեցի ոտք կոխած չուներ, հիմա տղու մը պես կուլար։ Հաբսը, որ ո՛չինչ կհասկնար ոգեկեղարու աստվածային բարբառեն, լռիկ մնջիկ կ'արտասվեր... Ու տար արցունք մը, որ ինկավ մեր միացած ձեռքերուն վրա՝ մինչև ոսկորներուս ծո՛ւծը դողացուց։

Ո՛չ. երկնքի կամարեն վարդի մը գոգը ինկող ցողը, բաղնետան

գմբեթեն կույսի մը ծոցը ինկող կաթիլը այնքան չե՞ն կրնար սարսռացնել...

Ինծի ի՞նչ փույթ, թե Գիտությունը պիտի հեգնե իր անարժան աշակերտին այս երկյուղած դիրքը՝ կրկնապե՛ս ծիծաղելի, որովհետև Գիտությունը, որ Կրոնքը չի հասկնար, Սե՛րն ալ չի հասկնար։ Հարաբերական իրականություններո՛ւն միայն կհավատա ան. մինչ Սերն ու Կրոնը բացարձա՛կ իտեալին կձգտին, նույն հավիտենական զգացումին երկու հավիտենական ձևերն են անոնք։ Սերը՝ անձնական, կերպարանավոր, երկրային, բնական իտեալն է, Կրոնը՝ անանձնական, անկերպարան, տիեզերական, գերբնական իտեալը...

Թող քարկոծե՛ն զիս թերահավատները։ Ես չե՛մ կրնար ուրանալ այն անջնջելի՛ արցունքը, որ իմ մայրենի եկեղեցին կրցավ կաթեցնել իմ էությանս մեջ, և որ բոլոր գիտությունները միացած՝ չպիտի կարենային կաթեցնել...

Միայն թե ազատեցե՛ք Պասկը միջնադարյան հղփություններեն, գերնվաճառության հիշատակներեն, անբարոյացուցիչ տեսարաններեն, չտես ցուցադրություններեն... Այս բոլորը կծառայեն մի՛այն ամուսնությունը դժվարացնելու, աղքատությունը նվաստացնելու, կուսությունը կարմրցնելու...

. Փոխանակ հարյուրավոր հրավիրյալներու, որոնք վա՛ղն իսկ պիտի քննադատեն ձեր հարսնիքին խնդությունը, լավագույն է ուրախացնել որբուհի մը, որ ամբո՛ղջ կյանքով պիտի օրհնե ձեզ։

Ու ո՛ւէ թերթ ուրախ պիտի ըլլա հայտարարելու արար աշխարհի թե՝

Նորապսակ ամոլ Ք. այսքան ոսկի
կնվիրե աղջկանց որբանոցի մը
փոխան հարսանիքի։

Շարքը բացված է, ո՞վ պիտի երկրորդեր...

Լոզան, 1913

ՀՐԱՇԱԼԻ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Երիտասա՛րդ բժիշկ, որ մարդը առողջացնելու արվեստին ես նվիրված, չեմ հարցներ քեզի, թե կճանչնա՞ս արվեստդ, բայց կճանչնա՞ս գոնե մարդը։

Մարդը այն մորթազերծ կարմիր կենդանին չէ՛, որուն դնդերները

բննեցիր մարդակազմության պատկերներուն վրա։ Մարդը այն մարմնացեալ դեղին կմախքը չէ՝, որուն շարժումները ուսումնասիրեցիր ոսկորներուն վրա։ Մարդը այն շնչաւորեալ կենաց դիակը չէ՝, որ ամիսներով քարե սեղանի մը վրա պառկեցուցած՝ չափեցիր, կշռեցիր, պատռեցիր, կտրեցիր, հոշոտեցիր, սղոցեցիր, բդկանցիր, առանց որ անգամ մը բերանը բանար՝ հարցնելու համար, թե «ի՞նչ կ'ընես, բարեկա՛մ...»

Քեզի հիվանդ մը ցուցնելե առաջ, պատվիրեցին տարիներով դիակներու վրա աշխատիլ, որպեսզի մարդը ճանչնաս, և որպեսզի հոգիդ չդողա ու խիղճդ չպոռա։

Երկարորեն քննելե, փնտռելե, պրպտելե վերջ, գանկին մեջ նեխած ուղեղ մը ու սրտին մեջ սեցած արյուն մը գտար։

«Ո՞ւր է հոգին, ո՞ւր է խիղճը»,— գոչեցիր ծիծաղելո՛վ։

Ավա՜ղ, քու ուսումնասիրած մարդդ դիա՜կ մըն է միայն։ Զդուշացի՛ր իրեն նմանելե։ Մարդը, որ կ'ապրի, մարդը, որ կխորհի ու կզգա, մարդը, որուն բարոյական տառապանքները բյո՛ւր անգամ ավելի են, քան ֆիզիքական տառապանքները, այն մարդը ուրիշ բան կպարունակե իր մեջ, քան ճարպն ու ոսկորը... .

Ամե՛ն մարդու մեջ Աստված մը կա... Ահավասիկ թե ի՞նչ բան կմոռնան բեղի ուսուցանելե։

Ցավալի է խոստովանիլ, որ այժմու բժշկական վարժարանները կյանքի առաքյալներ կպատրաստեն այնպես, ի՞նչպես զինվորական վարժարանները կհասցնեն Մահվան պաշտոնյաներ։ Սա՛ տարբերությամբ, որ այս վերջինները զինվորին ո՛չ թե միայն սուր ու հրացան կու տան, այլ անձնվիրության, վեհանձնության, զոհողության ամբողջ դաստիարակություն մը։ Մինչդեռ դեռատի բժիշկի մը ձեռքը թույն մը և դանակ մը տալե վերջ՝ կ'արձակեն զայն առանց բարոյական ու հոգեկան ո՛ևէ պատրաստության։

Մարդը իբրև միսի ու ոսկորի շարժական գործիք մը ներկայացնելե վերջ, բժշկությունը կսորվեցնեն այնպես, ինչպես մեքենագետներուն կսորվեցնեն երկաթե գործարաններուն ուսումը։

Հոգեկան ո՛չ մեկ բառ, բարոյական ո՛չ մեկ ուղղություն, անցյալի ո՛չ մեկ հիշողություն։

Եվ սակայն հազարներով տարիներ, փարավոններու երկրեն մինչև Ավետյաց երկիրը, ու Հորդանանեն մինչև Գանգես, միլիոններով մարդիկ հոգեկան բժշկությունը միայն կգործադրեին իրենց ախտերուն դեմ պայքարելու համար։ Եվ ամբողջ կրոններ հիմնվեցան՝ հրաշքներու հավատալիքին վրա։

«Հրաշալիքներու դարը անցավ» ըսին բեղի ու ամուր կերպով փա-

կեցին անբացատրելի իրողություններու անհանգստացուցիչ դուռները։

Զբաղա՛ որ նեղմիտներուն հավատաս։ Այն մարդիկը, որ ամեն բան գիտնալու հավակնություն ունին, կմերժեն ինչ որ իրենց անհասկանալի կթվի։ Աչքերնին գոցած կքնանան ու աստղերը կ'ուրանան...

Քանի որ խոսքը աստղերուն է, հիշեցնենք, թե մինչև 18-րդ դարուն վերջերը, Ֆրանսական Գիտությանց Կաճառը կմերժեր ընդունիլ, թե երկինքեն կրնա քար իջնալ երկրի վրա... Ականատես վկաները իրրև խենթ ու խաբեբա կհռչակեր։ Օր մը քաղաքապետ մը, իր շրջանակին մեջ ինկած երկնաքարեն նմուշներ գրկած ըլլալով իրեն՝ պատկառելի Ակադեմիան, 1772-ին հրատարակած տեղեկագրով կհայտարարեր, թե «նեղելությունը հայտնապես կեղծ է։ Երեւույթը ֆիզիքապես անկարելի է։ Ճշմարտությունը իրենց ցլխուն մացնելու համար պետք եղավ, որ այդ քարերեն մեկը իրենց գլխուն իջնար... 1864-ի մայիս 4-ին, ակադեմիական Ատոլֆ Գրոնեար քիչ մնաց վախեն մեռներ՝ երկնաքարի մը անկումին ականատես ըլլալով...

Նույնը պիտի պատահեր նաև Հրաշալի բժշկության համար։

Տիեզերահռչակ բժիշկ Շարքո, իր ամբողջ գիտությունը քանի մը անբուժելի հիվանդներու վրա իզուր փորձելե վերջ, ինչ մեծ եղավ իր զարմանքը, երբ անոնք օր մը ուխտատեղի մը երթալով բոլորովին բուժված վերադարձան... Այսպես, մատը վերքին մեջ բռնվելե վերջ, իրապաշտ գիտնականը խոնարհեցավ Հշմարտության առաջ. իրեն է հետեւյալ հայտարարությունը.

«Գիտությունը, որ հեղաշրջվելու վրա է, չի կրնար ամեն ինչ բացատրելու հավակնություն ունենալ, այսպիսով իր բարեշրջումը ժխտած պիտի ըլլար... Հրաշքները ամեն ատեն գոյություն ունեցան՝ իրարմե բոլորովին տարբեր կրոններու ու քաղաքակրթությանց մեջ, ինչպես որ այժմ ալ կկատարվին բոլոր լայնություններուն վրա։ Այսպիսով բուժված հաշմանդամները հաստատեցին, նույնիսկ երբեմն պալարներն ու ուռուցքները։ Ես անոնց վերադարձը այն հիվանդներուն, որոնց ես չկրնալով անհամբեր հաստատ ներշնչել, ուխտատեղի մը գացեր էին. քանզի իրենց անչափելի անդամները ու ներկա գտնվեցա ախտին անհայտանումին»։

Լիթրե իր «Գրական իմաստասիրության» մեջ կնկարագրե բազմաթիվ հրաշքներ, որ Սեն-Լուիի գերեզմանին դպչելով կգործվեին։

Հռչակավոր Տոքտ. Ֆաուլեր կնկարագրեն ութը կին հիվանդներ, որոնք ատիերի ուռուցքներ ունեին ու զարմանվեցան հոգեկան բուժումով։

Միայն հետեւությունները տեղի չտալու համար դիտել տանը, թե

ո՞րչափ հազվադեպ են գիտապես վավերացված հրաշքները։ Սակայն, եթե հիվանդները իրենց հավատը փոխանակ փայտի կտորի մը, սուրբի պատկերի մը, դիակի շիրմի մը վրա դնելու, այդ փրկարար հավատը Գիտության վրա դնեին, որքա՞ն պիտի շատանար հրաշալի բուժումներու թիվը... Ա՛յս է հիվանդներուն արվելիք պատվերը։

Բայց բժիշկներուն համար ուրի՛շ կենսական պատվեր մը կա։

Եթե դուն իրապես բժիշկ ես, հիվանդներուդ փրկության համար իրավունք չունի՞ս ոևէ միջոց մերժելու այդ նպատակին հասնելու համար։ Սահմանափակ ու այլամերժ բժշկություն մը գիտակից ոճրագործություն մըն է։ Պիտի դիմես հնարավոր բոլոր ազդակներուն։ Դեղն ու դանակը, ջուրն ու կրակը, ելեքտրականությունն ու մագնիսականությունը, գիտությունն ու հավատը փոխն ի փոխ քու զենքերդ պիտի ըլլան։ Որովհետև այն ախտերը, որոնց դեմ կկռվիս, տարբեր հիվանդներու մեջ, տարբեր զենքերու կդիմես։

Պիտի հարցնես սակայն, թե կարելի՞ է հրաշքը գիտական հավատալիքներու կարգը դասել։ Անշուշտ կարելի է։

Գերբնական կարծվող հրաշքը այնքան բնական է, որքան երկինքին ինկող քարը։ Միայն թե՝ գիտունները ժխտելով անոր գոյությունը, դեռ չուսումնասիրեցին հրաշագործումի օրենքները և բախտին ձգեցին հրաշքի կատարումը։

Քաջությունն ունեցանք խոստովանելու, թե հին ազգերը մեզմե շատ ավելի լավ կճանչնային այս գիտությունը։ Եգիպտացիներուն, Իսրայելացիներուն, Հնդիկներուն պատմությունը լեցուն է այսպիսի փաստերով։

Այժմ մեզի համար մութ կմնա հրաշագործումի եղանակը, բայց անոր սկզբունքը լույսի մը նման պարզ է.

Ձանձրույթի գաղափարը կհորանջեցնե, ամոթի գաղափարը կկարմրցնե, գութի գաղափարը կլացնե, սարսափի գաղափարը կդողնցնե, բժշկվելու գաղափարը կբժշկե։

«Եթե,— կ'ըսե Պարուել,— առողջանալու հաստատ համոզումը իշխե հիվանդին հոգվույն վրա, այդ հիվանդը անխուսափելիորեն պիտի առողջանա»։

Հոգեկան ազդեցությունը այնքա՞ն մեծ է ֆիզիքականին վրա, որ հանկարծական վախ մը բոլոր շարժումներդ անկարելի կդարձնե։ Եթե բուռն հուզում մը կրնա վայրկենաբար անդամալուծել, ավելի՛ բուռն հուզում մը կրնա անդամալուծությունը վայրկենաբար փարատել։

Ամեն բան կախում ունի՝ բժշկվելու գաղափարը հիվանդին մեջ ներմուծելու արվեստեն։

Ու տեսնեք, թե Սրվանձտյան, որ ո՞չ բժիշկ էր, ո՞չ գիտնական, այլ գավառացի վնդարավոր մը, գիտուններու կողմն կղպված հրաշքի բժշկության դուռները ի՞նչ վսեմ պարզությամբ կբանա։

«Նայե՛ սա մանուկը, որ երեսներուն վրա էրէթիկ ջրջրուկ ունի։ Սա մամիկը թեզպենը ձեռն առած նստեր է. մանուկին երկու բազուկները բռնած՝ իր բույթերով ու մատներով տղուն բազկերակները կճնշե, կշոշափե, բազուկն ի վայր մատները կտանի ու կրերե. իր աչքերը անթարթ մանուկին աչքերուն հառած է. ու երբեմն ալ արմունկներեն վեր թևերը կճմլե. կդառնա, տղուն երեսն ի վար կխաչակնքե, և ձեռքերը պորտին ու կուրծքին վրա դնելով՝ բույթով կճնշե, վզին մայր երակները կճմլե, ճակատը կշփե, երբեմն երբեմն ալ երեսին կփչե և միշտ կպրատպրատա, աղոթք կ'ընե։ Հաճախ տղան կհորանչե։ Ելմագնիսացնե՞, կ'ելեկտրականացնե՞, թե աղոթյամբ հրաշք կգործե.— վերջապես տղան հիվանդ էր և կ'առողջանա»։

Հիմա այս պատկերին հետ բաղատության դիր այն նորագույն բժիշկները, որոնք հաճախ հիվանդին ձեռքն իսկ չսեղմած (ժամանակ կորսնցնելո՞ւ, թե վարակվելու վախեն) կնստին, արագորեն ստացագիր մը գրելու պես՝ շարադրելու գեղագիր մը, որ միշտ երկրորդական էչ հաճախ անօգուտ, երբեմն վնասակար։

Կո՛ւյր պետք է բլլալ չտեսնելու համար այն բազմաթիվ հիվանդները, որոնք երկար ճամբորդություններ կ'ընեն, բժիշկ բժիշկ կնստին՝ պաշտպան մը ու նեցուկ մը գտնելու հույսով ու չեն իսկ փորձեր գործադրել այնքա՞ն սուղ գնված դեղադիրները։ Որովհետև դժվար է ընդունիլ այն բազմաթիվ դեղերը, որոնք հաճախ արամագծորեն հակառակ են իրարու... Ու հետո, հիվանդին փնտռածը միայն թուղթի կտոր մը չէր, այլ ապրելու հո՛ւյս, հոգեկան ուժ, տառապելու քաջությո՛ւն...

Դժբախտաբար այս բարոյական ազդակը կ'անտեսեն բժշկական նորագույն հաստատություններն անգամ։ Սկեպտիկները համոզելու համար, թե հավատքի բարբառ մը՝ հոգ չէ թե հրապարակային ու անանձնական, ֆիզիքական ի՞նչ մեծ ուժ կրնա ներշնչել հիվանդին արյան մեջ, կհրատարակենք սա հուզիչ տողերը, որ անծանոթ տիկին մը մեզի կ'ուղարկե զվիցերիական սանատորիոմեն մը.

«Հիվանդի բնական հուսահատությամբ, անկողնիս մեջ պառկած կսպասեի ես ալ չեմ դիտեր թե ինչո՞ւ... Մահվա՞ն, որ չէր գար, Կյանքի՞ն, որ կ'ուշանա զիս վերականգնելու։ Երկար ամիսներու հիվանդությունը արդեն մաշեր, հալեցուցեր էր կորովիս ու համբերությանս մեծ մասը ու մնացած քիչովը դեռ կտանջվեի։

Ահա՛ կստանամ «Աղատամարտը»։ Մեծ ուրախությամբ կկարդամ

Հայերեն թերթերը. հայ գիրը տեսնելով, կարծես կարոտը կ'առնեմ հայրենիքիս։

«Ապրիլը հաղթել է». շտկվեցա անկողնիս մեջ. սկսա կարդալ հոդվածը և մինչև վերջացնելս բոլորովին առողջ կդգայի զիս։ Ա՜լ կուրծքիս տակ հիվանդ թոք մը չի կար. երակներուս մեջ թարմ արյուն կհոսեր. հաջորդ օրն իսկ ելա անկողնես։

Եթե բժիշկները հաճախ գիտնան հիվանդին հոգին բուժելու, երևի լավելի շատ պիտի հաջողին մահվան ճանկերեն ազատել մարմինը։

Ուրեմն ձեր հոդվածը միշտ լքման վայրկյաններուս կարդացի և ամեն անգամ նորոգված ուժերով սկսա կռվիլ հիվանդության դեմ։

«Կռո՜ւնկը»... ինծի համար ալ պիտի երգե՞ր այդ կռունկը... Բայց չէ՜. ես պիտի լավանա՜մ...»

Լոզան, 1913

ԱՀԱՎՈՐ ՏԱՐԱԿՈՒՅՍԸ

Հայրենիքս անակնկալ նամակը մը— այն պարզ ու ահավոր նամակներեն, որ գյուղերուն մեջ միայն կրնան գրել— սա տողերով կվերջանար.

«Հ. Գ. — Չեմ ուզեր ձեզ տխրեցնել, բայց, իհարկե, ստիպյալ կուգամ լուր մը տալու, որ շատ բարի չէ. խոսքս Հայկին մասին է. անցյալ շաբաթու գյուղ դարձավ ու հիվանդ ինկավ. հարկավ պիտի փութամ զինքը վերջին անգամ տեսնելու»։

Վերջին անգամ մը տեսնելո՞ւ. և ինչո՞ւ համար. ուրեմն այսքան հիվա՞նդ. և այսքան շուտո՞վ... Բայց չէ՞ որ շաբաթ մը առաջ ի՜նքն իսկ կդրեր, թե ի՜նչպես համալսարանի քննություններուն մեջ առաջին էր հանդիսացեր, շնորհավորություններու արժանացեր ու գյուղ վերադարձեր էր հանգչելու։

«Կարելի՞ բան է. կարելի՞ բան է», կկրկնեի շվարած։ Բայց ահավոր տարակույսը արդեն արթնցեր էր մեջս, ու ամեն անգամ սարսափելի «Հետ-գրության»ը, կցցվեր աչքիս առջև։ Հապա եթե ճիշդ ըլլա՞ր...

Բարեբախտաբար հետևյալ օրն իսկ նամակ մը Հայկեն, ուր եղբայրս իր ձեռքով, տասներկու վճիտ երեսներու մեջ, իր մարգարտաշար ու լուսավոր գիրերով ինծի բյո՜ւր բաներ կգրեր, այնքա՜ն անուշ, այնքա՜ն բարի, այնքա՜ն հուսատ, որ հազիվ թե նամակին վերջը քանի մը տողով անցողակի կհայտներ իր «քիչ մը տկար» ըլլալը։

Ի՜նչ լավատես խորհուրդներ, ի՜նչ գերերկրային զգայնություններ,

ի՞նչ իտեական հորիզոններ ու որքա՞ն հեռատեսություններ ապագայի...

Ո՛չ, ո՛չ, ես վստահ էի, որ տղան չէր կրնար մեռնիլ. ան պիտի ապրե՛ր ու պիտի հաղթե՛ր, ան առաքյալ մը, ռահվիրա մը, մարգարե մը պիտի ըլլար։

Շաբաթ մը վերջ նոր նամակ մը, ու այս անգամ հայրիկեա։ Որքա՞ն տարիներն ի վեր չեմ տեսեր զինքը. այժմ ալեհեր ու լուսավոր ծերունի մը պետք է ըլլա։ Բայց ինչո՞ւ գիրերը դողդոջ ու տարօրինակ են այս անգամ. ան միշտ հաստատուն ու փորր տառերով կգրեր։ Արդյոք դժբախտություն մը...

«...Պանդխտության նամբաներուն նայելեն աչերնուս լույսը հալեցավ, զավա՛կս։ Եղբայրդ հիվանդ. օտարներու բժշկության ենք կարոտ։ Մայրդ ծեր է, հիվանդության դեմ միայնակ...»

Սակայն նույն պահարանին մեջ ահա՛ գրություն մըն ալ Հայկեն, ուր հիվանդն ի՛ր ձեռքով կգրե, թե բոլորովին առողջանալու վրա է։

«...Հետզհետե լավանալու վրա եմ. հազ դադարեցավ բանալու չափ միշտած է. գիշերները մուս հանգիստ է, ցուրեկներն ալ. ալ ո՛չ մեկ խոց. մարմինս ակար կզգամ միշ մը, բայց գիտեմ, որ աշխատության արդյունք է այս. մի՛շ մը հանգիստ ու ես դարձյալ վե՛ր կենավիմ. ապրելու կամքս մի՛շտ ուժեղ է...»

Անշուշտ, անշուշտ։ Կամքի ուժը, կյանքի ծարավը, հույսը, հավատը ունայնություններ չեն։ Այն, որ կ'ուզե ապրիլ, պիտի ապրի։

Երեք օր վերջ նոր նամակ մը։ Սակայն ինչո՞ւ ձեռքս դողաց այս անգամ պահարանը բացած ատենս։

Ի՞նչ կ'ըսե... ահագին թափո՞ր... ու ինչո՞ւ... գանգակնե՞ր... Հայոց Սկեղեցի... Հունաց Առաջնո՞րդ... Դամբանակա՞ն... թաղո՞ւմ...

Ի՞նչ կ'ըսե... ուրեմն եղբայրս բռնեցին թաղեցի՞ն... եղբայրս, որ ապրի՞լ կ'ուզեր...

Այն, որ միա՛յն լույս կ'երազեր, ուրեմն հիմա ափ մը խավար հողի ներքև կսեղմվի՝ գալարվող արմատի ու չորցած գանկի մը միջև...

Ա՞յս էր, ա՞յս էր իմ ահավոր տարակույսիս լուծումը։ Ո՛չ, ո՛չ. ես չեմ կրնար ընդունիլ, որ կորիյան մեծագույն հանգույցը այսպե՛ս սուրի կույր հարվածով մը լուծվի։

Ընդհակառակը։ Տարակույսս ավելի՛ ու ավելի՛ մեծցավ, սաստկացավ, խորունկցավ։ Աչերս պղտորեցան, շվարեցա, սարսափեցա։ Ես, որ աշխարհն այնքա՛ն հաստատուն հիմերու վրա դրված կկարծեի, հիմա կզգայի, որ ան կդողար ոտքերուս տակ։

Ուրեմն մեռե՞ր է։ Ինչպե՞ս հավատալ... ինչպե՞ս չհավատալ... Ի՞նչ էր կյանքը, ու մահը ի՞նչ... Ո՞րն էր իրական, ո՞րն էր անիրական...

Զորս բոլորս սաղայիլական պարի մը մեջ կյանքը կ'նոար, կզեղուր ու կպոռթկար ամեն տեղ։ Խուռներամ բազմություն մը կվազվզեր ու կտքներ խելակորույս։ Մտրակները կշաչեին, կառքերը կսուրային, ինքնաշարժերը ահագին զոռզոռոցով զիրար կխաչաձևեին։ Մարդ ու մետաղ կյանքի աղմուկով կլեցնեին միջոցը։

Աշխարհը կկործանվե՞ր, թե աշխարհը կհառներ...

Շվարած ու զողզղալով, գացի լապտերի սյունի մը բռնվելու, չիյնալո՛ւ համար։

Ո՞ւր կ'երթային, ո՞ւր կվազեին ամենքն այլ։ Այս խելացնոր վազքը կյանքի՞ արշավ, թե մահարշավ մըն էր միայն։ Այս ճամբուն ծայրը հանկարծորեն պիտի չբացվե՞ր անդունդներուն ամենե՛ն սեը, ամենե՛ն խորը, ամենե՛ն խուլը, ուրկե՛ն որ չէ վերադարձեր...

Ուրեմն այս անհամար հոգիներով լեցուն շոգեկառքերը, այս մարդերն ու տղաքները հեռեռ կվազեին անկայուն կամուրջի մը վրա, որուն մեկ ծայրը դատարկության վրա կհենուր...

Կարելի՞ էր երևակայել Կյանք-կամուրջ մը, որուն մեկ ոտքը ոչնչության վրա դրված ըլլար...

Այս բոլորեն ո՛չ մեկը եղբոր մը, զավկի մը, հոր մը մահ չէ՞ր տեսած։ Եվ սակայն իրենցմե՛ ո՛չ մեկը անկեղծորեն, իրապե՛ս, ներքնապե՛ս կհավատար մահվան։ Եթե վստահ ըլլային, որ այդ բոլոր տառապալից ու սպառիչ գործունեությունը անիմաստ ոչնչության մը համար էր, ո՞վ պիտի վազեր, ո՞վ քաջությունը պիտի ունենար վազելու...

Ո՛չ, այս մարդերը չէի՞ն հավատար, չէին կրնար հավատալ մահվան այնպե՛ս ինչպես բժիշկ մը կ'ըմբռներ զայն։ Եթե միայն այդ ըմբռնումն ունենային, յուրաքանչյուրն ալ կանգնում մնալու համար ինծի նման սյունի մը բռնվելու պետք պիտի ունենային...

Ուրեմն ես նվա՞ղ կ'արժեի, քան այս տգետ ամբոխը։ Ուրեմն Գիտությունը մեռցուցա՞ծ էր իմ մեջ ինչ որ կար լավագույն, ազնվագույն, գերագույն, ու քանի մը հարաբերական հավատալիքներու փոխարեն, ան ինձմե՛ն խլե՞ր էր մեծագույն հավատալիքը՝ Կյանքի հավատը...

Եվ սակայն, եթե կյանքը իրո՞ք ու միմիա՛յն բջիջներու խաղ մըն էր, ինչպե՞ս կարելի էր բացատրել, որ այդ բջիջներուն ամենեն պզտոր, ամենեն ախտագին, ամենեն հուսահատ եղած միջոցին կյանքի սերը, ապրելու հավատը, հաղթելու հույսը ծնեին այնքա՛ն զորությամբ, այնքա՛ն լավատեսությամբ...

Եվ ուրկե՞ կուգային այդ հունավոր բջիջներուն մեջ անհունության զգաղափարները, այդ մահացու տարրերուն մեջ անմահության բնազդները, այդ պետնաբարշ մարմնի մեջ անշրջագիծ իտեալները... Ինչպե՞ս

կարելի էր երևակայել, որ մասը ամբողջության մը պարունակեր, ու բջիջը՝ տիեզե՛րք մը...

Եթե Կյանքը ժամանակներու սկիզբեն ի վեր կոքներ միա՛յն Մահվան հասնելու համար. եթե Բարեշրջության օրենքը միլիոնավոր դարեր ի վեր կ'աշխատեր անշունչ առարկաներուն շունչ տալու, հողը բույսի, բույսը կենդանիի, կենդանին մարդու վերածելու, հետո դարձյա՛լ մարդը հողի փոխելու համար, կարելի՞ էր, որ ո՛եէ գիտուն միտք մեռներ ու հագուրդ ստանար այսքա՛ն անիմաստ, այսքա՛ն անտրամաբանական, այսքա՛ն ամուլ գործունեությունով մը։

Եթե անշարժ ու անզգա քարը կյանք ու շարժում առավ, զգացում ու խորհուրդ եղավ, և կամք ու խղճմտանք, պարզապես տառապելու ու մեռնելու համար, չէ՞ր արժեր կատարել այսքան դարավոր ու տիեզերական աշխատություն մը, որ զեղչուկ գերեզման մը բա՛վ էր խեղդելու...

Ուրեմն ինչո՞ւ համար են ծաղիկները. աստղերը ինչո՞ւ. ինչո՞ւ համար է սերը ու կյանքը ինչո՞ւ...

Այս ընդարձակ տիեզերքին մեջ ո՞վ իրավունք, ո՞վ իշխանություն, ո՞վ զորություն ունի ծագող արև մը խավարելու...

Եվ սակայն ան մեռա՛վ... Մեռա՛վ...

Ո՞վ, ո՞վ պիտի կրնա զիս ազատել այս ահավոր տարակուսանքեն։

«Մեռցո՛ւր»,— կ'ըսեն գիտունները... Բայց ժամանակներու, միջոցներու, օրենքներու անհունության մեջ՝ ի՞նչ խղճալի բան է իմ գիտցածս. ինչպե՞ս զորեմ իմ այդ փոքրիկ գիտությունովս ամբողջ Մեծ Անծանոթն սպաննելու։

Զեռքս փոքրիկ մուրճ մըն են տվեր, որ աստղերը փշրեմ անով... Բայց աստղերը միշտ մեզմե բարձր ու անհասանելի պիտի մնան՝ գերագույն ճշմարտություններուն պես. ու ով որ աչքեր ունի տեսնելու՝ պիտի տեսնե զանոնք...

Երկու հսկաներու միջև կտատանիմ ու կտառապիմ։ Երկու միականի կիկլոպներ կրաժնեն հոգիս. Գիտություն մը, որ փաստեր ունի ու իտեալ չունի ու Կրոնք մը, որ իտեալ ունի ու փաստեր չունի...

Առաջինը անվերապահ մահվան կդատապարտե զիս, երկրորդը անհունության լուսամուտները կբանա անհունաբա՛ղձ հոգիիս։ Մեկը ոտքս գերեզմանին կկապե, մյուսն աչերուս՝ երկինքները ցույց կուտա։

Կրոնքը՝ իր հետևողին հավերժորեն երանելի հաղթություններ կխոստանա. Գիտությունն իր աշակերտին լոկ վերջնական ու բացարձակ հպարտություն մը կ'երաշխավորե՝ ստրուկ բջիջի մը մահվան կապելով սանձարձակ հոգիին ազատաշունչ թռիչները...

Եթե գոնե Գիտությունը ձեռքս ուժեղ դնեիր տար՝ անմահության ամեն երազ ջնջելու, կսփոփվեի, խորհելով, որ ճշմարտությունը մե՛ր կողմն է՝ հոգ չէ, թե դա՞ն ըլլար ան... Բայց ո՛չ, Գիտությունը կլուռ. ու այս լռությունը ժխտումն մը ավելի ծանր կկշռե տարակույսի նժարին մեջ։

Ու նժարը կտատանի ահավոր ելևէջներով։ Ո՞ւր, ո՞ւր պիտի հանդի իր մահացույց ասեղը. հավիտենական կյա՞նք, թե՞ հավիտենական մահ...

Ո՞վ, ո՞վ պիտի ազատե զիս այս ահավոր մղձավանջեն։

Կ'անցնին օրեր, կ'անցնին շաբաթներ. ու տարակույսը կմնծնա՞, կմնծնա՞...

Ամեն գիշեր, դողդղալով աղերս կուտամ ցայգի սյուքերուն, աղերս կուտամ խավարի թռչող հովիներուն.

— Հա՛յկս, անո՛ւշս, հոգի՛ս, մեռա՞ր, մեռա՞ր...

Ու խորասո՛ւյզ կլսեմ միջոցին ընդմեջեն, բոլոր Գիտություններուն վրայեն սավառնող, դարերե ի դար ու սիրտերե ի սիրտ արձագանքող, Շեյքսփիրի ահավոր հարցականը.

«Լինե՞լ, թե չլինել... մնանի՞լ, քնանալ... քնանա՞լ, երազե՞լ, թերևս...»

Լոզան, 1913

ԱՆԻՎԱՆ ԳԱՆԶԸ

Այն տարին Ալպյաններու հեռավոր գյուղ մը գացեր էի օգտվելու։ Օր մը, պտույտե վերադարձիս, պանդոկապետը զիս սա՛ խոսքերով դիմավորեց.

— Ներողություն, պարոն, հիվանդ կին մը եկած է հոս, առտվընե ի վեր բժիշկ կփնտռենք։ Ամուսինը քովի սրահն է։

Քովի սրահը քառասունոց մարդ մը կար. մարդ ըսածս՝ գլուխ մը ու գլուխն ալ՝ երկար ու սուր ճակատ մը, կոնաձև շաքարի մը պես, ճակտին տակ՝ գիշակեր թռչունի խոշոր քիթ մը։

Իրեն երջանկություն մը պատճառելու համար երբ Հայ ըլլալս հայտնեցի, ուրախության ու զվվանքի այնպիսի հաջորդական ու հանկարծական արտահայտություններ առավ, որ կարծես պտույտ մը խածած ատեն որդ մը ելլեր մեջեն։

Այս մարդերը, որ իրենց ցավը պահելու համար մինչև աշխարհիս ծայրերը եկեր, լեռներուն գագաթները ելեր էին, իրենց չա՞ր բախտեն, հայ բժիշկի մը ձեռքը կ'իյնային հանկարծ։

Իր նիհար ու տժգույն դեմքեն ա՛յնպես հետեցուցի, որ հիվանդը գուցե ինքն էր. բայց ան թուրքերեն լեզվով՝

— Ո՛չ,— ըսավ.— փա՜ռք Աստծո, ես ի՞նչ ունիմ, հիվանդը իմ կինս է, իր սենյակը հրամմեցեք։

Կինը ճանապեին վրա երկնցեր էր՝ երեսը ափերուն մեջ, սև մազերը մինչև գետինները թափած։

— Ելի՛ր, Արմինե՛, այս տոմտորը քեզ պիտի փրկե...

— Ես իմ փրկությունս մարդերեն չե՛մ սպասեր,— ըսավ կինը, կարճ ու վիրավորիչ, առա՛նց գլուխը վեր հանելու։

Ու այս առաջին այցելությենեն միա՛յն այն հասկցա, որ Արմինե իր էրկան կպատասխաներ հայերենով մը, որ փակ դուռ մըն էր ամուսնին առջև։

Երկրորդ այցելությանս բոլորովին ուրիշ կերպ տեսա Արմինեն։

Մազերուն մեջ, ականջներեն վար, վզին շուրջ, կուրծքերուն վրա, թևերեն վեր, մինչև մատներուն ծայրերը, ու մնացածն ալ քովի սեղանին վրա՝ ոսկինե՛ր, ոսկինե՛ր, ոսկինե՛ր, հազար ու մեկ գլշերներու գանձ մը լեցնելու չափ։

Խեղճը՝ Հայ ըլլալս լսեր, ու փոխանակ ամուսնին պես ղղվելու, ուզեր էր մեռնելեն առաջ մեկու մը գեղեցիկ երևալ։ Ու իրա՛վ ալ, այնքա՛ն գեղեցիկ էր ան, որ բժիշկի մը ներված չէ ըսել...

Սև մազերուն մեջեն, այդ հաղի՛վ քսան տարու դեմքը ծյուրեր, իր տարիքեն ավելի փորբացեր, աննյութական ու անկարելի բան մը դարձեր էր։ Աչքերը խորունկցե՛ր, խորունկցե՛ր էին, միշտ ներսիդին նայելեն, ու մազի պես լայն ու կապույտ շրջանակ մը ա՛լ ավելի մութցուցեր էին զանոնք։ Այդ տժգունության մեջ դուրս կցայտեին իր շրթները, բարա՛կ բարա՛կ՝ երկու թերթ գիծերու պես, ու կարմի՛ր կարմի՛ր՝ երկու վարդի թերթերու պես... Անշուշտ այդ սիրահար շրթները փա՛կ դուռ մըն էին իր ամուսնին առջև։

Հետո՛, շա՛տ հետո միայն հասկցա, որ այդ ամրողջ կինը՝ դեռ կենդանի, բայց արդեն գոց դագաղ մըն էր այդ մարդուն համար։

Վա՛յ մարմինի բժիշկին, որ հոգիեն չի հասկնար։ Ի՞նչ հոգեկան ցավեր կան, որ հիվանդին ցավերը կրյուրապատեն, կթունավորեն, մահացու կդարձնեն, այլև կբացատրե՛ն այդ ցավերը։

Այս խեղճ կինը ա՛յնքան կվախնար իր էրկան հետ մենակ մնալու գաղափարեն, որ իր գավառացի հայրը իր հետ բերեր էր։ Սակայն ինչի՞ կրնար օգտակար ըլլալ այդ գրեթե անդամալույծ ու իր սուգին մեջ զառամած հայրը, որ վրայե վրա, իր վեց զավակներն ու կինը գերեզման տարեր էր։

Բոլո՛ր ալ հագալով ու թքնելով, մեկը մյուսը վարակելով, թոքերնին փսխելով մեռեր էին։ Ու այս կինը, որ ամենո՛ւն ալ ինչպես մեռնիլը տեսեր էր՝ համոզված էր, որ ինքն ալ պիտի մեռներ, անպատճա՛ռ...

Զուր կքաջալերեի զայն, թե քանի որ դեռ մեկ թոքը, կոկորդը, աղիքները վարակված չէին, քանի որ դեռ ջերմության աստիճանը բարձր չէր, պետք էր շուտով հակաթոքախտ ներարկումներ սկսիլ։

— Ավելո՛րդ ցավեր,— կ՚ըսեր կինը...

— Ավելորդ ծախսեր,— կ՚ավելցներ ամուսինը...— Արդեն ո՞վ ըսավ, որ Արմենն հիվանդ է... փա՛ռք Աստուծո, ի՞նչ ունի... թեթև հազ մը... այսօր կա, վաղը չկա...

— Այսօր կա, վաղը չկա՞...— կհեգներ կինը, որ շատոնց զզված էր այս կեղծիքներեն ու ձգեր էր, որ ի՞նչ որ ուզեն ընեն իրմով։

Հայրը կփափաքեր զայն է՛ն սուղ սանատորիումները տանիլ, է՛ն մեծ բժիշկներուն ցուցնել, է՛ն թանկ տեղերը գնել։

Բայց ամուսինը ուրիշ միտք էր։ «Այս հիվանդության դեղն ու դարմանը օդն է»,— կ՚ըսեր... ու օդը ձրի՛ էր։ Անոր համար ալ մինչև հոս տեղվանքը քաշեր, բերեր էր գիրենք, որպեսզի թե՛ աման ըլլա և թե ծանոթներն ալ չիմանան, թե հիվանդությունը ի՞նչ է...

Ու այս մարդը, եթե ա՛յդ գլխով մարդ մը կրնար երջանկություն ըզգալ, երջանի՛կ էր հոս։ Ամեն տեղ կմտներ, կ՚ելլեր։ Պանդոկապետին հետ սակարկություն մը կ՚ըներ՝ թոքերեն։ Տղաներուն լոխում մը կու տար, որոնցմե տուփերով բերած էր ամեն պատահականության համար։ Կիներուն լեռան ծաղիկ մը կբաշխեր ու իր լեզվովը կբացատրեր, որ երկրին մեջ ավելի ագնիները կային։ Մարդերուն թրքական ծխախոտ մը կպլորեր իր մատներուն մեջ, որ ծուխեն դեղնած մագիլներով կվերջանային։

Ու այս բոլորը այնպիսի կատակներով ու սրամտություններով համեմված, որմե մա՛րդ բան մը չէր հասկնար, բայց ամե՛ն մարդ կխընդար։ Լեռան ձանձրույթը փարատելու համար իրենց այս տեսակ հոպիտ մը պետք էր։

Նույն միջոցին, փոքրիկ սենյակի մը մեջ, որուն պատուհանը լեռներու կենսունակ զեփյուռին դեմ փակված էր՝ հիվանդը շմսեցնելու համար, երիտասարդ կին մը կհազար, վերմակները կխածներ, կու լար...

Ա՜խ, այդ կեղծ հոպիտին մեջ ե՛ս միայն կտեսնեի զզվելի մարդը։ Բայց ան ուզեց զի՛ս ալ շահիլ. ու թվանշաններով, թվականներով, մթություններով, բարդություններով, մեջ-մեջի, երկար բարակ պատմություն մը հրամցուց, «զիս իրողություններու ճամբուն վրա դնելու համար...»

Այս բոլորին աղոտ կերպով ա՛յն կհետևեր, որ իր կինը այժմ միա՛կ ժառանգորդն էր իր ծերունի հոր, «որ իր բոլոր զավակները կորսնցնելն վերջ՝ ալ երկար պիտի չկրնար ապրիլ, խե՜ղճը...»

— Գանձ մը կա, տոնքոր, խոշոր գանձ մը կա...

Ու այս բացականչության մեջ մեղսակցության, խորամանկության, ոճրագործության ամբո՛ղջ գանձ մը կար...

Իր միակ մտմտուքը ա՛ն էր, որ որ այդ երկուքեն ո՞րը պիտի մեռներ առաջ, ծերունի հա՞յրը, թե հիվանդ աղջիկը... Իսկ ես՝ երբո՛ղ մը կտեսնեի, որ գուցե այդ երկուքեն ալ առաջ մեռներ, ի՛նքը՝ ամուսի՛նը։

Իր թարախի գույն դեմքին վրա ցցված այտոսկրները՝ ներքին չերմութենեն կդմինարի գույներ կ'առնեին երբեմն։ Գլուխը ուսերուն մեջ իջեր ու կոնակն ալ կքեր էր՝ կարծես ահագին պատասխանատվության մը տակ։ Բերնեն կանաչորակ ու մածուցիկ խուխ մը կ'արձակեր ամե՛ն տեղ ու ամե՛ն ատեն՝ «աշխարհին վրա» թքնելու պես... Երբեմն նույնիսկ կպատահեր, որ արյուն փսխեր. բայց ան պարզապես «սրտիս գայրույթենն է» կ'ըսեր...

Ստոյիկյան պաղարյունությամբ, տարիներո՛վ իր շրթները ենթարկել էր ան սոսկալի վարակումին՝ օ՛ր մը տիրանալու համար ոսկիի գանձին...

Ա՜խ, այդ գանձը. քանիներո՞ւ թունավորման պատճառ եղած էր ան։ Հայրը օ՛ր մը չէր ուրախացեր անկե. իր զավակներուն համար դիզեր էր այդ հարստությունը։ Տղաքները ուզեր էին դպչիլ այդ նզովված ոսկիներուն. ու զեղխ կյանքով հյուծած, սպառած, մեռած էին՝ մեկը մյուսին ետևեն, իրար վարակելով։ Երիտասարդներեն վերջ մայրն ալ թաղեր էին։

Այդ ծերունին ի՞նչպես դիզեր էր այս հսկա հարստությունը հոն, ուրկե երիտասարդ բազուկներ մինչև Ամերիկաները կ'երկարին սև հաց մը ուտելու համար։ Այդ գանձին մեջ իրենց անեծքը չէի՞ն նետած անո՞նք, որ արյուն ու արցունք կուլային։ Այդ ոսկի-զարդերուն լեռը, որով ծերունին իր հիվանդ աղջիկը ծածկած էր, քանի՞ հարսերու գլուխեն, քանի՞ այրիներու ձեռքեն խլված էր...

Արմենե կ'անդիտանար այդ բանը։ Հաղի՞վ չափահաս, Պոլիս գիշերօթիկ վարժարան մը ղրկեր էին զայն. ու հաղի՞վ ավարտած՝ այս ագետ մարդուն ծոցը նետեր էին։

Բայց կիները ասամվածային գիտություն մը ու անասնական բնազդ մը ունին։ Ինչ որ չեն գիտեր, կզգան, և ի՞նչ որ կզգան, իրենց ամբողջ հոգվույն ու մարմնույն մեջ կզգան...

Այս քսան տարու կնոջ մեջ համա՛յն մարդկությունը թունավորելու

չափ դառնություն կար։ Ո՛չ կհագվեր, ո՛չ կ'ուտեր, ո՛չ կխոսեր։ Ու ոսկի-զարդերն ալ միայն օր մը դրած էր, ինծի՛ համար. բայց ծերունին ա՛յնքան ուրախացեր էր այդ օրը...

— Աղջի՛կս, ուզե՛ ինձմե ինչ որ սիրտդ կ'ուզե... միայն անգամ մը ուրախանալդ տեսնեմ... բա՛ն մը ուզե իմ կարողությանս սահմանին մեջ...

Այդ կարողությունը անսահման էր, բայց ի՞նչ օգուտ։ Աղջիկը ա՛լ ավելի կդառնանար, կուլար, «մնանիլս կ'ուզեմ...»,— կ'ըսեր։

Ան կզզվեր իր ամուսնեն, որ չար հրեշտակի մը պես կժպտեր. կզզվեր նաև իր հորմեն, որ վեց զավակները թաղելե վերջ դե՞ռ կ'ապրեր ու կուլար...

Եվ սակայն այս երկու մարդերն ալ իրե՛ն համար կ'ապրեին։ Այդ երկու փտությունները ալ որոշ ճիգով մը կկախվեին կյանքեն, մեկը՝ աղջկան վերջին շունչը, մյուսը՝ անոր դանձը հավաքելու համար... Այս նպատակին հասած բոպեին իսկ՝ իրենց կետին զարնվող գնդակներու պես, երկուքն ալ գետին պիտի իյնային։

Ահագին տոամի մը վերջին դերակատարներն էին ասոնք։ Անդամալույծ վաշխառուին առջև կանգներ էր Վրիժառուն՝ կողոպտված, մերկացված, անպատված ցեղի մը վիժուկը։ Ու այդ երկու հակընդդեմ ուժերուն մեջ կը հյուծեր Հայու-Կնոջ տիպարը, աղնվական ու հլու...

Ահագին հրդեհի մը վերջին սյուներն էին ասոնք՝ իրարու կրթնելով կանգո՛ւն մնացած. մեկուն իյնալը մյուսնե՛րն ալ պիտի տապալեր. ու այդ օրը հեռու չէր, որովհետև երեքն ալ փոքրիկ կրակով կ'այրեին ներսիդիեն...

Բայց որքա՞ն տևեց այդ մունջ տոամը, չեմ գիտեր։ Ես ստիպված եղա այդ գյուղը թողուլ ու հիվանդանոց վերադառնալ։ Բայց հաճախ կխորհիմ իրենց վրա։ Արդյոք ո՞ւր կշարունակեն հիմա «անիծված ոսկե խնձորին խաղը», ո՞ր հողերուն վրա, ո՞ր հողերուն տակ։

Դեռ աչքիս առջևն է այն փոքրիկ բույնը, ուր չարաշուք բու մը ու վայրի կատու մը իրենց մեջ կրգթտեին հիվանդ թռչնիկ մը, առա՛նց որ ան անգամ մը ճչար... Ընդհակառա՛կը. իմ ամե՛ն օգնության փորձերս մերժեց։ «Միա՛յն բան մը կխնդրեմ,— ըսավ.— որ օ՛ր մը պատմությունս գրես...»

Խե՜ղճ աղջիկ. կույս հոգիները պատմություն չունին։ Ու քու տրժգույն դեմքդ՝ առանց սա երկու դաժան մարդոց ստվերներուն, անհասկանալի նկար մը պիտի ըլլար, ճերմա՛կ թուղթի մը պես։

Լոզան, 1913

Սրվանձտյանի ըսածին պես՝ Վանեցիի կաղը մինչև Զինաստան է գացեր։

Սա ծերացած ագռավի գլուխը, որ պանդոկին ծառերուն տակ ֆը՞ռթ, ֆը՞ռթ սուրճ կխմե, կասկած չունիմ, որ մերիններեն է։

Ան մյուսներուն պես՝ ճաշարանին մեջ փակված, հապճեպո՞վ չըներ իր նախաճաշը։ Ներս գնաց, գավաթը սուրճ ու կաթով լեցուց, իր ձեռքով դուրս բերավ, ծառերուն տակ տեղ մը ընտրեց, անհոգ խնամքով սիկառեր մը փաթեց։ Այն տեսնելով այդ պարզ նախաճաշը փոխվեցավ, աննյութացավ, աղոթքի մը շնորհքն ու արքայության մը երանությունը ստացավ։ Մեկ ձեռքին ծխախոտը առավ՝ երբեմն-երբեմն ֆսֆսացնելով, մյուս ձեռքին առավ շոգիացած գավաթը, որ այս վայրկյանին ամբողջ տիեզերքին առանցքը կկազմեր. շուրթին շ դոզալով երկարեցավ՝ կարծես սիրահարական համբույրի մը համար. հետո պլեխերեն կախված կաթիլներուն վրա լա՞յն ձեռք մը պտտցուց՝ օրհնական շարժումով մը...

— Փա՞ռք ստեղծողին...

Հակառակ հաճույքը հավերժացնելու իր հայտնի ճիգերուն, երբ դյութական գավաթը իր պարունակության հետ կորսնցուց նաև իր ամբողջ կարևորությունը, մոռացա ու բարևեցի... Տեսնելու բան չը իր ուրախությունը. բիչ մնաց ակնոցներեն արցունքներ պիտի ցայտեցներ... Ա՛յս տարիքով ու ա՛յս գլխով մարդերուն համար մեծագույն չարչարանքն է լռության դատապարտվիլ. իրենց լեզուն հասկցող մեկը կմնատեն՝ իրենց փորձառության ու իմաստության հավաքածուն պարզելու համար անոր առջև։

Ստամոքսի հիվանդության համար (ո՞վ պիտի զուշակեր իր նախաճաշեն) լոգան եկած էր։ Բայց այս քաղաքին մեջ ստամոքսի ստամծնները երկուք են՝ բժշկապետ Գուրժեն ու Քոմպլը, երկուքն ալ հակընդդեմ ռնծիմներով կհաջողին թե՛ հարստանալ... թե՛ հիվանդները առողջացնել։ Զարահճիներ տակի կհետեցնեն, թե հարուստի հիվանդություն է, անզորձ մարդոց ջղայնություն է, կուշտ ստամոքսի երևակայություն է...

Սակայն այս մարդը այն շարահճիներեն չէր. ո՞չ, ո՞չ... «ծերացած ագռավի գլուխ մը» ըսի, բայց ագռավնիկ ուզելով... Այդ երկու հակառակ դրամաններեն ա՞յն հետեցուցեր էր, որ երկո՞ւքն ալ լավ էին, բանի որ երկո՞ւքն ալ կլավացնեին... Ու երկու տխերիմ «տիեզերահռչակ»ներուն գիտությունը իրար խառնելով, իր անձնական փորձառությունն ալ վրա բարդելով, տրձակուրչի այս բանի մը ամիսներուն համար Կյանքի

ծրագիր մը չուներ էր, որուն կենտրոնը գանգրենի հատատամուտ-թյամբ։

Այսպես, իր շաբաթները կ՚անցնեին առա՛նց փոփոխության, իրարու հար և նման՝ լուսանկար պատկերներու պես։ Իր օրերը չափված-ձևված էին՝ Մայր-Տոմարի մը պես կանոնավոր։ Իր լուրաքանչյուր ժամերը կանխա՛վ ճամացույցի մը պես լարված էին՝ ատամոքսին շուրջ... Ու անոնցմե վայրկյան մը փոցնել՝ Սուրբ Գիրքեն էջ մը պատռելու պես բան մը պիտի ըլլար...

Առավոտյան ութը՝ նախաճաշի խորհրդավոր ժամն էր, մի՛շտ առաջին օրվան հանդիսավոր արարողությամբ, մի՛շտ նույն ծառերու շուքին։ «Ութնեն-տասը՝ հանդիսա» բսած էին բժիշկները։ Հարկա՛վ, նախաճաշը պիտի մարսվեր... «Աբեկիմ»ը այդ մարսողությունը տկարացնելու պաշտոնը ուներ։ Լրագիրը դրոշակի մը պես կպարզեր։ Հոնքերը կպոստեր, ու, ծայրե ի ծայր, առա՛նց բառ մը փախցնելու, կկարդար։ Պարունակությունը ի՞նչ որ ալ ըլլար, մինչև տա՛սը տեսլու էր այդ թերթը... Ու այս ընթերցումը ,որ իմ մտավորական միակ սնունդն էր, հանդիսա քունի մը համարժեք էր իրեն համար...

Տասնին կ՚արթննար։ Անհո՛ն գուրգուրանքով, ծոցեն թոչուն հանող տղու մը պես, նեբսի գրպանեն շիշ մը կհաներ։ Այդ հանքային հեղուկը, որ իր ա՛յնքան պատվով հյուրասիրած նախաճաշիկին վերջի՛ն հարվածը պիտի տար, աչքերը գոցելով ցմբուր կոպարկեր երկու «տիեզերահոշակ»-ներուն կենացը...

— Ատված զիրենք անպակաս ընե տառապյալ մարդկութենեն...

Ասկեց վերջ, տասնեն-տասներկուր, գործունեության և շարժումի երկու երկա՛ր ժամեր կսկսեին, ատամոքսը ցորեկվան ճաշին պատրաստելու համար։ Այդ գործունեությունն ալ ամե՛ն օր անփոփոխ նո՛ւյնն էր ու չափված-ձևված նամակներ գրելու մեջ կկայանար։

— Ես այս հիվանդ վիճակովս,— կ՚ըսեր.— Չվիցերիոյ լեռներեն Մանիշաշոֆին ամբո՛ղջ գործը կվարեմ Ապրիլի մեջ. Նեղոսին ափերը քարյուղով կ՚ողողեմ... Մեր արձակուրդն ալ առա՛նկ...

Հետո ձեռքով դրածները ոտքով նամակատուն կտաներ. չէ՞ որ բժիշկները ճաշեն առաջ փոքրիկ պտույտ մը հանձնարարած էին՝ ախորժակը բանալու համար... Ա՜խ այդ ախորժակը...

Վերադարձին՝ ճաշի պահն էր արդեն. նշանավո՛ր պահը, երբ իր երևակայական ժամացույցին երկո՛ւ ասեղներն՝ ալ փո՛քր մատնանիշ կ՚ընեին ու ամբո՛ղջ ժամ մը ատամոքսին վրա կանգ կ՚առնեին... Նախ խաշած մակարոնին կ՚ուտեր՝ Պուրժեին կենաց, հետո խաշած բրինձ՝

Քոմպին հոգվույն... Երբ իր երկո՛ւ ռեժիմներն ալ կհատցներ՝ ծուռ աչք մը կնետեր մեր պնակներուն։

— Սա խորոված հնդկահավին հոտը քիմքս կքրքրե... ու տեղական գինին անուշիկ գույն մը ունի... ի՞նչ կ՚ըսես, բժի՛շկ...

Ի՞նչ ըսեի։ Այս մարդը համոզված էր, որ իր գործ դրած գիտական միջոցներով եթե քա՛ր ալ ուտեր պիտի հալեցներ... Ես՝ բնականեն սակավապետ, իբրև միակ դեղ չափավորության պատվերներ կուտայի իրեն։ Բայց ան կպատասխաներ.

— Բժի՛շկ, բժշկյա՛ զանձն քո... Աչքդ բա՛ց. գերեզմանին մեջ ա՛լ խորոված հնդկահավ չկա... Աստված ամբողջ երկրագունդը գույնզգույն բանջարեղեններով ու պտուղներով ծածկեր է նե՝ միա՛յն հոտվըտալու համար չէ... Մայր-Բնությունը ծովն ու հողը ձուկերով և երևներով լեցուցեր է նե՝ միա՛յն զանոնք նկարելով ճաշարանին պատերը ծածկելու համար չէ. պետք է որ ստամոքսիդ պատերն ալ համ մը առնեն...

Այս մարդուն բերնին մեջ «Մայր-Բնություն»ը ստանում կնոջ իմաստ մը կստանար։ Ձուկերուն ճակտին գիրը ա՛յսպես կհեղներ, մարդերուն ալ սապես.

— Արարիչը մարդուն երկար բազուկներ ու կարճ լեզու մը տվեր է, որ շա՛տ աշխատիս ու քի՛չ խոսիս (ա՜հ, եթե գործադրեր ըսածը...), պզտիկ սիրտ մը ու մեծ ուղեղ մը տվեր է, որ մե՛կ զգաս ու երկո՛ւ հաշվես. իսկ ուղեղին հարյուրապատիկ մեծությամբ որովայն մըն ալ տվեր է՝ հասկցնելու համար, որ մեծ միտքերը փորեն կուգան... Ուրեմն առաջին հոգդ հո՛ն պիտի ըլլա. եթե ստամոքսդ դուն քաղցրությամբ չկիցնես, ան քու կյանքդ դառնությամբ կլեցնե...

Այս «Քաղցրություն» բառը պատահական նմանություն մը չէր. աշխարհը անուշին պնակին կ՚ակնարկեր, որ իր առջև անցնեմ... Այդ սալորի անուշը իր ճաշերուն սովորական վերջաբանն էր, որ միշտ սա խոսքերով կփակեր.

— Ախ, մայրիկիս եփած անուշը ուրիշ է...

Ու «մայրիկ» բառը, որ իր երեք խոսքին մեկն էր, իր շորցած ու ճմռթված բերնին մեջ մանկական անուշություն մը կստանար։ Այս հիասքանչ ամուրիին մայրի՛կը, որ իր տղուն անուշ կ՚եփեր...

Բայց հիմա այս ահագին ճաշը մարսելու էր. ժամը մեկեն մինչև չորս տառապագին շրջան մը կար։ Նախ կես ժամ փորին վրա կպառկեր՝ բան Պուրժեի. հետո կդառնար կես ժամ մըն ալ կոնակին վրա կպառկեր, որ Քոմպին խոսքն ալ տեղը անցնի։ Հետո կծիկ մը կ՚ըլլար և աջ ու ձախ ծունկերով քսանական անգամ փորը կճզմեր՝ զայն պարպել ջա-

նայով. ասկեց վերջ ալ գետինը ծունկի կուգար՝ նավակին մեջ նստելու ձևով մը, ու թիավարության անհատնում շարժումներ կ'ըներ... միշտ «սիեզերահնչակ»ներուն պատվերին համաձայն։

— Սա փորդ քիչ մը հանգիստ ձգե,— կ'ըսեի... Ստամոքսը կնոջ մը կնմանի, որքա՜ն իրեն ուշադրություն դարձնես, ա՜յնքան նազ կ'ընե...

Բայց ամուրի մը ի՞նչպես հասկնար այս բաղդատության ամբողջ նշանակությունը։ Ան կպատասխաներ ինծի.

— Միջատը որ միջատ է, գնդասեղի չափ գլխո՛ւ մը նստեն ահագին փոր մը կքաշե... Զորքոտանիներն ու թռչունները երեքական ու չորսական ստամոքսներ ունին... Եթե բնությունը մարդուն մեկ ստամոքս մը տվեր է, դայն չխնամելը անաստվածություն է։ Եթե չհավատաս, վարդապետներո՛ւն հարցուր... Տարիներով կզարդացնենք պզտիկ ուղեղ մը, որ հաճախ մեր դժբախտության պատճառ պիտի դառնա, բնավ չենք դաստիարակեր ահագին ստամոքս մը, որ կյանքին աղբյուրն է, հոգիին հյութն ու ծուծն է... Ան կետիս մեջ Եվրոպացիները մեղ գլած անցած են...

Ու ստամոքսի դաստիարակության այս դժվարին գործը ա՜յնքան Ղհոգնեցներ դայն, որ այդ անվտանգ թիավարության փորձերեն վերջ, Մորփեոսի գիրկը կ'իյնար։

Ժամը չորսին սենյակեն դուրս կ'ելլեր, բայց այս անգամ թեթևցած, կազդուրված, զվարթացած, լուսավորված, բոլորովին ուրիշ մարդ եղած։

Թեյի ժամն էր հիմա ու խոսակցության ժամը։ Խոսքը բերնես կգողնար։

— Քու պատմածդ ի՞նչ է որ, ես պատմեմ, որ դուն լսես...

Իր սովորական այս հառաջաբանին կհաջորդեին անվերջանալի, աներևակայելի, անկարելի պատմություններ, արևելյան սրամտություններով ու սնամեջ տրամաբանություններով լեցուն, օճառի ոսկեզօծ ու անշոշափելի պղպջակներու պես, որոնց հաղիվ կդպիս ու կճաթին...

Բայց այս պղպջակներուն վերջը չկար։ Որկրամոլներու հատուկ այս զվարճախոսությունը կտևեր մինչև իրիկուն։ Այն ատեն, այդ բոլոր հրախաղության փորձերեն վերջ, միայն սև ածուխ մը կմնար նորեն պահ մը լուսավորված այդ գլուխը՝ ծեր ադամի գլուխ մը կ'ըլլար դարձյալ...

Այնպես որ երեկոյան ճաշին իր խոսակցության նյութերը կլրջանային, պատմա-փիլիսոփայական տխուր տեսություններ կ'ըլլային։

— Նափոլեոնին անկումը շատեր խե՜լ մը պատճառներու կվերագրեն, բայց դուն հեռուները մի երթար, իբրև բժիշկ՝ Նափոլեոնին հա-

կատարիր իր սատանային մեջ կարդա. կտեսնե՞ս հոն խաղցկեղը... Վաթերլոոն ու Սենթ-Հելենը այդ փերքին կսկսին... Ես ալ ինչո՞ւ սասանկ չե՞մ եղած. ժամանակ մը կար, երբ արարատյան նժույգի վրա թռչած սանտես բոլո՛ր սրտերուն հատաշները նտեսս կթռչեին, բայց սատանային ցավը եկավ ու Հալեպին առյուծը քարյուղի պաշտոնյայի մը վերածեց։

Տարբեր էին նաև իր էլեռածները։ Երենկոյան սեղանին՝ երբեք միս չէր դներ բերանը, որպեսզի գեղ երաղներով հոգին չպղտորի գիշերը։ Մսեղենը Եբենկյան թագուհին էր, ու իրեն համար բնա՛վ կասկած չկար, որ Աստված կովը սանդղեր էր, որպեսզի մարդերը մսեղեն քամեն իր սանդղներեն...

— Կարդա՛ մը պես մարդ՛ս, մոր մը պես բարի՛ մսեղենը... որուն համար Մենդելբոֆի անմահության հեղուկն է կ'բսեր...

Այդ մեծաքանակ մսեղենը կսկսեր քիչ քիչ թմրեցնել, ջիղերը քակել, քուն պատրաստել...

Բայց ցանկալին ալ սատաղերուն սակ գիշերային պատկեր մը կ'բներ, կերածներեր սեղմորեր ու վարման ուսելիքներու վրա խորհելու համար... Երբեմն սակայն էրպատահեր, որ սրի՛շ բանի վրա ալ խորհեր։

— Բմի՛շկ,— բսավ գիշեր մը.— դուն իմ հիսուն տարիներուս մի նայիր... Ես դեռ կույս եմ հոգվոյ-մարմնով... հաճախ կիսորհիմ ամուսնանալ, բայց հուզմունքն կվախնամ... քու կարծիքդ ի՞նչ է, ինչպե՞ս կուգա սատանոքս...

Ու չկարծե՛ր, թե անիրական մարդ մըն է այս։ Այս կենդանագրին սակ կրնայի ծանոթ անուն մը դնել, բայց ճանչցողները հասկցան արդեն։ Գիտցե՛ք միայն, որ այս մարդը ապրեցավ, սերունդներ դատարարակեց, հետ պաշտոնյա եղավ, հարդվեցավ ու մեռավ... գիտե՞ք ինչեն... փորի ցավեն։ Եգիպտոսի մեջ, հարսանիքի գիշեր մը, շատ ուսելեն սատանոքը ճաթեցուցեր է ըսին... ճակատագի՞ր։

Այս ճակատագրին վրա հիմա կիսորհի՞ արդյոք այն, որ ձուկերու ճակատին գիրը կկարդար... Միայն թե իր խոսքերը դեռ ականջիս կհնչեն անդրշիրիմյան պատգամի մը պես.

— Աչքդ բաց, բմի՛շկ, գերեզմանին մեջ ա՛լ խորտված հեղկահավ չկա...

Լոզան, 1913

Բոլոր տեսանելի աշխարհներեն հեռու, Ատլանտյանի ալիքներեն ծեծված, մենավոր ապառաժ մը կա. Սենթ-Հելենի անիծապարտ կղզին է ան։

Դեռ դար մը չէ անցեր այն օրեն՝ 16 հոկտեմբեր 1815, երբ հոն կրանտարկեին հին ու դյուցազնական աշխարհի մը մեծագույն ներկայացուցիչը, վերջին կիսաստվածը, Կայսրը ինքը։

Ու որպեսզի փոխուստի ամեն համանմանություն անկարելի ըլլար, առագաստանավեր նույն ապառաժին վրա կենտեին անգլիական ամբողջ բանակ մը՝ իր թնդանոթներով ու զրահավորներով, ինչպես նաև ախրահոչակ կառավարիչ մը՝ Հուդսոն Լոու։

Այս պզտիկ մարդուն պաշտոն տրված էր հրամայել անո՛ր, որ ամբողջ աշխարհիս կհրամայեր։ Այսպես, տհպին օվկիանոսի մը մեջ կորած այս երկու մարդերուն միջև, տուամներուն ամենեն եղկելին կխաղցվեր։

— Զորապետ Պոնապարթ...— կհրամայեր Հուդսոն։

— Ես Կայսր Նապոլեոնն եմ,— կպոչեր այս վերջինը.— Կայսր Նապոլեոնը, կհասկնա՞ք, Պարոն։ Հիմարություն ու նախատինք է զիս այլապես անվանել։ Օր մը, երբ Անգլիա գաղթի գոյություն ունենալ, մարդկությունը դե՞ռ զիս պիտի անվանեն Նապոլեոն Կայսր...

Ու վանդակին մեջ բանտված առյուծի մը պես, որ երկաթի ձողերով կ'անհանգստացնեն, Նապոլեոն իր խուցին մեջ կբանտվեր։ Շաբաթներով, ամիսներով, տարիներով մութ անկյուն մը կծկուած, վարագույրները կփակեր, ինքզինքը պատե ի պատա կնետեր, զինվորական նեղ անկողնի մը մեջ կ'երկարեր, աչքերը չէր կրնար զոցել, կհյուծեր, կբաղուեր, կմեռներ։

10 Հոկտեմբեր 1818ին, իր պահակներեն անգլիացի սպա մը հետևյալ տողերը կգրեր Հուդսոնին.

«Այսօր կրցա նշմարել զորապետ Պոնապարթը դիակի մը գույնն ունի ու վհուկի մը կնմանի»։

Կեսթն կ'ըսե. «Մարդս կ'ապրի ա՛յնքան երկար, որքան չմեռնելու հաստատ կամքն ունի»։

Ու Նապոլեոն ա՞լ չէր ուզեր ապրիլ։

Խնդրեր էր, որ Եվրոպային զարգացած քահանա մը գրկեն իրեն, որպեսզի իր կասկածները փարատեր, հոգի՞ մը, հավա՞տ մը, անմահություն՞ մը, կառչելիք բա՞ն մը ցույց տար իրեն... Որովհետև այս մարդը, որ գահեր գահերու վրա, թագեր թագերու վրա ու երկիրներ

երկիրներու վրա բարդած էր, հիմա սարսափով կտեսներ, որ ամեն բան կխուսափեր իր ձեռքին, նույնիսկ իր անունը, իր կինը, իր զավակը...

Իրեն զրկեցին անպարագա, անդամալույծ, խուլ ու գրեթե խոսելու անկարող քահանա մը՝ Ապպե Վինեալի, ինչպես նաև երիտասարդ, անհավատ ու թեթևարարո բժիշկ մը՝ Տոքթյոր Անթոմաքի։

Նարոլեոն այնքան ավելի հարգեց առաջինը, որքան արհամարհեց երկրորդը։ Իր սարսափելի տառապանքին մեջ գետինները կտապլտկեր «Էոնեռագո՛ռծ, ոնեռագո՛ռծ» պոռալով։

Օրերով, շաբաթներով, ամիսներով կփսխեր, կարմիր կփսխեր։ Անշարժ ու սարսափահար պառկեր էր երկաթե նեղ անկողնի մը մեջ՝ իր բոլոր պատերազմներուն անկողինը, որուն շորս անկյուններուն վրա շորս արծաթե արծիվներ կհակեին, բայց ի զո՞ւր, որովհետև մահը մտեր էր, հոն էր արդեն, անմահին վրա...

Մարմինը երթալով կսառեր։ Երբեմն երբեմն ջերմը մահասարսուռ թոթվըտուք մը կպատճներ իր դիակնացած մարմնին վրա։ Այն ատեն պաղ քրտինք մը մածուցիկ կդարձներ իր թափանցիկ մորթը։ Ձեռքերն ու ոտքերը երկաթե ձողերու պես սառն ու անշարժ էին։ Որովայնը կ՚ուռենար, կ՚ուռենար։ Իր առասպելային ժգունությունը այժմ զարհուրելի կանաչություններ կստանար։ Չոր հաղ մը անդադար լցնցեր իր կոկորդը։ Հոգեարքն էր այս...

Շաբթվան մը տառապանքեն վերջ, Նարոլեոն կանգնեցավ, կտակը ուզեց, կարդաց, բոցը նետեց. նո՞ր մը պիտի գրեր։

Սակայն մահվան զալարումները սկսան դարձյալ բղթել իր փորոտիքը։ Փսխուքը սկսավ, անկարելի, անդադրում, անվերջ, արյունի տաքատաք ու սև-սև պատառներով։ Փորը նորեն կ՚ուռենար, կ՚ուռենար։

Զարհուրելի տանջանքներու շաբաթ մը վերջ, իրեն շուրջը վայրկյանն վայրկյան մահվան կսպասեին. Նարոլեոն վե՞ր կանգնեցավ, իր ցավերուն վրա իշխեց, իր ճգնաժամային պայքարը դադրեցուց, իր մահվան հետ երեք ժամու զինադադար մը կնքեց...

Ու գերաբուն վերացումի մը մեջ գրեց իր համբավավոր կտակը։ Նախ հայտարարեց, որ հակառակ իր կասկածներուն, իր հայրերուն կրոնքին մեջ կմեռներ։ Հետո միտքը սավառնեցուց Փարիզ՝ «իր ժողովուրդին, որ ա՞յնքան կսիրեր», ու Սենի ափերուն վրա թաղվելու իր կամքը արձանագրեց։

Հետո սիրտը թռավ դեպի իր միամոր զավակը. միակ հույսը, միակ ժառանգորդը իր հիմնած անծայրածիր պետության. տասնամյա դողդոջ մանուկ մը... Որո՞ւ պաշտպանության հանձնել զայն, ո՞վ կրնար ավելի լավ խնամել զավակ մը, քան իր մայրը։ Բայց Նարոլեոնի աք-

սորեն իր վեր, աշխարհի թագուհին թշնամի բանակեն շիլ զորականի մը հետ ամուսնացեր էր արդեն...

Նաբոլեոն դողաց. աչքերուն մեջ ահավոր արցունք մը փայլատակեց շանթի մը պես։ Հիշեց, թե ի՞նչպես իր ձեռքով աշխարհի ծանրագույն թագն էր դրեր այդ կնոջ գլխուն. հիշեց, թե ի՞նչպես իր թևերուն վրա կկրեր իր վարդագույն մանուկը, որ Հռոմի թագավոր կծներ... Ու ինք, որ Հռենոսեն մինչև Նեղոս, ու Ալպյաններեն մինչև Ձյունապատ Ռուսաստանը, բոլոր ապարանքներն իրեն պատատ ըրած էր ու բոլոր թագավորներն իրեն մանկլավիկ, նայեցավ իր շորս խավար պատերուն, նայեցավ իր շուրջի սարսափած մարդերուն ու լացը զսպելով գրեց.

«Մինչև վերջին վայրկյանս ամենեն խաղցր զգացումները պահեցի կնոջս հանդեպ, կխնդրեմ իրմե հսկել որդվույս վրա...»

Ու իր գավկին կտակեց բոլոր ինչ որ ուներ մաերիմ. իր մարմնին շապիկները, իր ձիուն սանձն ու թամբը, Ավստրլիցի սուրը ու իր պատերազմական անկողինը, որ նաև իր գերության ու հոգնարքի անկողինն եղավ։

Բայց պաղ քրտինք մը սկսավ դարձյալ ողողել իր մարմինը, գալարումներն սկսան... մահվան դինադադարը ավարտեր էր։ Բայց Կայսրը ճիգ մըն ալ ըրավ, վերջին կամք մըն ալ հայտնեց իր որդվույն համար.

«Թող իմ գավակս չփորձե իր հոր մահվան վրեժը լուծել, թող դաս մը առնե իր մահեն, թող կովասեր կայսրը մը շըլլա...»

Խեղճ չէր կրնար գուշակել, որ Արծվիկը երբեք Արծիվ պիտի չըլլար ու իրմե քանի մը տարի վերջ, թշնամիներու ձեռքին մեջ պիտի մեռներ գերութենե ու թոքախտե...

Փսխուքները վերսկսան, սև ու թանձր։ Իր սիրտը, որ արդեն միշտ տկար ու դանդաղ էր ի ծնե, այժմ բոլորովին անլսելի էր։ Շունչը խզվեցավ, խեղդվեցավ։ Վերջն էր այս։

Սակայն վերջին կարգադրություն մըն ալ կմնար, թաղո՛ւմը։

Ու իր սարսափելի ցավերուն մեջ գրեց իր վերջին նամակը իր պահապան Հուդսոնին.

«Պարո՛ն կառավարիչ,

Պատիվ ունեմ ձեզի հայտնելու, թե Նաբոլեոն Կայսր մեռավ, երկար ու ցավագին հիվանդութենե մը վերջ...»

Հուդսոն, նույն միջոցին, կղզիին շուրջ թնդանոթաձիգ նավերը կփութացներ, որպեսզի մեծ աքսորականը չփախչի։

Բայց Նաբոլեոն իր ճգնաժամային զառանցանքի շրջանին մեջն էր արդեն։ Դիշերն հանկարծ ներքին փոթորիկ մը արթնցած՝ տուն կու տար Վերսայլի վերաշինության նոր հատակագիծ մը, զոր կկոչեր Առա-

ին Աֆջանի ու Ֆրանսիայի զորակոչության նոր ծրագիր մը, որ կ'անվաներ Երկրորդ Անրջանի...

Իր սիրական ձիով մոռնելու՞վ երկիրներ կտրել կ'ուզեր, երբ հանկարծ խոսքը մեռավ բերանին մեջ... Ներսունի քահանան սկսավ արդեն իր աղոթքը թաղավորին գլխուն վրա, բայց ան դարձյալ բացավ իր աչքերը։

«Զավկիս կկտակեմ Աժամիոյի տունս՝ իր կալվածներով, Սալինի երկու տուներս՝ իրենց պարտեզներով, Աժամիոյի ամբողջ հողերս... զավկիս կկտակեմ...»

Այս կալվածները երևակայական էին միայն։ Սակայն հոգևորը դեռ նոր շարաթ մըն ալ կ'երկարեր։

1821, 4 մայիսի գիշերը վերջին երկու բառեր ալ արտասանեց, իր երկու սիրելի բառերը. «Փրանս...բանակ...» Ու նույն վայրկյանին անկողնեն ցատկեց, գալարվեցավ գետնին վրա, սկսավ սողալ ու այնքա՜ն ուժով փաթաթվեցավ իր միակ բարեկամ Մոնթջոնի կոմսի վզին, որ հագի՛վ բռնի կնքպով կարելի եղավ զայն բաժնել ու պառկեցնել անկողնին մեջ։ Վերջին դյուցազնին վերջին ցնցումն էր այս։

Հետո աչքերը հառեցան, սառեցան. ծնոտը բացվեցավ, ինկավ, մահվան խրտուկը սկսավ։ Քահանան իր աղոթագիրքը նորեն բացավ, բոլոր ներկիանները ծնրադրեցին գլխարաց։ Սպասավոր մը կպակսեր միայն, չոր լյարդի հիվանդություն մը անկողին կգամեր։ Բայց ահա դուռը բացվեցավ, գետիններուն վրա բաշկոտվելեն հիվանդ սպասավորը երևցավ՝ մահատիպ ու երկչոտած։ Կայսեր մարմնին վրայեն երկար դող մը սահեցավ, շրթներուն մեջ ճերմակ պղպջակ մը ֆշաց, աչքերը դարձան... Կայսրը մեռավ։

Իր դահիճներո՞ւն խակ խոստովանությունով, Նարոլեոնի դեմքը, ցավի պրկումներեն ազատված, այժմ անդիմադրելի, ահավոր, գերերկրային գեղեցկությո՞ւն մը, վեհությո՞ւն մը, լո՞ւյս մը ստացեր էր։

Բայց դիպվածության սեղանին վրա ան ա՛լ ավելի մեծցավ։ Երբ վերջապես բժիշկին դանակը համաձակեցավ կտրել այս կորթյան հանգույցը, ապատափով տեսնվեցավ, որ ահագին ու հին քաղցկեղ մը կրծեր, բոբսաեր էր, ծակեր էր ստամոքսը ու արյունով ու շարավով լեցուցեր էր որովայնը։ Թոքերուն մեջ ու կուրծքի պատին հին ու նոր թոքախտի վերքեր կցցվեին։ Սիրտը խիստ փոքրիկ ու ժժգույն էր...

Այն հիվանդները, որոնք փոքրիկ ցավի մը կհուսահատին, թող դիտեան, որ այս ապրատիկ դյուցազնի դավակը, այս նիհար ու պանդուխտ դինվորը, որ համամարդկային քաղաքակրթության հրամայեց, աշխարհին տիրապետելն ավելի իր անձի՛ն տիրապետեր էր... Այս փոք-

բիկ մարդը ի՞նչ վրա կմիացներ բժշկության մեծագույն հիվանդությունները. իր ուղեղը լուսնոտ էր, իր սիրտը պզտիկ, իր կուրծքը թոքախտ, իր ստամոքսը բաղցկեղ...

Ահա թե ինչպե՞ս մեռավ— մեռա՞վ— Կամբերուն հղորագույնը...

Լոզան, 1914

ՑԱՎԻ ՍԻՐԷ

Ցո՜ւրտ, ցո՜ւրտ։

Բայց ա՛յնպիսի ցուրտ մը, որ ոսկորներուս մեջի ծուծը կսառեցներ։

Կապած մրրիկը Ալպյան սարերեն վար կսուրար, հոս ու հոն կ'արշավեր, ձորերուն մեջ կպտտուտքեր, ծառերն իրենց արմատեն խլելու մոլեգին ճիգեր կ'ըներ։

Ափերով ձյուներ ծվեն-ծվեն կփախչեին, գետինեն վեր կթռչեին, կտորին ծակը-ծուկը կլեցնեին, ձիուն աչքերը կկուրցնեին։

Խեղճ կենդանին շվարեցավ, կողը հովին դարձուց, պոչը փորին տակ պահեց, կծկտեցավ, ինծի նայեցավ՝ ե՛տ դառնալու պաղատանքով։

Հետո, հուսահա՞տ, գլուխը նորեն առաջ նետեց ու կառքը նորեն շարժեցավ։

Ջորին մեջ պահվրտած հյուղակի մը առջև կանգ առինք։ Հիվանդին տունը ա՛յս ըլլալու էր։

Դրան ճեղքեն միանգամայն չորս գլուխներ երևցան, երկու տղու և երկու այծի անհամարձակ գլուխներ։

— Մայրի՛կ... մայրի՛կ...

Մայրիկը օրորոցի մը վրա հակած երախայի մը ծիծ կուտար ներսը։ Հոն, այդ սև պատերով գետնահարկ խուցին մեջ, մարդ ու կենդանի քով քովի սեղմվեր, թշվառության մեջ եղբայրացեր, շունչ շունչի տվեր էին իրար տաքցնելու համար։

— Տղաքնե՛րս, կտոր մը փայտ վառեցեք բժիշկին...

— Չեմ ուզեր, տիկի՛ն, հիվա՛նդը տեսնենք...

Մութ սանդուխի մը վերի սենյակը ելանք։ Ցած առաստաղ մը, որ մեկ կողմին վրա ավելի՛ կցածնար, հավնոցի ձեղունի պես։ Տանիքեն հալող ձյունները պատերեն վար կանաչ ճամբաներ դծեր, թուղթերը պատառ-պատառ կախվեր էին։ Ջուլի մը փոքրիկ պատուհանները քուրջերով խցված, լրագիրներով փակցված էին։

Ու այդ զոց խուցին մեջ սատկած անասունի հոտ մը լցվեր, թթվեր, խշտաներ, հատցեր, չընչվող այլ փսխեցնող թույն մը եղեր էր։

Ակամա թաշկինակս բերնիս մոտեցուցի։

— Ներեցե՛ք,— ըսավ կինը ազաչավոր։— Իր սավանները լվային, տեսե՛ք, ձեռքերս կոշկոռեցան այս ցուրտին... Տղու մը պես է, ուղեղն ալ գեշ...

Հիվանդը գլուխը երերցուց անկողնին մեջ, կնոջ իրավունք տալու ձեռքի մը։ Ու թեները ձիթագույն վերմակի մը տակ պահելով։

— Բժի՛շկ,— ըսավ.— ձեր ձեռքերը չեմ սեղմեր. շրթներուս մոտեցուցեք զանոնք, որ համբուրեմ, շրթնե՛րս միայն մաքուր են...

Նիհա՛ր, նիհա՛ր, չափազա՛նց նիհար գլուխ մը միայն կտեսնեի իր ամբողջ մարմինեն. աղ-պղպեղ գլուխ մը, փոշոտ մազերով, կարծես հողեն հանված, բայց այնքան նիհար, որ զանկին բոլոր ոսկորները կգծագրվեին մարդս. հոմական պատկերի մը պես։

Սակայն այդ թշվառութիւնեն, այդ ապուռութիւնեն, այդ նիհարութիւնեն ավելի՝ դեմքին գույնը կգրավեր իմ ամբողջ ուշադրությունս։ Անկարելի, աներևակայելի մորթ մը, որուն ցանցերուն մեջ կաթիլ մը արյուն չէր մնացեր, լիմոնի մաշկի մը պես դեղներ էր. բայց այնպիսի դեղնություն մը, որ միայն Ղաղցկեղին մասնահատուկ է։

Ահավոր ախտին մահացու կնիքը...

Ինչպես որ առաջ ոճրագործներու ճակտին հրաշեկ երկաթով կապտին դատապարտության գիրը, այնպես ալ հիմա այս ճակատագրական ախտը իր ընտրյալներուն վրա կանխավ կդրոշմե մահվան վճիռը։ Բայց որքա՜ն ավելի դավաճան կերպով...

Իր զոհերը ո՛չ դեռահաս երիտասարդներն են, ո՛չ զոդզոջուն ծերունիները, այլ անոնք, որ իրենց կյանքին գագաթնակետին են հասած, անոնք, որ իրենց ուժին կատարելության մեջն են, անոնք, որ զավակնե՛ր ունին իրենց թևերուն վրա...

Իր ընտրյալները անմեղներն են, որ ո՛չ մեկ կերպով չեն արժանացած այս սարսափելի պատիժին։

Ճարճատուն կրակով չի կնքեր ան իր դրոշմը։ Իր դավաճան համբույրը հապի՛ով զգալի է ու փոքրի՛կ, աննշա՛ն, անցա՛վ հետք մը կթողու։ Հասարակ վերք մը, որ տարիներու ընթացքին կմեծնա, կխորանկնա, կ'արմատանա, թարի մը պես կկարծրանա, սարդի մը պես արյունը կծծե ու անխուսափելիորեն կմեռցնե։

Ճակտին վրա չի տպեր ան իր հետքը։ Այլ չտեսնվելիք տեղ մը կգտնե. հասուկ կնոջ մը ստինքին տակ կպահվրտի կամ մոր մը արգանդին գոգը, ուրիշի մը կոկորդին խորը, մյուսի մը ստամոքսին անկյունը, ու այս դժբախտ մարդուն ալ աղիքին ճիշդ ծայրը, այսինքն՝ այնպիսի

տեղ մը, որ ո՛չ ինք տեսնելու հնարավորությունը, ո՛չ ալ ուրիշներուն ցուցնելու քաջությունն ունենար...

Եթե ժամանակին տեսնվեր, կարելիություն կար դանակով փրցնելու դատապարտության այդ կարմիր կնիքը։ Բայց հիմա ո՛ւշ էր արդեն և եթե թագավո՛ր ալ ըլլար՝ ճար չկար...

Աղիքին ծայրը ախորը մեծցեր, ուռճացեր, ուռեցեր էր, կարմի՛ր, խոնա՛վ ու գարշահո՛տ, այն թունավոր սունկերուն պես, որ աղբավետ ու մութ տեղեր կբուսնին...

Բայց այս, միայն դուրսեն երևցող մասն էր։ Ներսիդիեն ա՛յնպիսի համեմատություններ ստացեր էր այդ արյունարբու մակաբույծը, որ մեծ երակը ճղմեր ու ամբողջ մեկ սրունքը վերեն վար ուռեցուցեր, անշարժացուցեր էր։ Այնպես որ, սարսափելի տանջանքներու մեջ, խեղճը գերմարդկային ճիգեր կ՚ըներ քարեղեն անշարժության մը մեջ արձանանալու համար...

Մանուկ հասակին ո՛վ չէ լացեր կարդալով պատմությունը այն դժբա՛խտ մարդուն, որ իր պալատին մեկ անկյունը մարմար թիկնաթոռի մը վրա անշա՛րժ նստած էր՝ կես-մեջքեն վար քար կտրած...

Որքա՜ն ավելի դժբախտ էր այդ հիվանդին անշարժությունը... Պալատ մը չէր անշուշտ իր տունը, բայց պալատեն ավելի բան մը, սիրո բո՛ւյն մը... Որքա՜ն տարիներ սարուկներու պես աշխատեր էր ագարակներու մեջ՝ իր սեփական օճախը ունենալու համար ու հիմա չոր փայտ մը կպակսեր օճախին... Որբուհիի մը հետ ամուսնացեր, երեք զավակներ ունեցեր էր։ Խեղճերը թռչունի ձագերու պես կբանային իրենց բերանը, ու հիմա չոր հաց մը կպակսեր իրենց շուրթին... Հապա եթե այդ մայրական այծերն ալ չըլլային, ո՞վ պիտի սնուցաներ թե՛ հայրը, թե՛ զավակները... Խե՛ղճ այծեր, եթե միայն գիտնային, թե ի՞նչ արյունոտ ծրագիրներ կհյուսվեին իրենց վազվան համար...

— Կասեմ որ,— կ՚ըսեր կինը.— գիտնականները հրաշալի տարբ մը դտեր են այս հիվանդության դեմ... միայն թե քիչ մը սուղ է եղեր... եթե այծերը մսավաճառին դրկեմ՝ թերևս դրամը օգտե...

Հրաշալի տա՜բբ, ռատիո՜մ, ռատիո՜մ... Ո՞ր հիմարը արտասանեց քու դյութական անունդ այս թշվառներուն։ Եթե միա՜յն գիտնային, որ քու յուրաքանչյուր կրամդ քսանըհինգ հազար անգլիական ոսկի կ՚արժե, եթե միայն գիտնային, որ քու լուսավոր ճառագայթներդ դեռ մեզի համար խավար ու ապիտաբեր կմնան, թերևս ավելի հանգիստ սրտով մեռնեին խեղճերը...

Բայց հիվանդը արդեն նշմարեր էր դեմքիս վրա նկարված հուսահատությունը։

— Այն տեսեր, բժի՜շկ, լա՞վ է, որ դանակն առնեք, վիզս կտրեք... Ես ա՞լ ցավին չեմ դիմանար. հրաշեկ սուրերը ամբողջ սրունքս կճեղքեն. ոտքերներս դալար գալար կ'արյունեն. այս արյունն վերջը չկա... Ջամակներս վարը հա՞ց կույտն ու ոչխարներուն կփարին, ես ոնկիոդին եմ դամված, իրենց կամքը կդողհամ... Թե հույս չկա, զարման չկա՞, խնդրե՛մ, բժի՜շկ, շնա՞ռ ըրեք, ազատեցե՛ք զիս այս կյանքեն... Հոգիաբը շա՞ն մը իսկ նակատին՝ կապար դնդակը շնորհ մըն է...

Կա՞ ավելի դժնդակ կացություն մը, քան ա՞յն, ուր հուսահատ հիվանդ մը թենբուդ կփարի մահվա՞ն պատատանքով, և որ ասիպված ես էս մղկու ու ձգկու, որ տմիսնե՞ր երկարաձգի իր հոգևարքը։

Որո՞ն կպատկանի Ցավի Միտը, որո՞ն կպատկանի հիվանդին կյանքը, բնտանիքի՞ն, թե Օրենքին, բժիշկի՞ն, թե Աստուծո...

Առնդվածայի՞ն սխա, սրան ո՛չ դարմանը, ո՛չ պատճառը, ո՛չ մանրին, ո՛չ ծագումը հայտնի է։

Բաժելու անկարող ու մեռցնելու անընդունակ, վերջին գենք մը իր մնար ձեռքիս մեջ՝ մորֆինը։ Ա՜խ, եթե միայն այս գեղն ըլլար բժշկության մեջ, ես դարձյա՛լ պիտի սիրեի իմ արվեստս՝ հոգևարքին վերջին ժամերը ոսկեգծելու համար...

Փոքրիկ ներարկում մը։ Ան ա՞լ իր թշվառությունը պիտի մոռնա, իր ցավերուն պիտի խնդա, պատերուն պատատած թուղթեր պիտի շնչամարե, ոսկեձեղուն պատատներու մեջ պիտի փոխադրվի, հուրիներուն գիրկը պիտի ապրի, ու մահվա՞ն իսկ մեջեն՝ անմահության Աստծուն պես պիտի ժպտի...

Շտապով ենք ատեղուղներեն դարձյա՛լ վար իջա։ Բայց այս անգամ կինը բռնեց թևերս։

— Ըսեք, բժի՜շկ, պիտի ապրի՞, պիտի ապրի՞... Աստվա՞ծ, Աստվա՞ծ, որբ և այրի՝ ես որո՞ւ պիտի երթամ որբերուս հետ... հայր-մայր չունիմ, աշխարհի վրա մարդ չունիմ... աշխարհը մեզ ողջ-ողջ թաղեց... անդո՞ւթ մարդեր, անդո՞ւթ Աստված...

Երեսը դողոցին մեջ պահած, սկսավ կամացուկ հեկեկալ, որպեսզի ամուսինը վերեն չլսե։ Բայց տղաքները՝ հազիվ ծունկիս չափ բարձր, ապատնական աչքերով զիս պաշարեցին, թե ինչո՞ւ իրենց մայրը կլացնեմ, կարծես ես ըլլայի իրենց ցավին պատճառը։

Ու որքա՞ն իրավունք ունեին այդ մանուկ ուղեղները։ Գործվող չարիքի մը անկարող ականատեսն ըլլալ՝ այդ չարիքը գործելու հավասար վատություն մը չէ՞...

Շվարած ու ամոթահար, ես տնակեն դուրս նետվեցա, կառքին մեջ

կծկտեցա, հեռացա, փախա այդ անեծքի հոլիտեն՝ առանց հոխս նայելու...

Ցո՜ւրտ, ցո՜ւրտ...

Բանկալթի, 1914

ՄԵՌՅՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Պոտիկուց ծորակ խաղ-յա՞ծ ելբ, Տոբիեո՜ր։ Վաղուն աղբյուրի մը բերանը մատով խցել փորձա՞ծ ելբ։ Զուլալ ջուրերու ցայտքը աչերնուդ մեջ զգացա՞ծ ելբ... Երևակայեցե՛ք, որ դեռ անցյալ տարի ծորակ կխաղայինք արյունի հետ...

Այսպես խոսողը հիսունոց մարդ մրն էր, աղ-պղպեղ գլուխով, բարի ու խոշոր աչերով, ու ժպտո՛ւն, ու ժպտո՛ւն... Պուլկարիո չեմ գիտեր ո՛ր անկյունեն կուգար ինձի դանդաղ հիմանգությունի մը համար, որ բոլորովին ջլատեր, հուսահատեցուցեր, սարսափեցուցեր էր այդ հին հեղափոխականը։

— Հիմա աչերս սև կտեսնեն,— կ'ըսեր.— ծունկերս կկտրվին, մրտքիս դեղ խորհուրդներ կուգան։ Հաղորդացե՛ք ինձ, որ ձեզի գալու համար համբորդած ատենս կգդուշանաք շոգենավին եղբը երթալե, որպեսզի ծով չնետվիմ հանկարծ...

Ու իրավ ալ ա՛յնքան հուսահատություն կար անոր աչերուն մեջ, որ քիչ մը բոց տալու համար իր կանաչորակ այտերուն՝ Պալքանյան պատերազմի հիշողությունները կհարցնեի իրեն։

— Հա՜,— ըսավ.— ձեզի արյունի շատրվան մը պիտի պատմեի, բժիշկ ելբ, կհետաքրքրվիբ։ Սա անիծած արյունը, որ երակներուս մեջ կշրջադայի, գիտե՞ք ո՞րքան ուժ ունի. չէ՛, վստահ եմ, որ չեք գիտեր։ Ասիկա գիրքերով չէ՛, փորձառությունո՛վ կսորվվի։ Օր մը ձերբակալեր էինք Թշնամի երիտասարդ մը, որ մեր ընկերներեն երեքը մեռցուցեր։ Ուստա, հայարտ, գեղեցիկ տղա մրն էր։ Կուխող ծռե՛, ըսի. նժույգի մը վիզին պես ճիտը կլորցուց։ Սուրս այնպես մը տեղին իջեցուցի, որ Մայրի՛կ պուռալով՝ գլուխը կտխվեցավ։ Ու արյունը սկսավ վիզեն վեր ցատքել շիփ-շիտակ, բարձր, բայց շա՛տ բարձր, մարդահասակ ծառի մը պես բարձր։ Զզջալով, ձեռքս իսկույն վերբին վրա թխմեցի, սակայն արյունն այնքա՛ն ուժով էր, այնքա՛ն ուժով, որ մեռելին յուրաքանչյուր թոթվրտուրին՝ մատներս վեր-վեր կհրեր։ Հարձեցով մեկ ձեռքիս վրային մյուս ափս ալ դրի գալարվող վիզին վրա. այն ատեն արյունը մատներուս մեջտեղվանքեն ըսկսավ սրսփիլ շատրվանի մը ջուրերուն պես,

ունգերուս, ակաչներուս ու բերնիս մեջ, թարթիչներուս ու պեխերուս թեւերուն վրա, աչքերներուս փոսերուն մեջ, կաթած տեղը թանձրանալով, շրթունքներս փակցնելով, երեսներս տարցնելով... Բայց, ի՞նչ, կաժդունի՞ք, Տոքթյո՛ր...

— Օհ, դադարեցուցե՛ք, դադարեցուցե՛ք, զզվելի է, զզվելի՜...

— Զզվելի՞ ըսիք... Պատերազմը պատերազմ է, Տոքթյո՛ր... Զզվելին այն է, երբ մարդ ինձ պես հիվանդութենեն կմեռնի, երբ վախելով ու վատելով, դեղագործի սրվակներուն փարելով, կամաց-կամաց, կաթիլ-կաթիլ կմեռնի... Ու հետո ես ձեզի բան մը ըսե՞մ, Տոքթյոր, ամեն բան պարագային համեմատ պետք է դասվի, նունիսկ ոճիրը։ Ես այնպիսի պարագաներու մեջ գտնվեցա, ուր չսպաննելը ավելի մե՛ծ ոճիր էր, քան սպաննելը... Ես ձեզի այնպիսի ոճիր մը պատմեմ, որուն քով իմ ըրածս պարզ խաղալիք մ'է տղու... Կ'ուզե՞ք...

— Կուզեմ,— ըսի անհամբեր։

— Նկարագրած շաբաթվանես քանի մը շաբաթ վերջ էր։ Նահանջի հրամանը եկած էր հիմա. բանակը քաշվեր հեռացեր էր ճերմակ հոթիլոնին ետին, ձյունապատ ահագին տարածություններուն մեջ քանի մը խումբ վերջապահներ ձգելով թշնամիին արշավին դեմ։ Այդ ցրված, կորած խմբակներեն մեկ ալ մենք էինք։ Բայց ինչ որ ամենեն ավելի կվտանգեր մեր դիրքը՝ վիրավոր ընկեր մըն էր։ Ո՛չ կարելի էր քալեցնել դիները, ո՛չ ալ թշնամիին ու ձյունին լրեր։ Մեծ բան մը չէր իր վերքը, բայց մեջը հող ու ապր գացած ըլլալով, վիրավորը սարսափելի պրկումներ կ'ունենար։ Նախ երեսին մկանները կծկտեցան, հետո ճակտին կրնճիռները ծալք-ծալք գամված մնացին։ Աչքերն այնպես անշարժ էին ու այնպես ալ ահավոր, որ հոգևարք մը իր ճգնաժամին մեջ քար կտրեր էր կարծես։ Ու այդ փոթ-փոթ ճակտին տակ, ու այդ պիշ-պիշ աչքերուն տակ, բերանն այնպես վար քաշվեր էր երկու ծայրերեն, որ դիմային քրքիջի մը դիմակն ըլլար կարծես։ Գլուխն ետ նետված էր, վիզն ուժգնորեն պրկված, ադեղի պես կորնթարդ մարմինն համակ քարացած, գարշապարն ու գանկը լոկ կդիպչեին գետնին... Հիմանդապահ կատարները քաշվեր էին, ամենքն ալ, վիրաբույժ մը թողլով մեղի։ Ատուծու պես իր ձեռքերուն կփարեինք, իր աչքերուն կհառեինք, ճա՛ր մը, ճարա՞կ մը կ'ապերսեինք։— «Թերանո՞ս...»,— կմտածեր ան։ Ու այս բառը սխտանիշ մը և մահանիշ մ'էր նույն տեղն։ Եվ ամեն անգամ, որ գետնաքարշ վիրավորը իր գարշապարներուն վրա կպրկվեր, կ'ադեղանար ու կդողդոջար՝ ծայրը գետին միված սուսերի մը պես,— «Օրիսորոնոս...»,— կգոչեր վիրաբույժը, ապատում չկա...

— Եթե ապատում չկա մի՛ ձգեք, որ այս խեղճը հոգևարք շան պես

չարչրկվի. սրսկում մը, դեղ մը ըրեք, վիզը կտրեցեք, բայց ազատեցե՛ք գինքը և ազատեցե՛ք մեզ ալ...

— Եթե դուք ազատվիլ կ'ուզեք,— կ'ըսեր.— ո՞վ կ'արգիլե զձեզ մեկնելե. ես իր քով պիտի մնամ մինչև իր վերջին շունչը. բայց ես չունիմ մեռցնելու իրավունքը ես կյանքին պաշտոնյան եմ...

— Արդ, ես հիմա ձեզի հարց կուտամ, Տոքթյո՛ր։ Եթե դո՛ւք ըլլայիք այդ վիրաբույժին տեղը, դո՞ւք ալ իրեն պես պիտի ընեիք։ Ըսե՛ք ինձի։ Ես գիտեմ եմ, որ ձեր բոլորին դրպանին մեջ հեղուկ մը կա, որ...

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ,— ընդմիջեցի.— բայց եթե նույն իսկ հիվանդն ուզե, մենք չունինք զայն մեռցնելու իրավունքը։ Որի՞ կպատկանի կյանքը. ո՞չ հիվանդին, ո՞չ բժիշկին։ Կյանքն Աստուծո կպատկանի...

— Աստուծո՞... Աստուծո՞...— բաւ ռազմիկ խոսակցս փրփրելով։— Մեկ կողմե անհագին ծախսեր, շենքեր ու դարմաններ կ'ըլլին անդամալույծներու, ցավագարներու, հոգվով մարմնով փտածներու, անբուժելի զառամածներու կյանքն ամե՛ն գինով պահպանելու համար... մինչդեռ անդին, կռվի դաշտին վրա, է՛ն խոստմնալի ու է՛ն առողջ երիտասարդները հազարներով, տասը հազարներով գետին կփռվին, հետույքեն զարնված նապաստակներու պես գլտոր դառնալով... ասոնց կյանքն ալ Աստուծո չի՞ պատկանիր, Տոքթյո՛ր...

— Կ'ազաչեմ,— ընդմիջեցի.— բայց ձեր վիրավոր ընկերն ի՞նչ եղավ։

— Մեր վիրավոր ընկե՞րը։ Ազրակույտի մը վրա պառկեցուցեր էինք զայն, որպեսզի տաք ըլլար։ Կզգուշանայինք կրակ վառելե, վախնալով, որ մի՛ գուցե ձյունապատ դաշտերու մեջեն բարձրացող մեր մուխը թշնամիին մատներ գմեզ։ Յուրաքանչյուրնիս հրացանի սառած երկաթին փարած, փոքրիկ լուսամուտներու եռին պահակ կկենայինք, ճերմակ հորիզոնները քննելով վախն ի վախ։ Ո՛չ իսկ շշուկ մը, ո՛չ իսկ լույս մը կար ներսը։ Կիսաստվերին մեջ, մատներու ծայրին վրա կոխելով կքալեինք մեռելի տան մը պես, որովհետև մահը մեր մեջ էր, հոն էր սպառնական։ Ու մեռելը հոն էր, կենդանի մեռելը դիտապաստ, դիակնացած, կարծրացած, բայց այնքա՞ն տառապալից ու դեռ այնքա՞ն զգայուն, որ լույսի ճառագայթ մը զայն կմտրակեր կարծես ու ձայնի շշուկ մը կդողդողացներ իր քարացած մարմինը՝ երկրաշարժե մը ցնցվող տապանաքարի մը պես... Վիրաբույժը պաղարյուն՝ իր ջերմության աստիճանը կշափեր. «39... 40... 41... 42... սերսափելի՜, սարսափելի՜...» Դանակի մը ծայրովն իսկ կարելի չէր բանալ իր կծկված ակռաները, կաթիլ մը ջուր, պատառ մը հաց տալու իրեն։ Եթե հիվանդությունն իսկ

չբլլար, անոթութենեն պիտի մեռներ այս խեղճը։ Բայց վիրաբույժն օրինապահ ու անայլայլ՝

— Ես մեռցնելու իրավունք չունիմ, ես մեռցնելու իրավունք չունիմ...— կկրկներ։

Այս սարսափելի օրերը՝ վեց օր, վե՜ց դար տևեցին։ Առավոտ մը երբոր ելանք, աչքերը բաց՝ ան կհսկեր։ Գրկված մարմինին ահեղ ճիգեն՝ գարշապարները հողը փորած ու դանկն աղբին խրված էր։ Զեռքերը, ոտքերը շիփ-շիտակ, կղակները կդրված, ճակատը ծալք-ծալք եղած, քրքիջի ձև մը շրթունքներուն, աչքերը պիշ-պիշ դուրս ինկած, ան պառկեր էր ահավոր։ Կարելի չէր նայիլ իրեն։— «Բայց նայեցե՛ք, մարմինը չի դողար այսօր...»,— ըսավ մեկը շշնջալով։

Ու իրավ ալ մարմինը չէր դողար։ Սակայն ա՛յնքան սարսափ ու տառապանք կար իր բաց աչերուն մեջ, որ ո՛չ ոք համարձակեցավ մատին ծայրով դպիլ իրեն, վախնալով, որ մի՛ գուցե նոր սարսուռ մը ծնցներ։

— Մեռե՛ր է...— վճռեց բժիշկը, իր գլխարկը հանելով։ Ու բոլորս ալ հրացանները իջեցուցինք իր առջև։

Այսպես վերջացավ այս անվերջանալի, այս ահավոր, այս անդրդմարդկային մահը, ի՞նչ կ'ըսեմ, այս ոճիրը, ոճիրներուն գլուխ-գործոցը...

Բերա, 1914

ՏԵԼԻՊԻՈՒՆԻ ԹՐԵՄԵՆՍ

Մեծված շան մը պես կդողդողար։

Երկու կողմեն, երկու հուժկու պահակներ զայն առաջ կմղեին։ Ու այն սարսափահար ու ապաշավոր աչերն ինծի ուղղած, ոտքերուն բոլոր ուժովը կ'ընդդիմանար, սպանդանոց տարվող անասունի մը պես։

— Մի՛ վախնար, մի՛ վախնար,— ըսի քաղցրությունեն.— այստեղ հիվանդանոց մըն է, ես այս տեղին բժիշկն եմ։

— Գիտի մեռցնեն դիս, պիտի մեռցնեն դիս, Տոքթյո՛ր, պիտի մեռցնեն դիս...

— Ինչո՞ւ, ի՞նչ կա։

— Չեմ գիտեր, չեմ գիտե՛ր, ես ոչ մեկուն չարություն ըրած մարդ չեմ։ Ահա տասը օրն է վեր դիս կտանջեն։ Բայց, հավատացե՛ք, ինծի, Տոքթյո՛ր, կ'ապաշեմ, հավատացեք ինծի, ես պարկեշտ մարդ եմ, ես չէի մեռցնողը, ան ինքնիրենը մեռավ։

— Ան ո՞վ է։

— Մայրիկս, ալեոր մայրիկս, ան ինքնիրեն մեռավ... Մյուսներն ալ ես չմեռցուցի, Տոքթյո՛ր, մյուսներն ալ։

— Բայց մյուսները որո՞նք են։

— Զավակնե՛րս, զավակնե՛րս...

Ու ձայնը ավելի զզոնիկցուց։

Ակռաները ավելի սեղմվեցան, կճրտացին, սոսկալի՜, սոսկալի՜։

Վիրը ծռած էր, դլուխը ինքած, դեմքին մեկ կողմը ճմռթված, կծկրտած, կզակները ուժգնորեն կզրված։

— Ասկե երեք օր առաջ էր, Տոքթյո՛ր, շարաթ գիշեր մը անկողնիս մեջ աչքերս չկրցա գոցել։ Գետաձանիս առաջը մինչև լույս փսփսացին։ Նախ երկու հոգի էին, հետո այդ երկուքը երեք եղան, չորս եղան, տասը եղան... Աչքովս անսած բաները կպատմեմ, Տոքթյո՛ր...

— Ու կրսեի՞ր ալ։

— Անշո՛ւշտ, անշո՛ւշտ։ Նոյն փսփսուքներ միայն կ'իմանայի, խժլտուքներ, սուլոցներ։ Բայց վերջը հատակ հատակ լսեցի ամեն բան։ «Էր մայրիկը խեղդեր է»,— կ'ըսեր իրենցմե մեկը։— «Հարկա՛վ, հարկա՛վ»,— կ'ըսեին մյուսները, «Էր զավակներն ալ ինք մեռցուցեր է։ Սանդուխ մը բերեմ, պատուհանեն ներս մտնելու է... չվան մը, դանակ մը, զգուշությո՛ւն, զգուշությո՛ւն...» Սարսափահար դուռս բացի, դաշտերուն մեջ վազեցի, վազեցի, վազեցի ու անձրևին տակ տեղ մը գտնեն ինկա, քնացա։ Մյուս առտու երբ ելա, կրակս կզրված էր...

Ձայնը ճիգով դուրս կուգար ակռաներուն ճեղքեն։ Խոսքերը կքակվեին, կտարտղնեին դուրս ելլելու համար։

Դեմքին վրա կապույտ ու սև ուռեցքներ կցցվեին, անհամար հարվածներու սարսափելի դրոշմները։

Ամբողջ գլուխը փաթթված էր ճերմակ լաթերու մեջ, որոնց տակեն արյունը թանձր կաթիլներով կբղխեր, կտարածվեր, ճակատեն վար կաթմիր ճամբաներ կգծեր։

Ի՞նչ կնճռոտ հանգույց մըն էր աս։

Ո՛չ, իր պատմածները ճիշտ չէին կրնար ըլլալ, և սակայն սուտ ալ չէին անոնք, քանի որ այնքա՜ն տառապանք ու սարսափ կար իր խավար աչքերուն խորը։

Ու այնքան սարսափ ու տառապանք կար իր խավար աչքերուն խորը, որ այն չէր նկարագրեր, այլ կ'ապրեր իր տառապանքը։

Ան կ'ապրեր սարսափելի մղձավանջի մը մեջ, բայց աչքով մղձավանջ մը որ շաբաթն մը ի վեր սկսած ու դեռ չէր ավարտած։

— Շաբաթն մը ի վեր ակռանջիս մեջ կճայնոյին, կպոռան, կուլան։

Աչքերս կվախենամ գոցելու, թարթիչներս հալիվ փակած՝ կարմիր բոցեր ու արևներ իրարու կգարնվին։ Պատիս բոլոր խուցերեն փոքրիկ բաներ կվազվզեն, կքրքջան, կդավադրեն։ Սենյակիս մեջ սև, զազրելի միջատներ կան, անկողնիս մեջ կ'եռուզեռեն, սրունքներս վեր կսողան և ուսերս վար կսահին... Անցած գիշեր, գիշեր մը ամբողջ, կոկորդս վար դիակի մաղեր, երկար մաղեր կլեցնեին...

Կխոսեր նողկանքով, սարսափելով, խարխափելով։ Իր կղզված կղակին ետևեն կզգայիր, որ լեզվի ծայրը կդողդողար։

— Ձեռքերդ բաց,— ըսի։

Հազիվ թե բացած, տեսա, որ մատներն ալ աննշմարելիորեն դողդղալ սկսան։

Լեզվին ու մատներուն այս թեթև դողը հին գինեմոլության մը ախտանիշը։

— Ջուր կխմե՞ս,— հարցուցի։

— Երբեմն, երբեմն...

— Տարի՞ քդ։

— Տարիքս հիսուն, թերևս ավելի։

— Վիճա՞կդ։

— Կես մը ամուսնացած, կես մը ամուրի։

— Զավակնե՞ր։

— Վեց զավակներ ունեցա, չորսը գերեզմանն են։

— Մյուսնե՞րը։

— Մյուսները մայրիկն առավ ու փախավ։

— Բայց խեղճերը միջոց ունի՞ն ապրելու։

Դեմքը ճմռթկեց, ուսերը թոթվեց։

— Մայրիկնին գեղեցիկ կին է,— ըսավ։

Բարոյական զգացումի այս աստիճան չգոյությունը, եկավ ա՛լ ավելի հաստատել միտքիս մեջ հին գինեմոլության մը ախտանիշը։

Որովհետև այդ ալքոլը միայն մարմինը չէ, որ կփտեցնե, այլև հոգին։

Եվ սակայն օր մը կուգա, երբ այդ թունավորված, դիակնացած, աղբացած մարմնին մեջ հոգին կ'արթննա, կփոթորկի, կպոռթկա, ինքնիրմեն կնողկա ու ինքնիրմեն կսարսափի։

Տելիրիում Թրեմենսը այն սարսափելի դժոխքն է, որ Տանթեի մը հանճարը պիտի չկրնար երևակայել և որ յուրաքանչյուր գինեմոլ իր տառապանքին համար կկերտե։

Բաց աչքով մղձավանջ մըն է այս, որ ոչ թե գիշեր մը կտևե, այլ շաբաթ մը կհավերժանա։ Ու տառապանքն այնքան մեծ է ու հիվանդն

այնպես համոզված է իր մղձավանջին իրականության, որ նախամեծար կհամարի անմիջապես մահանալ։ Շատ մը անբացատրելի կարծված անձնասպանություններ ուրիշ պատճառ մը չունին բժիշկներուն համար։

Ու այս մարդուն պարագան անոր համար հետաքրքրական էր, որ ան իր զառանցանքին մեջ իսկ ձերբակալված էր, առանց իր անձնասպանությունն ավարտելու ժամանակ ունենալու... Վկա իր արյունաթաթախ դլուխը...

— Երեկ գիշեր փողոցին մեջ քալած ատենս սևեր հագած մարդ մը տեսա։ Ես այս մարդը կճանչնայի, չեմ գիտեր երբ, չեմ գիտեր ուր, բայց գիտեմ, որ թշնամիս էր։ Հետո անկյուն մը դառնալուս՝ հատ մըն ալ եկավ, հետո հատ մըն ալ, հետո հատ մըն ալ։ Ոմանք առջիս, ոմանք ետիս, ուր երթալս չփոթեցա։ Զախ կողմս բաց պարտեզ մը կար, մեջը մտա ու մութ տան մը խոհանոցը պահվըտեցա, կծկտեցա։ Մութն իջեր էր։ Ատանկ՝ երկար ժամ մը անցավ։ Հետո դուրսեն ձայն մը փրթավ, կամաց կամաց սողալու պես խշրտոց մը, որ երթալով կմոտենար։ Սարսափեցա, լույս վառեցի, պատուհանին ետև երեք դեմք երևցան։ Հետո նորեն, հետո նորեն...

Ահա ճիշտ այդ միջոցին էր, որ խոհանոցի անկյունեն կացին մը գտնելով, սկսած էր իր գլխուն այնպիսի սոսկալի հարվածներ իջեցնել, որ իր անատնական ազազակներեն արթննալով, տնեցիները ձերբակալեր ու հիվանդանոց առաջնորդեր էին զինք։

Հիվանդանոց առաջնորդեր էին, որպեսզի խնամեին, դարմանեին ու ազատ արձակեին այդ հոգվով մարմնով թունավորված մարմինը։

Ազատ արձակեին, որպեսզի նորեն խմեր ու նորեն շնար, ու տխուր տեսարաններու նոր սերունդ մըն ալ հասցներ...

Տխո՜ւր արհեստ, տխո՜ւր պարտականություն...

Այդ գիշեր երկար ատեն տանջվեցա խորհելով այն բոլոր աղետներուն վրա, որ այս մարդը ազատորեն պիտի կրնար գործել։

Մինչդեռ... մինչդեռ նույն գիշեր իսկ մղձավանջային նոպայի մը մեջ ան ինքզինքը մեռցուցեր էր։

Հետևյալ օրը, դիաբանության սեղանին վրա փռած էին արդեն դիակը, քանի որ մեր դարմանատունը մեռնող անբիկ հիվանդները մեզի կպատկանեին։ Նեղ սղոց մը՝ պղտիկ ճոճոցով երկուքի կկտրեր իր գանկը՝ մեզի ցույց տալու համար ուղեղին ախտաբանությունը։

Բայց ահա դուռը կամաց մը բացվեցավ։ Պատառատուն մայր մը, երկու տղա...

Դինովին նախկին կինն էր, որ իր էրիկին այցելելու եկեր էր հիվան-

դանոց ու դուռն դուռ զարնվելով, մինչև դիաղնությյան սրահն էր հասնը...

Քար կտրեցավ։ Հառաչ մը չկրցավ հանել կուրծքեն։

Իսկույն դուռը երեսին գոցեցին։ Ու սղոցին երկու ծայրեն բռնած, երկու բժիշկ, իրարու երես նայեցանք ոճրագործներու պես։

Ու գեռ ականջիս մեջ է, թե ինչպես, դուրսեն, դրան ճեղքեն, գինովին տղաքները կճղային.

— Հայրի՛կ, հայրի՛կ, բեղի նարինջ բերինք, հայրի՛կ...

Բերա. 1914

ՄԵՂՔԻՆ ՊՏՈՒՂԸ

Երբ մեղապարտ բաղձին վրա կնոպիշները կհնչեցնեն իր տասներկու հարվածները, անասելի վախ մը կլլեցնեն տարփոտ խավարը։

Մարդը, որ Աստծու պես կրնար ստեղծագործել, իժի մը պես կթուլանավարեն հիմա։ Սերը, որ օրհնություն մրն էր անեծքի մը կվերածվի։

Է՛ն տար համբույրները կկեղծեն, է՛ն անդուստ կիրքերը կխարդախեն, է՛ն բուռն սիրերը կնահանջեն, է՛ն արդավանդ արգանդները կ՚ամլանան...

Անխուսափելի վախն է ան, բայց անխուսափելի վախը, բոլոր օրինավոր և ապօրեն զիրերնդխառնումներուն վախը, ամեն անկողիններու ու ամեն գիշերներու վախը, սերնդագործումի վախը...

«Զգո՛ւյշ... զգո՛ւյշ» կ՚ըսեն գիշերային դանդակները, որոնց զոզանջը հալած կապարի մը պես կ՚անձրևեն ամբարիշտ բաղձին վրա...

Բայց այս ամուլ բաղձեն անդին արդասաբեր դյուղեր կան. այս թաքթարուր տուներեն անդին հարսին անուտներ կան. այս ապահովակ փողոցներեն անդին թավշային մարդիկներ կան, ու ուռճացող հողերը կանչ ու ամբո՛ղջ երկրագունդը կա՝ հոգի ինչ մը պես ուռնցած...

Հո՛ն ինքնիշխանը իր մարդկային զիրկը կբանա պարզ ու մարտաբար հոգիներու համբույրին։ Հո՛ն դեռ Սիրը մեծ տեսարը կկատարվի այնպես, ինչպես հաղարներով տարիներն ի վեր մարդկության տարեգրին դեղեցիկ ու գործադրեց դարձ՝ բնական, ճակատագրական ու հավիտենական...

Հո՛ն նվիրվելով բերան տալիկը իր բաղձանքի սիրահարին։

Գարնանային գիշեր մրն էր, աստղ լուսնի։ Անտառին մթությունը իրենց սիրար խորտիկելու համար շունչ մը կ՚արտածորվեր հողեն՝

բույրով ու ավիշով ծանրբեցած։ Տարօրինակ բույսեր մութին մեջ հոգի ի՛մանային, կշռնային, կշարժակվեին կյանքի գայթակղումներով։

Գեղատի սիրահարները շուն շունչ ուժա՞ծ, խորասուզվա՞ծ, թաթաքա՞ծ, կոկոններուն վիթիթը էլսին, ուլչներուն շոյվիլը կղզային, ճյուղերուն իրարու երկարելը կանանին։

Գաղջ թացութիւնը իրենց երեսները կշոյեր տիզերական համբույրի մը պես։ Անոնք հափշտակված ակնատեսներն էին ահագին առասի մը, ուր մութ ու լուռ առեղծուածութիւնն մը, ասավածային ու հավերժական աշխատութիւն մը կկատարվեր։ Հոն նյութ ու բույս, համբ ղեբակատարներու պես, անհո՞ն նյութը կրեղմնեին...

Գիշերը հառաջացեր էր։ Ծառերու տերեւ աբյուսող քանի մը լույսերը մարեցան։ Գյուղը կընդարձակ Հեռուն հեռու դանդակի մը ասանկերկու հնչյունները միջոցին մեջ մարվեցան։ Ժամը՝ տիեզերքին բազկերակը, կանգ առավ...

Ամբոր ամեն բան լռեց, հանկարծ ճյուղերը դողդողացին։ Տերենները տակեն երկար սարսուռ մը անցավ։ Անտառին մեջ, հանկարծ, կենդանիի մը սավերը առաջ նետվեցավ, զգուշավոր ու իրենցմեն քայլ մը անդին կանգ առավ։ Իր անհամբեր աբուրները եղեգի մը պես կդողային, իր փայլուն մուշտակը հարսի մը պես կպսպղար։ Որքա՞ն լիզվեր, հարդաքվեր, մուշկաբուրվեր էր։

Ահարեկ սիրահարները բարբոսին անշարժացան։ Բայց ահա անտառին խորքեն մե՞զմ սուլոց մը լսվեցավ, հուզում մը լեցուց միջոցը, ու կենդանին ուեղի մը պես դեպի հոն սլացավ։

Քաղքենի սիրահարը այլայլեր էր, բայց լեռան աղջիկը բնազդաբար ամեն բան հասկցավ.

— Կսե՞ս,— ըսավ.— արուն իր էզը կկանչե...

Կարծես ինչ՝ ըլլար գիշերային թաքթաքուր հարսանիքին վազող ելնիկը։ Ամբողջ խորհուրդ մը արթնցավ իր մեջ, գաղտնի ու դեռ իրե՞ն իսկ անծանոթ խորհուրդ մը, ասանքյոՀ ըարուններու ի վեր իր մեջ հաւանացող խլութիւնն խորհուրդը։

Մթութիւնն մեջ իր շրթունները արուին շրթունները փնտռեցին, բազուկները բազուկներուն ըալարվեցան, շունչերն իրար խառնվեցան, անշարժացան, նուխնացան...

Բայց հեռուն խուլ աղաղակ մը լռութիւնը վրդովեց, սարսի ի սար զարնվեցավ, կրկնվեցավ, մեծցավ, խորունկցավ, ամբողջ գիշերը լեցուց, տիեզերական ու ահագին բարբառ մը եղավ, ամբողջ բնութիւնը սարսռացուց ու այդ բոլոր մթին արդասավորումներուն իմաստ մը տվավ...

Այլանդակ գոչյուն մ'էր ան, անբան անասունի սիրտ բզքտող պոռը-տուք մը, որ փրկութեան շնփորի մը սրութիւնը ու անեծքի որոտումի մը ծանրութիւնը ուներ։ Առաջին մեղքեն վերջ, կարծես Եհովան որոտար իր ահավոր նզովքը...

Լերան աղջիկը դարձյալ հասկցավ, բայց այս անգամ տժգունեցավ. այդ ազդարար գոչյունը ագարակեն կուգար. իրենց հղի կովը «կծներ ցավով...»։

• • •

Ամիսներ վերջ, նույն ագարակին մեջ, նոր մայր մըն ալ կտառաջներ ինքը՝ լերան աղջիկը։

Ես չլսեցի կենդանիին գոչյունը, բայց այս աղջկան ճիչերը անկարելի՛ ճիչեր էին, անմարդկային, անհրեակայելի ճիչեր։

— Մեռցուցե՛ք զիս... մեռցուցե՛ք զիս...

Խրճիթին բոլոր փեղկերը գոցված, բոլոր ծակերը խցված էին, որպեսզի ձայնը չարթնցներ գյուղը։ Մամիկ մը, արյունոտ ձեռքերով, ճնշեր, ճմլեր, ճզմեր, ճանկեր էր անիծապարտ արգանդը՝ մեղքին պտուղը վիժեցնելու ճիգով։

— Մեռցուցե՛ք զիս... մեռցուցեք զի՛ս... կպոռար աղջիկը անընդհատ։

Կոնակին վրա պառկած գտա զինքը։ Գլուխն ետև նետած, միայն երկու ծունկ ու փոր մը կցցվեին անկողնեն, անհոմնորեն ուռեցած փոր մը, որ ճմլիկ-ճմլիկ կարմրեր ու կապուտցեր էր։ Իր երկու սրունքներուն մեջտեղեն փոքրի՛կ ու վարդագո՛ւյն ձեռք մը կկախվեր, երեխայի պաշտանչի ձեռք մը, կյանքին բռնվելու ճիգով մը...

Հիմա ամբողջ աշխատութիւն մը պետք էր՝ մամիկին ըրածը շրջակելու, արգանդին մեջ մանուկը շրջելու, գլուխը դուրս հանելու համար։

— Մեռցուցե՛ք զիս... մեռցուցե՛ք զիս...— կպոռար խեղճ աղջիկը, իր տասնչորի տարիներուն ամբողջ ուժովը։

Բայց այս հոգնած, թուլցած որովայնին մեջեն երբեմն-երբեմն ահագին ճիգ մը կ'անցներ, մանուկը լույս աշխարհ հանելու բնազդական ճիգ մը։ Այն ատեն ամբողջ մարմինը գերագույն ուժով մը կծկտեր։ Գեմքը, ակռաները, թևերը, մատները, ստինքները, ծունկերը, ջիղերը, մկանները, ոսկորները ամբողջ գործարանները միայն արգանդ մը կ'ըլլային, ահագին ու ցավագին արգանդ մը, որ վայրկյանե վայրկյան պիտի ճայթեր։

— Մեռցուցե՛ք զիս... մեռցուցե՛ք զիս...

Բայց ահա հանկարծ, ճգնաժամային ճիգի մը մեջ, տղան ուժգնորեն դուրս խոյացավ։

Մեղքի՞ն պտուղը։ Բայց որքա՞ն կծկտած, ճմրթկած, ճզմված էր ան։ Պղտիկցած ծերունիի խորշոմած գլուխ մը...

Վայրկենաբար, կարծես հրաշքո՞վ, մոր ճիչերը դադրեցան, ցավերը անէացան։ Անհուն տառապանքեն վերջ, անհո՞ւն երանություն էր հիմա. դժոխքեն վերջ դրախտը... Բնազդային շարժումով մը բազուկներն ինձ երկարեց զավակը համբուրելու համար.

— Բայց մեռե՞ր է...— պոռաց հանկարծ։

— Ո՛չ թե մեռեր է, այլ մեռցուցեր ենք...— ըսի։

— Աստվա՜ծ իմ, աստվա՜ծ իմ... ու որքա՞ն սիրունիկ է, ու որքա՞ն գեղեցիկ է... անուշիկս, աղվորս, հոգիս, աչերդ բա՛ց, աչերդ բա՛ց...

Ու մեղմորեն սկսավ լալ մշիկ-մշիկ։

Ի՞րն էր հանցանքը։

Նկարագրեց ինձ անտառին գիշերը, հարսի պես անցնող էգ կենդանին ու հետո հղի կովին աղաղակը։ Պատմեց, թե ինչպես իր սիրահարը՝ առողջության համար լեռ եկած ուսանող մը, իր հղությունը տեսնելով քաղաք փախած էր։ Ըսավ, թե ինչպե՞ս իր հարազատ եղբայրները՝ ինքզինքին անարգված զգալով, չէին ուզեր իր հետ խոսիլ ու հիվանդության պատրվակով, չէին նեռեր, որ տուներն դուրս ելլա ան՝ չցուցադրելու համար իր մեղապարտ որովայնը։ Նկարագրեց, թե ինչպե՞ս իր ծնողները՝ դեռ հղության վախճանին չսպասելով, շտապած էին դայակի մը միջոցով խլելու դեռահաս երախան։

Խե՜ղճ փոքրիկ աղջիկ։ Ու խորհիլ, որ պղտիկ անգաղտնապահություն մը բավ էր դայն մարդկային արդարության հանձնելու ու մարդասպանի մը պես դատապարտելու։ Որովհետև Օրենքին առջև դեռ չծնված երախա մը կամ հարյուրամյա ծերունի մը մեռցնել՝ հավասար սճիրներ են։

Բայց չէ՞ որ անիրավ մարդկությունը ի՞նքը մեռցուցեր էր այս միամիտ աղջկան կուսությունն ալ, սերն ալ, սիրտն ալ, պատիվն ալ, ջավակն ալ...

Քանի՜ քանի՜ տեղեր կգործվին այս անանուն ոճիրները, քանի՜ դեղեր կգործածվին այս խեղճ տղաքներուն դեմ, քանի՜ կոյուղիներ կխցեն անոնք, քանի՜ բժիշկներու ոգելից շիշերուն մեջ կպահվին այս մեղքին պտուղնե՞րը...

Ու դեռ որքա՞ն երջանիկ են այս տղաքները բաղդատմամբ այն մյուսներուն, որոնց մայրերը՝ արգանդին չարշրկելով, հրեշնե՞ր կհասցնեն բժշկական վաճառականության համար...

Օր մը պիտի գա, որ մարդկութիւնը պիտի բմբռնէ, թէ մեղքի ապա չկայ. ամէն ապա, որ կ'ծնի, օրէնքա՛լ է, ու նորածին երախտ մը ափերի կ'արժէ, քան իր ծնողը, լոսապուշ բարեշրջումի մը արշալոյսն է էն, որ կժպտի և որ կիսեղդենը գեռ չծնած...

Օր մը պիտի գա, որ բոլոր կեղծ վայելչներուն զոլված՝ մարդկութիւնը պիտի բմբռնէ, թէ իր գերագոյն պարտականութիւնն ու իր գերագոյն երջանկութիւնը սերն ու սիրեղարդութիւնն են...

Բայց այդ օրը դեռ հեռու է։

Ու մեղապարտ քարերին վրա. երբ կեսգիշերը կհնչեցնէ իր տասներկու հարվածները, անիրատեսանելի վախը կլեցնէ տարփոտ խավարը...

Հոգան

ՉՄԵՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1904-ի ձմեռն էր, սաստիկ ձմեռ մը։

Սարի մը կողեն տարալով լեռնաբարձ շոգեկառք մը կրաբձրանար, գաղարդի պես համբրնթաց։

Այդ փոքրիկ շոգեկառքը ամենեն սիրուն է, որ կճանչնամ աշխարհիս երեսին։

«Հոնեն եկողը վատ չիջնար»— կ'բանեն։

Հոն երբ չկա, ծիծաղ չկա, հոն խաբ չկա, հապճեպ չկա։

Փոքրիկ պատուհաններեն վտիտ գլուխներ կնային դուրս. ապակիեն աչքերով անկենդան, համակերպ ու միակերպ նայվածքներ։ Ահավոր ու հանդարտ դեմքեր բոլորն ալ, աշխարհին դեմ դառնացած, մահեն ավելի՝ սիրտասարսներու։

Հյուծախտավորներ են անոնք, որ այս փոքրիկ շոգեկառքը տարալով ու դարձալով ամեն օր ու ամեն ժամ, երկրագունդին չորս ծայրերեն Լեյլանի գաղաթը կենան։

Դեղատ, ճամբան երկոյնքին, սպիտակ ու սարսափելի վիհեր կան, անհունները ու անգունները, որ համապարփակ ձյունին տակ կ'ալեկոծվին։

Բայց ահա շոգեկառքին մեջ մահվան խժտուք մը փրթավ. բոլոր հիվանդագին աչքերը մեկ կողմ դարձան սարսափահար։ Անկյուն մը վատ երիտասարդ մը կանգներ, կդղար, կիսեղդվեր, կհազար։

Պատա-պատառ թոքերը կփրթեին։ Գլուխը շտապով պատուհանեն դուրս կախեց։

Թուքը ձյունը կարմրցո՛ւց, կարմրցո՛ւց...

Ուսկի՞ կուգար, ո՞վ էր։

Փարիզեն կուգար, Հայ էր։ Թե մեռներ իսկ, մեկը չկար զինքը ճանչցող։

Քիչ հետո, կայարանեն մինչև բուժարան, ձյունին մեջեն արյունը դարձյալ գծեց իր կարմիր ճամբան։

Լեռնամբարձին տխուր բաղմութենեն վերջ, հիմա ավելի տխուր մենություն էր, Սանաթորիումի նեղ սենյակ մը, այն մերկ ու ճերմակ սենյակներեն, որոնք հարյուրներով քովն քով ու վրայե վրա կշարվին և որոնց յուրաքանչյուրին մեջ մենավոր հիվանդ մը կտքա։

Դուրսը ահագին ու անծայրածիր ծով մ'է լեռներու, խելք-մտքի չսղմվող բարձրություններու, որոնք խավար քառասներեն հանկարծ կ'ոստնուն, ճերմակ ալիքներու պես արևուն տակ կփրփրին ու կպսպղան, ամպերուն ու երկինքին մեջ կխառնվին, կտատանին ու կ'օրորվին, գեբրագույն ալեկոծումի մը մեջ հանկարծ սառած անդրհեղեղյան օվկիանի մը պես։

Բայց դուրսը նայո՞ղ ով...

Ներսը, հականեխված շորս մերկ պատեր, անկողին մը, հիվանդ մը։ Սնարին վերև, ճերմակ թուղթի մը վրա անուն մը, անդունդ մը... Ատոմ Ցարճանյան։

Հեռո՞ւն, շա՞տ հեռուն, ծերունի հայր մը, դուզդուզուն մայր մը ու քույրիկներ թռչուններու պես ճրլվրլուն։

Ավելի հեռուն, արյունի տակ մշուշի մը մեջ, հայրենի լեռները, մայրենի երդիքները, ահեղավազ Եփրատը։

Ու այս բոլորին վրա ու բոլորին շուրջ, սահմանազլուխի շղթաները, կապարե դռները ու ամբողջ համիտյան սարսափը...

Մահամերձ պանդուխտը ակնթարթի մը մեջ վերապրեցավ այս ամենը։ Ու իր բրոնքոր անկողնին վրա կծկված, մահվան թոմբրուներուն մեջեն իր մեղքը վերջին անգամ մ'ալ սավառնեց դեպի հեռավո՞ր, հեռավո՞ր աումը մայրենի։

— Ավա՜ղ, ապարանքի մը պես մեծ էիր ու շքեղ,
Ու նա, երդիքներուդ սպիտակ կատարեն
Առպաժորան գիշերներու լույսին հետ
Վարեն ահեղավազ Եփրատին կ'ունկնդրեի։

. . . . . .

— Բայց ո՞վ պիտի բերեն, ո՞վ պիտի բերեն, ըսե՛,
Քու սրբազան մոխիրդ ափ մը մոխիր,
Մահվան օրը, իմ տրտում դագաղիս մեջ
Հայրենիքս երգողի իմ անշունչս խառնելու...

Սակայն տենդը կրարձրանար, կրարձրանար։ Շրթունները կդեղնեին, կրարակնային, կփրփրեին։

— Մտիկ բրե՛ր, ակռանները մահազուժորեն կկրճտին...

Ալ իր բարբառը զառանցանք մ'էր ու իր ջերմը՝ մահաջերմ։

— Վերջալույսի ու մահաջերմի այս ժամուն
Ագռավներու եղերավոր երամներ մեռելակերպ...

Ու գերեզմաններ, ու գանկեր, ու զանգակներ, որ կզողանջեն, ու պատանքներ առապատանելու պես բաց, ու փոթորիկ, ու կոցահարում, ու անտառներ ոտքի, ու դեղին հողի անձրևում...

— Ու նորեն երազներու ուխտված մարմնի վրան
Արյունով թրջված պատանքներու խոնավությունը կզգամ...
Ու բազուկներ, որ առանով հաղթանակներու արեգակին գալարվեցան,
Այսօր չախչախված սրտիս սերերուն վրա կխաչաձևվին...

Պետք էր ամբողջովին հիշատակել իր անբմբռնելի, անկապակից ու ահավոր այն էջը, որ Հիշատակ կկոչվի և որ 40 աստիճան ջերմության մեջ հղացված է։ Առանց այս բժշկական բացատրության, դժվարին պիտի ըլլար ըմբռնել այդ արյունի, նոճիի, արշալույսի ու փոթորկի առեղծվածը։ Միակ վճիռ բան մը կա հոն, որ լճակի մը զուլալ ջուրերուն զովությունը կբերե այդ մահաջերմին մեջ, ուր մահն արգիլված է.

— Ո՛հ, բաժակ մը ջուր, բաժակ մը ջուր, բաժակ մը ջուր,
Իմ հիշատակիս և հողի հայրենական աղբյուրներեն,
Վասնզի մահը ուսերուն վրա է այս իրիկուն...

Պետք էր ամբողջովին հիշատակել տառապանքի ու մահապարտի այն կարմիր հատորը, որ Հոգևարքի և Հույսի Ջահեր կկոչվի և որ արյունի մեջ հղացվեցավ։

Ահա թե ի՛նչպիսի հուսահատական վիճակի մեջ էր հիվանդը, երբ օր մը վրա հասավ Մինաս Չերազ լակոնական թուղթ մը, թե «Դյուցազներները գրողը երիտասարդ չի մեռնիր...»

Ո՛չ, Դյուցազներները գրողը երիտասարդ պիտի չմեռներ։ Ան պիտի ծառանար ահավոր հիվանդության դեմ, ան պիտի սրբեր իր ճակտին գիրը, ան պիտի պայքարեր Մահվան հետ։

«Մարդը ստեղծված է պայքարելու ու կինը՝ ռազմիկը մխիթարելու համար»,— կգրե Նիցշե։

Ահավասիկ նաև կին մը՝ ռազմիկը մխիթարելու համար։ Թոշնած

ծաղիկնե՞նչ մը, որ Կովկասյան անծանոթ գեղուհի մը կղզիկը մահահոտ բանաստեղծին...

Ուրեմն ողջ աշխարհը դեռ ամբողջովին չէր լքած դինքը։ Ուրեմն դեռ վա՜ր, կապո՜ւյտ հեռուները, տարտամ ձորերու մեջ կո՜ւյս մը կար, որ արշալույսին ցողաթուրմ ծաղիկները կհավաքեր իր տենդահար ճակատին համար։

Հիվանդն իր դողդոջ շրթներուն դրավ զանոնք։ Իր հպարտ սիրտը դեռ չէր ճանչցած Սերը։ Տարտամ խոնավություն մը իր աչքերը լայնցուց, լացուց...

Հետո, արդեն իսկ զայրացած իր սրտին այս տկարության վրա, միտքը սավառնեց դեպի հոն, հեռուն, Կովկասը, ուր դարավոր ու ալևոր գեղուհի մը կհոշոտեին, Մայր Հայաստանը...

Ո՜չ, հայրենիքի այսպիսի մեկ ճգնաժամային վայրկյանին ան պիտի չմեռնե՜ր, ան պիտի չհուսահատեր, ան պիտի ապրեր, պիտի մռնչեր, պիտի երգեր, պիտի բոցավառեր ռազմիկներու հոգին։ Հսկաներու ճակատամարտին մեջ ան իր գրչին ծանրությունը պիտի նետեր՝ արյունեն խենթեցած սուսերի մը պես...

«Ջա՛րկ, Կովկաս...»

Այս տարորեն հիվանդը՝ իր հոգևարքի անկողնին մեջեն ուժի ահագին գանձեր պիտի գտներ ամբողջ ցեղ մը գոտեպնդելու համար։

«Ջա՛րկ, Կովկաս...»

Շնչատուքենե հեծող այս երիտասարդը՝ իր հիվանդ կուրծքեն ռազմաշունչ փոթորիկներ պիտի հառներ Ալպյաններու գագաթեն մինչև Արարատի ստորոտը...

«Ջա՛րկ, Կովկաս...»

Ու կամքի տարօրինակ ուժով մը, բժիշկներու պատվերին անսալու համար, այդ ջղուտ ու անհանգիստ երիտասարդը, ամբողջ երկու տարի, ամե՛ն օր, ամե՛ն ցերեկ վերջ, երկար երկար ժամերով, բաց օդին մեջ փռեց, անշարժացուց, քարացուց իր վտիտ մարմինը, արևուն տակ անմահության համար հասունցող մոմյայի մը պես...

Հնազանդ տղու մը նման առտու-իրիկուն կանոնավորապես չափեց իր ջերմությունը։ Միայն թե ամեն անգամ որ չափազանց բարձր էր ջերմաչափը, իսկույն կցնցեր ու կ'իջեցներ զայն, ոտքերը ուժգին ուժգին գետին դարնելով ու «պիտի ապրի՛մ, պիտի ապրի՛մ» պոռալով...

Ու շաբաթն անգամ մը, երբ իր ծանրությունը չափելու համար կմոտենար ճակատագրական նժարին, չէր մոռնար կանխավ քանի մը գիրք պահելու իր գրպաններուն մեջ, անոնց կշիռովը ինքզինքն ու իր բժիշկը խաբելու համար...

Կարելի՞ է սակայն Մահը խաբել...

Ո՛վ դուք, որ այսպես կիսորիվ, հուսահատներ ու պարտվածներ, ձեզի՛ համար են այս տողերը։

Այդ ատրիան ի վեր տասը երկար տարիներ բորբվեցան։ Օր մը Լեմանի ափերուն վրա նստած էի։ Ապիտակ շոգենավ մը լճափին մոտեցավ՝ իր տոչեն կարապները թոցնելով։ Խուսներում բաղմության մեջեն հանկարծ մեկը անջատվելով ինձի վազեց, եղբոր մը, մտերիմի մը պես։ Ու գրկվեցանք ու համբուրվեցանք՝ առանց որ կարենայի ճանչնալ զինքը։

— Չե՞ս հիշեր,— ըսավ.— ես երբեմնի հոգևորն եմ...

— Սիմանթո՞...

Ու կխաղաք, ու կխնդաք, ու կկատակեր։ Կնկարագրեր Կոմիկան ու Ամերիկան, Փարիզն ու Պերլինը, Արաքսան ու Նիսկարան։

Ես գմայլա՞ծ կգիտեի իր հզոր հասակն ու պայծառ դեմքը։ Ու ո՞ւր կշանայի հիշել այն շաբաթվոյն ու ծամածուռ դիմագծությունը, որ Հոգևարքի և Հույսի Ջանհարան կոգեր կդարձնար և որ հեղինակին նկարն էր դեռ հազիվ տասը տարի առաջ...

Բանկալիի, 1914

ԱՅԼԱՍԵՐՈՒԹ

Կա՞ ավելի սիրտ բզքտող իրականություն մը, քան մեկամաղձոտ մանուկները...

Տղու մը պարզ ու վճիտ հոգին ինչպե՞ս կրնա տխուր ըլլալ, քանի որ հուսահատությունը խիստ բարդ հոգեբանություն մը կ'ենթադրե։

Բնական երևույթ մը չէ այս, այլ ախտաբանական ծնունդ մը, օրենքեն դուրս շեղում մը, բացառություն մը։ Խոստովանինք սակայն, որ այս բացառությունները հետզհետե օրենքի կարգ անցնելու վրա են։

Նոր քաղաքակրթության մեծագույն վերքերեն մեկն է այս, այլասերումը, վաղվան հիվանդությունը, հիվանդություններուն հոռեգույնը, որովհետև ո՛չ մեկ բժշկություն պիտի կրնա զայն դարմանել։ Իր մանրին երբեք պիտի չգտնվի։

Հին ցեղեր խարուկներու վրա կ'այրեին իրենց լուսատուներն ու ջրագարները՝ իրրև շար ոգիներ։ Պղատոն իր իտեալ հանրապետությունեն կը վաներ մեկամաղձոտները։ Սպարտացիներ իրենց տխուր ծնունդները դուրը կնետեին՝ առույգ ու զվարթ մանուկներ միայն ընտրելով ցեղին պահպանումին համար. ահա ա՛յս կերպով այդ ափ մը փոքրիկ ազգը պատմական դյուցազուններու մեծագույն ազգը եղավ։

Այսօր այդ բարբարոս միջոցները խսպառ հեռացված են քաղաքակրթության սահմանագլուխներին, բայց այլասերումի վտանգը երթալով անկարելի համեմատություններ կստանա։

Այս երկաթե դարին համար երկաթե ուղեղներ են պետք։

Մինչդեռ, օրը օրին, հնին, ճգնաժամային ու գիտնական գործունեության մը մտրակին տակ հալածվող մարդկությունը ջլագար ծնունդներ միայն կուտա։

Ալեկոծ Եվրոպան շատոնց ի վեր կհնչեցնե ահազանգը։

Օրե օր նոր սկզբունքներ կկիրարկվին, առողջապահիկ խիստ միջոցների կհետապնդվին. ախտածին մանուկներու համար լեռնային գաղթավայրեր կը հաստատվին, ու անտառային դասարաններ, բացօթյա վարժարաններ, ու աշակերտական ագարակներ։

Այս բոլոր ճիգերուն նպատակն է այդ այլասերած մանուկներուն ուժմունքն ավելի արև տալ, միտքն ավելի մարմինն աշխատցնել, գիրենք կզգիացնել, շեզոքացնել, հեռացնել մտավորական ասպարեզեն։ Որովհետև վտանգը միայն անհատական չէ, այլև ընկերական։ Իրենց հիվանդագին ու շարշրկված ուղեղը գիտութիւնեն միայն թույն կծծե ու թույն կ'արտածորե։ Իրենց մաղձոտ հոգին կդառնացնե նախ իրենց սեփական կյանքը, հետո իրենց ներուն կյանքը, ու հետո— ամբողջ ցեղի մը կյանքը...

Աշխարհիս բոլոր մարդասպաններն ու բոլոր չարագործները ձեռք ձեռքի տված՝ պիտի չկրնային այնքա՜ն խոստմնալի, այնքա՜ն ընտրված հողիներ սպանեել, քան Շոփենհաուեր մը, Նիցշե մը, Պայրոն մը...

Այլասերած մանուկներու օրորոցներո՞ւն մեջ պետք է փնտռել անձնասպանության քարոզիչները, հոռետեսության առաքյալները, ապականության մարդարեները։

Անոնք կջլատեն գործունեության ամեն տենչ, երջանկության ամեն հույս, օրրության ամեն հավատք։

Անոնք չեն հառաջադիմեր, այլ կ'ոստնուն, չեն երազեր, այլ կղառնացնեն, չեն օրհներ, այլ կնզովեն, չեն սիրեր, այլ կտոփան։

Իրենց երգը հայհոյանքի մը պես ամբարտավան է, իրենց ժպիտը հեգնության մը պես վիրավորիչ։

Օրինա՞կ կ'ուզեք։ Բայց ամե՜ն ազգերե ավելի հա՛յ մտավորականությունը կվխտա այս բացասական հանճարներով։

Դիտեմ, որ հին մշակույթ ունեցող ցեղերու համար այլասերումը տիեզերական օրենք մըն է։ Դիտեմ, որ մեզ նմանող հին ու անտերունջ ցեղ մը՝ ինչպես են հրեաները, նոր ազգերեն քառապատիկ ավելի խնդիր կծնցնե։ Սակայն այդ ափ մը հրեա ցեղը ավելի բաղմաթիվ հանճարներ

ավավ աշխարհին, քան ամբողջ Եվրոպական ազգերը՝ ձեռք ձեռքի ված...

Մենք ալ իրենց պես ինչո՞ւ չկարենայինք տալ միակ հայ հանճար մը, որուն գոյութիւնով սա խրոխտ Եվրոպան հպարտանար, և համայն մարդկութիւնը բանո՛վ մը գոնե պարտական և երախտագետ ըլլար մեզի։

Կեա՛ հանճարներ շա՛տ։ Բայց երբ փոքրիկ ցեղի մը մտավորական բանակը տաղանդավոր փոքրիկ վիժուկներով միայն կլենա, անհանդուրժելի, գայթակղեցուցիչ, դատապարտված ցեղ մը կ'ըլլա այն։

Զգո՛ւշ, զգո՛ւշ։

Եթե Եվրոպան է, որ կհնչեցնե այլասերումի ահազանգը, մի՛ մոռնար, որ այդ սարսափելի սխալը ամենեն առաջ մե՛ր ցեղին կսպառնա՝ իրրև հին ցեղի մը։

Ու մենք՝ փոխանակ արմատախիլ ընելու, ոգիտո՛ւրեն կ'ընտրենք է՛ն սխալավարակ ծիլերը ու զիրե՛նք միայն կմշակենք։

Այն բոլոր առույգ, պայքարող, զվարթ ու աշքաբաց երիտասարդութիւնը, որ կլեցնե մեր վարժարանները, կ'առնենք օր առաջ գործի տալու համար... Իսկ այն քանի մը ճղճիմ, տժգույն ու տխուր տղաքները, այն պատանի ծերունիները, որ արևեն ու պայքարեն խուսափելով, դպրոցի մութ անկյուններուն մեջ թուրթ կմրտնեն, անոնք դպրոցե դպրոց, երկիրե երկիր, համալսարանե համալսարան կդրկենք։

Խեղճե՛ր... Անո՛նք կլեցնեն պանդուխտ ուսանողի գերեզմանները, անոնք կլեցնեն հարուստի նախասենյակները ու վաճառականի գրասենյակները, հիվանդանոցի խշտյակները անո՛նք կլեցնեն...

Ու կպատահի մեզ ա՛յն, ինչ որ ո՛չ մեկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած։ Մեր գյուղացի ու շուկայի դասակարգը ավելի՛ մտացի է, քան ա՛յն, որ մտավորական կկոչվի. ընթերցողը ավելի ողջամիտ է, քան գրողը. առաջնորդվողը ավելի հեռատես է, քան առաջնորդողը. ուրիշ խոսքով՝ մարմինը ավելի խելացի է, քան ուղեղը...

Զարմանալի չէ ուրեմն, որ ընթերցողները մեր մեջ հետզհետե կրճչնան։ Այսօր արդեն ավելի գրող կա, քան կարդացող։

Բնախոսական օրե՛նք մ'է, որ մարմինը իր մեջեն քիչ-քիչ կչեզոքացնե, կ'անջատե, կվտարե այլասերած մասերը։

Նույն օրենքո՛վ միայն կարելի է բացատրել, թե ինչո՞ւ մեր մտավորականութիւնի ու մեր հասարակութիւնի միջև գտնվող կապը քիչ-քիչ կբարակնա։ Ցեղը կմնա առավել քան երբեք առո՛ղջ ու իր մեջեն կչեզոքացնե, կ'անջատե, կվտարե օտարացած ու այլասերած տարրերը։ Դյուրը մարմնին կապող նիհար պարանոցը երթալով կբարակնա։ Ու

հեռու չէ գուցե ա. ՝ օրը, երբոր վիզը փրթելով՝ մեր մտավորականությունը անմարմին գլուխ մը պիտի ըլլա միայն, և մեր ցեղը՝ անգլուխ մարմին մը...

Չե՞ք տեսներ արդեն, թե ի՞նչպես շատ մը գրագետներ լիրը քաջությունը ունին հայտարարելու, թե իրենք ժողովուրդին համար չէ՛, որ կգրեն։

Ո՛չ, հոտին ու հովիվներուն միջև անհասկացողությունը երբեք այսքան մեծ չէր եղած։

Գառնուկի մը պես անգեն ցեղ մը ամե՛ն օր, ամե՛ն օր կհոշոտվի։ Իսկ մեր գամբռները խելոքցեր, փիլիսոփայացեր, քաղաքակրթվեր են, տիեզերական եղբայրակցության մը խոսքերը կ'ընեն մեզի ու կ'երազեն այն հեռավոր օրվան, ուր գայլ ու գառնուկ մեկտեղ կ'արածվին...

Մանուկի պես ազնիւ ցեղ մը ուսման կաթին է կարոտ, այն բարի ու անարատ ու սպիտակ կաթին, որ հիվանդներն իսկ կարենային մարսել։ Իսկ մեր համալսարանականները, որ մեր մտավոր ստնտու մայրերը պիտի ըլլային, դեռ կերածնին չմարսած կուգան մեր առջև փսխելու...

Որբուկի պես անտեր ցեղ մը հուժկու, ու լուսեղ ու սիրտբուխ բարբարոսի մըն է ծարավ։ Իսկ մեր գրագետները հանելուկային, առեղծվածային, խավարակուռ բաներ կ'ըսեն իրեն. ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արյան մեջ թաթխելի վերջ, չինարեն տաղեր կգրեն, որպեսզի մա՛րդ չհասկնա...

Թռչունի պես վիրավոր ցեղ մը, փոքրիկ վիրակապի մըն է կարոտ՝ իր թևերը նորե՛ն բանալով միջոցին մեջ արծիվի պես սավառնելու համար։ Իսկ մեր ընկերաբանները թո՞ւյն կփչեն բույներեն ներս ու մեղ կխոսին այն տարտամ ապագաներուն վրա, ուր ազգ ու հայրենիք ու ընտանիք կլուծվին համաշխարհային միջազգայնականության մը մեջ...

Այսպե՞ս էր նաև հին Հույներուն մեջ։ Երբոր հիվանդ մը փրկելու ամեն հույս կկորսվեր, բժիշկը կհեռանար իր սնարեն ու փիլիսոփա մը կնստեր հոգևարքին մոտ՝ մահամերձը մխիթարելու համար այն հույսով, թե օր մը ամե՛ն կյանք ու ամե՛ն անհատականություն պիտի հալին տիեզերական գոյացության մը մեջ...

Ո՛չ, մենք դեռ այդ օրին չհասանք, մենք դեռ ապրիլ կ'ուզենք, մեզ հոգիի ու մարմնի բժիշկներ միայն պետք են։

Հեռո՞ւ մենե, ախտագին մտավորականներ։ Դուք ցեղին ուղեղն եք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ, քան հուսահատեցնելով մեր կենսունակությունը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը։

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարձնենք։

Մեզի կարմիր ու մուտ շուրթերով, ուժեղ ու ժպտուն գրականություն մը պետք է։

Մեզի ասողջ ու երիտասարդ մտավորականներ պետք են։ Զուկն իր գլուխին կնատի, ազգն՝ իր մտավորականներեն։ Անո՞նք են ցեղի մը գլուխը։

Կրնա մարմինը շատ ուժեղ ու շատ գործունյա ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարված է, այդ մարմնին շարժումը պիտի ըլլա միա՛յն հիմարական գործունեություն և անպատուղ հոգնություն։

Ահա թե ինչո՞ւ իրական մտանգները թողով, հովերուն դեմ ու մենք մեզ դեմ կպայքարինք։ Ահա թե ինչո՞ւ փոխանակ հառաջադիմելու, խեղթեցուցած ոլոր կեցած տեղերնուս վրա կդատակենք երկու հազար տարիե ի վեր...

Այո, մեր ցեղը տարօրինապես կենսունակ ու աշխատող ցեղ մըն է։ Այո՛, մեր հնամենի նավը դեռ ջուրերուն վրա կծփա, դեռ չընկղմեցավ։ Բայց ի՞նչ է պատճառը, որ երկվան նավակները մեզ արդեն անցան, ու մենք միայնակ նավին պես կծածանինք դեռ, անխորատուզելի՛, բայց և հատատա ցամաքի մը հասնելու անկարող...

Ասոր պատճառները շատ բարդ են անշուշտ։ Բայց գլխավոր պատճառներեն մեկն ալ ա՛յն է, որ դեկին գլուխը կնստեցնենք մեր է՛ն ախտագին, է՛ն այրասերած, է՛ն անպետ ծնունդները։

Սակայն ստո՛ւգ, ստո՛ւգ կ'բանամ ձեզի, վատերը մեծ է, շատ մեծ, ավելի՛ մեծ, քան կրնանք նկատել։

Ժամանակն է հակադրելու, հակադրվենք։

Մեզի նոր Ռոկեֆելլեր մը պետք է, նոր Ռոկեֆելլեր մը։

Այլասերո՞ւմ, ո՛չ, վերածնո՛ւնդ...

Լոպան

ԱՊԳԵԼՈՒ ԿԱՄՔ

1694 Փետրվար 20-ին ծնավ, ավելի վիժեցավ, քան թե ծնավ, մանուկ մը, որ երևութապես մեռած էր։ Ո՛չ կաթեներ, ո՛չ կաշար, ո՛չ կշարժեր, ո՛չ կշնչեր։

Քանի՞ վայրկյան, քանի՞ ժամ, քանի՞ օր պիտի սպրի... ամբողջ դար մը։

Ու հակառակ իր անվերջ հիվանդություններուն, մտացին ա՛նպիսի գործունեություն մը ցույց պիտի տա, որուն նմանը պատմությունը չէր արձանագրած դեռ։

Ո՞չ միայն դար մը պիտի ապրի, այլ այդ դարը իր անվանա՞ն դարը պիտի ըլլա՝ Վոլթերի դարը... Որովհետև այդ հանճարեղ վիժուկը Վոլթեր ինքն էր։

Կատարյալ կմախք մը։ Իր ժամանակին ամենեն նիհար, ամենեն հիվանդ, ամենեն տգեղ մարդը։

Ու երևակայել, որ երեսուն տարեկան ծաղիկ հասակին, ծաղկի համաճարակ մը եթե բոլորովին չմեռցուց զինքը, գոնե վրայեն վերցուց գեղեցկության հետին նշույլը։

Ո՞ւր երթամ, որ դիա բնդունին,
Երբ դեմքիս վրա ահեղ ախտին
Նիշերն ունիմ սոսկատեսիլ,
Կարելի՞ է սիրո խորհիլ...

Իր մտերմական նամակագրությունը բժշկական մանրամասն օրագիր մըն է, ուր Հիբոքրատի իսկ պիտի շվարեր ախտերու ա՛յքան այլազան ցուցադրումի մը առջև։ Բայց հիվանդը ոչինչ կփախեր իր անխարդախ զվարթությունեն.

— Երկու տարի երկու աչքս երկու պալար էին,— կ՚ըսե.— թոքերս ալ երկու պարան էին կարմիր ու սպիտակ...

Աչացավին փոխն ի փոխ հաջորդեցին կոկորդացավը, ձայնարգելությունը, խլությունը։ Լինդերը կփտեին, ականները կթափեին բերանին մեջ։ Հոդացավ մը ընդհատարար անկողին կգամեր, կհյուծեր, կապտաներ դայն։ Բայց Վոլթեր, միշտ ժպտուն՝

— Քոստանեռուն է՛ն նիհարն եմ...— կդրեր։

Հոդացավեն ավելի՛ ցավագին ախտ մը երեսունին տարի տարատիպի կերպով տանջեց դայն՝ միզաբերելությունը։ Աչքսկա՛ սիրաքանչյուր անգամ ստիպված էին զինքը լոցնելու, արյունելու։ Իսկ ասոր հաջորդեց շատ ավելի վտանգավոր ախտ մը, ապոպլեքսիությունը.

— Մատիտի պես ոտքերս տակառի պես ուռեցան...

Հետո վրա հասավ ծերության հիվանդությունը, պնդերակությունը։ Շնչերակները կարծրացան, կիր կապեցին, բարացան. բազկերակն սկսավ անկանոն կերպով զարնելու, ուղեղն արյունախտանումները իրար կհաջորդեին, և իբրև հետևանք՝ անդամալուծությունը ու լեղվին կապվիլը...

— Երբ մարդ ինծի չափ նիհար է՝ ծիծաղելի է արյունախտանում ունենալ, բայց ես ունեցա այդ ծիծաղելիությունը...

Եվ սակայն Վոլթեր այսքանով հատահատած մարդ մը չէր։ Իր ծերունի ու կմախացած կուրծքին տակ մի՛շտ երիտասարդ կմնար սիրտը, մի՛շտ խանդավառ, մի՛շտ ժպտուն։ Ահա՛ թե այդ հիվանդության միջոցին ինչ կգրեր դիրասանուհիի մը.

— Եթե ունենայի քսան տարի, եթե ունենայի ձեզի արժանի մարմին մը, հարստություն մը ու սիրտ մը, բոլորն ալ ձեզի պիտի նվիրեի։ Բայց ամեն բան կորսնցուցի ու հոգի՜վ թե աչք մը ունիմ ձեզ տեսնելու, հոգի մը ձեզ հիանալու ու ձեռք մը ձեզի գրելու համար...

Յոթանասունը-ութը տարեկանին Վոլթեր դեռ չէր կորսնցուցած իր սրտին երիտասարդությունը...

Բայց իր գլխավոր հիվանդությունը, ա՛յն, որ օրորոցեն մինչև դագաղ ամեն օր տանջեց զինքը՝ ստամոքսի հիվանդությունն էր։ Կարելի է ըսել, որ մյուս բոլոր հիվանդությունները միա՛յն իր մարմինը տանջեցին՝ առանց կարենալ իր հոգվույն հասնելու, իսկ այս վերջինը ուղղակի իր ուղեղին, մտածելակերպին վրա կ՚ազդեր։

Վոլթեր՝ առանց ստամոքսի հիվանդության, ուրի՛շ Վոլթեր մի պիտի ըլլար, ավելի՛ լավատես, ավելի՛ զսեմ, ավելի՛ աստվածային Վոլթեր մը։ Մինչդեռ հիմա որքան ալ բարձրանա, կզգաս, որ մեկ ոտքը հողին է։ Եթե մեկ ձեռքով հրեշտակ մ՚ իսկ թոցնե, գիտես, որ մյուսովը սատանա մ՚է բռնած կռնակին ետև...

Անկարելի է բժիշկ ըլլալ ու իր ջղուտ ու խայթող, զվարթ ու կծու, անուշ ու դառն լեզվին տակ իսկույն չգուշակել ստամոքսի լեզիությունը մը։

Հաշակեցեք և տեսնք սա հատկանշական քառյակը.

Զվարթ եղա բենեբուս մեջ
Ու ախտերու համբերեցի.
Մեկ ոտքս միշտ դագաղին մեջ՝
Մյուսով ամի աքացի...

Հոտվըտացեք նաև (չեմ համարձակիր ըսելու հաշակեցեք) իր Փիլիսոփայական Բառարանեն փրցված սա պատառը.

— Երբ նախաբարեն մը շնորհ մ՚ունիք խնդրելու, նախ տեղեկացեք, թե իր փորն ազա՞տ է։ Մեր նկաբագիրն ու հոգին մեր աղբամանեն կախում ունին...

Արդեն չէ՞ որ Մոնթենյը իմաստասերն ալ այդ առօրյա կանոնավոր գործողության մեջ կասհմաներ մարդկային ամենե՛ն իրական երջանկությունը։

Հարկ կա ըսելու, որ Վոլթեր այդ հետին երջանկութենեն ալ զրկված էր։

Պղինիոս պատմաբանը կհավատան, թե Եգիպտացիք Իպիս թռչունեն սորվեցան փորվացը ընել. «Իպիս իր մարմնին ներսը կվա՝ կտուցովը ջուր ներարկելով հո՛ն, ուրկե առողջությունը կպահանջե, որ ստամոքսին ավելորդ սեռեղները դուրս գան»։

Պղինիոս չեմ գիտեր, բայց Վոլթեր անմահացուց այդ ժեսքը...

Երեսակայեցեք, որ ամիսը ուզ լուծողական կ'ընդուներ ու տասներկու փորլրվացք։

Երբ Բրուսիո Թաղավորը Ֆրեսերիք Մեծ՝ իր հանճարին վրա դմայլելով, զայն իր պալատը պահել ուզեց,

— Խնդրե ինձմե ի՞նչ որ կ'ուզես,— հարցուց։

— Կ'ուզեմ միայակ անկողին մը, գրեթե մը ու Բրուսիո Թագավորը...— պատասխանեց Վոլթերը։

Ու տարիներ հետո Երբ հայրենիք վերադառնալով, դարձյալ գերմանական ազգու լուծողականներ կխնդրեր իրմե.

— Ղրկած դեղահատներս բավական են ամբողջ Ֆրանսան լուծելու...— կգրեր Մեծ Թագավորը։

Այս պայմաններուն մեջ դյուրին է հետևցնել, թե ի՞նչ տրամադրություն տակ կ'աշխատեր.

— Գրած ատենս երկու ձեռքով փորս կբռնեի ու հետո գրիչս...

Դժվար չէ նաև կռահել, որ հակառակ իր հավիտենական բծծիծաղին, իր կյանքը հեռո՞ւ էր վարդագույն ըլլալե.

— Ամբողջ կյանքս ես մեռա...— կգրե տեղ մը։

Եվ սակայն իր բոլոր ժամանակակիցները մեռան, զինքը պաշտպանող բարեկամները մեռան, զինքը դարմանող բժիշկները մեռան ու ինք դեռ կ'ապրեր ու կ'աշխատեր։ Յոթանասուն հատոր գիրքեր դեռ չհողնեցուցին իր գրիչը։ Ութսուն տարեկանին Մենեի Աղջիկները գրեց երկու օրվան մեջ։ Երկու տարի հետո Իրենի ողբերգությունը հղացավ...

Ի՞նչ մոգական գաղտնիք մ'ուներ ուրեմն այս արտակարգ մարդը, որ ինքն իր բժիշկն ըլլալը կհայտարարեր ամենուն։

— Պահպանեցեք ձեր առողջությունը,— կգրեր բարեկամի մը.— ան ավելի ձենե կախում ունի, քան աշխարհի բոլոր բժիշկներենե։ Զարմանալի եղեմ։

Ահա իր միակ պատվերը։

Զարմանալի է դիտել, որ այդ որկրամոլության դարուն մեջ, Վոլթեր նույնի՛սկ Թագավորներու սեղանին վրա երբեք չէր շեղեր իր դիտցած կերակուրներեն։ Կաթ, հավկիթ, ոսպ, դեղնախնձորի ապուր, բրինձ ու պատատ մը ոչխարի միս. ահա դար մը ապրելու իր ճաշացուցակը։

Ան քիչ կ'ուտեր, բայց շատ կծամեր։ Սկիզբները իր միակ մոլությունը սուրճն էր, բայց երբ տեսավ, որ իր ջղայնությունը կ'ավելցներ, սուրճն ալ դադրեցուց։

Ու այս չափավորությունը՝ Սիրո մեջ մինչև ծերապահության սահմանները կ'երթար...

Քիչ մը վեր իր ազգությունը հիշեցինք։ Բայց Վոլթեր իր մասնա-

վոր գեղեցկությունը ուներ՝ մաքրությունը։ Իր վտիտ մարմնին վրա կուսական շնորհ մը, սրբություն մը, լույս մը կար միշտ։ Լոգանքն ամեն օր անպակաս էր։ Ու իր անձին, հագուստին, ուսեստին ծայրահեղ անբծությունը կատարյալ կրոնք մը, աղաղողություն մը, պաշտամունք մը եղած էր իրեն համար։

Իր հիվանդությունները մոռնալու համար իրրև միակ դարման՝ աշխատության էնֆիրվեր։ Օրական տասներեքն քսան ժամ կգրեր ու կկարդար՝ իր ցավերուն վրա խորհելու ժամանակ չունենալու համար...

Գրասենյակին մեջ հինգ սեղան ուներ՝ հինգ երկերու համար։ Հոդիվ թե մեկ գրքին վրա ձանձրացած, մյուսին վրա կ'իջնար... հանգչելու համար։

Բայց այդ սո՛ակ ուղեղային կյանքը շատոնց սիտի սպառեր իր կյանքը, եթե մարմնային աշխատություններով ան չդիտնար ներդաշնակել իր գործունեությունը։ Պարտիզպանություն, այգեզործություն, ծաղկամշակություն, ամեն օր կծաղկեցնելն իր ուժերը։

Շատ երկարակեցության գաղտնիքը գյուղացիներուն մեջ կփնտռեմ։ Ի՞նչ բան ավելի բնական, քան առողջ լեռնցի մը, որ ո՛չ սիրտ կմաշեցնե, ո՛չ միտք կհոգնեցնե, ծառի մը տես կ'ապրի ու անասունի մը պես կ'ուտե։

Վոլթեր իր անձին օրինակով մեզ ցույց կուտա, որ մարդ կրնա տխտավոր ծնիլ, կրնա բոլոր հիվանդություններու մատնն անցնիլ և սակայն ապրիլ, գործել, երջանկանալ ու երջանկացնել...

Զափավորություն, մաքրություն, աշխատություն. ահա այն պարզ ու հասանելի Լուսանին, որուն վրա ամե՛ն մարդ ամբորեն կրնա նստիլ։

Այդ Լուսանին վրա կանգնած էր Վոլթեր իր վտիտ հասակին ամբողջ բարձրությունովը։ Բայց իր հենարանը չափազանց անկայուն ըլլալուն՝ վայրկյանն վայրկյան չինալու համար մեջքին փաթթած էր պարանները։ Ի՛ն ամբարը, Ապրելու կամքը...

Այո՛, ո՛վ որ կյանքին համատարն ունի՝ երկնքին բռնվելու չվան մ'ունի։ Ո՛վ որ Հաղթության հույսն ու Երջանկության սերն ունի, ան իր ուսերուն վրա երկու թևեր ունի, ան հողին չի փտիներ...

Այսպե՞ս ապրեցավ Վոլթեր, այսպե՞ս ապրեցան բոլոր ուժեղ անհատականությունները։ Սոփոկլես, Դիոգենես, Քսենոֆոն, Քաթոն, Միքել-Անժելո, Բեթհովեն, Ֆրանքլին, Հոպպնս, Ուոթ, Թարեքրան, Հյուկո, Գեոթե, Նելսոն, Վելինկթոն, Լինքոլն, Պոլիֆոն հակառակ խիստ հոգնեցուցիչ կյանքի մը, դար մը բոլորած են։

Այլապես ինչպե՞ս բացատրել այն օրենքը, որ սովորական կյան-

ինքնուն մ, ...Ինչ հիսուն տարիներին իմիտիքի, մինչև հանճարներուն միջոցներ, հակառակ իրենց սխալներին առաջնորդման, յոթանասուն տարին ալ կ'անցնի։ Հիրավի՞ բժշկության հայրը, մեկ դարն ալ անցավ...

ՎԵՑԵՐՈՐԴ ԶԳԱՅԱՐԱՆՔ

Հանդիպած առաջին աշակերտին հարցուր, թե որո՞նք են մարդկային զգայարանները։ Առանց տարիքի խտրության նո՛ւյն պատասխանը պիտի ընդունիս։

— *Տեսանելիք, հոտոտելիք, ճաշակելիք, լսելիք, շոշափելիք...*

Եվ սակայն ամեն մարդ գիտե, թե ուրիշ զգայարանք մ'ալ կա՝ վեցերորդը, այն, որուն մասին չի խոսվիր և որ աշխարհ կվենտավորև։

Դպրոցները կլռեն. իր անունը անպատշաճ է։ Աղատորեն կարենալ խոսելու համար՝ իր պաշտոնին համար անուն մը տանք ու համարձակորեն կոչենք զայն սիրեիմ։

Բոլոր ճաշակելիքներեն ու հոտոտելիքներեն ավելի կարևոր է ան։ Իրմե՛ կախում ունի, որ երջանիկ կամ թշվառ, առողջ կամ տխնջի մարդկություն մը ծնի։

Կյանքի բոլոր հարցերուն մեջ ամենեն առաջինն է սեռական հարցը։ Բնագետներն ու ընկերաբանները կհամաձայնին կրկնելու, թե է՛ն դրժվար խնդիրն է ան։

Բայց ի՞նչ կ'ընենք մենք, ընտանիքի հայրերս։

Կթողուցնք, որ տղան ինքնիրենը լուծե այդ կնճռոտ հանգույցը։ Ու մեր կողմե կբավականանք միայն իր մեջ ներմուծելով զղվանքի ու ամոթխածության զգացումը։ Սեռային ապիտությունը իբրև անհրաժեշտություն և իբրև սրբություն կնկատանք։

Սակայն օր մը պիտի գա՝ անխուսափելի՛ օրը, երբ մեր չքսածը փողոցին տղաքները պիտի ըսեն, ու որքա՜ն հոսի կերպով...

Վա՜յ այն տունն այդ տղուն...

Ծնողքին դավադիր լռություններ, ընկերներուն սերտապարտ մեղսակցություններ իրար միանալով՝ երեկվան հրեշտակը այսօրվան խժին պիտի վերածեն։

Չեմ համարձակիր նկարագրելու, թե այնպիսի տարիքի մը մեջ, երբ պատանիին ջղային դրություններ դեռ հազիվ կազմակերպվելու վրա եղող նուրբ, ամենանո՛ւրբ, դրություն մըն է, ի՞նչ ահավոր ավերներ կգործեն այդ անվերջ ու անանուն ցնցումները։

Սակայն վտանգը միայն մարմնական չէ, այլ հոգեկան։ Ո՛չ թե միայն իրենց ֆիզիքական առողջությունը կխաթարեն անոնք, այլ նաև իրենց բարոյական առողջությունը, իրենց նկարագիրը, իրենց զվարթությունը, իրենց սրբությունը։

Այսպես, երիտասարդ մը, որ գայրոցեն կ՝ելլե, վարդ մըն է, որ իր բույրը կորսնցուցած է և որուն բոլոր թերթերը փրթած են։ Եթե դեռ միակ թերթ մը ունի, ան այլ առաջին ցնծուհին պիտի փրցնե, այնպես որ փշալից կոթ մը միայն պիտի մնա իր ապագա կնոջ ձեռքը...

Որովհետև, ինչո՞ւ չէ, այդ տգեղ պատանին, որ ո՛չ մեկ առողջապահիկ կանխազգուշությունով չզինեցինք, վաղը, սիրելու խարկանքով, համբույրի մը փոխարեն պիտի ստանա ախտերուն է՛ն սարսափելին և դարմանվելու խարկանքով, կրկնորեն պիտի զոհվի այն տիտղոսավոր շառլաթաններուն, որ բժշկությունը պոռնկացուցին...

Ահա թե ի՛նչպես, ամոթի և մեղքի պատրվակով, թույնի աղբյուր մը կդարձնենք այն զգայարանքը, որ ամենեն իրական երջանկության գործիքն է՝ Բնության կողմե մեզի նվիրված։

Զգուշությո՛ւն։ Չատորացնենք, չխաթարենք, չբթացնենք զայն, սեռական զգայարանքը։

Կենդանական աշխարհին մեջ քանի՞ քանիներ կան, որ մի՛այն այդ զգայարանքով ու մի՛այն այդ զգայարանքին համար կ՝ապրին։

Ո՞վ չի ճանչնար էֆեմեր թիթեռնիկը, այն շնորհալի թիթեռնիկը, որ ամառ գիշերներ կուգա ձեր լապտերին շուրջ բացխփելու իր թեթև թևերը։ Ան կ՝ապրի ամենեն կարճատև ու ամենեն գեղեցիկ կյանքով, որ կարելի ըլլա երևակայել։ Ճաշակելիք չունի, չի կրնար ուտել, քանի մը ժամեն պիտի մեռնի. բայց պիտի մեռնի ամենեն բնական, ամենեն իսկական մահով, առանց ծերանալու, ա՛ռանց հիվանդանալու, ա՛ռանց ցավելու... Երջանի՞կ թիթեռնիկ. անունդի պետք չունի, որովհետև առաքինություն չունի. կյանքի հոգ չունի, որովհետև իր օրերը համբված են։ Իր միակ զբաղումը սերն է. ան պիտի բարձրանա եթերին մեջ, իրեն պես վաղամեռիկ թիթեռնիկ մ՝այ պիտի գտնա։ Ու պիտի սիրե, ու պիտի մեռնի իրեն նվիրվելով... Ան պիտի իրականացնե բանաստեղծին երազը. «ծնիլ, սիրել, մեռնիլ...»

Իրեն համար չէ Շամֆորին սերը, այն սերը, որ «երկու մաշկերու հպումն է» և որ այլասերած մարդկություն մը միայն կրնար հնարել։

Հաղար դարերու քաղաքակրթությունով մը Բնությենեն հեռացած մարդկային սրտին մեջ անդամ տեսնք, թե ինչպիսի ճոխ ծաղիկներով կպճնվի ան.

«Էն թշվառ ուղեղին մեջ թողնք, որ սերը քսանչորս ժամ աշխատի,

ու ահա թե ինչ պիտի գտնեք հոն,— կ'ըսե Սթանտալ։— Զմեռնային տեբլաթափ ճյուղ մը կնետեն Սալցպուրկի աղահանքի մը մեջ և երբ քանի մը ամիս հետո զայն դուրս կքաշեն, այնպիսի պսպղուն բյուրեղներով ծածկված է, աղամանդներու այնպիսի անհունություն մը պճնած է ամենափոքր ոստերն անգամ, որ անկարելի է ճանչնալ նախկին ճյուղը...»

«Երևակայությո՞ւն»,— պիտի ըսեք։ Ազատ թողեք երկու սիրահարները, որ Բնության ձայնին հետևին ու պիտի տեսնեք, թե ինչ գեղեցիկ իրականություն է այդ երևակայությունն կարծված։

Հոգվույն և մարմնին այնքան սեղմ ու փոխադարձ ազդեցությունը մարդկային ուրիշ ոչ մեկ գործունեության ատեն կարելի է տեսնել։

Միսին մեջ այնպես մը կփոթորկի հոգին, որ ոսկորներուն ամենեն անշարժ բջիջներն անգամ վայրկյան մը իրենց ապրիլը կզգան։

Արուն ու էգը, սերն ու սեռը, մարմինն ու հոգին իրար խառնվելով՝ միանգամայն Տիեզերքին ու Աստուծույն կխառնվին։

Մարդկային ո՛չ մեկ զգայարանք, կենդանական ո՛չ մեկ գործողություն, բնագիտական ո՛չ մեկ երևույթ այնքան խորհրդավոր է։

Այդ գերագույն վայրկյանին, է՛ն սև մարդը արշալույսներ հրդեհելու ընդունակ հրաշեկ հոգի մը կ'ըլլա։ է՛ն ստոր մարդը կհավաքե ինչ որ կա իր մեջ լավագույն՝ կուսական կաղապարի մը մեջ նետելու համար զանոնք։

— Վայրկենական ցնցո՞ւմ մը...— կ'ըսե Մարք Օրել։

Բայց այդ մեկ ցնցումը անհուններ կդողացնե ու հավիտյանները կրնդմնավորե...

Այսպես է սերը. մաքուր, առողջ, բնական սերը։

Իմաստությո՞ւն է, թե հիմարություն. չեմ գիտեր։ Կզգամ միայն, որ մարդկային ամենարարձր արտահայտությունն է ան։ Անո՛վ էլ որ Աստված մեր մեջ կհայտնվի. Աստված սեր է։

Պատրաստենք մեր զավակները այդ մեծ օրվան համար։ Ու սորվեցնենք իրենց Վերածնունդի առաջին օրենքը.

Առողջ սեր, առողջ սեռ։

Բանկալթի

ՄԵՌԵԼԻ ՄԸ ՆԱՄԱԿԸ

Անծանոթուհիի մը նամակին, կխնդրեմ, բարի՛ Տոքթյոր, ներողամիտ եղեք։

Ու հավատացեք, որ եթե աչքիս առջև մահվան ստուգությունը չըլ-

լար, երբե՛ք, երբե՛ք պիտի չկրնայի, պիտի չհամարձակեի բառ մ՚անգամ գրելու։

Բայց ինձ կթվի, թե ձեղի գրելով, հակառակ որ անծանոթ մըն եմ ձեզ, ինձ մաս մը պիտի ապրի ու իմ օրինակս տարեկից աղջիկներուս սրտին պիտի հասնի։

Կ՚ուզե՞ք ով ըլլալս գիտնալ, Տոքթյոր։

Ես փոքրիկ դժբախտ Տիկին մըն եմ. հարս մը ու գրեթե որբևայրի մը արդեն. հիվանդ մը և մոտ օրեն դիակ մը...

Ժամանակ մը կար, սակայն, երբ ես ալ զվարթ ու կայտառ աղջիկ մըն էի։ Կուսական շրթներուս վրա ճերմակ ժպիտը կբողբոջեր նարընջենիի ծաղիկներու պես։

Ժամանակ մը կար, երբ արյունս ոգելից ըմպելի մը պես կթշար ու կգինովցներ սիրտս։ Երիտասարդության, դեղեցկության, իտալիս ամբողջ հպարտությունն ունեի իմ անձիս վրա։

Ժամանակ մը կար, երբ թռչունի պես ազատ էի, լույսի պես զվարթ ու Աստուծո պես ամենակարող կկարծեի ըլլալ...

Այդ ժամանակը, կարծես թե դարեր անցեր են վրայեն, դեռ հազիվ տարի մը առաջ էր։

Այս մեկ տարվան մեջ մարդիկ ժամանակ գտան զիս ամուսնացնելու, արգանդես երկու զավակ վիժեցնելու, հոգիս դժոխքի վերածելու մարմինս՝ դիակի...

Ճիշդ է, որ ամուսնութենես առաջ արդեն ես կզգայի, գիտեի, որ տկար էի։ Ծունկերս կկտրվեին, ախորժակս կգոցվեր, ձայնս կխզվեր, գույնս կդեղներ։ Ավելի սրտիս ուժովը կ՚ապրեի, քան թե մարմնիս ուժովը...

Ա՜խ, Տոքթյոր, եթե գիտնաք, որ հույսի ի՞նչ լեռներ կան ամենահետին աղջկան մը իսկ սրտին մեջ, այն ատեն միայն պիտի հասկնաք, թե շյուղի պես նիհարցած կույսերը դեռ ինչո՞վ կ՚ապրեն...

Սակայն օր մը Եգիպտոսեն մարդ մը եկավ, որ ո՛չ տեսած, ո՛չ դպած էի և որ ամբողջ հույսերս փլցուց, սրտիկս շորցուց։

Նախ ծնողքս տարտամորեն ըսին, որ մեղի հեռավոր ազգական մըն է ան։ Բայց հետո, այդ հեռավոր ազգականությունը ավելի մոտեցնելու խոսքեր եղան։ Պառավ մամիկ մը, որ այս առթիվ հրավիրվեր էր՝

— Ձեր աղջիկը կելինենիկ է,— ըսավ.— կելին ըրեք, որ աղեկնա...

Բայց ես գաղտնաբար բժիշկի մը ոտքը ինկա. աղաչեցի, լացի, որ ճշմարտությունն ըսե ինձի։

— Աղջի՛կս,— ըսավ բժիշկը. դեռ իր բառերը ականջիս մեջ են՝ մահվան վճիռի մը պես ծանր.— աղջի՛կս, դուն դեռ թոքախտավոր չես,

բայց եթե ամուսնանաս, պիտի թոքախտավորվիս ու եթե զավակ մը բերես, պիտի մեռնիս...

Բայց Եգիպտոսի մեջ հարստացած մեր ազգականը կ'երեւի թե անմիջական պետք ունի եղեր իմ բերելիք դրամաժիտիս՝ իր ծխախոտի վաճառականությունը փրկելու համար։

Ինծի պես նիհար, վտիտ, անարյուն էակ մը, առա՜նց կանխագուշակման պատվերի մը, առա՜նց բժշկական ծանոթության մը (դեռ 16 տարու էի այն ատենը) հանձնեցին ոգեւոր ու հեռավոր մարդու մը ձեռքը, որ ուղածն ըներ ինձմով։

Ու ան ըրավ ինձ այն միակ բանը, որ կրնար ընել...

Դեռ հազիվ նոր հարս էի, դեռ հազիվ մեղրալուսին էի մտեր, ի՜նչ սեւ մեղրալուսին, Աստվա՜ծ... երբ արդեն սկսա զգալ մայրական գալարումները։

Բայց նիհարությունս ա՛յնքան շատցավ ու արյունս ա՛յնքան քիչցավ, ա՛յնքան մահատիպ եղա ու ժժգույն, որ սարսափած՝ ստիպվեցան արգանդես խլել առաջին համբույրին զավակը...

Ասոր վրա ա՛յնքան անարյուն, ա՛յնքան անուժ եղա, որ հալած մոմի մը պես անկարող էի կանգուն մնալու։

Ի՞նչ պիտի ըսեր ուրեմն, եթե գիտնաք, որ այսպիսի պայմաններու մեջ, ուր անկողնին գամվեր էի կես-մեռել, կես-ողջ, ամուսինս երկրորդ զավակ մըն ալ կծներ ինձ, երկրորդ համբույրին զավակը...

Ու նոր հուսահատություն, ու նոր ճիշեր, ու նոր վիժում, ու նոր արյունախոնում։

Միայն թե այս անգամ արյունը բերնես ալ կուգար...

Ճարահատ, դիս մինչև հոս բերին, զվիցերական սարերուն մեջ սանատորիում մը դրին՝ եթե ոչ բուժվելու, գոնե իմիններս չվարակելու համար...

Ու ես հոս, միամինակ, յուզարար չունեցող կանթեղի մը պես, օրե օր, կաթիլ կաթիլ կմեռնիմ...

Կմեռնիմ, բարի՛ Տոքթյոր, ու կ'ուզեմ ապրիլ։

Սիրտս, դեռ տասնըյոթ տարու է սիրտս, դեռ չէ վարժված մոտալուտ ու անխուսափելի մահվան։

Կ'ուզեմ ապրի՜լ։ Կ'ուզեմ ապրի՜լ, չնայելով, որ կյանքը լիքն է հիասթափումներով ու դառնություններով։ Կ'ուզեմ ապրի՜լ, չնայելով, որ ամեն թայլափոխիս կեղծիքն ու չարիքը, եսասիրությունն ու շահամոլությունը կցցվին դիմացս։

Կ'ուզեմ ապրի՜լ ու կզգամ, թե կմեռնիմ։

Իմ ծանր օրերուս ա՞յնքան ուժ ի գործ դրած եմ, Տոքթյո՛ր, հոգիս մարմնիս մէջ պահելու համար, մանավանդ որ կույր հավատացող մըն ալ չեմ անդիի կյանքին, այնքա՞ն անգամ բռունցքներս սեղմելով կուվեր եմ՝ «պիտի չմեռնիմ, պիտի չմեռնիմ» կրկնելով...

Բայց կտեսնեմ, որ զո՞ւր է։ Այս անիծված հիվանդության շրջանը այնքան երկար է, որ մարդ ակամա կհուսահատի։

Սիրուս ապրելու համար հույսի մը պետք ունի, ինչպես կանթեղը՝ յուղի։

Հույսի բառ մըն ալ ինծի՛ գրեցեք, բարի՛ Տոքթյոր։ Ու շուտով գրեցեք. կվախնամ, որ ա՛լ օրերս համրված ըլլան։

Եթե դարման մը չունիք հոգևարք մը ապրեցնելու, գոնե հույսը տվեք, թե հիշատակս պիտի ապրի։

Երբոր մեռնիմ, պիտի ըսեք, խոստացե՛ք ինձ, պիտի ըսեք աղջիկներուն ու մայրերուն, թե Արմինեն ինչե՞ն մեռավ։ Իմ անունս Արմինեն է։

Հ. Գ. Վերի նամակը գրած օրես ի վեր երկու ամիսներ անցան ու դեռ չէի համարձակեր զայն թղթատարին հանձնելու։ Բայց այսօր մահվան արագությունը համարձակություն կուտա ինձ։

Այսօր իմ տարեդարձս է, վերջին տարեդարձս։ Այսօր իմ անմեղության տասնըութը տարիները կթաղեմ ճերմակ վարդերու պես։

Բախտի բերումով ալ, այս գիշեր, վարը, մեր պանդոկին մէջ երեկույթ մը սարքված է, կարծես հատկապես ինծի համար։

Բժիշկները դիս բացարձակ անշարժության դատապարտեցին։ Բայց անդիմադրելի ցանկություն մը ունիմ աչքերս երջանիկ պատկերներով լեցնելու՝ վերջնականապես փակելե առաջ զանոնք։ Կ'ուզեմ տեսնել ուրախ զույգեր, լուսողող սրահներ, ժպտուն տիկիններ...

Բայց հազիվ թե անկողնես վար նետված, արտակարգ սարսուռ մը, հանկարծակի հուզում մը կուրծքս կսեղմե։ Բերնիս մէջ տաք հեղուկ մը, արյունի համ մը կա...

Մարմինս փուշ-փուշ, ծունկերս կտրված, հազի՛վ ուժը կ'ունենամ մինչև հայելիս առաջը վազելով բերանս բանալու... մորթված աղավնիի արյունաթաթախ բերան մը...

Սարսափահար անկողին կնստիմ։ Կ'ուզեմ քնանալ, մեռնիլ, չտեսնել, չզգալ։

Բայց աչքերս չեն գոցվիր։ Վարի դահլիճներեն, դրան ճեղքերեն օրորող երաժշտության մը հեքը կհասնի... Կարապի երգը՞...

Այս վայրկյանիս երեկույթին մէջ կպարեն, կ'ուրախանան, կսիրեն...

Ես անկողնիս մեջ կծկուած, խղդուկ-խղդուկ կուլամ, կարմիր կուլամ, արյուն կուլամ...

Կ'ուզեմ ապրի՛լ, կ'ուզեմ ապրի՛լ, Տոբիյո՛ր...

ՍԱՐԱՎ ՄԱՐԴԸ

Շատեր տեսա, շատեր տեսա արտասահմանի տիպարներուն մեջ, բայց այս մեկին նման հատ մըն ալ չեմ կարծեր, որ գտնվի։

Առաջին անգամեն արդեն ամբողջ ուշադրությունս իր վրա խտացուցի։ Լա Փե գարեջրատան մեջ նստեր էի գիշեր մը։ Երաժշտության, ծուխի ու բաժակներու ծովուն վրա ծփացող նայվածքս հանկարծ, հարյուրավոր դեմքերու մեջեն, իր դեմքին վրա կանգ առավ։

Ջուլգ մը խոժոռ պեխերու ետին պահվըտած ճերմկոտիկ ու բարակուկ դեմք մը... երկու սպառնական նիզակներու ետին ապաստանած հիվանդագին Սուլթանի մը պես հալումաշ։

Գավաթ մը գարեջուրի առջև ժամերով նստեցավ։ Նստեցավ մի՛սմինակ, շիփ-շիտակ, փայտ կլլած մարդու մը պես։ Պեխին մե՛կ մազը, ձեռքին մե՛կ մատը տեղեն չերերաց։ Իր գավաթ մը գարեջուրին մեջ նայեցավ, նայեցավ, նայեցավ, ծովերուն խորությունը հաշվող մարդու մը պես։ Ու հետո, առա՛նց կաթիլ մ'անգամ տանելու իր շրթներուն (թերևս իր պեխերուն զինվորական շարքը չավրելու համար), ելավ գնաց։

Եթե այսքանն արդեն չի՛ զարմացներ քեզ, պատճառն այն է, որ դուք ձե՛ր աչքով չտեսաք զինքը։ Ամեն պարագային ես այդ գիշեր այդ մարդեն բոլորովին մագնիսացա։ Անիկա հեռուեն ծծուն թուղթի մը պես քաշեց, ծծեց իմ աչքերուս ամբողջ ուշադրությունը՝ առա՛նց որ ինք անգամ մը իմ կողմս նայեր։

Մյուս գիշեր թիշ մը ավելի կանուխեն գացի նույն գարեջրատունը։ Նույն մարդը նորեն հոն էր, նույն աթոռին վրա նստած ու նույն խոժոռ պեխերուն ետին ապաստանած։ Նորեն իր բաժակ մը գարեջուրին նայեցավ, նայեցավ, նայեցավ։ Ու հետո, երբոր բոլոր պղպջակները մեկիկ մեկիկ ֆշրտացին ու սմբեցան և երբ բաժակին պաղ-պաղ քրտինքները տաքցան ու հալեցան, նոր բաժակ մըն ալ ապսպրեց, նայեցավ, նայեցավ, նայեցավ ու ելավ գնաց։

Մյուս օր ու մյուս օրերը ավելի ու ավելի կանուխ գացի հոն, ավելի մոտիկ նստելու համար այս հիվանդոտ սփինքսին։ Բայց միշտ նույն բանը միայն տեսա։

Իր որոշ ժամուն գարեջրատունեն ներս կմտներ, դուռին ու պատու-

Հանին միջև զգուշավոր հեռավորություն մը կ'ընտրեր՝ օդի հոսանք-ներուն չենթարկվելու համար, առանձին սեղան մը կգտներ հոն ու... ՀԷ՞ խկ... ամոսին վրա կնստեր տասպրակ մը ոսկորի պես։

Վերարկուն բնավ չէր զատեր կոնակեն, թերևս իր նստատեղիին ոսկորները չցավցնելու համար։ Բայց ինչո՞ւ իր գլխարկն ալ չէր Հաներ բնավ ու ինչո՞ւ մանավանդ այս հաստ կաշիե ձեռնոցները այս ամառ օգերուն... Անոնք այնպես անխախտ կերպով փակցված, կոճկված էին իր ձեռքերուն վրա, որ կարծես ա՛լ իր մարդակազմության մաս կկազմեին։ Ինչո՞ւ բնավ չէր Հաներ զանոնք. բարո՞տ էր արդյոք...

Այսպես կնստեր ան մի՛ս-մինակ, շի՛փ-շիտակ, բացարձակորեն անշարժ, երբեմն-երբեմն ջղային աչք մը թթթելով իր առջևի գարեջուրին։ Ու հետո, առանց ժամացույցը Հանելու, բայց միշտ ու ճիշդ նույն վայրկյանին, կարծես զսպանակ մը մղվելով, կ'ելլեր կ'երթար։

Հետաքրքրությունս երթալով այնքան ավելցավ այդ խորհրդավոր ձեռնոցներուն, գլխարկին ու գարեջուրներուն շուրջ, որ օր մը որոշում տվի անպատճառ դիշերն իրեն քով երթալ ու որևէ պատրվակով մը հետը խոսիլ։

Սակայն այդ դիշերն իսկ, այդ զարմանալի մարդը, կարծես թե գուշակելով իմ որոշումս, գարեջրատուն ոտք չկոխեց։ Ու այսպես շաբաթ մը, երկու շաբաթ, երեք շաբաթ անցավ։ Մտածեցի, թե անշուշտ օտարական ճամփորդ մըն էր ան, որ մեկնեցավ մեր քաղաքեն՝ քիչ մըն ալ ուրիշ տեղ ապաստանելու համար իր դյութական գարեջուրները։

Բայց ահա օր մը, ինչ՝ վ չսպասած մեկ վայրկյանիս (բժշկության մեջ երբեմն կպատահին այս անակնկալները) դիս հրավիրեցին մասնավոր զարմանատուն մը՝ հայ հիվանդի մը համար։ Ու ի՞նչ մեծ եղավ զարմանքս, երբ ինքզինքս հանկարծ դեմ դեմի գտա այս կենդանի ստվերներին հետ... Վե՞ր ցատկես պիտի կարենայի մոտեն դիտել այս վագրին գլուխը...

Վագրին գլո՞ւխը։ Գլխարկ չուներ հիմա, ու վեց թել մազեր՝ իր շլիքեն, ականջներեն ու թեներուն տակեն երկնցնելով բերեր, դարձուցեր, փակցուցեր էր ճակտին չորս կողմը ու այդպես բարակ կեղծամ մը ձևացուցեր էր, որուն տակեն դեղինեն կանաչի զարնող գանկ մը պահել կրնար իր անկյունավոր ու ոսկրի գծագրությունը...

Մինչև հիմա այս մարդը հետաքրքրությունս կշարժեր միայն, իսկ հիմա մեկեն ի մեկ դուխս շարժեց։

Երևոնը՝ հինգերեն մոտերը երիտասարդ մըն էր ան, բայց յոթանասունոց պառավի մը պես հյուծած։ Երբ այս արագ ծերության պատճառը հարցուցի իրեն.

— Տասը տարիե ի վեր անոթի եմ...— ըսավ։

Ու հետո չորցած բերան մը բանալով.

— Անոթությունը հոգս չէ, բայց ծարավես կմեռնիմ...— ավելցուց։

Պոլսեցի ընտանիքի մը միակ զավակն էր ան։ Իր ծնողքը հարուստ էին, շատ հարուստ, չափազանց հարուստ։ Տղան քսանը հինգին մոտերը աղիքներու խանգարում մ՚ունեցավ, որ տասը տարիե ի վեր կտևեր ահա։ Եթե օրապահիկը շահելու համար աշխատելու ստիպված մեկը ըլլար, ոևէ խղճամիտ բժիշկ մը բավական պիտի ըլլար մոռցնելու այդ հիվանդությունը։ Բայց հարուստ էին ու չգիտցան, որ բժիշկները զումարելով՝ չարիքը կբազմապատկեին...

Ոմանք հանցանքը ստամոքսին գուան, մյուսները աղիքները դատապարտեցին, ավելի վարպետներ լատիներեն անուններ մը մոլտացին։ Ու յուրաքանչյուրն ալ իր գեղը գովեց, իր արգելքները դրավ անուններու վրա։

Երբ հինգ-տասը գիտնականներ այսպես իրար հրմշտկելով ինկան մինչև այն ատեն մոռացության ու տգիտության մեջ գործող ստամոքսի մը վրա, հետևանքն այն եղավ, որ այդ համեստ գործարանը, հանկարծ բեմին առաջին դերակատարության հրավիրվելով, նախ շվարեցավ, շփոթեցավ, հետո շփացավ, շարացավ, իր կարևորությունը չափազանցեց, խստապահանջ ու զայրացկոտ եղավ։

Այդ շվարած ու սանձակոտոր ստամոքսը զսպելու համար դեղ չմնաց, ծոմապահություն չմնաց, որ չփորձեին... Սնունդներուն քանակը այնքան իջեցուցեր, այնքան քիչցուցեր էին, որ ստամոքսը երթալով ինքզինքը կերեր, հալեր, մաշեր էր ու աղիքները բարակցե՞ր, բարակցե՞ր էին, երախայի աղիքներու պես...

Խեղճ երիտասարդը, տասը տարի համբերելե վերջ այս տաժանակիր անսվաղության, մահը աչքն առնելով, ինքզինքը մինչև Եվրոպաները, մինչև Լոզան նետեր էր։ Բայց հիմա շատ ուշ էր արդեն ու մարսողական գործարաններն այնքան ծյուրեր էին, որ հաճախ պատառ մը սնունդ բավ էր զինքը շարաթներով փորհարելու...

Տարիներ ամբողջ դատապարտված էր մանուկի մը պես գրեթե միայն կաթով սնանելու։ Այնպես որ իր խոժոռ պնխերուն ետև պահված շրթունքները չես գիտեր ի՞նչ մ՚ունեին մանկական ու անմեղ։ Արդեն հազիվ թե խոսելու համար բերանը բանար, իսկույն կփոխվեր իր գեմքին կնճռոտ գծագրությունը։

Տղու խաղալիքներուն մեջ փայտե մարդեր կան, որոնց շվանը բռնելուդ պես կսկսին ոգևորվիլ, շարժտկիլ, խանդավառվիլ, խնդացնել, բայց

չվանը թողնելուդ պես կ'ըլլան նույն փայտե մարդը, անշարժ ու շիփ-շիտակ գետին պառկած։

Այդպես ալ, երբեմն առտվընե մինչև իրիկուն փայտե մարդու պես շիփ-շիտակ պառկող այս մարդը, իր ձեռքը սեղմելուս պես կդառնար ամենեն անուշիկ, ամենեն ճովոդուն, ամենեն քաղաքավար մարդը, որ հաճելի ըլլալու համար հազարումեկ կտոր կ'ըլլար, կ'ոգևորվեր, միամիտ ու մանկական բաներ կ'ըներ իր հուզումեն շվարելով։

— Ճա՛թ... ճա՛թ... ճա՛թ... ճաթելիք բան է այս մենությունը, Տոքթյոր։ Ը՛գ... ը՛գ... ը՛գ... ճգնավորները աղեկ են, գոնե երբեմն մարապետի երես կտեսնեն...

Այս ը՛գ... ը՛գ... ճգնավորին բաղդատությունը հաճախ կուգար լեզվին ծայրը։ Որովհետև տունը մնացած աղջիկներուն պես՝ կույս մնացած մարդերուն ալ միակ ցավը այդ ավելորդ առաքինությունն է։ Մնաց որ իր առաքինության միակ պատճառը իր ծայրահեղ վախկոտությունն էր միայն։

Վախկոտությո՞ւն մը, վախկոտությո՞ւն մը, որուն նմանը ես չտեսա դեռ։

Երևակայեցեք, որ իր հաստ կաշիե ձեռնոցները, որ ձեռքեն երբեք չէին ելլար, պարզապես միքրոպներու վախեն կպաշտպանեին գինքը։

— Շատ-շատ,— կ'ըսեր,— եթե չգիտցած մեկ մարդուս ձեռքը սեղմեմ, այս ձեռնոցները նետելով ուրիշ զույգ մը կգնեմ...

Հետո՞ միայն սորվեցա, որ սրճարանին մեջ իր վերարկուն ու գլխանոցն ալ չհանելուն պատճառը, պարզապես զանոնք կասկածելի գամեմ մը չկախելու համար էր...

Օր մը իր գլխարկը պատահմամբ գետին իյնալով՝ մուշտակապատ մատներուն ծայրովը զայն բռնեց ու, մուկ մը բռնած տղու մը պես նողկալով, դեղարան գնաց, գլխարկը հականեխել տվավ, վճարեց, չհավնեցավ, նետեց, նոր մը գնեց...

Ու երբ այս ծայրահեղ զգուշության վրա խնդալ սկսա, բժշկությանս վրա կասկածելու չափ առաջ գնաց։

— Երևակայեցեք որ,— ըսավ.— եթե այդ հողին վրա օրեր առաջ թոքախտավոր մը թքած ըլլար, ի՞նչ կ'ըլլար իմ վիճակս... Եվ այս բծախնդրությանս շնորհիվ է, որ մինչև այս հասակս «կենկա հիվանդություն» մը չեմ առած...

Այսքա՞ն միամտություն, այսքա՞ն մանկություն, անշուշտ անհավատալի կթվի ձեզի, այնպես չէ՞։

Բայց զուք, որ այսպես կխորհիք՝ արևուն ծագելեն մինչև մարը մտնելը քանի մը պնակ կերակուր կմարսեք արդեն։ Իսկ այդ մարդը

Եղի պես չէ։ Դուք ի՞նչ կխաբվիք անոր խոժոռ պեխերեն. երևակայեցեք, ր երեսունրհինգ տարու այդ մարդը միմիայն կաթով կ՚ապրի, ծծմոր բախայի մը պես։ Երևակայեցեք նաև, որ այդ երեսունրհինգ տարու մարդը գավաթ մը ջուր չի կրնար խմել՝ առանց տասն անգամ պետքաան վազելու...

Ու այն ատեն պիտի զգաք (եթե քիչ մը սիրտ ունիք), որ այս խեղճ մարդը որքա՞ն ալ շվարած, վախկոտ, ծիծաղելի ըլլա, իրավո՞ւնք ունի։ Ան ծաղրանքե ավելի գութի արժանի է։

Դժբախտություն մը իրական ըլլալու համար պետք չունի անպատճառ սևերով ու արցունքով ներկայանալու։ Թշվառություն մը գութ շարելու համար պետք չունի իր պայմանադրական ցնցոտիներուն... ինչպես որ գրականություն մը տխուր ըլլալու համար պետք չունի անպատճառ լալկան ըլլալու։ Հին ու ծիռած գաղափարներ են ասոնք։

Գոնե ես ավելի՛ դժբախտ մեկը չտեսա այս դժբախտության հովտին մեջ, քան այս զարմանալի հիվանդը, որուն ճը՛գ... ճը՛գ... ճգնավորները դիս կզվարճացնեին... Ես ավելի՛ անկեղծորեն աղքատ մարդ մը չգտա դեռ աշխարհիս երեսին, քան այս հարուստ, մեծահարուստ երիտասարդը, որ բաժակ մը գարեջուրի առջև ծարավեն կհյուծեր...

Սա արևուն, փողոցները ալքտացող մուրացկանը վստահ է, որ գոնե կուշտ ու կուռ ջուր մը պիտի խմե դեմի աղբյուրի ծորակեն՝ բերնին ավելցուքներն ալ կուրծքին մաղերուն մեջ կաթկթեցնելով արծաթի կայլակներու պես...

— «Ոսկի՞...»,— կհամերգեն նորերը՝ իրրև միակ երջանկություն հոչակելով այդ դժբախտության մետաղը։

Սո՞ւտ խոսք։ Եթե երջանկությունը ոսկիներով դատվեր, այս մարդուն նախանձող ուրիշ երջանիկ մըն ալ պիտի գտնվե՞ր արդյոք...

— Կին, խաղ, գինի...,— ըսեր են հիները՝ կյանքին գլխավոր հաճույքները դասավորելու համար։

Կինը, տեսանք, որ միայն միքրոպներու ամպի մը ետևեն երևցավ իրեն։

Խաղերուն ուրիշ տեսակը ան չճանցավ՝ բայց միայն իր աղիքներուն խաղը։

Իսկ գինիին ո՞չ թե միայն ջրախառնովը պիտի գոհանար, այլ մի՛միայն ջուրովն ալ... բայց...

— Օր մը սափրիչին գացեր էի ածիլվելու,— կ՚ըսեր.— երբ ան ոսկեգույն կոնքին մեջ պաղպաջուն ջուրը վզիս բռնեց ու շրթներուս այնքա՞ն մոտ բերավ, այնքա՞ն մոտ, որ եթե չխպնեի՝ անասունի մը պես պիտի ծծեի այդ ամբողջ ջուրը...

Հանուքներն ա՛յսքան ամուրի կյանքն մը վերջ, հիմա որ ա՛լ մահ-վան մոտիկությունը կզգար, մե՛կ փափաք ուներ, հայրենի՛ք դառնալ։

— Եթե վաղը հանկարծ մեռնիմ,— կ'ըսեր.— մա՛րդ մը չկա, մատո՛ւռ մը չկա, լացող մը չկա. շատ դիակ մը ինձմե ավելի բախտավոր է...

Ու հետո, իր վախերը ճշդելով, հուզումեն կթոթվեր.

— Ճեմ... ճեմ... ճեմ... ճեմիշի մեջ հոգիս պիտի փչեմ...

Որովհետև հիմա ալ սկսեր էր կարմիր փորհարել ու անգամ մը այդ արյունին տեսքին կես ժամ նվազուն մնացեր էր նստած տեղը...

Այս վիճակին մեջ ինչպե՞ս կրնայի արտոնել այդքան մեծ ճամբորդություն մը։

Բայց ան անպատճառ պնդեց, որ երթա ու դնաց ալ։

Իր մեկնելեն ի վեր հաճախ գացի այն սրճարանը, ուր առաջին անգամ տեսեր էի դինքը։ Ու յուրաքանչյուր դարեջուրիս մաքիս առջև կպատկերանար այդ ճերմկոտիկ ու բարակուկ երիտասարդը, որ իր լեցուն բաժակին կնայեր, կնայեր, կնայեր ու կ'երթար...

Ի՜նչ ճակատագիր այս տղուն ճակատագիրը...

Իր հայրը ամբողջ կյանքով աշխատեր, աչեն ու ձախեն փրցուցեր, աղբատներու ակռայեն և բանվորներու ձեռքեն խլեր էր, դիզեր ու դիզեր, որպեսզի օր մը իր տղան ու իր տղուն տղաքները առանց աշխատելու հա՛ց ունենան, տասը, հիսուն, հարյուր տարի...

Եվ սակայն (դուք ի՞նչ կ'ուզեք ըսեք, ես կհավատամ գերագույն արդարության մը), իր տղուն տղաքները երբեք պիտի չծնեին ու իր տղան պիտի մեռներ անոթի...

Իր ոսկիներու դեղին մեջ ան պիտի մեռներ անսվազ, այո՛, ու մամիկի հեքիաթ մը չէ ասիկա։

Ամբողջ տասը տարի առանց հացի ու ջուրի ապրելի վերջ, ան պիտի մեռներ ավելի շուտակտն, քան դաշտերու հետեն աստանդականը, որ խոտերուն մեջ, արևուն տակ կփոռ իր դիակը...

Ան պիտի մեռներ դեռ հայրենիք չհասած, մի՛ամենակ, պատն երեսին, շոգենավի մը ճեմիշին մեջ։

Ճանչցող մը, լացող մի պիտի չունենար։

Ո՛չ իսկ գերեզման մը։

Ժանտախտի մը վախեն դինքը ծովը պիտի նետեին։

Ա՜ռ քեզի ջուր, ծարա՜վ մարդ...

Դուռը բացվեցավ։ Տասնըութ տարեկան պատանի մը երևցավ, բայց աղքանդամ բան մը, Գողիաթին փայտեն տաշված հսկա մը, որ տղու լուխ մը կկրեր՝ կաս-կարմիր երեսով մը։

Վայրկյան մը սեմին վրա կեցավ, դուռը բացած ըլլալուն արդեն սկ զղջացած. շվարած աչքերը սենյակիս չորս կողմը նետեց՝ տեսնելու համար, որ շարշարանքի փայլուն գործիքներ կայի՞ն, բայց հանկարծ սնահամբեր ձեռք մը երևցավ նտեեն, գայն առաջ մղեց ու դուռը զոչեց ոլեն։

Այն ատեն պատանին անհամարձակ շարժումներով առաջացավ, պզտիկցա՜ծ, հյուլեացած, կարծես ներողություն խնդրելով իր ա՛նքան սոշոր ըլլալուն։

Ի՞նչ էր այդ խեղճ տղուն ցավը։

— Ցավ մը չկա, տոքթոր...

Հապա ի՞նչ էր իր գանգատը։

— Գանգատ մը չունիմ, տոքթոր... մե՛ղքը իմս է...

Ու այս բառը արտասանեց ա՛նքան պզտիկցնելով իր ձայնը, ա՛նքան կարմրցնելով իր դեմքը, որ հիվանդության տեղին վրա կասկած չի մնաց...

Բայց ան ինձ բոլորովին ուրիշ տեղեր կցուցներ. բազուկները, վիզը, ուսը, կուրծքը... Ու իրա՛վ ալ պզտիկ կարմրություններ կային այդ տեղվանքը, վարդագույն ոսպերու պես, հազվագյուտ ու արդեն անհետանալու վրա։ Բայց ես կգնդեի, թե ուրի՛շ տեղ ցավ մը չէ՞ր ունեցած։

— Այո՛, տոքթոր... կոկորդիս մեջ ցավ մը կա, կերակուրս չեմ կրնար ուտել, բայց ցրտութենե ալ չէ...

— Ուրի՞շ տեղ...

— Բերնիս մեջ ալ ճերմակ-ճերմակ տեղեր կան կոճակներու պես...

— Հապա ուրիշ տեղ բան չունեցա՞ր...

— Այո՛, տոքթոր... գիշերները գլխու ցավեր ունեցա, սարսափելի ցավեր, շաբաթներով...

— Ուրի՞շ, ուրի՞շ...

— Չեմ գիտեր. հիմա ալ մազերս կթափին, բայց ընկերներս կ'ըսեն, թե այստեղին ջուրեն է... Ուրիշ ի՞նչ ըսեմ, տոքթոր, այսքանը չի՞ բավեր...

Ու այսպես, ամոթխած տղան, չարիքին առաջին բույնը չհայտնելու համար, առանց գիտնալու ամբողջ հիվանդության ընթացքը նկարած էր ինձ։ Ախտին ապագա ընթացքն ալ ե՛ս իրեն նկարագրեցի, որովհետև

կտեսնեի, թե երկչոտ աչերը դուռին հառած՝ մտքեն այնպես կ'երդնուր, որ անգա՜մ մը այդ անիծված սեմեն դուրս ելլալե վերջ, ա՜լ բժշկի տուն ոտք չպիտի կոխեր։ Եվ սակայն անհրաժեշտ էր, որ գիտնար վտանգը, որպեսզի չխուսափեր դարմանեն։

— Տեսա՞ծ ես,— ըսի.— փրթած քթթերով մարդերը։

— Այո՛, տոնքոր։

— Բայց հագուստներու տակ պահված ի՜նչ զզվելի վերքեր կան, որ չես տեսնար... Տեսա՞ծ ես անդամալույծները, որ փոքրիկ կուռքերու պես հրելով կպտտցնեն արևուն։

— Այո՛, տոնքոր։

— Սակայն քանինե՛ր կան, որ հիվանդանոցներու մեջ կնեխին ու չեն տեսնար... Տեսա՞ծ ես վարդագույն օրորոցներու մեջ հրեշտակային երախաները, բայց հիվանդ հայրերու ի՜նչ հրեշ զավակներ կան, որ ծնած օրը կմեռնին ու չես տեսնար։ Դիտե՛ սա պատին նկարներուն վրա ու սա ալբոմի շիշերուն մեջ այն դժոխալին վիճակները, որ քեզ կսպասեն ու եթե կրնաս փախիր հիմա...

Եթե երկինքեն կայծ մը իջնար, այսքան բուռն ու հանկարծական տպավորություն չպիտի գործեր ես որքա՜ն ավելի կսիրեմ այն թշվառները, որոնք իրենց ցավին ամբողջ դիտակցությունովը կուգան՝ հովեն քշվող աշնան ոսպի մը պես քեզի՜ փարելու. խնդրելու, որ ուժո՛վ բռնես զինք ու թող չտաս, որ հողը իջնա՜ն...

Սակայն որքա՜ն ավելի բազմաթիվ են այն հիվանդները, որոնք իրենց տգիտության մեջ կարծրացած՝ հեգնելո՛վ կպտտցնեն մարդոց մեջ վարակումի սարսափելի վտանգը։ Ասոնց համար ահավոր վայրկյան մը կա, երբ բժիշկը կբակե իրենց աչքին կապը ու ցույց կուտա այն անդունդը, որ կ'նդերեին, ցայգաշրջիկի մը պես... Դժոխային բոպե մըն է այս. ծովը ինկող մարդու մը պես, որ օձին կփարի՝ հիվանդը կփարի. ոժշկին ու դահիճի մը պես կ'ատե զայն...

Պատանին սարսափած ոտքի ելավ՝ ստույգ վտանգե մը փախչելու պես, վայրկյան մը տատանեցավ ու նորե՛ն ինկավ թիկնաթոռին, ու հևալով, հառաչելով, հեկեկալով, ձայնը խեղդելով, խորունկ-խորունկ սկսավ լալ։

— Հրաշք մը ըրե, տոքթոր, փրկե՛ զիս, ոտքերուդ կ'իյնամ, ներե ինձ, ես չէի գիտեր, առաջին անգամն էր, փրկե՛ զիս...

Բայց անհամբեր ձեռք մը անգամ մըն ալ դուռը բանալով տարիքոտ մարդ մը ներս մտավ։ Լացող տղան հանկարծ ոտքի ելավ, լացը զսպեց, թաշկինակը պահեց, ու իր բառերը ստորագծելով, թոթովեց.

— Բժիշկը կ'ըսե, թե բան մը չունիմ եղեր, հայրի՛կ...

Ու քովի սրահը քաշվեցավ։ Հիմա հայրիկին հետ մինակ մնացի։ Փոքր հասակով մարդ մըն էր ան, լուսավոր ու փայլուն դեմք մը՝ կարծես բաղնիքեն նոր ելած, հաղի՛վ ճմռթկած մորթ մը՝ սպիտակ ու թեթևորեն վարդագույն, ճերմակ պեխեր՝ բայց խնամքով սրցված ու երիտասարդի պճլտուն աչքեր՝ կայծոռիկներու պես։ Այդ թագթաքուր պատանիեն վերջ այս ճլվլուն ծերունին արևու ճառագայթին մը պես ինկավ սենյակիս մեջ, մթութիւնը փարատեց, տաքութիւն մը, զվարթութիւն մը բերավ իր հետ։

— Արդեն վստա՛հ էի, որ տղաս բան մը չուներ,— ըսավ։— Մայրիկը մինչև այսօր ակռաներով ընկույզ կկոտրե, ես ինքս ալ մինչև հիմա բժիշկի պետք չեմ ունեցած՝ փա՛ռք Աստուծո... կներեք։ Մեր մեկ հատիկ տղան է, աչքերնուս լույսին պես խնամած ենք, օր մը օտարի անկողին չենք պառկեցուցած։ Քանի մը ամիսն ի վեր, ի՛ր պնդումին վրա զայն Եվրոպա բերի համալսարան մը դնելու, ուզեցի որ աշքովս տեսնեմ իր պառկած-ելած տեղերը։ Բայց հոս գալեն ի վեր կնիհարնա, բերանը ուտելիք չի դներ, ճիշտ է, որ այս տեղին կերակուրներն ալ ուտելիք բաներ չեն... կներեք։ Մեկնելես առաջ դինքը դյուղը նշանեցինք, ոտքը կապեցինք, որ աշքը դուրսը չբանա... Չեմ գիտեր որ լա՞վ ըրինք, թերևս անկե՛ց է իր սրտին ցավը...

Բայց ուրի՛շ բան կար այս խելացի մարդուն լեզվին տակ. միայն թե ըսելե առաջ՝ իմ բերանս կփնտրեր, կչափեր ու կկշռեր զիս, թե մինչև ո՞ր աստիճան պետք էր քակել իր լեզվին կապը...

— Կծխե՞ք, տոքթոր, մեր երկրի թարմ ծխախոտ ունիմ... աս ֆրենկներուն ծխախոտը տան ծակերուն մեջ թխելու է, որ մուկերը սատկին...

Իր միտքը ա՛յն էր, որ նախ մտերիմ մթնոլորտ մը ձևացներ, ու երբ կապուտակ մուխերը սկսան գալարվիլ, շարունակեց.

— Արդեն ես ձեր Եվրոպային ո՛չ մեկ բանին հավնեցայ։ Հոս գիտություն կա կ'ըսեն, բայց արդյոք հիներուն ըսած Գիտուբյան ծառը չէ՞... Այստեղ եկողը աչքերը գոցելու՝ միայն ականջները բանալու է, որ բան սորվի...

Խեղճը՝ երկրին լեզուն չգիտնալուն, այնպես կկարծեր, որ ականջի կողմեն վտանգ չկար։ Ու անդետ մարդերու պես, որոնք գիրքերու մեջ միայն պատկերները կտեսնեն ու գիրերը կ'արհամարհեն, ամբողջ եվրոպական քաղաքակրթությունը իր տեսած մի քանի պատկերներեն չափած, կշռած ու պակաս գտած էր. մանե, թեկեղ, փարեսի։

— Ես ձեզի բան մը ըսե՞մ, տոքթոր։ Այս տղան հոս որքան ալ մաշի՝ իրավունք ունի. ճիշտ խոսքը աս է։ Մե՛նք ալ երիտասարդ եղած ենք, բայց աղջիկ մը մեզ տեսնելուն աչքերը վար կհակեր, որ կայծ

չցայտե... Մե՛նք ալ պար պարած ենք, բայց մատերնիս կնոջ մատի չեն դպած, որ կրակ չելլա. ձեռքն ձեռք երկարող թաշկինակն ալ անո՛ր համար հասկցեք... Անցած գիշեր մեր պանդոկին մեջ բանկ կ'ըսեն, պար մը դարձան, բայց ան ի՞նչ պար, ի՞նչ շարժում, ի՞նչ գալարում, ի՞նչ շփում... մեղա՜, մեղա՜... Թե շո՛ւն ընե՝ կքարկոծեն... Ե՛ս ալ, տղա՛ս ալ կա՛ս-կարմիր եղանք, միա՛յն տեսնելով։ Գեղարվեստ ըսածնին ա՞ս է։

— Կներեք.— ըսի ամչնալով.— ձեր տեսածը միա՛յն կեղեն է...

— Բայց իմ վախս միջուկն է, տոմբոր։ Հոս, ուր հիսուն տարվան ալարկեշտութիւնս խոովեցավ, տասնըութ տարվան անփորձութիւն մը ի՞նչ կ'ըլլա... Այն Աստվածը, որ Եվան տղայության մը համար պատժեց, այս Սողոմին աղջիկները չի՞ տեսնար։ Ասոր երիտասարդութիւն կդիմանա՞, երբ հոս բաժակ մը գաբեջուրի դինով Սողոմոնին արժանի կիներ կգտնեմ։ Ըսե՛ք, այս չէ՞ միջուկը, թե չէ դարձյալ սխալ հասկցեր եմ...

Ի՞նչ ըսեի։ Անոնք, որ չեն հասկնար,կգուշակեն. անասնական բնազդն է այս նախնական մարդը կենդանական հոտառությամբ՝ մատը ճիշտ տղուն վերքին մեջ դրեր էր, առանց գիտնալու։

— Բժի՛շկ, եթե մեզ կ'արտոնես, ձագուկս առնեմ երկի՛ր դառնամ։ Փախչի՛նք Մեղքի քաղաքներեն։ Հոս երկնային հո՛ւր կտեղա, վարժվեր են ու չեն զգար... Կեսարին փողը՝ Կեսարին, մենք մեր լեռները դառնանք նորեն։ Ճակտիս վրա դեռ կնճիռ չկա, իմ գլուխն ալ լույսերու պես սպիտակ է, ինչո՞ւ մեր տղան մեզ պես չապրի։ Հոն սիրուն նշանած կա, տանիմ գլուխը կապեմ, թոռնիկներու մեծ-հայր ըլլամ։

— Ո՛չ, ո՛չ,— ըսի։

— Ինչո՞ւ, բժիշկ, աղքատ աղջիկ է, բայց ի՞նչ հրեշտակ. մազը մեռոն՝ բերանը կաթ կհոտի դեռ...

— Ո՛չ, ո՛չ, երբե՛ք, այդ պսակը պիտի չըլլա՛... Ոսկվո համար աղքատ աղջիկ մը ամբո՛ղջ կյանքով թունավորելն ալ մեղք չէ՞...

Երբ այս խոսքերը լսեց, երբ հասկցավ, որ տասնըութ գուրգուրանքով ու մայրական սուրբ ձեռքերով հասցված պտուղին մեջ որդը մտեր է ու երբ ըմբռնեց, որ իր բոլոր վախերը իրականացեր էին, այս պճլտուն ծերունին հանկարծ լռեց, տժգունեցավ, անէացավ, արդեն փոքրիկ՝ ավելի՛ պղտիկցավ, թիկնաթոռին մեջ կծկտեցավ, ողորկ երեսները ճմթկեց, ճերմակ պեխերը խածնեց, աչքերուն մեջ խոնավություն մը լեցվեցավ, ուռեցավ, պլտորեցավ, նախ կաթիլ մը, հետո ուրիշ մը, հետո ուրիշներ...

Հիմա հայրն ալ կուլար տղուն պես, բայց իր լացը որքա՞ն ավելի լուռ ու որքա՞ն ավելի խորն էր։

— Մեղքի՞ տուն... մեղքի՞ տուն... մեղքի՞ տուն...

Այս երկու բառերը անընդհատ կգլտորեին իր շրթներին՝ աչքերուն արցունքին հետ։ Հիմա ո՞ւր տաներ, որո՞ւ տաներ այս հիվանդությունն ու ինքնացանը։ Ծերունի մոր համբույրին ինչպե՞ս տաներ այս վարակումի ու փտության պատուղը։ Իր երեսուն տարվան պատվո տունը՝ մեղքի տունը պիտի ըլլար...

Ոտքերը թպրտացուց. իր կնոջ դարվան երջանկությունը կփշրվի անոնց տակ, ո՛ւ իր հայրության սերը, ո՛ւ իր մեծ-հայրության երազը...

Բայց որո՞ւ բարկանար, որո՞ւ պոռար. չէ՞ որ իր ձեռքով իսկ բերեր էր անփորձ տղան այս քաղաքակիրթ երկիրները...

— Որդնոտա՞ծ, որդնոտա՞ծ... հիմա կեղեն ալ տեսանք, միջուկին ալ համը առինք... իրենց գիտությո՛ւնն ալ, իրենց սե՛ռն ալ, որդնոտա՞ծ, որդնոտա՞ծ...

Երբ իր սրտին բոլոր դառնությունները դուրս թափեց, կարծես թեթևցավ իր ցավը, ձայնը հանկարծ պզտիկցուց, որ միգուցե տղան իմանա։ Կարելի չէ երևակայել, թե ամորի գաղափարը մինչև ո՞ր աստիճան արմատացած է գավառացի ուղեղներուն մեջ։

— Անշուշտ տղուս շրսիք այս դժբաղդությունը...

Ա՜խ, ինչպե՞ս հասկցնեի այս ծերունիին, որ ամոթալի հիվանդություն չկա, կեղծավորությո՛ւնն է ամոթը, ու տգիտությո՛ւնն իսկ է այս դժբաղդության պատճառը և ո՛չ թե իր նզուած գիտությունը։

Բայց ան ոտքի ելավ արդեն, աչքերը չորցուց, պնխերը սուրցուց, վայրկյան մը ճմռթկած գեմքը կեղծ փայլ մը ստացավ՝ բաղնիքեն նոր ելածի պես, գնաց քովի սրահեն տղան առավ ու ժպտելո՛վ մեկնեցան...

— Բժիշկը կ'ըսե, թե բա՛ն մը չունիս եղեր, տղա՛ս...

Լոզան

ԱՊՐԻԼԸ ՀԱՂԹԵԼ Է...

Ո՞վ մարդ, մտածա՞ծ ես երբեք այն հրաշալի բանին վրա, որ կյա՛նքն է։

Կ'ըսեն, թե համբույրներ կան, որ վա՛րդ կծըլեցնեն։ Վարդն ի՞նչ է. համբույրներ կան, որ մա՛րդ կծնցնեն։

Ծնողնե՛ր, ուսուցեք ձեր տղաներուն, թե իրենց մեջ Աստվա՛ծ մը կրնանա։

Ու վա՛յ անոր, որ մութ անկյուններու մեջ կխաթարե, կ'ապարտե,

կը թունավորե Կյանքի գործիքը։ Այդպիսին դժբա՛ղդ հայր մը պիտի ըլլա, եթե երբե՛ք հայր ըլլա...

Ապաժառանգ, պակասավոր, ցավագար, մելամաղձոտ, այսահար, ախտագին զավակներուն հաշիվը գինեմոլ ու ցոփակյաց հայրերո՛ւն հարցուր...

Այնքա՜ն փափուկ է սիրո պտուղը։

Խավարի մեջ բանտված այդ փոքրիկ մարմինը ո՛չ կտեսնե, ո՛չ կլսե, ո՛չ կխոսի, ո՛չ կշնչե։ Բայց այդ մսի կտորը բոլո՛ր սրտերե ավելի զգայուն է։

Այդ ապագա կյանքը՝ մայրական տխրութենե մը իր ամբո՛ղջ ճակատագրով կ'ազդվի։ Մորը սրտին մե՛ն մի կոչը իր փոքր սրտին մեջ կ'արձագանքե։ Ան ցա՛վն մը, խո՛ցն մը, ոչինչե՛ մը կրնա մեռնիլ մոր կենդանի արգանդին մեջ...

Բայց պիտի ապրի՛։ Ու ահա՛ վճռական ժամը, տառապանքի ու հույսի այն փոթորկա՛լի ժամը, ուր զավկի մը ծնունդը ու մոր մը մահը նժարին երկու աչքերուն մեջ իրա՛ր կկշռեն, վարանոտ տատանումներով...

Այրը արդեն հեռացավ, մեղավո՛ր անասունի մը պես։ Սարսափահար կինը միայնա՛կ է այն խոշոր Անծանոթին առջև, որ իր արյունեն սնուցյալ և որ վայրկյանե մը պիտի մեռցնե զինք գուցե...

Որքա՜ն երանելի է սակայն այսօրվան երախան. ան այժմ կրնա՛ հասկցնել իր լեզուն, կրնա՛ արտաքին աշխարհի հետ հարաբերության մտնել...

Կտեսնե՞ս սա Գիտության մարդը, որ գլուխը մոր որովայնին վրա հակած՝ մանուկին սիրտը կ'ունկնդրե։ Մանուկն անոր ականջին կա՛նխավ կպատմե իր տարիքը, իր հասակը, իր առողջությունը, գլխո՞վ, ձեռքո՞վ, թե ոտքո՞վ աշխարհ գալու իր որոշումը...

Ու ահա ծնավ։

Բայց որքա՜ն սիրուն է այս Անծանոթը, որմե մայրը կվախնար...

Մե՛կ էին, երկո՛ւք եղան ու իրարու կժպտի՛ն...

Աստղ մըն էր, որ աշխարհ ինկավ։ Սակայն երկինքեն իջնող հրեշտակին համար որքա՜ն դառնություններ ունի երկիրը։ Հացի փշուր մը բավական է զայն խեղդելու։ Պիտի կրնա՞ ապրիլ, թե միայն հյո՛ւր է...

Հարսանիքի, կեղծ-մաշկի, կապույտ հաղի, շառատենդի, ուղեղատապի զոհերուն հաշիվը սգավոր մայրերո՛ւն հարցուր...

Եթե ուժե՛ղ է, պիտի հաղթե՛ ու պիտի ապրի։

Բոլոր ախտերուն ու մահերուն մեջեն այդ կենսունակ մսակույտը իր ճամբա՛ն պիտի բանա։ Այդ դողդոջուն էակը, որ բզե՛ղ մը բավական

էր մեռցնելու, բոլո՛ր դժվարություններուն պիտի հաղթե, պիտի ուռճանա, թագավո՛ր պիտի ըլլա...

Ու ո՛չ թե աշխարհագրական կետի մը թագավորը, այլ աշխարհի՛ն թագավորը, ամբողջ կենդանական ցեղերուն, շնչավոր ու անշունչ էակներու թագավորը։

Երեկվան գառնուկը այսօր առյուծնե՛րը պիտի դողացնե ու վանդակներու մեջ պիտի բանտե դանոնք՝ իր զբոսանքին համար։

Լեռներուն պիտի հրամայե, որ խոնարհի՛ն, թե ո՛չ՝ անոնց փորոտիքին մեջեն պիտի անցնե իր երկաթե ճամբան։

Երկնքին պիտի հրամայե, որ լռե՛. եթե ո՛չ՝ շանթարգելով մը պիտի վիժեցնե անհնազանդ տարրերուն կատաղությունը. թնդանոթով մը պիտի փարատե ամպի ծոցին մեջեն սպառնացող կարկուտը...

Երկրին արգանդեն խավարին ոգիները դո՛ւրս պիտի կանչե. անկերպարան մետաղներուն պիտի հրամայե, որ ծռին, ձև առնեն ու աշխատի՛ն իրեն համար...

Արարչության կարգն ու սարքը պիտի փոխե։ Բնությունը զայն հո՛ղին դատապարտած էր, ան ծովերո՛ւն ու օդերո՛ւն պիտի իշխե։

Օվկիանոսներուն մեջտեղը թավալող անդրջրհեղեղյան լեռնանման վիշա՛պը պիտի հալածե։ Ամպերեն վեր ճախրող արծի՛վը պիտի սարսափեցնե իր սրընթաց սավառնակին վրա թառած...

Ահավասի՛կ թագավորը, տիեզերքին թագավորը...

Բայց որքա՛ն տկար, որքա՛ն խղճալի է ան...

Ա՛յն, որ երեկ օդերուն մեջ կ'արշավեր, այսօր սողունի մը պես անկողնին զամվե՛ր է, խղդուկ-խղդուկ կհազա... Աներևույթ թշնամիներ իր կոկորդը լեցուցեր, իր շունչը կղպեր են...

Թագավորը պիտի մեռնի՛, ու չի՛ հասկնար, թե ո՞վ է զայն մեռցնողը...

Սերունդե սերունդ վայրի գազանները կոտորեց, թունավոր ղեռունները անհետացուց իր ընակութենեն. մարդասպաններու համար օրենքներ շինեց ու չվաններու ծայրեն կախեց անհնազանդները... Ո՞վ է ուրեմն թշնամին, ուրկե՞ մտավ...

Բայց կտեսնե՞ս դուն նորեն սա Գիտության մարդը, որ հիվանդին վրա փափկությամբ կծռի, աննշա՞ն սրսկում մը կ'ընե սրունքին մեջ, վայրկենաբար միլիոնավոր մանրեներ կոկորդին մեջ կմեռնին ու կեցցե՛ թագավորը...

Ան մինչև այժմ միա՛յն տեսանելի թշնամիներուն դեմ պայքար մղեր էր, հիմա նոր խաչակրությունը մը կսկսի անտեսանելիներուն դեմ...

Որո՞նք են այդ խաչակրության զորապետներն ու իշխանները։

Անոնք ոսկեճամուկ զարդեր չունին։ Սուսերի տեղ սուր դանակ մը, ատրճանակի տեղ մանրադիտակ կա ձեռքերնին։

Մոլիերին հեգնած բժիշկները, որ դեռ երեկ արքաներուն ազիքները լվալո՛վ միայն կ՚ապրեին, այսօր ամբողջ երկրագունդի վրա ձեռք ձեռքի տվեր են՝ համամարդկային կյանքին պաշտոնյաները, վերջնական Հաղթության հուսատուները եղեր են։

Կտեսնե՞ս սա ծերունին, որ կատղած շունին երախեն ումպ մը լորձուներ կհավաքե՝ բննելո՛ւ համար։

Կտեսնե՞ս սա երիտասարդը, որ չա՞ր աշխարհներու մեջ կմեռնի՝ հնդախտին գազանիքը հափշտակելու համար։

Կտեսնե՞ս սա նոր Բրոմեթեոսը, որ խավարին ծոցեն ռատիումը դողնալով՝ իր ձեռքերը կ՚այրե այդ մոգական հուրեն։

Կտեսնե՞ս սա հայ գիտունն ալ, որ Ռեոնթկենյան ճառագայթներուն դիտակից զոհը կ՚ըլլա նոր Աշխարհին մեջ։

Բայց դեռ ի՞նչ անանուն բժիշկներ կան, որ ուրիշներո՛ւ կյանքին համար կմեռնին, անգիտացվա՛ծ...

Արդյո՞ւնքը...

Մոռցա՞ր ուրեմն այն օրերը, ուր ամբողջ ժողովուրդ մը՝ իր արքաներով ու ասպետներով, վերքերու մեջ կիտեր։ Այն քսան հազար բորոտնոցներեն, որոնք Եվրոպայի մակերեսը կծածկեին, այսօր հա՞ մը իսկ չէ մնացեր...

Ժանտախտը, Մաղկախտը, Հնդախտը՝ դժոխքեն փախած այդ երեք Աստվածները, որոնք մեկ օրվան մեջ անթիվ բանակ մը սրե կ՚անցնեին, ա՞լ չեն դորեր ոտք կոխելու այս անծայրածիր Եվրոպան, զոր բժիշկնե՞ր կպաշարեն։

Անոնք պահակներու պես կհսկեն քաղաքակրթության սահմանագլխին վրա։ Ու որպեսզի ժողովուրդներ կարենան հանգի՞ստ քնանալ, իրենք անքո՛ւն կսպասեն խրամատին վրա, նենգ թշնամիին դեմ ճակատ ճակատի...

Այս անհավասար կռվին մեջ, որ անգե՛ն մարդը կատղած Աստվածներուն դեմ կմղե, հաղթությունը մե՛ր պիտի ըլլա...

Առջի օր Մաղկախտն ու Կեղծմաշկը անձնատուր եղան։ Երեկ կապտադեղությունը խեղդվցավ։ Այսօր Ժանտատենդն ու Ֆրանկախտը հաղթվելու վրա են։ Վաղը Թոքախտին է կարգը...

Հիշե՛ Սպարթացի մոր խոսքը. «վահանո՛վ կամ վահանի՛ դվրա»։ Պիտի հաղթես կամ պիտի հաղթվիս. ուրիշ ճար չիկա...

Բժիշկնե՛ր, սորվեցուցեք ձեր հիվանդներուն, որ քաջ ըլլան, ապրիլը հաղթել է։ Հուսահատներուն համար այս կյանքին մեջ տեղ չկա...

Վա՜յ հոգևոր ու մարմնավոր տկարներուն, վա՜յ երկչոտներուն, վա՜յ հոռետեսներուն, վա՜յ թերահավատներուն։ Վատերուն համար այս աշխարհին մեջ տեղ չիկա...

Հոգնա՞ծ ես. տո՛ւր ինծի քու ձեռքդ։ Որովհետև եթե կյանքի պայքարը տիեզերական օրենք է, իրեւզնությունն ալ կենդանական բնա՛գդ է։

Մենք երգելո՞վ երթանք Վաղվան։

«Մահվան» չե՛մ ըսեր, որովհետև Հիվանդութենե մը մեռնիլը այնքա՞ն անբնական ու անիրավ է, որքան արկածե մը մեռնիլը...

Բոլո՞ր երկիրներու ախտավորներ, իրա՛ր միացեք, ձեռքձեռքի տվեք, կազմակերպվեցեք մե՛ծ հաղթության, Կյանքի՛ն հաղթության համար...

Հառա՜ջ, ապրիլը հաղթե՛լ է...

ԹՈՔԱԽՏԱՎՈՐԸ

Դուրսը խավար գիշեր էր. անձրևը կ'երգեր ապակիին վրա։

Մենք լռի՛կ մտիկ կ'ընեինք Կյուրճյանին, որ հաղիվ լսելի ձայնով մը կխոսեր, խոսելն ավելի կատվի մը պես կխռկար։

— Անգամ մը, տարիներ առաջ, դեռ նոր սանաթորիում մտեր էի. Ինձմե շարաթ մը վերջ օտար հիվանդ մըն ալ եկավ հոն։ Ո՛վ գիտե ի՞նչ հեռավոր ծովեր կտրած անցած վիրավոր թռչունի մը պես մեր սարն էր ինկեր կյա՛նք փնտռելու։ Բայց ա՛յդ իրիկունն իսկ իր անկողինը հեռացուցին մեր սրահեն։ Ամբողջ գիշերը աչքս չի կրցա գոցել. կտնանեի այդ խե՛ղճ դատապարտվածը, որ ա՛յդ գիշեր, ա՛յդ ժամուն, թերևս ա՛յդ վայրկյանին կմեռներ, պաղն երեսին, շա՛ն մը պես... Ու իրա՛վ ալ մեռեր էր։ Ո՛չ իր ազգությունը գիտեին, ո՛չ իր անունը, ո՛չ իր հասցեն...

— Մեռելը մեռե՛լ է,— ընդմիջեց բժիշկը, ան ազգություն չունի, իր անունը դիակ է, իր հասցեն գերեզմաննոցը...

Հետևյալ առտու, մութն ու լուսին, այդ փակ նամակն ալ կ'երթար իր հասցեին... Դագաղին կառքը կճռար. կառապանը կուլեր սարերուն, քարերուն. գեր ձին լերան գլուխը կբարձրանար՝ աջեն ու ձախեն կանաչ խոտ մը փրցնելով։ Ու ետևեն ես կ'երթայի մինչև թոքախտավորներու գերեզմաննոցը. ու վիզս շալերուն մեջ, խղդուկ-խղդուկ հաղալով, էհեհե՜, էհեհե՜... կխորհեի, կխորհե՛ի...

Իր կոկորդը այնքան հոգներ էր, որ խոսքի շարունակությունը խլչր-

տումի մը պես անհասկանալի անցավ։ Բայց արդեն բոլորս ալ քով քովի սղմված էինք։ Իր ցած ձայնեն վանկ մը չփախցնելու վախով ո՛չ մեկը իր շրթները կմոտեցներ թեյի գավաթին։ Տարուկ շոգին կրարձրանար, կծառանար, մտերիմ մթնոլորտ մը կկազմեր։ Ան շարունակեց.

— ...Կխորհեի, որ ե՛ս էի այդ դագաղին մեջ պառկած մարդը ու անհո՜ւն երախտագիտություն կզգայի այն անծանոթ մարդուն, որ դիակիս կհետևեր... Այն օրեն ի վեր ես հետևեցա սանաթորիումի բոլոր դագաղներուն... բացի մեկեն...

Իր բառերը նորեն անհասկանալի եղած էին։ Խոսիլը արգիլված էր իրեն։ Դեմքը խոժոռ շարժում մը ըրավ. վզին երակները կապույտ մատերու պես ուռեցան, երեսը կարմրեցավ, մթնցավ, անվերջանալի խըզդուկ հազ մը սկսավ, էոհեռ՝, էոհեռ՝...

— Տուն երթամ պառկիմ,— ըսավ երկու հազի մեջեն.— այս ցուրտ օրով դուրս ելլելս ալ մահացու սխալ մը թերես...

Ու ելավ գնաց։ Հիմա ամենքս ալ շրջապատեցինք բժիշկը՝ ամբողջ պատմությունն իմանալու համար։

— Ժամանակին այս երիտասարդն ալ ձեզի պես առույգ ու գեղեցիկ էր,— պատմեց բժիշկը։— Նախ տժգունեցավ քիչ մը. բայց այդ գույնը աղնվական այնպիսի բան մը կուտար իր դիմագիծին, որմե հետու էր գանգատելե։ Հետո հազ մը սկսավ. հազ ըսածս՝ աննշա՛ն բան մը, հազիվ լսվելիք։ Քանի մը ամիս վերջ քրտնել մը եկավ վրան, ան ալ միա՛յն գիշերները. «վերմակներուն մեջ շատ փաթավելես է»,— կ՚ըսեր... Ճիշտ է, որ երբեմն ձախ կողին մեջ թեթև ցավ մըն ալ կար. ասեղներու տրցակի պես բան մը, բայց բոլորովին անցողակի, հովի պես փոփոխական ցավ մը։ Սակայն վերջիվերջո ինչ որ ամենե՛ն շատ կնեղեր իր սիրտը՝ ձայնին խոպոտությունն էր. մարած ձայն մը, որ ճիգով կ՚ելլեր. կարծես թե խուխ մը չորցած փակած ըլլար կոկորդին մեջ... էոհե՜ռ, էոհե՜ռ։

— Այդ նշաններն իմ վրաս ալ կան, բժի՛շկ, ու եթե վախս ճիշտ է, ես իրեն պես տարիներով չեմ կառչիր կյանքին...

— Շատ մի՛ շտապեր, ու թող որ շարունակեմ,— ըսավ բժիշկը։— Սկիզբները չուզեց հետևել խորհուրդներուս։ «Բժիշկները արդեն ամեն տեղ հիվանդություն կտեսնեն»,— կ՚ըսեր։ Բայց երբ խելքը գլուխը եկավ, շա՜տ ուշ էր արդեն։ Թոքախտը թոքերեն բարձրացեր, կոկորդը լեցուցեր, ձայնը կղպե՛ր էր... Շատ չերկնցնեմ. ահավասիկ տա՛սը տարիներե ի վեր այս մարդը կտառապի, կմնանի, պիտի մեռնի... Հիվանդանոցե հիվանդանոց, բժիշկե բժիշկ, ամառները Այպյան լեռներուն վրա, ձեռները նիսի մեջ փնտռելով իր արևը, այս եղեռանի կմախքը

տա՛ր տարիներե ի վեր կփախչի իր Մահեն, ա՛յն Մահեն, որմե փախչիլ չի կա՝ կ'ըսեն...

— Բայց ի՞նչպես...

— Տասը տարիներե ի վեր ամեն շաբաթ, երբեմն ամե՛ն օր, ամեն տեսակ մասնագետներ կ'այրեն իր կոկորդը... Զեզմե ո՛չ մեկը կ'երևակայե այն ամենօրյա սարսափը, որ այս տեսակի հիվանդներուն ուղեղին մեջն է. մի՛շտ ու ամեն վայրկյան մեռնելու սարսափը... Դրվագ մը պատմե՞մ...

— Պատմեցե՛ք, պատմեցե՛ք...,— խնդրեցինք միաբերան։

— Անգամ մը լսեր էր, որ իրեն պես հիվանդ մը գործողության ենթարկվելով լավացեր էր։ Լոզանի մեր հիվանդանոցը եկավ։ Զեզի չպիտի ըսեմ, թե ինչպե՞ս մեզ համբուրեց ու հետին հրաժեշտը տվավ՝ երկաթե սեղանին վրա պառկելե առաջ։ Մեղրամոմի գույն մարմին մը. Մարմին ըսածս՝ կմախքի վրա ճմոթված մորթ մը։ Գթության քույրերը ճերմակ կտավ մը փաթեցին իր վրա՝ պատանքի մը պես։ Ու այսպես, անշա՛րժ պառկած, կյանքին ու մահվան միջև կախված կսպասե՞ր...

— Ինչո՞ւ...

— Կսպասեր, որովհետև գործողության սրահին մեջ իրմե առաջ ուրիշ մը կար, որ կկարենի. երբեմն երկաթ դռներեն սուր ճիչ մը կը լսվեր ու կխեղդվեր։ Վերջապես այդ գործողությունը գեղ անցավ, այդ մարդը մեռավ, ու Կյուրճյանին գործողությունը մյուս օրվան հետաձգվեցավ։ Այդ դիշեր մինչև լույս խեղճը մահվան երազներով տանջվեր է ու առտուն կանուխ հիվանդանոցեն փախեր է...

— Է՛հ,— ընդմիջեց դարձյալ դեռատի ուսանողը.— Մեռնիլը լավ չէ՞ այսպես ապրելեն... Ալ ուրախություն, ժպիտ, սեր կրնա՞ ըլլալ այսպիսի կյանքի մը մեջ...

— Կրնա՞ ըլլալ, կրնա՞ ըլլալ,— ըսավ բժիշկը։— Ու ահա թե ո՛ւր պիտի կապեի խոսքս։ Այս թոքախտավոր երիտասարդը թոքախտավոր աղքատ աղջիկ մը կսիրեր, չդտնվելիք գեղեցկություն մը, որ չեմ գիտեր ո՞ւրկե գտեր էր ու իր դրամով, իր սանատորումին մեջ կպահեր։ Այսպես երկուքն ալ կ'ապրեին սարին վրա գաղտնի սերով։ Ալ հազա՞ր հազ, հազար ցավ ի՞նչ կրնան արժել այս անմահական սիրուն քով։ «Բոլո՛ր ունեցածս պիտի ծախեմ,— կ'ըսեր.— մինչև որ այս խեղճ աղջիկը քիչ մը առողջանա ու ա՛յն ատեն, այն ատեն... երկուքս ալ թոքախտ, իրարմե ի՞նչ վախ ունինք...»

— Բայց ներելի՞ է, բժի՛շկ։

— Այս աշխարհին վրա երջանկությունը անշուշտ ներելի չէ... Աղջկան ամուսնությունը արգիլած էին բժիշկները, բայց սիրո առաջ

բժիշկը ո՞վ է... Գարնան գիշեր մը ծառերն ու ծաղիկները խարեցի՞ն դիրենք. ինքզինքնին առո՛ղջ ու կայտա՛ռ կարծեցին. այդ երկու մահվան դատապարտվածները իրար ձուլվեցան. տարիներե ի վեր գոպված սերը ահագին ուժով պոռթկաց... Բայց ի՞նչ էր այդ թանձր ու տաք հեղուկը բարձին վրա. արենախոնո՞ւմ մը... Ու կույսը իր հիմնյան անկողնին մեջ մեռեր էր...

— Վա՜հ...

— Հետևյալ առտուն գազաղակաղ մրն ալ կճռաբ սարի կողեն. Կյուրճյան չէր հետևեր անոր, առաջին անգամը...

Սարսափած իրարու երես նայեցանք։ Ամենքս ալ տժգուներ, բարացեր, մահացեր էինք։

Դուրսի հովը թող ոռնա՞ր, թող անձրևը երգե՞ր ապակիին վրա, թող ծառեր շաչեի՞ն. մենք լուր էինք։ Ո՛չ ձայն մը, ո՛չ շարժում մը։

Մեզի կթվեր, թե մե՛ր մեջտեղը. թեյի սեղանին վրա պառկած էր այդ կույսին դեռ տաք դիակը։ Ու սուրբ մարմինը կոխոտելեն կփախչեր ուրվականը այն թափառական հիվանդին, որ տասը տարիներե ի վեր կփախչեր իր Մահեն, ա՛յն Մահեն, որմե փախչիլ չի կա՛...

Լոգան

ՄԵՌԵԼԻՆ ՆՇԱՆՏՈՒՔԸ

Գարեջուրը այնքա՜ն թարմ էր, այնքա՜ն թարմ։

Մեռնելու չափ խմեցին։ Ու երբ ա՛լ տեղ չմնաց, փսխեցին ու նորեն խմեցին։

Պապովյան իր ամենեն զվարթ սրամտությունները թափեց այդ գիշեր մեր գլխուն։ Աղոնց ինքզինքը անգամ մրն ալ արդարացուց իր բնական վերջին անհաջողություններուն համար։ Միկեր երազեց սովորականին պես.

— Հինգ հա՜տ ունիմ, հինգ հա՜տ, ձեռքիս հինգ մատներուս պես. մեկը խարտյաշ է, մյուսը ավելի ոսկեգույն, երրորդ մը՝ ապանիական այրող տաքությունով, ու Լուիզը, ու Ակաթը...

Ան որ այսպես կխոսեր, երկրաչափության ուսանող մրն էր։ Բանապաշտ ու գյուրզգած երիտասարդ՝ իր սովորությունն այնպես էր, որ բաժակ մը պարպելուն պես, սիրային սուտեր կշարեր, իբրև տեսակ մը անկատար հղություն և վիժում...

Միկերը տեսնելուդ, իր ածիլված բարակ շրթներին ու հոգնած երիտասարդի խարտյաշ այլ կես-ճաղատ գլուխեն երբեք պիտի չկրնայիր

հետեցնել, որ ան, պարզապես, սրբագրված... Մկրտիչ մըն էր։ Պոլսեցի էր և Միկեր կ'ըսեին, իրեն հաճույք պատճառելու համար։ Արդեն Մկրտիչ բսելուդ պես, կձգեր, կ'երթար...

Երբ խոսակցությունները հատան և երբ գարեջուրին շոգիները ըսկսան քունի սպառնալիք մը պատցնել խրախճանքի սեղանին շուրջը, Պապաջանյան, իր բերանին ջուրերը վազցնելով, սկսավ այնպիսի պատմություն մը, բայց այնպիսի պատմություն մը, որ օրիորդ Թամարային ականջներուն ծայրերը սկսան կարմրիլ...

Այս տպավորությունը ծածկելու համար էր, որ բժիշկ մը, իսկույն մահվան պատմություն մը նետեց մեջտեղ։

— Ես ոուս բարեկամ մը ունեի,— ըսավ.— առողջ և հսկա, գարեջուրի տակառի մը պես։ Օր մը պետք եղավ, որ բժշկական գործողության մը ենթարկվի, բայց անպատճառ ուզեց, որ իր դասընկերները մարեցնեին գինքը, բա՛ն սորվելու համար։ «Ձե՞ս վախնար» կ'ըսեինք մեր դանակները ցուցնելով։ Իսկ ան՝ իբրև ամենքին պատասխան, ժպտելով կ'ոլորեր իր շեկ պեխերը։ Մերկացուցինք, պառկեցուցինք, մարեցուցինք. հետո կտրեցինք, մաքրեցինք ու կարեցինք։ Ամեն ինչ հիանալի անցավ, այնքան հիանալի, որ վստահ էինք, թե ա՛լ ցավ պիտի չզգար աղիքներուն մեջ։ Ըրինք այս ամենը, բայց... մեյ մըն ալ չըկրցա՛նք արթնցնել... Կատակ, հրմշտուք, պոռչտուք անօգուտ մնացին։ Մարդը շենքով-շնորհքով մեռեր էր...

Դեմքերը թթվեցան։ Գավաթները պարպվեցան։ Ա՛լ սակայն խոսակցությունը առաջ գնաց այս ուղղությամբ։

Մեկը պատմեց, թե ի՛նչպես իր պապը, գիշեր մը, մոմը փչած ատեն փչած էր նաև... իր հոգին։

Ուրիշ մըն ալ ըրավ իրենց գյուղի գիշերապահին զվարճալի պատմությունը։

— Քառասունենց, գունդիկ, առողջ մարդ էր,— ըսավ։— Օր մը մեր տունն էր եկեր Գլխու ցավ մը ուներ։ Մեծ մայրիկս ձեռքը անոր ճակտին դրավ և աղոթեց, փչեց ու շփեց։ Բայց երբ ձեռքը վերցուց ճակատեն, գիշերապահը փայտի մը պես գետին ինկավ...

Քրքիջները նորեն բարձրացան, գավաթները նորեն զարնվեցան։ Ցուրաքանչյուրը սրամիտ բան մը կգտներ պատմելու մահվան վրա. իրենց հո՞գն էր, թե նշանտուքի սեղանի մը առջեր կգտնվեին և հետևաբար պետք էր ավելի զվարթ բաներու վրա խոսեին։ Չէ՞ որ ամեն բան զվարթ էր իրենց աչքին՝ այնքան անմիտ, որքան զվարթ, կյանքն ալ, մահն ալ...

— Բայց քիչ մըն ալ ուրիշ բաներու վրա՛ խոսեցեք,— կ'աղերսեր

Թամարա.— ամենքդ ալ մահվան վրա կխոսիք։ Գրավի կուգամ, որ մեկը պիտի մեռնի այս գիշեր, այս նշանտուքի գիշերը...

Եվ որովհետև ժամանակը չէր անցներ, հակառակ գարեջուրի անհատնում շիշերուն, մեջերնեն մեկը առաջարկեց՝ ձեռք ձեռքի տված փայտե փոքրիկ սեղան մը դարձնել, զոնե այդ ձեռով հասկնալու համար, թե ո՞վ պիտի մեռնի այդ գիշեր... ոգեհարցությամբ։

— Թը՛ք, թը՛ք, թը՛ք...— կպատասխաներ սեղանը մեր հարցումներուն։

Ատեն մըն ալ այսպես անցուցինք, մինչև որ, մահու դույժի նման լսելի եղավ զանգակի մը ձայնը.

— Տա՛ն, տա՛ն, տա՛ն...

Սեն Փիերի զանգակատունն էր, որ լսելի կ'ըներ կես գիշերի իր տասներկու հնչյունները՝ հստակ հստակ։ Սենյակը բոլորովին լուրջ կերպարանք մը առավ։ Օրիորդը, որ հայտնորեն ջղայնացած էր մահվան խոսքերեն և ոգիներու փորձերեն, դուրս ելավ սենյակեն։ Անոր հետևեցավ նշանածը։

Պապովյան կծկվեցավ։ Ադոնց իսկույն պարպեց իր վերջին ումպը։ Միկեր սատանային տվավ իր «հինգ հատ»ը։ Ապա, սեղանին մեջտեղը, լամբարին երկու կողմերը, գարեջուրի շիշերու բերնին փակցվեցան փոքրիկ պլպլուն մոմեր։

Քիչ ետքը դուռն էր ճռնչեց, բացվեցավ և երկու նշանածներ, որոնք քիչ առաջ սենյակեն դուրս ելած էին, հիմա ներս մտան ճերմակ ու սև հագված, կոկված, փոխված։

Երիտասարդը Պապաջանյանն էր, քիչ մ' առաջվան աղի պատմության հեղինակը։ Ասիկա կպատկաներ դասակարգին այն ուսանողներու, որոնք ապահովաբար կկազմեն մարդկության ամենեն երջանիկ մասը՝ ճավերժական ուսանողի տիտղոսին տակ։ Ոչ ոք ճիշտ կերպով չէր գիտեր, թե երբե՛ն ի վեր սկսեր էր իր ուսումը։ Իսկ թե ե՞րբ պիտի ավարտեր, այս հարցը կրնար հետաքրքրել ամենքը, բացի իրմեն։ Իր կապույտ, կլոր աչերը, հավիտենապես ժպտուն իր կարմիր դեմքը և իր գունդիկ, կլորիկ փորը՝ տարիներու ընթացքին գարեջուրի փրփուրներով փքացած, երջանիկ տպավորություն մը կ'ընեին մարդուս վրա։

Իսկ օրիորդը՝ Թամարան, կպատկաներ համեստ դասակարգին այն կովկասուհիներուն, որոնք Եվրոպա կուգան, ընկերային գիտությունները կսկսին և ամուսնանալով, կես ճամբեն ետ կդառնան։ Ջարաճճիներ իրեն համար կպատմեին, թե Պապաջանյանը գտնելե առաջ բավական սիրտեր հալեցուցած էր և հետո իր սիրտը կապած էր Ծվալայա կոչվող վրացի ուսանողի մը։

Բայց այս բաները մոռցվեր էին այս գիշեր։ Ու երկուքն ալ, երբ՝ ալ, իրենց սև ու սպիտակ տարազներուն մէջ և այս նշանաւորի տեղեկական հանդէսին այնպիսի մը շնորհ ունէին, որ դիտող մը, բոլոր շերու մէջ դյուրաւ պիտի տեսներ արցունքի պես զողզոջուն բան մը, ոչ թէ սահեր, այլ կլճանար...

Երբ, կարգով, ուսանող նշանածները, իրենց ուսանող հրամիրյալներուն հետ պագուեցան, այսպէսով մարդոց առջև հռչակելու համար տենց սրտերուն ազատ միութիւնը, Դրենց, մեջերնուս է՛ն տարիքոտը, իլիսոփայութեան քառասունոց ուսանող մը, դնաց, վերարկուին գրպանեն հին գիրք մը հանեց և հարմար հատուած մը կարդաց Նիցշեեն։

— Այսպէ՛ս խոսեցաւ Զարադուստրա...

Զարադուստրայեն վերջ, հանկարծաթափ, միաբերան և կոկորդաբեր երգ մը փրթաւ.

«Մեր հայրենիք, թշվառ անտեր,
Իր թշնամեաց ոտնակոխ...»

Եվ երբ երգը կարոտ հառաչներու մէջ մնաց՝

— Դաշնա՛կ կ՚ուզենք, ուրախ կտո՛ր մը կ՚ուզենք, օրիորդ Թամարան կ՚ուզենք,— գոչեցինք ամենքս ալ։

Օրիորդ Թամարա շատ աղաչել չտվաւ, այլ շնորհալի կերպով տեսավորվեցաւ դաշնակին առջև։ Փակեց նոթերուն գիրքը և մարեց լույսը։ Սկսանք, ամենքս, գինովնալու պես մեյմեկ անկյուն կծկվեցանք։ Այն տեղն, կիսաստվերին մէջ, իր նիհար ու մեղկ թևերը սկսան դանդաղանդաղ ծփալ գետի մը վրայեն սավառնող մեծ թռչունի մը պես, որ իր լայնաբաց թևերուն ծայրովը, ալիքներուն անհուն տավիղը կշոյեր... զգայինք, որ ամենքս ալ կվերանայինք...

Նախ քանի մը վանկ դաշնավոր հեծեծ և հետո ձայնի ծփծփուն խաղ՝ թրթռուն ու տարտամ, ապա երկդիմի նոթեր վարանոտ, տարակուսական և անհանգստացնող դաշնութիւն մը խոլ, ելեկտրացած մթնոլորտ մը ծանր, ի վերջո գոչում, ու հետո մրրիկ, փոթորի՛կ...

Հանկարծ՝

— Թա՛ք, թա՛ք, թա՛ք,— ձայն մը լսվեցաւ։

Դաշնա՞կն էր, հո՞ն էր, անձրևն էր, դո՞ւռն էր...

Ոչ ոք տեղեն երերաց։

— Թա՛ք, թա՛ք, թա՛ք,— կրկնեց ձայնը անգամ մըն ալ։ Ու սանդուղքներեն վեր ելլելու ձայն մը, տախտակամածին վրայեն քայլերու դրձագանք մը հասաւ մեր ականջներուն։ Ու հանկարծ դուռը ճռռաց։ Լեժգին հովի պես բան մը խուժեց սենյակին ներս ու մարեց գարեջուրի

շիշերուն մոմերը։ Փուշ-փուշ եղան մեր մարմինները։ Անտեսանելի մեկ անպատճառ կ'ուզեր զոնեն նեբս մտնել։ Պատրա՞նք էր, թե՞ գինովութիւն։ Ոչ ոք հասկացաւ։ Եվ ոչ ոք տեղեն երերաց։

Թամարան, իր մերկ թեերը մթութիւնի մէջ բացած, այսահար ո հսկա թռչունի մը պես ջղաձգորեն կծնծեր հիմա դաշնութիւնց ծովը։

— Խե՜նթ ես, Թամարա,— ըսաւ վերջապես նշանածը.— ուրախութիւնն գիշեր մը Շոփենի մահերգը կդարնե՞ն...

— Ուրիշ կտոր մը չե՞մ կրնար,— պատասխանեց աղջիկը տժգունած։— Ինձ կթվի, թե մութին մէջ մեկը ձեռքերես բռներ է ու կհրամայէ նվագել այս մահերգը... Այս գիշեր անպատճառ մեկը իր հոգին կ'ավանդե...

— Անանկ է նե, իրենց հոգիները ավանդողներուն կենացը,— կատակեց Պապովյան՝ իր բաժակը փշրելով։

Ապակիի կոտրտուքի այս շռնդալից աղմուկը կարծես թե վանեց սենեակեն մթափի ու մղձավանջի նմանող այդ բանը։

Լույսերը նորեն վառվեցան, գավաթները նորեն պարպվեցան։

Եմեցինք նախ նշանված զույգին կենացը։ Հետո աշխարհի բոլոր նշանածներուն կենացը։ Հետո յուրաքանչյուրը իր սիրականին կենացը։ Հետովոր ու մոտավոր բոլոր աղջիկներուն կենացը։ Գարեջուրը ստեղծողին կենացը։ Ճափոնուհիներուն կենացը... Հերիք էր որ պարպվեին գավաթները։

— Ովալյան մոռցանք,— բաւ հանկարծ նշանածը։— Եմենք անոր ալ կենացը։ Ինքն էր, որ առաջին անգամ ծանոթացուց զիս Թամարային։ Ի՞նչ կ'ընեմ հիմա խեղճը, ձմեռ ատեն, սարերուն գլուխը միս-միանակ... Կեցցե՛ Ովալյան...

— Կեցցե՛ Ովալյան,— արձագանքեցինք ամենքս ալ, մեկ բերան։ Եվ այդ վայրկյանին, այդ բառը կախվեցավ-մնաց օդին մէջ։ Ա՛լ կարելի չեղավ ուրիշ բանի մասին խոսիլ։

Ովալյա՜ն...

Լոգանի մէջ ո՞վ չէր ճանչնար լայն ու թիկնեղ, երեք մարդու հասակով ու կարմիր մորուքով այդ «Վրացի Հսկան», ինչպես կկոչեին զինքը մտերմորեն։

Ովալյա՜ն, գեղեցիկ տղամարդը, սարերու հսկան...

Հսկա՞ն...

Բայց չէ՞ որ այս աշխարհի իրական հսկան, անընկճելի ու ահավոր այն է, մանրիկ, փետուրի պես թեթև ու ճղրիկ այն արարածը, զոր գեղեցիկ առտու մը, բարին Աստված ստեղծեց մեր կողեն, իբրև «կին զոդզոջ էակը...»

Սվալայա ուշ ըմբռնեց այս ճշմարտությունը։ Եվ, իր տիտանի ուժեղ-ություն, իր հարուստ կազմին ու երկաթյա դնդերներուն ամբողջ եռանդովը ենձնատուր եղավ այն բոլոր բաներուն, որոնք Գիտությունն ծառ անուն-ով կ'արգիլվին։

Շատ անգամներ, կնս գիշերներն Լաբ, կլսեի զինքը, երբ երկա՜ր-բիկա՜ր կուլեր պատուհանիս տակ.

— Փիո՜ւ... Տոքթո՜ր, Տոքթո՜ր, դուռդ կբանա՞ս և մեկ գիշերվան համար անկյուն մը կուտա՞ս ինծի... տունս այնքան հեռու է...

Դուռը կբացվեր։ Վրացի Գողիաթը կշտանար հիվանդի քանաբեխ վրա եղմեցնել իր հսկա մարմինը։ Ալբոլին լույսով աղքատիկ թեյը կ'եռար մերկ սեղանիս վրա։ Օ՜հ, անուշիկ, սիրային պատմությունը, որ ծայր լուսաբ այն ատեն, մոմի լույսով... Պատմությունը, որ կտաքնար, լ'ոգեներեր, որ կ'երկարեր, կհոգներ, կ'իյնար, մինչև որ երկուքս ալ լքնանայինք առանց զգալու։

Ու այս կյանքը՝ անքուն ու անսնունդ, փողոցի փողոց և անկողինե անկողին այս կյանքը ամե՛ն գիշեր էր, երեք տարի։

Անգամ մըն ալ, այսպես, քանաբեխ վրա քնացած պահուն, իր հեի-հե շնչառությունն ու քրտնաթոր ձեռքերը մատանջեցին զիս մինչև լույս։ Առավոտյան ստիպեցի զինքը խոստովանիլ, թե բավական ատենե ի վեր գաղտնորեն արյուն կթքներ։

Այդ օրեն ի վեր ոչ ոք տեսած էր զինքը։

Ու օր մըն ալ աներևութացավ քաղաքեն։

Ուսանողները այնպես կհավատային, թե հեռավոր գյուղ մը քաշվեր էր՝ քիմիագետի իր վերջին քննություններուն պատրաստվելու համար։ Մենք՝ իր մտերիմները, սակայն գիտեինք, թե ան Լեյդենի բուժարանը դացեր էր դարմանվելու, աղքատության պատճառով մերժվեր ու ստիպվեր էր մոտակա գեղջուկ ընտանիքի մը մեջ, գետնին վրա փոքրիկ սենյակ մը վարձել։

Ասոր համար էր, որ Պապաջանյան իր բաժակը կ'առաջարկեր Սվալայայի կենացը։

Թամարա տժգունեցավ։ Նախապես, վրացի Գողիաթին խոստացեր էր ան իր սիրտը, բայց տեսնելով, որ ան բուժվելիք չունի, կնշանվեր հիմա անոր բարեկամին հետ։

Այսպես խոսակցելու վրա էինք այդ գիշեր, երբ հեռուն հեռու աքաղաղի մը ձայնը օդը ճեղքեց։ Դուրսը լուսցեր էր արդեն։

Պապաջանյան, ապակեփեղկերը բացած պահուն, վարը, դրան առաջին վրա քառակուսի թուղթ մըն էր տեսեր։ Գնաց իսկույն և վեր բերավ։ Լեյդենեն քաշված հեռագիր մըն էր, դոր, գիշեր ատեն, ցրվիչը զուր

փորձեր էր դուռը զարնելով մեղի հանձնել և սեմին վրա ձգած գացած էր։

Բացինք պահարանը։ Սվալայա մեռած էր...

Մեռա՞ծ էր միս-մինակ, պատն երեսին, ինչպես կ'ըսեն պանդուխտներուն համար... Ու թաղված էր կամ պիտի թաղվեր այդ օրը, մարդն հեռու, թոքախտավորներու փոքրիկ գերեզմանի մը մեջ, սարերու վրա, ձյուն-ձմեռով, բուք-բորանին...

Յուրաքանչյուրը իր հիշատակները արթնցուց և արցունքը վերբերու դպավ։

Ու պատմեցին, թե Սվալայա աղքատիկ ծնողքի դավակ էր. մայր մը և քույր մը ուներ միայն, որոնք տեղ ու տուն և ամեն բան ծախած էին անոր ուսումնքին համար, ապագային համար։ Թե երկու ամիս միայն կմնար ավարտելու իր ընթացքը։ Եվ թե այնքա՞ն խոստմնալից էր խեղճ երիտասարդին ապագան, այնքա՞ն փառավոր...

Հետո, երբ քիչ քիչ մտքերը ընտելացան մահվան գաղափարին հետ, Թամարա աչքը կղպելով կակազեց.

— Ուրեմն երեկ դիշեր դաշնակին վրա իմ ձեռքերս բռնողը ինքն էր... ի՞նքն էր...

Ու ահագին, բայց ահագին, ահագի՞ն լաց մը սկսավ ջղաձգորեն ցնցել իր վտիտ մարմինը։

Այսպես փակվեցավ այդ դվարթ դիշերը, ուր մենք, անդիտակցաբար տոներ էինք մեռելի նշանաւոր մը...

Լոզան

ՍԱԹԵՆԻԿԸ

— Պոլիս եկաք՝ աղեկ բրիք, Տոքթո՛ր։ Ինչ որ ալ ըսեն, մեր Պոլիսը մեկ հատիկ է իր աշխարհագրական դիրքով։ Իր ջուրերը տեղ մը չկան։ «Երբ աշխարհ իմս ըլլար, Պոլիսը մայրաքաղաքս կ'ընեի»,— ըսեր է Նափոլեոն։ Միայն եթե այստեղ գեշ բան մը կա, ան ալ սպասուհիներն են։ Լավ սպասուհի ունեցող տունները մատով կցուցվին հոս։ Մանավանդ ձեզի համար, որ Եվրոպայեն կուգաք բժշկություն ընելու, այս հարցը մահու և կենաց հարց է։ Ես իմ տունս սքանչելի աղջիկ մը ունիմ, որ ինձ աղդական ըլլալուն, խերի համար բավական աշխատցուցի թե իմ տունս և թե բարեկամներու տունները։ Թող քիչ մըն ալ ձեր տունը աշխատի, եթե կ'ուզեք։ Կատարյալ գանձ մըն է։ Արթուն, սիրուն, իմաստուն ու ժպտուն, Տոքթո՛ր, ժպտո՛ւն։ Մանավանդ տղա նայելու մեջ

Մեկ հատիկ է։ Բժիշկի մը համար սպասուհի ըսածդ ամեն բանեն առաջ ժպտուն պետք է ըլլա։ Ես աս իրիկուն իսկ ձեզի կղրկեմ դինքը։ Միայն թե բերանը քիչ մը բանուկ է, հացը դարակը կղպելու է...

Այսպես խոսեցավ Քոստանիկ էֆենտի։

Ու իրավ ալ, իրիկունը չեկած, աղջիկը եկավ։ Աղջիկ ըսածը՝ երեսունը հինգ տարու պառավ մը, կուրծքն ու փորը տափակցած, ձմեռնային թուզի մը պես խորշոմած, կծկտած, ճերմկոտած, բայց դեռ անուշկնկ։ Ու ժպտո՜ւն, ու ժպտո՜ւն... Քոստանիկ էֆենտիի ըսածին չափ ալ կա նշեր...

Սկիզբները իր նիհարությունը դիս այնքան զբաղեցուց, որ լավ մը չանդրադարձա այդ տարօրինակ ժպիտին վրա։ Բայց ձախ դեմքեն վար երկարող հին սպի մը ինձ ամեն բան բացատրեց։ Տարիներ առաջ այդ այտոսկրին վրա բժշկական գործողության մը միջոցին կտրված մկաններն ու ջիղերը այնպես դեղ կերպով կարվեր էին, որ դեմքին վրա ակամա, անիմաստ ու ծուռ ժպիտ մը գամվեր մնացեր էր մշտնջենապես։

Ու հիմա, բերանին ճիշտ մեջտեղեն թափված երկու ակռաները, այդ ժպիտը ավելի դատարկ, ապուշ, տակը ծակ բան մը ըրեր էին, քարը ինկած մատնի մը պես։

Հոգեբանական ժպիտ մը չէր իրենը, այլ մարդակազմական։ Անսրբագրելի, անսպառելի, սաղայելական ժպիտ մը, որ իր ամբողջ կյանքին մեջեն ու նույնիսկ գերեզմանին տակեն պիտի խնդար վիրաբույժներուն անպատում անճարակության վրա։

Իբրև ներքին հիվանդության մասնագետ, ես ներքնապես և հանձի կերպով կշոյվեի մեր մրցակիցներուն ուղղված այդ հեգնոտ ժպտանեն։ Բայց կինս, որ չէր կրնար ընդունիլ այս բժշկական բացատրությունը, ատենը մեյ մը կպոռար։

— Իմ բարկացած ատենս դուն ինչո՞ւ ցավադարի պես կժպտիս, Սաթենիկ...

— Օրեռասիոն...,— կկակազեր աղջիկը ժպտելով։

Դժբախտաբար, սակայն, այս ուրախ օրերը երկար չտևեցին։ Մեր Սաթենիկը, միշտ ժպտուն, սկսավ դժգոհության մռլտուքներ լսելի դարձնել հիմա։ Իրողությունն այն էր, որ այս աղջիկը խորապես տխուր էր։

— Ես սպասուհի ըլլալիք մեկը չեմ, Տոքթյոր։ Ես ինքս տասը սպասուհիներով մեծցեր եմ... Երկու հատ տուն, երեք հատ կառք, քսան հատ ձի...

— Եկ՝նթ է, ինչ է, այս աղջիկը... Սա ավելը ձեռքդ առ տեսնեմ...

— Հազար ոչխար, քսան հովիվ, տասնըվեց գյուղ, հարյուր մշակ...

— Մի փախցներ, Սաթենիկ, կերակուրին ժամը կուգա կոր...

— Մեր կեբակուր եվոզները զատ էին, տուն ավլոզները զատ, տղա նայոզները զատ... Աս ի՞նչ օրերու հասցուցիր զիս, հայրի՜կ, հայրի՜կ...

Ու կսկսեր լալ։

Օր մը, Քոստանիկ աղային հանդիպելով՝

— Եղբայր,— ըսի.— Լեթն աշխարհ իմս ըլլար, թերևս Պոլիսը մայրաքաղաքս ընեի, բայց ձեր աղգականը սպասուհիս չէի ըներ...

— Ինչո՞ւ, ի՞նչ կա որ...

— Կատարյալ խենթ մըն է, որ մեծամոլութենե կտառապի... Երեսուն ձի, տասը ջորի, քսան գոմեշ, քառասուն էշ...

Քոստանիկ էֆենտին լայն քրքիջ մը արձակեց։

— Ընդհակառակն, ճշմարտությունը պզտիկցուցեր է,— ըսավ։— Ես անոնց տասը հազար ոչխար ունեցած ժամանակը գիտեմ։ Երեսուն հազար ոսկինոց մարդ էր հայրը...

— Ի՞նչ կ'ըսեք...

Չէի կրնար մտքիս մեջ սեղմեցնել այս ահագին բանը։ Բայց ուրիշներ ալ ճիշտ նույնը կկրկնեին.

— Ժամանակին անոր հայրը տասնըվեց ագարակներ ուներ Պոլսո շուրջը։ Ամենքին ալ վրայեն մտավ, տակեն ելավ։ Սիկատոր պանքոթներով կվառեր, Տոքթո՜ր... Գինեմոլ մըն էր, ախտաբանական գինեմոլ մը, որ կխմեր ու կուլար։ Միայն իրենց գերդաստանեն տասնըմեկ հատ խենթ կհաշվվի...

Ահավասիկ տեղեկությունը մը, որ շատ թանկագին էր բժիշկի մը համար։ Այլասերումի այսքան ծանր բեռ կրող աղջիկ մը որքա՞ն խնամքի, որքա՞ն փափկության, որքա՞ն զգուշության կկարոտեր չինելու համար։ Իր արյան մեջեն տասնըմեկ խենթեր կխոսեին։ Եվ հակառակ ասոր, հակառակ իր մշտնջենական ժպիտին, Սաթենիկ ծայրահեղ լրջություն մը, մելancաղձություն մը, խորունկ հուսահատություն մը կկրեր իր վրա։

Այդ օրեն Սաթենիկը մասնավոր ուշադրությունս ու գութս շարժեց։ Իսկույն պատվիրեցի, որ աղատ ձգեին զինքը իր աշխատության մեջ։ Պատվիրեցի նաև, որ ուտելիքի դարակները բացվեին իր առջև։

Բայց իրա՞վ, որ «բանուկ» է եղեր իր բերանը... Կարծես թե օրերով, շաբաթներով, ամիսներով անոթի պահած ըլլային զինքը։ Կ'ուտեր, անընդհատ կ'ուտեր, ի՞նչ գտնար կ'ուտեր։ Դեռ կրակին վրայեն կաթը հազիվ կաթնապուրի վերածված, կշոգիանար, կ'աներևութանար պարզապես տանին մեջեն։ Եվ երբ դարմացած երեսը կնայեի՝

— Մեր տունին կամը խալիհներով կ'եռացվեր, Տոբիյո՛ր,— ըսեր...

Իր երկու փշրված ակռաներուն մեջտեղեն կոտրտուքի աշխատություն ը կլսվեր միշտ, կաղինի մեքենայի մը պես.

— Թբբբ՛բբ, Թբբբ՛բբ, Թբբբ՛բբ...

Ու ծնոտներու այս աշխատությունը տղու մը պես կ'երջանկացներ ինքը, երկնային լույս մը կ'իջեցներ իր աչերուն մեջ, շնորհք մը կուտար ը մարդակազմական ժպիտին։

Բայց, հակառակը իր ազիքները երշիկի մը պես լեցնելու այս հատառ ու անվհատ աշխատության, փորն ու կուրծքը միշտ տափակացած մնային, ծմեռնային թուզերու պես։

Երբ համոզվեցավ, որ օրական աշխատությունը միայն պիտի չբաներ իր հառաջամասը պարարտացնելու, սկսավ գիշերներն ալ բանեցնել իր ազորիքը։ Ամբողջ ցերեկը կ'ուտեր, ամբողջ գիշերը կհազար։

— Թբբբ՛բբ, Թբբբ՛բբ, Թբբբ՛բբ...

Երևակայեցեք, որ մեր պառկելեն մինչև արևուն ծագիլը չորս անուամ քունեն կ'արթննար, կերակուրը կտաքցներ, բերանը կլեցներ և սկռաները թքրտացնելեն կ'երթար նորեն վերմակին տակ մխրճվելու։

«Ո՞ւր կ'երթային այս բոլոր կերածները»,— կմտմտայի ինքներբենս։

— Քոստանիկ էֆենտի, այս աղջիկը քաշվելիք ցավ չէ, եղբա՛յր...

— Ինչո՞ւ, էֆենտիմ... Կղարմացնեք զիս... Աղջիկը երեսունհինգ տարիե ի վեր տունը մնալուն՝ ինքզինքը կ'ուտե կոր։ Իր բնությունը արդեն քիչ մը կրքոտ է, լուսահոգի հայրն ալ շատ օրինակելի կյանք մը չուներ... Քիչ մը պոռոմյուր տվեր, կլմննա կ'երթա...

Բայց Սաթենիկին ուզածը դեղ չէր։ Ցերեկները, առտվընե մինչև երիկուն պատուհանին առջեր դամված, անցնող բոլոր զինվորներուն լրա սրտին եղերը կհալեցներ։ Հյուր մը դալուն պես, սուրճ մը բերելե առաջ, մանալլեպիի ամբողջ վարդաջուրը դլխուն կթափեր, որ անուշ հոտի... Ու մինչև սուրճին խմվիլը և դեռ կես ժամ առ գեշ-գեշ ժպտելե վերջ հյուրին՝

— Եթե առջիս տոպրակներով ոսկի թափե, դարձյալ ես այդ պաղշավակը չեմ տաներ,— կմռլտար անոր երթալեն ետքը։

Տեսա, որ ասիկա սպասուհի բլլալիք բան չէր։ Ու օր մը, ծրարը ձեռքը տալով, Քոստանիկ էֆենտիին վերադարձուցի իր դանձը։

Քոստանիկ էֆենտին դուռը չէր բացեր։

— Ի՞նչ ըսել է, էֆենտիմ, ա՛լ աղդական ենք տեսի, Հանցավոր չենք, յա՛... Անշափ ատեն մենք պահեցինք, քիչ մըն ալ ուրիշները թող

պահեն... Ան խեղճն ալ ազգին մեկ անդամը չէ՞ մի... Թող Փրկիչը նեսեն...

Բայց Փրկիչն ալ չէր ընդունած Սաթենիկը, առարկելով, որ «բավականաչափ խենթ չէ»...

Գաղիերեն առած մը կ'ըսե. «Խենթի մը համար լավագույն բանը կատարյալ խենթ ըլլալն է»: Այս առածին իմաստությունը երբեք այնքան լավ ըմբռնած չէի, որքան կ'ըմբռնեի հիմա։

Եթե այդ տարաբաղդ հայրը, փոխանակ կիսկատար խենթ մը ծնելու, կատարելապես խենթ աղջիկ մը ծնած ըլլար, ան հիմա որևէ հիմարանոցի մը մեջ գտած պիտի ըլլար իր ապաստանը, մինչև կյանքին վերջը ապահովված պիտի ըլլար իր հացը, իր երբեմնի հարստությունը ողբալու չափ հիշողություն պիտի չունենար, ոչ ալ սպասուհի ըլլալու չափ խելք։ Բեռ ալ պիտի չըլլար Քոստանիկ էֆենտիին վրա և ամբողջ օրը խենթություններ ընելն վերջ վատահ պիտի ըլլար, որ գիշերը հաշը պատրաստ է ու անկողինը տաք... Գոնե այնքան երջանիկ պիտի ըլլար, որքան կարելի է երջանիկ ըլլալ այս հիմար աշխարհին մեջ...

Մինչդեռ հիմա՞...

- Ժանյակներու և սնդուքներու մեջ, դգվանքներով ու համբույրներով մեծցած Սաթենիկը, փողոցին մեջ քար մը չուներ՝ ցուրտ գիշերով իր գլուխը հանգչեցնելու համար...

Սիրտս դիս հանգիստ չձդեց։ Ելա Քոստանիկ էֆենտիին գացի ու ջանացի զինք համոզել, որ աղջիկը ներս ընդունի։ Բայց ան, գործել մարդու համառությունով մը, անդրդվելի կմնար իր որոշումին վրա։ Ամոտարանություն, ժառանգականություն, մտային անպատասխանատվություն կամ հոգեկան հանգստություն իրեն համար դատարկ բաներ կմնային։

— Ի՞նչ ըսել է, էֆենտիմ. մյուս բոլոր սպասուհիները կ'աշխատին են հոգի չունի՞ն մի... ուզեմ նե ես ալ խենթություններ կ'ընեմ, բայց չեմ ըներ կոր... ես բժիշկ չեմ, իմ խելքս այնքան բարակին չի հասնիր... Թող քանի մը դիշեր փողոցները անոթի մնա, որ խելքը գլուխը գա... ա՛լ ազգական ենք տեյի, էշ ալ չենք յա՛... Իր հայրիկը երեսում հազար ոսկիները կերած ատենը ինձի բարև մը կուտա՞ր... մինչդեռ ես այս օրվան օրս...

Դեռ խոսքը չէր ավարտած, երբ դուռը բացվելով Սաթենիկ ներս մտավ կավիճի պես ճերմակ, ճեփ-ճերմակ, ու պատառոտուն, ու արյունո՛տ...

— Ան ի՞նչ է, Սաթենիկ, վիրավորեցի՞ն քեզ...

— ...

— Զբսե՞ս, Սաթենիկ, մեկ տե՞ղդ կտրեցին...

— ...

— Բերանդ չբանա՞ս, աղջիկ, այդ արյունը ի՞նչ է...

— ...

— Այդ արյունը ի՞նչ է, աղջիկ...

— Ատ արյո՞ւնը...

— Ջխոսի՞ս, Սաթենիկ, ի՞նչ եղավ, ինչպե՞ս եղավ...

— Ինչպե՞ս պիտի ըլլա... ինծի ամոթ բաներ ըսել պիտի տաք... ըլլավիքը եղավ... ալ ի՞նչ ըսեմ...

— Խենթեցա՞ր, աղջիկ, ո՞վ էր, ո՞վ չէր, անունը չբսե՞ս...

— Հապա ո՞ր մեկը ըսեմ... երեք զինվոր էին...

— Վա՜յ անամոթ... չփախեի՞ր, չպոռայի՞ր...

— Սուրը կոկորդս դրին, շարժիս նե կմեռնիս ըսին... ես ալ չըշարժեցա...

— Է՜, երե՞քն ալ...

Սաթենիկ ձայն չհանեց։

— Սուտ կխոսիս կո՞ր,— պոռաց Քոստանիկ էֆենտին, հետզհետե ինքզինքեն ելլելով.— սո՜ւտ կխոսիս կոր, որ քեզ տունս ընդունիմ...

Իրրև ամբողջ պատասխան, խեղճ աղջիկը, շարժումով մը, ձեռքի փոքրիկ պոլը բացավ, քրքրեց։ Ու իսկույն իգության, աղջկնության, երեսունհինգ տարի վրան նստած կուսության, արյունի ու ոճիրի հոտ մը լեցուց սենյակը...

Քոստանիկ էֆենտի ա՛լ չկրցավ զսպել ինքզինքը։

— Գնա՜, գնա՜, գնա՜,— պոռաց...,— գնա՜ այդ աղտոտ շապիկներդ ուրիշ տեղեր թոթվելու... գնա՜ հիմա ֆրանկախտեն փտելու... գնա՜ հաստը պոռնկանալով շահելու և սալահատակներուն վրա ծագեր ձգելու... իմ տունս պատվավոր մարդու տուն է...

Զուր ուզեցի համոզել զինքը, որ այս անոթիկ, այս մեկ գիշերվան հարսն ու որբևայրին եթե շուն մըն ալ եղած ըլլար, գուրգուրանքի մը, հանգստի մը, անկողնի մը պետք ուներ այսպիսի գիշեր մը։ Բայց ան երթալով ավելի ու ավելի կփոթորկեր.

— Ձիս մի զայրացնեք, Տոքթո՛ր... Արդեն եթե դուք այս աղջիկը նժույգի մը պես սնուցած չըլլայիք, հիմա ասանկ բաներ ընելու կարողությունը կ'ունենա՞ր... Մենք մեր դարակները կկղպեինք նե, բան մը գիտեինք հարկավ...

Ու հետո, ուշադրությունը հանկարծ Սաթենիկի սպիացած երեսին վրա կեդրոնացնելով՝

— Սա երեսդ լույսին դարձուր նայիմ, չլթի՛կ... դուն դեռ կժպտիս

կոր, հա՞,— պոռաց, ոտքի հարվածով մը դուռս նետեց զայն ու դուռը գոցեց։

Խաղաղությունը նորեն տիրեց տան մեջ։ Քոստանիկ էֆենտի լայն շունչ մը քաշեց, բարեպաշտ բեզպիճը հանեց գրպանեն, «ճակատս բաց էջի ձեռով մը ֆեսը նստին նետեց և իր ընտանեկան հանդիսավոր ձայնը գտնելով՝

— Կնի՞կ,— պոռաց.— մեղի շաքարը քիչ երկու հատ սուրճ կշի՛ռնե՞ս...

Իսկ ես կլսեի, որ կնիկը, դրան տեղն, խղդուկ-խղդուկ կուլար...

1914

ՏՈՔԹՈՐ ՔՈՉՄՈՉ

Քեզի այս անգամ պիտի գրեմ, Տոքթո՛ր, այն զմարճալի ու տխուր պատմությունը, որ իմ բժշկական պատմությունս է, գավառի այս խուլ անկյունը հաստատվելս ի վեր։

Սկիզբն սկսի՞մ։

Է՛ն առաջ ըսեմ, որ մենք այստեղ Տոքթոր Քոչմոչ մը ունինք, որ ամեն բանին սկիզբն ու վերջն է։

Մարքիզ առջեր բեր էսքյուլաբի աթանը։ Այդ բժշկության աստծուն վարտիկ հազցուր, վրայեն ալ մինչև ոտքերը իջնող և սեղեն կանաչի դարձնող բեռեենկոր մը, կոնաձև բերնին մեջ սիկարեթի մը գիր, ճակատին վրա ալ՝ դեպի ետև նետած աշտարակաձև ֆես մը Բիզայի ծուռ աշտարակին պես ու աչքիդ առջև պիտի ունենաս նույն ինքն Տոքթոր Քոչմոչը։

Այնպիսի ատեն մը, երբ գեռ բժշկության խոսքն անգամ չկար այս կողմերը, այս մարդը, առաջին անգամ ըլլալով եկած է գավառի այս խավար անկյունին մեջ իբրև բժիշկ հաստատվելու և իբրև բժիշկ ապրելու։

Ինչպես որ դեռ հիմա ատամնաբուժություն չկա հոս իբրև առանձին արհեստ, այնպես ալ ժամանակին բժշկությունը իբրև առանձին գրաղում գոյություն չուներ։ Փոխնիփոխ ժամուն տերտերը, գյուղին մամիկը կամ թաղին սափրիչը կկատարեին այդ տխուր պաշտոնը։

Այն ատեններդ Հիբոքրատին գյուտը դեռ չէր ապրեցներ իր մարդը։ Անոր համար ալ դլխավորապես... մեռելները կդրաղեին այդ գործով։ Եթե գիտնալիր հիվանդության այս կամ այն տեսակին համեմատ այսինչ կամ այնինչ սուրբին գերեզմանին վրա ծունկ մը աղոթք ընել, գրմանը անխուսափելի էր...

Տոքթոր Քոզմոզ եկավ, տեսավ, հաղթեց։

Մեկ հարվածով բժշկությունը գավառին մեջ առանձին ու առանձնաշնորհյալ պատվանդանի մը վրա դրավ, տերտերության, տիրացության, ժամկոչության պես։

Եվ որպեսզի հաջողությունը ապահով ըլլար, բժշկությունն ալ, անոնց պես, եկեղեցիին անմիջական թեւարկության տակ դրավ։

— Զավա՛կս,— կ՚ըսեր իրեն դիմող հիվանդին.— այս շաբթու պատ՚ղ ավրեցի՞ր։ Ինծի գալն առաջ մեղավոր գլուխդ տերտիրոջ ավետարանին տակ դրի՞ր։ Տիրամոր պատկերին առջև մոմդ վառեցի՞ր։ Ուխտդ ընդունական եղա՞վ։ Բոցը շիտա՞կ ելավ, թե՞ ծուռ ելավ։ Մեծերուդ խոսքը լսեցի՞ր։ Մեկու մը սիրտը ցավցուցի՞ր։ Քեզի տալիք դեղս սուրբ է, զավա՛կս, ուտիք բերանով չուտես, Աստված բերանդ էծոռ...

Այսպես, այս տարօրինակ մարդը, տվեստարանն ու դեղարանը, տգիտությունն ու գիտությունը, ծոմն ու մսը իրար խառնելով, զարմանալի ու անիմանալի բժշկություն մը դարբներ էր։

Զբսի՞ արդեն, որ այս հայը գավառին Հիբոքրատն էր, իր տեղին աստված, որ օր մը իրմե վկայական մը հարցնողին հանդարտորեն պատասխաներ էր.

— Ես բժշկությունը չսորվեցա, ես բժշկությունը ստեղծեցի...

Ու հիմա, որ ժամանակին ազդեցության տակ իր համբավը սարի սար էր գացեր և իր մազն ու մորուքը փոշոտեր, փշոտեր էին, ան, չես գիտեր ի՞նչ մը ուներ պատկառելի և ահավոր, դարերու փոշիին տակ բաղնդոտած ավերակի մը շարագուշակ վեհությունովը։

— Ուղածը կ՚ապրեցնե, ուղածը կմեռցնե,— կ՚ըսեին իրեն համար...

Ապրեցնելը չեմ գիտեր։ Գիտեմ միայն, որ այս մարդը դիս ողջ-ողջ մեռցուց, մնցուց, թաղեց։

Երևակայե՛ք, որ տունե տուն շրջելով, դեռ բարի լույս-աստծու բարին մը չփոխանակած, սա՛ տեսակ խոսքեր կտաներ ականջե ականջ, կարդախոսի մը պես.

— Զավակնե՛ր, աստված մեր գլխուն աս ի՞նչ փորձանք, աս ի՞նչ ցուցանք մը դրկեր է... Հայ քրիստոնյա ըսածդ ալ երեսին վրա քրիստոնյայի շնորհք մը ունենալու է... Աստված մի արասցե, եթե այդ անհավատին ձեռքեն հիվանդ մը մեռնի, շիտկե շիտակ դժոխք կ՚երթա...

Երևակայե՛ք...

Ես հոս եկեր էի իբր հայ դեղջուկին բարեկամ, իսկ ան ինձ ցույց կուտար իբրև ժողովուրդին թշնամի։ Դրացիներս անդամ ինծի կես-բերանով կբարևեին, աստուծո ու տերտերին անհաճո չ՚ըլլալու համար։

Անկարելի կացությանը մեջ կգտնվեի մեկու մը, որ ողորմություն

տալ կ'ուզե ու աղքատ չի գտներ... Ձեռքերս պտուղով լեցուն բորոտի մը պես էի և այդ պտուղը ամենեն ծարավիներն անգամ պիտի գտնեին ուտելու...

Գիշեր մը, երբ այս կարգի տխուր խորհրդածություններու մեջ թաղված էի, ուժգին ուժգին դուռս ծեծվեցավ։

— Ո՞վ է... ի՞նչ կ'ուզե...

— Աղային աղջիկը թունավորեր է, բժիշկ կ'ուզե...

— Քոզմոզին չերթա՞ք...

— Տոքթոր Քոզմոզին romաթիզմը բռներ է, տեղեն չի կրնար եղեր երթալ...

Վա՜յ, Քոզմոզ, վա՜յ...

Ամեն պարագայի տակ իր ցավերը շա՜տ հարմար ատենին բռներ են... Եթե հիմա Աղային աղջիկը իմ ձեռքերուս մեջ մեռնի, ինչ որ շատ հավանական է, դիս ալ հետը պիտի մեռցնեն, ուրիշ ճար չկա...

Դողալով ու շվարած կհասնիմ հիվանդին սենարին վերև։

— Թունավորվե՞ր ես, աղջիկս։

— Այո՜, Տոքթոր...

— Ի՞նչ կերար, աղջիկս։

— Հարյուր լուցկի կերա, Տոքթոր...

Հարյո՜ւր լուցկի... այսինքն տասը սանթիկրամ ֆոսֆո՜ր... Այսինքն էշ մը մեռցնելու չափ թո՜ւյն... Այս հրեշտակը պիտի մեռնի, ուրեմն, ճա՜ր չկար...

Իսկույն վրան կ'իյնամ, բերանը կհոտվըտամ... սխտոր կհոտի... ահավասիկ փաստ մըն ալ... կասկած չկա, որ աղջիկը այդ լուցկիները կերե՞ր է...

Ինողքը հնդկայուղ է խմցուցեր թույնը դուրս թշելու համար։ Հնդկայուղը, որ բոլոր թունավորումներուն համար լավ է, ֆոսֆորի թունավորման համար շատ գեշ է։

Անմիջապես գաղջ ջուրով կլվամ ստամոքսը, կփսխեցնեմ, կշփեմ, երբեմն երբեմն քանի մը կաթիլ բերեպենիին կխմցնեմ. և վերջապես աղջիկը կ'ազատեմ ստույգ մահվընե...

Հետևյալ օրը, սար ու ձոր, կայծակի արագությամբ լուր կտարածվի, թե նոր Տոքթորը Աղային աղջիկը մահվընե ազատեր է։

Ցերեկին դեմ զանգակս կզարնվի և հաղիվ թե դուռը բացված, վարեն կոկոց մը, կոկոց մըն է կփրթիր։

— Ա՜ս ի՞նչ աղմուկ է, Մարիամ...

— Տոքթո՜ր էֆենտի,— կ'ըսե սպասուհին.— Աղային աղջկան նշա-

նածրն տունեն երկու հավ և մեկ աքլոր եկավ. բերողին պախշիշ մը տալո՞ւ է...

Հազիվ թե այս փետրավոր հյուրերը տեղ մը թխմելու ժամանակ կ'ունենանք, երբ դուռը նորեն կզարնվի։

Զարմանալի՜ բան... Այս դուռը մինչև հիմա ասանկ բանած չուներ։ Արդյոք հավերը սխա՞լ հասցեին բերին և ե՞տ պիտի ուզեն...

Բայց այս անգամ ալ, սենյակեն ներս, ճերմակ ու սև ճագարներու վլվլուք մը, վաղվոտուք մը, պահվրտուք մըն է կսկսի...

— Աս ի՞նչ է նորեն, Մարիամ...

— Աս լապստակները էլմասենց Պողոսին նվերն են եղեր... անանկ կ'ըսե, որ երեկ գիշեր իր սիրականը մահվընե եք ազատեր...

Բայց ահա դուռը նորեն կզարնվի։

Տարիքոտ երիտասարդ մըն է, որ այս անգամ կհառաջանա՝ երկու ձեռքին երկու ողջ-ողջ գառնուկ բռնած...

— Ասո՞նք որ սուրբին համար են,— կ'ըսեմ զարմանքե զարմանք իյնալով։

— Սո՜ւսսս...,— կ'ըսե մատը բերնին տանելով։— Երեկ գիշեր ձեր ինծի ըրած բարիքը շուտով-շուտով մոռցվելիք բարիքներեն չէ...

— Բայց...

— Սո՜ւսսս...,— կ'ըսե նորեն խորհրդավոր՝ մատը բերնին տանելով.— Թող սպասուհին չիմանա... Աղային աղջիկը գողտուկ լուր է դրկեր ինծի, որ եթե երեկ գիշեր դուք չ'ըլլայիք, ան հիմա մեռած պիտի ըլլար արդեն... Այս բոլոր եղածները իմ սիրույս համար են...

Վա՜յ, ցավագար, վա՜յ...

Հազիվ թե այս մեկն ալ ճամբեցի և այդ հավերը, լապստակները, գառնուկները տեղ մը թխմեցի, երբ դուռը նորե՜ն զարնվեցավ։

Եվ այս անգամ սենյակին դրան ճեղքեն երկու գլուխ մեկանց ներս նայեցան՝ մեկը մարդու գլուխ, մյուսը՝ իշու ձագի՜...

— Կնեռեք, Տոքթոր, բերած նվերնիս պզտիկ է, բայց օր մը հարկավ կմեծնա... Ձեր ըրածը ասկե ավելին արժանի էր, բայց ի՜նչ ընեմ, ձեռքիս տակ աս կար, աս բերի... Երեկ գիշեր դուք ոչ թե մեկ, այլ երկու հոգի մահեն ազատեցիք, Տոքթո՜ր։ Եթե Աղավնին մեռներ, ես ինչպե՞ս կրնայի ապրիլ... Որովհետև, Տոքթո՜ր, աս մերինը մեկ օրվան սեր չէ, մենք օրորոցեն իրարու խոստացված ենք... Բայց հիմա, որ աղջիկը ուրիշի մը նշանեցին, ան ալ մեռնիլը աչք առեր է... Ամեն, Տո՜քթոր, դուք սրվոր հայրիկին հասկցնեիք, որ...

Ա՜ռ քեզի հիմա իշու ձագ մըն ալ, ա՜ս էր պակաս...

Ի՜նչ երկնցնեմ։ Այդ օրը ինծի համար եղավ փառքի և թագավորու-

թյան պես օր մը, որուն նմանը ա՛լ կյանքիս մէջ չեմ կարծեր որ ունենամ։

Որովհետև այդ սատանորդի աղջիկը, իր բոլոր սիրահարներն ալ զատ զատ համոզեր է, որ իրե՛ն համար թույն է խմած... Մինչդեռ անձնասպան ըլլալ նույնիսկ չէ՛ փորձեր...

Եվ ես, որ այս բոլոր գեղջուկ սիրահարներուն միամտությանը վրա կխնդայի, ամենե՛ն մեծ խաբվողն եմ եղեր...

Տոքթոր Քոզմոզ, հետևյալ օրն արդեն թաղն թաղ սկսեր է լուր տարածել, թե աղջկան իրրև թե կերած հարյուր լուցկիները, անկողնին տակն գտնվեր են...

Հապա բերանին սխտոր հոտիլը ֆոսֆորի թունավորման ստույգ նշան մը չէ՞, պիտի ըսեմ։

Անշո՛ւշտ։ Բայց գյուղին մէջ որի՞ն բերանը հոտվրտացեր են և սխտորի հոտ չեն առեր...

* * *

Տոքթոր Քոզմոզ չարութիւնեն և ուրախութիւնեն երիտասարդացեր և ուրիշ մարդ մը եղեր էր։

Որոշեցի հետևաբար թթեն-բերեն բերել իր ուրախությունը և բերի՛ ալ։

Իր ամենեն տկար կետը, իր մեծությունն ու փոքրությունը կկայանար իր մասնագիտության մէջ՝ մեղի տարօրինակ մասնագիտություն մը։

Այս ոգեստ մարդը գավառին մէջ անանկ համբավ մը հանած էր, որ ինք կարող էր, առանց հիվանդը տեսնելու, պարզ գավաթ մը մեղի մէջ կարդալ հիվանդին ո՞տքը, թե ակռան ցավիլը։ Կամ խելացի՞, թե անխելք ըլլալը, քանի՞ տարի ապրիլը, վերջապես օվկիա՞ն մը պիտություն՝ գավաթ մը մեղի մէջ...

Արդ, այդ աղջկան խնդրին համար անգամ մըն ալ Աղային տունը հրավիրված ըլլալով, խնդրեցի իրենցմե գավաթ մը մեղ զրկել Քոզմոզին՝ քննելու համար։

Տոքթոր Քոզմոզ, իր համայնագետ քթին երկու խոռոչները գավաթին մէջ մտցնելե վերջ, արձակեր էր իր վճիռը.

— Այս հեզուկը հղի աղջկան մը մեղն է... հղության հեղինակն ալ անհամատ Տոքթոր մը...

Է՞, գիտե՞ս ով էր այդ մեղին ալ հեղինակը։

Պարզապես, Աղային ջորի՞ն...

Կ'երևնակայե՞ս հիմա, ամոթին, խաղբության, խայտառակության

մեծությունը։ Ասիկա կեսդար տևած խեղճ ու կրակ բժշկության մը հանկարծակի սնանկությունն էր, տգիտության աշտարակի մը փլուզումը, աստուծո իր մահը...

Ու իրավ ալ, հարվածին սաստկությենեն, Տոքթոր Քոզմոզ մեռավ սրտի հիվանդությամբ մը։ Բայց մեռնելեն առաջ վսեմ խոսք մըն ալ ըսավ, իբրև իր վերջին սուտը.

— Կյանքիս մեջ մեկ սխալ անալիզ մը ըրի, գավակներս, ատոր համար ալ կմեռնի՞մ կոր...

ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՇԵՐՆԵՐ

ԽԱՐՏՅԱՇԸ ԵՎ ԹՈՒԽԸ

Դուրսը անձրևն էր։ Պատուհանին խոնավ թափանցկութիւնն փողոցը կ'երևար տրտում ու, իր ցանցառ լապտերներուն մէջ, խորհրդավոր։

Մարդերը կխաղային, կիմտին, կխնդային։ Ամբողջ լեցվեր էր սրճարանին փոքրիկ սրահը։ Ու այնչափ անուշութիւն ու այնչափ կյանք կար այդ դյութիչ մթնոլորտին մէջ, որ մարդ հազիվ կլսեր ապակիներուն վրա թփրտացող անձրևին միօրինակ լալերգը։

— Ռիցի՛ն կենացը, Ռիցի՛ն կենացը,— գոչեցին հանկարծ ձայներ, երբ այս վերջինը իր պատմութիւնն ավարտեց։

Անոնք, որոնք իրենց գավաթները բարձրացուցին Ռիցիին կենացը, ուսանողներ էին։ Շատ գիշերներ կարելի էր տեսնել զիրենք՝ համախմբված այդ միևնույն սեղանին շուրջ, գարեջուրի գավաթներուն առաջ։ Անփույթ և անհոգ դեմքեր ամենքն ալ՝ իրենց ամբողջ փառասիրութիւնն էր ծուռ գրված ուսանողական լայն գդակ մը՝ գունագեղ թավիշե, և կուրծքը շեղորեն կտրող նոագույն ժապավեն մը՝ հպարտորեն կրված։ Իրենց խոսելու, նստելու, ծիծաղելու ձևեն կարելի էր հասկնալ, թե այս երիտասարդ գլուխները աշխարհին ճակատագիրով զբաղելու համար չէ՛, որ կհավաքվեին այդ սեղանին շուրջ։

Երբ գարեջուրին գավաթները պարպվեցան, «կարգը իմս է,— ըսավ Ժիտ.— կպատմիրեմ ձեզի լռութիւն և լրջութիւն, որովհետև իմ պատմութիւնս տխուր պատմութիւն մըն է»։

Ժիտ ուսանողներու այն դասակարգին կպատկաներ, որոնք ապահովարար մարդկութեան ամենեն երջանիկ մասը կկազմեն։ Իր ընկերներին ոչ ոք գիտեր ճշդիվ, թե երբեն ի վեր սկսած էր իր ուսումը, իսկ թե երբ պիտի ավարտեր իր շրջանը, այս հարցը կրնար հետաքրքրութիւն պատճառել ամենուն, բացի իրմեն։ Բաց կապույտ իր աղվոր աչքերը, հավիտենապես ժպտուն իր կարմիր դեմքը ու իր փոքը՝ տպավորությունը կ'ընեին իր ամբականը լայն և լեցուն կերպով ստացող... փիլիսոփայության ուսանողի մը, օրինակի համար։

Իր փիլիսոփայությո՞ւնը։ Կարելի էր գուշակել զայն մշտորեն ներկայանալի իր խարտյաշ սիրուն պեխերուն շնչտեն. կռապաշտ փիլիսոփայությունը։

Այնպես որ իր ընկերները երբեք չի զարմացան, երբոր այդքան լուրջ նախաբանե մը վերջ ժիտ սկսավ լայնորեն ու անուշ խոսիլ օրիորդ Նինային վրա։

— Ամեն օր, կեսօրին, դասավարտելուս պես, մեր վարժարանեն մինչև անոր վարժարանը կվազեի՝ իր վերարկուն հագցնելու և դայն ճաշարան առաջնորդելու համար։ Որովհետև շա՜տ անուշ աղջիկ էր Նինան, շա՜տ ազնիվ, շա՜տ վեհանձն։

Երբ գարնան գիշերներով ծառուղիներու ստվերին մեջ կպտտցնեի գինքը ու երբ մութեն օգտվելով իմ բազուկիս կ'անցներ իր սիրուն, փոքրիկ ձեռքը, այն ատեն գառնուկի պես խելոք ու աղավնիի պես միամիտ արարած կդառնայի ես, կհավատա՞ք։

Ու երբ գիշերները քունը չտաներ, ան կուգար իմ տանս առջևը, կսուլեր իր քնքույշ ձայնովը, կհագվեի անմիջապես ու կպտտեինք միասին։ Որովհետև, չըսի՞ արդեն, անո՜ւշ աղջիկ մըն էր Նինա։ Ա՜խ, Նինա...

Ու օր մը որոշեցինք ամենուն պես պարկեշտորեն... ամուսնանալ։ Մոսքու նամակ գրեցինք. ծնողքը մերժեցին։ Փորձ, աղաչանք. անկարելի՛ բան։

Ու եղավ, որ երկուքս ալ տրտմինք։ Միայն թե Նինա շա՜տ տրտմեցավ ու ա՜ֆնչափ տրտմեցավ, որ իր ցավերը մոռնալու համար որոշեցինք, որ մեկ ամիսով Բարիզ երթա։ Խե՜ղճը, որքա՜ն լացավ կայարանին մեջ։ «Առա՜նց ձեզի, առանց քու պաշտելի խարտյաշ գլուխիդ, իմ Ժիտս,— կ'ըսե Նինա.— ինչպե՜ս պիտի ապրիմ ես Բարիզի մեջ, ամբո՜ղջ ամիս մը, երկա՜ր ամիս մը...»

Ու ես որ այնքա՜ն ցուրտ եմ այսպիսի պարագաներու մեջ, հուզումնես բառ չէի գտնար ու ձայնս իրա՜վ կդողար, երբ իր ձեռքը սեղմելով «Նինա՜,— կ'ըսեի.— ա՜խ, Նինա՜...»

Նինան գնաց ու...

— Ու ի՞նչպես կրցավ ապրիլ «առա՜նց ձեզի, առանց քու պաշտելի խարտյաշ գլուխիդ»,— հարցուցին ընկերները անհամբեր։

— Այն է որ,— պատասխանեց Ժիտ հեգնանքի ու դառնության ժպիտով մը.— Նինա ուրի՜շ «պաշտելի խարտյաշ գլուխ մը» գտավ Բարիզեն ու ամուսնացավ հետը...

Ուսանողները խոլ քրքիջի մը մեջ խեղդեցին Ժիտին վերջին բառերը։

Ու ա՛յնքան անկեղծություն կար իրենց քրքիջին մեջ, որ Ժիտ ալ սկսավ անհույժ մարդու իր լեցուն խնդուքը։

— Կգարմանամ ու կհիանամ Ժիտին վրա,— միջամտեց Հրանտ.— ես երբեք չպիտի կրնայի խնդալ սիրային այսքան վա՛տ խաբեութենե մը հետո։ Ժիտ ձեղի պատմեց Խաբտյաշին սերը։ Որքա՜ն թեթևություն ու անհոգություն այդ սիրույն մեջ...

Երբ այս խոսքերը ըսավ, կարմրեցավ Հրանտ, ու ինչ որ կար ամենեն ավելի գրավիչ իր շիկնող դեմքին վրա, իր քսան առույգ տարիներուն կույս թարմությունն էր։ Հիանալի թուխ մըն էր Հրանտ, արևելքի անուշ և տաք թուխներեն, անոնցմե, որոնք գիտեն սիրել իրենց սև աչքերուն բոլոր կրակովը։

— Մտիկ ըրեք իմ պատմությանս,— ըսավ Հրանտ.— շատ պա՛րզ է իմ պատմությունս ու շա՛տ միամիտ։

Երբ Ժիտ գիշերները իր Նինան կպտցներ, ես միանակ էի սենյակիս մեջ ու կ'աշխատեի։ Աշխատությունը ամեն բան էր ինծի համար ու չեք կրնար երևակայել հրապույրը, որ ուներ իմ փայտե մերկ սեղանս։ Երբ կարդալե ու կարդալե կհոգնեի՝ պատուհանս կար։ Ես կդիտեի գիշերը իր անհուն քաղցրության մեջ. աչքերս կսիրեին ընկղմիլ տարտամ հեռավորություններու խորը. ու ձյունե հեռավոր լեռները կհափշտակեին սիրտս։

Երբեմն սակայն դիմացի տան պատուհանը կբացվեր լրիվ, այն տանն ես կնշմարեի սև շուք մը, անշարժ ու խորհրդավոր։ Այդ շուքը ա՞լ կտեսնեի ամեն գիշեր, չէի գիտեր, թե ո՞վ էր ան, բայց արդեն ես համակրած էի իրեն։ Ու խոր հաճույք մը կ'զգար հոգիս, երբ դեմ դեմի, իրար կդիտեինք անշարժ, մինչև գիշերը կհառաջանար ու քաղաքիս փոքրիկ լույսերը կմարեին վարագույրներուն ետևեն։

Ո՞վ էր այս անծանոթը, ո՞վ կրնար ըլլալ։

Օր մը համալսարանեն տուն կվերադառնայի։ Յորեկեն վերջ էր։ Փողոցին վրա, դիմացի մայթեն օրիորդ մը տեսա, որ աճապարանքով իմ մայթս կ'անցներ։ Չի ճանչցա դինքը, կանգ առի, չեմ գիտեր ինչո՞ւ։ Անծանոթուհին մոտս եկավ, հայտնապես շվարեր էր, այտերը բոլորովին կարմիր էին, ու աչքերը դեմին հակած, աճապարոտ շարժումով մը ձեռը երկարեց։ Տակավին ես չէի տեսեր այդքան անկեղծ հուզում։ Իր քրտնած մատներուն մեջ ջղայնորեն սեղմեց իմ ձեռքս։ Զգացի, թե արյունը կ'այրեր իր երակներուն մեջ։ Աչքերը հազիվ համարձակելով վերցնել, դողացող ձայնով մը՝

— Բարի լո՞ւյս, իմ բարեկամս,— ըսավ.— ու մնաք բարով։

Հուզումս չի կրցա պատասխանել։

Փոխանակ ուղղակի առն դառնալու, գրքերս բաղուկիս տակ, թափառեցա փողոցներով։

Գիշերը, վերադարձիս, տարիքոտ կին մը ինձ կ'ապասեր տանս մոտ։ Ան բարևեց զիս ու ահա ինչ ըսավ. «Ֆաննին քառի մը ունի Զեղի համար։ Այսօր Գերմանիա մեկնեցավ։ Ան մեկնեցավ Զեղի համար։ Գիշերները անքուն էր պատուհանին առջև, խե՜ղճ Ֆաննի։ Շա՜տ փոքր էր Ֆաննի՝ այդքան բուռն կերպով սիրելու համար...»

Շփոթած, շնորհակալություն հայտնեցի Տիկինին։ Արագորեն ու անզգալաբար բարձրացա տանս յոթը հարկերը։ Առաջին անգամ ըլլալով կ'զգայի սենյակիս սեմին վրա միայնության ու պանդխտության ցուրտը, որ երեսիս կզարներ։ Լամբարիս սակաւ լույսով կարդացի քառիը.

«Համբույրներ արևելքցի տա՜ք Թուխին։ Ֆաննի»։

Այն ատեն պատուհանին վտղեցի. հոն չէր շուրջ։ Հոկտ ճիչ մը, բոլոր ուժովը կուրծքիս խորերեն փրթած, խեղդվեցավ շրթունքներուս վրա...

Ահավասիկ իմ պատմությունս, շատ միամիտ ու շատ հասարակ։ Սիրային բոլորովին, բոլորովին պարզ դեպք մը, բայց այս դեպքը շա՜տ խոր ազդեց իմ վրաս, այնքան խոր, որ փոխանակ Ժիտին պես ծիծաղելու, լամբարիս մոտ՝ սեղանիս մերկ տախտակին կոթնցուցի իմ գլխիս ու լացի՜, հավատացեք ընկերներս, լացի՜ ես այդ գիշեր, սիրո համար, առաջի՜ն անգամը...

Երբ Հրանտ ավարտեց իր պատմությունը, աչքերը խոնավցեր էին ու ձեռքները քրտնած։

Երաղներու անձնատուր՝ ընկերները կծխեին ու սիկառին մոխիր դանդաչելով օդին մեջ, կգալարվեր ու կլայնանա՜ր իրենց գլուխները վրա։

Ժիտ ուզեց ընդհատել տիրող տրտում լռությունը ու բարձրացնելով իր գաբեջարը՝ «Արևելքի տա՜ք Թուխին կենա՜ցը»,— գոչեց ժպտուն։

Գավաթները իրարու բաղխեցան։ Անոնք չունեին քիչ մը առաջվան զվարթ շռինգը։

ՏԱՐԻ ՄԸ ՎԵՐՋ

Շրեղ նվագահանդես մը սարքեր էին այդ գիշեր Conservatoire-ին աշակերտուհիները։ Խո՜ւռն էր բազմությունը, որ լեցուցեր էր թատրոնին մեծ սրահը։ Շրջանավարտուհիները ամենքն ալ մետաքսի սպիտակ շրջ-

ջազգեստներու մեջ, բեմին վրա ելան ցուցադրելու համար իրենց հագագին արվեստը, դեռ անփոքր ու հայտնապես դողդոջ։ Ու հիմա, հանդեսը ավարտած, բազմությունը կքակվեր մութ փողոցներու երկայնքն ի վար։

Էնրիքեթթա, թատրոնին մեծ դրան առջև, իր թևը Պրանտին թևին մեջ, կանգներ էր հաղթական։ Որքա՜ն երջանիկ էր, ի՜նչ նոանդով ծափահարած էին զինքը այդ գիշեր, ու մետաքսի շրջազգեստը, ճեփճերմակ, երկա՜ր, ի՜նչ լավ վայլած էր իր նրբակերտ հասակին։

Անդադրո՜ւմ, հուսահատակա՜ն, բարակ անձրև մը կտեղար շարունակ։ Ելեքտրական լամբարները իրենց խոնավ լույսը կդողացնեին թաց պատերուն երկայնքն ի վար, ու ամբոխը, սև հովանոցներու տակ, փութկո՜տ, փողոցներու մութին մեջ կհեռանար։

Էնրիքեթթա զինքը ծափահարելե հոգնած բազմությունը կդիտեր տակավին, ու Պրանտ երջանկությենեն զինով, բա՜ռ չէր գտներ արտասանելու։

Երբ երջանիկ զույգը սանդուխներուն աստիճաններն վար իջավ՝ տունին ճամբան բռնելու համար, ցնցում մը կասկցուց Պրանտին քայլը։

— Էնրիքեթթա,— ըսավ.— տե՛ս, Սաէթն է, խեղճը։

Երբեք Պրանտ այսքան մեղքցած Սաէթին, անոր թշվառ տվեալը, անձրևին տակ կծկտած, ընկճեց Պրանտին սիրտը ու մտքի մե՛կ ջարժումով ան հիշեց Սաէթին ամբողջ պատմությունը, շա՜տ պարզ ու ջա՜տ միամիտ, սիրային բոլոր պատմություններուն նման, և որ սակայն չեմ գիտեր ինչո՞ւ այդքան խոր ազդեց իր վրա այդ գիշեր։

Սաէթ սպանիացի երիտասարդ մըն էր, գրականություն ուսանելու համար Նեոշաթել եկած. հոն ծանոթություն ըրած էր Էնրիքեթթային՝ զմայլելի իտալուհիի մը՝ Conservatoire-ի աշակերտ։ Երեք տարի սիրեցին անոնք զիրար, թև-թևի ապրեցան, ապագայի երջանիկ երազներ հյուսեցան ու շրթունքնին միացուցին իրարու՝ այս աշխարհին բոլոր սիրահարներուն պես, ու օր մը, առանց պատճառի, Էնրիքեթթա լքեց անոր թևը՝ Պրանտին միանալու համար։ Բաժանումի հանկարծական այս հարվածը տրտմեցուց Սաէթին սիրտը։ Բայց համառ և կամքոտ տղա մըն էր ան։ Ի՛նք ալ հարկավ արտասվեց երբեմն կորսված երջանկության վրա, ի՛նք ալ հարկավ բոլոր դժբաղդ սիրահարներուն պես մտածեց անգամ մը այն ահավո՜ր երջանկության վրա, զոր կրնար հայթայթել կապարի փոքրիկ գնդակ մը ճիշտ ճակատին մեջտեղը, բայց ամենեն առաջ, հաշվելու, հարատևելու և հաղթելու զգացումը կար իր մեջ։ Ապահովարար բանաստեղծի հոգի մը չէ՞ իրենը... Ու այդ գիշեր անձրևին տակ կ'սպասեր ան, որպեսզի Էնրիքեթթան տեսներ, բա՜ռ մը թոթովեր

անոր ու, թերևս, ո՞վ գիտե, վերսկսեր կտրատված պատմությունը իր երբեմնի սիրույն։

— Էնրիքեթթա,— հծծեց Պրանտ.— տես Սաէթն է, խե՛ղճը։

Էնրիքեթթա դողաց, ավելի՛ վար քաշեց հովանոցը ու ջղայնորե՛ն Պրանտին բաղուկը սեղմեց իրենին մեջ։

— Երթա՛նք, երթա՛նք,— ըսավ.— ուշ է ժամանակը։

• • •

Պրանտ աղքատ ծնողքն էր, դեռ նոր լքեր էր հայրենի տունը՝ mathématique-ի հետևելու համար։ Աղնվականի նուրբ դիմագիծ մը ուներ ու երկա՛ր, խարտյաշ մազեր։ Հյուսիսի զավակ՝ իր երկրին լա՛յն հորիզոններուն խաղաղությունը կկրեր իր կապո՛ւյտ աղվո՛ր աչքերուն խորը։ Ան դեռ չէր ճանչցած կյանքը և կինը։ Ահավասիկ թե ի՛նչ կար մասնավորապես գեղեցիկ այս տղուն հոգիին մեջ և դեմքին վրա։ Չէր գիտեր այն արվեստը, որով մարդ կսիրե ժամանցի համար կամ շահու համար։ Իրեն համար սիրելը հավիտենականություն մըն էր, ավելի մեծ քան հավիտենականությունը։ Պրանտ այն հոգիներեն էր, որոնք կսիրեն ու կուլան։ Խե՛ղճը, որքա՛ն կսխալեր...

Անշուշտ սակայն այս տղուն սերերը դատելու միամիտ եղանակը տագնապի ցնցող շրջան մը ունեցավ՝ այդ վայրկյանեն երբ ճանչցավ Էնրիքեթթան։ Այս աղջիկը կսիրեր Պրանտին աղվոր մազերը իր կուրծքին վրա հանգչեցնել ու հրճվանքո՛վ պատմել անոր (աղջիկներու տարօրինա՛կ հոգեբանություն) պատմությունը այն բոլոր հոգիներուն, որոնք իր սև աչքերուն եղկելի զոհերը եղան։ Ու ամենե՛ն առաջ խե՛ղճ Սիլվեսթրիին պատմությունը, է՛ն մանկականը։ Այս տղան էր, որ առաջին անգամ սիրեց զինքը, իր հայրենի գյուղին մեջ, Թոսքանայի կապույտ երկինքին տակ։ Ու հետո երաժշտության իր երիտասարդ proffesseur-ը։ Ու հետո, դեռ նո՛ր, Ալպերը, գրականության ուսանող, զոր բժիշկները նիս ուղարկեցին կուրծքին տկարության մը պատճառով։ Ու դեռ շատե՛ր ըլլ, շատե՛ր, ու Սաէ՛թն ալ...

Էնրիքեթթա կպատմեր ասոնք՝ սիրված ու ցանկացված աղջիկ հպա՛ռ գիտակցությամբ լեցուն, հաղթակա՛ն, կարծես երջանի՛կ։ Ու ամե՛ն անգամ, որ Պրանտ երազորեն կմտածեր այն բոլո՛ր տառապագին հոգիներուն վրա, որոնք իրեն պես, երբե՛մն, այս աղջկան դյուրիչ կուրծքին վրա հանգչեցուցին իրենց գլուխը, Էնրիքեթթա, բարկացած, Պրանտին ձեռքերը կ'առներ իրենին մեջ, ուժգի՛ն կցնցեր զանոնք ու հետո, կրեթե՛ լալով՝

— Աղվո՛ր,— կ'ըսեր.— սիրե՛, սիրե՛, դիս...

Սիրե՞լ։ Բայց աղքատությո՞ւնը, բայց աշխատությո՞ւնը ու ծերունի Հայրը՞, որ իրեն կսպասեր։ Պրանտ կմտաբեր այս բոլորին վրա։ Բայց շատ անգամ կպատահեր, որ ձմեռ գիշերներ, իր դասագրքերուն վրա ժամերո՞վ կթեքե հոգնած, երկար մազերով տղան բարձին վրա կենտեր իր գլուխը՝ վերմակին տակ կծկտած, էնրիքեթթային վրա մտածելու ու արտասվելո՞ւ համար...

Ո՛չ, ո՛չ, աղքատ ուսանողը պետք չէր սիրեր, ու Պրանտ կսիրեր, ա՜խ, տղու պես կսիրեր Պրանտ։

* * *

Տարի մը վերջ։

Ձմեռ ատեն, գիշերվան այդ պահուն, շատ խորհրդավոր կերպարանք մը ստացած էր պարտեզը։ Մերկ ծառերը իրենց ճյուղերը կցցեին մութին մեջ, պարտեզին քովեն քաղաքին լայն ճամբան կ՚երկարեր ամայի։ Վարը լիճն էր, ավելի հեռուն՝ Ալպյանները։

Էնրիքեթթա, ծառի մը բունին կոթնած, երկա՜ր ու երկա՜ր կդիտեր լիճը, նեռաթելի չքնաղ լիճը, անշարժ, մեռած։ Անոր քովը, Էնրիքեթթայի ուսին դրած իր գլուխը՝ Սաէթն էր։

Ու այնքա՜ն անշարժ էին պարտեզին շորցած ծառերը ու այնքա՜ն հանդարտություն կար գետնին քնացող ճյուղերուն վրա, որ կարծես ծառերուն ճյուղերը, վար հակած, երկյուղած հիացումով մը կդիտեին սիրահար հոգիներու այս կենդանի արձանը։

Խոնթյուն մը։

Մարդկային ստվեր մը երևցավ պարտեզին քովեն անցնող ամայի ճամբուն վրա։ Երբ ստվերը բավական մոտեցավ, երկու սիրահարները տարտամորեն կրցան որոշել անոր գծագրությունը։ Սև վերարկու մը դրված էր անոր վտիտ մարմինը, գլխարկը ճակտին վրա շա՜տ առաջ ինկած, ծածկեր էր անոր դիմագիծը, ու խոված, այլանդա՜կ երկու երեսներեն վար կկախվեին երկա՜ր, երկար իր մազերը։

Մեկ թևին տակ հինցած դիրքերու դեզ մը դրված, մյուս ձեռքին մեջ ալբալի շիշ մը, դայթ ի դայթ, անկայո՜ւն, խոնթալո՜վ, գինովը կքալեր իր ճամբան։ Ու ամայի ծառուղին անոր կողը հեռունե՜րը կ՚երկարեր՝ սուզի ադադակի մը պես։

— Էնրիքեթթա՜, Էնրիքեթթա՜...

Ոչ ո՞ք պիտի կրնար ըսել, թե ի՞նչ բան անցավ այդ պահուն խարող Ադչկան երակներուն մեջեն։ Միայն Սաէթ զգաց, թե Էնրիքեթթային սառած մատներուն մեջեն կսահեր, կ՚իջնար իր ձեռքը։

Ու զառամած, ու տատանող, կարծես հալիտեներեն իջնալու դատա-

պարտված, ու լալագին, ու անճո՛ռնի, գինովը իր թշվառ սովերը կքաշեր քաղաքին սմայի ճամբուն վրայեն։

Ու ձմեռ գիշերներու տրամավնա հանդարտությունը, ու երկար ծառուղիին խորհրդաստվեր մթությունը ու պարտեզին ծառացած կմախքները, ու, ո՞վ գիտե, թերևս Սաէթին քարացած սիրտն ալ, ամենքն ալ, կկրկնեին գինովին կերկերող, տանջվող, գալարվող ձայնը.

— Էնրիքեթթա՜, Էնրիքեթթա՜...

Այսպե՛ս կ'անցներ Պրանտին սովերը գիշերին մեջեն։

Ռ. ՊԵՐՊԵՐՅԱՆԻ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՀԸ

20 Հոկտ. 1848-ին Խասգյուղ ծնավ երկվորյակ քրոջը հետ (աղջիկը մեռ, ինքը վտիտ)։ Հայրը սափրիչ էր և շատ աղքատ։ Հուսահատության և չվառության մատնված ընտանիք մը. մայրը «իշալլահ...»-ով կմխիթարեր պզտիկները։ Ռեթեոս 6 տարեկան էր, երբ մեռավ իր հայրը։ 14 տարեկանին դասատու կ'ըլլա Ներսեսյան վարժարանը (Խասգյուղ) և տունը ինք կնայի։ 16 տարեկանին էտիրնե ուսուցիչ կ'երթա 10 ռանի ամսականով։ Կվերադառնա Գասրգյուղ։ Ռեթեոս իր երիտասարդությանը երգած էր։ Ուներ գեղեցիկ ձայն և կրնար երեք ժամ ատենախոսել։ 28 տարեկանին դպրոց կբանա (1876-ին)։ Մեռավ 59 տարեկանին։

Շաբաթաթոտ մը սկսավ իր մահվրենեն երեք տարի առաջ։

Մեռնելեն տարի մը առաջ անձին տը բուսարիեի քրիզներ ունենալ սկսավ։ Փողոցը բալած ատեն, սանդուխե, զառիվերե բարձրանալու միջոցին կդեղեր և սիրտը կցավեր (ռեյոնալ ցավ մը). ամբուլ ա նիբրիբ տ'ամիլ կշնչեր, առաջ քանի մը ամիսը մեկ մը, վերջը շաբաթը անգամ մը, մինչև որ ալ անկողին պառկեցավ. հետո ելավ։ Կ'սպասեինք, որ պեսզի տեղ մը երթար գարնան։ Շաբաթաթոտը անհետացած էր։

Ընդհանրապես ծոմը չէր բռներ հաճախ. միշտ անուշ կսիրեր։

Բժիշկները հանգստություն պատվիրած էին, բայց ան չէր ուզեր։

Գրաբարը (ր)ի դրական վիճաբանություն մը ունեցավ Մեսրոպ Նուպարյանի հետ։ Շաբաթ օր մը տուն էր. դպրոցը փակ էր. առավոտվընեն մինչև իրիկուն աշխատեցավ, հոգված գրեց. գիշերը նստեցանք։ Հետո պառկեցանք։ Մաննիկը վրան ծածկեց։ Կիրակի առտու կանուխ արթնցեր էր և քրիզ մը ունեցեր էր, որ շուտով անցավ. սարեմը ուզեր էր. խմեր և սկսեր էր երգել, ինչպես ամեն առտու՝ աղոթքի տեղ։ Հանկարծ երկրորդ քրիզ մը կ'ունենա խիստ դորավոր։ Իրարանցում. Շահանը պառկած տեղեն վեր նետված էր։ Մաննիկը դուրս հանեցինք։ Տժգույն էր սարսա-

փելի։ Բժիշկները հասան. մորֆինի էնժեկսիոն ըրին. սաստիկ ցավ։ Իր զավակները ուզեր էր։ Քրիզ մը, որ 20 վայրկյան տևեց։ Միշտ կտառապեր. նորեն մորֆին. Շահանը ներս մտավ. ալ մեռած էր. հանդարտ դիմագիծ մը, մահվան հանդարտությունով։ Մեռավ տժգույն։

Պերպերյան մեռնելուն չէր հավատար։ Շատ մը ծրագիրներ ուներ, գիրքի ծրագիրներ։ Մահվընեն շաբաթ մը առաջ լույս տեսավ իր վերջին գիրքը՝ «Դպրոց և Դպրություն», որուն կ'սպասեր անհամբեր։ Երբ եկավ, շատ ուրախացավ։

1907

ՀԱՏՎԱԾՆԵՐ ՕՐԱԳՐԻՑ

8 Մարտ 1915, Կիրակի.

Գրեթե երկու ամիսն ի վեր զինվորական եմ։ Այս նոր կյանքս այնքան լեցուն է տարօրինակություններով, որ կ'ուզեմ օրը օրին գրի առնել տպավորություններս։ Այսպեսով ուզեցս պիտի վարժվի համառոտել օրվա մը ամբողջ գործունեությունը օրագրի մը փոքրիկ էջին մեջ. գրիչս պիտի վարժվի ըլլալու հավատարիմ ծառա մը կամքիս հպատակող, փոխանակ այն քմահաճ նժույգին՝ որ էր մինչև ցարդ։ Եվ այս՝ իմ առաջին նպատակս է, որուն համար կգրեմ այս տետրակը։ Մինչև հիմա այս գրիչը զոր ափիս մեջ կբռնեմ ուզած կողմս տանելու և ուզած ձևովս շարժելու համար, կշարժեր միայն իր ուզած ատենին և իր ուզած ձևովը։ Ես իր ստրուկն էի, ան իմ տերս։ Գովեստներ շատ լսեցի, բայց անոնք զիս սրամտեցուցին։ Երբեմն ժողովուրդները խանդավառ կծափահարեին արքա մը, որ խեղճ գործիք մըն է միայն իր նախարարապետին ձեռքը։ Այնպես ալ ես, բանաստեղծ Սեակը, բժիշկ Չիլինկիրյանը, այս ձեռքիս մեջը սեղմած հատարակ փայտե գրիչիս ստրուկն էի և եմ մինչև այսօր։ Վաղվընեն սկսյալ պիտի ջանամ ըլլալ այն, ինչ որ եմ. որովհետև այն, ինչ որ եմ ինձ կթվի, թե ավելի բարձր է, քան այն, ինչ որ կ'երևամ։ Օ՛ն, ուրեմն, պարզության, հստակության, Գեղեցկության ատվածները, օգնեցեք ինձ։

9 Մարտ 1915

Երեկ առտու կիրակի էր. ժամ գացի. Մեծ Պահքի ժամ մը՝ սևերով ծածկված։ Ուրախություն մեծ եղավ տեսնելով, որ ամբողջ եկեղեցին՝ ամբողջ մատուռը, լեցուն էր մեր զինվորներով։ Իսկույն հրաման ըրի,

որ բոլորն ալ հանեն իրենց գլխարկները։ Ամենքն ալ հպատակեցան հարյուրապետի հրամանին, բացի մեկեն, որ ամենեն ջերմեռանդ աղոթողն էր և կեցեր էր ժամուն ճիշդ մեջտեղը, խորանին դեմ առ դեմ։ Բազուկները տարածած կ'աղոթեր, կխաչակնքեր, կուլար, կհառաչեր։ Ու երբեմն այնքան կբարձրացներ իր ձայնը սրտին խորերեն, որ մինչև ականջս կհասնեին իր տարօրինակ բառերը։ Ի՞նչ կ'ըսեր, չէի հասկնար. բայց կ'զգայի, որ եթե Մեկը կար Վերը, ան անպատճառ պիտի հասկնար այս խեղճին լեզուեն։ Եվ սակայն այս բարեպաշտ մարդը ինչո՞ւ կ'ընդդիմանար իր գլխարկը հանելու։ Նոր հրաման մըն ալ ղրկեցի. մարդը հպատակեցավ. բայց այն ատեն սոսկալի բան մը պարզվեցավ աչքերնուս առջև։ Մարդուն ամբողջ գլուխը ֆրանկախտի կեր եղեր էր... Երկար դող մը սահեցավ ամբողջ մարմնիս վրայեն։ Մարդը հազիվ քաջություն ունեցավ ծունկ մը աղոթք ալ ընելու ու մեկնեցավ մատուռեն։ Եվ գամված մնացի կեցած տեղս։

ՏԽՈՒՐ ԲՈՊՆ

1906, Հոկտեմբեր 6

Շաբաթ գիշեր է, ու կգրեմ։

Չեմ գիտեր ինչո՞ւ, տխուր եմ այս գիշեր։

Մարդ որչա՜փ ալ ճգնի մոռնալ իր ցավերը, որչա՜փ ալ երջանկությունը սիրե, որչա՜փ ալ չ'անդրադառնա կյանքին դառնություններուն վրա, դարձյա՜լ սրտին մեջ կա՜ անկյուն մը, որ երբեմն կցավի, կմթագնի ու կ'արտասվեր։ Ինչո՞ւ, ո՞վ գիտե։

Զարմանալի չէ՞ մարդուս սիրտը։

Շղթայազերծ փոթորիկները անզոր են երբեմն տապալելու ծառ մը։ Փոքրի՜կ, աննշա՜ն, աննշմա՜ր որդ մը կսպրդի ծառին երակներուն մեջ, ու երեկվան կաղնին այսօրվա կմախքը կ'ըլլա։

Այսպե՜ս ալ սիրտը։ Տեղի հարվածներ կան, որոնք հազի՜վ թե կդպան. անկարևոր բաներ կան, որոնք հոգիդ կճմլեն։

Շարժո՜ւմ մը, խո՜սք մը, նայվա՜ծք մը, բա՜ռ մը թերևս. ու սիրտը կխոցվի արդեն։

Ո՜վ տանջող գործիք, ո՜վ կյանքին հուսահատությունը, ո՜վ թունալի ծաղիկ. սի՜րտ։

Ու կխորհիմ այն խեղճերուն վրա, որոնք կտառապին՝ զգալ գիտնալնուն համար։

Քանինե՜ր, որոնք նայվածքե մը կ'իյնան շանթահար. քանինե՜ր,

որոնք բառն մը կխոցվին նեռահար. քանինե՞ր, որոնք համբույրն մը կթունավորվին թշվա՞ռ։

Ու կխորհիմ անոնց վրա, որոնք մեռան՝ սիրտ ունենալնուն համար։

Անհասկնալի՜, անիմանալի՜ խորհուրդ, անբակտելի թշվառությա՜ն հանգույց, արցունքներու պաշտելի՜ աղբյուր. սիրտ։

Որքա՜ն անուշ է, երբ կծագկի սիրտը. երջանկութիւնը որքան վա՜ռ է իր պատերուն մեջ. որքա՜ն քաղցրիկ իր մրմունջը։

Ահավասիկ փոքր անկյունն մը, ստվերոտ անծանոթ անկյունն մը վշտին ու ծաղիկը իր կմախքը կցցե։ Հրճվանքին ցոլքերը կխամրին. խնդութիւնն երգը կմեռնի. ու ցա՛վն է, խորո՛ւնկ, հուսահատական, անհասկնալի՜, որ կլայնա՜, կլայնա՜ սրտիդ մեջ, աշնանային տխրամած մշուշներուն պես։

Ու չես գիտեր, թե ի՛նչ բան կտառապեցնե քեզ. չես գիտեր, թե ի՛նչ բան կգալարվի ջիղերուդ մեջ. չես կրնար ըմբռնել այն անհունապես փոքրերը, որոնք սիրտդ կկրծեն. գիտես միայն, թե ծովերուն չափ լա՛յն պարապ մը կա կուրծքիդ տակ, թե հոգիդ լրիվ կ'ուզե մարմինդ, թե աչքերդ ալ լա՛լ կ'ուզեն։ Ու գիտես, թե շատ ծա՛նր է այս կյանքը՝ ապրելու համար...

Ո՞վ դառնութեանց մայրը. ո՞վ անիմաստ դարձիր. ո՞վ խորհրդալի մոխ կույտ. սիրտ։

Ու դուն, ո՞վ իմ խեղճ սիրտս...

ՈՒՍԱՆՈՂԻ ՆԱՄԱԿՆԵՐ

Լոզան, 27 Մայիս, 1909

Սև օրեր կ'ապրինք նորեն, սարսափի օրեր։ Հեռագիրները ամեն ժամ նոր գույժ մը կբերեն։ Ջա՜րդ, ու եթե ջարդ չէ, հրդե՜հ, ու եթե հրդեհ չէ, սո՜վ. ու ինչ որ ամենեն սարսափելին է, համաճարա՜կ։ Լրագիրները ամեն օր սուգի նոր գին մը կ'ավելցնեն. դեռ այս իրիկուն թերթերուն մեջ կկարդայի նամակը ծանոթ զվիցերուհիի մը՝ Լյուսի Պորելի, որ երկար տարիներե ի վեր նվիրված է Կիլիկիո հայ մանուկներուն դաստիարակության։ Անձնվեր հելվետուհին նկարագրելե վերջ, թե ինչպես մեռած Ֆաղաֆին մեջ, երբ դիակնային խաղաղությունը վերջապես կթվեր տիրել և երբ ա՜լ Կարմիր Խաչը կկազմակերպվեր վիրավորյալները դարմանելու համար, հեղակա՜ծ, նոր և անօրինակ հրացանաձգության խուճապին մեջ հրդեհեցին հայկական հոյակապ վարժարանը, ուր հազարավոր վիրավորներ կային ապաստանա՜ծ... Լ. Պորել կհարե. «Կրավե, որ նոր դահլիճը կհրամայե, թե մի՛ սպաննեք այլևս, բայց այրեցեք ամեն բան...»

Ամեն բա՜ն. ու ի՞նչ մնաց արդեն։

Երեկ խմբագրատան մը առջև խռնված բազմություն մը դեպի հոն հրավիրեց քայլերս։ Լուսատիպ նոր հասած նկարներ էին. հաղարավոր թշվառներ ծովի ափին, անկողիններ եկեղեցիներու մեջ, ոտքեր, մարդու կտորներ, որովայնը պատռված և դուրս հանված երախա մը իր մորը դիակին վրա։ Միջերկրական ծովը դիակներով հարուստ, դետինները պառկած ծերունիներ, որբուհիներ, թշվառներ... Հայե՜ր, Հայե՜ր, Հայե՜ր... Սիրտս պատառ-պատառ՝ այդ հետաքրքիր բազմության մեջ թշվառ ցեղի մը միա՛կ ներկայացուցիչը ըլլալուս, կհեռանայի այդ արյունի զայրացուցիչ ցուցադրութենեն, երբ փոքրիկ խոսակցություն մը կեցուց դիս։ Երկու աղջնակներ էին, 7 և 8 տարեկան։

— Ի՞նչ են այդ պատկերները,— հարցուց փոքրը մեծին։

— Հայերը կչարդեն...

— Ինչո՞ւ...

Մեծը կանգ առավ շվարած։ Ինք գիտե՞ր ինչուն։ Լսած էր միայն, օրորոցեն ի վեր, գիշերները, թե ծնողը ինչե՞ր կպատմեին հայերուն վրա։ «Ինչո՞ւ»։ Շվարած, քարացած, ապշած մտածելի այդ մեծ ինչուն, այդ կարմիր ինչուն, որ յոթը տարեկան անգետ աղջնակի մը հոգիեն կպոռթկար։ Հեղափոխական հսկա այդ ինչուն իր բերանեն կժայթքիր այնքան բնական, որքան վճիտ ջուրը իր ակեն։ Փոքրերո՜ւն մեծությունը... Քանինե՜ր մեր մեջ, բոլո՜ր «տարեց»-ները, «շնորհքով» մարդերը, ադգին «խելոք»-ները տակավին չեն մտածած այդ նախնական հարցումին վրա, որ մանկական ուղեղը կտանջե։ Ա՜խ, որովհետև այդ ինչուն հսկա անկյունաքարն է հեղափոխության և որովհետև այդ բառին տակեն կրնան անհաճո բաներ դուրս գալ իրենց շահո՛ւն համար, ինչպես կարիճներ՝ քարի մը տակեն...

Այս շաբաթ հելվետական քաղաքական հանդեսի մը մեջ, այս մասին դառն, շա՜տ դառն հեղնություն մը կար.

«Աստված էշերը ստեղծեց անարգվելու համար, Հայերը՝ ջարդվելու... Թուրքիո մեջ բեժի՞մ պիտի փոխվի, Հայերու ջա՜րդ. Սուլթա՞նը պիտի գահակալե, Հայերու ջա՜րդ. Շերիա՞թ պիտի հաստատվի, Հայերու ջա՜րդ։ Բայց այս բոլորը այնքան տարօրինակ չէ մեղի համար, որքան այն հուսահատեցուցիչ «խելոքությունը», որով հայերը կ'ողջունեն այս ջարդերը։ Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկորեն կատղիլ...»

Ու իրա՜վ։ Մարդկորեն կատղի՞լ. այս տարրական առաքինությունը կթվի իսպառ հեռացած ըլլալ հայուն սրտեն։ Ու այս՝ ո՛չ միայն առաջածավախ եկեղեցականության, խնկամոլ ռամկության, ոգեկտրտվորության մեջ, այլ նո՛ւյնիսկ ու մանավա՛նդ մեր մտավորականության մեջ։ Առե՛ք մամուլը. հավատացեք, որ այս վերջին ամիսներու ընթաց-

ին եվրոպական մամուլը շա՛տ ավելի մոտեն շոշափեց հայուն վերքը, քան պոլսահայ մամուլը։ Բոլոր երկիրներու քաղաքական թերթերը միաձայն գտնվեցան կոտորածներու թիվին վրա, որ երեսուն հազարը կ՚անցնի։ «Միա՛յն Սիճուն գետը երեք հազար հայ դիակներ թափեց Միջերկրական ծով»,— կտեղեկագրեն ֆրանսական մարտանավերուն սպաները։ Եվրոպացի վկաներ ամենաահարկու իրողություններ կպատմեն օրը օրին։

Սարսափահա՛ր, քարացա՛ծ Պոլսո հայ թերթերուն կսպասենք, ավելի ընդարձակ տեղեկություններու համար կամ գոնե հուժկո՛ւ բողոքի մը ընթերցումով ամոքվելու համար... Թերթերը կուգան. հավիտենական ոսկեզօծ ունայնությունը, որ կհատկանշե պոլսահայ մտավորականությունը... Մեր թերթերը դեռ կշարունակեն իրենց անդամալույծ կյանքը։ Նույնիսկ հանդեսներ կարդացինք, ուր Կիլիկիո ջարդերեն անմիջապես առաջ՝ սիրային հայրատ ոտանավորներ հանգված կային, «ընչանածի» պատմություններ ու դեռ ինչե՛ր... Մինչդեռ հայ ընդհանուր Մամուլը Սուգին սևո՛վը պետք էր պատվեր կամ Արյունի կարմիրովը պոռթկալ և կամ— եթե չէր կրնար ամեն բան ըսել— լռե՛ր... Գոնե սա հուսահատեցուցիչ, ծայրահեղորեն հոռետես, ջլատ, տրտում դամբանականները չգրեին։ Անոնք, որ մեռան գիտակցորե՛ն, դյուցազնորե՛ն, անոնք ո՛չ արցունքի պետք ունին, ո՛չ վարձու կեղծ լալկաններու, ո՛չ խրատի։ Դամբանականները պետք է կարդալ դամբանական խմբագրողներու գլխուն։ Ժողովուրդները ինքնապահպանության, ցեղին շարունակությա՛ն, ՊԱՅՔԱՐԻ՚Ն բնազդը ունին։ Մամուլը այսպիսի արհավիրալի շրջաններու մեջ պետք չէ որ հոռետեսության, սուգի, անդարմանելի ցավի մշուշի մը մեջ խավարե ժողովուրդին այդ բնազդը։ Fatalismeը չէ՛, որ պիտի վերկե ընկճված ցեղերը. ա՜հ՝ թե ինչ բան կմոռնա մեր մամուլը։

Օտար մամուլը և մասնավորապես զվիցերական օրաթերթերը, ամեն օր կ՚արձանագրե հայ կոտորածներուն համար եղած նվիրատվությանց ցանկը։ Ո՞ւր են մերինները։ Այն հայ թերթերը, որոնք այսինչ կամ այնինչ Մեծապատիվի մը մահվան առթիվ փոխան ծաղկեպսակի՝ նվիրատվությանց անհատնում ցանկեր կշարեին, այն միևնույն թերթերը՝ հազարավո՛ր Հայերու մահվան առթիվ, փոխան ծաղկեպսակի (բառի՛ն հեգնությունը...) պետք չէ՞ր, որ անվերջանալի նվերներու շարքերով ներկայանային այս յոթն անգամ նահատակված ժողովուրդին... Գավա՛ռ, սովա՛ծ, բաղմաչարչար Գավառը, իր լման տվալ։ Ե՞րբ պիտի դադրի ինքնագիտակցության զգացումը մայրաքաղաքացիին հոգվույն մեջ։ Ե՞րբ գո՛ւթը։

Ու ե՞րբ, մանավանդ, մարդկորե՛ն կատղիլը...

ՀՐԱՆՏ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ

Նիս, 1 Մայիս, 1908, իրիկուն

Հրանտս

...Միջերկրականի ավազներեն կդառնամ. այս քաղաքը չեմ գիտեր ի՞նչ մ'ունի, որ կհուսահատեցնե զիս. ու ծովը, անսահման ծովը, տարօրինակ կերպով կճզմե հոգիս։ Ես չգտա այն անդորր երանությունը, զոր կ'երազեի վայելել կապույտներու երկրին մեջ։ Ո՛չ ծովուն անհունը, ո՛չ երկինքին լայն երազը, ո՛չ արմավենիներուն փառքը, ո՛չ ալ նարնջենիին տարաշխարհիկ հրապույրը, ոչի՛նչ։ Կ'զգամ, որ հոգիս չ'ուզեր կապվիլ այս բոլորին. Հոգիս ո՞ւր է որ. ա՜հ, շարաղետ կարոտը հեռավոր պաշտելիին։ Ո՛չ մեկ շունչ, ո՛չ մեկ ձայն... սև պատկերներ կմթնեցնեն աչքերս. հոգիս անօրինակ տեսիլներով կատնջվի. լալու, պոռալու պետքը կ'զգամ. ա՜հ, ահավոր որոշումը հեռավոր պաշտելիին...

Միջերկրականի ավազներեն կդառնամ։ Ի՞նչ տրտում էր վերջալույսն այս իրիկուն. ու ձա՜յնը, փշրվող, տանջվող, մաքառող, մեռնող ալիքներուն ձայնը. ու ավազներուն հուսահատեցուցիչ հեծքը. ու ջո՜ւրը, անսահման ու անբմբռնելի այդ տարրը. ու հեռավոր մանիշակե թրթռացումները. ու պաշտելի՜ն, որ քովս չէ. ու տարօրինակ, ահռելի զգացումը մեծ անհունին մեջ լուծվելու, անէանալու, մեռնելու... այս բոլորը, աղվորս, փոթորկոտ ծովու մը պես կ'ուռեցնեն հոգիս. ու ես տրտում, ճմրլված, կվերադառնամ Միջերկրականի ավազներեն։ Ո՜ւհ, աչերս կսափին իրենց խոռոչին մեջ, ու հոգիս ամայի է՝ տրտմությանցս ծովուն մեջ կորսված ժայռե կղզիի մը պես։ Ա՜հ, սիրը, սե՜րը... Ու դուն, Հրանտս, որ կլռես...

Եղբայրդ՝ Ռ. ՍԵՎԱԿ

Լոզան, 29 Ապրիլ, 1912

Հրանտս

Եթե բժիշկ եղած չըլլայի, ամենամեծ փափաքս էր երկրագործ ըլլալ. ու նույնիսկ դեռ հիմա ամենավերջին փափաքս է օր մը կարենալ դյուղ քաշվիլ ու կյանքիս վերջին տարիները դաշտերուս ու հողերուս վրա անցնել լռության ու բնության մեջ։ Եկուր տե՛ս որ երիտասարդները չեն հասկնար այս բաները. Եվրոպա նեռվիլ կ'ուզեն իսկույն, մինչդեռ «ոն 9 տարի ապրող մը միայն կրնա գիտնալ թե ի՞նչ է քաղաքակրթությունը, ոգարգացած կյանքը». ամեն բան սուտ ու կեղծիք, շպար ու ամոթ։ Ասիկա իմ համոզումս է։

...Կռան Սեն Պեռնառ անուն վանք մը կա Ալպյանց գագաթը, ձյուներուն ու լռության մեջ կորսված, երկինքին ու երկրին մեջ առկախ, ժամանակին պես դարավոր ու մ ա հ վ ա ն պես անխախտ։ Քանի՞ քանի անգամներ երազած եմ հոն քաշվիլ, հոն թաղվիլ, բանտարկվիլ իմ երջանկության հետ, դո՞ւրս նետվիլ այս գզվելի օրենքին, որ «կյանքի պայքար» կկոչվի, ապրիլ երազին ու խորհուրդին մեջ, աստվածորեն ապրիլ, հավիտենության խարկանքն ունենալ, լռությունը խոսեցնել... Ինձ այնպես կու գա, որ հոն, բնության մենության մեջ, ժամանակին ձայնը պիտի լսեի, և թե հոգիները, որոնք օդին մեջն են, այո՛, պիտի խոսին ինձ հսկայական բաներ, Մովսեսին լսած պատգամներուն պես։ Եվ այն ատեն պիտի զգայի, որ կ'ապրիմ, մինչդեռ հիմա՝ քաղաքակրթության ու խուժանին մեջ նետված՝ ավելի կտարվիմ, կբշվիմ, կհրվիմ քան թե կքալեմ Բնության մեջ, հին հսկաներու քայլովը։ Բայց պատանությունն ի՞նչ կհասկնա ասկե. անիկա ոսկեզօծ սուտերն ու աղմուկները կսիրե. ես ալ անանկ չէի՞ ատենին։

...Ու այս բոլորին վրա, ավելցո՛ւր նաև Պոլսո մղձավանջը, այն հոբիզոնը, որ քանի մը տարիեն իմի՛նս պիտի ըլլա, և ուր հեռուն կտեսնեմ արդեն Սոդոմի մուխն ու Գոմորի մեղրին բոցը։ Եվ ըսե՞լ թե այս մենակյաց փիլիսոփայության հասնելես հետո, դեռ պետք պիտի ըլլա ինձ այդ զարհուրելի ոստանին մեջ ապրիլ, ամենո՛ւն հետ, ամենո՛ւն պես...

Քույդ՝ ՌՈՒԲԵՆ

ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆՅԱՆԻՆ

16 Փետրվար, 1908, Լոզան

Ամենապատիվ
Տ. Տ. Մաղաքիա պատրիարք Օրմանյան
Կ. Պոլիս

Բարեկրթ հայր,

Ձերդ սրբազնության ներողությունը կհայցեմ Ձեր բարձր ուշադրությունը վայրկյան մը հրավիրելու համար նվաստ ծառայիդ վիճակին վրա։ Թշվառության վերջին աստիճանի մեջ է, որ կգտնվիմ, աննկուն ու գրեթե անոթի. առանց Ձեր բարձր միջամտության ինձի կմնա մեռնիլ անսվաղ. կպաղատիմ Ձեզի, Ամենասրբազան հայր, վայրկյան մը մտածելիք

իմ վրաս. Դուք ա՜յնքան աղ
տարի. արցունքներուս լեզվո.
փոքրիկ-շա՜տ փոքրիկ օգնութ
միայն մնաց բժշկությունս ։
Թողուլ կիսավարտ՝ այնքան տ
Ձնշին նպաստ մը բա՜վ է ինձ
բառը կրնա գիս փրկել այս
Ձեր ծունկերուն կփարիմ ու
գրկեմ։

Ամենողորմ հայր,

Խորին շնորհակալությամբ տողը՝ ընկերացած երկու հար. գործածեցի հիվանդանոց մտնել հրաժեշտ մի քանի գործիքներ Ձեզ, որ Ձեր անսահման բարու կացուցիք։ Պիտի աշխատիմ արերախտագիտությունը ուսանող Թույլ տվեք ինձ հուսալ, որ սու մինչև մոտալուտ ավարտումը բժշկական ընթացքիս, որովհետև, ամենագութ հայր, նյութական հաղար և մի մատանջությունները լուրջ արգելք մը կհանդիսանան մտամփոփ և բոլորանվեր աշխատության։ Չեմ կարող բացատրել Ձեզի սրտիս երախտագետ զգացումներուն թափը՝ երբ վերամսյայի վճարքներուն առթիվ զգացած մտահոգություններուս մեջ հանկարծ իմ առջիս գտա Ձեր հայրագորով երկտողը՝ երջանկության ճառագայթի մը պես։ Կմաղթեմ Ձեզի ա՜յնքան երջանկություն, որքան անկեղծորեն կրնա մաղթել ստույգ և երկար տառապանքե փրկվող հոգի մը։ Եվ կխնդրեմ, որ Ձեր Սրբազնությունը չի մերժի խոնարհ ղավակ մը։ որ որդիաբար և անարժանարար Ձեզի կնվիրվի։

Ռուբեն Հ. Ջիլինկիրյան

ԵՂԻՇԵ ԱՐՔ. ԴՈՒՐՅԱՆԻՆ

19 Ապրիլ, 1910, Լոզան

Ամենապատիվ Ս. Եղիշե Արք. Դուրյան
Պատրիարք Կ. Պոլսոյ

Գերագոյն Հա՛յր

Երջանկության ամենաբուռն արտահայտումն է, որ կբերեմ Ձերդ Սրբազնության՝ այն հայրական սիրույն համար, զոր ցույց կուտաք անարժան և հեռավոր որդյակի մը։ Իմ տառապանքի օրերուս մեջ միշտ զՁեզ ունեցա իբրև քաջալերիչ հույս մը, և ահա այդ հույսը այսօր՝ շնորհիվ Ձեր հայրապորով կարգադրության, իրականություն մը եղավ։ Այս երկչոտ տողերովս կ'ուզեմ իմ երախտագիտությունս հայտնել Ձերդ Բարձրության այն երկու հարյուր ֆրանքի գումարին համար, զորս ստացա անցյալ ամիս Տիար Հրանտ Նազարյանի միջոցով, և որոնք արդեն հատկացուցի համալսարանական հին պարտքերու։ Ընդունեցեք կանխավ իմ ջերմ շնորհակալություններս ամսական 50 ֆրանքի Ձեր բարերար որոշումին համար, և հավատացեք, որ այդ սերմերը ապերախտ հողի մը վրա չի պիտի իյնան։

Ներեցեք ինձ համբուրել Ձեր աջը որդիական սերով։

Ռ. ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ

ԹԵՈԴԻԿԻՆ

Լոզան, 10 Օգոստ., 1910

Սարսռալով կարդացի «Ամիս մը ի Կիլիկիա»-ն։ Առա՜նց շաղակրատ հառաչանքի, առա՜նց փքոցուուցյ երեմիականներու, առա՜նց բանաստեղծության այդ գիրքը սրտի՛ս մեխվեցավ տեղի պես։ ՅԱՎԻՆ գիրքն է այդ, ավելի ճիշդ՝ ՉԱՅՐՈՒԹԻՒՆ գիրքը։ Ու ես մխիթարվեցա հոն գտնելով այն էական միտքը, զոր ջանացեր էի գտնել «Կարմիր գիրք»-իս մեջ։ Այո՛, հարգելի հեղինակուհի, հացը աշխատողինը չէ՛, հացը գողցողի՛նն է. ու մեռնողին իրավունքը մեռցնողին հարցնելը եղերական անմտություն

մրն է։ Սակայն թշվառակա՛ն, ու անզգաստ՛ էլ, ու անիմա՛ստ, ու անվրեժ-խնդի՛ր Հայութեան մը հազարներով ջարդվիլը նկարագրելի վերջ, ինչպե՛ս քաջալերեցուցիչ է ա՛փ մը Տյորթ-Յոլցի հայ քաջերուն աստվածային ու հոյակապ դյուցազնութիւնը, որ գիրքը կվսեմացնե, կավարտե ու կպսակե զայն հոմերական հերոսներու վայրագ ու արյունոտ պսակով...

Լոզան, 18 Օգոստ., 1910

Աբրելի Թեոդիկս.— Կգրկեմ «Վերջին Հայերը» զոր մասնավորապես Տարքեցուլցիդ համար պատրաստեցի։ Ջանացի «Ազատ Հայուն փոքրիկ Հանրագիտարան»-ին մեջ բացատրել ստրուկ Հայուն մեծ վերքերը։ Աշխատեցա հոն ցուցադրել «նախատահմանադրական» շրջանի մեր գաղթական Հայերուն հոգին՝ իր բոլոր լացնող պարզութեանը մեջ։ Չեմ գիտեր թե հաջողեցա՞. ամեն պարագայի մեջ կհուսամ որ հրատարակութիւնն օգտակար կ'ըլլա՝ ժողովուրդը արտագաղթե զգուշացնելու տեսակետեն։ Կվախնամ, որ ուշ մնացի քիչ մը, բայց «Աքնուն տակ ամենո՛ւն ալ անեղ կա» կ'ըսեն, ու կհուսամ, որ խոշոր գիրքիդ մե՛ջ պզտիկ քանաստեղծի մը համար անկյուն մը կ'ըլլա միշտ։

Լոզան, 8 Մարտ, 1911

Շնորհակալ եմ քեզ՝ բարեկամական ա՛ղնքան գեղեցիկ տողերուդ համար։ Ու այս առաջին անգամը չէ, որ կգրես. ես միշտ ծուլացեր եմ գրելու, չեմ ծուլացեր՝ ստիպվեր եմ չգրելու, ու մի՛շտ ալ ցավեր եմ։ Աջ կողմս հիվանդ, ձախ կողմս դիակ, ողջերու հետ զրաղելու ժամանակ կա՞ որ։ Մեղքս հասկցար. գրե՛ ինձ երկար ու հաճախ. եթե երբեմն ծուլանամ՝ ներե՛ ինձ։ Եվ որպեսզի ներելուդ առաջվընե վստահ ըլլամ, կզրկեմ քեզի Թոլսթոյի գլուխ-գործոցը։ Չըլլա՞ որ միտքեդ անցընես, թե ասիկա պարզապես փոխարինութեան համար է «Ժամանակ»-ի մեկ տարվան նվերիդ համար. ո՛չ, բարեկամութեան մեջ փոխարինութեան զգացում մը երբ մտնե՝ սրտին մեջ վաճառականութիւնը մտած կ'ըլլա։

...«Վերջին Հայերը»-ս շատ գնահատվեր է, կ'ըսես, պոչսահայերեն. շնորհակալ եմ։ Երեկ Եգիպտոսեն եկած Հայե մը իմացա, որ այդ վատասերած Հայութեան մե՛ջ ալ գտեր է խանդավառության ցույցեր։— Հոս կ'ավարտեմ նամակս. պետք է իսկույն հիվանդանոց վազեմ։ Ցտեսութիւն։

Լոզան, 7 Մայիս, 1911

Կվախենամ, որ վշտացար՝ նամակիդ պատասխանն ուշացնելուս համար։ Եթե գիտնայիր, որ ես ի՞նչ կրակներու մեջ էի, գիշերս ցորկիս խառնած՝ ի՞նչ աշխատության մեջ, ի՞նչ հեռեռ ու ջղայնի ուսումների մեջ, վստահ եմ, որ պիտի ներեիր։ Պիտի ներեիր, որովհետև La fin justifie les moyens[1] *և այս վերջավորությունը շատ փայլուն եղավ, քանի որ բժշկական կամարին առջև ընդհանրությունները անցուցի բնությունները։*

Կարոտալի համբույրներով՝ քուկդ
Ռ. ՍԵՎԱԿ

ՆԱՄԱԿՆԵՐ Պ. Մ.-ԻՆ

1906, Մարտ 9, Լոզան[2]

Սիրելի քնկնքա Պ. Մ...

Այս առաջ ստացա նամակդ։

Ինքզինքդ արդարացնելու համար շատ մի՛ ամիր։ Ամա՛ մը դուք եք՝ իրրև թե առաջվընե որոշած եք եղեր արդեն ուշացնել նամակդ, իրրև թե կսպասես ձեզի, որ անհամբերության նշաններ ցույց տամ Գեղամին գրած նամակներուս մեջ։

Բայց, քաղեցիկս, ասոնք փաստեր չեն։ Ասոնք ոչ մեկ կերպով կ՚արդարացնեն ազատան եկիպ հապաղում մը։

Լոզան հասնելուս, նամակ մը քեզի գրեցի, նամակ մը Գեղամին։ Գեղամը գրությունս առած օրն իսկ պատասխանը գրեց, իսկ դուն երկու ամիսեն հանիցպ բան մը գրելու ինձի։ Իրողությունը շատ պերճախոս է ինքնին, պետք չկա երկարելու։ Միայն չի մոռնամ ըսելու, որ եթե ապրիներո՞վ ալ սպասեիր, անհամբերության նշան մը չպիտի տես-

---

[1] Նպատակն արդարացնում է միջոցը։ (Խմ.)

[2] *Այս բոլոր նամակներն ուղղված են Լոզանեն ի Պոլիս, Պերսկերյան Վարժարանի իր դասընկերներուն մեկուն Պ. Մ.-ի, բացի տասներկուերորդեն, որ ուղղված է երկու ընկերի՝ Պ. Մ. և Զ.։ Երկուքն ալ Պոլիս ապրելուն՝ ստիպված եմ չհրատարակել անունները։ Բնագիրները կպահվին իմ քովս։*

Բոլոր իրավունքը վերապահված Չիթճյանի։

Նեիր իմ կողմիս։ Պատճա՞ռ, պատճառը շատ պարզ է. վշտացեր էի քեզի դեմ այս ծույլ հապաղումիդ համար։

Այս անհամ լռությունդ շատ աղվոր ապացույց մը չէր այն բարեկամության համար, զոր ցույց տալ կ՚ուզեիր իմ մասիս։

Գեղամը մի քանի նամակներ զրկեց ինձ այն ատենեն ի վեր, Աշոտը նամակ մը զրկեց՝ առա՞նց կանխավ ինձմե նամակ մը ստացած ըլլալու, Զարֆեյանը նմանապես և ուրիշներ ալ։ Մինչդեռ դո՞ւն...

Եվ առանց քաշվելու ալ նամակիդ մեջ երկու հատ տասը սանթիմնոց բուլ[1] կդնես։ Բայց, պարո՛ն բարեկամս, արդյոք ծաղրե՞լ կ՚ուզես զիս, թե կծծի ընկերոջ մը դեմ կկարծես ինքդինքդ։

Շնորհակալ եմ այդ երկու հատ տասը սանթիմնոց բուլերուն համար. քեզի կվերադարձնեմ զանոնք, որպեսզի այդ բուլերով անմիջապես պատասխան մը գրես ու զրկես ինծի՝ առանց նորեն սպասելու, որ անհամբերության նշաններ ցույց տամ...

Կտեսնես, որ բարկացեր եմ, բայց կտեսնեմ, որ դուն ալ հետզհետե կբարկանաս՝ կարդալով այս խիստ տողերս. ուրեմն կդադրեցնեմ նամակիս հանդիմանական (!) մասը ու կ՚ուղեմ մի քանի կարճ գիծերով դոհացում տալ հարցումներուդ։

Եթե ինծի աղվոր նամակներ գրես, հարկ չկա ըսելու, որ բարկությունս կ՚անցնի (!) ու ավելի լավ կերպով կպատասխանեմ բոլոր նամակներուդ։

Բայց քանի որ վշտացուցիր զիս, ես ալ... չի պիտի վշտացնեմ քեզի։ Ու ահավասիկ պատասխանեմ.

Բժիշկ ըլլալու անհուն տենչ մը ունիս եղեր։ Գնահատելի է փափագդ։

Եվրոպա գալու մեծ իղձ մը ունիս եղեր։ Կգովեմ նպատակդ։

Խնայելու ահագին պետք ունիս եղեր։ Խնայելը լավ բան մըն է։

Նպատակիդ իրագործման համար force motrice[2] պետք ունիս եղեր։ Ես ալ ասեմ։

(Սատանան կդրդե՞ն կոր զիս՝ ասանկ խեղկատակ պատասխաններ տալ հարցումներուդ, պատժելու համար զքեզ, քու երկամսյա լռությանդ համար։ Բայց ես կմեղքենամ կոր քեզի ու չեմ ուզեր կոր «ատամն ընդ ատամն» օրենքով վարվիլ քեզի հետ։ Ահա լուրջ տեղեկություններ քեզի)։

Եթե Եվրոպիս մեջ բժշկություն ուսանելու միտք ունիս, քեզի հա-

---

1 Նամակադրոշմ։

2 Շարժիչ ուժ, մղիչ զորություն։

մար ամենեն հարմար տեղն է Լոզանը։ Ինչո՞ւ. 1. Որովհետև հոս հանդարտ գլխովդ կրնաս աշխատիլ։ Բարիզի պես մոլորություններով, դայթակղություններով, հաճույքներով լեցուն խո՛ւլ քաղաք մը չէ ասիկա, հապա խելոքիկ ու հանդարտիկ վայր մը՝ աշխատելու և հառաջանալու համար շատ հարմար։

2. Սքանչելի համալսարան մը ունի, որ է՛ն առաջնակարգն է բոլոր Զվիցերիո համալսարաններուն մեջ, մանավանդ բժշկական ճյուղը շատ երկիրներու նույնօրինակ հաստատությանց հետ կրնա մրցիլ։ Վիրաբուժությունը մանավանդ շատ հառաջ դացած է։

3. Եվրոպիո մեջ այն միակ քաղաքն է, ուր մարդ կրնա ապրիլ ամենեն քիչ դրամով։ Ահավասիկ թե ո՛րքան ամսական պետք է ունենա մարդ հոս կարենալ ապրելու համար իբրև ուսանող։

Սենյակի ծախքիդ՝ 20—25 ֆրանք։

Ճաշարանի ծախքիդ՝ 45—60 ֆրանք։

Լվացքի ծախքիդ՝ 3—5 ֆրանք։

Գրպանի ծախքիդ՝ 5—10 ֆրանք։

Գումար՝ 73—100 ֆրանք։

Ուրեմն մարդ մը, որ 100 ֆրանք ամսական ունի, կրնա հանգիստ կերպով ապրիլ հոս։ Կրնաս 70 ֆրանքով ալ ապրիլ, եթե շատ խնայող ես։

Միայն թե համալսարանին համար բժշկական ուսանող մը պետք է վճարե 16 գաղղ. ոսկի՝ առաջին տարվույն համար, հաջորդ տարիներուն համար վճարելիքը հաղիվ 7—8 ոսկի է տարեկան։

Մանրամասնությունները հաջորդ նամակովս։

Բարևներս ծնողքիդ, եղբայրներուդ և քեզի։

ՌՈՒԲԵՆ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Հ. Գ. Պ. Գեղամին կրարևես։

ԼՈՒՅՆ

1906, Ապրիլ 2, Լոզան

Սիրելի ընկերոջս Պ. Մ...ին

Ստացա նամակդ, ուրախ եմ։

Առանց երկար ձևաբանություններու մեջ մտնելու, պիտի խոսիմ քեզի ուղղակի քու խնդրույդ վրա։ Այս անգամ շատ կարճ պիտի գրեմ քեզի՝ որովհետև այս անգամ շատ նամակներ ունիմ պատասխանելու։

Եթե կ'ուզես ծանրանամ քիչ մը դրամական խնդրույն վրա։ Կ'ըսես թե շատ խնայող կյանք մը պիտի ունենաս հոս. ուրեմն դուն ալ հիշտ

ինձի պես պիտի ապրիս, հետևաբար, լա՛վ է, որ իմ ծախքերուս վրա խոսիմ քեզի։

Ես սենյակի համար 20 (քսան) ֆրանք կվճարեմ։ Օննիկին հետ երկու անկողինոց մեծ սենյակ մը վարձած ենք՝ ամսական քառասուն ֆր.-ի փոխարեն։ Եթե կ'ուզես առանձին սենյակ մը վարձել, կրնաս ամսական 23—27 ֆր.-ով կոկիկ սենյակ մը գտնել, կան 15 ֆրանքնոց սենյակներ ալ, բայց հոն 15 օրեն կմեռնի մարդ։ Ուրեմն պետք է անպատճառ 25 ֆր.-ի մոտ գումար մը հատկացնես սենյակիդ համար։ Անկողինը՝ իր բոլոր կազմածովը, lavabo մը (այսինքն՝ փայտե կամ մարմարե սեղան մը, լվացվելու համար պետք եղած կոժերովը), աշխատության սեղան մը՝ իր ծածկոցովը, թիկնաթոռ մը կամ ոտարզ աթոռ մը (վճարած ամսականդ գիտե), divan մը (այսինքն՝ շիլթիներով աղմոր նստարան 2—3 հոգիի համար), պատին վրա մի քանի պատկերներ (շրջանակով կամ ոչ՝ դրամդ գիտե), սեղան մը, մեծկակ հայելի մը արդուզարդիդ համար, abat-jour*ով լամպա մը, armoire* մը հագուստներու համար։ Ահա թե ինչ՝ կբաղկանա սենյակին բոլոր պարունակությունը[1]։

Զմեռը սենյակիդ մեջ զոպա[2] վառելու համար պետք է տաս 3—4 ֆրանք ամսական։

Հիմա գանք ճաշարանին։

Էն առաջ եկած ատենս ճաշարան մը մտա՝ ամսական 50 (հիսուն) ֆրանքով. Déjeuner, diner, souper*։

Նախաճաշիս համար կուտար զավաթ մը կաթ և ballon մը (ballonը փոքրիկ կլոր հաց մըն է՝ 5 սանթիմ արժողությամբ)։

Յորեկվան կուտար ապուր մը, միս մը (եղի կամ խոզի միս)՝ բաթաթեսով կամ բանջարեղեններով և dessert մը (dessertը միայն կտոր մը անուշեղեն էր)։

Իսկ գիշերը կուտար ապուր, բաթաթես, dessert և սուրճով կաթ։

Այս կերակուրները ա՛յնչափ գեշ էին, որ ստամոքս հիվանդացավ և սկսավ արգելք ըլլալ աշխատություններուս։ Երկու ամիս հոն ճաշելն վերջ, գտա ուրիշ ճաշարան մը՝ ամսական 60 (վաթսուն) ֆր.-ով։ (Երբ ճաշարան կ'ըսեմ, պետք չէ հասկնալ հատարակաց ճաշարանները, ուր ամեն մարդ կրնա ճաշել՝ վճարելով 2—3 ֆր. յուրաքանչյուր ճաշին

---

1 Գծված պատրաստ décor, ուսանողի մը սենյակին, բնական դրվածքի մը համար։

2 Վառարան։

համար։ Իմ ճաշարան բաժնս անանկ տեղ մը, ուր abonné՝ները միայն կրնան ճաշել (որոնց ամենքն ալ étranger[1] են ընդհանրապես։ Այս սեսակ ճաշարանները կկոչեն pension)։

Արդ՝ այս երկրորդ pensionին մեջ հանդիստ էի. շատ քիչվոր էինք հոս՝ 3 Գերմանացի, 1 Դաղդիացի, 3 Պուլկար, 2 Հայ։

Օր մը պզտիկ պատճառով մը մեծ կռիվ մը ըրի մեր chef de pension՝ին հետ և ելա անկեց։ Գտա ուրիշ pension մը՝ ամսական 55 ֆրանքով. մե՛կ, որ միայն ճաշեցի հոս և մնաս բարովը կոխեցի, որովհետև չափազանց աղտոտ էր այստեղը։

Հիմա ուրիշ pension մը գտած եմ ամսական 60 (վաթսուն) ֆրանքով։ Շա՛տ, խի՛ստ շատ գոհ եմ այս տեղեն։ Սքանչելի կերակուրներ կուտա կոր։

Առավոտուն ուղածիդ չափ հաց, ուղածիդ չափ սուրճով կամ գուտ կաթ, ուղածիդ չափ անուշեղեն և կարագ։

Ցորեկին աղվոր ապուր մը, հետո entrée՝ մը (այսինքն թեթև կերակուր մը, որ է հավկիթի կամ ձուկի, կամ միսի զանազան պատրաստություններ), հետո միս և salade, հետո dessert (աղվոր անուշեղեններ կամ պտուղներ), հետո... ճաշը կլմննա։

Գիշերն ալ ճիշտ այս կարգով։

Շա՛տ գոհ եմ ասկեց, մինակ թե մեկ անպատեհություն մը ունի. այն է, որ ամսականը պետք է ամսուն սկիզբը վճարել։

Ինչևէ, շատ մաքուր ու շատ աղնվական տեղ է հոս, եթե դուն ալ դաս գալ տարի, քեզ շիտակ այս pensionը պիտի առաջնորդեմ...

ՌՈՒԲԵՆ ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ

Հ. Գ. Պահարանիս մեջ կ'գտնես ուրիշ պահարան մը. եղբորդ Ա.-ի հետ զանիկա Բառնասարյանին զրկե՝ կարելի եղածին չափ շուտով։

Պատասխանդ ալ շուտ զրկե։

Բարևներս հարգելի ծնողացդ, եղբայրներուդ և քեզի։

Ռ. Չ.

Հ. Գ. Այս նամակս ավարտած էի արդեն, երբ ստացա 16 մարտ թվակիր գրությունդ։

Հասցես փոխված է. Tchilinguirian, Square de Georgette, 3 Lausanne (Suisse)

---

1 Օտարական։

1906, Ապրիլ 16, Լոզան
այսօր ապրիլ 21.

Սիրելի ընկերս,

Քիչ մ'առաջ ստացա նամակդ։

Պզտիկ դիտողություն մը, եթե կներես. դուն քու նամակներուդ մեջ ո՛չ մեկ լուր, ո՛չ մեկ հետաքրքրական նորություն կպատմես հոնտեղի կյանքին վրա և իմ ընկերներուս ու ծանոթներուս կյանքին վրա։ Մի՛միայն հարցումներով կլեցնես նամակդ և կ'ուզես, որ իմ նամակիս մեջ ալ մի՛միայն քու հարցումներուդ պատասխանը տեսնես։

Մեկ խոսքով քեզի ստացած նամակներս (թվով 4 հատ կարծեմ) զուրկ են ինձ համար որևէ շահեկանութենե։

Եթե կ'ուզես, որ մանրամասնորեն պատմեմ քեզի հոստեղի եղածները, պետք է որ դուն ալ ինձ պատմես հո՛նտեղի եղածները, ապա թե ո՛չ... ես չեմ ըլլար տուժողը։

Ահավասիկ քեզի նախաբան մը!

Հիմա գանք քու հարցումներուդ։

Անցագրի մասին դյուրին միջոց մը հարցուցեր ես ինձ։ Դյուրին մե՛կ միջոց մը կա, այն ալ դրամն է։

Եթե դրամ ունիս կրնաս մե՛կ շաբաթվան մեջ անցագիրդ հանել և ճամբա ելլել։

Մեկը կհանչնամ, որ շատ ձեռնհաս է այսպիսի գործերու մեջ և հարյուրին հարյուրը կհաջողցնե գրեթ. մե՛կ պայմանով մը... դրամով։

Ասիկա Ֆերի գյուղի եկեղեցվուն մեջ պաշտոնավարող Տեր-Գեորգ քահանա Անանյանն է։ Շատ բարի ու ազնիվ անձնավորություն մըն է ինքը։ Եթե կ'ուզես տեսնել զայն, առտու մը Բերայի Սուրբ Երրորդություն եկեղեցին գնա՛ ժամկոչին հարցուր և ան կ'ըսե քեզի ուր ըլլալը։

Կխոսիս իրեն հետ, կ'ըսես, թե Պերլին պիտի երթաս բժշկություն ուսանելու համար, կսակարկես, և ան կհաջողեցնե քու անցագրիդ խնդիրը։ Միայն թե պետք է 10—13 ոսկի մը աչքդ հանես։

Անցագրիդ մասին ասչափ։ (Չի մոռնամ ըսելու, որ իմ մասիս խոսք չ'ընես քահանային)։

Հիմա գանք նամակիդ մյուս կետերուն։

Շատ միամիտ կհամարես զիս զալ տարի Լոզան հասնելուդ հավատալուս համար։

Ներե ուրեմն, որ կասկածիմ ես քու որոշումիդ և քու կամքիդ վրա։

Ա՛յն, որ կ'որոշե, ա՛յն, որ կամք ունի, անիկա կհաջողի։ Իսկ այն, որ կկասկածի իր որոշումին վրա, անիկա բնա՛վ չի պիտի կրնա հաջողիլ։

Հոս ընդօրինակեմ քեզի մաս մը այն նամակես, որ անցած տարի Ջատիկն առաջ Օննիկին գրկեր էի. «Ո՛չ, Օննիկ, անկարելի բան չիկա։ Կամքս կամք է, նպատակս նպատակ. գալ տարի անպատճառ հոն պիտի գամ»։

Իմ այս տողերուս հետ բաղդատության դիր քու տողերդ։ Ի՞նչ անկում. քու նամակներուդ մեջ միա՛յն կասկած կա, միա՛յն վախ կա, միա՛յն անորոշություն կա։

Կամքի տեր մարդ մը, երկաթե՛ կամքով մա՛րդ մը բնավ չպիտի գրեր այսպիսի խոսքեր.

«Դեռ ծանր խնդիրներ կան...»։ «Իցի՞վ թե դյուրությամբ կարգադրվեր...» և այլն, և այլն։

Որոշե՛, պայքարե՛, կամքո՛վ և հավատքո՛վ հառաջ մղե՛ նպատակդ ու հաջողությունը պիտի հասնի քեզի։

Այս խոսքերս կ'ուզեմ, որ մղիչ զորություն[1] մը ըլլան քեզի համար։

Գալով այն տեղեկություններին, զորս պահանջեր ես ներքին կյանքիս վրա և դասախոսությանս եղանակին վրա, և վարժարանին մանրամասնությանց վրա, այս տեղեկությունները չպիտի կրնամ տալ քեզի սա պատճառով, որ շատ տաղտկալի ու ձանձրալի աշխատություն մ'է ինձ համար նստիլ և գրի առնել առօրյա կյանքը, զոր կ'ապրիմ հոս և որ կփոխվի վայրկյանե վայրկյան։

Ասոնք անանկ մանրամասնություններ են, որք գրելով չեն բացատրվիլ, հապա կզգա մարդ զանոնք ապրելո՛վ միայն այն տարօրինակ ու հաղվագյուտ ու գերերջանիկ կյանքը, զոր ուսանողի կյանք կկոչեն։

Բաց աստի դուն պետք չունիս անոնց, ինչպես նաև բնավ պետք չունիս programmeին, զոր պահանջեր ես։ Ասոնք շատ երկրորդական խնդիրներ են։

Նախ ջանա՛ կարգադրել հիմնական խնդիրներդ. առաջինը, որ դրամն է, երկրորդը, որ անցագիրն է։

Ասոնք կարգադրվելեն վերջ ոչինչ կմնա քեզի ընելիք, եթե ոչ պայմանագրական կառախումբով հասնիլ Լոզան, ուր մե՛կ օրվան մեջ պիտի կրնաս կարգադրված տեսնել մյուս բոլոր երկրորդական խնդիրներդ։

Կամք ու պայքար։ Ասո՛նք են հաջողության ծնողները։

ՌՈՒԲԵՆ ՉԻԼԻՆ.

---

[1] Առաջին նամակին մեջ հիշված force motriceին կ'ակնարկե ուղղակի։

Հ. Գ. Բարևներս հարգելի ծնողացդ և եղբայրներուդ։

Գեղամին շատ շնորհակալ եմ, որ այսքան ուշացուց նամակիս պատասխանը։ Տակավին մինչև ե՞րբ պիտի սպասենք իր գրության։

ՆՈՒՅՆ

Հ. Գ. Գեղամին նամակը այսօր ստացա։

ՆՈՒՅՆ

Հ. Գ. Programme չեմ գրկեր, որովհետև Շահանին «Le livre de l'Étudiant[1] անուն գիրք մը գրկած ենք, մեջը ամեն բան գրված է։ Եթե կ'ուզես, ա՛ռ Շահանեն և կարդա։

ՆՈՒՅՆ

1906, Մայիս 11, Լոզան
այսօր 1 Հուլիս

Պ. Մ. բարեկամիս,

Ստացա նամակդ։

Շատ զարմանալի տեսիլքի մը պատմությունը ըրեր ես ինձ՝ բաղնիքի մը մեջ։ Ասիկա առիթ մըն է, որ ես ալ խոսիմ քեզի այս տեղի բաղնիքներուն վրա։

Հոս տեղ, երբոր բաղնիք ըսես, պետք է որոշել, թե ո՞ր տեսակ բաղնիք է ուզածդ. որովհետև ամե՛ն տեսակին կա հոս. թրքական, ռուսական, ամերիկյան և տեղական, և ուրիշ զանազան բաղնիքներ։

Ամենեն աժանը douche՝ է. առանձին-առանձին խցիկներ են ասոնք (միմիայն մեկ հոգինոց), ուր մարդ կրնա douche-ի տաք կամ պաղ լոգանք մը ընել 25 սանթիմի փոխարեն։

Ես ընդհանրապես bain ordinaire-ը[2] կհամախեմ։ Ասոնք ալ մեկ հոգինոց ազվոր խցիկներ են, ուր խոշոր պանեռ մը կա՝ ջուրով լեցուն (բարեխառնությունը կրնաս փոխել), որուն մեջ ժամ մը փառավոր կերպով կպառկիս, կ'երգես և կցնծաս, ցնծալով նաև մեկ ֆռանքը!

Տակավին կան նաև բաղնիքներու հազար մեկ ձևեր. bains de fumigation, bains de massage, bains de luxe[3] և այլն, և այլն։ Ամեն

---

1 Ուսանողի գիրքը։

2 Սովորական բաղնիք։

3 Շոգիի, մարմնամի, պերճանքի բաղնիք։

բան գրպանիդ պարունակած գրամի համեմատ է հոս։ Հարկավ դուն՝ գալ տարի bains de luxին պիտի հաճախես, հուսամ!

Ահավասիկ քեզի մեր բաղնիքներուն նկարագրությունը։

Մենուկես երեսը լեցավ արդեն, հիմա ի՞նչ գրեմ, որ մնացյալ երեսներն ալ լենան։ Չեմ ուզեր ամբողջ նամակս տեսիլքի մը պատմությունով լեցնել (ինչպես որ դուն սառանալարար ըրեր էիր)։ Պիտի գրեմ քեզի ուսանողի կյանքին խոշ կողմերուն վրա!

Հոս շատ մը ռուս ուսանողներ ու ուսիներ կան։ Ասոնք գաղղիերենը լավ չեն կրնար խոսիլ։ Բժշկության cours[1]երուն հետևողները մեծ մասով ուշի են։ Այնպես որ, երբ մեր auditoireը[2] դաս պիտի տեսնես, որ auditeurներուն[3] հարյուրին ութսունը աղջիկ է։

Արդ օր մը քովի աղջիկս տարօրինակ հարցում մը ուղղեց ինձ.

— Pardon, Monsieur, est-ce que vous pouvez me donner un cadeau?[4].

Զարմացած ըսի իրեն, թե նվեր մը չունիմ իրեն տալիք։

Բայց աղջիկը շիկնեցավ և պնդեց, թե ունիմ.

— Mais je l'ai vu, vous vavez un cadeau[5]։

Խնդիրը երկարեցավ, հարկ եղավ, որ ուրիշ ռուս աղջիկներ միջամտեն գործին և հասկցնեն ինձի, թե ի՞նչ կ'ուզեր կոր քովի աղջիկս։ Ու այն ատեն միայն հասկցվեցավ, թե խե՜ղճ աղջիկը գաղղիերեն չէր գիտեր և պարզապես canif[6] ըսել կ'ուզեր։ Tableau[7]!

Հոս այս ռուս ուսանողները այնքան շատ են, որ մարդ ստիպված է ռուսերեն սորվելու՝ անոնց հետ կարենալ ապրելու համար դասարանին մեջ։

Ես հիմա քիչ շատ կհասկնամ իրենց լեզուն։ Եվ եթե կ'ուզես գործածական բառերեն քանի մը հատ ըսեմ քեզի, այս բառերը զո՛ւն ալ սորվե (գալ տարի շատ պետք պիտի ըլլա քեզի!)։

— Խարաշո— գեղեցիկ, Քակ բաժի վայերե—ի՞նչպես եք, զտրասվուիշեի— բարև, սպասիպո— մերսի, ղլո՜պի— ավանակ, տուռակ— ապուշ, պառուսմի տիեզ նայու— ռուսերեն չեմ գիտեր։

---

1 Դասընթացք։

2 Դասարան։

3 Ունկնդիր։

4 Ներողություն, Պարոն, արդյոք կրնա՞ք նվեր մը տալ ինձի։

5 Բայց ես տեսա, դուք նվեր մը ունիք։

6 Զմելի։

7 Տեսարան։

• • •

Ինչպես ըսի, մեր դասընկերներուն մեծ մասը աղջիկներ են՝ ճերմակ մազերով, խորշոմած երեսներով, blonde[1] մազերով, վարդ երեսներով, լեցո՛ւն են, ամեն տեսակին ալ լեցուն են մեր դասարաններուն մեջ։

Քանի մը հատ ալ հայ աղջիկներ կան (ռուսահայ), որոնք, սակայն, խոսքը մեջերնիս, չափազանց ծույլ են և հազիվ երկու շաբաթը անգամ մը դասարան ոտք կկոխեն։

Հայ մանչեր ալ կան քանի մը հատ (ռուսահայ), որոնք բժշկություն սորվելու միտք ունին եղեր, բայց անմրցելի ծույլեր են։ Մեկը միայն շատ լուրջ ու շատ աղնիվ ուսանող մ՝է, որ կնիկն ու զավակները Կովկաս ձգած է՝ հոս բժշկություն ուսանելու համար։ Մի՛այն իրեն հետ կխոսիմ, ռուսահայ լեզվով բնականաբար։

• • •

Ահավասիկ քեզի անկապ խոսքերու շարք մը, որ հակառակ իր ոչընչության կրնա հետաքրքրական և զավեշտական կողմեր ունենալ քեզի համար թերևս։

Պայմանագրական շորս երեսներս լեցան, հիմա ինձ կմնա այս նամակը բոսֆայի հանձնել (ինչ որ քանի մը օր կտևե անպատճառ) և սպասել հաջորդ նամակիդ (որուն մեջ շա՛տ ազվոր գիտեմ, թե հետաքրքրական ո՛չ մեկ բան գրված է) և պատասխանել անո՛ր ալ։

Այս անգամ այսչափ։

ՌՈՒԲԵՆ ՉԻԼԻՆ.

Հ. Գ. Եղնիկեն ո՛չ մեկ գրություն ստացեր եմ։ Կցավիմ, որ կորավեր է իր նամակը։ Ես իր հասցեն չեմ գիտեր, որ գրեմ։ Մասնավոր բարևներս իրեն և մյուս բոլոր ընկերներուս, ինչպես Զարֆճյանին և Գեղամին։

1906. Հուլիս 1

Հարգելի բարեկամս Մ...

Ստացա վրայն վրա գրված երեք նամակներդ։

Լռությունս տարօրինակ կգտնես և պատճառ մը չես կրնար գտնել այս հապաղումիս համար։

Ուրեմն կմոռնաս, որ աշխարհքի վրա հազարումեկ անակնկալներ

---

1 Գեղձան։

կան. կմոռնաս, որ աշխատությունը հոգնություն առաջ կբերե, և հոգնությունը՝ հիվանդություն, հիվանդությունն ալ լությո՛ն։

Կ'երևակայեմ, որ ինչ՞ը ըսիք ինձ համար, երբ ձեր նամակներուն պատասխանը այսքան ուշացուցի՝

Գեղամը ըսավ. «Ա՛լ եվրոպացի եղավ անիկա, ճանըմ, մեզի կարևորություն կուտա՞ մի յա...»։

Զարֆճյանը ըսավ. «Նամակ ղրկեցի՝ պատասխան չիկա, քառթ ղրրկեցի՝ պատասխան չիկա. աս ի՞նչ ինսաֆսըզություն է պե, մեյ մըն ալ գրեմ նե երկուք ըլլա»։

Դուն ըսիր. «Իր բարեկամությունը ասանկ է եղեր. երեք եղավ նամակ կգրեմ, տակավին տող մը չառի. Լոզան գնաց, մեզի մոռցավ»։

Ու դեռ շատեր այսպես մտածեցին հարկավ։

Եկու տես, որ անանկ չէ!

Ո՛չ ծուլություն, ո՛չ մոռացում կա գործին մեջ։

Չի գրելուս պատճառները երեք էին։ Նախ՝ բացարձակապես ժամանակ չունենալս (քննություններուն մոտենալուն պատճառավ)։ Հետո՝ հիվանդություն մը, որ բավական ատեն անգործության մատնեց զիս. և հետո ավելի լուրջ պատճառ մը, զոր հիմա չեմ կրնար ըսել դժբախտաբար և որ գալ տարի կ'իմանաս, երբ հոս գաս...

Հիմա քեզի կղրկեմ այն նամակը, զոր գրեցի Մայիս 22-ին՝ առաջին նամակդ ստանալուս պես և որ հիվանդությանս պատճառավ չի կրցա ղրկել։

Երբ այսօր կկարդամ գրեթե ամիս մը առաջ գրած այդ նամակս՝ խնդալս կուգա։ Ի՞նչ տղայական բաներով լեցուցեր եմ երեսները։

Հիմա ի՞նչ գրեմ քեզի, որ բան մը արժե, որպեսզի ներես ինձի այս երկար հապաղումս։

Անցագիրդ ի՞նչ ըրիր. գործողությունները սկսա՞ր։ Եթե չսկսար, անապարեն շուտ։ Մինչև որ ամսական 100 (հարյուր) ֆրանք չ'ապահովես քեզի համար, ճամբա մ'ելլար։ Որովհետև երբ աշխատությունդ շատ ըլլա, իսկ ամսականդ քիչ, անպատճառ կհիվանդանաս։ Այս տեղին կերակուրները շատ կվնասեն մեզի. ո՞ւր են մեր պոլսական պատվական կերակուրները։

Առա՛տ կեր այդ տեղի կերակուրներեն, որովհետև վերջը եթե հոս գաս, շատ պիտի կարոտնաս զանոնք։

Տոմաթեսը նարինջի պես հարգի է հոս, բաթլիճանը 30 սանթիմ է մեկ հատը։

Ամեն բան սուղ է վերջապես. ո՞ւր կփնտռես մեր Պոլսո աժանությունները և առատությունները։

Հարդեն գլխարկ մը (համեստ գլխարկ մը) 8—10 ֆր. կ՚արժէ. բոլիին՝ մը 25 ֆրանքով հագիվ կարելի է գնել (պաշտման 5.50 ֆրանք է)։ Հագնվելիք պարզ հագուստ մը 60—80 կ՚արժէ։ Եվ դեռ ինչ՞ը։

* * *

Նյութը փոխենք։ Եթե կ՚ուզես խոսիմ քեզի այս տեղի étudiantներուն վրա։

E՚tudiant՝ մը կարելի է ճանչնալ 100 մետր հեռուն. կարմիր, կանաչ կամ կապույտ քասքեթ մը դրած է գլխուն վրա՝ շեղակի։ (Գույներեն կհասկցվի, թե ո՞ր sociétéին կպատկանի)։ Նույն գույներով ժապավեն անցուցած է եղեկին վրայեն՝ շեղակի։ Նույն գույներով թաշկինակ մը ցուցադրած է ժաքեթին վերի գրպանեն՝ շեղակի։

Այս étudiantները ամեն երեկոյի խենթությունները կ՚ընեն քաղաքին մեջ, և ամեն մարդ կսիրե զանոնք, և ամեն մարդ կհավնի իրենց խայտառակություններուն. որովհետև étudiant են։

E՚tudiantները ամենեն երջանիկ և ամենեն սիրելի դասակարգն են եվրոպացիներուն մեջ։

Կնայիս, որ մեկը կսուլի և ամեն ծակերեն դուրս կուգան étudiantները, կարգ կ՚ըլլան, կ՚սկսին աղաղակներ նետել օդին մեջ, մարշ մը կ՚երգեն ու կհառաչանան, խենթումենք շարժումներ ընելով կվազեն, կհոգնին ու վերջապես brasserie[1] մը մեջ կ՚երթան օրհնյալ պիրայով լեցնելու իրենց փորը։

Շատ երջանիկ արարածներ են այս գունավոր քասքեթներով պարոնները, միայն թե աշխատություն մի՛ հարցներ. ու ահա՛ ինչո՞ւ համար կարմիր կամ կապույտ քասքեթ մը չունիմ գլխուս վրա։

* * *

Նամակս կ՚ավարտեմ։

Անկեղծորեն ներողություն կխնդրեմ նամակիս ուշանալուն համար, որուն պատճառը կամքես բոլորովին անկախ էր։

Խոսե՛ ընկերներուս ալ. հասկցո՛ւր չի գրելուս պատճառը. ամենքն ալ թող ներեն ինծի։

Ներողություն կխնդրեմ նաև մեծահարգ ուսուցիչս՝ Մուրատյան էֆենտիեն, իրեն նամակին պատասխանը առայժմ չի կրնար գրելուս համար։

Բարևներ։

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

---

1 Գարեջրատուն։

Հ. Գ. Հիվանդությունս, որ ստամոքսի թեթև խանգարում մըն էր, կատարելապես անցած է։

ՆՈՒՅՆ

Հ. Գ. Վաղը Զարֆճյանին քառթ մը կղրկեմ. իրեն իմացուր։

ՌՈՒԲԵՆ

1906, Օգոստ. 31

Սիրելի բարեկամս Պ...,

Վարպետության ծուծը հաներ ես ա՛լ, Մ...

Bravo! վեց երես սըխր-սըխր նամակ մը լեցնե՛լ... առանց բան մը գրած ըլլալու! Է՜հ, աս վարպետությունը ամեն մարդու չէ տրված։

Նամակդ կ'ստանամ, անհամբեր կպատռեմ պահարանը ու կ'սկսիմ կարդալ՝ նախ հառաջաբան մը, հետո մեկ քանի խորհրդածություններ, հետո Պերպերյանի հանդեսը, հետո էֆենտիին «Հուսկ Բանքթ»-ը, նորեն խորհրդածություն. խորհրդածություններ օդին վրա. մեկ քանի խորհրդածություն ալ գալուզ կամ չի գալուզ վրա, ու եզավ վե՜ց երես։ Ա՜շք օլսուն, Պ...

Ու երևակայե, որ այս երկար նամակիդ մեջ որոշ խոսք մը անգամ չի կար քու գործիդ վրայոք։ Աշխատեցա՞ր, հաջողեցա՞ր, անցագրի գործերը սկսա՞ր, հույս կա՞, պիտի գա՞ս, չի՞ պիտի գաս։ Մա՜րդ Աստուծո, որոշ մեկ խոսք մ'ըսե, որ ես ալ բան մը հասկնամ գրած նամակեդ։

Ահավասիկ նորեն կգրեմ կոր քեզի։

Ամսական 90—100 ֆրանքով շատ հանգիստ կրնաս ապրիլ հոս։

Առաջին տարին համալսարանին պետք է վճարես 350 (երեք հարյուր հիսուն) ֆրանքի գումար մը. վճարելի՝ առաջին և երկրորդ վեցամսյայի սկիզբը։

Այս գումարը պիտի վճարես իբրև մուտքի ծախք, իբրև labortoire-ներուդ[1] ծախքը և իբրև հետևելիք coursերուդ ծախքը։

Երկրորդ տարին պետք չէ այդչափ մեծ գումար մը վճարել. այդ գումարը տարվե-տարի կպզտիկնա։

Շատեր կան, որ կ'ապրին միայն 70 (յոթանասուն) ֆրանք ամսականով, բայց ասոնք խե՜ղճ են։

Գիրքերը բավական սուղ կ'արժեն։ Ես այս տարի գրքի համար վճա-

1 Լաբորատորիաներ, տարբերակներ։

բեցի 25 (քսանը հինգ) ֆրանք։ Եթե հաջողիմ քննություններուս մեջ՝ այս տարի պիտի ծախեմ գիրքերս և պիտի գնեմ նոր գրքեր երկրորդ տարիին համար։ Անանկ որ գրքերը շատ մեծ ծախք մը չեն ներկայացներ ուսանողին budjetին մեջ։

Եթե հոս գալու միտք ունիս՝ կոշիկներդ, հագուստներդ, ճերմակեղեններդ Պոլիսեն հետդ բեր, որովհետև հոս շատ սուղ են։

Հագնվելիք սանկ կոշիկ մը կ'արժե 20—25 ֆրանք, պարզ costume մը վաթսուն ֆրանքի կնայի, հապա գուլպանե՞րը, շապիկնե՞րը, ճերմակեղեննե՞րը, ամենքն ալ սուղ են։

Բոթինի պաշլամա մը 25 դրուշեն վար չըլլար հոս։

Աղեկ, որ ես եկած ատենս ամեն բան առատ-առատ բերի, այնպես որ շատ բաներ գնելու պետք չեմ ունենար կոր։

Մինակ թրաշ ըլլալը աժան է հոս. ամեն տեղ 30 (երեսուն սանթիմ)։ Բայց շատ perfectionnée եղած է։ Մազ կտրել 50 սանթիմ, մազ լվալ 50 սանթիմ։ Տեսնելու բան է հոս coiffeurի[1] խանութները. մազերդ լվալն վերջ չորցնելու համար պետք չիկա խավլուներով ֆրշաներով երկար բարակ գլուխ արդուկելու. էլեքտրական գործիք մը անմիջապես չոր-չոր կ'ընեն մազերդ։

Մեյ մըն ալ բրամվեյը շատ աժան է։ Հարկ չի կա ըսելու, որ ձիով թրամվեյ գոյություն չունի հոս. ամենքն ալ էլեքտրական են։ Քաղաքը ծայրե ծայր կրնաս պտտիլ միմիայն 10 սանթիմով (2 մեթալիք)։

Կամուրջեն անցնելու համար տասնոց մը ցնծալու ստիպված չես։

Նավերն ալ աժան են (այսինքն՝ նավակները). ժամը 1 ֆրանք։

Շոգեկառք ու շոգենավ ultra աժան։

Զի՝ ժամը 5 ֆրանք։

Automobile՝ չեմ գիտեր, բայց շատ սուղ է կ'ըսեն կոր։

Գանք սնունդին։

Կաթ՝ զվիցերիական զմայլելի, անխառն կաթ՝ օխան 50 բարա։

Հավկիթ՝ է՛ն թարմ հավկիթները, 1 ֆրանք տուզինան։

Հաց՝ շատ աժան ու շատ պատվական։

Chocolat՝ չե՞ս գիտեր, որ Զվիցերիա շոքոլային հայրենիքն է։

Alcool՝ չայ և կաթ եփելու համար, օխան երեք դրուշ։

Շաքար՝ sucre cassé regulier[2], տուփերու մեջ, քիլոն 50 սանթիմ։

Ջուր՝ Ալպյաններուն զմայլելի՞ ջուրը, առանց կո՞ւտի...

Ահավասիկ քեզի հաշիվ։

---

1 Մազրիչ։

2 Կոտրած շաքար, կանոնավոր, քառակուսի կանոնավոր շաքար։

* * *

Այս անգամ նամակս վաճառականի տեսակ դարձավ, բայց ինչևէ, Etudiantի նամակ է, ատանկ կ'ըլլա։

Չես գիտեր, թե որքան հաճույք կ'զգամ, երբ այսպես գիներու և հաշիվներու վրա կգրեմ։ Դուն ալ, եթե հոս գաս, պիտի հասկնաս իմ ըսածս։ Շուտով պիտի սորվիս, թե ի՞նչ պատվական բան է դրամը և թե աշխարհի վրա չիկա ավելի անուշ բան մը, որքան ֆռանկը և սանթիմը։

* * *

Բարևներս հարգելի ծնողացդ, եղբայրներուդ (փոքր եղբայրդ կշնորհավորեմ իր շրջանավարտ ելլելուն առթիվ), Գեղամին, Զարֆեյանին, ամենուն, քեզի։

ՉԻԼԻՆԳԻՐ

Tchilinguir, Mont-Charmant, Lausanne, Suisse.

12 Փետրվար, 1907

Մ..., հոգի՛ս,

Պատասխանս ուշացուցի նորեն. այս այսպես եղավ մի՛շտ ու մի՛շտ ալ այսպես պիտի երթա կարծեմ։

Որովհետև (ինչպե՞ս ըսեմ) պարագաներս ծանոթ են արդեն քեզի, ու երկար բարակ փաստաբանելու պետք չունիմ ներողությանդ կոչ ընելու համար, չէ՞։

Տասնչորս երեսնոց նամակդ մեծ հաճույք պատճառեց ինծի։ Պիտի ուզեի նույնքան երեսներով ուրախացնել զքեզ, բայց ի՞նչ անկարելի երազ...

Հազար նամակներ կան, որոնց պատասխանելու է, Մասիսին ու Լույսին խնդրած ոտանավորները հասցնելու է, դասեր կան, զորս սորվելու է, դիակներ կան, որ կտրտելու է... Ու կտեսնես, որ ինչպե՞ս բռնված են ժամերս։

Ֆրանսերեն բանաստեղծությունդ սիրուն էր։ Պիտի ուզեի հարցնել, թե ինչո՞ւ մանավանդ ֆրանսերեն և ո՛չ հայերեն։

Գիտեմ, թե կսիրե՛ս բանաստեղծությունը ու շա՛տ բնական կդրատնեմ քու գրչիդ տակ զայրույթի թափը, զոր ինձ կ'ուղղես ո՛չ-գրական նամակներուս համար։

Հոգի՛ս, դժբախտաբար շատ ճիշտ են ըսածներդ, ու հակառա՛կ անոր, որ ամե՛ն մարդ միաբերան գոչեն, թե «Ժամանակը ոսկի է», թե «Կյանքը կարճատև է», թե «Բանաստեղծությունը հիմարություն է»,

հակառա՛կ այս բոլորին կ՚ըսեմ, դժբախտաբար, բանաստեղծը բանաստեղծ կմնա միշտ...

Ու չես զարմանար, երբ մտակոյտերու զանգվածին մեջեն, երբ գիտությունների թոհուբոհին մեջեն ու հացի կռվին մեջեն ժամանակ գտնեմ հոգիս գինովցնելու քանի մը, քանի մը ոտա... տողերու մեջ։

Մարդեր կան, որոնց համար գրելը քրտնիլ է. անոնք կգրեն ճակատին սրատեցնելով ու գրիչնին կնրտեցնելով, ու որքա՞ն համառ են հանգերը, ու որքա՞ն անտանելի ոտանավորին կշռությունը...

Ինձ համար գրելը երգել է։ Բոլոր մխիթարությունս սա երկաթի փոքրիկ գրչիս մեջն է։ Ու մենավոր ապաստանիս մեջ՝ ձմրան գիշերներ, ինձմե երջանիկ մարդ չէ՛ կարելի երևակայել՝ ոտանավորի մը ավարտումեն վերջ։

Այս ալ այսքան, եթե կ՚ուզես։

Զպուրճյանին շնորհակալ եմ իր մտերմիկ երկտողին համար։ Խե՜ղճ տղան։ Գոնե եթե զո՞ր մը գտած ըլլար մինչև հիմա։

Ամեն առավոտ, որ իր վրա մտածեմ՝ հին տող մը կ՚ինկա միտքս (կարծեմ Պերպերյանեն). «Գուն լավագույն բաղդի էիր արժանի...»։

Պերպերյանին գրականությունը չեմ սիրեր։ Ճիգով, réminiscence[1], ինքնօգնությամբ, կարդալով, հավաքելով, մանավանդ քրտնելո՛վ գրված քերթվածներ բոլորն ալ (արձակին վրա չէ՛ խոսքս), որոնց մեջ originalité՝ կպակսի ու չես տեսներ հանճարին հափշտակիչ հո՛սքը։

Բայց այդ տողը չեմ դիտեր ինչո՞ւ միշտ աչքիս մե՛ջ կցցվի մեխի մը պես ամեն ատեն, որ Զպուրճյանի վրա՛ է խոսքը։

Իրա՛վ, լավագույն վիճակի մը արժանի էր մեր ազնիվ բարեկամը, բայց ոչի՛նչ չենք կրնար վճռել. ո՞վ կրնա արդիլել մեզ հավատալու, որ թերևս ճի՛շտ իր այդ խնդճ կացությունն է, որ օր մը փառքի ու անմահության գոնները պիտի բանա իր առջև։

Չէ՞ որ մարդկության բոլոր հերոսները առա՛նց բացառության թշվառության ծոցեն ծնան։

Եղբայրս բոլորովին ապաքինած է՞։

Իրավացի՞ խոստովանություն մըն է, զոր կ՚ընես ինձ՝ ըսելով, թե երիտասարդությունը առհավետ խույս տված է ա՛լ քեզեն։ Ես երբեք չի պիտի սիրեի հավատալ, որ ճի՛շտ ըլլար այդ հոռետես մտածումդ։

Մե՛ղք քեզի, բարեկամս։

Ո՞վ ներշնչեց քեզ մարգասյացի այդ հոռետես ներշնչումներդ։ Ինչ-

---

1 Որոնացում, վերհիշում (բնագրերեն)։

չո՞ւ կ'զգաս, որ երիտասարդությունը կխուսափի քեզնե։ Հապա որո՞ւ համար են ապրելը՝ հաճույքը, տեսնելը՝ փափաքը, սիրելը՝ կիրքը ու տենչալը՝ տենչը։ Որո՞ւ համար են արվեստները, գեղեցի՛կը, բնությունը, կի՛նը, համբո՛ւրը, առավոտը, գիշերին խորախորհուրդ բանաստեղծությունը, որո՞ւ համար այս բոլորը...

Չէ, հոգի՛ս, դեռ շատ երիտասարդ ես՝ այդպիսի հոռետես դաղափարներով թունավորելու համար կյանքիդ կոկոնը։

Սիրե՛ կյանքը սրտիդ բոլոր արյունովը ու բազուկներուդ բոլոր ուժովը. այս է իմ վերջին խոսքս։

ԽՈՍՔԸ ՄԵՋԵՐՆԻՍ. Մ. Պարսամյան անցյալ օր իր «Անրջանքը» և «Պատրանքին ծաղիկները» անուն երկու հեղինակությունները ինձ կղրբկե, հետն ալ գեղեցիկ նամակ մը, ուր հիացումի տողերով կ'ողջունե «տաղանդ Չիլինկիրյանին, որ իր փափուկ երազայնություններով կ'օծե մեր այնքան աղկաղկ բանաստեղծությունը»։ Ու իր հիացումի թափեն տարված՝ կշարունակե. «Ձեր վերջին բանաստեղծությունները այնքա՛ն ճանույլ պատճառեցին ինձ, որ չեմ կրնար դիմադրել զձեզ շնորհավորելու բաղձանքիս»։

Ու ըսել, որ բնավ չեմ ճանչնար զինքը։

Այս գրածս դուն քեզի պահե, որովհետև «բերնե բերան կ'ըլլա գերան և կհասնի ի Պարսամյանի», ինչ որ շատ անախորժ կ'ըլլա հարկավ իրեն համար։

Կ'ուզե կոր բարեկամություն հաստատել. ինչո՞ւ չէ. ան իր որոշ ուղղությունը ունի, ես իմ որոշ համբաս ունիմ գրականության մեջ։ Անիկա հավնե պիտի մնա բանաստեղծը «անո՛ր զոր պիտի սիրե»։ Անիկա հավնե պիտի ըլլա երևակայող ու օդային բանաստեղծը։

Ես ավելի իրապա՛շտ եմ, ամեն բանե առաջ իրականությո՛ւնը դիս կգրավե. ամե՛ն իրականությենե վեր մե՛կ իրականություն մը կճանչնամ ես՝ ապրվա՛ծ, զգացվա՛ծ կյանքը և ո՛չ թե երևակայված կյանքը։

Շատոնց ստացեր եմ Մեծարենցի երկրորդ հատորն ալ։ Այս տղան սիրած եմ իր մեկ քանի զգայուն և խո՛ր տողերուն համար։ Ավա՛ղ, որ շուտ gater եղավ[1]. անուն շինելու տենչը ավրեց զինքը։ Ամե՛ն թերթի մեջ ու ամե՛ն շաբաթ գրելու, իր ստորագրությունը երևցնելու կի՛րքն է, որ գեշ ազդեց իր գրչին, ու իր վերջին գիրքը sur commande et à la hate[2] գրականության մը բոլոր ախտանիշերը ունի դժբախտաբար։

Որքա՛ն պիտի ուզեի ճանչցած ըլլալ զինքը և ըսել իրեն, որ քի՛չ

---

1 Եփացավ։

2 Ապսպրանքի վրա և անապարանքով։

գրեն մանավանդ բանաստեղծությունը։ Quantitéին մեջ չէ՝, qualité[1] մեջն է, որ կփնտռվի, չէ՞ մի որ Առվեր իր մեկ sonnetովը անմահացավ։

Այս բոլոր բաները կգրեմ քեզի, որովհետև գրականությունը շատ կշահագրգռե քեզ ու բոլոր գեղարվեստները ա՛ռհասարակ՝ իրենց հրաշքությունը ունին քեզ համար։

Առողջությունս լա՛վ է, քուկիինդ։

Օդերը շատ լավ են. այս տարի ձմեռ չեղավ հոս։

Եղբորդ մեծ հաջողություններ կմաղթեմ musiqueի մեջ։ Աշխատությունով ու ձիրքով մարդ ամե՛ն բարձունքի կհասնի։ Հոն ինչպե՛ս է՝ չեմ գիտեր, հոս musicienը[2] շատ սիրված ու շատ լավ վճարված է մանավանդ։

Աշխատի՛լ, աշխատի՛լ. ու դեռ Բարելյանը այնպես կհամոտա, որ մարդ տունը նստիլ սուրճ խմելով musicien կ'ըլլա և թե հանճարը հանճա՛ր ըլլալու համար ամեն բանե առաջ ծույլ ըլլալու է...

Հարգանքներս սիրելի ծնողացդ ու եղբայրներուդ։ Զպուրճյանին ու Զարֆճյանին ու բոլոր դասընկերներուս կբարևեմ (անցյալ օր քառթ մը ստացա Թ. Աֆյանեն, որ 'ի Գրենոբլար)։

Պատասխանդ շուտով, չէ՞։

Ռ. ՉԻԼԻՆԳԻՐ

R. Tchilinguir, Villa Chaumont,
Ave. de Rumine, Lausanne

1907, Մարտ 26

Սիրելիս, Մ...

Այսօր ստացա նամակդ. չ'ուրախացա, զարմացա. եղբայր, քանի որ գիս կսիրեիր, ինչո՞ւ կլռեիր մինչև հիմա, քանի որ չէիր սիրեր, ինչո՞ւ գրեր ես։

Ես կհասկնամ նամակը այսպես.

Նամակն է թուղթ մը, որուն մեջ մարդ մը ուրիշ մարդու մը բաներ մը կ'ըսե։ Արդ, դուն նամակներուդ մեջ ոչի՛նչ չես գրեր։

Երևակայե՛, որ մեկը Պոլիսեն նամակ ստանա, անհամբեր բանա, կարդա և ի՞նչ գտնե մեջը՝ ոչի՛նչ։

Բարեկամս, կմտածեմ, որ քու նպատակիդ չհասնելուդ վիշտը շատ խոր ազդեր է մտքիդ վրա, որովհետև բոլոր նամակներուդ մեջ ալ շա՛տ հուռետես, շատ տխո՛ւր և շատ տխրամած և մթամած հոգի մը կտեսնեմ։

---

1 Քանակին մեջ չէ, որակին մեջն է։

2 Երաժիշտ։

Ես կ'ուզեմ, որ երբոր բարեկամ մը ինծի նամակ մը կգրե, այդ նամակին մեջ ինծի անկեղծորեն ըսե ի՛նչ որ ըսել կ'ուզե։ Իսկ դուն ինծի նամակ կգրես, երկու տարիե ի վեր, և տակավին բա՛ն մը, բնա՛վ բան մը չես հայտնած։

Տակավին չես ըսած, թե բժի՞շկ ըլլալ կ'ուզես, թե գրագի՞ր ըլլալ կ'ուզես, թե էնժենյո՞ր ըլլալ կ'ուզես, բայց ես իմ խելքովս հետևցուցի, որ փափագդ է բժիշկ ըլլալ։

Տակավին չես ըսած ինծի, թե դրամակա՞ն նեղություն ունիս, ընտանեկա՞ն պատճառներ ունիս, թե անցագրի դժվարություն։

Տակավին ինծի խոսք մը չես ըսած՝ ի՞նչ միջոցներ ձեռք առիր նպատակիդ հաջողության համար, թե որքա՞ն աշխատեցար, թե որքա՞ն հաջողեցար։

Արդ ի՞նչ կ'ուզես, որ գրեմ քեզի։

Դուն ինծի կ'ըսես, թե տխուր ես, ես ալ քեզի կպատասխանեմ, թե «ջանա՛ ուրախ ըլլալ»։ Ահավասիկ այսչափ։

Ես չեմ սիրեր մութ և անորոշ գործերը, ես կսիրեմ պարզությունը և անկեղծությունը։ Եթե կ'ուզես, որ ես քեզի որո՛շ բաներ գրեմ, նախ դո՛ւն ինծի որոշ բաներ գրե։

Ես գրած նամակներուդ ոճեն (ա՛յն ոճեն, որով չորս երես նամակ կլեցնես՝ առանց բա՛ռ մը տեղեկություն տալու քու մասիդ կամ իմ ընկերներուս մասին առհասարակ), ես այդ ոճեն ա՛յնպես հետևցուցի, որ դուն իմ բարեկամությունս կ'ուզես փորձել։

Եղբայր, եթե բա՛ն կ'ուզես ըսել, ըսե՛, ինչո՞ւ կքաշվիս։ Իսկ եթե բան մը չունիս ըսելու, ինչո՞ւ ըսել կձևացնես։

Անկեղծորեն կցավակցիմ ես քեզի և խո՛րապես կհուզվիմ՝ կարդալով ամեն նամակիդ մեջ վիշտերուդ միևնո՛ւյն պատմությունը, որ միշտ ու միշտ կկրկնվի։

Այս խոսքերս կարդալով պիտի զարմանաս ու պիտի մտածես, թե արդյոք այս տողերը գրողը իրավցնե Չիլինկիրյանն է։ Այո՛, սիրելիս, այս տողերը գրողը Չիլինկիրյանն է, քու բարեկամդ և քու ամենե՛ն անկեղծ բարեկամդ, որ կմեղքնա քեզի և չ'ուզեր քաջալերել զքեզ քու սխրամոլ զգացումներուդ մեջ։

Անկեղծորեն և ցավակցորեն

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Հ. Գ. Եվ մի՛ մոռնար, որ այս նամակը գրողը թերևս ա՛յն անձն է, որ ամենե՛ն ավելի սիրեց քեզի։

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Սիրելիս, Մ...

Անկեղծ ուրախությամբ մը կարդացի նամակդ։ Merci։ *Երախտապարտ եմ 8 երկար երեսներուդ և մտերմական ազնիվ զգացումներուդ համար։*

Իրավո՛ւնք ունիս, երբ ինծի կ'ըսես, թե կյանքիս մասին տեղեկություն չեմ տար քեզի։

Անհավասիկ կա՛ր պատմությունը վարած կյանքիս՝

Առավոտյան 7-ը. *նախաճաշ, բիչ մը ընթերցում և անմիջապես վարժարան։* Anatomie descriptive, Histologie, Physiologie, Embryologie[1]։ *Այս չորս դասերը ունիմ ամեն օր մինչև ցոթեկ։*

Յոթեկին 12-ը. *ճաշ, խոսակցություն, կատակ կամ վեճ. տեղն է հիշելու մասնավոր պարագա մը. ճաշարանիս մեջ ծեր կին մը կա գերմանացի, որ ամեն օր իր հիացումը կհայտնե գերմանացիներուն վրա, Վիլհելմին վրա ու գերմանական լեզվին վրա... զոր շատ քաղցրահընչյուն կգտնե։*

(Կգուշակես, որ երբ մեկը իմ առջև այս տեսակ խոսքեր ընե, ես չեմ կրնար հանգիստ ճաշ ուտել։ Հետևապես ամե՛ն օր վեճ կա, իրարանցում, հուզում ու ամեն օր ալ ճաշեն վերջ... կպարբշվինք դարձյալ!)։

Ճաշեն վերջ *(2—6).* Physiologie*ի կամ* Histologie*ի* Laboratoire։ *Երկուքն ալ շա՛տ հետաքրքրական են։*

Առաջինիս մեջ գորտեր, նապաստակներ, շուներ կկտրենք, բժշկական փորձեր կ'ընենք, բնախոսական շատ զարմանալի երևույթներ կգտնենք և կ'ուսումնասիրենք այդ կենդանյաց վրա։

Երկրորդին մեջ մարդուն զանազան գործարաններուն բջիջային հյուսվածքը և մանրադիտական կազմությունը կընենք microscop*ներով, հիանալի* laboratoire *մըն է։*

Ընթրիքեն վերջ *(8—12). բիչ մը պտույտ, եթե ժամանակ ունիմ։ Ուշի (Լեմանի ափը) կ'իջնեմ, եթե զեղեցիկ է դիշերը։*

Հիանալի տեղ մըն է հոս։ Լեման, լուսնյակ դիշեր, Ալպյանները, համաշգային[2] դրոսաշրջիկներու խումբեր, աղջիկներ, ուսանողներ, նավակներ։ Այս բոլորը եթե կարենաս երևակայել, հիացումդ կխեղթենաս, մե՛կ խոսքով։

Բնության այս զմայլելի հրաշալիքը դիտելե և ոմպելի վերջ (ամ-

---

1 *Նկարագրական, հյուսվածաբանական, կազմական և սաղմնաբանական Մարդակազմություն։*

2 *Համաշխարհային, միջազգային* (internationale)*ըսել կ'ուզե։*

պէլը ճի՛շտ բառն է. մարդ այնպես կ'ըմպի, որ կգինովնա հիացումեն, այնպե՛ս, որպես թե Մալակայի հին գինի մը ըմպած ըլլա՛ր...), կդառնամ սենյակս, կկարդամ, կգրեմ, anatomiےս վրա գլուխ կհոգնեցնեմ և կքնանամ կես գիշերին!

Ահավասիկ, թե ինչպես կ'անցնի օրս։

Հուսամ, թե ստացած ես քառիս։ Կներես նամակիս այսքա՛ն ուշանալուն համար։ Պատճառը ժամանակի չգոյությունն է։

Այս հինգշաբթի երկու ընկերներով անգղիական նավակ մը վարձեցինք և անընդհատ թիավարելով հասանք Ֆրանսա։ Հոն իջանք էվիան քաղաքը, որ ֆրանսական aristocratiےին[1] լավագույն ամառանոցը դիրկատվի, պտտեցինք, զբոսնեցանք, քաղաքին գեղեցկագույն շինությունները և նշանավոր արձանները տեսանք, խմեցինք, ուրախացանք և գիշերը դարձյալ թիավարելով անցանք մեր գեղեցիկ Լոզանը։

Կ'երևակայես, թե ի՞նչ հոգնած էինք և ի՞նչ լավ քնացանք գիշերը։

Այս կիրակի Լոզան (այսինքն Լեմանի վրա) առղի ունեցավ Grande Régate Internationale[2]։

Մասնակցեցան եվրոպական գրեթե ամե՛ն պետություն՝ իրենց թիավարողներով և իրենց մրցումի մասնավոր նավակներով, զորս իրենց հետ բերած էին։

Եղավ նավային տասը մրցում. 2.000 մեթրոց համբա մը պետք էր թիավարել 5 վայրկյանի մեջ։ Լիճը ալիքոտ էր և շրջող նավակներ եղան. մրցանակը լոզանցիները և միլանցիները, ցյուրիխցիները բաժանեցին։

Գիշերը Grande retraite aux flambeaux. Fête[3].

Ահավասիկ քեզի կյանքիս վրա լուրեր և բաղաքիս վրա լուրեր։

Հուսամ, թե այս անգամ ա՛լ զոհ կ'ըլլաս, չէ՞։

Շնորհակալություններս կհայտնեմ քերթվածներուս մասին արտահայտած հիացումիդ համար։

Բարևներս հարգելի ծնողքիդ և եղբայրներուդ։

Ռ. ՉԻԼԻՆԿ.

1907, Օգոստոս 26, Շաբաթի

Սիրելիս, Մ...

Հավատա՛, որ ծուլություն չէ պատճառ, երբոր նամակս ուշացուցի այսքան։

---

1 Ազնվական դասակարգը։

2 Միջազգային մեծ նավամրցում։

3 Մեծ ջահանացություն, Տոն։

Նամակ մը կ'առնես կկարդաս, կ'ուրախանաս, հեռավոր բարեկամի մը գիրը տղու մը պես կհրճվեցնեն զքեզ, լավ humeur մեջ ես, կ'ուզես անմիջապես նստիլ և պատասխանը գրել։ Բայց... «բայցը» չեմ գիտեր, սա միայն գիտեմ, որ պատասխանը անմիջապես չես կրնար գրել!

Պետք է անցնի շաբաթ մը, երկու շաբաթ, որպեսզի տեսակ մը ամոթխածութիւնամբ գրիչը ձեռքդ առնես և թուղթիդ ճակատը փակցնես... «Սիրելի Պ...»։

Այս անգամ քեզի պիտի գրեմ կատարած excursionներուս[1] վրա։

Lacs d'anthémoz (2100 m). Երկու փոքրիկ վճիտ լճակ՝ 2100 մեթր բարձրության վրա՝ ժայռերուն[2] և ձյուներուն մեջտեղը։

Կմոռանամ, որ մեր խեղճ Դուրյանը, որ «Մելամաղձոտ լճակ իմ»ը գրեց առանց լճակի երես տեսած ըլլալու, գրական ի՞նչ գլուխգործոց մը պիտի արտադրեր, եթե տեսներ այս զույգ լճակները՝ երկու աչքերու պես գեղեցիկ...

Col de loux (1924 m). Ասիկա սահմանաղլուխ է Ջվիցերիա և Ֆրանսայի. մեկ ոտքդ գաղղիական հողին վրա կկոխես, մյուս ոտքդ հելվետական հայրենիքին վրա և մեկ ակնարկով կ'ընդգրկես Սավուայի ամբողջ վայրերի գեղեցկությունը և Ալպյաններուն սպիտակ բարձունքները, և Ջվիցերիոյ, անմոռաց Ջվիցերիոյ, հոյակապ լեռնաշղթաները։

Glacier de Susaufe (2172 m). Սառույցի, կապտորակ հիանալի՜ սառույցի լեռներ, ուր լույսը իր հազարումեկ մոգական խաղերը կ'ընե, ուր աչքը կսահի մինչև հեռավոր սպիտակ հորիզոնները, ուր սառ է համակ և ամայությո՜ւն, և մեռելություն...

Glacier de Soix (2267 m). Միջադեպ մը. վերադարձին ճամբան կթանցուցինք և մոլորեցանք անտառի մը մեջ. գիշեր և մո՜ւթ. անկարելի՜ է քայլ մը առնել. սխալ քայլ մը կրնա մահացու ըլլալ՝ այնքան սառած են դահավեժները։

Անտառին մեջ լույս մը. կ'ուղղվինք դեպի հոն. գեղջուկ տնակ մըն է. բարի գյուղացին 10 լապտերով կ'առաջնորդե մեզի մինչև Շամբերիի մերձակայքը։ Երբ hôtel կհասնինք՝ կես գիշեր է. guide[3] մը ղրկեր են մեզի փնտռելու համար!

Morgins (1343 m). Քանի մը ֆրանսացի բարեկամներու հետ զացինք Մարժեն կոչված գյուղը, անցնելով Port du Soleil են, Port de l'Hiver են և Lac Vert են[4] (կանաչ գեղեցիկ լճակ մը 2161 մեթր բարձ-

---

1 Ուսումնարշավ։

2 Կամ ծառաբուն (դժվարընթեռնելի է ձեռագիրը)։

3 Ուղեցույց։

4 Արեի Դուռ, Ձմրան Դուռ, Կանաչ Լիճ։

բութեան վրա). Հրաշալի panorama! Ալպյաններու ամբողջ լեռնաշղթան աչքիդ առջև կպարզվի հոյակապ նկարի մը պես։

Tour d'Ai (2400 մեթր). Տասնվեց ժամ անընդհատ լեռնարշավ! կես ճամբուն վրա կգտնվի Leysin կոչված գյուղը, որուն անունը հարկավ գիտես, որովհետև աշխարհքիս լավագույն Sanatoriumները հոս կգտնվին։ 1400 մեթր բարձրության վրա փոքրիկ գյուղ մը, բոլորովին նոր, հիանալի ու հսկա պալատներով լեցուն. այս պալատները վերջին կայանն են անոնց, որոնք պիտի մեռնին...

Հասկցար հարկավ, թե խոսքս թոքախտավորներուն համար է։

Տրտո՞ւմ ու արցունքո՞ւ կ'անցնինք այս գեղեցիկ գյուղեն, ուր մարդ միա՛յն գունատ դեմքեր կտեսնե և փոսացա՜ծ աչքեր, և կհասնինք Tour d'Ai, նեղ ու բարձրարերձ ժայռ մը, շա՜տ վտանգալից. անոր համար, որ ոտքի փոքրիկ թեքում մը կրնա 1500 մեթր գահավիժել զրեղ անդունդին մեջ։

Արևուն մարը մտնելը կդիտենք 2400 մեթր բարձունքե մը, Լեմանը, Ալպյանները, Իտալիան, Ֆրանսան, Մոն՝ Պլանը՝ համակ ոսկեզօծ...

Dent du Midi (3260 m). Պատմած բոլոր excursionներս բրի միա՛յն անոր համար, որ լա՛վ montagnard[1] մը ըլլամ և բավական վարժություն ունենամ կարենալ մագլցելու համար Dent du Midi կոչված հսկա լեռան մը վրա՝ Ալպյաններուն ամենաբարձր և ամենագեղեցիկ գագաթներեն մին, որ գրեթե Զվիցերիոն ամե՛ն կողմեն կ'երևա։ Եվ հիրավի օգոստոս 24-ին շաբաթ գիշերը guidի մը առաջնորդությամբ բարձրացա գագաթը։

Տեսարա՛ն, ավա՛ղ, ամպե՛ր միայն... Վարը, ոտքերուդ տակ, ամպերուն ծովը, լայն, անծի՛ր, անծա՛յր. ամպերեն վեր, քանի մը գագաթներ և... այս տողերը ստորագրողը՝

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Հ. Գ. Champéry ինքնին կգտնվի 1050 մեթր բարձրության վրա։ Կբարևեմ հարգելի ծնողացդ և եղբորդ։

Հ. Գ. Նամակիս եթե շուտով պատասխանես, ավելի հետաքրքրական բաներ կպատմեմ քեզի։

Ներփակ նամակը Զպուրճյանին տուր։

ՉԻԼԻՆԿ.

---

1 Լեռնական, լեռնցի։

Սիրելի բարեկամս, Պ...

Կներես, սպասցուցի քեզի. նույնիսկ շա՜տ սպասցուցի։ Այսպես են մարդերը՝ երբոր իրենց դիմաց complaisant[1] մեկը ունին, կշահագործեն ու կշարագործեն անոր համբերությունը։

Առաջ ալ դուն ինծի ատանկ չէ՞ր ըներ, պատասխանի նամակը դարերո՜վ կ՚ուշացնեիր...

Բայց առա՜նց ավելորդ նախաբաններու մեջ մտնելու լավ է, որ ուղղակի քուն ըսելիքներս ըսեմ։

«Գիտությունն» լրագիր մը. լսեցի, որ հոս կա եղեր այդպիսի բան մը. մեարիֆեն[2] վավերացված և Պոլիս մուտքը ազատ (տեսա՞ծ ես հոն այսպիսի թերթ մը). հրատարակիչ, տեր, տնօրեն, խմբագիր, խմբագրապետ, սրբագրիչ՝ միմիայն Նալպանդյան էֆենտին. երբե՛ք գործունեություն չեմ ունեցած այդ թերթին մեջ (արդեն արտասահմանի ո՛չ մեկ թերթի չեմ մասնակցիր) և տո՛ղ մը չեմ կարդացած մեջեն. ինձ ըսին, թե տարիե մը ի վեր գոցված է եղեր արդեն. լա՛վ է ըրեր, երանի թե քնա՜վ չբացվեր։

* * *

Տիգրան Չիթճյանը[3] ինչո՞ւ համար ինձ հարցնելդ՝ չի կրցա հասկընալ. իր անունը շատ անգամ տեսած եմ Բյուզանդիոնի առաջին երեսին վրա. ընդհանրապես լուրջ ու լավ գրողի մը տպավորությունը կրած եմ։

* * *

«Նամակին մեջ խայթի՞չ բան մը...»։ Տարօրինակ գաղափարներ ունիս երբեմն, Պ... Բարեկամական նամակներու մեջ «խայթիչ բան» կրնա՞ գոյություն ունենալ. նույնիսկ եթե գոյություն ունենա՝ կկարծե՞ս, որ վշտանամ. ես բարեկամությունը կ՚ըմբռնեմ իր լա՜յն առումին մեջ. անկե՛ղծ, բարի՛, անձնվեր, լա՜յն, լա՜յն բարեկամությունը...

Ու կկարծե՞ս, որ այսպիսի բարեկամության մը մեջ «խայթիչ բաներ» գտնվին։

Ես իմ մասիս անկեղծ խոսող ու անկեղծ գրող մըն եմ. եթե բան մը խայթե գիս, պարզապես կ՚ըսեմ՝ որ խայթեց և ոչ թե կլռե՛մ. իսկ

---

1 Հաճոյակատար։

2 Կրթական Նախարարություն։

3 Այն ատենները Չիրեյան կ՚ատոր գրեի ես և Բյուզանդիոնի ու պոլսահայ թերթերու կ՚աշխատակցեի. Պ... (որուն ուղղված են այս նամակները) Սեակին հարցուցած է իմ մասին, թե կճանչնա՞։

Եթե շատ անգամ կլսեմ, վստահ կրնաս ըլլալ, որ պատճառը նամակիդ մեջ փախած «խայթիչ բան» մը չէ, այլ զբաղումներս, հավիտենական՝ անվերջանալի զբաղումներս։

Մի՛ կարծեր, որ մարդ չափազանց զբաղելու համար անպատճառ... հայ վանականի դրագիր ըլլալու է. կրավե՛ անգամ մը բժշկության երբեքդ տարվո ուսանող ըլլալ՝ ըմբռնելու համար, թե ի՞նչ է ժամանակ չունենալը։

* * *

Շատոնց ի վեր կհարցնես ինծի տեսած դասերս և աշխատությունները։ Ահավասիկ.

Առաջին տարին ըրի Chimie, Physique, Botanique, Zoologie և Anatomie Comparée[1].

Երկրորդ տարին ըրի Anatomie humaine, Histologie, Physiologie և Embryologie[2].

Այս տարի մինչև Զատիկ պիտի շարունակեմ այս միևնույն ճյուղերը և ուրիշ մի քանի théorique դասեր ալ. ինչպես նաև պիտի շարունակեմ dissectionը[3], (որ երկրորդ տարիին սկիզբեն ի վեր սկսեր եմ)։

Ի՞նչ է dissectionը. dissectionն է՝ դիակները դանակով կտոր-կտոր ընել՝ ուսումնասիրելու համար մարդկային գործարանավորությունը։ Մինչև հիմա ուսումնասիրեր եմ ոտքը և ձեռքը, հիմա կ՚սկսիմ գլուխը (ահռելի դժվար է գլուխը) և պիտի աշխատիմ գլխուն վրա երեք ամիս. անկեց վերջ կա սիրտը, փորոտիքը և ծննդական գործարանները, որոնք պետք է ավարտած ըլլամ մինչև Զատիկ։

Զատիկեն վերջ կմտնեմ հիվանդանոց՝ հիվանդները ուսումնասիրելու համար։

Ահավասիկ քեզի ընդհանուր հաշիվ մը տեսած դասերուս։

* * *

Սրամիտ ոճով մը (որուն համար կշնորհավորեմ քեզ) կգծես մեր պոլսահայ գրականության caricatureը[4]։

---

1 Քիմիա, Բնագիտություն, Բուսաբանություն, Կենդանաբանություն և Բաղդատական Կազմախոսություն։

2 Մարդկային Կազմախոսություն, Հյուսվածաբանություն, Բնախոսություն և Սաղմնաբանություն։

3 Անդամահատություն։

4 Սարգանկար։

Իրավ որ խղճալիք crise մը[1] կ'անցընենք կոր՝

Պերպերյան մեռավ, Եղիա Հիվանդ է, Զոհրապ լռեց, Սիպիլ պառավցավ, հրապարակը... Պարսամյան և Ընկերության մնաց (խե՜ղճ հրապարակ).

Պետք է զորավոր ցնցում մը առաջ բերել, նոր գրականություն մը, նոր արվեստ մը, նոր ոսկեդար մը ծնելու համար. պետք է որ նոր ուժեր հրապարակ նետվին, արվեստին սիրովը վառված, աշխատա՜ծ, զարգացա՜ծ. պետք է որ արվեստին անունովը հրապարակ նետված կեղծուպատիր զգացումները դադրեցվին իսպառ. պետք է որ արվեստին գրոշմը անկեղծությունը ըլլա միայն (գրել միա՜յն ինչ որ կ'զգա մարդ, և գրել ամե՜ն ինչ որ կ'զգա... առանց կեղծ ամոթխածության քողին). պետք է որ իրենց ույժին գիտակցությունը ունեցող գրիչներ (նոր ու թարմ գրիչներ) սկսին վերածննդյան այս մեծ գործը։ Որովհետև առանց այս վերածննդյան մեր պոլսահայ գրականությունը է՛ և պիտի մնա «Ճպուռի մը անիմաստ երգը»՝ քու երջանիկ բացատրությանդ համեմատ։

Կ'երևա թե շատ կհետաքրքրվիս գրականությամբ։ Հայ վաճառականի մը գրագիր ըլլալդ քեզի արգելք չէ՛, որ մտածես գեղարվեստին վրա։ Այս զգացումը կրեցի՝ կարդալով վերջին նամակդ և այդ տպավորության տակ է, որ գրի առի այս մի քանի տողերս։

• • •

Ուրիշ բաներ չունիմ քեզի ըսելու։

Կարդացիր հարկավ, թե Զունդյան Կտակին թեկնածու առաջարկեցի ինքզինքս՝ Ս. Պատրիարքին ուղղված նամակով մը։

Գիտես թե (խոսքը մեջերնիս) շատ նեղության մատնված եմ Պերպերյանի մահն ի վեր և թե բավական ծանր դժվարություններ ունիմ դեռ կրելիք, եթե բացասական պատասխան մը հասնի ինձ Զունդյան Կտակեն։

Որովհետև գիտես, որ մեր մեջ արժանավորագույնը չէ՛, որ կհաջողի շատ անգամ. վարդապետի cousin ըլլալը՝ այսպիսի պարագաներու մեջ, ավելի կփնտռվի, քան թե խելացի և աշխատող ըլլալը։

Ինչևէ. Աստված մեծ է...

Այս մասին կհուսամ, թե դաղտնապահ կ'ըլլաս։

Ներփակ կղրկեմ Զպուռքճյանին նամակ մը, որուն մեջ կրնաս կարդալ ավելորդ տեղեկություններու համար։

---

1 Ճգնաժամ։

Բարևներ Հարգելի ծնողացդ, եղբայրներուդ, բարեկամներուս (Զարֆճյանին քառթ դրկեցի և պատասխան չստացա) և բոլոր գիս սիրողներուն։

Անկեղծորեն բարեկամդ՝

Ռ. ՉԻԼԻՆԳԻՐ

R. Tchiliguir
27 Beau-Séjour, Lausanne.

Սիրելի Մ... և Սիրելիս Զպուրճյան[1].

Այս անգամ մի միակ նամակով մը կպատասխանեմ Ձեր երկուքին։

Շնորհակալ եմ Զպուրճյանին իր 14 մտերմական սիրալիր երեսներուն համար և Մ...ին՝ իր սրտակից բարեկամի անկեղծ շնչտին համար։

Ստատիկ տակնուվրայության մեջ է, որ կգրեմ Ձեզի այս նամակս. տակնուվրայություն սրտի, տակնուվրայություն գործերու, դասերու, ղրամի, ապագայի։

Ամբողջ ուսանողական շրջանիս մեջ ասկեց անպիտան շրջան չէ՛ի ունեցեր։ Ուրիշ մը, իմ տեղս, քաջություն չպիտի ունենար շարունակելու իր կյանքը...

Ես ձեզի եղբոր տեղ կդնեմ և իբրև ա՛յն կգրեմ այս տողերս. մինչև հիմա լռություն կպահեի, գրականության ու օդին վրա կխոսեի Ձեզի հետ ու ծիծղուն տողերու մեջ ծածկել կջանայի այն ահռելի ողբերգությունը, որ ի՛մս է։

Կտեսնեմ, որ անցողակի մտերմական կապ մը չէ՛, որ կ'ուզեք ունենալ հետս, ու ձեր նամակներուն շնչտը ինձ ցույց կուտա, թե դուք անոնցմե չե՛ք, որոնք բարեկամներ կ'ըլլան վայրկյանի մը համար (oiseaux de passage![2] ինչպես կ'ըսե ֆրանսիացին)։

Պոլսո հետ թղթակցություն չունիմ. միա՛յն նազարյանին կգրեմ. չեմ սիրեր շատ բարեկամներ ունենալ (j'en ai souffert trop!)[3]։ Այս նամակս կարդացեք եղբայրորեն, գլուխ գլխի։ Հեռավոր հողերու վրայեն բարեկամ մըն է, որ կխոսի ձեզի։

---

1 Այս նամակը թվական չունի, բայց որոշ է, որ նախորդ նամակեն անմիջապես հետո գրված է՝ ջղագրգիռ վիճակով։

2 Տեղ փոփոխող, գաղթող թռչուն. անհարատև։

3 Այդ կողմեն շատ տառապած եմ։

Ու ահավասիկ պատմությունը։

Գիտեք, որ Զունդյան Կատակին candidat ներկայացա։ Այս պատճառավ դաղրեցուցի գրականությունը (լավ ապավորություն չ'ըներ, չէ՞). այս պատճառով չեմ գիտեր քանի՞ նամակ գրեցի աջ ու ձախ. անձնվեր բարեկամներ գտնվեցան (ինչպես Նաղարյան, Չիֆթիկ-Սարաֆ, Ելբենճյան, Թելյան, Արմեն, Քեչյան և այլն), որոնք գործեցին ինձ համար, աշխատեցան, հոգնեցան, ամիսներով, ամբողջ ամիսներով (գիտեք, թե ի՞նչ դժվար է մեր մեջ հաջողիլը և թե որքա՞ն սուղ կ'արժե արդարության հաղթանակը), վերջապես ըրի՞ն ինձ համար ինչ որ կարելի էր ընել։

Կ'ներկայանք իմ վիճակս ալ. հիհհ, սպասողական, ջղային, հիմա՛ր վիճակ մը։ Ասոր վրա ավելցուցեք գրամական ահռելի տագնապն ալ, որուն ենթարկված էի վերջին մի քանի ամիսներե ի վեր և որ այս օրերս իր ծա՛յր աստիճանին հասավ ա՛լ. ավելցուցեք ասոր վրա մեծ եղբոր հիվանդությունը, 41 աստիճան ջերմություն, յոթը շաբաթներե ի վեր անկողնին գամված, հուսահատակա՛ն (ի՞նք է, որ կճարե այն քիչ մը դրամը, որուն պետք ունիմ կարենալ ապրելու համար հոս). ավելցուցեք ասոր վրա դասերս ալ, այնքան շա՛տ, շա՛տ (այս տարի գլուխ քերելու վայրկյան մը չունիմ), ու պիտի ունենաք իմ հոգեկան վիճակիս վրա փոքրիկ գաղափար մը։

Պոլսեն նամակ մը երջանիկ լուր մը կբերե ինձ. հաջողությո՞ւն, գրեթե որոշվեր է իմ ընտրությունս, այնքա՞ն մոտեցեր եմ երջանկության...

Հանկարծ... (ա՜խ, գրիչս կդողա կոր բարկութենես ու ատելութենես), հանկարծ, մարդակերպ արարած մը, որ ինձ իբրև մտերիմ եղբայր դավաներ է այնքա՞ն ատեն խոսքով ու նամակով, մարդակերպ արարած մը Պատրիարքին կներկայանա ու այնպիսի ահարկու ու սարսափեցուցիչ զրպարտություններ կպատմե իմ վրա, որ Պատրիարքը անմիջապես կզրկե զիս գերագույն երջանկութենեն, որուն այնքան մոտեցեր էի...

Եղբայրնե՛ր, այս մարդակերպ արարածը Օնոիկ Պերպերյան կկոչվի։

Երբոր այս բանը պատմող նամակը ստացա, արյունը գլուխս ցատկեց, չէի կրնար կարդացածիս հավատալ։

Աստվա՛ծ իմ, կարելի՞ էր այսքա՞ն մահացու հարված մը ամենամտերիմ բարեկամի մը կողմե...

Գիշերը բարեկամներ եկած էին ինծի. պատմեցի եղածը. ո՞չ ոք ուզեց հավատալ. կարդացի՛ իրենց նամակը. այն ատեն հոգիներու կա-

տագի լռության մը մեջ ամենքս ալ որոշեցինք մեր ամբողջ կյանքովը առնել ու հալածել այդ վա՜տը... Ա՜խ, վրե՛ժ, վրե՛ժ...

Ու ըսե՛լ, որ ե՞ս էի իր միա՜կ բարեկամը, երբ ո՞չ մեկ մարդ կիրսեր իրեն հետ իր ամբողջ ուսանողության շրջանին, թե ե՞ս էի, որ ստացա Մեծ-Մարդուն մահվան հեռագիրը և պատմեցի իրեն, թե ե՞ս էի, որ միակ խորհրդակից ու մխիթարող բարեկամն էի իրեն, երբ ամեն մարդ (առա՜նց բացառության) կ՚ատեր զինքը, թե ես էի, որ հակառակ ծայր աստիճան թշվառության դատապարտվելուս, իրեն կուտայի գրպանիս բոլո՛ր ունեցածը՝ ամե՛ն անգամ, որ եղբայրորեն ձեռք կկարկառեր ինծի, մինչև վրայիս շապի՛կը, գուլպա՜ս, բժիշկին դրա՜մը...

Ու ըսե՛լ, որ երբոր Լոզանեն հրաժեշտ կ՚առներ, այսպես կ՚ըսեր ինծի. «Խնդ՚ղձ Ռուբենս, գիտեմ որ ինչպե՜ս նեղը մնացած ես, երբոր Պոլիս հասնիմ, առաջին անգամ քու գործդ պիտի շտկեմ»

Պոլիս գնաց ու ահա՜ իր առաջին գործը...

Ա՜խ, նախանձը, յոթն անգա՜մ անիծված նախանձը...

Այս նամակը գրեցի Զեզի, որովհետև չէի կրնար չի գրել։ Բարկությունենս կկատղիմ, կ՚ուզեմ բողոքել, կ՚ուզեմ պոռալ բոլոր ույժովս, թե նեղածը վատություն է, զրպարտություն է, սուտ է։ Սրտիս կատաղությունենն աչքերս կլենան։ Մարդ ի՞նչ սիրտ ունենալու է՝ կարենալ տալու համար այսպիսի վատ հարված մը։

Վրե՛ժ, վրե՛ժ, վրե՛ժ։

Երբոր ավելի լայն ժամանակ ունենամ պիտի պատմեմ Զեզի երկարորեն ու դուք պիտի ճանչնաք այս dégénéré[1] եղած արարածը, որ հիմա ձեր մոտ կգտնվի։ Ատեցե՛ք զինքը։

Բողոքի թուղթ մը գրկեցի Պոլիս ու ըսի, որ ամբողջ Լոզանը տակնու

Սիրելիս, Մ...

Նամակդ ստացեր եմ շատոնց։

Այսօր ծնունդ է, իրա՛վ որ ձանձրալի ծնունդ մը։ Մի քանի օրե ի վեր արձակուրդի մեջ ենք։ Կհուսամ քիչ մը հանգստանալ եռամսյա ահռելի հոգնութիւններես։

Նամակներդ հաճույք կպատճառեն ինձ, մանավանդ իրենց անկեղծ ու մտերիմ ոճին համար։

Կտեսնես, որ շատ գրականություն չեմ դներ նամակներուս մեջ, պատճառը ա՛յն է, որ ժամանակը ոսկի է ինձ համար. կգրեմ ա՛յնպես, ինչպես ձեռքիս կուգա։

Մեր բարեկամ Ջպուրճյանը ի՞նչ կ'ընե, խեղճը հիվա՞նդ է արդյոք, դեռ չի կրցա՞վ մտնել Հայտար-Բաշայի կայարանը։ Իրմե նամակ չըստանալուս համար անհանգիստ եմ իր վիճակին վրա։

Կյանքը այսպես է. ամեն ատեն լավագույն հոգիները չէ՛, որ լավագույն պայմաններու մեջ կգտնվին. ընդհակառա՛կը։

Քիչ մը վշտացեր եմ քեզի։ Ելեր ես ըսածներուս չես հավատար և Շահանին ըսածներուն ականջ կկախես։

Բայց մտածե՛, որ ես այդ խոսքերը քեզի գրելու համար որքա՛ն մտածած, կշռած ու քննած եմ խնդիրը։ «Պեն մալըմ թանըրըմ»[1]։ Բոլոր եղելությունը շատ ճիշտ է դժբախտաբար ու դուն ավելորդ տեղը կ'ելլես ու տարակույսի տակ կդնես բան մը, որ այնքա՛ն ճիշտ է։

Դեռ լուր մը չունիմ Ջունդյան խնդիրեն, ամեն պարագայի մեջ ինձի համար ալ սեք հույս չեմ կարծեր, որ ելլա։

Գրե՛ ինձի, թե ինչպե՞ս են մեր բարեկամները, շրջանավարտ ընկերները, ծանոթները։ Եղբայրդ կ'աշխատի՞ musiqueին, ե՞րբ հոս գալու միտք ունի։ Բաբելյանը միշտ մանտոլինի դասե՞ր կուտա, խե՛ղճը։ Ահարոնյանը[2] ի՞նչ ջուրերու վրա է, Թաշճյանը միշտ երկար մազե՞ր ունի, Շահանիկը մնցա՞վ։ Օննիկը ի՞նչ կ'ընե կոր, կրնա՞ կոր դասավանդել, տղաքը կ'անսա՞ն կոր իրեն։ Վարժարանը ի՞նչ ջուրերու վրա է, գիշերօթիկներուն թիվը կ'ավելնա՞, դժգոհներուն թիվը կքիչնա՞։

Չե՛ս գիտեր, թե որքա՛ն կհետաքրքրվիմ այդ վարժարանով և որքա՛ն նախանձախնդիր եմ անոր ապագային։

Կաղանդի առթիվ հաճույք մը պատճառած կ'ըլլաս ինձ, եթե այս բոլորին վրա մանրամասնորեն խոսիս ինձի։

---

1 Ես իմ ծաղիկս կճանչնամ։

2 Ծանոթ բանաստեղծ Ահարոնն է հիշվածը։

Ե՞ս։ Առողջությունս հիմակուհիմա գեշ չէ. ստամոքս քիչ մը կկա-դա կոր։ Ամենեն շատ Պոլսո կերակուրները կարոտցած եմ։ Հոս ո՛չ խմածիդ ինչ ըլլալը գիտես, ո՛չ կերածիդ. Եվրոպա ամե՛ն բան լավ է, բացի կերակուրներեն։

Դասե՞րը։ Խի՛սա շատ։ Գլուխ քերելու ժամանակ չի կա։ Ջմոռնամ ըսելու, որ գանկի և abdomenի[1] dissection երկու օրէ ի վեր հաջողապես ավարտեր եմ։

Օդե՞ր։ Ցուրտ և ձյուն. սովորաբար զերոյեն 2—3 աստիճան վար է հիմակուհիմա, բայց ձմեռ ատեն մինչև 25 աստիճան կ'իջնա։

Այսօր ծնունդ է ըսի։ Ի՞նչ ըրինք ծնունդը տոնելու համար. առտուն քիչ մը ուշ արթնցանք, ցորեկին քիչ մը լավ ճաշեցինք, իրիկուն՝ դեմ, Ուշի (լճափ) իջանք, ու հիմա, որ գիշեր է արդեն, այս նամակս կգրեմ քեզի։

Տխո՞ւր ծնունդ արդարև։

Իրա՛վ որ խեղճ կյանք է պանդուխտի կյանքը. ծնողքն հեռու, բարեկամներեն հեռու, մի՛ս մինակ՝ աշխատության սեղանին առջև։

Երազդ (երանելի երա՛զդ, որ ինձ գրեր էիր) դժբախտաբար շատ հեռու է իրականության հորիզոններեն։ Եթե ատիկա երազ չըլլար, բայց կարելի՞ բան է ատիկա...

Ժամանակը ուշ է արդեն, ստիպված եմ նամակս փակել և անկողին մտնել, որովհետև քունը աչքերս կվազե կոր։

Սիրելի ծնողքիդ, եղբայրներուդ, ...յանին[2], Զպուրքճյանին (թող դրե ինծի), Օշինին, Իսպիրյանին (գրականություն կ'ընե՞ կոր), Զարֆճյանին և դեռ մյուս բոլոր Պերպերյանի ծանոթներուս շնորհավոր ծնունդ կմաղթեմ։

Քեզ ալ մտերմական անկեղծ ու սիրալիր շնորհավորություններ։ Մաղթենք, որ հաջորդ ծնունդը ավելի՛ երջանիկ սրտով տոնենք։ Բարի ծնունդ ամենուն։

Քուկդ՝
Ռ. Հ. ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ

1908 Հունիս 22

Սիրելիս, Մ...

Վերջապե՛ս...

Նամակդ քիչ մը կծու էր, այնքա՛ն կծու, որ ավելի չի կրցա ուշաց-

---

1 Փոր, որովայն։

2 Անընթեռնելի։

նել պատասխանս։ Կկարծես որ ծուլությո՛ւնս է միայն պատճառ թեզի չի գրելուս։ Գիտես, որ ա՛յնքան ալ ծույլ չեմ, մանավանդ գրելու համար։ Սակայն ժամանակը կպակսի, հոգիս, ժամանա՛կը։

Երեկայն, որ ես ո՛չ թե միայն թեզի պետք է պատասխանեմ, այլ նաև ուրիշ շա՛տերու, որոնք թեզի պես կհանդիմանեն զիս լռությանս համար։

Դո՛ն, որ կճանչնաս զիս, կրնաս ձեռքդ խղճիդ վրա դնելով ըսել, որ իմ թեզ հանդեպ ցույց տված բարեկամությունս անկեղծ է, անկե՛ղծ անոր համար, որ մեր շրջանավարտ ընկերներուն մեջեն միա՛յն թեզի է, որ կգրեմ կանոնավորապես։

Ուրեմն ինչո՞ւ կասկածենը կհայտնես մտերմությանս վրա, փոխանակ ժամանակի սղությունը նկատի առնելու։

«Եռամսյա՛ նամակ» կ'անվանենս այս գրելիքս։ Դժբախտաբար այդ անցնող երեք ամիսներու միջոցին ո՛չ մեկ աչքի զարնող դեպք չի պատահեցավ, որ գրեի հիմա թեզի։ Հիմա լուրը քենե՛ պետք է դա, որովհետև մութ ու ամպամած շրջան մը անցնելու վրա եր։ Ես չի պիտի գրեմ թեզի (հայտնի պատճառներով[1]) կենսական հարցերու վրա։ Եթե կ'ուզես տեսակցինք թիչ մը թեզ հետ առօրյա մեր կյանքին վրա։

Իմ կյանքս ծանոթ է թեզի. առավոտեն մինչև իրիկուն գրքերու, դեղերու ու հիվանդներու մեջ կ'անցնի կյանքս, Զատիկեն ի վեր, երբ հիվանդանոց ընդունվեցա։

Իսկ քու առօրյա գործունեությունդ բոլորովին մութ է ինձ համար։ Միշտ տո՞նդ կմնաս, ինչո՞վ կպարապիս, գործնական կյանքը դեռ չե՞ս ընդգրկեր, բոլորովին հրաժարեցա՞ր եվրոպական համալսարան հաճախելու իտեալեդ, թե կպարապատվիս՝ գրքեր կարդալով բժշկական արվեստին վրա։

Ահավասիկ թեզի հարցումներ, որոնց մասին կրնա՞ս երկարորեն գրել ինծի և այսպիսով մեծ հաճույք մը պատճառել։ Բայց դուն այդպես չես ըներ, կ'ուզես, որ մի՛շտ ես ըլլամ հանցավորը, թիչ գրողը, մոռցողը, ու սրամտությանդ տեղը կուրծքիս կմխես։

Ես ոչի՛նչ չեմ գտներ ըսելու, որովհետև գրելով չի բացատրվիր աշխատութենն, տքնութենն, խենթութենն, զվարթութենն, մամտուքն շինված այն տարօրինակ խառնուրդը, որ ուսանողի կյանք կկոչվի։

Զգալու համար ապրելո՛ւ է այդ կյանքը։

Ու զարմանալի է, որ ամեն ընկեր որ նամակ կգրե, կ'ուզե, որ ուսանողական ամենամտերիմ մտերմամտությունները վրա գրեմ իրեն։

---

1 Համիտյան գրաքննությենն զգուշանալով։

Բայց ինչպե՞ս գրել։ Բաներ կան, որոնք չեն բաժիր նամակի մեջ, կխոսվի՛ն միայն։

Ու հետո միշտ կ՚զգուշանամ թեզի լմանի կամ Զվիցերիո անճառելի գեղեցկություններուն վրա գրել։ Այս բաները դուն ինձմե աղեկ գիտես արդեն Լամարտինի և Մյուսեի ա՞ինքան հրաշալի թերթվածներուն մեջեն։

Իսկակա՞ն ու էական հրապույրը նամակին՝ նամակագրին մտերմիկ ո՞ճն է (որուն վրա կասկած չունիս կարծեմ)։

Գրե՛ ինձի քու պարագաներուդ, զբաղումներուդ, երազներուդ վրա. եղբորդ վրա, որ կպատրաստաքեր կարծեմ Վիեննա երթալու. բարեկամներու վրա, և գիտցիր, որ եթե թեզի նո՛ւյնիսկ չի կարենամ շատ պատասխանել, գո՛նե հոգեկան մեծ հաճույք մը զգացած կ՚ըլլամ՝ հեռավոր բարեկամի մը ձեռքեն եկած նամակ մը շոշափելով։

Դասերս, առողջությունս, վիճակս, ամե՛ն բան, նույնիսկ օդերը շատ լավ են։

Ժամանակս քիչ կուգա կոր քիչ մը, ասոր համար չեմ կրնար կոր թերթվածներ հասցնել անհագ ու անկուշտ Մամուլին։

Զպուքճյան բարեկամը շատոնց է, որ ձայն ձուն հանած չունի. ի՞նչ կ՚ընե։

Հարգելիք բարևներս ծնողացդ և դիս սիրող բոլոր բարեկամներուս։

Քուկդ՝
Ռ. ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ

ԵՆՈՎՔ ԱՐՄԵՆԻՆ

1906 Ապրիլ 9, Երկուշաբթի

Ենովք Արմենին

Հարգելի բարեկամ,

Կներեք, որ Ձեր նամակին պատասխանը ուշացուցի քիչ մը։ Ինքդինքս արդարացնելու համար չպիտի խոսիմ Ձեզի դասերուս առատության և ժամանակիս սղության վրա. ասոնք ծանոթ են արդեն Ձեզի։

Դժբաղդաբար այս նամակս այնքան երկար չպիտի ըլլա, որքան Ձերինը, քանի որ այս մասին կպակսի ինձ ժամանակը, կպակսի մանավանդ դյուրությունը, զոր Դուք ունիք ա՞ինքան արագ ու ա՞ինքան երկար գրելու։

Ի՞նչ բան գրեմ Զեղի ուրեմն, որ թե՛ կարճ ըլլա, թե՛ հետաքրքրական։ Վստահ եմ, թե եթե մեր համալսարանական coursերուն վրա խոսիմ, բնավ չպիտի շահագրգռվիք, եթե մեր քաղաքին նկարագրությունը ընեմ, շուտով պիտի ձանձրանաք, ու եթե փորձեմ Լեմանի ազվորության ու Ալպյաններուն վսեմության վրա խոսիլ Զեղի, պիտի ըսեք յուրովի. «Շատ ենք կարդացեր մենք այդ բաները»։

Ուրեմն! Ուրեմն պիտի խոսիմ Զեղի այս տեղի ազգայիններուն վրա։

Թվով գրեթե հիսուն հոգի են անոնք, գրեթե ամենքն ալ Ռուսաստանեն։ Զարմանալի է իրենց լեզուն ումերով, խսերով լեցուն լեզու մը։ Մեծամասնությամբ ուսանող են։ Գրպանին մեջ շատ քիչ անգամ միայն դրամ ունին անոնք, բայց միշտ բավական խելք ունին իրենց գանգին մեջ՝ առանց մեկ սուի մը ամիսներ ամբողջ ապրելու համար, հոս ու հոն թափառական։ Ընդհանրապես սիրուն typeր են բոլորն ալ. սև աչեր, սև մազեր, սև մորուք մը ծնոտին վրա. ահա՛ իրենց գլխավոր հատկանիշները։ Ոմանք համալսարան կհաճախեն, ուրիշներ առանձին իրենց դրաղումը ունին, ոմանք bibliothequeներու մեջ կ՝անցնեն իրենց օրը, ուրիշներ (օ՜հ, այդ երջանիկ ուրիշները) անոնք կպտտին, ամեն օր կպտտին անոնք, լճին եզերքը, ըլրակին կուշտին, անտառակին խորքը, կպտտին անոնք, միշտ կպտտին սիրուն հելվետուհիներու հետ...

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

Հունվար 26, 1907

Սիրելի բարեկամս Ե. Արմեն

«Մասիս»-իդ մեջ մրցումի ենթարկված «Առվների Զայնյակին պատասխանը» թարգմանելով արդեն դրկեցի քեզի։

Անցյալ տարվան մեր ամբողջ թղթակցությունը երկու փոքրիկ նամակներու փոխանակությունեն անդին չ՝անցավ։ Ներե՛, որ անկեց ի վեր երկտող մը անգամ չի կրցա դրկել. պատճառը՝ ժամանակի չգոյությունն։

Այս նամակովս կ՝ուզեմ մտերմորեն սեղմել ձեռքդ և շնորհավորել զքեզ «Կին»իդ համար, original կին մը իրա՛վ, որ ևոր գրականության մեջ նորություն մը եղավ իր տեսակին մեջ, կրկնապե՛ս շահեկան իր պարունակությունովը և այն լեզվական փորձովը, որ մեր Աշխարհաբարին «գարավոր փյունիկը» իր քունեն արթնցնելու բնույթը ուներ։

Ինչպե՞ս չշնորհավորել նաև այն հսկա հաջողությունը, որ ունեցար ձեռք անցընելով «Մասիս»-ը, մեր ամենե՛ն դրական և aristocrate թեր-

թը, որ կհավատա՛մ, թե պիտի կրնաս շատ նախանձելի վիճակի մը հասցրնել, ընելով զայն է՛ն գեղեցիկ ժամադրավայրը մեր գրագետներուն, և է՛ն փնտռված հանդեսը մեր «ինտելիքենցիա»ին։

Ես (վերջացնելու համար նամակս) պիտի փափաքեի երբեմն ոտանավոր թարգմանություններ ղրկել հանդեսիդ՝ գաղղիացի նորագույն բանաստեղծներեն, հուսալով, որ հաճելի պիտի ըլլա «Մասիս»-ի ընթերցողներուն՝ գաղղիական արդի գրականության հետ շփման մեջ ըլլալ։

Իսկ գալով «Առվերի Զայնյակին պատասխան»-ին, քու ճաշակիդ և քու գնահատությանդ կհանձնեմ զայն։ Բնա՛վ հավակնությունը չունիմ մրցանակի արժանանալու. զայն թարգմանեցի պարզապես իբրև փորձ մը. իսկ եթե արժանի կդասես զայն մրցանակի պատիվին, tant mieux ma foi.

Բարեկամորեն կսեղմեմ ձեռդ

Ռ. ՉԻԼԻՆԳԻՐՅԱՆ

1907, 20 Հունիս, հինգշբ.
Էվիան (Ֆրանսա)

Սիրելի Ենովք

Այս առավոտ ստացա նամակդ։ Դիտողությունդ շատ արդարացի կգտնիմ. փափաքիդ համաձայն կսրբագրեմ անկատար բայերը սահմանականի և կգտնեմ, որ շատ ավելի կյանքոտ հանգամանք մը կ՚ստանա պատկերին ամբողջությունը։

Պիտի խնդրեի, որ մասնավոր ուշադրությամբ մը հրատարակեիր այս քերթվածս, որովհետև փոքրիկ անուշադրություն մը, տպագրական շնչին սխալ մը կրնա վիրավորել ամբողջին աղվորությունը։

Հրանտին միջոցավ քեզի ղրկեցի «Դրամին աղոթքը» և «Լեմանն» վերնագրով երկու քերթված։ Առաջինը լուրջ և խոր, երկրորդը ավելի սիրային և քնքույշ։ Մոտ օրեն հույս ունեմ հրատարակված տեսնել անո՛նք ալ Մասիսիդ մեջ։

Չեմ գիտեր, թե հոդ ինչպե՛ս է։ Գալով այստեղին՝ շվարած եմ այդ խանդավառ ընդունելության համար, զոր կ՚ընեն հոս իմ քերթվածներուս։

Շնորհակալություն entrefiletին համար, զոր այնքա՛ն լավ կերպով զետեղած էիր Մասիսիդ վերջին երեսը։

Հանդեսդ եվրոպական լուրջ հրատարակություններու նմանցնելու ջանքերդ արդարև շատ շնորհավորելի են։ Ու իրա՛վ ալ բաղդատաբար

շատ կարճ ժամանակի մէջ Մասիսդ առաջնակարգ դիրքի մը հասցուցիր գրականապես (չե՞մ գիտեր նյութականը) ու մեր պոլսահայ բոլորովին թեթև ու անամեջ գրականության մէջ կրցար բավական լուրջ գրական հանդես մը անուցանել։

Կշնորհավորեմ քեզի ու կսեղմեմ ձեռքդ։

ՌՈՒԲԵՆ ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

1907, Հոկտեմբեր 2

Մտերմական

Սիրելի Ենովք,

Կյանքիս տարիները անծանոթ չեն քեզի. գիտես, թե բարեկամներու օգնությամբ է, որ կ'ապրիմ, գիտես նաև, թե այս օրերս Պատրիարքին դիմեցի՝ խնդրագիր նամակով մը, իբրև Ջունդյան սանի թեկնածու։ Նամակիս մէջ բացատրեցի վիճակս. ըսի, թե ինչպե՛ս Պերպերյան հանձն առած էր իմ պաշտպանությունս և թե ինչպես Պատրիարքին վրա բարոյական պարտականություն մը կծանրանար մտածելու իմ վրա՝ հիմա որ ինք հանձն առած էր Պերպերյանի վարժարանին վերին հսկողությունը և անոր զավակներուն բարոյական հայրությունը։ Ըսի իրեն թշվառության բոլոր անասելի ձևերը, որոնք ճանչցա՝ անոթի չմեռնելու համար հոս, ստորնացումներ, որոնք հանձն տի ձեռք կարկառելու համար աջ ու ձախ, դժվարությունները, որոնց ենթարկվեցա՝ հացին պայքարը մղելով հանդերձ երկու տարի հաջորդաբար առաջինը հանդիսանալու համար ամեն ազգի բոլոր ուսանողներուն մեջեն։

Ս. Պատրիարք, իբրև բոլոր պատասխան խնդրագրիս, ծածկեր է դրեր Կ'նոնի թե «առաջուց արդեն որոշված երանելի՞ թեկնածու մը կա, որ հիմակվընե գալու կուտա մեր ներկայությունը «Ջունդյան մրցումեն», ինչպես գրեր էիր «Ջունդյան սան»-իդ մեջ։

Այդ թեկնածուն կթվի բլլալ Կորյուն վարդապետին cousinը և Ս. Պատրիարքին պաշտպանյալը։ Ի՞նչ արդարություն է ասիկա. Ջունդյան իր գերեզմանեն նայեր և տեսներ անգամ մը այն բոլոր մութ շահատակությունները, որոնց բո՛ւյն է դարձեր իր կտակը։ Մենք այստեղ ուսնջվինք, տառապինք, աշխատինք, մուրանք ուսմունքին սիրույն համար ու անհայտացնե՞նք մեր նամակը՝ մի՛միայն անո՛ր համար, որ cousin մը հաջողի՞! Արդյոք Ջունդյան պայման դրա՞վ, որ իր սանը անպատճառ վարդապետի cousin և պատրիարքի պաշտպանյալ բլլա... Չէ՞ մի որ աղքատ բլլալ պետք է, աշխատող բլլալ պետք է ու պատ-

վավոր ըլլալ պետք է Ջունդյան սան ընտրելու համար։ Ու այս երեք պայմանները ինձմե ավելի ո՞վ լրացուց մինչև հիմա. Պերպերյանի մեջ ամեն տարի առանց բացառության առաջին հանդիսանալս, համալսարանի մեջ մասնավոր հիշատակության արժանանալս ու նույնիսկ Պերպերյանի կողմե պաշտպանվելս անժխտելի ապացույցներ չե՞ն արդեն աշխատասիրությանս։ Կներես այս ինքնագով տողերուս, որովհետև երբ մարդ այսպես վատո՛ւրեն կլլվի անօգ ու անպաշտպան, երբ կլլվի մանավա՛նդ անոր համար, որ վարպետի cousin մը կա մրցումին մեջ, է՛հ, այն ատեն մարդ պետք է ի՛նք ինքզինքը պաշտպանե. այսպիսի պարագաներու մեջ համեստությունը և լռությունը չէ՛, որ արդարության հաղթանակը պիտի տանին։

Երբ Ջունդյան մրցումը բացվեցավ մի քանի տարի առաջ, ամեն մարդ ուզեցին, որ «Կենդրոնականի աշակերտ» մը ըլլա ընտրվողը։ Կենդրոնականի աշակերտը գնաց և «շոշո՛ղ» եկավ՝ երջանիկ բացառության համեմատ։

Անցած տարի «Իտատիե»-ի աշակերտ մ՚էր դրկվողը։ Իրավո՛ւնք է, որ այս տարի ալ Պերպերյանի սան մը ընտրվի, և ասիկա մեկե ավելի պատճառներով։ Երբ Պերպերյան մեռավ շատեր նվիրատվություններ ըրին անոր վարժարանի հարատևության համար, ս. Պատրիարքը անոր զավակներուն հոգևոր հայրությունը ստանձնեց, վարժարանը պ. Կարապետյանին խնամքին հանձնվեցավ, իսկ Պերպերյանին որդեգրյա՛լը, ոչ ո՛ք չի մտածեց այդ խեղճ արարածին վրա... Պետք չէ՞, որ աղջը գոնե ողբացյալ ուսուցչապետին հիշատակին ի հարգանք՝ խնամեր անոր որդեգրյալը։

Պերպերյան աղջին ա՛յդքան խեղճերը պաշտպանեց, մարդ ըրավ, չ՚ըլլար, որ աղջն ալ անոր մե՛կ որդեղրածը պաշտպանե...

Սիրելիս Ենովք, չես գիտեր, թե որքա՛ն չեմ սիրեր այսպիսի գործերը. բռնի՛ իրավունքը ճանչցնել տալ, ըսել, որ «ես արժանի եմ, ան անարժան է», պահանջել, որ ինձի օգնեն, փոխանակ ուրիշին օգնելու. այս բոլոր բաները չես գիտեր, թե որքա՛ն նողկանք կպատճառեն ինձի։ Բայց երբ կմտածեմ, թե երկու ամիսեն Մարթեն էֆ. Հակոբյան պիտի դադրեցնե իմ ամսականը, մյուս կողմե բժշկական ծախքերս պիտի ավելնան (գործիք, գիրք և այլն), մյուս կողմե ծնողքս, որ առաջվան չափ չեն կրնար օգնել ինձ, որովհետև խեղճը կրցածեն ավելին ըրավ արդեն, երբ կմտածեմ, թե քանի մը ամիսեն պիտի սկսի արդեն թշվառությունը, ծա՛նր, իրակա՛ն, մեռցնո՛ղ թշվառությունը ու աշխատությո՛ւնը (որ այսպիսի պայմաններու մեջ աշխատանք չէ՛ ալ, այլ մահացու տանջա՛նք)։ Երբ կմտածեմ այս բոլորին վրա, իրա՛վ, որ զայ-

բույթս չեմ կրնար դապել։ Ինչո՞ւ պահել իմ նամակս և այսպեսով զրկել զիս Ջունդյան կտակեն, որուն այնքա՞ն արժանի եմ...

Սիրելի Ենովք. Նազարյան ինձ գրեց, թե իմ մասիս բա՛ն մը կուզե գրել Մասիսի մեջ։ Կխորհիմ, որ ասիկա կրնա մեծապես օգտակար ըլլալ ինձ. «Մասիս»-ի մեր մեջ սիրված հանդես մը և լուրջ մըն է։ Մի՛ մերժեր ինձի օգնություն մը, որ այնքան դյուրին է ընել քեզ համար և որ ա՛յնքան կենսական է ինձ համար։ Գիտես, որ Բյուզանդիոն այս մասին լուր մը զետեղեց ազգային լուրերու բաժնին մեջ։ Արդ չե՞ս կրնար դուն ալ, իբրև թե լուրը Բյուզանդիոնեն առնելով, լավ դարձված-քով մը ընդլայնել լուրը, ո՛չ թե բողոքելու համար, որ ինչո՞ւ պահվեր է իմ նամակս (այսպիսի փոքր մը կրնար մահացու ըլլալ գործիս համար), այլ պարզապես ըսելու համար, թե Չիլինկիրյան Ջունդյան տանի մը ամեն առավելությունները կմիացնե իր վրա և թե հուսալի է, որ իբե՛ն պիտի տան առաջնության քվեն՝ իբրև արժանավորագույնին։

Կրնաս գեղեցիկ կերպով դարձված գրությունով մը՝ մեծապես օգտակար ըլլալու իմ դատիս և ըսե՛լ, որ ուսանող մը կարենա լսելի ընել տալ իր իրավունքը։

Հոկտեմբերի 15-ին (ը. հ.) արդեն կբացվին համալսարանները. պետք է գործել, պետք է շտապել, պետք է տաք-տաք ծեծել երկաթը։

Բարեկամորեն և երախտապարտորեն կսեղմեմ ձեռքերդ և կհուսամ սուր գրիչդ վրա...

Մտերմորեն՝

Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

9 Մայիս, 1908

Սիրելի Ենովք

Կներես անշուշտ, որ ուսանողի հազար ու մեկ զբաղումներու մեջ ժամանակ չի գտա մինչև հիմա փոքրիկ նամակ մը գրելու հասցեիդ, ու թերևս դեռ երկարեր այս լռությունս, եթե հիմա՛ չտանայի Նազարյանի միջոցավ ինձ անջատաբար գրկված Մամուլի հոդվածդ։

Չի կրցա շնորհավորություններս ըսել այն գրական գեղեցիկ սկզբունքիդ վրա, որով կտարբերիս մեր շատ մը մյուս խմբագիրներեն՝ անգույն ու հարափոփոխ։ Հարկ կա՞ ըսելու, որ Մեծարենցին, Մսրյանին և իրենց ընկերներուն տված շառաչուն դասերդ անմոռանալի պիտի մնան։ Դժբաղդաբար չի կրցար գտնել պետք եղած նյութական օժանդակությունը «Մասիս»-ը՝ մեր գրական այդ classique organը, կանոնա-

վորապես շարունակելու համար։ Բոլոր մաղթանքներս կղրկեմ քեզի ապահովել կարենալու համար «Մասիս»-ի գոյությունը։ Մե՞ղք, որ օգտակար չի կրցա ըլլալ քեզ այլապես, քան թե նիհար քերթվածներու տրցակով մը։

Մտերմական համբույրներով՝
Ռ. ՉԻԼԻՆԿԻՐՅԱՆ

ԾՆՈՂՆԵՐԻՆ

1910, ապրիլ 23, Լոզան

Սիրելի հայր իմ և անուշ մայր իմ

Անցյալ շաբաթ ստացած եմ հինգ ոսկվո գումարը խորին շնորհակալությամբ։ Շատ լավ և հանգիստ եմ, և Ձեր առողջության աղոթող եմ ամեն վայրկյան։ Այսօր հինգշաբթի ըլլալով չորս օրեն հայկական Զատիկ է և հույս ունիմ, որ այն քառթերս Ձեր ձեռքը կհասնին և Ձեզ կհայտնեն իմ ամենաջերմ շնորհակալություններս ս. Զատկի առթիվ։

Այս քառթս կներկայացնե այն հիվանդանոցը, ուր ամեն օր կ՚աշխատիմ։

Համբույրներով՝
ՌՈՒԲԵՆ

ԿԱՐԵՆ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

26 Ապրիլ, 1911, Լոզան

Պարոն խմբագիր,

Ձեր «Գարուն» Ալմանախին Բ. թիվին մեջ ինձմե բանաստեղծություն մը (անտիպ) տպեր էիք, կխնդրեմ իմ հասցեիս ուղարկել թե այդ հատորը (և եթե կարելի է Ա. հատորն ալ), թե հոնորարս։ Եթե հաջորդական թիվերուն մեջ կցանկաք ինձմե բանաստեղծություններ ունենալ՝ լավագույնն է դիմել իմ հասցեիս։

Ձերդ՝ Ռ. ՍԵՎԱԿ

ԳԱՐԵԳԻՆ ....-ԻՆ

Լոզան, 22 Դեկտ., 1912

Սիրելի Գարեգին,

Որքա՞ն կ՚ընե, մե՞կ տարի, եթկո՞ւ տարի որ մեկնեցար Լոզաննե, ու հազիվ կես պաշտոնական երկտող մը ստացա քենե՝ տղուս ծննդյան շնորհավորության համար։ Լավ որ ուրեմն տղա մը ունեցեր եմ... Պիտի ըսես որ ես քենե ավելի պերճախոս չի գտնվեցա այս տարիներու ընթացքին, իրավունք ունիս և սակայն հավատա՛, որ ես ինքզինքս շատ անգամ հանդիմաներ եմ արդեն այդ ծուլությանս համար։ «Ծուլություն»-ը այնքան ալ ճիշտ բառը չէ. մեկ կողմե իմ ամենօրյա գրագումներս հիվանդանոցի մեջ՝ իրրև ներքին բժիշկ, մյուս կողմե իմ առօրյա այցելություններս քաղաքին մեջ զանազան հիվանդներու, ու հետո տան մեջ իմ մշտնջենական գրագումներս իրրև ընտանիքի հայր, շա՛տ շա՛տ քիչ ժամանակ կձգեն՝ ձեռքս առնելու այն գրիչը, որուն դաշնավոր թոնը դիս բավական խանգավառեր էր առենին, գիտե՛ս։ Այս բոլոր terre à terre *աշխատություններուս մեջ, ուր երբ հոլանի ստինք մը սեղմեմ մեջի թաքախը պարպելու համար է կամ երբ փափուկ թև մը շոյեմ՝ մեջը դեղ սրսկելու համար է, կասեմես որ շատ քիչ տեղ կմնա* sentimental *Սևակին...*

Եվ սակա՛ն... Ճիշտ է որ բժշկությունը իր բոլոր բարոյական փոփոխության հետ մեկտեղ՝ լավ գրված հնչյակ մը չ՚արժեր. ճի՛շտ է որ օրենսգիտությունը իր բոլոր մտային խորություններուն հետ մեկտեղ սա՛ փայտի կիթառիդ վրա թրթռված սպանիական սերենատ մը չ՚արժեր. ճիշտ է որ կյանքը, իր բոլոր արհեստներեն անկախաբար, միայն կյանք ըսված բանը՝ կուսական վաղանցուկ երազ մը չ՚արժեր. ճիշտ է որ բոլոր նյութական գրագումներեն դուրս, մարդ ըլլալու արհեստը, այն արհեստը որ դպրոցներու մեջ կսորվեցնեն և որ դպրոցեն դուրս կշարունակենք սորվիլ մինչև մեր կյանքին վերջին օրը, այդ մարդ ըլլալու արհեստը կ՚ըսեմ, բոլոր արհեստներեն ավելի զզվելի ու ավելի prosaique *է ինքնին...*

Եվ սակա՛ն... Երբեմն լուսնակ գիշերով, այսպես, սա պատուհանիս առաջը կանգնած, երբոր քնացող քաղաքին ու կայծկլտող լապտերներուն կնայիմ վերե՛ն, թևածող ձյուներուն մեջեն ու մահագին լռության մեջեն, միայնակ, արթուն՝ սա բոլոր մահկանացուներու քաղաքին վրա, ուր ամենքն ալ իրենց ճղճիմ երազներով կքնանան, ո՛չ որ և ոչինչ չի կրնար արգիլել դիս զգալու այն գերմարդկային, այն աստվածային բաները, որոնք կզգամ և որ գիտեմ թե ո՛չ ոք չէ զգացեր ու չի պիտի

զգա ինձմէ վերջ... Ոչ ոք և ոչինչ չի կրնար արգիլել զիս այդ ան գիշերին ու ճերմակ ձյունին լուռ առնին մէջ գինովնալու, մոռնալու կյանքը ու իր հոգերը, ու վայրկյան մը գոնե լսելու սրտիս ձայնը, այն սրտին ցավը, որ բոլոր դարերու ու բոլոր ազգերու դավաճան գիտությունը ու նա ինքս խեղդել ջանացեր ենք... Ո՛չ ոք ու ոչինչ չի կրնար զիս արգիլել, այս լուսնակ գիշերով, կոարելու նյութին երկաթե սահմաններն ու բերդերը, հեգնելու վաղվան հոգնությունները ու հուսախաբությունները, մոռնալու նույնիսկ սա մեր գյուղերուն մէջ մեր հայրերու գլխին վրա թափվող պատերազմին արյունը, ու ազատ թողուլ միտքը իր քնարական նժույգին վրա թռելու հեռուները, շա՜տ հեռուները, կապո՜ւյտ հեռուները, Ալպերեն անդին, Ծովերեն անդին, փարավոններուն ու մումիաներուն աշխարհը, ուր, ո՜վ գիտե, սա՛ լուսնակ գիշերին, սա՛ կուսական վայրկյանին, հեռավոր բարեկամ մը, քնացող անբարոյական քաղաքին վրա, ոսկիներու ու անոթիներու հին քաղաքին վրա, աստվածային կիթառի մը թրթիռները կթափե իր աղքատիկ սենյակեն՝ իր երեվակայությունը Վենետիկյան Կոնտոլի մը ծփանքներուն հանձնված... Երանի՜ քեզ, բարեկամ, բյո՜ւր երանի։ Ու եթե այդ երկնային վայրկյաններուդ նախկին սրտակիցդ տակավին տեղ ունի քու հիշատակներուդ մէջ, դրե՛ իրեն կյանքիդ մասին, մարող ջահերուդ ու վառվող աստղերուդ մասին, երիտասարդությանդ ու սերերուդ մասին, ամեն բանի մասին։ Ու իցի՜վ թե այս տողերս կարենային հրահրել այն կայծերը, որոնք կան և որ վստահ եմ թե դեռ չեն մարած սրտիդ մոխիրներուն տակ։

Քուկդ՝
Ռ. ՍԵՎԱԿ

ՍԻԱՄԱՆԹՈՅԻՆ

1914, մարտ 1, Լոզան

Սիրելի Սիամանթո

Այսօր իսկ հոս, այս սրճարանին մէջ, Պարոն Տրդատ Գաղազյանեն իմացա որ Ժնև կգտնվիս։ Իմացա և տխրեցա. տխրեցա, որովհետև կ՚սպասեի, որ իրրև հին ընկեր մը, ինձ դո՜ւն իսկ հայտնեիր գալուստդ. մանավանդ որ քեզ երկտող մը գրած էի ամիսներ առաջ Ագատամարտի հասցեով։ Ձեռագիրներդ այսքան սուղ պետք չէր ծախել մտերիմի մը... Ահա սակայն բանելիքս։ Կ՚ուզեմ հոս քեզ համար ընկերական փոքրիկ ընդունելություն մը սարքել այս շաբաթ գիշեր։ Կանխավ հայտնեմ, որ

հոս հայերը քիչվոր են, բայց քեզ սիրողները կ'ուզեն անպատճառ իրենց մէջ տեսնել հայության մեծագույն երգիչը, զոնե գիշեր մը։ Ուրեմն պատասխանե ինձ, որ... անպատճառ պիտի գաս այս շաբաթ գիշերվան համար, որպեսզի անոր համեմատ հայտարարեմ։ Հայտնե նաև, թե որ ժամուն կհասնիս, ցորեկեն վերջ, որպեսզի կայարանը ըլլամ։ Ջանա, որ... գիրդ ընթեռնելի ըլլա երկդիմության տեղի չտալու համար։

Եղբայրական համբույրներով՝

Ռ. ՍԵՎԱԿ

ՅԱՆՆԻ ԱՊՊԵԼԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ

Սիրելի Տիկին և Պարոն,*

Ես ձեզմե ներում կխնդրեմ, առանց ձեզ ճանչնալու պատիվն ունենալու, այս նամակը գրելու ազատության համար։ Եվ կաղաչեմ, որ ծնողական ներողամտությամբ կարդաք այս բառերը, որովհետև ես հիրավի չափազանց հուզված եմ գրելու համար այնքան լուրջ հարցի մը վրա։

Խնդիրը ձեր դստեր՝ Օրիորդ Յաննիի և տղերիս գրողի երջանկության կվերաբերի։

Ինը ամիս առաջ մենք գիրար ճանչցանք Շամբերի գյուղին մեջ։ Մեր հանդիպման առաջին իսկ օրեն անկեղծ համակրանք մը զգացինք իրար նկատմամբ, փոխադարձ մտերմություն մը, որ ավելի ու ավելի անդիմադրելի սիրո վերածվեցավ։ Եվ հիմա, որ սրտի խորունկ ցավով իմացա Օրիորդ Յաննիին մեկնումը մեր քաղաքեն, կփութամ սրբազան պարտականություն մը կատարել։ Մեր երջանկության օրերուն մենք բոլորովին լուրջ, խստապահանջ և տեսական սեր մը խոստացանք իրարու, և ես խոսք տվի իրեն ձեզմե խնդրելու իր ձեռքը։ Ահա այդ խոստումն է, որ կուզեմ կատարել այսօր։

Ճիշտ է, որ դուք պիտի չուզեք անմիջապես վճռել ձեր դստեր բախտը ուսանողի մը հետ, զոր չեք ճանչնար տակավին։

Բայց ձեզմե խնդրածս շտապողական ամուսնություն մը չէ, որով-

---

* *Այս և հաջորդ բոլոր նամակները Ռ. Սեւակը գրել է Ֆրանսերեն։ Արեւմտահայերեն թարգմանել է Աբրահամ Այիքյանը։*

հետև ես դեռ չափազանց երիտասարդ եմ՝ քսաներկու տարեկան։ Կուզեի միայն խնդրել ձեզմե, որ նշանեիք մեզ հիմա և թղթակցելու ազատություն տայիք մեզի։ Ես դեռ պետք է երկու տարի սորվիմ բժշկության տոքթյորի աստիճան ստանալու համար, իսկ նշանտուքի այդ երկու տարիներու ընթացքին դուք կրնաք լավագույնս ճանչնալ զիս, ուշադիր քննել իմ բնավորությունս և սովորություններս, խորազննել սիրտս. և եթե զիս կատարյալ գտնեք, այն ատեն միայն թույլ կուտաք մեր ամուսնությունը։

Նախ և առաջ կուզեի ձեզմե խնդրել, որ օրիորդ Յաննիի նկատմամբ տածած զգացումս թեթև ու անցողիկ սեր մը չնկատեիք։ Անոր նամակներեն զրկվելես ի վեր կզգամ, թե կյանքն ինձ համար տառապագին կդառնա, իսկ աշխատանքը՝ անկարելի, և չեմ կարծեր, որ օրիորդ Յաննին ալ երջանիկ ըլլա առանց իմ լուրերուս։

Ես այն ջերմիկ հավատքն ունիմ, թե դուք բարի կըլլաք ձեր դստեր և ինձի նկատմամբ, որ կուզեմ ձեր զավակն ըլլալ։ Տվեք մեր սիրույն ձեր ծնողական օրհնությունը, և ես կխոստանամ կարելիս ընել, որպեսզի հաճո ըլլամ ձեզի, հավատարիմ ու հնազանդ, որպեսզի ձեզի արժանի զավակ մը դառնամ։

Մեր նշանտուքի և ամուսնության ամբողջ տևողության ես իմ մեծագույն հույսս դրած եմ ձեր հաճության և իմաստուն խորհուրդներուն վրա։ Դուք կրնաք լիովին վստահիլ ինձ և ապահով ըլլալ, որ ես շատ ճշգրտորեն և ամենայն անկեղծությամբ կպատասխանեմ ձեզ հետաքրքրող բոլոր հարցերուն։

Այն հույսով, թե ձեզմե ուրախալի պատասխան մը կստանամ, որ ձեր դստեր և ինձ հավերժական երջանկություն պիտի պարգևե, մնամ, սիրելի Տիկին և Պարոն,

ձեր շատ խոնարհ և շատ հնազանդ զավակը՝
Ռյուբինս Զիլինկիր (բժշկ. ուս.)

Փետրվար 4, 1908, Լոզան

Փետրվար 14, 1912

Սիրելի ծնողներս,

Ես երջանկություն ունիմ հաղորդելու ձեզի, որ ստացա վեց տարիներն ի վեր այնքա՜ն երազված բժշկության տոքթյորի աստիճանի վկայականս։ Առաջին պարտականությունս է երախտագիտությունս հայտնել ծնողներուս. այսպես, իմ հարազատ ծնողներուս նվիրեցի վկայա-

կանա՝ այնքան տարիներու աշխատանքի պտուղը, իսկ ձեզի ալ ձոնելի ամփոփական բնոյթ՝ իմ գիտական ուսումնասիրություններուս առաջին գիրքը։ Այսպես վարվելով, կկարծեի, թե հաճույք կպատճառեմ ինչպես ձեզի, այնպես ալ կնոջս։ Ուստի հույս ունիմ, որ մոռցնել կուտամ ձեզի անցած օրերու հակամարտ տրված մտրմտանները, և սիրելի է ինձ համարել, թե ասկի նոքը ամեն ինչ ավելի լավ ընթացք կստանա...

Գալով կնոջս, հարբուխ մը արգելք եղավ իր ճամբորդելուն. բայց հիմա լավ է արդեն և վաղը, հինգշաբթի, կմեկնի Լոզանեն։ Կաղաչեմ, մի՛ մտահոգվիր իր ուղևորության վերաբերյալ. ան ողջ ու առողջ կհասնի ձեզի։

Ձեր որդին՝ Ռուբեն

ՅԱՆՆԻ ԱԳՊԵԼԻՆ (ՍԵՎԱԿ)

Հուլիս 23, 1909,
առտուն

Իմ պաշտելի սիրելիս,

Վերջապես մեր տունն եմ։ Վարը՝ հյուրասենյակին մեջ, Հայկանույշ քույրիկս կերգե և թարով կնվագակցի ինքն իրեն։ Դուրսը՝ մեր հոբենական տան դիմացը, վաղեմի մայր եկեղեցիի մը հաշակավոր ավերակներն են, հին-հին դարերու և մեռած մարդոց ամրողջ խարհուրդովը օծուն։ Ամենի հեռուն անձիր, ոսկեգույն, անհունությունը խմող, հմայքներն դինով, պայծառությամբ ծաղիկներ դաշտերու համապատակերը կտարածվի։ Քիչ մը ավելի անդին հորիզոնն է, որ կփաթչոտի երազի մը նման և հավերժորեն կմխա, ինչպես վիթխարի բուրմանի մը մեջ։ Այստեղ, վարը, շատ վարը՝ իրենց կատարին վրա վաղնջական Սիլիվրին կրող ժայռերու ստորոտին, բոլորովին խորը, անսահման ծովն է, որ կփշրվի և անցած ժամանակներու հին հիշատակ մը կմռնչե։ Եվ ամենուրեք՝ երկինքին մեջ, որ կարծես կմեռնի, երկրին վրա, որ կարծես կապրի, քաղաքին մեջ, որ կարծես կերազե՝ հարատևող երջանկության մը, գվարթությունեն ավելի քաղցր տրամության մը, մտածումեն ավելի խորունկ անհոգության մը շունչը կա... Եվ այս տեսարանին, այս հմայքին, այս վիթխարի երազին, այս հին ժամանակին, այս տխուր քաղցրության ընդմեջեն ես կմտածեմ էակի մը մասին, որ կարենա իր անձին մեջ մարմնացնել այս ամենը, այս ամենը, ինչպես կենդանի

Արևելքի բուն հոգին, որուն աչքը կարենա ցոլացնել մեր մայրամուտները, որուն ձայնը կարենա արձագանքել մեր մոնչուն ծովին, որուն հասակը կարենա ներկայացնել մեր հեթանոս արձաններուն խոհուն գեղեցկությունը, որուն շրթունքներն ըլլան քաղցրորեն տրտում և որուն շարժուձևը կարենա խորհրդանշել մեր արևելյան զոյության երեկի, այսօրվա և վաղվա բովանդակ կյանքը... Ես կմտածեմ այդ էակի մասին և կհամբուրեմ զայն հեռուեն... Ասուած գիտե... Արևելքի, անոր ամբողջ խորունկ պարզությամբ, անոր ամբողջ իմաստությամբ միամիտ...

Կյանքը: Արևմուտքին մեջ այս բառին առջև կդնեն խոշոր հարցական նշան մը (?), իսկ Արևելքին մեջ՝ կախման երեք կետեր անմռունչ (...): Ահա տարբերությունը: Մինչ այնտեղ կպուռան, կփնտրեն, կփիլիսոփայեն, կվազեն, մենք՝ արևելքցիներս, կերազե՞նք... Քանի գիտենք, որ կյանքի միակ ճշմարտությունը իր Մահն է վերջնական... Եվ որ ամեն ինչ անօգուտ է, բացի Երազեն, գուցե...

Ահա այսպես, Յաննի՛ս, ես քեզ կսիրեմ իմ Երազովս և կախման երեք կետերովս անմռունչ... Ի զուր իմ աչքերուս մեջ մթին հարցական նշան մը պիտի փնտրես... Պիտի այնտեղ գտնես միայն իմ Հավատքս քեզի հանդեպ, և իմ Սերս քեզի հանդեպ, և իմ Կյանքս քու մեջդ... Եվ կկարծեմ, թե մեր սիրո մեծ գրքին և աշխարհի մյուս բոլոր սերերուն միջև կա միայն մե՛կ տարբերություն. այն, որ ոչ մեկ հարցական նշան զոյություն ունի այնտեղ... Այնտեղ ամեն ինչ գեղեցիկ է և ճշմարիտ և արևելյան...

Համբույր մը քու Ռյուրինսեն

Սիրելի Յաննի, քեզի կուղարկեմ Իպսենի՝ հյուսիսի մեծ մտածողին, հզոր գործը: Անոր ընթերցումը կամքի գիտակցությունը պիտի զարթացնե մեջդ: Պետք չէ հապճեպ կարդալ: Շնորհակալ եմ Բաֆոսուիին համար, որ հոյակապ բացիկ մըն էր, մինչև հիմա ուղարկածներդ լավագույնը: Քանի մը օրեն ինձմե կստանաս թանգարանային բացիկներուս փոքր, գեղեցիկ ալպոմը: Ահա ցանկը.

Գեղեցիկ դպրություն. (կանաչ) կանաչ-կարմիր-կանաչ: Վոցի ուսանողներ:

Յոֆինկենցիներ. (ճերմակ) կարմիր-ճերմակ-կարմիր. զվիցերական-ֆրանսական:

Սրելլա. (ճերմակ) կապույտ-ճերմակ-կապույտ: Մեքենագետ ուսանողներ:

Երեքշաբթի
3. 8. 1909

Սիրելի նշանածս,

Երեկ քեզի նամակ մը և բացիկ մը գրկեցի։ Այսօր ահա Պոլսո թրքական թաղեն ասիական բացիկներու շարք մը քեզի։ Հոն պիտի տեսնես մեր շուներն ու մեր թուրքերը։ Հոն պիտի տեսնես Մեծ Շուկան, քաղաքի մը չափ ընդարձակ, և վերը, անձրևի ու ձյունի դեմ, քարե պատերով և մարմարե կամարներով փակված փողոցները։ Այնտեղ է, որ կծախեն արևելյան զոհարեղենն ու հնությունները։ Հոն պիտի տեսնես դեպի հրդեհը վազող թուրք ջրհանկիրներ։ (Բայց զինվորական ջրհանկիրներ ալ կան)։ Եվ Շահ-Զատե փողոցն իր սքանչելի մարմարե քյոշքով, ուր ջուր կիմեն ձրի։ Եվ Թրքական սրճարանը, ազգային տարազ հագած իր հանձնակատարներով, որ բարբարոս կերպարանք ունին, բայց իսկապես հիանալի սիրա։ Հոն ալ պիտի տեսնես Լազերուն պարը, զոր հետաքրքրասերներու ամբոխ մը կդիտե։ (Լազերը թրքական փոքրիկ ցեղ մըն են, շատ ուժեղ և շատ զեղատեսիլ)։ Դեռ հոն պիտի տեսնես երկու մելամաղձոտ եղ լծած հինավուրց կառքով բրգական ճարեմի զբոսանք մը։ Եվ այս ամենը քեզի գաղափար մը պիտի տա, թե ինչ բան է ասիական Պոլիսը։ Քանզի նորօրինակ քաղաք մըն է ան։ Այնտեղ կարելի է գտնել Եվրոպայի ամենաարդիական նորություններն ու Ասիայի հնագույն բարքերը։ Այնտեղ արևելյան հազվագյուտ բաներուն բովիկը կարելի է սքանչանալ փարիզյան ճարտարապետության, բոլոր երկիրներու գեղեցկություններուն և ամենահրաշալի հրաշքներուն վրա։ Ես կյանքիս մեջ շատ քաղաքներ եմ տեսած, բայց երբեք ոչ մեկ քաղաք այնքան հետաքրքրական է, այնքան բարձրարվեստ, այնքան լայնատարած, այնքան ուրախ, ինչքան Պոլիսը։ Եվ ինչ ալ ըսեն, հավատալ չեմ դադրիր բնավ, որ այստեղ է աշխարհի ամենահանգիստ ժողովուրդը։ Հակառակ ջարդերուն, հակառակ խժդժություններուն, հակառակ ամեն ինչի, այստեղ ամենաչար մարդը սիրելի բան մը ունի։ Ամեն ոք, նույնիսկ հանձնակատարը, որ հանդարտորեն իր հինգ սանթիմնոց սուրճը կխմե, քիչ մը երազ ունի իր աչքերուն ետև։ Իսկ այդ երազը Արևելքն է ամբողջ։ Այստեղ ուրիշ փիլիսոփայություն մը կծփա ուղեղներուն մեջ. նակատագրապաշտ փիլիսոփայությունը։ Ամենուր կհանդիպիս Ուժի մը հետքերուն, անսահման ու բարի ուժի մը, որով ժողովուրդները կապրին խաղաղորեն։ Այդ ուժը Ճակատագրապաշտությունն է, իսկ այդ Ճակատագրապաշտությունն ալ անոնց կյանքն է բովանդակ։ Ասոր համար է թերևս, որ տրտմությունը անոնց ուրախության իսկ մաս կկազմե։— Բայց այսքանն արդեն հերիք է

Պոլսո մասին։ Հիմա քիչ մըն ալ քեզմե խոսինք։ Դուն, սիրելի՛ս, կկարծես, թե իմ ծնողներս առելություն ունին քեզի դեմ, դուն կվախնաս անոնցմե, կդողաս, նույնիսկ մատծելով անոնց մասին։ Կհարցնեմ քեզի, թե ինչո՞ւ է այդ վախը։ Ուրեմն կմոռնաս, որ անոնք իմ ծնողներս են և ունին նույն արյունը, ինչ որ ես, և նույն բնավորությունը։ Արդ, կրնա՞ն քեզ առել։ Ո՛չ, Յաննի՛, հանգարտե, անոնք շատ կսիրեն քեզ և կկարծեն, թե դուն լավագույն հոգին ես, որ կրնա արժանի ըլլալ իրենց զավկին։ Եվ մեր ապագա ամուսնությունը կարգադրված, վերջացած գործ է։ Այլևս ո՛չ մեկ կասկած։ Իսկ միակ կասկածը... դուն ես, քանզի միշտ կկասկածիս, ատիկա քու հիվանդությունդ է։ Դուն բնավ պետք չէ արտասվես։ Բայց եթե կուզես, որ ծնողներս քեզի նամակ մը գրեն, կխնդրեմ։ Քանզի նախ անոնք հայերեն գիտեն միայն, և հետո մեր բարքերը քիչ մը խիստ են. մեր ծնողները նամակ, բան չեն գրկեր, նախքան պաշտոնական նշանտուիր, բայց ինծի կիցուլատորեն թղթակցիլ քեզի հետ, և ասիկա արդեն բավական բան է։ Ես իրենց ցույց կուտամ քու լուսանկարներդ, նամակներդ, բացիկներդ. անոնք գոհունակ կժպտին։ Եվ անշուշտ, անգամ մը որ ամուսնանանք, դուն կտեսնես, որ աշխարհի լավագույն ծնողներն են անոնք։— Այստեղ կվերջացնեմ նամակս, հազար անգամ համբուրելով քեզ և ողջույններս հղելով հայրիկին, մայրիկին և Միննայիին։

Նշանածդ՝ Ռուբեն

Օգոստոս 3, 1909

Սիրելի, պաշտելի նշանածս,

Ահա ստացա մեծ կարևորություն ունեցող նամակդ։ Չեմ ուզեր բացե ի բաց գրել քեզի. դուն արդեն գիտես իմ պատասխանս, քանզի քաջ ծանոթ ես բոլոր մտքերուս։ Լավ լսե, Յաննի՛։ Ես երբեք հին զլուխ մեկը չեմ. շատ կսիրեմ թատրոնը, բայց պիտի չուզեի, որ իմ կինս նվիրվեր այդ կյանքին։ Շատ լավ կհասկնամ, որ ամեն մեկն իր կոչումն ունի և իր տաղանդը. մարդ կա՛մ արվեստագետ կծնի, կա՛մ վաճառական։ Բայց արվեստագետ ըսելով, միայն դերասան չենք հասկնար. արվեստագետ է բանաստեղծը, արվեստագետ է քանդակագործը, արվեստագետ է երաժիշտը, նկարիչը, երգիչը և այլն։ Իսկ դուն արվեստագետի այս բոլոր ձիրքերը միաժամանակ ունիս. շատ լավ կրնաս խորունկ բանաստեղծ ըլլալ, հմուտ քանդակագործ, հոչակավոր երաժիշտ կամ վարպետ երգչուհի։ Դուն արվեստի ասպարեզին վերաբերող ամեն բանի ձիրք ունիս։ Սակայն երբ կուզես երեսիս պոռալ, թե դուն միայն դե-

բասանուիի ձիրք ունիս, այն ժամանակ ես կպատասխանեմ քեզի, թէ քարաշար կսխալիս... Ո՛չ, բնաւ չէի ուզեր հաւատալ ատոր։ Ես քեզ աւելի լաւ կճանչնամ, քան դուն։ Գիտեմ քու խորութիւններդ, սրտիդ խորշերը, գաղտնիքներդ, մթութիւններդ. ես քեզ կատարելապես կճանչնամ, Յաննի՛։

Շատ կուզեմ, որ դուն թատերական արտասովոր հակումներ ունենաս։ Ես իրոք մեծապես հիացած եմ, որ դուն շատ բան կհասկնաս թատրոնեն և դիտես ճշտորեն քննադատել։ Ասիկա ցույց կուտա ինծի, որ դուն բնաւ սովորական աղջիկ մը չես։ Եվ ասիկա ուրիշ ոչինչ ցույց կուտա։

Այո՛, ես թատրոն շատ կսիրեմ և շատ հաճախ կերթամ թատրոն։ Երբեմ չեմ մտածած դերասան ըլլալու մասին... Եվ եթե դուն ալ թատրոն շատ կսիրես, քեզի կմնա աւելի հաճախ երթալ։ Եվ լմնցավ-գնաց...

Բացի անկեղ, անկեղծ ըլլալու համար ըսեմ, թե դուն արվեստի ասպարեզին վերաբերող ամեն բանի ձիրք ունիս, բայց դերասանուհի՝ բնա՛վ, բնա՛վ, բնա՛վ... Ճշմարիտ դերասանուհի է ան, որ կարտահայտե առանց զգալու (կուլա առանց տխուր ըլլալու, կծիծաղի նույնիսկ տխուր սրտով, կսիրե առանց այդ մասին մտածելու), մինչդեռ դուն կարտահայտես զգալով (լալու ատեն տխուր սիրտ ունիս, ծիծաղելու ատեն՝ ուրախ և չես կրնար սիրահար կնոջ ձեռք առնել առանց մեկնումեկը սիրելու)։ Դուն բնա՛վ դերասանուհի չես, դուն բանաստե՛ղծ ես։ Ահա թե ինչ կուզեմ ըսել քեզի, առանց հաճոյախոսութիւններու։

Համենայն դեպս, եթե կսխալիմ համոզմանս մեջ, և եթե դուն իրոք կրնաս ուրեմ, բան արտահայտել առանց զգալու զայն (կամ վայրկենաբար զգալով), այն ժամանակ ատիկա կըլլա շատ դաժան հարված մը սրտիս, քանզի ես կունենամ այն ողբմելի կասկածը, թե գուցե ինծի համար քու բոլոր բրածներդ ուրիշ բան չէին, եթե ոչ դերասանուհիի մը հավերժական տեսարանը... Ավա՜ղ, Յաննի՛, ի՞նչ կրնես, ի՞նչ կընես ինծի...

Երեկ Հրանտին հետ կխոսեի դիտավորութիւններուդ մասին։ Աչքերը արցունքով լեցվեցան։ «Ան ալ...»,— բսաւ ինծի։ Եվ ես չէի գիտեր՝ ի՞նչ պատասխանեմ...

Քու՝ Ռուբեն

Օգոստոս 20, 1909
Պոլիս

Իմ շատ ազնիվ, թանկագին Յաննիս և սիրելի բարեկամուհիս,

Այս իրիկուն, երազիս մեջ, քեզի հետ էի։ Ես շատ քիչ անգամ երազ կտեսնեմ։ Իմ քունս սովորաբար հանգիստ է, անխռով, ժպտուն։ Հազիվ թե ամիսը անգամ մը երազ տեսնեմ, և իմ երազներս միշտ ալ երազանքներ են քաղցր ու երկար, ինչպես իտեալական ու մաքուր ուրիշ աշխարհի մը մեջ. ես երբեք տարտափելի ու մռայլ երազ չեմ տեսած։ Ինձի կթվի, թե ատոր պատճառը մարդու հոգեհատակն է, քանզի, հակառակ իրական կյանքի բոլոր ցավերուն, իմ հոգիս միշտ խաղաղ է, հույսերով օրորուն, պատրանքներով սնած, իտեալեն հափշտակյալ, մոգական ատաղձով լուսավորված, թարմ, հեղահամբույր...

Ուրեմն, երեկ իրիկուն քեզի հետ էի։ Հիմա պիտի չկրնամ վերարտադրել այն ամենը, զոր դուն ըսիր ինձի, զոր ես ըսի քեզի երեկ իրիկուն մեր փոքրիկ սենյակին անվրդով կիսատվերին մեջ... Միայն կհիշեմ, որ երկար ու անվերջ ու անորակելի բաներ կըսեիր ինձի կիսաձայն, և կհիշեմ նաև, որ ես կլսեի քեզ, հավատարիմ, ժպտուն, ինչպես անկարելի դյութանքի մը մեջ... Եվ գիշեր էր, հնչատին, և շոյիչ ու տաք գիշեր մը, մեծ Արևելքի Հազար ու մեկ գիշերներեն մեկը... Եվ արբեցուցիչ կախարդանքն էր բաներու, զոր անհնար է արտահայտել։ Եվ դեղեցկության անհամար, պազպաջուն ատաղձներու բյուրավոր երդերն էին լռելյայն։ Եվ ծաղրերեր հնչատանքն էր, որ կիջներ Արևելքի արտասովոր անհունությամբ երկինքեն։ Եվ անենթակայելի շքեղության գիշերային հեքիաթն էր, ուր կենչեր անդուգական Վոսփորը... Այն ժամանակ մենք, դուրս գալով մեր փոքրիկ սենյակեն, կքալեինք գիշերվա և երազի մեջ, և կքալեինք անծպտուն, և մեր շունչը տոգորուն էր հազարավոր քաղցրություններով, զոր չէինք ըսեր իրարու... Այն ժամանակ, օ՜, սիրահարի երազներու ատավածային պատրանք, այն ժամանակ ես զգացի, որ կքալեմ միս-միանակ՝ գիշերվա և երազի մեջ, և որ դուն անհետացած ես, ինչպես ռակեփոշիի մը մեջ, ինչպես ճառագայթի ու լույսի հափշտակության մը, ինչպես դեպի իտեալը սլացած ճախրի մը մեջ... Եվ ես կքալեի միս-միանակ, միս-միանակ, և ոտքերուս տակ այնքա՜ն սխուր էր երկիրը, այնքա՜ն տխուր... Բարեբախտաբար... Քանզի երազ էր միայն...

Քու նշանածդ և բարեկամդ՝ Ռուբինս

Սեպտեմբեր 30, 1909
Գալիա

Սիրելի և հմայիչ բարեկամուհիս, ահա երկու օր է լուրի կտոր չունիմ քեզմե, սակայն միանգամայն կներեմ քեզի, քանի որ երկար ատենե ի վեր ես այնքա՜ն ծույլ եղա քեզի նկատմամբ։ Ուրեմն դուն կատարելապես իրավունք ունիս։ Դուն պետք է պատժես զիս, քանզի ես երես առած մանուկ մըն եմ (չափազանց երես առած), և լավ է, որ ժամանակ առ ժամանակ թեթև պատիժներ կստանամ (ահ, շատ թեթև, առանց ատոնց կվիրավորվեի՞...)։

Բայց այս ամենը, Յաննի՛, այս ամենը պարապ խոսք է միայն և զվարճալի շաղակրատանք։ Դուն պիտի չհավատաս անշուշտ, որ ես արժանի եմ պատիժներու, այնպես չէ՞։ Ատիկա չափազանց կըլլար... Օ՜հ, ո՜չ... Դեռ պետք չէ սկսիլ պատիժներու գլուխը. այն ժամանակ ի՞նչ պիտի ընենք ավելի ուշ, ամուսնութենեն ետքը, սիրո 20, 30, 50, 80 տարիներու ընթացքին... Ի՞նչ կըսես, պզտիկ ծույլ բզեզիկ...

Վերջացնենք այս անհոգ պատմությունները։ Ես քեզի գրելիք ուրիշ գործ մը ունիմ, շատ ավելի կարևոր։ «Այդ ի՞նչ գործ է»,— պիտի հարցնես ինծի... Էհ, ուրեմն, այդ գործը զինվորականությունն է։ Քանի մի օրե ի վեր կաշխատիմ, որպեսզի անցագիր մը ձեռք բերեմ Զվիցերիա մեկնելու համար։ Աչքերուս մեջ կնային և «Զավա՛կս,— կըսեն ինծի,— դուն աղվոր զինվորական մը կըլլաս, պետք է ըլլաս, դուն չես կրնար մեկնիլ...»։— «Բայց, սիրելի՛ս, ես բժիշկ եմ, հիվանդանոցը գործեր կան, պետք է մեկնիմ, դասեր ունիմ, նշանած ունիմ...»։

Օհ, ինչպե՞ս կժպտին...

Բայց այս ամենը զվարճալի չէ, բնավ։ Քանզի հույժ հոգնեցուցիչ է ինծի համար։ Ես դրասենյակե դրասենյակ կվազեմ, կրողոքեմ, արդարությունեն և օրենքե կխոսիմ, կպահանջեմ։ Բայց որո՞ւ կըսես։ Միևնույն պատասխանը կուտան ինծի, թե ես «շատ աղվոր սպա մը» կըլլամ։

Սակայն վստահ եմ, որ անցագիր մը ձեռք կբերեմ և անպայման կմեկնիմ Սովային թղթատարության «Սաղալիենն» շոգենավով, որ Պոլիսեն ելուս կուգա հոկտեմբեր 21 1909 և ութ օրեն կհասնի Մարսելլ։ Ուրեմն՝ բարի՞ ճամբա։ Դեռ երեք շաբաթ կմնամ հոս, Թուրքիա։

Սիրելի Յաննի՛, թերևս այս բոլորը ոչինչ կըսեն քեզի։ Թերևս այս նամակս կձանձրացնե քեզ։ Թերևս դուն լավագույնս սեպեիր, որ ես քեզի գրեի Կապույտ սիրո և Վարդագույն համբույրներու մասին։ Թերևս ուզեիր հեշտագինորեն նվաղիլ տաքուկ թևերուս մեջ... Թերևս, ահ, դեռ ինչքա՜ն «թերևս»-ներ։ Եվ, Յաննի՛ս, դուն կատարելապես իրավունք ունիս, կատարելապես, կատարելապես... Բայց ի՞նչ ընել։ Պիտի չուզեի քեզ դրդռել տխուր առանձնությանդ մեջ։ Պիտի չուզեի քեզ նեղացնել,

փնտրելու ջիղերդ, ունայն հառաչանքներով վառել սիրտդ... Ես քեզ այնքա՜ն կսիրեմ, այնքա՜ն կինայեմ, այնքա՜ն կպաշտեմ, սիրելի՛ս...

Երջանիկ կըլլայի, եթե այս շատ պարզ և շատ հասարակ բառերուն մեջ կարենայիր խորունկ սեր մը տեսնել քեզի հանդեպ, իմ պաշտելի Ցաննի՛ս... Ուրախ եղիր:

Քու հավիտենական Ռուբենդ

Հոկտեմբեր 2, 1909
Կ. Պոլիս

[1909 թ., աշուն]

Սիրելի Պզտիկս,

Այս առավոտ ստացա նամակդ։ Կարդալով, մեծապես զարմացա, որ չեմ ստացած երկու երկար նամակներդ, ինչպես և Լոզան ղրկվածները, որոնցմե միայն մեկը հասավ։ Կհուսամ, որ շուտով կունենամ բոլորն ալ և այն ատեն կպատասխանեմ երկարորեն։

Սիրելի Ցաննի, ահավասիկ որ միայն երկու_ամիս կմնա մեր տեսության։ Այնքան քիչ է, և այնպես երկար... կնախանձիմ սակայն քեզի, քիչ մը, պզտիկս... Սիրույդ մեծությանը մեջ և զգացումներուդ բարձունքեն՝ կբավարարվիս հիանալով և ժպտելով սիրույդ... Սիրելիս, որքա՜ն մաքուր ես և որքա՜ն իտեալական, և ինչպե՜ս գիտես պզտիկ բառերը, որ սիրաս կհուզեն և կգտնես հուսադրիչ խոսքը՝ որ փղձկելու կմղե հոգիս, խոովիչ նամակներուդ վրա։

Այնքա՜ն քնքույշ է հոգիդ, նայվածքդ այնպե՜ս երաղուն, որ կարելի է տեսնել սիրո նամակներուդ ընդմեջեն։

Եվ սակայն այնպե՜ս վերացական և այնպե՜ս ամպային ես նույն ատեն, որ դժվար է հավատալ կատարյալ իրականությանդ և պետք է հարց տալ, թե իրապես գոյություն ունի՞ս դուն։

Եվ սակայն դուն կա՛ս։ Եվ կաս ինծի՛ համար...

Ինծի համար, ինծի, միայն ի՛մս... ի՜նչ ահագին եսասիրություն՝ ուրիշի մը հոգիին տիրացած ըլլալու զգացում։ Զգալ, թե աշխարհի վրա, միլիոնավոր մարդոց և անասնոց այս գյուղերուն մեջ կա հոգի մը, որ քեզի կպատկանի, որ պիտի ուզեր զոհվիլ քեզ համար, որ կրնա հասկնալ քու մռայլ ներաշխարհդ, կրնա սիրել կարճատև գոյությունդ, ի՜նչ հաստություն, ի՜նչ բախտ, ի՜նչ երջանկություն։

Այսպես ուրեմն, քաղցր բարեկամուհիս, մենք երկուքս ալ ունինք մեկս մյուսս ունենալու սիրային այս եսասիրությունը։ Դուն իմս ես, և ես՝ քուկդ։

Աշխարհի մեջ աշ ոք կա, որ կարենա խանգիլ մեր գործին։

Ես քու տարուկգ եմ, և այսուհանդերձ դուն անգութ տիրուհի մը չես։ Քեզի կպատկանիմ, կրնաս գերգուարալ կամ փշրել զիս։

Ի՞նչ լավ է երկուքը ըլլալ և միայն մեկ անձ կազմել։

Սիրելի Յաննի, այս գրգռիկ բառերը գրելով քեզի, դուրդն հավակնությունը չունիմ խորացնելու մեր սիրո քննությունը։ Ա՜հ, ոչ։ Այս սերը չափազանց գեղեցիկ է իր մասին խոսելու համար. և չափազանց խորունկ՝ կարենալ վերլուծելու համար։ Եվ արդեն որքա՜ն խոսինք այդ մասին, խոսելու փափաքը կ՚ավելնա։

Ահա, ավելի քան երկու տարի է, որ կխոսինք մեր սիրույն շուրջ, կնկարենք ու կնկարագրենք և դեռ չէ՛ վերջացած։ Վճիռ բյուրեղ մըն է անհամար երեսներով։

Կարելի է դիտել յուրաքանչյուր երեսը, և ո՛ր կողմեն ալ նայինք, վսեմ է։ Եվ հատկապես այդ է մեր սիրույն մեծությունը։ Մինչ ուրիշ մարդոց սերը գեղեցիկ է միայն միակ կողմով մը, մերինք հավասարապես գեղեցիկ է բոլոր կողմերով։ Զգացական գեղեցկություններու անծայր և մոգական համաչնչակակեր մը, ուր երբեք չենք հոգնիր ման գալեն։ Հոն ամեն անկյուն գեղեցիկ է։

Բոլոր պիտի փնտռվի այնտեղ փշրա մացառներու անկյուն մը, քանի մը մռայլ տեղեր, արյունի հետքեր։ Նման ոչինչ պիտի գտնվի այնտեղ, այլ միայն վճիռ գեղեցկությունը։ Իրագործված դրախտն է...

Եվ մենք երջանիկ ենք, այդ դրախտը իրականացուցած ըլլալնուս համար։

Կժպտա՞ս, Յաննի։ Կ՚ըսես, թե դեռ «շա՞տ հեռու է մեր այդ սիրելի դրախտը»։

Ի՞նչ փույթ... երկու տարիեն ավելի է, որ կքալենք դեպի այդ դրախտը և դեռ պիտի քալե՛նք։

Մեզի ի՞նչ դժվարությունները, վատությունները, այլոց չարությունները։

Ռաֆեն

Հունվար 27, 1910

Ամենագոր նշանածս, Յաննի, Յաննիս,

Հիշարթի իրիկուն է, և ես Օլտ-Ինտիա եմ, համերգի։ Երբ իրիկուն է, և երաժշտություն կա, ինձի համար ավելի մեծ հաճույք գոյություն չունի, քան առնել գլուխս ձեռքերուս մեջ և երկայնորեն մտածել քու մեծ սիրույդ մասին, որ կպարուրե ու կպարապդե զիս իր ոսկեղեն պատմու-

ճանին մեջ... Ա՜հ, Քու Սերդ, Յաննի՛ս... Քու Սերդ, որ կշոյն, և կգրկի, և կբուրե, և...*, և կսպանեն հավերժորե՜ն, հավերժորե՜ն...

Երեկ իրիկուն կկարդայի Լամարթինի «Գրացիելլան», որ ֆրանսական «Վեքթեն» է, բայց անհունորեն ավելի բաղցր։ Ան սիրո մը պատմությունն է, պարզապես։ Բայց ինչքա՜ն շատ երանգներ, ինչքա՜ն փոքրիկ, զմայլելի մանրամասնություններ, ինչքա՜ն կյանք և ինչքա՜ն երջանկություն։ Կկարդայի, և դանդաղորեն ասք արցունքներ կհոսեին այսերս ի վար... «Կարելի՞ է մինին։ Կարելի՞ է մինին,— կհարցնեի։— Այսքա՜ն բաղդություն, այսքա՜ն լույս, այսքա՜ն գրգանք...»։

Բայց հետո, երբ ձեռքս ձգեցի գիրքը, նախանձի տարտամ զգայություն մը հատնեց հոգիս մեջ։ «Ասիկա մի՞թե ավելի իտեալական է, քան մեր սերը»,— կհարցնեի ինքզինքիս... Եվ ակամա աչքերս դարձան դեպի քեզ, ձեռքս երկաթեցի և դիմանկարդ առի անկողնիս մեջ, զայն սեղմեցի կուրծքիս, գգվեցի շրթներովս, հպեցի խոնավ աչքերուս, և այն ատեն դուն, քու լուռ խորհուրդիդ մեջ, կարծես սարսռացիր և հուշիկ հծծեցիր ինձ. «Ո՜չ, սիրելի՛ս, մեր սերն է ամենեն իտեալականը...»։

Օ՜հ, այո՛։ Եվ այն ատեն է, որ ես մտածեցի, թե այդ գիրքը թուղթ էր միայն, և այդ սերը՝ երևակայություն, իսկ երևակայության մեջ կարելի է երազել ամենահեշտագին բաները...

Մինչդեռ մեր սերը թուղթ չէ, ո՛չ ալ երևակայություն... Բայց այնուամենայնիվ... Կարելի՞ է երևակայել սեր մը ավելի իտեալական, քան մերը... Եվ մեր սերն այնքա՜ն է իտեալական, որ երեք տարիե ի վեր ես կհարցնեմ ինքզինքիս. «Կարելի՞ է մինին։ Իրականությո՞ւն է այս, թե՞ հավերժական Երազ, որ շափազանց իրական է իրական ըլլալու համար...»։

Կարելի՞ է պատկերացնել աչքեր ավելի սիրալեղ, քան քուկիններդ, ձեռքեր ավելի կսկծագին միացած, քան քուկիններդ, շրթունքներ ավելի խոլորձին դողդոջուն, քան քուկիններդ, արցունքներ ավելի ասք, քան քուկիններդ...

Եվ կարելի՞ է երազել սեր մը ավելի սիրատոչոր, քան մերը, վեպ մը ավելի վիպային, քան մերը, խորհուրդ մը ավելի խորհրդավոր, քան մերը, նվիրում մը ավելի նվիրական, քան մերը, գգայություն մը ավելի զգացական, քան մերը, իտեալ մը ավելի իտեալական, քան մերը։

Եվ քանի, որ մենք վեպ մը չե՞նք...

Ինչպե՞ս կարելի է երկրին վրա այսքան քա՜ղցրորեն սիրել, Յաննի՛ս

---

* Անընթեռնելի բառ։

Ինչպե՞ս։ Ինչպե՞ս։ Ինչպե՞ս... Ըսե՛ ինծի։ Ես ինքս չեմ կրնար հավատալ, չեմ կրնար հասկնալ...

Կապրի՞նք։ Կերազնե՞նք... Սիրելի՛ս, օգնե՛ ինձ, ես կմեռնիմ առանց քեզի։

Ռուբեն

Համբերի, փետրվար 12, 1910

Քաջդ Յաննիս,

Եվ հիմա թափուր է սրահը...

Համերգը վերջացավ, պարահանդեսն ավարտեցավ, զույգերը գացին...

Կախարդական լամպերու պայծառ լույսին տակ, սեղանին առջև նստած, մեղմիվ կարդացնեմ գրիչս Թուղթին վրա։

Չեմ գիտեր, թե ի՞նչ կուզեմ ըսել քեզի։ Միայն կզգամ, որ պետք է բաներ մը ըսեմ քեզի, խոսիմ հետդ, պարպեմ սիրտս...

Եվ այնքա՞ն ըսելիք բաներ կան... Օ՜հ, սիրելի՛ս, այնքա՞ն բաներ, այնքա՞ն բաներ, և բաներ այնքա՞ն անուշ, այնքա՞ն տարապայման, այնքա՞ն քնքուշ, այնքա՞ն ցնորեցուցիչ։

Այս առավոտ, մութնուլուսուն, դուրս ելա պանդոկեն և լուության ու ձյունին մեջ ուղղվեցա դեպի խաչելությունը։ Խաչելությունը մեր սիրտս... Գեղեցիկ իրիկուն մը... մենք հանդիպեցանք վերը՝ խորհրդավոր դագաթին վրա։ Իրար ճանչցանք մեկ նայվածքով և սիրեցի՛նք... Հետո փոթորիկ մը պլլվեցավ մեզի, նետեց մեզ վար, բաժնեց իրարմե... Երեք տարի է ահա, որ մենք կճգնինք մագլցիլ դեպի գագաթը։

Տարի մըն ալ, և մենք կհասնինք գագաթին, կհասատանենք այնտեղ մեր սիրտ բույնը։ Եվ հետո հոն կսիրենք դիրար, կդողանք իրար վրա, կենջենք այնտեղ... Եվ ո՛չ փոթորիկը, ո՛չ Մահը այլևս չեն կրնար մեզ բաժնել...

Սիրտս, կիսովին տխուր, կիսովին երջանիկ այս երազներով լեցուն, ուղեղս, կիսովին խավարշաին, կիսովին լուսավառ այս մտածումներով ծանրացած՝ լուռ ու մունջ, մեքենայորեն կբալեի խորունկ ձյունին մեջեն, գլխահակ, նույնիսկ չհամարձակելով նայիլ (չճանչնալու համար դանոնք) դեպի պատուհաններն այն փոքրիկ ամառանոցին, որ մեր օրրանն եղավ ժամանակին...

Այսպես բարձրացա մինչև խաչելությունը... Վեր առի գլուխս գոհությունս հայտնելու համար երկինքին, երկյուղածորեն հանեցի գլխարկս և երկար, երկար տաեն մնացի հոն, կանգնած, սրտփուն, շրթի-

ներս հպած սառուցիկ քարե այն մեծ խաչին, որ վերեն, անշարժ, կիշխեր գոլորշուտ հորիզոնի անսահմանության վրա...

Օ՜հ, այդ լեռները, ձյունները, գագաթները, ապառաժները, ամպերը, անտառները, սառցադաշտերը, անդունդները...

Հետո, ճզմված ու արյունոտ սրտով վար իջա... Եվ ապա, վախով ու տրամությամբ, գացի դեպի ամառանոցը, որ ձյունածածկ էր ամբողջովին։ Բոլոր պատուհանները գոց էին։ Եվ քու պզտիկ պատուհանդ (ուրկե ատենոք սև ժապավեն մը իջավ վար, որպեսզի կապե իմ ճակատագիրս քուկինիդ...), և իմ պզտիկ պատուհանս (ուր ատենոք շրթունքներս հանգչեցան քու խուսափուկ, խուսափուկ ու դեռ խույս տվող մազերուդ վրա), երկուքն ալ՝ գոց։ Բախեցի դուռը։ Ո՜չ ոք, ո՜չ ոք։ Կարծես դերեզման մը ըլլար...

Ետքը մտա փոքրիկ ամառանոցեն ներս, ուր ծունկի եկա աղոթելու, գրեթե ակամա...

Հետո ամբողջ օրը՝ տխրություն, մորմոք, սեր, երազներ... Եվ հետո՝ պարահանդես, ուր չպարեցի... Ու հիմա թափուր է սրահը... Եվ ես կուլա՜մ...

Համբույր Շամբերիեն՝ Ռուբեն

Իմ հրեշտակային Յաննիս,

Որոշեցի. ես Էրֆուրտի մեջ չեմ ամուսնանար։ Ահագին դժվարություններ կան Բրուսիո մեջ, և այդ բոլոր դժվարությունները միանգամայն ապուշ են ու ավելորդ։ Հիմա, անմիջապես, մեծ ու ճերմակ թուղթի մը վրա գերմաներեն շատ մաքուր կգրես, թե կփափաքիս ամուսնանալ Ռուբեն Զիլինկիրյանին հետ Լոզանի մեջ։ Պետք է ստորագրես, հետո թուղթը տանիս Էրֆուրտի Քաղաքացիական վիճակի պաշտոնականին կամ քաղաքագլուխին, որ պետք է նույնպես ստորագրե ի վավերացումն քու ստորագրության։

Բացի ասկե, հայրդ ու մայրդ (երկուքն ալ) պետք է գերմաներեն ուրիշ վկայագիր մը գրեն ու ստորագրեն, թե իրենք համաձայն են, որ դուն ամուսնանաս։ Եվ հետո Քաղաքացիական վիճակի պաշտոնականը կամ քաղաքագլուխը պետք է նույնպես ստորագրե։

Այս ամենը պիտի կատարվի մե՛կ օրվա մեջ։

Հետո այդ երկու վկայագիրներն ու քու ծննդյան վկայականդ կուղարկեք ինձ։

Եվ ես այդ բոլորը իմ թուղթերուս հետ կհանձնեմ Լոզանի Քաղաքացիական վիճակի պաշտոնականին։

Ես այստեղ խոսած եմ։ Ամեն ինչ կարգադրված է։

Ոչ մեկ դժվարություն չեն տար։

Մինչև այս ամենը, թերևս, երկու ամիս մը քաշեն։ Քանզի դուն Զվիցերիայի քաղաքացի չես։ Կարևոր չէ։ Թերևս նույնիսկ մեկ ու կես ամիս քաշեն։ Ի՞նչ փույթ։ Էրֆուրտի մեջ, վստահ եմ, 5—6 ամիսեն ավելի կտևեր...

Հիմա պետք է անհապաղ ուղարկել ինձի այդ թուղթերը։ Անհապաղ, անհապաղ...

Ես Էրֆուրտի մեջ չեմ ամուսնանար։ Վերջացած է, վճռված։

Իսկ եթե, Լոզանի մեջ քաղաքացիական ամուսնությունեն առաջ, ծնողներդ ուզեն մեզ խաչ ու խաչվառով կարգել Էրֆուրտի մեջ, բնավ դեմ չեմ։ Ավելի լավ...

Ուրիշ գրելիք չունիմ։

Համենայն դեպս, եթե ծնողներդ որոշեր են մեր ամուսնությունը, պետք է անհապաղ ինձի ղրկեն այդ երեք թուղթերը։ Եվ պետք է գիտնան, որ ես երբեք չեմ փոխեր Լոզանի մեջ ամուսնանալու որոշումս։

Այս բոլորի համար իմ հույսս դրած եմ քու արիությանդ, և խոհեմությանդ, և կորովիդ վրա։

Եվ հուսով եմ, որ 2—3 օրեն կունենամ այդ երեք անհրաժեշտ թուղթերը։

Կսիրեմ քեզ...

Կպաշտեմ քեզ...

Կհամբուրեմ քու հազար ու մեկ դեղեցկություններդ։

Յաւետություն։

Քու հավիտենական
սիրահարդ՝
Թուրքեն

Երկուշաբթի, Փետրվար 19, 1912,
Իրիկվա ժամը 5

Սիրելի պզտիկ գանձս,

Մի՛ սասանիր. գիտեմ, որ հոգնած էիր, ուստի և՝ ծույլ։ Սակայն, եթե թվարկեմ այն բոլոր համբաները, զոր մենք կտեսնենք անցած երկու օրվա ընթացքին, դուն անպայման կնեռես ինձի։ Ուրեմն, հինգշաբթի իրիկունը, կայարանին մեջ քեզմե բաժնվելե հետո, մենք հաջորդաբար երեք պանդոկ այցելեցինք (կեսգիշերեն առաջ, երկու հարմար մահճակալ գտնելու համար)։ Հաջորդ օրը, առավոտյան ճամբա ելանք քաղաքը

գիտեցու։ Տյովլեթյանը կըսեր, թե ինքը կճանչնա քաղաքը, և թե ինծի կմնա միայն հետևիլ իրեն։ Եվ այսպես, վաղորդյան ցուրտի և մշուշի մեջ ժամ մը քալելե ետքը մենք մեզ գտանք... գերեզմանատան մեջ, փոխանակ կենդանաբանական պարտեզին, ուր ուզեինք երթալ. ի զեպ, ավելի ուշ գտանք զայն... կայարանին հիշտ քովիկը։ Այնուհետև պզտիկ, լավ ճաշարան մը փնտրեցինք մեր բերանը պատատ մը բան դնելու համար։ Հետո հաջորդաբար փնտրեցինք, գտանք ու այցելեցինք Մյանեթնը գեղեցիկ մայր եկեղեցին, Քաղաքապետարանը, Թանգարանը (ուր հիացումով գիտեցինք Պյոքլինի սրահը), խեղճուկրակ թեյարան մը (որ, կարծեմ, միակն էր Պալի մեջ, քանզի փողոցեն անցնող ամեն զույգ կանգ կառներ մեր ցուցափեղկին առջև հիանալու համար կարկանդակներու գեղեցկության վրա), հետո՝ մեծ ցարեչքատուն մը (ուր Տյովլեթյանը անգամ մըն ալ հիշեց Համպուրկի էրիքսոն գարեչքատունը), պավարական ճաշարան մը, ուր բավական անպետք ընթրիք մը ըրինք, հետո՝ մեծ վարիեթե մը, իսկ գիշերը՝ նույն պանդոկին մեջ։ Բայց դեռ այս չէ բոլորը։ Լուսանկարչական թանթիկներ և ճախարակներ գնեցինք, գետեղեցինք զանոնք, նկարներ հանեցինք, և... Տյովլեթյանը լուսանկարել ձևացուց ինչ-ինչ մարդիկ, որոնք լրջորեն կկայնեին գործիքին առջև...

Հաջորդ օրը ոտքի կելլենք ժամը վեցին (ժամը վեցին դեռ մութ է), կմեկնինք Պեռն, ուր ընդհանրապես նույն բաները կընենք. ստեղծին կնետենք արջերուն, կայցելենք մայր եկեղեցին (որուն ձիավորը վար է ինկած), Քաղաքապետարանը և շատ ուրիշ տեղեր։ Կեսօրին իշխանավայել ճաշ մը կընենք (երևակայեք, խորոված վայակնե՞ր) Քոռներ-համի մեջ, հակայական տակառով, որուն վրա մենք անգամ մը միասին եղանք։ Ճաշեն ետքը շրջագայություն մը կկատարենք Քուրթերի՝ պեռնական Ալպյաններուն վրա բացվող անհուն տեսարանով փոքրիկ բարձունքի մը վրա։ Հետո՝ նորեն թեյարան (Պեռնի մեջ շատ թեյարաններ կան, նույնիսկ՝ պզտիկ Օյա-Ինտիա մը)։ Անկե ետքը կայցելենք Ֆեսերալ պալատը, վերեն վար կդիտենք Միջազգային փոստատունը (հինգ ցեղերով), որ գլուխ-գործոց մըն է։ Հաղար անգամ կչափչփենք կամուրջները, կպտտինք գետափին, շարաշար կհոգնինք։ Հետո կկարդանք գերմաներեն ազդագրերը, ուր ծանուցված է, թե այս իրիկունն իսկ Վիվարոր հասած է վիեննական սրճարանը։ Տյովլեթյանը կըսե, թե վարիեթեի խումբ մըն է այդ և այլն։ Վիեննական սրճարանը գտնելու համար կվազվզենք ամենուրեք, վախնալով, որ կուշանանք և այլն։ Կհասնինք. վիեննական սրճարանը ծակուռ մըն է, իսկ Վիվարորը՝ պարզապես գերմանական գարեջուր մը (Սալվատորի տեսակեն), մինչդեռ մենք կկարծեինք, թե

երգիչ-պարողներու խումբ մըն է։ Խեղճե՜ր։ Այնքա՜ն հոգնած էինք, փոշեթաթավ, այնքա՜ն անոթի։ Աղջրած կաղամբի ապուրով մը կգոհանանք... (մինչդեռ կեսօրին պահանջած էինք վեց լավագույն ճաշարաններու խորտկացուցակները, որպեսզի տեսնենինք, թե ո՞ւր կարելի է առոք-փառոք ուտել)։ Շոգեկառք կցատկենք ու կեսգիշերին կհասնինք տուն։ Կկարծեի, թե որևէ բան կգտնեմ քեզմե. բան չկար։ Բոլորովին թափուր սենյակը տեսնելով, տխրեցա, շատ տխրեցա։ Հաջորդ օրը՝ երկար նամակ մը քեզմե։ Ինչքան ուրախացա, Աստվա՜ծ իմ, որ դուն ողջառողջ տեղ ես հասեր։ Կափսոսաս, որ վերջին պահուն լավ չես համբուրած զիս։ Մի՛ ափսոսար. դուն զիս բավական պինդ համբուրեցիր, նույնիսկ ակամա կծեցիր, բան մը, զոր ես ավելի ուշ զգացի... Առավոտուն լավ նամակ մըն ալ քեզմե, ինչպես նաև քու սիրալիր ծնողներեդ նամակ մը, որուն համար շնորհակալությունս կհայտնեմ և ջերմագին բարևներ կուղարկեմ իրենց։ Ստացա երեք ճախարակները, կսպասեմ մյուս երկուքին։ Տասնվեց լուսանկար կղրկեմ հացնիդ. քեզի պահե լավագույնները, մյուսները տուր բարեկամներուդ։ Կրնամ ուրիշներ ալ ղրկել քեզի, միայն գրե։ Դուն պետք է ինծի ներես, եթե ամեն օր չկարենամ գրել քեզի. պետք է շատ խնայողություններ ընեմ կարենալ ապրելու համար այն դրամով, որ կմնա ինծի այս ճամբորդութենեն հետո։ Մանավանդ որ երեկ ոստիկանությունը նորեն 14 ֆրանք տուրք պահանջեց ապահովագրյալ նամակով։ Այս վոցիները չեն կրնար ապրիլ... առանց կողոպտելու մարդիկը։ Ես լավ եմ՝ ո՛չ չափազանց տխուր, ո՛չ չափազանց ուրախ, և այն ներքին բերկրանքն ունիմ, որ քեզ... գիրցած պիտի տեսնեմ... Հազար քաղցրիկ համբույր

քու Ռուբենդ

Տյուվլեթյանը կբարևե քեզի և ծնողներուդ. շնորհակալություն կհայտնե բացիկիդ համար։

Ուրբաթ իրիկուն

Անուշիկ գանձս,

Շնորհակալ եմ նամակներուդ համար, զոր երկու օրը մեկ, առատուն կանուխ, կանոնավոր կերպով կստանամ։ Շնորհակալ եմ նաև ծննդյանս օրվան առթիվ ըրած նվերներուդ համար։ Դուն պզտիկ գանձ-կին մըն ես, որ շատ կսիրե իր ամուսինը և կուզե հաճույք պատճառել անոր, հակառակ ամեն ինչի։— Սիրելի՛ս, կարծեմ հետդ տարած ես փողկապի այն գնդասեղը, զոր անցյալ տարի ծննդյանս օրվան առթիվ ծնողներդ նվիրեցին ինծի և որու մարգարիտը իյնալու վրա էր։ Կինդրեմ, վերա-

նորոգել տուր զայն։ Ի զուր փնտրեցի նաև սև գավազանս, որպեսզի վերջապես զոգել տայի (երրորդ անգամ ըլլալով) կոտրված արծաթը, բայց չգտա։ Եթե կհիշես, թե ուր ենք դրած զայն, գրե ինձի հաջորդ նամակիդ մեջ։

Ահա այսօր երկրորդ շաբաթն է, որ մեկներ ես քովես։ Զարմանալի է, չէ՞։ Եվ մտածել, որ կան տարվա կեսը, երբեմն նույնիսկ տարիներ ջարունակ իրարմե բաժնված ապրող մարդիկ։ Իրոք սիրահարնե՞ր են անոնք...

Կուզես կարծիքս գիտնալ այն քանի մը կարասիներու մասին, զոր կփափաքին տալ քեզի։ Սիրելի՛ս, վարվե ուզածիդ պես, մեր ճաշակները նման են իրար. այդ կարասիներուն մեջ դուն ինձմե ավելի պիտի ապրիս (քանի որ ամբողջ օրը տունը պիտի ըլլաս), այնպես որ կրնաս որոշել ըստ քու ցանկությանդ։— Իսկ գալով դաշնամուրին, եթե իսկապես այնքան խարխլած է, որ դուն չես ուզեր նվագել զայն, ուրեմն իրոք որ չարժեր ահագին դրամ վճարել էրֆուրտեն Լոզան և Լոզանեն Պոլիս փոխադրելու համար։ Ավելի լավ կըլլա (ինչպես կըսես) ծախել զայն և այդ դրամով Ցարեքեն դաշնամուր մը վարձել։— Բայց շատ ավելի կարևոր հարց մը կա, զոր կուզեի այսօր գրել քեզի, և որու մասին շատ երկար եմ մտածած։ Դուն գրեր էիր, թե ծնողներդ կուզեն Զվիցերիա ապրիլ. սքանչելի գաղափար, և ահա թե ինչ կառաջարկեմ քեզի. եթե կուզեն Զվիցերիա ապրիլ, ավելի լավ է, որ Լոզան գան, որովհետև չկա ավելի տխուր բան, քան օտար երկրի մը մեջ իրենց տունը միս-միայնակ ապրող ծեր ամոլ մը (մտածե Տամատներու մասին. դրամ ունին, կահ-կարասի ունին, բայց կառաստին այն պատճառով, որ չափազանց միայնակ են...) Եվ հետո մենք հավիտյանս Եվրոպա մնացողը չենք. օր կուգա (և այդ օրը հեռու չէ, թերևս), երբ կերթանք Պոլիս, այնտեղ ապրելու և այնտեղ մեռնելու համար։ Այն ատեն հաճախակի կմտածես քու խեղճ, միայնակ ծնողներուդ մասին և կզղջաս, որ ըստ բավականին երկար ու քնքշորեն չես ապրած հետերնին ողոքելու համար անոնց ծերությունը (որովհետև ես ալ հաճախակի կմտածեմ ծեր ծնողներուս մասին, շատ ավելի հաճախ, քան կկարծես)։

Այն օրը սքանչելի ամառանոց մը տեսա Սբբրեթիան ծառուղիին վրա, աներևակայելի տեսարանով՝ պարտեզ, հարմարություններ, բոլորովին նոր, շատ դեղեցիկ և այնքա՜ն աժան։ Բայց երկուրիս համար չափազանց մեծ էր։ Կարելի է միասին ամառանոց մը վարձել, և մենք անոնց քով փոքրիկ հարկարաժին մը կունենանք։ Կկիսենք առանին ծախքերը և այլն։ Շատ ալ հարմար կըլլա մեզի համար, որովհետև, երբ ես գործի տեղ մը ունենամ, Լոզանեն դուրս գտնվող բնակարանի մը մեջ

ամբողջ օրը միևնույն մնալը վտանգավոր է երիտասարդ կնոջ մը համար։ Եվ տխուր է նաև։ Եվ հետո, շատ հաճախ, հիվանդի վրա հսկելու համար, պետք է որ ես հիվանդանոցին մեջ պառկիմ, այն տունն բոլորովին միևնույն ի՞նչ պիտի ընես լոգանքն դուրս եղող ամառանոցին մեջ։ Մինչդեռ եթե ծնողներդ երկրորդ հարկին վրա ապրին, շափազանց հարմար կըլլա։ Եվ հետո գիտես, որ քանի մը ամիս ետքը մորդ կարիքը շատ պիտի զգաս, որովհետև չեմ ուզեր քեզ հիվանդանոց դրկել։ Մեկ խոսքով, երկարաբան խորհելեն ետքը, եկա այն եզրակացության, որ միակ միջոցը այդ է։— Կխոստանանք լավ վարվիլ հետերնին։ Վերջապես, կրնաս այս կապակցությամբ խոսիլ անոնց հետ և անմիջապես ինձ գրել լրջորեն։

Կհարցնես ինձի. «Լավ անցուցի՞ր ծննդյանդ օրը»։ Ավելի շատ տխուր անցուցի զայն։ Քանի մը օրն ի վեր քիչ մը գլուխս կցավի՝ անհանգիստ դժբախտություն։ Միայն ճաշելու համար է, որ տունեն դուրս կելլեմ, և այդ է իմ ամբողջ պտույտս։

Կշտապեմ, որ շուտ հասնիմ Պալի վերջին՝ 6.40 մեկնող շոգեկառքին, այս իրիկունն իսկ առաքելու համար այս նամակը։ Ցտեսություն, գա՛նձս, հազար-հազար անուշ համբույրներ կուղարկեմ քեզի։ Իսկ ծնողներուդ՝ բլուր ողջույն։

Քու՝ Ռուբեն

Այս բոլոր լուսանկարները քաշված են մեր գործիքով։

Փետրվար 26, 1912, Երկուշաբթի

Սիրելի պզտիկ Յաննի, իմին աղվոր կինս,

Ահա երկար տաղնե ի վեր քեզի խոստացված նամակը։ Եվ որպես սկիզբ կուղեմ քեզի ըսել, թե անկեղծորեն շատ զոհ եմ, որ դուն այնքան ալ հաճախ չես գրեր ինձի, որովհետև այդ ցույց կուտա, որ լավ կզվարճանաս։ Ա՛լ ապեկ. կրցածիդ չափ օգուտ քաղե երիտասարդությունենդ և երբեք, երբեք մի՛ մտածեր, որ այդ ձևով վիշտ կպատճառես ինձի. այդպես մտածելը շատ հիմարություն կըլլար։ Ես ինքս չեմ կրնար ըսել, թե կզվարճանամ, բայց մեծապես շափազանցել կըլլար ըսելը, թե կձանձրանամ։ Այնքան լավ կզգամ զիս իմ տանս մեջ, որ միայն ուտելու համար դուրս կելլեմ և անմիջապես ետ կվերադառնամ։ Տասը օրվա մեջ երկու անգամ եմ դուրս եղած գիշերը. անգամ մը ժողովրդական տան համերգին և անգամ մըն ալ Փրիմրոզ Երթալու համար։ Չեմ

կրնար ըսել՝ ավելի համերդի՞ն, թե՞ թատրոնին մեջ ձանձրացա, բայց կրնամ անկեղծորեն ըսել, որ ավագեցի դբամս և երեկոս։

Իսկ եթե հարցնես, թե ամբողջ օրը ի՞նչ կընեմ տունը, դժվար թե կարենամ պատասխանել. գիտեմ, որ շատ կկարդամ, կգրեմ քիչ մը, կարգի կբերեմ հին բանաստեղծություններս, կհանգստանամ (և ինչպե՞ս...), կզվարճանամ միս-միտնակ, քառասուներորդ անգամ ըլլալով կլսեմ Տյուվլեթյանի ողբերգակատակերգական պատմությունները (և միշտ նույն հուզաթաթավ շարժուձևերով), կդիտեմ հին լուսանկարներդ, կնայիմ լեռներուն (որոնք շաբաթե մը ի վեր այնքա՜ն գեղեցիկ են), կլսեմ թռչուններուն երգն ու գարնան զարթոնքը, ձեռք կառնեմ ամիսներ շարունակ դարակիս մեջ անպատասխան մնացած նամակները։ Մեկ խոսքով, կօգտվիմ արձակուրդիս վերջին օրերեն, քանզի կկարծեմ, թե շուտով տեղ մը կունենամ արդեն։ «Հապա իրիկո՞ւնը,— կհարցնես ինծի,— ժամը վեցեն յոթը ի՞նչ կընես»։ Այսպես ուրեմն. պետք է որ անգամ մը բանալիին անցքեն տեսնես, թե ինչ լավ տնարար է քու պարոնդ։ Ան ամեն օր կփոխե խորակացուցակը։ Երեկ չէ առջի օրը արքայավայել ապուր մը եփեց բրինձով, կարագով, հավկիթով և կիտրոնի քանի մը կաթիլով։ Երեկ ձվածեղի գլուխ-գործոց մը պատրաստեց կարագով, ոսքֆոր պանիրով՝ վեց հավկիթ, շերա-շերտ ուղեղ և... դեռ ուրիշ բաներ, զոր չեմ համարձակիր ըսել։ Այս իրիկուն անհուն արվեստով և ուշադրությամբ կաթնով եփելու վրա է ահա։ Ինչպես կտեսնես՝ շատ ալ ժամանակ չունի ձանձրանալու. թող առոր ապացույցն ըլլա այն արտակարգ իրողությունը, որ ան իրար վրա երկու կիրակի Արսլանյաններց տունը ոտք չէ դրած. երեկ երկու անգամ հանդիպեցավ անոնց (Օրշիի և Սենն Ֆրանսուայի վրա) և բարև չտվավ, ինչ որ, ի վերջո, սոսկալի ջղայնացուց զանոնք, կարծեմ. պարզապես այնպես ձևացուց, թե չի նկատեր զիրենք։ Քեզ ավելի զարմացնելու համար ըսեմ, որ դարձյալ շնորհակալական երկար նամակ մը ստացա Տամատեն (օրացույցի մեջի իր լուսանկարին համար), քանի որ իր առաջին նամակին չէի պատասխանած։ Ահա թե ինչու այսօր նամակ մը գրկեցի, ներփակելով լուսանկար մը (երկուքս), և գրեցի, որ շորրորդ հարկեն և մեր պատշգամեն բարևներ կուղարկենք Ժենև, և կկարծեմ, թե այս բանը արցունքի գետեր պիտի հոսեցնե խեղճ տիկին Տամատի աչքերեն, և անոնք, պատմելով մեր սիրո պատմությունը, այդ բոլորը պիտի ցույց տան Ժենևի գերմանացի հյուպատոսին... որ միշտ կպաշտպանեն զիրենք լրտեսներու դեմ... (—«Եվ մանրիկ արցունքով) «և խոնավությամբ» (մանրուքներու դեմ»,— կըսե Տյուվլեթյանը...)։

Մի՛ նեղանար, որ այս թուղթին վրա կգրեմ քեզի. տպագրական

թուղթը իրոք որ բնավ հարմար չէ սիրային նամակի համար։ Այստեղ կավարտեմ նամակս, բայց երբեք՝ ամենաքաղցրիկ համբույրներս։ Այն օրը մոռցա շնորհակալություն հայտնելու քեզի անդրավարտիքին համար, զոր կաղմ ու պատրաստ գտա պահարանիս մեջ, և որ հրաշալիորեն կվայլե ինձի։ Եվ ճաշակելու համար անդրավարտիքին (իմ անդրավարտիքիս) և գիշերանոցին ամբողջ հաճույքն ու... հանգստավետությունը, ժամը ութին իսկ անկողին կմտնեմ և կկարդամ մինչև կեսգիշեր։ Ոտքի կելնեմ առավա ժամը յոթն ու կեսին, որպեսզի քու դեռ փակ կոպերուդ ղրկեմ բարի լույսի համբույրս... Ջերմագին բարևներ մայրիկին ու հայրիկին։

Քու՝ Ռուբեն։

Տյովլեթյանը արդեն իսպառ մոռցեր է իր Հայկանույշը։ Երջանի՞կ արարած։

Զորեքշաբթի

Յաննի սիրելիս,

Շնորհակալ եմ նամակիդ համար, սակայն իրոք ինձ ցավ պատճառեցիր անքնությամբդ և գիշերային տաղտուկներովդ։ Բայց դուն արձակուրդի գացիր, որպեսզի հանգստանաս ու թարմանաս. քու կողմեդ շատ դժան բան է ձանձրանալու մտքերով տարվիլը։ Եվ սակայն չեմ կրնար հավատալ, որ իսկապես այդքան վատ կզգաս ու կնիհարիս։ Երեկ իրիկուն երազ տեսա (ես, որ երբեք երազ չեմ տեսներ). դուն այնքա՞ն գեղեցկացեր էիր, այնքա՞ն սիրունիկ էիր դարձեր վարդագույն աղվոր այտերով, ինչպես առենոք, գիշերաթիկնոցին մեջ, կհիշե՞ս...

Կիրակի իրիկուն թատրոն գացի. վերին պատշգամն էի։ Երկու թատերակ կներկայացնեին. Պեռնշթեյնի «Հանկարծահողմը» և Շաթրիանի «Բարեկամ Ֆրիցը»։ Ձիս հատկապես հիացուց առաջինը, որ գլուխ-գործոց մըն է, ինչպես, առհասարակ, Պեռնշթեյնի բոլոր թատերակները։ Ռեմին սքանչելի կխաղար, բայց գիս շատ վշտացուց այն իրողությունը, որ ան չէր խաղար իր Ժիլտա կնոջ հետ (ինչպես առեն մը, սիրային դերերուն մեջ)։ Պետք է ըսել, որ հայկական երեկույթեն ի վեր այդ խեղճ Ժիլտան հայտագիրին վրա բնավ չերևաց։ Եվ հետո ամուսինը (ինձի կթվի, թե սինլբորի մեկն է) սիրո ընտիր տեսարաններ կխաղա դ'Ասիլվային հետ (որ հավանաբար անոր խելքը տարեր է իր պճնագեղ արդուզարդով)։ Այս առթիվ ի՞նչ պետք է մտածե իսկական կինը։ Նոզկալի կյանք... Վաղը իրիկուն նորեն թատրոն պիտի երթամ Օրթավ

Միրպոյի «Գործը գործ է» թատերակը դիտելու Նորեն Ռեմին դ՝Ասիլ-վային հետ...

Մայրիկս տաքուկ բարևներ է ղրկած քեզի և խնդրած է, որ քեզ համբուրեմ իր կողմեն... Ինչքա՞ն բարի է մայրիկս։ Բայց եթե կարելի ըլլար, այնքա՞ն կուզեի անգամ մը համբուրել քեզ ի՛մ կողմես...

Շաբաթ օրեն ասդին ահռելի վճիռ մըն եմ կայացուցած, պիտի ըսեի նույնիսկ՝ հերոսական։ Կռահե, թե ի՞նչ։ Այսպես ուրեմն, վերջնա-կանապես ձգած եմ ծխելը... Ահա չորս օր է՝ ոչ մեկ գլանակ չեմ առած ձեռքս... և ասիկա ոչ միայն Առողջության պատճառով...

Ներփակ կգտնես Տամատի մեկ բացիկը, որով շնորհակալություն կհայտնե մեր լուսանկարին համար (պատշգամի վրա)։ Անկե զատ, հա-յերեն երկար նամակ մըն է գրած ինձի ըսելու համար, որ եթե մենք փափաքինք Լոզան մնալ, իրենք կուզեն վերադառնալ... Խե՜ղճ մարդ, համենայն դեպս տխուր բան է...

Լեռնի քանչորսամյա երեց եղբայրը (որդեղբյալ եղբայրը) մեռեր է քանչորս ժամվա ընթացքին։ Շո՛ւտ, ցավակցական բացիկ մը կամ նամակ մը գրե իրեն (նաև ծնողներուն ու քրոջը). Լ. Աղնավուրյան, Միտան, Ալեքսանդրիա (Եգիպտոս)։

Բացի անկե, կղրկեմ բացիկ մը, որ քեզի հասավ մեկնելեդ օր մը նաբը... Ներե ծուլությանս համար։ Կա նաև կնքված գերմաներեն նա-մակ մը (հարսանեկա՞ն, թե՞ նշանտուքի, կամ ասոր նման բան մը), չեմ գիտեր՝ որմե, և զոր բացեր եմ շատոնց։

Այնուհետև, մեր փոքրիկ գործիքով քաշված լուսանկարներեն քանի մի նմուշ կուղարկեմ։ Հուսով եմ, որ պիտի... ապշես...

Գալով ուտելուս, ըսեմ, որ մսեղենի այդ ամբողջ սննդակարգը սոսկալի դեշ անդրադարձավ վրաս։ Հիմա վերադարձեր եմ իմ սիրելի պանիրիս. իրիկունը միայն հաց և զվիցերական պանիր կուտեմ։

Ինձի կթվի, թե հազար ըսելիք ունեի քեզի տակավին, բայց քանի որ ձեռքս դեռ նոր հասած նամակիդ մեջ այնքա՞ն անհամբեր կերևաս, ուստի կփութամ կարելվույն չափ շուտ հասնիլ կայարանին դուռը...

Սիրելի Յաննի, իմ շատ աղվոր Յաննիս, գեղեցիկ գարուն է այս-տեղ, գեղեցիկ երկինք մը կա մեր վերև, գիշերը՝ բյուրավոր աստղեր, սեր կա օդին մեջ, և եթե ես այս բոլորի մասին երկար չեմ գրեր, գիտ-ցիր միայն, որ շատ երկար, շատ հաճախ, շատ քնքշորեն և նաև շատ անհամբերությամբ կմտածեմ։ Ա՜հ, կսիրեմ քեզ, իմ գա՜նձս, կուզեի ունենալ քեզ, ունենա՜լ, ունենա՜լ. կուզեի սիրել քեզ, սիրե՜լ քեզ...

Ռուբեն

Յաննի, գա՛նձս,

Հիմա չեմ գիտեր՝ ինչո՞ւ միշտ կըսես, թե կմոռնամ քեզ։ Այլևս այս մասին մի՛ խոսիր ինծի, կաղաչեմ։ Արդեն ըսեր եմ քեզի, որ սերն ինձ համար մեծ, լուրջ, հավիտենական բան է։ Անիկա միակ զգացումն է, որ մեզ կմոտեցնե աստվածներուն։ Թեթև սերը, սերը, որ կմոռնա, այլևս սեր չէ իմ աչքիս, այլ զվարճանք։ Կրնա ըլլալ, որ երբեմն կծուլնամ քեզի գրելու համար, բայց չեմ ուզեր, որ այդ արարքիս մեջ սիրո մոռացում տեսնես։ Մակայն մինչև հիմա շաբաթը առնվազն երեք նամակ եմ միշտ գրած. եթե դուն ավելի քիչ կստանաս, համանորեն կկորսվին։ Եվ հետո շատ լավ կրնայի բացիկներ գրել քեզի, ամեն օր։ Վրատահ եմ, որ բացիկը չափազանց քիչ է քեզի համար։ Դուն կուզեիր, որ ես առտուն սկսիմ քեզի գրել և ավարտեմ կեսգիշերին, այնպես չէ՞, պզտիկ բզեզիկ։ Հապա աշխատա՞նքը։ Քանզի պետք չէ մոռնաս, որ ես ամեն օր ժամը ութեն մինչև 12-ը հիվանդանոցն եմ (և սոսկալի օգուտ կբաղեմ անկե)։ Իսկ հետիոտները՝ կկարդամ։ Շատ քիչ դուրս կելլեմ՝ վարի նպարավաճառին քով վազելու չափ միայն (միշտ պանիրի սննդակարգ...) Կրնայի շատ լավ բաներ գրել գիշերը, բայց այդ անիծյալ Տյովլեթը չուզեր վերջակետ դնել իր համպուրկյան պատմությունները։ և ապագայի ծրագիրներուն, ուր երթալով ավելի ու ավելի կխրի։ Հազիվ կրցա երկու-երեք փոքրիկ բանաստեղծություն գրել՝ պարապ բաներ։ Բայց միշտ կմտածեմ քու վրադ, և Աստված գիտե՝ ինչպե՞ս։ Օրերը կհաշվեմ և հուսով եմ, որ այդ բանը տեղի կունենա ապրիլի մեկին, այնպես չէ՞։ Բայց քանի որ գիտեմ, որ դուն ալ շատ անհամբեր ես, ուստի չեմ ուզեր քեզ ավելի ջղայնացնել։ Ներփակ կուղարկեմ այն երկու բացիկները, զոր Լեոնն է գրկած քեզի, նաև ինծի հասցեագրված երկու նամակները։ Կգրե, թե իր քրոջ հետ Լոզան պիտի դա մայիսին (այս անգամ արդեն անատարակո՞ւս,— կըսե)։ Կգրե նաև, թե իր մայրիկին կոչմե սքանչելի նվեր մը պիտի բերե քեզի, բայց չուզեր, որ այդ մասին առաջուց ըսեմ քեզի (կտեսնես, որ ես կըսեմ այնուամենայնիվ, իսկ ինչո՞ւ ոչ)։— Եվ հետո խորհուրդ տվի Թագվորին, որ անմիջապես Պոլիս տանի իր եղբայրը. ավելի լավ է, որ իրենց տան մեջ մնանի այդ խեղճ տղան։ Ահա այն ամենը, որ կրնամ գրել այսօր։ Վաղը չէ մյուս օրը ավելի երկար կգրեմ քեզի և գեղեցիկ լուսանկարներ կուղարկեմ։ Կհամբուրեմ քեզ շատ մե՛ղմ, շատ մե՛ղմ, մե՛ղմ, մեղմորե՛ն...

Ջու Թուրենդ. ցկյանս։

Իմ սիրելագույն կինս,

Այսօր կիրակի է. ո՛չ աղեկ, ո՛չ գեշ, այսինքն՝ գարշելի եղանակ։ Մանրաշափը շատ ցած է. քիթիս մեջ կզգամ... (ես շատ գիտական քիթ ունիմ)։ Առավոտուն ժամը յոթեն առաջ ոտքի ելա, սոսկալի ցուրտ էր։ Գլուխս գնաց կարդալով այնպիսի պատմութիւններ, որոնք բնավ չէին հետաքրքրեր զիս։ Ժամը տասին Ագնիվը եկավ Պիպիին հետ բու հացնդ առնելու (ան շատ է զգացված, որ գրեր ես իրեն)։ Հարցուց նաև, թե ինչու իրենց այլևս չենք այցելեր։ Ես ըսի, թե քիչ մը անհանգիստ եմ (և ասիկա մասամբ ճիշտ է)։ Տասներկուքը բառորդ անցած Օրշի իջաւ ժամը մեկին ճաշեցի. շատ անհամ կերակուր մըն էր (այն օրեն ի վեր, որ այս ճաշարանին մեջ զզվելի ապցան մը կերցուցին ինծի, այլևս ախորժակով չեմ ուտեր. ի դեպ, զինիին տեղ Ռոմանելի ջուր կխմեմ)։ Տուն վերադարձա և ձանձրույթս սանկ-նանկ երկարաձգելու մինչև այս պահը՝ իրիկվա ժամը հինգը։ Եվ ահա հիմա, գրիչը ձեռքս առած՝ քեզի կգրեմ։ Խոստացեր էի հետաքրքրական նամակ մը գրկել քեզի, սակայն... միշտ չէ, որ կրնաս ուզածդ ընել։ Պիտի հարցնես, թե ինչու այդքան տաղտուկ կզգամ այսօր։ Պատճառն այն է, որ Թազվորը (մուշտակի վաճառականը) Լեյզենեն գալով, գնաց է այցելել ինծի։ Որքան կատեմ այսօրինակ արարածները, այնքան կտեղան զլխուս։ Եվ մտածել, որ երկրիս երեսին ապրող մարդոց մեծագույն մասը նման արարածներն են... Օհ, ի՜նչ տխուր է ապրիլ կյանքը այսքան տրձակունակ աշխարհին մեջ։ Եվ ինչքա՜ն քաղցր է ունենալ նազելի կին մը և պզտիկ, մենավոր օճախի մը մեջ ամբողջ աշխարհ մը ստեղծել։ Ինչպես կտեսնես, ես ավելի ու ավելի մանուկ կդառնամ, Յաննի՛, ավելի ու ավելի կհամոսիմ մեր փոքրիկ Տաճարն ունենալու երազիս մեջ (դուն գիտես, այն, որ մենք ծրագրեր ենք արդեն)։ Եվ հիմա, երբ վերջապես հասեր է գործնական կյանքին, դրամին, տիրոջներուն, դիրքին, ապագային վրա մտածելու ժամը, հիմա ավելի քան երբեք երազող կզգամ ինքզինքս։ Գործնական կյանքը կզզվեցնե զիս, մարդիկ սոսկում կառթեն ինծի, կուզեմ մեկ բան միայն. երջանկութիւն և Աբև (դիտես, Փերո՜սը...) Կհիշե՞ս, դուն ինծի կառաջարկեիր վեց ամիս միասին ապրիլ, վեց ամիս՝ առանձին (Թատրոնի սիրույն)։ Ես քեզի կըսեի, թե ասիկա անկարելի է ինծի համար։ Եվ ինչքա՜ն իրավունք ունեի։ Ահա ամիս մըն է միայն, որ բաժնված ենք իրարմե, և որքա՜ն գեշ կզգամ ինքզինքս... Եվ ինչպե՜ս կհաշվեմ օրերը, որ կանցանեն զիս քեզմե... Եվ ինչքա՜ն մինակ եմ, մինա՜կ, մինա՜կ, ահ, եթե գիտնայի՜ր... Ի՜նչ արժեք ունի կյանքը։ Եթե հշմարտապես կսիրենք զիրար. եթե կրնանք այսքան բիշով երջանիկ ըլլալ, Աստված իմ, ինչո՞ւ չըլլանք... Ի՜նչ գիտենք, որ

դեռ երկար պիտի ապրինք (ես ինքս բնավ վստահ չեմ սրտի այս հիվանդությամբ, զոր շատոնց ունիմ արդեն)։ Ինչո՞ւ։ Ուրիշներո՞ւն համույթ պատճառելու համար։ Իսկ որո՞նք են այդ ուրիշները։ Ինչո՞ւ, Յաննի՛ս, ես քեզ երջանիկ, երջանիկ կդարձնեմ։ Ես դաղտնի գանձեր ունիմ, կախարդական աշխարհներ, անհուն բաներ, Հազար ու մեկ գիշերներու երազներ, քեզի կուտամ այդ բոլորը և միշտ ավելին կունենամ... Կսիրեմ քեզ, գա՛նձս, դուն միակ էակն ես, որ իրոք ընդունակ է անկեղծորեն և հավերժորեն զիս սիրելու... Կսիրեմ քեզ, հոգի՛ս... Կարոտագին կըզձամ տեսնել աչքերդ, կըզձամ նայվածքիդ մեջ կորսվիլ, կըզձամ գգվել քեզ, ունենալ, տրվիլ քեզի, սարսռալ սերեն, ապրիլ և զգալ, որ կապրիմ... Սիրելի՛ս...

Ռուբեն

Հինգշաբթի իրիկուն

Սիրելի Յաննի,

Գիշեր է։ Օլտ-Ինտիայի թեյասենյակին մեջ եմ հիմա։ Սիրային երգներու ժամն է։ Նվագախումբը «Բանաստեղծն ու գյուղացին» կնվագե։ Իսկ ես կմտածեմ քու վրադ... Ահա այն ամբողջ անհրաժեշտ պայմանը, որպեսզի դուն կարենաս երևակայել այս իրիկվա իմ գոյութենական հոգեվիճակս...

Սիրելի՛ս։ Այս բոլորը լավ է անշուշտ։ Բայց կա բան մը, որ կպակսի նամակներդ։ Այսօր գրեթե տասը օր է, որ ես ոչինչ եմ ստացած քեզմե։ Բացարձակապես ոչինչ։ Ի՞նչն է պատճառը։ Ազնիվ խոսք, բան չեմ դիտեր։ Եվ սակայն շատ երջանիկ կզգայի զիս, գիտնալով, թե միայն ծուլությունը արգելք կըլլա գրելուդ։ Ամենայն անկեղծությամբ ըսե՛ ինձի՝ արդյոք ունի՞ս ուրիշ պատճառ մը, որ կբռնե գրիչդ...

Երևակայե, Յաննի՛ս։ Ահա տասը օր է արդեն։ Եվ դուն ցպահանջ տող իսկ չես գրած իմ բացակայության ժամանակ։

Երևակայե մեկը, որ ծարավ է և մեկ շաբաթ շարունակ ոչինչ է ստացած իր ծարավը մարելու համար։ Բայց կարելի է մեռնիլ այսպես... Եվ ես վստահ եմ, որ եթե իմ տեղն դուն ըլլայիր, սիրո գառն հանդիմանություններ կտեղայիր շուտով... Բայց, ինչպես կտեսնես, ես երկար համբերություն ունիմ, և այնքա՞ն սիրելի է ինձ ամեն անգամ քեզի ներելը։

Իմ պաշտելի կուռքս, քաղցրագույն բարեկամուհիս, վերջին հույսս և առաջին երջանկությունս, դուն, Յաննի՛ս, բարի եղիր ուրեմն ինձի հանդեպ և եթե նույնիսկ լուրջ զրաղումներ կամ բոլորովին ուրիշ պատ-

ճառներ ունենաս, գեթ սիրո երկտող մը գրելու չափ բարի եղիր։ Երբեք ավելորդ չըլլար...

Գալով ինձի, ես շատ լավ եմ, միայն քիչ մը հոգնած, ճամբորդության պատճառով։ Արդեն ձգեցի անցյալ տարվա սենյակս (որովհետև հեռու էր հիվանդանոցեն) և հիմա Թամարեն ամառանոցն եմ, շատ լավ կահավորված գեղեցիկ ընդարձակ սենյակի մը մեջ։ Ուրեմն դուն պետք է նամակներդ հասցնագրես այսպես. «Մ. Չիլինկ, Թամարեն ամառանոց (պր. Ռոժիվյուի տունը), Ուրս հրապարակ, Լոզան»։

Հույս ունիմ, որ այս հասցեն երջանկություն կբերե ինձի և որ այս տարվա թղթակցությունը շատ ավելի հաճախակի կըլլա։

Ընդունե ամենատաքուկ համբույրներս նուրբ շրթներուդ։ Բյուր բարև սիրելի ծնողքիդ։

Քու հավիտենական Ռուբենդ

Շապաղ

Սիրելի, շատ սիրելի Յաննի,

Հիմա ինչպե՞ս պետք է ներողություն խնդրել քեզմե ծուլությանս համար։ Երեկ խոստացա գրել և ոչինչ գրեցի։ Տառապեցա՞ր այս լռությենեն։ Շա՞տ։ Քի՞չ։ Գիտեմ միայն, որ ես չափազանց տառապեցա քեզ սպասցնելուս համար։ Սակայն ուրիշ բանի անցնինք, այնպես չէ՞։ Ի՞նչ կուզեի ըսել քեզի։ Շատ մը բաներ, համենայն դեպս։ Բայց գրեմ ըստ կարգի։— Նախ, ինձի նորեն գրեցին, թե կուզեն զիս Սիլիվրիի և շրջակայքի պատգամավոր ընել, սակայն այն պայմանով, որ ես նախապես երթամ և այս ու այնտեղ քանի մը բանախոսություն կարդամ։ Ես դեռ չեմ պատասխանած, բայց ըստ էության կկարծեմ, թե լավագույնը կըլլա կանապես մերժելն է։ Յայժմ մենք ապրեցանք ըստ բավականին աղքատ, բայց և այնպես ըստ բավականին երջանիկ։ Ինչո՞ւ փոխել մեր կյանքը, ինչո՞ւ մեկենիմեկ նեռվիլ անձանոթին գիրկը։ Ճիշտ է, որ ամսական 1.200 ֆրանքը լավ բան է, բայց ես չորս տարի հետո միշտ կրնամ պատգամավոր ըլլալ։— Լավ ես ըրած Արսլանյաններուն գրելով։ Կկարծեմ, թե անոնք քիչ մը սրդոդած են, որովհետև քու մեկնելդ ապին ես իրենց տունը ոտք չեմ դրած։ Եվ վաղն ալ, կիրակի, միտք չունիմ երթալու։ Կուզեմ հետիոտն պզտիկ շրջագայություն մը կատարել, քանզի պետք է օգուտ քաղել այն իսկապես սքանչելի եղանակեն, որ դրնե հոս քու մեկնելդ ի վեր. կարծես Ֆրանսայի Հարավն ըլլա, Նիսը։— Ես մանավանդ ուրախ եմ, որ դուն պիտի գաս։ Ուրեմն ե՞րբ տեղի պիտի ունենա այդ երջանիկ ժամանումը։ Մի՞թե կուզես ճամբորդել ծնողնե-

ռուդ հետ, մի՞թե կուզես բերել մեր կահույքը։ Եվ ի՞նչ կահույք։ (Այնուամենայնիվ, պարապ-սարապ բաներ պետք չեն)։ Իսկ ե՞րբ պետք է ես հրաժեշտ տամ իմ սենյակիս։ Հա՞րկ է, որ զբաղիմ գողտրիկ բնակարան մը փնտրելով։ Մ՞ր առնելի համար։ Ահա բազմաթիվ հարցեր, որոնց կրնայիր պատասխանել, եթե ժամանակ ունենայիր։— Զարմացնելու համար քեզ, թե ինչ կարելի է ընել քիչ մը համբերությամբ, քեզի կղզրկեմ երկու լուսանկարներ, որոնցմե պզտիկը քաշված է քու փոքրիկ գործիքովդ։ Սքանչելի են, չէ՞, կարծես նկար ըլլան։ Բայց ավելի լավ լուսանկարներ եմ քաշած, զոր միշտ կպահեմ ծոցագրպանս բարեկամներու ցույց տալու համար։ Եվ աղջնի իսկ ես քիչիկ մը վարկ կվայելեմ, և բոլորը կուզեն սենյակս գալ լուսանկարվելու, բայց ես չեմ ուզեր, որովհետև այդ բանը, այնուամենայնիվ, ծախսի դուռ է ինծի համար։ Միայն երեկ լուսանկարեցի Քոշարյանը։ Մեծապես գոհ մնաց, այնքա՜ն գոհ, որ ինքն ալ 50 ֆրանքնոց գործիք մը պիտի գնե... Ահա թե ինչու ես իրավացի էի, երբ կրսեի, թե մեր ապագա Յանեի ամառանոցին (ներողություն... Յանեի տաճարին) մեջ պետք է սև սենյակ մը ունենանք... Հիմակվընե իսկ մեր պաշտելի Փերոսը լուսանկարել փորձելու հաճույքը կվայելեմ... Թեպետ, հիշա՛ է, որ կարելի չէ լուսանկարել Արևը... Ես ապացույց վստահ եմ, որ քեզի և անոր հետ հիանալի, հիանալի բաներ պիտի պրպտե՛ն... Համբուրե՛ զայն իմ կողմեն։ Չես գիտեր, թե ինչքա՜ն երջանկացուցիր զիս, անոր մասին խոսելով ինծի։ Նամակդ ստանալես ի վեր զաղանի բերկրանք մը, ասոմածային բան մը կթափանցե ստակավ հոգիես ներս, և միայն ու միայն քու մասիդ մտածելով հանդերձ, չեմ դադրիր մտածելե երկուքիդ մասին...

Շատ ուրախ եղա նաև, որ հայրիկդ թանկարժեք իրեր է նվիրեր քեզի։ Հայրիկդ շատ բարի է և շատ կսիրե քեզ։ Ոչինչ այնքան հմայիչ է, ինչքան դեղեցիկ, թանկարժեք իրերով ազվոր ու երիտասարդ կինը (և ոչինչ այնքան ազեղ է, ինչքան շրեղ, թանկարժեք իրերով ազեղ կինը)։ Դուն հետզհետե ավելի պերճաշուք, ավելի հարուստ, ավելի մեծ տիկին կդառնաս, և ես քեզ ավելի ու ավելի կսիրեմ։ Կպաշտեմ քեզ, թանկագի՛նս։ Դուն ամենաիդեալական պզտիկ կինն ես, զոր ես երբեմեն ճանչցած եմ։

Միշտ քու՝ Ռուբեն

Մարտ 1

Օ, իմին ազվոր կինս,

Ամենապաշտելին, ամենահմայիչը, ամենասիրազեղը պզտիկ կիներուն մեջ։ Եթե հիմա գիտնայիր, թե ինչքա՜ն կսիրեմ քեզ և ինչպե՜ս

կատարեմ քու բացակայութիւնդ։ Եվ եթե գիտնայիր, թե ինչքա՜ն սիրաբաղձ ու բարի պիտի ըլլամ քու վերադարձիդ։ Եվ եթե գիտնայիր նաև, թե որքա՜ն կօրհնեմ այս կարճ բաժանումը... Մեծ գեղեցկութիւնները մեծ լեռներ են. երբ մարդ այդ լեռներուն վրա է, այնքան ալ չի նկատեր անոնց մեծութիւնը. պիտք է որոշ տարածութիւն մը, կարենալ դատելու համար անոնց վրա գեղեցկութեան մասին։ Իսկ ես համբորդի մը նման եմ, որ հեռուն դատելի ետքը վեհանիստ գագաթի մը բարձրութեան մասին, պիտի ուզեր դարձյալ ըլլալ անոր վրա և այս անգամ աչքին ավելի լիաթոք ու ավելի խորունկ շնչել այդ կատարի զովասուն օդը... Դուն գիս կհասկնաս, այնպես չէ՞, քաղցրի՛կս։ Եվ նաև կնեքես ինձի, եթե եբրեմն քիչ մը պաղ (քիչ մը ծեր, թերևս), քիչ մը մտախոհ եմ երևցած քեզի։ Պատճառն այն է, որ առանորեն դատող այս հակատին տակ բոցեր կան, կրակներ, գազանի կայծեր, որոնք պիտի ուզեին վայրկենապես հրո հարակ դարձնել իմ ամբողջ էութիւնս... Եթե գիտնայիր, թե ինչքա՜ն կսիրեմ քեզ իմ մեջս...

Մարտ 2

Քանկագին Յաննի,

Այս օրը, առտուն, Աղնիվը եկավ հարցնելու, թե դուն հիմանդ չե՞ս արդյոք։ Ես պատասխանեցի, թե դուն 4—5 շաբաթով էրզրում ես մեկնած։ Քեզի ջերմագին կբարևե, խե՜ղճ աղջիկ։ Բացիկ մը գրե իրեն և հատ մըն ալ՝ Արսլանյաններուն։ Ես անոնց չեմ այցելած տակավին։ Ներե, որ այն օրը ոչինչ ըսի վառյակիդ մասին։ Խնդիրն այն է, որ դեռ չէի կերած զայն (միշտ իմ գեշ տրամադրութեանս պատճառով, որ երբեք օր տուեց... ինչպես Լոզանի հյուսիսային հողմերը...) Երեկ, շաբաթ, սքանչելի արև մը կար հոս։ Տյուլերիյանին հետ պզտիկ նավակ մը վարձեցինք և կեսօրին ճաշակեցինք վառյակը (1 ֆր. 35 սանտեսելու համար)։ Վառյակն իսկապես հիանալի էր, սրտի մը պես։ Երբեք այդքան համեղ բան չէի կերած... Վերադարձիդ, երբ մենք մեր տունն ու տեղը ունենանք, դուն ինձի հաճախակի այդպիսի պատվական վառյակներ պիտի կերցընես, այնպես չէ՞... Բայց դարձյալ ու միշտ կբսեմ, թե լավագույն վառյակը, զոր ես պիտի ուզեի անուշ ընել ամբողջ կյանքիս մեջ (և երբեք չկշտանալ անկե), դուն պիտի ըլլաս, իմ հրեշտակ Յաննիս։ Սատանա՞ր եթե մեծ բուսանկարով և նեբիսակ նամակով ծարար։ Երբ հոգնած դաս, ես քեզի համար սքանչելի բուսանկարներ կպատրաստեմ, որովհետև այնքան լավ սորվեցա նկարել։

Քու՝ Բարեն

Յաննի, գանձս,

Կգրեմ քեզի Օլտ-Ինտիայեն, ուր Տյովլեթյանի հետ եմ։ Օրն ի բուն վազվզեցի պզտիկ, հարմարավետ բնակարան մը գտնելու համար։ Նման բան չկա։ Այո՛, կան բնակարաններ, բայց կա՛մ բանվորական տուներու մեջ, կա՛մ չափազանց հեռու, կա՛մ չափազանց սուղ։ Բայց վերջապես գեղեցիկ բան մը գտա, Սըբրեթիան ծառուղի (բարձրաշխարհի՞կ), թիվ 1, երրորդ հարկ։ Անկյունի նոր տունը, ուր կապրեր Ահարոնյանը։ Շատ մաքուր տուն մըն է, պատվարժան բնակիչներով, սուրբ Ֆրանսուայի, հիլանդանոցի և Շառլիի քովիկը. միևնույն ժամանակ՝ հանրակառք։ Երկու մեծ պատշգամ, հիասքանչ տեսարան, ամբողջ օրը՝ արև։ Միայն ահա թե ի՛նչ։ Ամբողջ բնակարանն ու սանդուղքի վրա բացվող դռներով երկու բոլորովին առանձին սենյակները վարձողը ծեր մայր մըն է իր զավկին հետ։ Ըստ անոնց, այս բոլորը շատ ու շատ է իրենց համար, ուստի իրենք պիտի ապրին դուրսի երկու առանձին սենյակներուն մեջ, իսկ մենք, մինակ, պիտի զբաղեցնենք ամբողջ բնակարանը (այսինքն՝ անկյունը, ընդարձակ պատշգամով շատ մեծ սրահը, լայն պատշգամով նույնպես մեծ ննջասենյակը, կահավորված, լուսավոր ու մեծ խոհանոցը, բոլոր հարմարություններով լոգարանը, աշխատասենյակը)։ Ելեքտրականություն, և գազ։ Մեկ խոսքով՝ ամբողջ բնակարանը։ Եվ ամսական 45 ֆրանք, այսինքն՝ աժանեն ալ աժան։ Իրենք պիտի ապրին բնակարանեն դուրս գտնվող երկու սենյակներուն մեջ, որոնք պզտիկ, առանձին բնակարան մը կկազմեն։ Միայն մայրը իրավունք պիտի ունենա գալու մեր խոհանոցը (քանզի իրենք խոհանոց չունին)։ Բայց մենք բոլորովին մենի՞ մեզի կըլլանք։ Միայն թե պետք է շուտ պատասխան տալ՝ այո թե ոչ։ Ես ըսի, թե ինքս համաձայն եմ, բայց պետք է հարցնեմ կնոջս կարծիքը։ Հիմա պատասխանելու կարգը քուկդ է։ Հոն կմտանենք ապրիլ 15-ին։— Ամառայանը կճանչնա զիրենք, ապրեր է անոնց քով, և զիս կվստահեցնե, թե շենք շնորհքով մարդիկ են։

Ուրեմն՝ պատրաստե մեր կահույքը։ Բայց չեմ ուզեր, որ նոր դաշնամուր գնես։ Լոգան բեր հին դաշնամուրը... այստեղ ավելի սուղ կարելի է ծախել դայն, քան էրֆուրտ, և այդ դրամով կարելի է սքանչելի դաշնամուր մը վարձել։

Պետք է վերջացնեմ նամակս։ Ժամը վեցն է, և արդեն իսկ կսկսին ավելի սրահը։ Հազար համբույր։ Կսպասեմ պատասխանիդ։

Քու Ռուբենդ, ցկյանս

Սիրելի կատվիկ,

Ստացա երեկվա նամակդ և սաստիկ վշտացա իմանալով, որ կաշխատիս և շատ կշղայնանաս։ Միշտ հիշե, որ այս շրջանին քու մեջդ մեծ պատասխանատվություն մը կկրես երրորդ անձի՝ հրեշտակի մը կյանքին ու երջանկության համար և որ եթե դուն այս քանի մը ամիսը ջղային ըլլաս ու դժբախտ, ան ալ ջղային կըլլա ու դժբախտ իր ամբողջ կյանքին մեջ... Լավ մտածե այս մասին և ամբողջ սրտով ժպտե կյանքին, երիտասարդության, գեղեցկության, արևին, եկող գարնան և Փերոսին, որ նույնպես կուգա... Եվ եթե նույնիսկ չըլլար այդ երրորդ պարոնը, ես ինքս կսրդողեի, եթե վերադառնայիր վտիտ ու գունատ։ Ես քեզ էրֆուրտ ղրկեցի՝ ծնողներուդ քով, որպեսզի երջանիկ ըլլաս, ապրիս անվրդով, հանգստացնես ջիղերդ (որոնք Աստված գիտե, թե ինչքա՜ն էին հոգնած)։ Եվ չեմ ուզեր, որ շատ ավելի ջղային վերադառնաս ինծի։

Երեկ հայտարարություն մը տվի «Ազդաթերթին» մեջ, թե հիվանդանոցի մոտակայքը (Շառլի, Սըքրեթիան ծառուղի, Ռոզիատ, Լա Սալազ, Մոն-Շարման կամ այլուր) խոհանոցով, հարմարություններով, տեսարանով երկու սենյակնոց բնակարան մը կփնտրեմ։ Եվ ես ալ անձամբ բավական վազվզեցի գեղեցիկ տուն մը գտնելու համար։ Որովհետև հոսկե չափազանց դժվար է հեռու հիվանդանոց բարձրանալը, կեսօրին իջնելն ու երբեմն հետմիջօրեին նորեն վեր ելլելը։ Մտադիր եմ բավական երկար մնալու հիվանդանոցին մեջ. երբ բոլորովին ավարտեմ հիմակվա աշխատանքս մաշկային հիվանդություններու և բոհախտի բուժման մեջ մասնագիտանալու ուղղությամբ, կմտնեմ մանկական և համաբուժական բաժինը։ Եվ այսպես, եթե հիվանդանոցին կողմերը բնակարան մը ճարեմ, ամեն հետմիջօրե կրնամ երթալ ու աշխատիլ տոմ. Սևեյի առողջատան մեջ։ Կարելիս պիտի ընեմ, որպեսզի մինչև քու վերադարձդ պզտիկ բնակարան մը գտնեմ, որովհետև զզվեր եմ անպետք կերակուրներեն (յոթը տարիե ի վեր կշտացեր եմ ատոնցմե) և անհուն կարոտն ունիմ քու եփելիք խորտիկները ուտելու (և ի՜նչ համեղ էր այն խեղճ վառայկը...)։ Եվ հետո պետք չէ մոռնալ. որոշ ժամանակ ետքը ոչ ոք պիտի ուզե մեզ իր սենյակին մեջ տեսնել, և դուն գիտես, թե որու պատճառով... Ուրեմն, երբ բնակարան գտնեմ, պետք է ուղարկել կահկարասին, և ատոր համար պետք է, որ իրերը բոլորովին պատրաստ ըլլան։

Իսկ դաշնամուրը ծախեցի՞ն արդեն։

Աղվո՜ր, օր ըստ օրե ավելի կսպասեմ քեզ և միշտ ավելի սաս-

տիկ կսիրեմ։ Հիմա կզգամ, որ բոլորովին անկարող կըլլայի քեզմէ զատ ուրիշ մէկը սիրելու, ոչ իսկ մէկ վայրկեան։ Հիմա կզնահատեմ քեզ ամբողջ արժէքովդ... Հաղվագյո՜ւտ իր (բայց ոչ խոր Հնութեան, այնուամենայնիվ...)։ Եկո՜ւր, դուն իմն ես, սիրենք զիրար, փարվինք իրարու ընդմի՜շտ, անբաժա՜ն...

Միայն քու,

Հավիտյանս քու՝

Ռուբեն

Փերոսը քեզ պիտի ողջունե Մայիսին։ Մաղիկներու և Արեի ամառուն...

Հունիս 17, 1913

Սիրելիս,

Երեքշաբթի հասա Զանգեզուր։ Ճամբորդեցի վեց օր։ Շատ հանգիստ եմ։ Բժ. Տինանյանին հետ նույն տան մեջ կապրիմ։ Տան առջև պարտեզ կա և անտառ։ Մի՛ մտահոգվիր ինծի համար։ Շնորհոքն Աստուծո քիչ առնեն արդարությունը կվերականգնվի և մենք միասին կըլլանք։ Միշտ գրեցեք ինծի։

Իմ հասցես.

Բժ. Չիլինկիրյան

Զանգեզուր։

Կրնաք ֆրանսերեն գրել, բայց հասցեն՝ թրքերեն։

Բժշկության մասին գիրք մը գրկեցեք ինծի։ Կհամբուրեմ երախանները։

Ձեր ամուսինը՝

Ռուբեն

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ (էջ 25—35)

Ռուբեն Սնակի այս ժողովածուն լույս է ընծայվել 1910 թ. սեպտեմբերին։ Գիրքը գրված է «Կիլիկիո կոտորածեն ազդված»։ (Թեոդիկ, «Ամենուն Տարեցույցը», 1911, էջ 284)։

Ներկա ժողովածուի մեջ «Կարմիր գիրքը» տպագրվում է ըստ առաջին հրատարակության տեքստի (Կ. Պոլիս, 1910, տպագր. Օննիկ Բարսեղյան և որդի, 71 էջ)։

ՋԱՐԴԻ ԽՆԹԸ (էջ 25—35)

«Հրաման բռավ յոր քաղաքներու
Յոր տարիքեն վար բնակիչներն առ։
Յորր օրվան մեջ կտրել...»

Ամենայն հավանականությամբ ակնարկվում է ավետարանական պատմությունը Հերովդես թագավորի մասին, որը հրաման տվեց «ջարդել Բեթլեհեմի և նրա ամեն սահմանների մեջ գտնվող բոլոր տղաներին՝ երկու տարեկան և դրանից ցած» (Ավետարան ըստ Մատթեոսի, Գլ. Բ. 16)։

«Արկադյան դրախտեն ինչո՞ւ վռնուց»— *Արկադիան լեռնոտ գավառ է Պելեպոնեսի (Հունաստան) կենտրոնում, ուր բնակիչները հին ժամանակներից զբաղվում են*

անասնապահությամբ։ Ըստ անտիկ գրականությունից եկող ավանդությունների, Արկադիան իդեալական երկրի մարմնավորում է, մի դրախտավայր, որտեղ մարդիկ ապրում են անհոգ ու երջանիկ կյանքով։

«Այս վատերո՛ւն տեղ, օ՜ մը, ո՜վ Սիոն...»— Կիլիկիայի տարածքով հոսող ամենամեծ գետը, որի անվանումը ներկայումս թրքացվել է Սեյհան։ Գրքի տեքստում հիշատակվող աշխարհագրական այս անվանումն ուղղակիորեն մատնանշում է «բեմական մենախոսության» վայրը և թվականը։ Այս տեսարանի ակունքը (քահանայի դիակը, որ նետում են Սիոն գետը) կարող ենք գտնել հենց Ռ. Սեակի նախորդ գործերում։ 1909 թ. մայիսի 27-ին նա գրում էր Լոզանից. «Միայն Սիոն գետը Երևի հազար ճայ դիակներ բռնեց Միջերկրական ծով»։— կտեղեկացնեն Ֆրանսական մարտանավերուն սպաները» («Ազդակ», 23/5 հունիս, 1909, էջ 364)։

«Հետո ապշանա՜ր իրենց մունջ բանեն...»— Այս բանաստեղծության տարբերակը՝ «Ուխտին Թափորը» վերնագրով, լույս է տեսել Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը»-ում (1915, էջ 201—202)։ Բանաստեղծության վերջում գրված է՝ Բերա, 1914, կարծես հեղինակը ցանկացել է ընդգծել, որ սա առանձին գործ է, չնայած տողերի մեծ մասը նույնությամբ կրկնում են «Կարմիր գիրքը»-ում զետեղված բանաստեղծությունը։

ՄԱՐԴԵՐԳՈՒԹՅՈՒՆ (էջ 43—60).

Գյուղական նկեղեցիին մեջ (էջ 43)

Բ. «Կարացիք Լյուքրեն, էպիկուր, Վոլթեր // Մի բանի ուրիշ մուր գիրքեր ալ դեռ // Բայց անճավատի այդ տժգույն բուդքեր...»— Լուկրեցիոս (99—55 մ. թ. ա.)— Հռոմեացի բանաստեղծ, փիլիսոփա։ Հեղինակն է «Իրերի բնության մասին» պոեմի, որն իր աշխարհայացքով մոտիկ է էպիկուրի մատերիալիստական սիստեմին։ Հատկանշական է, որ պոեմի ներածական մասում Լուկրեցիոսը փառաբանում է էպիկուրի ուսմունքը, որ ազատում է մարդկությունը՝ աստվածների հանդեպ ունեցած հավատից և մահվան սարսափից։ Էպիկուր (341—270 մ. թ. ա.)— Հին հունական փիլիսոփա-մատերիալիստ։ Նա գտնում էր, որ աստվածներին պետք է երկրպագել, բայց պետք չէ նրանցից վախենալ կամ օգնություն սպասել։ Վոլտեր (1694—1778)— Ֆրանսիացի փիլիսոփա, գրող, հրապարակախոս։ Հայտնի է որպես մարտնչող աթեիստ և հակակղերական։ Ինչպես տեսնում ենք, թվարկված երեք անունները մատերիալիստ և աթեիստ փիլիսոփաներ են։

Գ. «Ով ղո՛ւմ, ո՜վ Հորաս, Զենոն ու Վոլթեր...»— Հորացիոս (65—8 մ. թ. ա.)— Հռոմեացի բանաստեղծ։ Զենոն էլեացի (մոտ. 490—մոտ. 430 մ. թ. ա.)— Հին հունական փիլիսոփա։ Արիստոտելը Զենոնին համարում էր դիալեկտիկայի ստեղծող։

«Քար-քար ավերակ սյուներ Քառնաքին...»— Կառնակ— Հռչակավոր տաճար Եգիպտոսում։

«Բոցը Սիպիլի, Հեղիկ էլլոռաե...»— Սիբիլուն, Գուշակուհի Հին Հռոմի և դերմանական դիցաբանության մեջ։ Էլլոռա— սրբավայր հին Հնդկաստանում, որտեղ ժայռափոր տաճար կա (6—7 դդ.)։

Զ. «Հին ԱՇԵՏԱՐՈՒԹՅՈՒՆ առած բնաբան...»— Ռ. Սեակը հավանաբար նկատի ունի աստվածաշնչյան հետևյալ տողերը. «Ես ամենակարող Աստվածն եմ. աճեա՛ ու շատացա՛» (Գիրք ծննդոց, Լե. 35. 11)։

Թ. «Սպարտական ճի՛ն բարին բարբառս...»— Սպարտացիների դաժան սովորույթի մասին է. ժայռի կատարից անդունդը նետել հիվանդոտ, տգեղ և թույլ երեխաներին։

Գյուղական նամբուն վրա (էջ 49)՝

Գ. «Աստոր նամար Երբ Միսոն Արևմուտքին՝ // Կյանք բառին առջև՝ զարմացողին // Հարցական նշան մը կդնեն նենգ... // Մենք կախման երեք կետեր կդնենք...»— Նույն միտքը, գրեթե նույն բառերով Ռ. Սևակը կրկնում է Յանեի Ապպելին գրած նամակում (տե՛ս 1909 թ. հուլիսի 23-ի նամակը Յ. Ապպելին այս ժողովածուի մեջ)։

Ը. «Տարաբաղդ Անդուանն Հռովմայեցի // Որ վանանն իրեն ծախեց Տոպանին...»— Ռ. Սևակն օգտագործել է հռոմեացի հռչակավոր զորավար Մարկոս Անտոնիուսի (83—30 մ. թ. ա.) անվան ֆրանսերեն տառադարձումը։ Երկրորդ տողն ակնարկում է Անտոնիուսի կապը Եգիպտոսի թագուհի Կլեոպատրայի հետ, որը կործանարար եղավ թե՛ մեկի, թե՛ մյուսի համար։

ԺԱ. «Քանն պապենական օրենքն դանակով // Քիչ մը վախեցնել...»— Մոտավորապես նույն միտքը հանդիպում ենք Ռ. Սևակի «Այս դանակը» պոեմում, ուր հեղինակը գտնում է, որ ճշմարիտը ոչ թե դանակը գործածելն է, այլ «վախեցնելը», քանզի, ինչպես նույն պոեմում է ասվում՝ «Մարդկության ինչ խե՛ր մարդասպան մարդենս»։

Գյուղական գեղեզմանատան մեջ (էջ 54)

Թ. «Յորենեցա նաև սեգ Սատանային, // Զոր Միլտոն, աչքով կույր, նգովով արթուն, // Իշխա՞ն ճռչակեց հաղթված Մարդուն...»— Ջոն Միլտոն (1609—1674)— անգլիացի մեծ բանաստեղծ։ Կյանքի վերջում կուրացել էր։ «Դրախտ կորուսյալ» կրոնափիլիսոփայական ծավալուն պոեմում նկարագրում է, թե ինչպես Սատանան ըմբոստացավ աստծո դեմ, և քանի որ վերջինս անպարտելի էր, ապա Սատանան իր վրեժը լուծեց աստծո ստեղծած Մարդուց։

«Չի մոռցա նաև մտածել անեղ // Օրվան, Երբ փոդին ձայնեն խնկանեղ, կմախքներ Երկինք կրոչին արդեն...»— Խոսքը Ահեղ Դատաստանի օրվա մասին է։

ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ (էջ 61—174)՝

Այստեղ զետեղված են Ռ. Սևակի այն բանաստեղծությունները, որոնք լույս են տեսել հեղինակի կենդանության օրոք կամ մահվանից հետո։ Սրանք, հավանաբար, պետք է հիմք դառնային «Կարմիր գիրքը»-ին հաջորդող ժողովածուների համար։ Բանաստեղծությունների մեծ մասը, տարբեր տարիներին, հավաքվել են վերոհիշյալ հինգ գրքերի մեջ (տե՛ս «Կազմողի կողմից» առաջաբանը), սակայն կան այնպիսի գործեր, որոնք դուրս են մնացել կազմողների ուշադրությունից, չնայած հրապարակված էին մամուլում։

Բաժինը կազմող բանաստեղծությունների մեծ մասը («Գինով սեր»-ից մինչև «Սրինգ») վերցրել ենք Ռ. Սևակի ֆոնդում պահպանվող երկու ընդհանուր տետրակներից (ԴԱԲ, ՌՍՖ, №№ 6, 7)։ Այս տետրակների յուրաքանչյուր էջին Սևակը սոսնձել է մամուլում հրապարակված իր բանաստեղծությունները՝ մոտավոր շափով պահպանելով ժամանակագրական կարգը։ Մենք հարմար գտանք այս բաժնում ևս պահպանել հեղինակի սահմանած հերթաշարումը։ Առաջին տետրակի տիտղոսաթերթին տպագիր տառերով սոսնձված են հետևյալ բառերը. «Ռ. Սևակ. Բանաստեղծություններ. Ա. Մաս. Լոգան»։ Նշանակում է, որ հավաքման այս աշխատանքը հեղինակն սկսել է դեռևս ուսանողական տարիներին և, 1914-ին վերադառնալով Կ. Պոլիս, ինչ-ինչ պատճառներով չի կարողացել ավարտին հասցնել այս կարևոր աշխատանքը։ «Սրինգ»-ից հետո նա տպագրել է բազմաթիվ բանաստեղծություններ, որոնք չեն հավաքվել այս տետրակների մեջ։ Մենք հարմար գտանք տետրակներից դուրս մնացած բանաստեղծությունները զետեղել այս բաժնի վերջում։

Երկրորդ անտրակի 23-րդ էջում վերնագրերի մի ցուցակ կա՝ Թ. Սեակի ձեռագրով։ «Օվսաննա, Մահվան և սիրո երգը (այս բանաստեղծությունը տպագրվել է «Սիրո և մահվան երգը» վերնագրով— Ա. Թ.)։ Հավիտենական հեղուսություն (Դերի տարվող), Անոնցմէ չէր, Սոխերը, Հոգոյի կիներ, Փորրիկ հոգիներ, Նահատակներ, Առջի հայերը, Քան, Գաղտնություն իրենց, Անիծյալ փոսը (այնուհետև գալիս են երկու անընթեռնելի վերնագրեր), Աստված»։ Այս վերնագրերից չորսն անծանոթ են մեզ՝ «Սոխերը», «Հոգոյի կիներ», «Անիծյալ փոսը» և «Աստված»։ Եթե նկատի առնենք այն փաստը, որ Թ. Սեակի մի շարք բանաստեղծություններ գրվել են մի վերնագրով, հետո տպագրվել այլ վերնագրի տակ, ապա հնարավոր է, որ չորսից մեկ-երկուսը մեզ ծանոթ լինեն։

Պիեռով սեր (էջ 61)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1907, նոր շրջան, 18 օգոստոս, թիվ 34, էջ 684), Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ։

«Հոնված Mlle Yanni Appel-ին» (տե՛ս ՆԱՄԱԿՆԵՐ բաժնի ծանոթագրությունը Ցանի Ապպելի մասին)։

Կարապները (էջ 62)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1907, 16 հունիս, թիվ 30, էջ 604)։ Պահպանվել է բանաստեղծության ինքնագիրը (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։ Բնագրում՝ Il est d'étranges soirs, ou les fleurs ont une âme («Կան անսովոր իրիկուններ, երբ ծաղիկներն ունեն հոգի...») վերցված է Այլբեր Սամենի «Կան անսովոր իրիկուններ...» բանաստեղծությունից (տե՛ս «Ֆրանսիական դասական քնարերգության ծաղկաքաղ», Երևան, 1976, Աբրահամ Ալիքյանի թարգմանությամբ, էջ 186—187)։

«Ժյուրաներու ստվերը լուռ կմտնի...»— Ժյուրա (ֆր. Jura) կամ Ցուրա, լեռնաշղթա Ֆրանկո-շվեյցարական սահմանի մոտ, Արևմտյան Ալպերի հյուսիսարևմուտք, որ 300 կմ. երկարությամբ ձգվում է Լեման լճից հյուսիս-արևմուտք և արտացոլվում լճի հայելու մեջ։

Սաֆիա-Մունի (էջ 64)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1907, 19 մայիսի, թիվ 26, էջ 518, Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ)։ Պահպանվել է այս բանաստեղծության ինքնագիրը՝ «Հուսահատություն» վերնագրով (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։ Սաֆիա-Մունի կամ Շակյամունի։ Գautամա Բուդդայի մականուններից մեկը։ Ըստ բուդդայական ուսմունքի, տիեզերքը զարգանում է ցիկլերով։ Ժամանակը բաժանվում է չորս ցիկլերի։ Չորրորդ ցիկլն, իր հերթին, բաժանվում է մեծ և փոքր հատվածների, որոնց մեծ հատվածներն իրար չեն կրկնվում։ Գոյություն ունեն «Բուդդայի ցիկլեր» և «գաստարկ ցիկլեր»։ Մենք ապրում ենք մի ցիկլի մեջ, ուր չորս Բուդդա կա՝ Կրակուչհանդա, Կանակամունի, Կաշյապա և Շակյամունի, հինգերորդ Բուդդան՝ Մայտրեյան, պիտի դա ապագայում (տե՛ս А. Бэшем, «Чудо, которым была Индия», изд. «Наука», Москва, 1977, стр. 295)։ Այսպիսով, Շակյամունին մականուն է չորրորդ Բուդդայի՝ Գautամայի, որը պատմական անձնավորություն է, որին Շակյա ցեղախմբի առաջնորդի, որը 5-րդ դարում, մ. թ. ա., նոր կրոն ստեղծեց ընդդեմ բրահմանականության։

Վերջալույս (էջ 65)—Առաջին անգամ տպագրվել է «Լույս» շաբաթաթերթում (1908, թիվ 4, էջ 116), Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ։

Դեամին ազաբիր (էջ 66)— Առաջին անգամ տպագրվել է «Արևելյան մամուլ» շաբաթաթերթում (1907, թիվ 32, էջ 814), Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ։

Անա կ'երգես, Դասիանա (էջ 67)— Առաջին անգամ տպագրվել է Իզմիրում լույս տեսնող «Արևելյան մամուլ» շաբաթաթերթում (1907, թիվ 38, էջ 947), Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ։

Լեման (էջ 69)— Առաջին անգամ տպագրվել է «Արևելյան մամուլ»-ում (1907,

Թիվ 34, էջ 854), Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ։ Ինքնագիրը վերնագրված է «Լեմանիա» (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։ Հրանտ Տ. Նազարյան (1884, կ. Պոլիս—1963, Բարի, Իտալիա)— Հայ նշանավոր բանաստեղծ, հայկական ֆուտուրիզմի հիմնադիրը արևմտահայ հատվածում։ Գրում էր նաև իտալերեն ու ֆրանսերեն և սերտ կապերի մեջ էր այդ տարիների նշանավոր իտալացի բանաստեղծների և արվեստագետների հետ։ 1910 թ. հրատարակել է «Ֆ. Թ. Մարինեթթի և ապագայապաշտությունը» գիրքը։ Հրանտ Նազարյանը Ռ. Սեակի մտերիմ բարեկամներից էր։ Նրա օգնությամբ է լույս տեսել «Կարմիր գիրքը»։ Մեր ենթադրությամբ, Հ. Նազարյանի արխիվում, որը ներկայումս Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանում է, պետք է բազմաթիվ անտիպներ պահպանված լինեն Ռ. Սեակից։ «Մինչև Ռոնի լայն դաշտերը...»— խորը Ռոնա գետի մասին է, որ սկիզբ է առնում Լեման լճից և Ցրանտիայի տարածքով հոսում դեպի Միջերկրական ծովը։

Հոգիս (էջ 70)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1907, 21 ապրիլի, Թիվ 22, էջ 439), Ռուբեն Զիլինկիրյան ստորագրությամբ։

Սիրտ շոգիները (էջ 71)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1907, 3 մարտի, Թիվ 15, էջ 293), Ռ. Զիլինկիրյան ստորագրությամբ։

Էդելվեյս (էջ 71)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1908, Թիվ 8, էջ 181), Ռ. Սեակ ծածկանունով։ Տետրակի մեջ սրան հաջորդող բոլոր բանաստեղծությունները ստորագրված են ծածկանունով և ինքը՝ հեղինակը այս սկզբունքով է հավաքել մամուլում լույս տեսած իր բանաստեղծությունները։ «Էդելվեյս»-ը հավանաբար առաջիններից մեկն է, որի տակ հայտնվել է ծածկանունը։ Բանաստեղծությանը հաջորդող խմբագրական ծանոթագրության մեջ ասվում է. «ՄԱՍԻՍ»-ի այս թիվով կհրատարակենք Ռ. Սեակի այս գեղեցիկ բանաստեղծությունը։ Ռ. Սեակ հազիվ քանի մը քերթվածներ ստորագրած, արդեն գնահատական մասնավոր հետաքրքրություն մը արթնցուցած է իր շուրջը և ընթերցողներեն շատեր կհարցնեն մեզ, թե ո՞վ կպահվըտի այդ ստորագրության ետևը։ Չենք ուզեր թողամերկել «Ռ. Սեակ»-ը, քանի որ ինք գրական դիմակով կսիրե բանաստեղծել. բայց սա՛ չպի մը դահացենենք հետաքրքրություն ընթերցողներուն, թե ան Մասիսի ընթերցողներուն ծանոթ բանաստեղծ մըն է, որ Մասիսի միջոցով իր բուն անունովը հայտնված ատեն ալ՝ անմիջապես համակրության և գնահատության նշաններով ողջունվեցավ ընթերցողներեն, ինչպես զայն առաջին քերթվածեն գնահատող և ծանոթացնելու սիրող մը եղավ խմբագրությունս։ Բանաստեղծության ինքնագիրը թվագրված է՝ 7 հունվարի, 1908 (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։ Էդելվեյս (Edelweiss գերմ.)— Աոյուծամաղիլ, աոյուծաՀիրան, էդելվեյս։ Մաղիկ, որ աճում է ալպյան անՀաս բարձունքներում։

Աղջկան հոգիներ (էջ 72)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1908, էջ 320)։ 1955 թ. Երևանում լույս տեսած «Երկեր»-ում այս բանաստեղծությունը զետեղված է «Նամակը» վերնագրի տակ։

Երկնի գիշեր (էջ 73)— Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիքի քնար» շաբաթաթերթում (1908, Թիվ 3, էջ 53)։ Առաջին անգամ է զետեղվում ժողովածուի մեջ։

Պատասխանը (էջ 74)— Առաջին անգամ տպագրվել է «Լույս»-ում (1908, Թիվ 14, էջ 453)։

Պիտի սպասեմ (էջ 76)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1908, Թիվ 10, էջ 204)։

Տրտում օրի... (էջ 77)— Առաջին անգամ լույս է տեսել «Մասիս»-ում (1908)։

Սիրտ աղբյուր (էջ 78)— Առաջին անգամ տպագրվել է «Լույս» շաբաթաթերթում (1908, Թիվ 5, էջ 156)։

Երգ Երգոց» (էջ 79)— Առաջին անգամ տպագրվել է «Լույս» շաբաթաթերթում (1908, թիվ 17, էջ 559)։

Անկարելի սերը և լուսնակ լույսով (էջ 80, 81)— Առաջին անգամ տպագրվել է «Արարատ» ամսագրի 1911 թ. թիվ 15-ում։ «Անկարելի սերը» բանաստեղծությունը 1955 թ. Երևանյան ժողովածուի մեջ լույս է տեսել կրճատված տարբերակով, պակասում է երրորդ քառյակը՝ «Դղյակի մեջ իշխանուհի...» (տե՛ս Ռուբեն Սևակ, Երկեր, Հայագետ-հրատ, Երևան, 1955, էջ 60)։ «Արարատ» ամսագրի խմբագրությունն այսպիսի ծանոթագրություն է դրել «Անկարելի սերը» բանաստեղծության տակ. «Նախաճաշակ հեղինակին «Սիրո գիրքեն»։

Գիշերին մեջ և Կարյունի (էջ 81, 82)— Այս բանաստեղծությունները առաջին անգամ են զետեղվում ժողովածուի մեջ։

Համբույրը (էջ 82)— Առաջին անգամ տպագրվել է «Լույս» շաբաթաթերթում (1908, թիվ 25, էջ 851)։

Մեներգ ինձ համար (էջ 84)— Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրականություն» ամսագրում (1911, թիվ 3, էջ 37)։ Առաջին անգամ է զետեղվում ժողովածուի մեջ։

Այդ գիշերը (էջ 85)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս» ամսագրում (1908, թիվ 15, էջ 254)։

Ժպիտ (էջ 85)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս» շաբաթաթերթում (1908, թիվ 11, էջ 220)։

Զյունին (էջ 86)— Առաջին անգամ տպագրվել է «Աստղիկ» հանդեսում (1911, թիվ 3, էջ 35)։ Այս բանաստեղծության մասին «Գեղուն» ամսագրի խմբագիր Մ. Պոտուրյանը գրում է. «Ես ու Սևակ սրտակից էինք, ոչ մեկ ատեն ան իմ խնդրանքս չէր մերժեր։ «Բազմավեպ»ի մեջ կ'երևար, և 1911-ին երբ «Աստղիկ» կիսամյա գեղարվեստական թերթը սկսա հրատարակել, գլխավոր աշխատակիցներս էր։

Հնդրեցի, որ ձյունին տակ լուսանկարվի և ձյունը երգե քերթվածով մը։ Ու Սևակ Զվիցերիո ցուրտին մեջ նստած ու լուսանկարված է քամահանույթիս համար» («Դիցավան», գիրք Ա. Պուրեշ, 1923, էջ 23, խմբ. Մ. Պոտուրյան)։

Ռ. Սևակն իր «Բանաստեղծություններ»-ի տեսարակում իսկապես Մ. Պոտուրյանի նկարագրած էջն է սոսնձել. բանաստեղծական տեքստի հետ հեղինակի լուսանկարն է, միայն ոչ թե «Զվիցերիո ցուրտին մեջ նստած», այլ ձյունապատ լեռներ պատկերող ֆոնի առջև։ Մ. Պոտուրյանի բերած փաստը հետաքրքիր է նրանով, որ Ռ. Սևակը բանաստեղծություններ է գրել պատվիրված թեմայով, սակայն, ինչպես տեսնում ենք, չդավանանելով իր ստեղծագործական նկարագրին։

1955 թ. Երևանյան ժողովածուի մեջ այս բանաստեղծությունը ներկայացված է խիստ կրճատված, ընդամենը երեք քառյակով (տե՛ս Ռ. Սևակ, Երկեր, Երևան, 1955, էջ 85)։

Պոլսո ուրվայնին մեջ (էջ 87)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ» շաբաթաթերթում (1909, թիվ 35, էջ 548)։

Զղջում (էջ 89)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1908, էջ 292)։ Բանաստեղծության ինքնագիրը ձոնված է Ենովք Արմենին (ԳԱԹ, ՌՍՖ, № 1), սակայն քանի որ Ե. Արմենը այդ շրջանում «Մասիս»-ի խմբագիրն էր, ապա կարելի է հասկանալ, թե ինչու բանաստեղծությունն առանց նվիրաբերումի է տպագրվել։ «Զղջում» բանաստեղծությունն առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։

Սիրո մրմունջ (էջ 89)— Առաջին անգամ տպագրվել է «Լույս» շաբաթաթերթում (1908, թիվ 8, 16 փետրվարի, էջ 262)։ Ինքնագիրը կրում է «Ափին վրա» վերնագիրը։

Բանաստեղծությունը գրվել է 1907 թ. հոկտեմբերի 8-ին, Լոզանում (ԳԱԲ, ՌՍՖ, Ա 1)։

Ջհասկցվա՞ծ... *(էջ 90)— Բանաստեղծությունն առաջին անգամ է ընդգրկվում գրքի մեջ։*

Գիսու պտույտ *(էջ 91)— Բանաստեղծությունն առաջին անգամ է ընդգրկվում գրքի մեջ։*

Քնացող աղջիկը *(էջ 91)— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս» շաբաթաթերթում, 1908 թ.։*

Ինչպես Երևան... *(էջ 92)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (23 հունիսի, 1909, թիվ 23, էջ 356)։*

ՉՀԱՍԿՑՎԱԾՆԵՐԸ (էջ 93—96)

Այս վերնագրի տակ Ռ. Սեակը հավաքել է վեց բանաստեղծություններ, որոնք թեմատիկ առումով մի ամբողջություն են կազմում։ Բանաստեղծությունները նվիրված են շարի, բնության մութ, չվերծանված ուժը մարմնավորողներին (աղջիկ, կարիճ, իժ) կամ բնության ու հասարակության կողմից մերժվածներին (Վերջին արքայն, Հայրը)։ Վերջին բանաստեղծությունը սոցիալական մոտիվ է մտցնում այս շարքի մեջ՝ մերժված է ամբողջ մարդկությունը։ Ուշագրավ է այն փաստը, որ շարքի բոլոր բանաստեղծությունները գրված են սոնետի ձևով։ Կարելի է ենթադրել, որ այս շարքի մեջ պիտի մտներ նաև «Մեր բորենին» բանաստեղծությունը, որը թե՛ ձևով, թե՛ բովանդակությամբ (դարձյալ բնության մութ ուժերից է) շատ մոտիկ է այս շարքին։ Տե՛ս «Մեր բորենին» բանաստեղծությունը «Անտիպներ և անհայտ բանաստեղծություններ» բաժնում։

Աղջիկը *(էջ 93)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ» շաբաթաթերթում (1909, էջ 470)։ Բանաստեղծությունն առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։*

Իժը *(էջ 93)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (1909, թիվ 17, էջ 270)։*

Հայրը *(էջ 94)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (28 մարտի, 1909, թիվ 12, էջ 179)։*

Վերջին արքայն *(էջ 95)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (1909, թիվ 13)։*

Գիտի մեռնի *(էջ 95)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (1909, թիվ 15)։*

Կարիճը *(էջ 96)— Առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։*

Կարմիր տոնը *(էջ 96)— Առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։*

Կարմիր դրոշակը *(էջ 99)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (1909, թիվ 19)։*

Փողոց ավլողը *(էջ 100)— Առաջին անգամ տպագրվել է «Աստղիկ» կիսամյա հանդեսում (1911, թիվ 1)։*

Կարմիր կարոտ *(էջ 105)— Բանաստեղծությունն առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։ Տարբերական արտագրված է Ադրինե Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 58)։*

Ջանզակնե՞ր, ջանզակնե՞ր... *(էջ 106)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (1909, թիվ 25, էջ 387)։ 1955 թ. Երևանյան ժողովածուի տեքստից դուրս է մնացել բանաստեղծության վերջին տողը. «Ո՞, զոզանչեցե՞ք, Աստվածն է մեռեր...»։ «Ոռովինետև դեռ հեռու է օրն այն // Երբ զայլ ու զառնուկ սիրով կ'արածին...»— Այս գուշացնող հակադրությունը կարդում ենք նաև «Այլասերում» հրապարակախոսական հոդվածի մեջ (տե՛ս «Բժիշկին դիրքն փրցված էջեր»)։*

Վերջին հայերը *(էջ 108)— Առաջին անգամ տպագրվել է «Ժամանակ» օրաթերթում։ Այս պոեմը մեծ արձագանք է ունեցել իր օրերի հայկական տարբեր գաղութնե-*

բում։ 1910 թ. օգոստոսի 18-ին Թ. Սեակը Լոզանից գրում է Թեոդիկին. «Գրկեմ «Վերջին Հայերը», զոր մասնավորապես Տարեցույցիդ համար պատրաստեցիր։ Քանացի «Ազատ Հայուն փոքրիկ հանրագիտարան»-ին մեջ բացատրել ստրուկ Հայուն մեծ վերքերը։ Աշխատեցա հոն ցուցադրել «նախասահմանադրական» շրջանին մեր գաղթական հայերուն հոգին՝ իր բոլոր լացնող պարզությամբ մեջ։ Չեմ գիտեր, թե հաջողեցա՞։ Ամեն պարագայի մեջ կ'հուսամ, որ հրատարակությունն օգտակար կ'ըլլա՝ ժողովուրդը արտագաղթի զգուշացնելու տեսակետեն»։

Այս պոեմը, սակայն, «Ամենուն Տարեցույց»-ի մեջ լույս չտեսավ։ Թեոդիկը Սեակի առաջնոր համակրողներից էր և հաճիվ թե առարկություններ ունենար պոեմի բարձր արվեստի հանդեպ։ Պետք է ենթադրել, որ «Վերջին Հայերը»-ի շեշտված ծրագրայնությունը և հրապարակախոսական սրությունն են պատճառ դարձել, որ տեղ չի գտել «Ազատ Հայուն փոքրիկ հանրագիտարան»-ում։ Սակայն, ինչպես երևում է, Թեոդիկը այդ գործով հետաքրքրվել է եղել։ 1911 թ. մարտի 8-ին Սեակը Լոզանից գրում է Թեոդիկին. «...«Վերջին Հայերը» շատ գնահատվեր է, կ'ըսեն, Պոլսահայերեն, շնորհակալ եմ, երբեք Եգիպտոսեն եկած հայն մը իմացա, որ այդ վատասերած հայության մեջ ալ գտեր է խանդավառության ցոլքեր» (այս և նախորդ մեջբերումը՝ Թեոդիկ, Ամենուն Տարեցույցը, 1916—1920, էջ 21—22, Թ. Սեակ և Իր նամակները)։

Ո՞վ իմ հայրենիս... (էջ 111)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (2/15 սեպտեմբեր, 1909, թիվ 20, էջ 307)։

Թրուպատուրները (էջ 114)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը»-ում (1911, էջ 91—95)։ Խմբագրության ծանոթագրության մեջ ասվում էր. «Troubadourները Հարավային Ֆրանսայի Ֆրանսայի հաճերգակ աշուղներն էին Միջին Դարու մեջ, և խոսածնին օկյան լեզուն էր (langue d'oc)։ Եղեգներին դղյակն դղյակ՝ երգելու համար իրենց քնքշածները՝ հնչյակ, հոմվերգ, շեր, և իրենց արվեստը կկոչեին «զվարթ գիտություն»։ «Բոյի զինեվարն այզեստաններեն...»— Բո կամ Պո (Pau) քաղաք Ֆրանսայի հարավ-արևմուտքում՝ Պիրենեյան լեռներին մոտիկ, գինեգործության հայտնի շրջան։

Մանազգացում (էջ 118)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը»-ի մեջ (1910, էջ 145)։

ԿԵՎԻՄՅԱՆ ԵՊԵՌԻ

Երբեք բանաստեղծություններ, այս ընդհանուր վերնագրի տակ, առաջին անգամ լույս են տեսել Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը»-ի մեջ (1910, էջ 165—166)։ 1955 թ. Երևանյան ժողովածուի մեջ «Վրեժին սերմնացանը» վերնագիրը սխալմամբ տպագրվել է «Վերջին սերմնացանը», բացի այդ, բանաստեղծության տեքստի մեջ բացակայում է երրորդ քառյակը «Մանձերնին լա՞յն երիվարներ ասպագեն...»։

Երենի՞կ, ջո՞ւր (էջ 121)— Առաջին անգամ տպագրվել է «Լույս» շաբաթաթերթում (1908, թիվ 23, էջ 779—780)։

Ցավո (էջ 122)— Այս պոեմն առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։ Տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 63)։ Առաջին անգամ տպագրվել է Սահակ-Մեսրոպի «Գավառին տարեցույցը»-ում, Առաջին Տարի, Կ. Պոլիս, 1910 թ., էջ 102—104։

Նկո՞ւր, Հավիտենական հնիսարը, Տժգույն երգ» (էջ 124, 125, 126)— Այս երեք բանաստեղծություններն առաջին անգամ տպագրվել են «Ոստան» ամսագրի թիվ 1-ում (1911) «Սիրո գիրք» ընդհանուր խորագրի տակ։ Հեղինակն, ըստ երևույթին, ցանկացել է այս փոքրիկ շարքը որպես մի ամբողջություն ներկայացնել, ուստի և նպատա-

կահարմար դատեք ներկա ժողովածուի մեջ պահպանել ոչ միայն բանաստեղծությունների հերթականությունը, այլև վերնագրերի այբբենական համարակալումը։

Կայրի (էջ 127)— Առաջին անգամ տպագրվել է Իզմիրում լույս տեսնող «Արենյան մամուլ»-ում (24 մարտի, 1909, թիվ 13, էջ 403)։ «Սիլեմբրիո ժայռերեն...»— Սիլեմբրիա, Ռ. Սնակի ծննդավայրի՝ Սիլիվրիի հռոմեական անվանումն է։ «Ներոն մը բոց է տվեր Մեծ-Քաղաքին...»— Ներոնը՝ ոգեշնչվելու նպատակով, հրդեհեց Հռոմը։ «Երբ ինչ-որ մեկն ասաց խոսակցության մեջ.— Երբ մեռնեմ, թող աշխարհը կրակի ճարակ դառնա,— Ներոնը նրան ընդհատեց և ասաց.— Կրակի ճարակ թող դառնա քանի ես կամ։— Եվ նա հասավ դրան... Վեց օր ու գիշեր ազնաբ մոլեգնում էր, իսկ ժողովուրդը փրկություն էր որոնում քարե հուշարձաններում և դամբարաններում։ Նա այդ հրդեհը դիտում էր Մեկենասյան աշտարակից, ինչպես ինքն էր ասում՝ վայելելով հոյակապ կրակները և, թատերական զգեստ հագած, «Տրոյայի կործանումն» էր երգում (Гай Светоний Транквилл. «Жизнь двенадцати цезарей». изд. «Наука». Москва. 1964. стр. 164)։

Սերո՛վ, սերո՛վ... և նրն գիտնայիր... (էջ 128, 128)— «Սիրո գիրք»-ից։ Առաջին անգամ տպագրվել են «Մեր տարեցույց»-ում, Բ. Տարի, 1911 թ., կ. Գալիս, էջ 102—104, Այս բանաստեղծությունները, գրեթե նույնությամբ, արտագրված են Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 79 և 77)։ «Եթե գիտնայիր...» բանաստեղծությունն առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։ Բանաստեղծության ինքնագրից իմանում ենք գրության թվականը և վայրը՝ «1910, Կազանդ, Էրֆուրտ, Hôtel Silver» (ԳԱԹ, ՌՍՖ, № 2)։

Գոռնիկը (էջ 130)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույց»-ի 1909 թ. գրքում, 1955 թ. Երևանյան ժողովածուի մեջ ներկայացված է առանց վերնագրի՝ աստղանիշով և հանված է «Գ. Զոհրապին» նվիրաբերումը։

Արցունքին ճերվածը (էջ 131)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույց»-ում (1908, էջ 111)։ Ինքնագիրը երկու՝ սրանից տարբեր վերնագիր ունի՝ «Արցունքին աղոթքը» և «Իջիր արցունք...» (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։

Վերջին կոչը (էջ 132)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույց»-ում (1911, էջ 285)։ Հեղինակն իր «Բանաստեղծություններ»-ի տետրակի մեջ փաստորեն ստեղծել է մի նոր տարբերակ. «Տարեցույց»-ում տպագրված բանաստեղծության քառյակներն իր մոտ սոսնձել է ուրիշ հերթականությամբ։ Պահպանվել է մեկ այլ, իսկական տարբերակ՝ «Վերջին սերը» վերնագրով (ԳԱԹ, ՌՍՖ, № 2)։

Ասպետին երգը և Գացող մարդը (էջ 132, 133)— Առաջին անգամ տպագրվել են «Արաքսի» ամսագրում (1911, թիվ 12)՝ «Սիրո գիրք» ընդհանուր վերնագրի տակ։

Հայ ծնունդ (էջ 133)— Առաջին անգամ տպագրվել է Մ. Գասուրյանի «Աստղիկ» հանդեսում (1911, թիվ 2, էջ 27—29)։ Առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։ «Այս գիշեր քսան դարեր վերջ // Դուն ծնի՛լ կուգաս մբսուրի մը մեջ...»։ Ակնարկ Քրիստոսի ծնունդին։

Ինչո՞ւ և Սիրո ծարավ (էջ 136)— Առաջին անգամ տպագրվել են Մերուժան Պարսամյանի «Շանթ» կիսամսյա հանդեսում (1912, թիվ 3, էջ 41)։

Հայաստան (էջ 137)— Առաջին անգամ տպագրվել է Ա. Զոպանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Վերածնունդ» ամսագրում (1919, թիվ 1—2)։ Այս բանաստեղծության առիթով Ավետիք Իսահակյանը 1918 թ. դեկտեմբերի 13-ին ծնից գրում էր Ա. Զոպանյանին. «Սիրելի բարեկամ Ար. Զոպանյան, այս նամակիս հետ ուղարկում եմ մի ոտանավոր, որ 1913 թ. Լոզանում մեր եղերաբախտ բանաստեղծ Ռուբեն Զարիկյանը-Սնակն գրեց իմ ծոցատետրիս մեջ. այս ծոցատետրս միայն վերջերս հնարավոր եղավ

ստանալու (մոտս չէր ուրիշ ձեռագիրներիս հետ), ուստի և պարտք եմ համարում տպագրության հանձնելու, միգուցե չկորի այս գեղեցիկ բանաստեղծությունը։ Որքան հիշում եմ ո՛չ մի տեղ չի տպված դա» (Ավ. Խաչակյան, Երկերի ժողովածու, վերջերորդ հատոր, էջ 172)։

Բույրը և Խալաթիկ (էջ 137, 138)— Առաջին անգամ տպագրվել են «Շանթ» կիսամսյա հանդեսում (1912, էջ 319)։

Ամենուն պես և Ջար աղջիկը (էջ 140, 141)— Առաջին անգամ տպագրվել են «Շանթ»-ում (1912, էջ 287)։ «Ամենուն պես» բանաստեղծության ինքնագիրը նվիրված է Հարությունն Այփիարին (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։

Ողջակեզ (էջ 142)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (1909, էջ 419)։ Առաջին անգամ է զետեղվում գրքի մեջ։

Մե՞ծդ Աստված (էջ 144)— Առաջին անգամ տպագրվել է Զարեհ Գազազյանի «Հայ գրականություն» ամսագրում (1912, թիվ 10)։ Այս բանաստեղծության ինքնագիր տարբերակը պահպանվում է Ենովք Արմենի ֆոնդում (ԳԱԹ, ԵԱԲ, № 1202)։ Տարբերակը կրում է «Տիեզերք և մարդ» վերնագիրը։

Կարապի երգ (էջ 145)— Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրականություն» ամսագրում (1912, թիվ 8)։ Այս բանաստեղծության տարբերակը՝ «Կարապը» վերնագրով, զետեղված է 1946 թ. փարիզյան ժողովածուի մեջ։ Տեքստը հավանաբար վերցրել են Ա. Հակոբովիչի տետրակից, քանզի այն նույնությամբ կարդում ենք տետրակում՝ «Կարապը» վերնագրի տակ (ԱՀՏ, էջ 37—38)։ Ըստ որում, որպես գրության վայր նշված է Լոզանը, մինչդեռ մեր՝ ավելի ընդարձակ տարբերակում (երկու քառյակ ավելի է) նշված է Նիցցա։ Այս վերջինը ավելի հավանական է թվում, քանզի կարապին շրջապատող մերձարևադարձային բնանկարը ավելի հատկանշական է Նիցցայի, քան Լոզանին։ Նույն բանաստեղծության ինքնագիրը վերնագրված է «Վերհիշում» (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։

Երբալ և Սերը (էջ 147)— Առաջին անգամ տպագրվել են «Շանթ» կիսամսյա հանդեսում (1913, թիվ 27)։

Սկեպտիկ (էջ 148)— Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրականություն» ամսագրում (1913, թիվ 9)։ Բանաստեղծության տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 39)։

Սրինգ (էջ 149)— Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրականություն» ամսագրում (1913, թիվ 9)։ Սրանով վերջանում են Ռ. Սեակի հավաքած բանաստեղծությունները։ Բաժինը շարունակող մյուս բանաստեղծությունները հավաքել ենք Երուսաղեմում (1944), Փարիզում (1946) և Երևանում (1955) լույս տեսած ժողովածուներից, արևմտահայ և սփյուռքահայ մամուլի էջերից։ Դրանց մի մասը առաջին անգամ է մտնում ժողովածուի մեջ։

Առաջին մեղրը և Սիրո և մահվան երգը (էջ 151, 152)— Առաջին անգամ տպագրվել են «Շանթ»-ում (1912, թիվ 15, էջ 235)։ «Առաջին մեղրը» բանաստեղծության տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 40—41)։ Պահպանվել է նաև ինքնագիրը՝ «Մեղրը» վերնագրով, ձոնված Ջիֆթե-Սարաֆին (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։ Բանաստեղծություններն առաջին անգամ լույս են տեսել «Սիրո գիրք» խորագրի տակ։ Երկրորդ բանաստեղծության վերնագիրը մի փոքր փոխվել է, ամենայն հավանականությամբ «Շանթ»-ի խմբագրությունում։ Ինքնագիրը, որ գրեթե նույնությամբ համապատասխանում է լույս տեսած տեքստին, կրում է «Մահվան ու սիրո երգը» վերնագիրը (ԳԱԹ, ՌՍՖ, № 2)։ Բառացիորեն նույն տեքստը, ինքնագրի վերնագրի տակ, կարդում

Ենք Ա. Հակոբովիչի տետրակում ((ԱՀՏ, էջ 85—86)։ Գրության թվականը և վայրը երկու տեղում էլ նշված է նույնը. «1910 օգոստոս 20, Շամբերիր»։ «Շանթ»-ում նշված է միայն գրության վայրը. «Լոզան», որն, անշուշտ, սխալ է։

Հին եղանակ (էջ 153)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույց»-ի մեջ (1909)։ Տիկին Ա. Թեոդիկին— Արշակուհի Թեոդիկ (Ճեզվեճյան Արշակուհի) (1875 թ., Սամաթիա, կ. Պոլիս—2 հունվարի, 1922 թ., Լեյզեն (Շվեյցարիա)— Հայ ականավոր լրագրող-բանաստեղծ, գրական գործիչ Թեոդիկի կինը։ 1907 թ. աշխատակցել է «Ամենուն Տարեցույց»-ին։ Ժամանակակիցների վրա մեծ տպավորություն է թողել նրա «Ամիս մը ի Կիլիկիա» հրապարակախոսական-վավերագրական գիրքը՝ նվիրված 1909-ի Աղանայի ջարդերին։ Այս առթիվ կարևոր է նաև Թ. Սևակի նամակը Ա. Թեոդիկին (տե՛ս «Նամակներ Թեոդիկին» ներկա ժողովածուի «Նամակներ» բաժնում)։

Գիշերին մեջ և Գիշերն իջավ (էջ 154, 155)— Առաջին անգամ տպագրվել են «Շանթ»-ում (1914, 15 մայիսի, թիվ 58, էջ 147)։ «Հայկ Եղբոտ հիշատակին»— Թ. Սևակի ավագ եղբայրը։ Նրան է նվիրված նաև «Ահավոր տարակույսը» պատմվածքը։ Այս եղբոր մասին խոսվում է նաև Պ. Մ.-ին ուղղված նամակներից մեկում (տե՛ս այդ շարքի անթվակիր նամակը)։ «Գիշերն իջավ» բանաստեղծության տարբերակը կա Ա. Հակոբովիչի տետրակում՝ «Քաղցրություն» վերնագրով (ԱՀՏ, էջ 17)։

Ցնծուն մահ (էջ 155)— Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրականություն» ամսագրում (1914, թիվ 5)։

Հայ որբը (էջ 156)— «Կիլիկյան երգեր» շարքի «Հայ որբիկ» բանաստեղծության տարբերակն է, որ տպագրվում է նաև որպես առանձին բանաստեղծություն։ Վերցրել ենք 1946 թ. փարիզյան ժողովածուից։ Նույն տեքստը հանդիպում ենք Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 1)։

Երեք ձիավորներ (էջ 156)— Առաջին անգամ տպագրվել է 1946 թ. փարիզյան ժողովածուի մեջ։ Ամենայն հավանականությամբ, տեքստը վերցրել են Ա. Հակոբովիչի տետրակից (ԱՀՏ, էջ 8)։

Արգասավորում (էջ 157)— Առաջին անգամ տպագրվել է Թեոդիկի «Ամենուն Տարեցույց»-ում (1909)։

Հավիտենական հեգնություն (էջ 158)— Առաջին անգամ տպագրվել է «Հայ գրականություն» ամսագրում (1913, թիվ 2)։ Մոտավորապես նույն տեքստը, աննշան տարբերություններով, գտնվում է Հեղինակի տետրակում (ԳԱԹ, ՌՍՖ, № 2) և Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 72)։ Ինքնագրի տակ նշված է. «1 դեկտ. 1909, Լոզան, 1/4 ժամվա մեջ գրված, առավոտ կանուխ»։

Արևելք (էջ 158)— Առաջին անգամ տպագրվել է «Մեր օրացույց»-ի մեջ (Ա տարի, 1910, էջ 77)։

Շան հոգի (էջ 159)— Առաջին անգամ տպագրվել է «Մեր տարեցույց»-ի մեջ (Ա տարի, 1910, 78—79 էջեր)։ Պահպանվել է ինքնագիր տարբերակը (ԳԱԹ, ՌՍՖ, № 2)։ Արտագրված է նաև Ա. Հակոբովիչի տետրակի մեջ (ԱՀՏ, էջ 60—62)։ Երկուսի տակ էլ նշված է նույնը. «15 օգոստոս 1909, Սիլիվրի»։

Այս դանակը (էջ 160)— Առաջին անգամ տպագրվել է Վենետիկում լույս տեսնող «Գեղունի» հանդեսում (1909)։

Եռվային արցունքը (էջ 166)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ» շաբաթաթերթում (1909, թիվ 32, էջ 498)։ Ինքնագիրը վերնագրված է «1896» և ծոնված է՝ «Համիտին» (ԳԱԹ, ՌՍՖ, № 1)։

Քասպել (էջ 168)— Տեքստը վերցրել ենք 1944 թ. (Երուսաղեմ) գրքից։

Միենակ մարդը (էջ 168)— Առաջին անգամ տպագրվել է Կ. Պոլսում լույս տեսնող «Դիտակ» թերթում (28. 3. 1932, էջ 341)։ Պահպանվել է բանաստեղծության ինքնագիրը (ԳԱԹ, ԹՍՅ, № 4ա)։ Առաջին անգամ է մտնում ժողովածուի մեջ։

Անազանգերը (էջ 169)— Վերցրել ենք «Շանթ» հանդեսից (1918, թիվ 2, էջ 18)։ Առաջին անգամ է ընդգրկվում ժողովածուի մեջ։

Բանտին մեջ (էջ 170)— Առաջին անգամ տպագրվել է «Շանթ» հանդեսում (1919, թիվ 31, էջ 362)։ Բանաստեղծությունը նախորդող խմբագրական փոքրիկ առաջաբանի մեջ ասվում է. «Մասնավոր գործուքներով կհրատարակենք Թ. Սեվակի ուսանողական շրջանի (հավանաբար նկատի ունեն Պերպերյան վարժարանում ուսանելու շրջանը— Ա. Թ.) մեկ անտիպ ու այնքա՜ն բարախուռ բերթված, զոր կքաղենք 1910ին Պերպերյան Վարժարանի աշակերտներուն կողմե խմբագրած ԱՇԽԵՆ անունով ձեռագիր կիսամյա հանդեսեն։

Կհրատարակենք զայն անփոփոխ, իր սաղաշափական գաղտուղություններովը և թերություններովը։ Սակայն, եթե ոչչ ըլլար, սրբագրությունները անցուցած պիտի հանաներ մամուլին։ Բայց իր այս անկատար ձևին մեջ իսկ, ան նշխար մըն է մեզի համար, թանկագին և նվիրական, ու հետևաբար այնքան այժմեական, որ կարծես այսօր գրված է»։ Բանաստեղծության ինքնագիրը կրում է «Ասա՜ հանգչի՜ մը» վերնագիրը (ԳԱԹ, ԹՍՅ, № 2)։ Ինքնագրի տեքստը նույնությամբ արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (75—76 էջեր), սակայն բացակայում է բանաստեղծության առաջին տողի առաջին բառը՝ «հիվանդական», այսինքն՝ չվերջացրածներ։ Տպագրված տեքստում այդ բառը դարձել է «թուրքական», և տարբերի բանակը պահպանելու նպատակով ավելացվել է նաև «հեռ» բառը։ Այս փոփոխությունն, բան երևույթին, կատարվել է «Շանթ»-ի խմբագրությունում։ Բանաստեղծությունն առաջին անգամ է գետեղվում ժողովածուի մեջ։

Աերը (էջ 171)— Վերցրել ենք 1944 թ. ժողովածուից։ Պահպանվել է նույն տեքստը Տիգրան Չիթունու ձեռագրով (ԳԱԹ, ԹՍՅ, № 3)։

Հայ Ջատիկը (էջ 172)— Առաջին անգամ տպագրվել է Մկրտիչ Պոտուրյանի «Դիցավան» հանդեսում (1923, Գիրք Ա., էջ 17—20)։ Ըստ Մ. Պոտուրյանի, բանաստեղծությունը գրվել է 1911 թ. «12 տարի առաջ գրված այս ավանդավեպ-բերթվածը իր մահվանեն ետք մատնեցի մը պես կպահեի» («Դիցավան», նույնը)։ Առաջին անգամ է գետեղվում ժողովածուի մեջ։

Ատոմ մը (էջ 174)— Առաջին անգամ տպագրվել է «Էջմիածին» ամսագրում (1965, Փետրվար—Ապրիլ)։ Հրապարակումը պատրաստել է Գոհար Ազնավուրյանը։ Ա. Հակոբովիչի տետրակում արտագրված է տարբերակը (ԱՀՏ, էջ 49)։ Առաջին անգամ է գետեղվում ժողովածուի մեջ։

ԱՆՏԻՊՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ (էջ 175—221)

Բաներորդ դարի հայ մեծ բանաստեղծներից Թումանյանի Սեվակը թերևս միակն է, որ ունեցել անտիպ և չհավաքված բանաստեղծություններ ունի մինչև այսօր։ Անտիպների մեծ մասը՝ հեղինակի ինքնագրերով լի երկու բնդհանուր տետրեր, երկար ժամանակ գտնվել են պոլսահայ գրական գործիչ Թորոս Ազատյանի մոտ։ Այդ տետրակները, սնանկության մի շարք ուրիշ նյութերի հետ, Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան են հասել 1958—1970 թթ., այսինքն՝ Թ. Ազատյանի մահվանից (1955) հետո։ Թ. Սեվակի նամակները և բանաստեղծությունների մի քանի ինքնագրեր հայտնաբերվեցին Նեղոմ Արմենի, Կարեն Միքայելյանի ֆոնդերում։

Անհայտ և անտիպ բանաստեղծությունների մի ամբողջ զանձարան է Թ. Սեվակի

քրոջ աղջկա՝ Աղբինն Հակոբովիչի տետրակը, որի պատճենը մեզ հաջողվեց ստանալ Նիցցայում գտնվող Ռ. Սեակի ամբողջական գործերի հավաքման հանձնաժողովից։ 1922 թ. նոյեմբերի 20-ին Աղբինեն արտագրել է իր մորեղբոր հիսունչորս բանաստեղծություններ, որոնցից տասնութը անտիպ են, իսկ մնացած երեսունվեցը տպագրված-ների կրկնություններն են կամ հետաքրքիր տարբերակները։ Տետրակի առաջին էջին գրված է. «20 Նոյ. 1922, Ռ. Սեակի անտիպ բերթվածները, իր ձեռագիրն ընդօրի-նակված»։ Այսօր դուցե դժվար է մեկ առ մեկ թվել այն սկզբնաղբյուրները, որոնցից օգտվել է Ա. Հակոբովիչը, սակայն ստույգ է, որ դրանց թվում են եղել Հեղինակի երկու տետրակները (ԳԱԹ, ՌՍՏ, N 1, 2)։ Այս եզրակացությունն առիթն է տալիս մի քանի տեքստերի բաշխման նույնությունը Հեղինակի և Ա. Հակոբովիչի տետրակներում, և հենց այդ տեքստերն էլ մեզ համոզում են, որ Ա. Հակոբովիչի տետրակը, իր գիտական հշգրտությամբ, լիովին վստահելի է։ Ամեն ինչ նույնությամբ արտագրված է։ Եվ վերջապես, այս տետրակը մեզ հուշում է, որ Մեծ եղեռնի արհավիրքներից հետո, 1922 թվականին, մեզ այսօր հայտնի հեղինակային երկու տետրակների հետ եղել են նաև ուրիշներ։ Որտե՞ղ են այսօր դրանք, հուսանք, որ ժամանակի ընթացքում կհայտնաբերվեն նաև Ռ. Սեակի մյուս ինքնագրերը։

Ա. Հակոբովիչի տետրակը եղել է նաև 1946 թ. փարիզյան ժողովածուն կազմողների մոտ։ Գրքի 236-րդ էջում թվարկվում են մի շարք վերնագրեր, որոնք վերցված են այդ տետրակից։

Այսպիսով, հավաքվում է հիշատ հիսուն բանաստեղծություն, որոնք, մեր կարծիքով, անտիպ են։ Տասնը սրտի, ժամանակի սղության պատճառով, չկարողացանք ավելի մանրամասն ստուգել արևմտահայ և սփյուռքահայ մամուլը՝ վերջնականորեն պարզելու անտիպների թիվը։ Հնարավոր է, որ այս հիսունից մի քանիսը լույս են տեսել մամուլում և վրիպել են մեր ուշադրությունից։ Սակայն ստույգ է, որ այս հիսունն էլ առաջին անգամ պիտի ներկայացվեն ժողովածուով։

Ա ն տ ի պ ն ե ր բաժինը կազմված է հետևյալ կարգով։ Ռ. Սեակի ինքնագիր տետրակներից հավաքված բանաստեղծությունները (ԳԱԹ, ՌՍՏ, N 1, 2), բանաստեղ-ծություններ այլ ֆոնդերից և Ա. Հակոբովիչի տետրակից։ Բանաստեղծությունների դա-սավորման հերթականությունը թողել ենք այնպես, ինչպես տետրակներում է։ Ինքնա-գրերի առաջին տետրակի տիտղոսաթերթին գրված է. «Սրտի ժամեր. 1906. Լոգան. Ա. Տետրակ» (ԳԱԹ, ՌՍՏ, N 1)։ Մյուս տետրակի տիտղոսաթերթին կարդում ենք. «Ռ. Սեակ. 1909» (ԳԱԹ, ՌՍՏ, N 2)։

Սեղրը (էջ 175) — Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՏ, N 1)։ Բա-նաստեղծության տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 28—29)։

Հիշ մը (էջ 176) — Առաջին անգամ տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրի 1984 թ. N 8-ում։ Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՏ, N 1)։

Օխտանենա (էջ 177) — Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՏ, N 1)։

Հավիտենական պատմությունը (էջ 178) — Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՏ, N 1)։

Սեր բուրենին (էջ 178) — Առաջին անգամ տպագրվել է «Սովետական Հայաստան» ամ-սագրի 1984 թ. N 8-ում։ Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՏ, N 1)։ Այս բանաստեղծությունն իր ձևով և բովանդակությամբ մոտիկ է «Հասկերի» շարքին։

Վերջին երգը. Վրտակը (էջ 179, 180)— Տեքստերը վերցված են հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 1)։

Ջան, խենք հեմիաք (էջ 181, 184)— Տեքստերը վերցված են հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Նամակ (էջ 185)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1985, № 4)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Զոն (էջ 188)— Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ»-ում (1985, 12 ապրիլի)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։ Բանաստեղծության տեքստը, գրեթե նույնությամբ, արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 68)։

Որո՞ւ համար (էջ 189)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1985, № 4)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Գյուղացու սեր (էջ 191)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։ Տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 29—30)։

Նահապետը (էջ 191)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։ Տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 53—56) «Հայրենի կոչ» վերնագրի տակ։

Իտեալ սերը (էջ 194)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1985, № 4)։ Ա. Հակոբովիչի տետրակում կա այս բանաստեղծության տարբերակը՝ «Սև տոմս» վերնագրի տակ (ԱՀՏ, էջ 39)։ Ներկա ժողովածուի մեջ զետեղված է ինքնագրի տեքստը (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Նվեր ամանորի (էջ 195)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։ Էրֆուրտ— գերմանական այս քաղաքում էր ապրում բանաստեղծի ապագա կինը՝ Յաննի Ապպելը։

Աչի հայերը (էջ 196)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից, (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Աղոթք (էջ 198)— Առաջին անգամ տպագրվել է «Գարուն» ամսագրում (1985, № 4)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Հանդիպում (էջ 199)— Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ»-ում (1985, ապրիլի 12)։ Այս բանաստեղծության տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 20)։ Ներկա ժողովածուի մեջ զետեղված է ինքնագրի տեքստը (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Պիտի ունենամ (էջ 200)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Քերթողի մահը (էջ 201)— Առաջին անգամ տպագրվել է «Գարուն» ամսագրում (1985, № 4)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։ Ինքնագիրը նույնությամբ արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 81)։

Պիսավորը (էջ 202)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Հովիվը (էջ 203)— Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ»-ում (1985, 12 ապրիլի)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Երկու քույրեր (էջ 204)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրում (1985, № 2)։ Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Իրենց պատմությունը (էջ 205)— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԲ, ՌՍՏ, № 2)։

Ճիշտ սերը (էջ 206)— Այս բանաստեղծության համառոտված տեքստը (1—4 քառյակը) առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1965, № 4)։ Տարբերակն արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 21)։ Ներկա ժողովածուի մեջ զետեղել ենք ինքնագրի տեքստը (ԳԱԹ, ԲՍՁ, № 2)։

Խանալ կիներ (էջ 207)— Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ԲՍՁ, № 2)։ Բանաստեղծության տարբերակն, անշնչան շեղումներով, արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 24)։ «Old India»— Նշանավոր արևելյան-թեյարան գրատակդրի և տասական թվականների լոգանում, ուր հաճախ է եղել Ռ. Սևակը։ «Օլդ Ինդիա»-ում են գրված նրա մի շարք բանաստեղծություններ և նամակներ։

Ո՛չ (էջ 209)— Առաջին անգամ տպագրվել է «Գարուն» ամսագրում (1985, № 4)։ Բանաստեղծությունը նույնությամբ արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 87—88)։ Ներկա ժողովածուի տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ԲՍՁ, № 2)։

Երգիչը (էջ 210)— Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում (1985, 17 ապրիլի)։ Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ԲՍՁ, № 2)։

Հայուհին (էջ 211)— Տեքստը վերցված է Հեղինակի տետրակից (ԳԱԹ, ԲՍՁ, № 2)։

Գզտիկ մանը (էջ 212)— Այս բանաստեղծության ինքնագիրը պահպանվում է Ենոքը Արմենի ֆոնդում (ԳԱԹ, ԵՍՁ, № 1202)։ Բացի այդ, «Փորրիկ նահատակը» վերնագրով տարբերակ կա Հեղինակի «Ա. Տետրակում»։

Ինոով գիշեր (էջ 214)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրում (1984, № 8)։ Բանաստեղծությունը նույնությամբ արտագրված է Ա. Հակոբովիչի տետրակում (ԱՀՏ, էջ 7)։ Ներկա ժողովածուի մեջ զետեղված է ինքնագրի տեքստը (ԳԱԹ, ԲՍՁ, № 5)։

Սեազներ (էջ 214)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական Հայաստան» ամսագրում (1985, № 2)։ Այս և հաջորդ տասնութ բանաստեղծությունների տեքստերը վերցրել ենք Ա. Հակոբովիչի տետրակից։

Երազ (էջ 215)— Առաջին անգամ տպագրվել է «Գարուն» ամսագրում (1985, № 4)։

Մենք կուլար... (էջ 216)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1985, № 4)։

Հարսներգ (էջ 217)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1985, № 4)։

Սիրե (էջ 219)— Առաջին անգամ տպագրվել է «Սովետական գրականություն» ամսագրում (1985, № 4)։

Գզտիկ սիրտը (էջ 220)— Առաջին անգամ տպագրվել է «Գրական թերթ»-ում (1985, 12 ապրիլի)։

Մարգարիտը (էջ 221)— Առաջին անգամ տպագրվել է «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթում (1985, 17 ապրիլի)։

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (էջ 226—236)

Ինչպես երևում է, Ռ. Սևակը թարգմանությամբ առանձնապես շատ չի զբաղվել։ Մինչև այժմ հայտնի էին տասներկու բանաստեղծություններ, որոնց հնարավոր եղավ ավելացնել ընդամենը չորս անտիպ թարգմանություններ։

Լրֆոնդ տը Լիլ— «Ցորեկ»— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս» շաբաթաթերթում (1907, թիվ 14, էջ 273)։

Մ. Տրյուբեր— «Երեք ծաղիկներ»— Առաջին անգամ տպագրվել է «Արևելյան մա-

մուլ»-ում (1908, թիվ 20, էջ 509)։ 1955 թ. ժողովածուի մեջ այս բանաստեղծությունը սխալմամբ վերագրվել է Թ. Սեակին և զետեղվել «Սիրո գիրքը» բաժնի մեջ (տե՛ս Թ. Սեակ, Երկեր, Երևան, 1955, էջ 40)։

Հ. Հայենից թարգմանված յոթ բանաստեղծություններն առաջին անգամ տպագրվել են «Արևելյան մամուլ»-ում (1909, թիվ 7, 12, 15 և 29)։

Ալպեր Սամեն— «Ճերմակ գիշեր»— Առաջին անգամ տպագրվել է «Շանթ»-ում (1919, թիվ 9—10)։ Ներկայացվող տեքստը վերցրել ենք հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՖ, N 1)։

Ալպեր Սամեն— «Երաժշտություն»— Տեքստը վերցված է հեղինակի «Ա. Տետրակից» (ԳԱԹ, ՌՍՖ, N 1)։ Տպագրվում է առաջին անգամ։

Ալպեր Սամեն— «Ամառվան ժամեր (6)»— Այս վերնագրի տակ Ա. Սամենը գրել է վեց սոնետ։ Թ. Սեակը թարգմանել է միայն շարքի վերջին բանաստեղծությունը։ 1955 թ. ժողովածուի մեջ այս թարգմանությունը ևս սխալմամբ դրվել է Թ. Սեակի բանաստեղծությունների շարքում (Թ. Սեակ, Երկեր, Երևան, 1955, էջ 45)։ Տեքստը վերցրել ենք հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՖ, N 1)։

Պոլ Վերլեն— «Զգացական խոսակցություն»— Տեքստը վերցված է հեղինակի տետրակից (ԳԱԹ, ՌՍՖ, N 1)։ Տպագրվում է առաջին անգամ։

Անտոնեն Բրյուն— «Քերթող»— Առաջին անգամ տպագրվել է «Մասիս»-ում (1908, թիվ 20, էջ 416)։ 1955 թ. ժողովածուի մեջ այս բանաստեղծությունը ևս վերագրվել է Թ. Սեակին (Թ. Սեակ, Երկեր, 1955, էջ 51)։ Առաջին հրապարակման տեքստի տակ, փակագծերի մեջ, նշված է. «(Նմանող.)»։ Այսինքն՝ նմանողություն։ Այս պարագայում կազմողը գուցե իրավունք ուներ «Քերթողը» բանաստեղծությունը «Սիրո գիրքը» բաժնում դնել, սակայն անհրաժեշտ էր ընդգծել, որ տվյալ տեքստը նմանողություն է։

«Պատասխան Ավելի ծայնյակին»— Թ. Սեակը ֆրանսերենից թարգմանել է անհայտ հեղինակի սոնետը, որը «պատասխանում» է ֆրանսիացի բանաստեղծ Ֆելիքս Ավելին (1806—1850)։ Նա պատմության մեջ մնացել է ընդամենը մեկ սոնետով (հնչյակ). «Mon âme a son secret, ma vie a son mystére»։ Այս սոնետը շատ տարածված էր դարասկզբի արևմտահայ բանաստեղծների մեջ, ապացույց, որ քսան տարվա ընթացքում ունեցել է յոթ թարգմանություն. Աղեքս. Փանոսյան («Հայրենիք», 1892), Գառնիկ Ֆնտրզյան («Մասիս», 1892), Մեսրոպ Նուպարյան (1904 թ. թարգմանել է, լույս է տեսել «Շանթ»-ում՝ 1912, թիվ 23), Մերուժան Պարսամյան («Մասիս», 1906), Մկրտիչ Աճեմյան (1911, «Զանազան թարգմանություններ»), Վահան Թեքեյան («Շանթ», 1912, թիվ 23)։ Ֆ. Ավելի նշանավոր սոնետը թարգմանվել է նաև մեր օրերում (տե՛ս «Ծաղկաքաղ ֆրանսիական դասական քնարերգության», ֆրանսերենից թարգմ. Աբրահամ Ալիքյանը, Երևան, 1976, էջ 99)։ Այստեղ նպատակահարմար գտանք ներկայացնել Մ. Պարսամյանի թարգմանությունը, որտեղ լրամական հարազատությամբ պահպանված է բնագրի իմաստը.

Այնքա՛ն իր գաղտնիքը ունի, հոգիս՝ խորհուրդն իր թաքուն,
Վայրկենապես ըզգացված հավերժական սեր մը հեր,
Զոր ոչ որի պատմեցի, քանզի անհույս ըլլալուն
Ու վիշտ առիթդն ալ այսպես չհասկցավ գայն երբեք։

Ճիշդ իր քովեն անտեսված պիտի անցնիմ ես, ավա՜ղ,
Միշտ իրեն մոտ, և սակայն միենակ, լռին ու դժկամ,

Եվ մինչ մանա, հատնումի վերջին վայրկյանը խաղաղ,
Անհամարձակ խնդրելու՝ բան մը պիտի չըստանամ։

Թեև Աստված փափկասիրտ ստեղծած է զանիկա,
Պիտի քալե անտարբեր, շուրջն նրզված սխրալի
Անպատասխան մրմունջը առանց բնավ լըսելու։

Հավատարիմ, երկյուղած, պարտաճանաչ կին հըլու,
Պիտի ըսե, երբ կարդա այս տողերը իրմով լի.
— Ո՞վ է արդյոք այդ կինը...— ու չպիտի հասկընա։

Այս սոնետի՝ ֆրանսերենով գրված «պատասխանը» տպագրվել էր «Մասիս»-ում հետևյալ տեքստով. «Ծանոթ է Առվեռի sonnet *և իր հմայքը։ Հետևյալ բանաստեղծությունը նո՛ւյնպես հմայիչ որչափ Առվեռի անմահ թերթված, պատասխան մըն է վերջինին, և նոր մեջտեղ ելած է։ ...Իր մասնավոր շահեկանության համար կհրատարակենք բնագիրը այս գրական գոհարին, առիթ մը ստեղծելու համար, որ անոր ալ թարգմանությունը կատարվի մեր մեջ, ինչպես ունեցած ենք մեկ ավելի թարգմանություններ Առվեռի ձայնյակին։ Լավագույն բնորանք մը չէր կրնար ըլլալ, քան հայացումը բացառիկ այժմեությամբ այս էջին, թարգմանության Մրցումի մը համար...» («Մասիս», Նոր շրջան, թիվ 1, 1 դեկտեմբեր 1906)։ Ռ. Սեակը ընդունել է այս հրավերը և թարգմանել «պատասխանը», սակայն մրցանակը շնորհվել է երկրորդական մի գործի։*

Ռ. Սեակի այս թարգմանությունը տպագրվում է առաջին անգամ։

Անրի Բերսոն— «Սկեպտիկություն»— *Տեքստը վերցված է Ռ. Սեակի «Ա. Տետրակից»։ Տպագրվում է առաջին անգամ։*

ԱՐՁԱԿ ԷՋԵՐ (էջ 237—369)

ԲԻԻԵՆԿԻՆ ԳԻՐՔԵՆ ՓՐՅԱՎ ԷՋԵՐ (էջ 237—354)

Ռ. Սեակի պատմվածքներն առաջին անգամ գրքով տպագրվել են 1925 թ. Սալոնիկում (Հունաստան), որտեղ հավաքված էին բանաստեղծի տասնհինգ պատմվածքներն ու ակնարկները։ Հաջորդ ժողովածուներում ևս պատմվածքներ կային։ Ամենից հարուստը 1946 թ. փարիզյան ժողովածուն է՝ քսան պատմվածք։ Իսկ ընդհանրապես, այս վերնագրի տակ լույս է տեսել քսանութ պատմվածք ու ակնարկ։ Քանհինգը՝ «Ազատամարտ», «Մեղու» և «Սուրհանդակ» թերթերում, իսկ մնացած երեքը՝ Կարո Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը»-ում (1961, 62, 63 թթ.)։

Կնս խնեը *(էջ 237)*— «Բաբալիզի ժենեռալ»— *Ընդհանուր անդամալուծություն (Ֆր.)։* «Տապան»— *Տաքնա, ողնուղեղի ամբախտ (Ֆր.)։*

Անիծված զանգը— «Քանապե»— *բազմոց (Ֆր.)։*

Նաբոլեոնի մանը— «Ամաֆիռ»— *Այաչչո, Նապոլեոնի ծննդավայրը Կորսիկայում։*

Մեռցնելու իրավունքը— «Թեբանոս»— *Պրակախտ (Ֆր.)։*

Տելիրիում բրեմենս— *Ջերմակ տենդ (լատ.)։*

Ապրելու կամք— Մոնթենեյը— *Միշել Մոնտեն (1533—1592) ֆրանսիացի գրող, բարոյախոս, փիլիսոփա։* Պլինիոս— *Պլինիոս Ավագ (23—79)— հռոմեացի բնագետ, երևույթի հատորանոց Բնական պատմության հեղինակը։ Պլինիոս Կրտսեր (62—114)— հռոմեացի գրող, նախորդի զարմիկը։ Ռ. Սեակի մեջբերումը հավանաբար Պ. Ավագից է։*

Քաթոն— Կատոն Մարկոս Պորցիուս Կրտսեր կամ Ուտիքացի (95—46 մ. թ. ա.)— հռոմեական նշանավոր հոնոր, փիլիսոփա։ Կատոն Ավագ կամ Ցենզոր (234—149 մ. թ. ա.)— հռոմեացի պետական գործիչ, որ հայտնի էր իր խստականոն կենցաղով։ Ռ. Սենակը հաճախաբար նկատի ունի Ս. Ավագին։ Հոպպես— նկատի ունի անգլիացի հռչակավոր փիլիսոփա, «Լեվիաթան»-ի հեղինակ Թոմաս Հոբսին (1588—1679), որն աչքի ընկավ նաև երկարակեցությամբ։ Ուատ— Ջեյմս Ուատ (1736—1819)— շոտլանդացի ինժեներ։ Նեվտոն— Իսահակ Նյուտոն (1642—1727)— անգլիացի մաթեմատիկոս, աստղագետ, ֆիզիկոս և փիլիսոփա։ Վելինկթոն— Վելինգտոն (1769—1852)— անգլիացի զորավար։ Ափրն— Էմիլ Լիտրե (1801—1881)— ֆրանսիացի նշանավոր լեզվաբան և փիլիսոփա։ Պյուֆոն— Բյուֆֆոն 1707—1788)— ֆրանսիացի նշանավոր բնագետ։

Վեցերորդ զգայարանը (էջ 319)— «Իրեն համար չէ Շամֆորին սերը, այն սերը, որ *երկու մաշկերու հպումն է*»— և որ այլասերած մարդկությունն մը միայն կրնար հնարել»— Սերասյան, Ռոք-Նիկոլա Շամֆոր (1740—1794)— Ֆրանսիացի նշանավոր բարոյախոս։ Ռ. Սենակը նկատի ունի Շամֆորի հետևյալ մաքսիմը. «Այն, ինչ մեր հասարակությունը ընդունում է որպես սեր, դա ընդամենը երկու քմահաճույքների խաղ է և երկու մաշկերի հպում (տե՛ս Chamfort, Maximes et pensées. éd. «Garnier-Flammarion». 1968. Paris. page 133)։

Սքանտալ— Ստենդալ (1783—1842)— Ֆրանսիացի մեծ գրող, «Կարմիրը և սևը», «Պարմի մենաստանը» վեպերի հեղինակը։ Մեջբերումը Ստենդալի «Սիրո մասին» տրակտատից է։

Մարք Օրել— Նկատի ունի Հռոմի կայսր Մարկոս Ավրելիոսին (121—180)։

Մեղմին տունը (էջ 331)— Առաջին անգամ տպագրվել է «Մեղու» օրաթերթում (1914, 1/14 փետրվար)։ «...հինեռուն ըսած Գիտությյան ծառը չէ՞»:— Նկատի ունի ասասվածաշնչյան եդեմական ծառը. «Եվ Տեր Աստված պատվիրեց մարդուն՝ ասելով. «Պարտեզի բոլոր ծառերից համարձակ կեր, բայց Բարիի ու Չարի գիտության ծառից չուտես...» (Սնունդ, Բ. 16, 17)։ «Մանն, բեկեղ, փարեսս»— Հաշված, կշռված, բաժանված։ Մարգարեական սպառնալիք, որն աներևույթ մի ձեռք գրեց այն սրահի պատերին, որտեղ Բալթազարն իր վերջին շվայտանքներն էր վայելում, մինչդեռ Կյուրոսը հաղթական մտնում էր Բաբելոն։ «Այսպես գրված է. ՄԱՆՆ, ԹԵԿԵՂ ՈՒ ՓԱՐՍԻՆ, Այս խոսքին մեկնությունն այս է. Մանն, Աստված քո թագավորությունդ համրեց և այն վերջացավ։ Թեկեղ, կշեռքով կշռվեցիր և պակաս գտնվեցար։ Փարսին, քո թագավորությունդ բաժանվեց և Մարերին ու Պարսիկներին տրվեց» (Մարգարեություն Դանիելի, ե. 25—28)։ «Կեսարին փողը՝ Կեսարին, մենք մեր լեռները դառնանք նորեն»:— Ամենաարանական կայսեր դահեկանի պատմությունն է. «Ուրեմն այն, որ Կայսրինն է Կայսրին տվեք, և այն, որ Աստուծունն է՝ Աստուծո տվեք» (Մատթ. ԻԲ. 21—22)։ Ռ. Սենակի մոտ օգտագործվում է որպես պարտադիր հարկ, որը տալուց հետո կարելի է օձիքն ազատել։

Ապրիլը հաղթել է (էջ 335)— Առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտ»-ում (14.2. 1914, թիվ 8)։ Տեքստը վերցրել ենք «Շանթ» ամսագրից (1918, թիվ 2, էջ 19—21)։ «Կտեսնե՞ս սա ծերունին, որ կատղած շունին երախեն ոսկի մը լուծուն կճավոն՝ ննելու համար...»— Ֆրանսիացի աշխարհահռչակ քիմիկոս և կենսաբան Լուի Պաստյորի (1822—1895) մասին է, որը 1886 թ. հայտնաբերեց կատաղության դեմ պայքարելու միջոցը՝ նախազգուշական պատվաստումով։ «Կտեսնե՞ս սա հայ գիտունն ալ, որ Ութեոբկենյան հառագայթներուն գիտակից զոնը կ'ըլլա նոր աշխարհին մեջ...»— Ռ. Պոլսում լույս տեսնող «Բյուզանդիոն» օրաթերթի 1910 թ. հուլիսի 14-ի համարում՝ «Հայ զոհ մը գիտության» վերնագրով հոդվածի մեջ ասվում է. «Հլա. 12-ին Ֆիլատելֆիա

ՃԵՖԲրԲրԲ հիվանդանոցին մեջ մեռավ տոքթ. Մինրան Դ. Գասապյան, 42 տարեկան, կեսարացի, որ Ամերիկայի մեջ ուսում առած, ինքզինք Ռեոնթկենյան ճառագայթներու մասնագիտության նվիրած էր, որուն մեջ նշանավոր հեղինակություն մը հանդիսացավ, դասական գործած գրքեր հրատարակեց, և իր անունն հռչակվեցավ բովանդակ Ամերիկայի մեջ։ Տքթ. Գասապյան գիտության զոհ եղավ, որովհետև խիզախորեն հառաջ տանելով իր փորձարկությունները, Ռեոնթկենյան ճառագայթներուն հատուկ եղող վերքեր ստացած էր իր մարմնի այրելովը, և այդ վերքեր ութ տարիե ի վեր իր վրա հառաջացուցին մարմնային քաղցկեղ, և թեպետ բանիցս վիրաբուժական գործողություն կրեց, ի վերջո նույն վերքերն եղան պատճառ իր մահվան... Տքթ. Գասապյան մեկ ու կես տարի առաջ Կ. Պոլիս եկած էր, ուր ամուսնացավ, և իր դեռատի կինն իր սեպհական գիշեր ցերեկ կ'հսկեր ՃԵՖԵՐԲՐԲՐԻ մեջ, երբ Ամերիկայի ամենեն համբավավոր վիրաբույժներն իրեն հասկցուցին, թե Ռ. ճառագայթներուն այրուցքն անբուժելի է, և իր մեծանուն ամուսինը դատապարտված է իր մշակած և այնքան զարգացուցած գիտության զոհն ըլլալու։ Ռ. ճառագայթներուն և ռատիոկրաֆիով բուժման վրա Տքթ. Գասապյանի մեծահատոր երկն ամերիկյան համալսարաններուն մեջ իբր դասագիրք կգործածվի այժմ։ Տքթ. Գասապյանի երկու մասներն արդեն հանված էին, և իր կուրծքին աջ կողմի մասերը կտրված էին, և ի վերջո իր թեին տակի դեղձերը հանված էին։ Իր հիվանդությունը գաղտնի կպահվեր, և հիվանդանոցին մեջ կեղծ անուն մը առած էր, որպեսզի Ռ. ճառագայթներով դարմանվող հիվանդները չվախնան։ Ֆիլատելֆիո լրագիրները միահամուռ իր զոհման ըրին, զինք դասելով այն մի քանի նշանավոր անգլիացիներու, ֆրանսացիներու և ամերիկացիներու շարքին, որոնք արդեն զոհված են Ռեոնթկենյան ճառագայթներու գյուտեն» («Բյուզանդիոն», Հուլիս 14, 1910)։

Իռոնախտավորը (էջ 339) — Առաջին անգամ տպագրվել է «Ազատամարտ»-ում (1914, Թիվ 5)։

Մեռելին նշանտուրը (էջ 342) — Այս պատմվածքը երկու տարբերակ ունի։ Առաջին տարբերակը տպագրվել է «Սուրհանդակ»-ում (1908, 21 հունիս) և վերնագրված է՝ «Թոքախտավորներու գերեզմանը»։ Երկրորդ տարբերակը՝ ավելի ավարտուն և ավելի ծավալուն, «Մեռելին նշանտուրը» վերնագրի տակ տպագրվել է Կարո Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը»-ում (1961, էջ 153—160)։

Սարենիկ (էջ 348) — Առաջին անգամ տպագրվել է Կ. Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը»-ում (1962, էջ 81—86)։ Գոռմյուռ — բրոմի միացություն։

Տոքթոր Քոզմոզ (էջ 354) — Առաջին անգամ տպագրվել է Կ. Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը»-ում (1963, 153—157 էջեր)։ Էսկյուլապ — Էսկուլապ կամ Ասկլեպիոս, բժշկության աստված Հին Հռոմում։ Հիբոքրաթ — Հիպոկրատ (460—377 մ. թ. ա.) — հրաշակավոր բժիշկ Հին Հունաստանում։ Բամաթիզմ — ռեմատիզմ, հոդացավ։ Լապտակ (բրբռ.) — նապաստակ, ճագար։

ՈՒՍԱՆՈՂԻ ԳԻՇԵՐՆԵՐ (էջ 360—369)։

Խաղոյայը և թոխը (էջ 360) — Առաջին անգամ տպագրվել է «Սուրհանդակ»-ում (16 հունիս, 1908)։

Տարի մը վերջ (էջ 363) — Առաջին անգամ տպագրվել է «Արևելյան մամուլ»-ում (26 հունիս, 1907, Թիվ 26, էջ 640—643)։

Ի. Պերպերյանի հիվանդությունն ու մահը (էջ 367) — Առաջին անգամ տպագրվել է Թ. Ազատյանի խմբագրությամբ Կ. Պոլսում լույս տեսնող «Աստղաբերդ» ամսագրում (1951, Ա. տարի, Թիվ 4, էջ 82—83)։ Ռեքեոս Պերպերյան (1848—1907) — արևմտահայ ականավոր մանկավարժ, գրական և հասարակական գործիչ, Պերպերյան վարժա-

բանի հիմնադիր-տնօրենը։ Ռ. Սեակը Ռ. Պերպերյանի սիրված և գնահատված աշակերտներից էր և նրա խորհուրդով էր, որ գնաց Լոզան ուսանելու։ «20 հունվ. 1848-ին ծնունդս ծնավ...»— Ռ. Պերպերյանի ծննդյան թվականի շուրջ տարբեր կարծիքներ կան։ Գրեթե բոլորը նշում են այս թվականը, մինչդեռ Հր. Աճառյանը՝ 1850 թ. (տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1950, նոյեմբեր—դեկտեմբեր, էջ 64)։ «ԱՆՅԻՆ տը բուսարիների fրիզներ...» (Ֆր.)— կրծհեղձուկի տագնապ, «ԵՐՅՈՆԱԼ ցավ մը...» (Ֆր.)— տենդական ցավ։ «ԱՄԲՈՒ ՆԻԲԻԹ տ'ամիլ...» (Ֆր.)— ազոտաթթվի եթեր։ «ՄԵՆԵՌԱԼ ՆՈՒՊԱՐՅԱՆ (1842—1929)— Իզմիրահայ նշանավոր բանաստեղծ, լեզվաբան և թարգմանիչ։ Հեղինակ հայտնի «Ֆրանսերենեն հայ-աշխարհիկ» (1915) բառարանի։ Նամակագրություն է ունեցել Վիկտոր Հյուգոյի հետ։ «ԵՇԱՆԱՆ...»— Շահան Պերպերյան (1891—1956)— Ռ. Պերպերյանի որդին, փիլիսոփա, մանկավարժ, երաժշտագետ։ «ՄԱՆԵՆԻԿ...»— Մանենիկ Պերպերյան (1885—1960)— Ռ. Պերպերյանի դուստրը, բանաստեղծուհի, երգչուհի, «ՄՈՐՖԻՆԻ ԷՆԺԵԽՍՈՆ...» (Ֆր.)— մորֆինի սրսկում։

Հատվածներ օրագրից (էջ 368)— Առաջին անգամ տպագրվել է «Աստղաբերդ» ամսագրում (1951, թիվ 1, էջ 10—11)։

Տխուր բոպեն (էջ 369)— Առաջին անգամ տպագրվել է Մկրտիչ Պարսամյանի՝ Փարիզում լույս տեսնող «Կյանք և արվեստ» ամսագրում (1940, թիվ 4, էջ 61)։

ՆԱՄԱԿՆԵՐ (էջ 371—449)

ՈՒՍԱՆՈՂԻ ՆԱՄԱԿՆԵՐ (էջ 371—421)

Ռ. Սեակի նամակագրությունը ծավալով մեծ է և, որոշ իմաստով, առանձնանում է ընդհանրապես հայ գրողների նամակագրական ժառանգության մեջ։ Այստեղ, անշուշտ, որոշակի դեր է խաղացել ոչ միայն նրա տաղանդը կամ հետաքրքիր կապերը, այլ ավելի շատ նրա մարդկային-ստեղծագործական նկարագիրը։ Չնայած այդ նամակների գեղարվեստական-ճանաչողական բարձր նշանակությանը, առաջին անգամ է, որ զետեղվում են ժողովածուի մեջ։

Ուսանողի նամակներ (էջ 371)— Առաջին անգամ տպագրվել է «Ազդակ»-ում (23/5 հունիս, 1909, էջ 363—364)։

Հրանտ Նազարյանին (էջ 374)— Տե՛ս «Լեմանա» բանաստեղծության ծանոթագրությունը։ Հր. Նազարյանը Ռ. Սեակի մտերիմ բարեկամներից էր։ Ներկայացվող նամակներն առաջին անգամ տպագրվել են Թեոդիկի «Ամենուն Տարեցույցը»-ում (1928, էջ 368—369)։

Պատրիարք Օրմանյանին (էջ 375)— Այս նամակների ինքնագրերը պահպանվում են Հեղինակի ֆոնդում (ԳԱԻ, ՌՍՖ, չմշակված բաժին)։ Տպագրվում են առաջին անգամ։

Եղիշե Արք. Դուրյանին (էջ 377)— Առաջին անգամ հրապարակվել է Փարիզի «Հայ միտք» պարբերականում (Ա. Տարի, 1955, թիվ 9—10)։

Թեոդիկին (էջ 377)— Ինչպես երևում է, սրանք հատվածներ են, տարբեր տարիների ընթացքում, Թեոդիկ ամուսիններին գրած նամակներից։ Առաջին հատվածը վերցրել ենք «Ամենուն Տարեցույցը»-ի 1911 թ. գրքից (էջ 218), մնացածները՝ 1916—1920 թթ. գրքից (էջ 21—22)։

Նամակներ Գ. Մ.-ին (էջ 379)— 1928 թ. հունվարի 25-ից մինչև փետրվարի 7-ը «Հայրենիք» օրաթերթը ներկայացնում էր «Ռ. Սեակի անտիպ նամակները»։ Այդ նամակները հավանական կորստից փրկել և հրապարակման էր պատրաստել Տիգրան Չիթունին (Չիթճյան)։ Հրապարակմանը նախորդող՝ հունվարի 24-ին լույս տեսած «Անհայտ

դամբանականին առջև» հոդվածում Տ. Չիթունին պատմում է, թե ինչպիսի արտակարգ պայմաններում է հայտնաբերել այդ նամակները. «Երրորդ անգամ էր, որ թաքստոց կփոխեի (դեպքը, հավանաբար, տեղի է ունենում 1915-ի ամռանը— Ա. Թ.) և այս անգամ Գատրգյուղ ազգականի մը տունին մանսարեի մեջ էի, հոն դիզված փոշեծածկ գիրքերուն և ձեռագիրներուն մեջեն կլան Սնակի ձեռագիր 14 նամակները Լոզանեն ի Պոլիս և 6 քերթվածները» (այդ «6 քերթվածները» անտիպներ չեն— Ա. Թ.)։

Սակայն Չիթունին հաստատորոշ անուն-ազգանվան փոխարեն ինչո՞ւ է սկզբնատառեր դրել։ «Հիշված անձերուն անուններին հատկապես Մ. Գ. (որուն ուղղված են նամակները) լրիվ չտալուս արդարանալի պատճառն այն է, որ հիշյալը կ'ապրի վտանգավոր միջավայրի մը մեջ և իր անունին հրապարակումը կրնա գուցե դժվարություններ փարթել իր գլխին»։

Յուրաքանչյուր նամակի վերջում Չիթունին դրել է իր՝ հրապարակողի ծանոթագրությունները։ Ներկա հատորից դուրս թողնել դրանք, կնշանակեր խաթարել առաջին հրապարակման ամբողջականությունը։ Բացի այդ, Չիթունու ծանոթագրություններն օգտակար են նաև այսօրվա ընթերցողի համար։ Մեր ծանոթագրություններն առանձնացված են աստղանիշերով։

1906 մարտ 9, Լոզան (էջ 379)— «Գեղամը... Աշոտը... Զարֆեյանը...», ինչպես և հաքնատերը՝ Գ. Մ.-ն, ամենայն հավանականությամբ, Ռ. Սնակի դասընկերներն են Գերպերյան վարժարանից։

1906, Ապրիլ 2 (էջ 381)—«abatjour» (Ֆր.)—լուսամփոփ, «armoir» (Ֆր.)—զգեստապահարան, «dejeuner» (Ֆր.)— նախաճաշել, «diner» (Ֆր.)— ճաշել, «souper» (Ֆր.)— ընթրել, «abonneé» (Ֆր.)— այստեղ՝ նախապես վճարածները։ «pension» (Ֆր.)— այստեղ՝ վարձու բնակարան, ուր նաև կանոնավորապես կերակրում են. «chef de pension» (Ֆր.)— վարձու բնակարանի տերը։

1906 Մայիս 11, Լոզան (էջ 386)— «douche» (Ֆր.)— ցնցուղ։

1 հուլիս (էջ 388)— «étudiant» (Ֆր.)— ուսանող։

12 փետրվար, 1907 (էջ 393)— «originalité» (Ֆր.)— ինքնատիպություն։ «Եղբայրս բոլորովին ապաքինած է»— հավանաբար Հայկի մասին է (տե՛ս «Ահավոր տարակույսը» պատմվածքի ծանոթագրությունը)։ «...չէ՞ մի որ Ավետ իր մեկ sonnetովը անմահացավ»— տե՛ս «Պատասխան Ավետի ձայնյակին» թարգմանության ծանոթագրությունը։

1907 օգոստոս 26 (էջ 399)— «humeur» (Ֆր.)— տրամադրություն։

1907, նոյեմբեր 7 (էջ 402)— «Գերպերյան մնաց. եղիա հիվանդ է. Զոհրապ լրեց. Սիպիլ պատվիրեալ. հրապարակը... Պարսամյան և ընկերության մնաց...»— Մերուժան Պարսամյանի եղբայրը՝ Մկրտիչ Պարսամյանը «Հայրենիք» օրաթերթի 1928 թ. օգոստոսի 7-ի համարում տպագրել է «Ռ. Սնակի անտիպ նամակները» հոդվածը, որտեղ փորձում է ցրել այս արտահայտության որոշ բացասական տպավորություն։ Հոդվածը հետաքրքիր և արժեքավոր է նրանով, որ այնտեղ ընդարձակ մեջբերումներ են արված Ռ. Սնակի՝ Մերուժան Պարսամյանին ուղարկված նամակներից։ «cousin» (Ֆր.)— զարմիկ, ազգական։

Անբվանիր նամակը (էջ 405)— «Գիտեմ, որ Զունդյան կտակին candidat ներկայացա...»— Մեծահարուստ վանատական Աստվածատուր Զունդը, մատանդ չունենալու պատճառով, իր կնոջ՝ Նեկտար Զունդի մահից հետո որոշում է իր հարստության մի մասը հատկացնել Եվրոպայի համալսարաններում սովորող չքավոր, սակայն ընդունակ հայ երիտասարդներին, որոնց թվում էր նաև Ռուբեն Չիլինկիրյանը։ «Մեծ եղբոր հիվանդությունը...»— խոսքը հավանաբար Հայկի մասին է (տե՛ս «Ահավոր տարակույսը» պատմվածքի ծանոթագրությունը)։ «Օննիկ Գերպերյան կկոչվի»— Օննիկ Գերպերյան

(1887—1959)— Ռ. Պերպերյանի որդին։ «Մեծ-Մարդուն մահվան հեռագիրը...»— *խոսքը Ռ. Պերպերյանի մասին է։*

25 դեկտ. 1907 *(էջ 408)*— *Չիթնոնու ծանոթագրությունների մեջ այսպիսի տողեր կային, որոնք դուրս թողեցինք ժողովածուից.* «1908-ին տապալեցավ նամիտյան բռնակալությունը և Օսմ. Սահմանադրության հռչակումովը Երջանիկ դարագլուխ մը բացվեցավ Թուրքիո Հայերուս համար, ու այդպես ալ պիտի շարունակեր ըլլալ, եթե աղետաշունչ պատերազմը չմտկեր մեր երկիրը»— *արևմտահայ գործիչներից ոմանց հատուկ քաղաքական միամտության և կուրության տիպական օրինակ։ Նախ՝ «Թուրքիո հայերու համար» բացված «երջանիկ դարագլուխը» ազդարարվեց ավելի քան 30.000 զոհ տված Կիլիկիո ջարդերով և հետո, պատերազմը պայթեր թե ոչ, երիտթուրքերը պիտի որևէ կերպ իրագործեին հայերի ցեղասպանության իրենց ծրագիրը։*

Նեովմ Աբմենին *(էջ 411)*— *Այս նամակներն առաջին անգամ տպագրվել են Գ. Ազնավուրյանի «Արևմտահայ գրողների նամակներ»-ում։ Տեքստը վերցրել ենք Նեովմ Աբմենի ֆոնդից (ԳԱԹ, ԵԱՖ)։*

1906. Ապրիլ 9— «Հելվետիա»— *Այսինքն՝ շվեյցարական, լատիներեն* Helvetia *բառից է։ Հին հռոմեացիք այդպես էին անվանում ներկայիս Շվեյցարիայի տարածքը՝ այդտեղ բնակվող կելտական ցեղախմբի՝ հելվետների անունով։*

Հունվար 26, 1907 *(էջ 412)*— «Մասիս»ի մեջ մրցումի ենթարկված «Ավետի ձայնակին պատասխանը» թարգմանելով դրկեցի քեզի»— *Տե՛ս «Պատասխան Ավետի ձայնակին» թարգմանության ծանոթագրությունը։* «Ինչպե՞ս չընորհավորել նաև այն հսկա հաջողությունը, որ ունեցար ձեռ անցընելով «Մասիս»ը...»— *Ե. Արմենը 1906 թ. դեկտեմբերից մինչև 1908 թ. խմբագրում էր «Մասիս» շաբաթաթերթը։* «Դաղղիական աղի գրականության նետ շփման մեջ ըլլալ»— *«Մասիս»-ի 1907 թ. թիվ 14-ում տպագրվել է Լեկոնտ դը Լիլի «Յորեկ» բանաստեղծությունը Ռ. Չիլինկիրյանի թարգմանությամբ։* «Tant mieux, ma foi» *(Ֆր.)*— *ավելի լավ։* «...և շընորհավորել զքեզ «Կինոյի» համար...»— *Ռ. Սեակը նկատի ունի Ե. Արմենի «Կինը» (1906) պատմվածքների ժողովածուն։*

1907, 20 հունիս *(էջ 413)*— «Պիտի խնդրեի, որ մասնավոր ուշադրությամբ մը հրատարակեիր այս բերվածս...»— *Խոսքը հավանաբար «Գինով սեր» բանաստեղծության մասին է, որ լույս է տեսել «Մասիս»-ի 1907 թ. թիվ 34-ում։* «Հրանտին միջոցավ»— *Հր. Նազարյանն է։* «Դրամին աղբրը» և «Լեմման» վերնագրով երկու բերված»— *Այս բանաստեղծությունները սակայն լույս են տեսել ոչ թե «Մասիս»-ում, այլ «Արևելյան մամուլ»-ում։* «entrefilet» *(Ֆր.)*— *հոդվածիկ։* «...զոր այնքան լավ կերպով զետեղած ես «Մասիս»ի վերջին երեսը»— *Խոսքը, հավանաբար, վերաբերում է «Մասիս»-ի 1907 թ. թիվ 27-ում լույս տեսած գրախոսականին՝ Ե. Ա. ստորագրությամբ։*

1907, Հոկտեմբեր 2 *(էջ 414)*— «...ինչպես զրեր էիր «Ջունդյան սանի» մեջ»։— *«Մասիս»-ի 1907 թ. 1 սեպտեմբերի թիվ 36-ում տպագրվել է Ե. Արմենի «Ջունդյան սանի» առաջնորդողը։* «Նայինինն Պերպերյանի կողմե պաշտպանվիլս...»— *Ռ. Պերպերյանի մասին է։* «Խատաին»— *թուրքական միջնակարգ դպրոց։* «...ԲՅՈՒԶԱՆԴԻՈՆ» այս մասին լուր մը զետեղեց...»— *Կ. Պոլսի «Բյուզանդիոն» օրաթերթի 1907 թ. սեպտեմբերի 15-ի համարում տպագրված է Աշոտ Բ. Քեչյանի «Հուշեր ու նիշեր նյութը, ուր խոսվում է Ջունդյան կոտակի առթիվ սկսված վեճի մասին։ Այնտեղ ակնարկ կա բժիշկ ուսանողի մասին (ակնարկը հավանաբար վերաբերում է Ռ. Չիլինկիրյանին)։*

9 մայիս, 1908 *(էջ 416)*— «...ինձ անջատաբար դրկված ՄԱՄՈՒԻ հոդվածդ»— *Խոսքը, հավանաբար, Մ. Մնծարենցի «Նոր Տաղեր»-ի առթիվ Ե. Արմենի գրած հոդվածի մասին է, որը տպագրվել է «Արևելյան մամուլ»-ի 1908 թ. թիվ 15-ում՝ «Ճշմարտության վա-*

բագույրը» վերնագրով։ «Հարկ կա՞ ասելու, որ Մնծարենցին, Մարյանին և իրենց ընկերներուն տված շառաչուն դասերդ անմոռանալի պիտի մնան»։— Այս նախադասությունը դուրս է մնացել Գ. Ագնավուրյանի հրատարակած տեքստից (տե՛ս «Արևմտահայ գրողների նամակներ», Երևան, 1972, էջ 364)։ «...ապահովել կարենալու համար «մասիսՅիդ գոյությունը»— 1908 թվականից «Մասիս»-ը՝ նյութական միջոցների բացակայության պատճառով գադարեց լույս տեսնել։

Սեղոնեարին (էջ 417)— Առաջին անգամ տպագրվել է «Արևմտահայ գրողների նամակներ»-ում (էջ 365)։ Ներկա ժողովածուի մեջ զետեղված է ինքնագրի տեքստը (ԳԱԲ, ՌՍՏ)։

Կարեն Միքայելյանին (էջ 417)— Տպագրվում է առաջին անգամ՝ ըստ ինքնագրի (ԳԱԲ, Կարեն Միքայելյանի ֆոնդ)։— «ինձմե բանաստեղծություն մը (անտիպ) տպեր էիք...» —խոսքը «Ինչպես երբեմն» բանաստեղծության մասին է, որը, սակայն, անտիպ չէր, քանզի մինչև Կ. Միքայելյանի «Գարուն» ալմանախում լույս տեսնելը արդեն տպագրված էր։

Սիրելի Գարեգին... (էջ 418)— Տեքստը տպագրվում է ըստ առաջին հրատարակման («Նոր շարժում», 28 ապրիլի, 1923, էջ 109—110)։ Գարեգինը, հավանաբար, Ռ. Սևակի ուսանողական ընկերներից է։ «terre à terre» (ֆր.)— առօրյա, հասարակ, «sentimental» (ֆր.)— զգայական, սենտիմենտալ, «prosaique» (ֆր.)— անշուք, պրոզաիկ։

Սիրելի Տիկին և Պարոն (էջ 420)— Տպագրվում է առաջին անգամ, այս և հաջորդ նամակների թարգմանությունները՝ Աբրահամ Ալիքյանի։

Սիրելի ծնողներս (էջ 421)— Նամակը հասցեագրված է Յաննի Ապպելի ծնողներին։

ՆԱՄԱԿՆԵՐ ՅԱՆՆԻ ԱՊՊԵԼԻՆ (ՍԵՎԱԿ)— (էջ 422—449)

«Յաննի Ապպել» (ամուսնությունից հետո՝ Սևակ)— Ռ. Սևակի կինը։ Ազգությամբ գերմանուհի էր, սակայն ամուսնանալով Ռ. Սևակի հետ՝ վերցրեց ոչ միայն նրա գրական ծածկանունը, այլև արիաբար կիսեց հայ ժողովրդին բաժին ընկած դառնությունները։ Մնվել է 1890 թ. Էրֆուրտում։ Նախորդ նամակից իմանում ենք, որ Ռ. Սևակի հետ ծանոթացել է 1907 թ. մայիսին՝ շվեյցարական լեռնային ամառանոցում՝ Շամբերիում։ Այնուհետև, մինչև ամուսնությունը (1910) և դրանից հետո նրանց միջև ծավալվել է ընդարձակ նամակագրություն, որն իր տեսակով անկրկնելի է հայ գրականության մեջ և որն առանց վարանելու կարող ենք համեմատել Չայկովսկու և Ֆոն Մեկկի, Բեռնարդ Շոուի և Փեմբրուքի, Ֆուրգենևի և Սավինայի նամակագրությունների հետ։ Ռ. Սևակի մեծությունը՝ որպես բանաստեղծի, նույնքան է այս նամակների մեջ, որքան նրա լավագույն բանաստեղծություններում։ Պահպանվել են այդ նամակների մեծ մասը։

Յաննի Սևակը ամուսնու նահատակումից հետո ընդմիշտ բնակվեց Ֆրանսիայում, որտեղ և մահացավ 1967 թ.։ Նա թատրոնի ճանաչված դերասանուհի էր, հրատարակել է բանաստեղծական մի քանի ժողովածուներ՝ ֆրանսերեն։ Ներկայումս Ֆրանսիայում են բնակվում բանաստեղծի որդին և դուստրը։ Լևոն Չիլինկիրյանը բնակվում է Լիոնում, իսկ Շամբրամը՝ Սեմիրամիս Ֆոլկոն՝ Նիցցայում։

Հուլիս 23, 1909, առտուն (էջ 422)— «Ասված գիտե...»— Այստեղ նամակից մի էջ պակասում է, որը հնարավոր չեղավ գտնել Ռ. Սևակի թղթերի մեջ։ «Կյանքը։ Արևմուտքին մեջ այս բառին առջև կդնեն խոշոր ճարտկան նշան մը (?), իսկ Արևելքին մեջ՝ կախված երբ կետեր անմոռուչ (...)— Այս միտքը կրկնվում է Ռ. Սևակի «Մարդերգություն» պոեմի «Գյուղական ճամբուն վրա» գլխի մեջ (Գ. հատված, 1—4 տողերը)։ «Համբույր մը քու Ռյուբինեանեն»— Յաննին գրված նամակներից մի քանիսը Ռ. Սևակը ստորագրել է՝ Rubins։

Դեկտեմբերի 3.8 1909 *(էջ 424)* — «Մեծ շուկան, Շահ-Զատա փողոցն, Թրքական սրճարանը... Լազուռն գարը... Թրքական հարեմի գրասենեակը...» — *Այս նամակը գրված է մի քանի բացիկների վրա, որոնք պատկերում են թվարկված տեսարանները։ Եվ ինչ ալ ըսեն, ճանապարհս չեմ դադրիր բնալ, որ այստեղ է աշխարհի ամենահանգիստ ժողովուրդը։ Հակառակ ջարդերուն, հակառակ խժդժությունններուն, հակառակ ամեն ինչի, այստեղ ամենաշատ մարդը սիրելի բան մը ունի։ Ռ. Սեակի և այդ տարիների արևմտահայ մի շարք գործիչների միմիայն լավատեսության օրինակներից մեկը։ Ի դեպ, այս նույն՝ 1909 թ. է ստեղծվել «Կարմիր գիրքը»՝ Կիլիկիո ջարդերի անմիջական ծնունդը։ Եվ հատկանշական է, որ այս տողերը գրում էր իր նշանածին՝ օտարազգի մի աղջկա, որն ավելի սթափ և ավելի իրապաշտ հայացքով է նայել թուրքական իրականությանը։*

Սիրելի Զգաիկս [1909 թ., աշուն] *(էջ 429)* — *Տեքստը վերցված է «Արարատ» օրաթերթից (23 փետրվար, 1985)։*

Հունվար 27, 1910 *(էջ 430)* — «Օլտ-Ինտիա Նմ...» — *Տե՛ս «Իտնալ կինը» բանաստեղծության ծանոթագրությունը։*

Նոյեմբերի, դեկտեմբեր 19, 1912 *(էջ 434)* — «Տյուլլեբյանը...» — *Ռ. Սեակի ուսանողական ընկերներից։* «Պոռֆիլեն» — *Առնոլդ Բյոքլին (1827—1901), շվեյցարացի նշանավոր նկարիչ, որի ստեղծագործության հետ որոշ առնչություններ ունի Ռ. Սեակի պոեզիան (մասնավոր մոտիվը)։* «Պալ» — *շվեյցարական Բազել քաղաքի ֆրանսերեն արտասանությունը՝* Bâle։ «Այս վոցիները...» — *շվեյցարական Վո (Vaud) կանտոնի բնակիչներ։* «Փետրվար 26, 1912, Երկուշաբթի» — «Մուրաթ իրիկուն» — *Այս նամակը՝ արևելահայերեն թարգմանությամբ, առաջին անգամ լույս է տեսել «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 371—373 և 365—367)։*

Զատիկ *(էջ 440)* — *Առաջին անգամ՝ արևելահայերեն թարգմանությամբ, տպագրվել է «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 367—368)։* «Պոնշբայն» — *Հանրի Բերնստայն (1876—1953), ֆրանսիացի դրամատուրգ։* «Շաբրիան» — *Պետք է լինի Էրկման-Շատրիան։ Այս անվան տակ հանդես էին գալիս ֆրանսիացի երկու գրողներ՝ Էմիլ Էրկմանը (1822—1899) և Ալեքսանդր Շատրիանը (1826—1890)։* «Ռեմին... Ժիլտաս... դ'Ասիլվան...» — *Ամենայն հավանականությամբ, այդ տարիների ճանաչված դերասաններ։* «Օֆրաղ Միրզո» — *Օկտավ Միրբո (1848—1917), ֆրանսիացի վիպասան, թատերագիր։* «Լ. Ագնավուրյան» — *Լևոն Ագնավուրյան, նկարիչ, Ռ. Սեակի մտերիմ ընկերներից։ Մի քանի անգամ լուսանկարել է Ռ. Սեակին (տե՛ս Կ. Գեորգյանի «Ամենանուն Տարեգիրքը», 1965, էջ 126—130)։*

Իմ սիրելագույն կինս... *(էջ 443)* — *Առաջին անգամ տպագրվել է «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 369—370)։ Գ. Ագնավուրյանի ենթադրությամբ այս նամակը գրվել է 1912 թ. ապրիլ-մայիսին։* «Ֆերոս» — *Ապոլլոնի մակդիրը, լույսի, արվեստի աստված։*

Հինգշաբթի իրիկուն *(էջ 444)* — *Առաջին անգամ տպագրվել է «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 373—374)։*

Շաբաթ *(էջ 445)* — «...մեր պաշտելի Ֆերոսը» — *Ռ. Սեակը նկատի ունի իր սպասվող որդուն։*

Շաբաթ, մայիս 23, 1912 *(էջ 449)* — *Առաջին անգամ տպագրվել է «Արևմտահայ գրողների նամականի»-ում (էջ 370—371)։* «Ֆերոսը ինչ պիտի ոռչուն Մայիսին...» — *Դարձյալ ակնարկում է որդու սպասվող ծնունդը։*

Հունիս 17, 1915 *(էջ 450)* — *Տպագրվում է առաջին անգամ։ Ինքնագիրը պահպանվում է*

հեղինակի ֆոնդում (ԳԱՓ, ՌՍՖ)։ Սնակի վերջին նամակներից մեկն է՝ ուղարկված Զանգեզրից։ Ցաններին նամակից իմանում ենք, որ Ռ. Սնակն աքսորավայրից կնոջ հասցեով ուղարկել է տարբ քարտ 1915 թ. օգոստոսի 17/30-ին, այսինքն Ռ. Սնակի բարբարական սպանությունից շատ օր հետո պատասխան էր ուղարկում իր ամուսնուն, չիմանալով, որ այդ նամակը տեղ չի հասնելու։ Օգոստոսի 13/26-ին Ռուբեն Սնակին, Դանիել Վարուժանին և նրանք հայ աքսորյալների (Ենոկ Մաղազաճյան, Վահան Քեհյայան և Հարությունյան անունով մի հացթուխ) Զանգեզրից մեկ այլ տեղ տանելու պատրվակով կառք են նստեցնում։ Բյունեյի մոտ գտնվող Թեքե Բուրնույ ձորում, երիտթուրքերի կողմից վարձված տասը մարդասպաններ գազանաբար մորթում են նրանց։ Պահպանվել են մի շարք փաստաթղթեր ու վկայություններ, որոնցում անհերքելիորեն ապացուցվում է այս ոճրագործության կանխամտածված բնույթը (Մ. Նամատանյան. Զանգեզրիեն վերհուշումներ. Հուշարձան Ապրիլ Տասնմեկի. 1920, Կ. Պոլիս, «Կառապանի մը պատմությունը». «Հայկազեն Տարեգիրք». 1922, էջ 319, Արամ Անտոնյանի վկայությունները. Կարո Գեորգյանի «Ամենուն Տարեգիրքը». 1959, էջ 134 և 1960, էջ 223, Բյուզանդ Քեչյան. Գրված աքսորի շրջանեն. Թեոդիկ. Ամենուն Տարեցույցը». 1922, էջ 41, Հովհան Կարապետյան. «Էջ մը աքսորի հիշատակներեն». «Զվարթնոց». Նոր շրջան. Բ տարի. 1957, թիվ 1—2, 3—4, 5—6)։ Ռ. Սնակի նահատակման փաստերին է անդրադառնում նաև Կ. Պոլսի գերմանական դեսպանատան զեկուցագիրը՝ հասցեագրված կայսերական վարչապետին (ռայխսկանցլերին)։ Այդ փաստաթուղթը որոշ կրճատումով տպագրված է Յո. Լեպսիուսի «Deutschland und Armenien. 1914—1918. Sammlung diplomatischer aktenstuke. 1919» գրքի մեջ (էջ 163)։ Ահա այդ փաստաթուղթը՝ արևմտահայերեն թարգմանությամբ.

«Առ Կայսերական Վարչապետ
Ա31521 (Մուտքի թիվ՝ նախարարության)
111 ը. 18347 (Ելքի թիվ՝ Դեսպանատան)
Գերմանական Կայսերական դեսպանատան

Թեքա, 5 հոկտ. 1915

Բժիշկ Ռուբեն Չիլինկիրյան, որ այստեղի հայ շրջանակներու մեջ ծանոթ անձնավորություն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ Ապրիլ 24-ին ձերբակալվեցավ Անատոլու աքսորվելու նպատակով (դեսպանատունը սխալվում է, Ռ. Սնակը ձերբակալվել է ավելի ուշ— Ա. Թ.)։ Նախապես որոշված էր, որ ան Անքարայի մոտ՝ Այաշ աքսորվի, տեղ մը, ուր կպահվին և մասամբ ոստիկանական հսկողության տակ կգտնվին ավելի ծանր կերպով մեղադրվողները։ Դեսպանատան միջամտության շնորհիվ ան ՉԱՆՂԸՐԻ (Անքարա) մեջ արգելափակվեցավ, ուր արգելակյալները կրնան ազատ կերպով ման գալ և իրենց արհեստները կիրարկել։

Տիկին տոքթ. Չիլինկիրյան և մայրը՝ տիկ. Արել այնուհետև աշխատեցան ենթակայի վերադարձը՝ և ապա իր Գերմանիա հաստատվելու ապահովելու։ Թուրք կառավարական պաշտոնյաները երկու առաջարկներն ալ մերժեցին սակայն այն առարկությամբ, որ (ինչպես կհետևի խնդրո առարկա պաշտոնյաներու արտահայտություններեն) տոքթ. Չիլինկիրյան կնկատվի իբրև մեկը այն մտավորականներեն, որոնք զանգվածներու վրա ունեցած ազդեցությունեն կվախցվի։ Տիկ. Արել դեսպանատան մեջ պնդած էր, որ ոստիկանական ընդհանուր տնօրեն Պետրի պես բան էր, թե ապահով պայմաններու տակ Գերմանիա ճամբորդելու արտոնություն կրնար տրվիլ իրեն՝ Տոքթորին։ Երբ Կայսերական դեսպանատունեն պաշտոնյա մը Պետրիի հարցուց, թե իրա՞վ էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտահայտություն մը ունեցած լլլալը։

Վերջապես երկու տիկիններդ փորձ մը ալ բրին տոքթ. Չիլինկիրյանի Անքարա մնալու արտոնություն ձեռք ձգելու ուղղությամբ՝ այն պահուն, երբ իրմե 26 օգոստոսին հեռագիր մը ստացան, որ կծանուցաներ, թե զիները նույն օրը Այաշ պիտի փոխադրեին։ Դեսպանատան գրավոր դիմումին վրա, ներքին գործոց նախարարությունը հեռագիրով հրահանգ տվավ, որ վերոհիշյալը Զանդրրի մեջ թողուն և եթե ճամբա հանված է՝ զինքը հոդ վերադարձնեն։ Այս հեռագրին ի պատասխան, օգոստոս 30-ին, Զանդրրիի կառավարիչը կծանուցաներ, թե տոքթ. Չիլինկիրյանը ամսույն 26-ին Զանդրրիեն մեկնած, Գալեմիքի մոտերը ասպատակներու կողմե հարձակումի ենթարկված և սպանված էր և թե 12 ասպատակներեն 4-ը իշխանություններու կողմե ձերբակալված էին։

Այսուհետև վերջանում է Յո. Լեպսիուսի գրքում բերված փաստաթուղթը։ Սակայն, մեր պրպտումների շնորհիվ, պարզվեց, որ այդ փաստաթուղթը Յո. Լեպսիուսի ձեռքն է ընկել կրճատված վիճակում։ Ահա շարունակությունը, որ դուրս է մնացել վերոհիշյալ ժողովածուից. «...Ասոր վրա, Կայսերական Դեսպանատան ընծայած օգնությամբ, որուն համար Դեսպանատունը Կայսերական ընդհանուր Հյուպատոսարանի հետ շփման մեջ մտած էր, տիկին Չիլինկիրյանը իր մորը՝ տիկ. Արելի և երկու զավակներուն հետ նախորդ ամսու 16-ին, առանց թուրք իշխանություններեն նեղություն կրելու, Գերմանիա մեկնեցան։

Դեսպանատան դիմումին վրա նեղրին գործոց նախարարությունը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մնոյալի մոտ գտնված արժեքավոր իրերը և առարկաները և այրին վերադարձնելու նպատակով՝ հոս ղրկելու ինչ որ կարելի կ'ըլլար տակավ ձեռք ձգել։

Երբ տիկ. Արել իր ամուսնույն ղրկած տեղեկություններուն մեջ կ'ակնարկե, թե Դեսպանատունը «որոշ շափով», ըստ իր ըմբռնումին, ոչ գոհացուցիչ կերպով օգնություն ընծայած է իրեն և զաներ, ան աննկատ կթողու այն պարագան, որ Դեսպանատունը իր դստեր և փեսային համար միայն անպաշտոն սահմանափակումներու կրնար դիմումներ ընել թուրք կառավարության մոտ, քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին։ Այս ուղղությամբ Դեսպանատունը ոչ մեկ բան զանց առած է և մինչև իրենց մեկնումը, տիկ. Արել և իր դուստրը, իրենց բոլոր գործառնությանց մեջ, թե խորհուրդով և թե գործով օգնություն ստացած են։

Փոխանորդարար՝
Յրայհեր ֆոն Նոյրաթ

Պերլին, 27 հոկտ. 1915

Լոզանի Կայսերական Հյուպատոսին ի դիտություն կխնդրվի նաև, որ հանգստյան կոչված՝ թոշակավոր Յրանց Արելին, որ անցյալ ամսույն 9-ին մեզի դիմած էր և ներփակյալը ուղարկած ու ատոր վերադարձվիլը խնդրած էր, տեղյակ պահեք իր ազգականներուն ի նպաստ՝ Պոլսո Կայսերական Դեսպանատան առած քայլերեն և եթե հնարավոր է, արդյունքը իրեն բերանացի հաղորդեք։

Կայսերական Վարչապետի
հանձնարարությամբ
Շմիթ-Տարկիցս։

Այս փաստաթղթերի պաշտոնական գրանցման թիվը և վայրը հետևյալն է. «Turkei 183. Band 39. A 31521. von Neurath to (կամ) á Reichskanzler, Oct. 5—1915 (Bonn, Auswartiges Amt. Politisces Archiv)»։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Սևակ— Ստ. Թոփչյան 3
Կազմողի կողմից 19

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ (1910)

Ջարդի խեները 25
Թրքուհին 36
Մաղերգություն 43

ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ

Դինո՞վ սեր 61
Կարապները 62
Սաքիա-Մունի 64
Վերջալույս 65
Դրամին աղոթքը 66
Ահա կ'երգես Դասինա՞... 67
Վեման 69
Հոգիս 70
Սիրո շողքերը 71
Էտըլվեյս 71
Աղջկան հոգիներ (Նամակը) 72
Ծրեկ գիշեր 73
Պատասխանը 74
Գիտի սպասեմ 76
Տրտո՞ւմ ոգի (սիրերգ) 77
Սիրո աղբյո՞ւր 78
Երգ երգոց 79
Անկարելի սերը 80
Ձուանակ լույսով 81
Գիշերին մեջ («Դուրբ ո՞վ կա...») 81
Կ'արյունի 82
Համբույրը 82
Մեներգ՝ ինձ համար 84
Այդ գիշերը 85
Ժպիտ 85
Ցյունին 86
Պոլսո որովայնին մեջ 87
Ջղջում 89
Սիրտ մրմունջ 89
Ջհասկցվա՞ծ... 90
Գլուխ պտույտ 91
Քնացող աղջիկը 91
Ինչպես երբեմն... 92
Ջղջիկը 93

Իժը . . . 93
Հայրը . . . 94
Վերջին արքայն . . . 95
Գիտի մեռնի... . . . 95
Կարիքը . . . 96
Կարմիր տոնը . . . 96
Կարմիր դրոշակը . . . 97
Փողոց ավլողը . . . 100
Ազատության համար . . . 104
Կարմիր կարոտ . . . 105
Զանգակնե՞ր, զանգակնե՞ր... . . . 106
Վերջին հայերը . . . 108
Ո՞վ իմ հայրենիքս... . . . 111
Թռուցիկները . . . 114
Մահազգացում . . . 118
1. Վրեժին սերմնացանը . . . 119
2. Հայու որբիկ . . . 120
3. Վերջին օրը . . . 120
Երնե՞կ, չո՞ւր . . . 121
Ցավո . . . 122
Ա. Եկո՞ւր . . . 124
Բ. Հավիտենական հերիաթը . . . 125
Գ. Տժգույն երգ . . . 126
Կայրի . . . 127
1. Սերո՞վ, սերո՞վ... . . . 128
2. Եթե գիտնայի՞ր... . . . 129
Գոռնիկը . . . 130
Արցունքին քերթվածը . . . 131
Վերջին կոչը . . . 132
1. Ասպետին երգը . . . 132
2. Դացող մարդը . . . 133
Հայ ծնունդ . . . 133
Ինչո՞ւ . . . 136
Սիրո ծարավ . . . 136
Հայաստան . . . 137
Բո՞ւյրը . . . 137
Խայրիկ . . . 138
Ամենուն պես . . . 140
Չար աղջիկը . . . 141
Ողջակեզ . . . 142
Մե՞ծդ ասուված . . . 144
Կարապի երգը . . . 145
Ծրթա՞լ... . . . 147
Սերը («Քընարիս յոթ ճղիքներեն կանացի...») . . . 147
Սկեպտիկ . . . 148

Սրինգ 149
Առաջին մեղրը 151
Սիրա և մահվան երգը 152
Հին եղանակ 153
Գիշերի մեջ («Կպաշնեա երկինքը անծայր ու ջինջ...») 154
Գիշերն իջավ 155
Ցնծուն մահ 155
Հայ որբը 156
Երեք ձիավորներ 156
Արգասավորում 157
Հավիտենական հեգնություն 158
Արևելք 158
Շան հոգի 159
Այս դանակը 160
Ենոքային արցունքը 166
Բաաթել 168
Մինակ մարդը 168
Ահազանգերը 169
Բանտին մեջ 170
Սերը («Սերը՝ գիտցե՛ք, անուշ ջրի լոգանք է...») 171
Հայ զատիկը 172
Ատոգի մը 174

ԱՆՏԻՊՆԵՐ 175
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ 226
ԱՐԶԱԿ ԷՋԵՐ 237
ՆԱՄԱՆԵՐ 371
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 451

Ռուբեն Սեւակ

ԵՐԿԵՐ

Рубен Севак

СОЧИНЕНИЯ

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1985

Խմբագիր՝ Ա. Ս. Քիչոյան
Նկարիչ՝ Ֆ. Գ. Աֆրիկյան
Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գյուլամիրյան
Տեխ. խմբագիր՝ Մ. Է. Ճանճապանյան
Վերատեսուչ սրբագրիչ՝ Մ. Գ. Ստեփանյան

ИБ 4904

Հանձնված է շարվածքի 11. 08. 85։ Ստորագրված է տպագրության 27. 11. 85։
ՎՖ 03367։ Թուղթ 60×84¹/₁₆։ Թուղթ՝ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր. 27,9 պայմ. տպ. մամ., 28,36 պայմ. ներկ. թերթ., 24,0 հրատ. մամ.+5 ներդիր։ Տպաքանակ 20.000։ Պատվեր 2491։ Գինը 2 ռ. 40 կոպ.։
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Ալավերդյան 65։

Типография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли, Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.